ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
CASSATION COURT
OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 1829 - 0744

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ



4-6/322-324 2026
ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ

Հրատարակիչներ՝
ՀՀ Վճռաբեկ դատարան,
«Դատական իշխանություն» ամսագրի խմբագրություն

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
СУДЕБНАЯ ВЛАСТЬ
JUDICIAL POWER

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ
SCIENTIFIC - METHODICAL JOURNAL

4-6/322-324 2026
ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ

Գիտական խմբագրական խորհուրդ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ
Արման Դիլանյան - ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Համլետ Ասատրյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան,
Հովսեփ Բեդևյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ,
Արթուր Դավթյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Երվանդ Խունդկարյան - ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,
Սերժիկ Ավետիսյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ելիզավետա Դանիելյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Լիանա Հակոբյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Ռուզաննա Հակոբյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան,
Նորա Կարապետյան - ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Գոռ Թորոսյան - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Արշակ Վարդանյան - ՀՀ դատավորների միության անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Սերգեյ Առաքելյան - ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Արմեն Հայկյանց - ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վահե Հովհաննիսյան - ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Բորիս Գավրիլով - ՌԴ ներքին գործերի նախարարության Կառավարման ակադեմիայի հանցագործությունների քննության մարմինների կառավարման ամբիոնի պրոֆեսոր, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, ՌԴ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Անատոլի Կուստով - ՌԴ վաստակավոր իրավաբան, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իրավաբանական գիտություններիի դոկտոր, պրոֆեսոր:

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ, Ռուս-Հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու **Վարազդատ Սուքիասյան**

«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը 2014 թվականից ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Հրատարակվում է
Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«ՀՀ դատավորների միություն» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
http://www.ajra.am

«Դատական իշխանություն»
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռ. 56-99-89
Էլ. հասցե՝ armjudges.association@gmail.com
ISSI 1829-0744

Հանձնվել է տպագրության՝ 02.07.2026 թ.
Ֆորմատը՝ 70x100 1/8
Տպաքանակը՝ 60
Ծավալը՝ 17.25 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ 01Մ000023
Տրված է՝ 07.11.2001 թ.

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

Арсен Кахкцян
Военное право в период Первой Республики Армения (1918-1920 гг.)..... 3

Արարատ Բայանդուրյան
Անցումային արդարադատության տեսակները.....10

Արմեն Շուքուրյան
Ժամանակակից իրավահասկացման հայեցակարգային մոտեցումների բովանդակային առանձնահատկություններն իրավունքի տեսության և պրակտիկայի տեսանկյունից..... 17

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО

Կարեն Թումանյան
Շրջակա միջավայրի վերաբերյալ վեճերի լուծումը արբիտրաժի միջոցով.....29

Անահիտ Աբրահամյան
Արհեստական բանականության գործիքների կիրառման վտանգները կողմերի հավասարության և վկաներին հարցաքննելու և հակադարձելու իրավունքի համատեքստում 44

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС

Անահիտ Թումանյան
Անալոգիայի կիրառումը ՀՀ քաղաքացիական դատավարությունում.....55

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

Армен Туманян
Коррупция как правовая проблема.....72

Ալիսա Ամիրխանյան
Ապօրինի հարստացման առնչությունը հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման ինստիտուտի հետ 94

Դավիթ Թովմասյան
Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը քրեական պատասխանատվության համակարգում..... 107

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

Վարազդատ Սուքիասյան
IN ABSENTIA դատավարությունը միջազգային քրեական դատարանում.....119

Ինգա Ավագյան
Ապացույցների դատական հետազոտումն ապացուցման ինքնուրույն փո՞ւլ, թե՞ ապացույցների գնահատման տարատեսակ 133

Արթուր Ղամբարյան, Գրիգոր Չապանյան
Քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելը և դրա իրավական հետևանքները 146

Գեղեցիկ Բալյան
Բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության կառուցակարգերը գույքի արգելադրման ինստիտուտի շրջանակներում 158

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

Արփակ Գևորգյան
Պատերազմի ժամանակ ռազմական դրոնի իրավաչափ կիրառության կանոնները 173

Մարտին Մանուկյան, Վահե Հովհաննիսյան
Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելիս փաստաբանի մասնակցությունը պարտադիր համարելու, այդ առնչությամբ միջազգային պրակտիկայի իրավահամեմատական վերլուծության արդյունքների մասին 183

Հովսեփ Քոչարյան
Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների իրավական խնդիրները՝ Հռոմի ստատուտի 7(1)(k) հոդվածի համատեքստում. Հայաստանյան իրավական տեսանկյուն 196

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Վճռաբեկ դատարանի որոշումներ 215

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-3

АРСЕН КАХКЦЯН
Генеральный штаб Вооруженных Сил Республики Армения, подполковник, Соискатель института права Российско-Армянского университета

ԱՐՍԵՆ ՔԱՂՔՑՅԱՆ
Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբ, փոխգնդապետ, Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի հայցորդ

ARSEN KAGHKTSYAN
General Staff of the Armed Forces of the Republic of Armenia, Lieutenant Colonel, Applicant at the Institute of Law of the Russian-Armenian University
https://orcid.org/0009-0000-2558-0214

ВОЕННОЕ ПРАВО В ПЕРИОД ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1918-1920 ГГ.)

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (1918-1920 ԹԹ.)

MILITARY LAW DURING THE PERIOD OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA (1918-1920)

Введение

Исследование особенностей становления правового регулирования военной сферы в период существования Первой Республики Армения (1918–1920 гг.) представляет интерес не только в историко-правовом аспекте, но и с точки зрения преемственности формирования современного дискурса военно-правовой действительности армянской государственности.

В рассматриваемый период, характеризующийся условиями постоянных вооружённых конфликтов и нестабильной государственности, военное право ещё не сложилось как самостоятельная отрасль, однако именно тогда были заложены отдельные военно-правовые институты, оказавшие влияние на дальнейшее развитие правовой системы государства.

Основное исследование

Первая Республика Армения являлась независимым государством, которое *de facto* было провозглашено 28 мая 1918 г. в Тифлисе, в ходе распада Закавказской демократической

федеративной республики[1]. Как автономное государство оно располагалось на территории Эриванской губернии, бо́льшей части Карсской области, а также на части территории Елизаветпольской губернии и Тифлисской губернии, что также симметрично отражало территории исторической Восточной Армении[2].

По мнению историков, «независимость Республики Армении была провозглашена после создания Азербайджана в обстановке, когда турецкие интервенты захватили территорию не только Западной (турецкой) Армении, но и почти всю Восточную (Российскую) часть. Довершая геноцид армян, турецкая армия уничтожала население оккупированных территорий и нашедших там прибежище беззащитных беженцев из «турецкой» Армении»[3]. В период турецкого вторжения армянское население организовывалось «в своего рода военную республику, которая состояла из четырех частей, во главе которых стояли «хмбапеты (предводители отрядов самообороны)»[4].

Как представляется, данный историко-правовой опыт также был учтен в дальнейшем при разработке соответствующих военно-правовых норм. После провозглашения независимости Республики Армения остро встал вопрос о создании ее регулярной армии, тем более что уже в мае 1918 г. развернулось турецкое наступление на Восточную Армению. Как отмечается некоторыми специалистами, создание Первой Республики Армения в 1918 году явилось результатом вооруженной борьбы армянского народа во главе с партией «Дашнакцутюн»[5].

В литературе выделяют следующие «основные этапы создания и деятельности армянской армии и спецслужб Первой Республики Армения»[6]:

1) 1892-1914 гг. – формирование подпольных боевых партийных структур для организации революционного движения и самообороны соотечественников в Западной Армении; осуществление ряда боевых и специальных операций в Османской Турции, Иране и Закавказье;

2) сентябрь 1914 г. – декабрь 1915 г. – создание 6-ти Добровольческих армянских полков (пяти отрядов партии АРФД и одного отряда партии «Гичак») в составе русской армии на Кавказском фронте;

3) январь 1916 г. – июнь 1917 г. – создание армянских пехотных батальонов в составе русской армии на Кавказском фронте;

4) 1917 г. – ноябрь 1919 г. – создание «Восточного (Армянского) Легиона» в составе французской армии в Киликии;

5) декабрь 1917 – май 1918 гг. – создание Добровольческого Армянского корпуса на Кавказе из числа армянских офицеров и солдат русской армии и западноармянской дивизии;

6) май 1918 г. – декабрь 1920 г. – создание и боевая деятельность регулярной армянской армии и разведывательного отделения (управления) Главного штаба Военного министерства

[1] *Hewsen R. H.,* Armenia: A Historical Atlas. Chicago: University of Chicago Press, 2001, p. 235.
[2] *Bournoutian G.,* Eastern Armenia from the 17th Century to the Russian Annexation // The Armenian People from Ancient to Modern Times / Richard G. Hovannisian. Palgrave Macmillan, 1997, p. 81-107.
[3] Нагорный Карабах в международном праве и мировой политике. Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; отв. ред. А.Ю. Меликян. М.: Мелихово, 2009, с. 71-73.
[4] Там же.
[5] См.: *Зинуров Р.Н.,* Роль национально-освободительного движения и «Дашнакцутюн» в создании Республики Армения в 1918 г.: Сб. мат. конф. «28 мая 1918 г. – рождение гражданина и армии Республики Армения». М., 2014, с. 33.
[6] *Сваранц А.,* Особенности формирования силовых структур Первой Республики Армения и их боевая деятельность накануне, в период и после существования Республики // Регион и мир. 2014, № 1, с. 40.

Республики Армения;

7) декабрь 1920 г. – август 1922 г. – оборона Зангезура, провозглашение Нагорной (Сюникской) Армянской Республики, продолжение специальной операции «Немезис» по уничтожению лидеров младотурецкой Турции и мусаватистского Азербайджана, повинных в организации и осуществлении геноцида армян.

Создание регулярной армянской армии происходило в отсутствие соответствующих комплексных военно-правовых норм на основе сложившихся с давних времен «военных» обычаев» и опыта военных действий.

Первой Республике Армения удалось развернуть армию общей численностью около 40 тысяч человек, офицерский корпус которой состоял из армянских и русских офицеров бывшей царской армии. Оружие и снаряжение частично было поставлено Великобританией, а остальное досталось от войск прекратившего свое существование русского Кавказского фронта. В частности, по свидетельству генерала Андраника Озаняна, русская армия на Кавказском фронте оставила около 3000 пушек, 1 миллиард патронов, 1 миллион бомб, 100 тысяч винтовок, 15-17 тысяч лошадей, машины и т.д. В 1918-1919 гг. правительством Ованеса Качазнуни создаются силовые структуры Армении: Военное министерство, Главный штаб армии, Разведывательное отделение (с апреля 1920 г. – Разведывательное управление) Главного штаба, Министерство внутренних дел». За период существования Первой Республики Армения (28.05.1918 г. – 02.12.1920 г.) ее армия участвовала в шести войнах:

- дважды с Турцией (май-июнь 1918 г. и сентябрь – декабрь 1920 г.; в итоге армяне потеряли значительную часть своей территории и до 198 тыс. человек погибшими);
- с Грузией (декабрь 1918 г.);
- с мусавитистским Азербайджаном – война против «Араксской республики», провозглашенной во главе с Джеваншир-ханом в Нахичевани при поддержке турок азербайджанцами, и пришедшего им на помощь войск мусаватистского Азербайджана (май-август 1918 г.);
- вторая армяно-азербайджанская война, охватившая Нагорный Карабах, Нахичеванский, Зангезурский и Гянджинский уезды (март-апрель 1920 г.);
- с РСФСР и Советским Азербайджаном (в Нагорном Карабахе – июнь 1920 г.)[7].

Следует принимать во внимание то обстоятельство, что в Армении исследуемого периода находились официальные представители белогвардейских сил. Данные обстоятельства обуславливали необходимость скорейшего формирования комплексного военного права с учетом опыта боевых действий как положительного, так и отрицательного[8], поскольку в Закавказье царила анархия, грабеж, беспорядки, преступность возрастала. Своевременным ответом на требование того времени стало создание революционных трибуналов, основной задачей которых было осуществление быстрого правосудия, установление порядка и устранения бесправия. Согласно архивным документам на территории Республики Армения были созданы три военно-революционных трибунала: в Ереване, Эчмиадзине и Дилижан-Карвансарае. В материалах архивных фондов сохранился лишь устав последнего военно-революционного трибунала. Ученые, сравнивая уставы Тифлисского ревтрибунала и Дилижанского районного трибунала, отмечали, что последний содержал вопиющие отклонения от действующих законов, одним из которых было установление смертной казни. Устав, утвержденный начальником

[7] Там же, с. 41.

[8] История армянского народа: с древнейших времен до наших дней / Г.К. Саркисян, Т.Х. Акопян, А.Г. Абрамян и др.; Под ред. М.Г. Нерсисяна. Ереван: Изд-во «Ереванского университета», 1980, с. 254.

военного округа, отклоняясь от закона и в отличие от образцового устава Тифлисского революционного трибунала, изменял действующую систему мер наказания или ужесточал их. Так, обворовывание военного имущества каралось смертной казнью[9].

Более того, 24 июля 1919 г. по инициативе военного министра был принят Закон «О введении смертной казни», где были перечислены общественно опасные деяния, за которые применялась высшая мера наказания, в частности за государственные и военные преступления[10].

В кратчайший период своей деятельности в Первой Республике Армении было принято более 300 правовых актов, часть из которых представляла собой решения и распоряжения правительства. До принятия национальных законов на территории Армении действовали ранее применяемые законы царской России с соответствующими изменениями. Среди первых законов независимой Армении был закон 1918 г. о конфискации незаконного оружия. К числу важнейших следует относить законы о юстиции и судоустройстве, самоуправлениях, языке, заботе о беженцах, об армии, социальной защите, восстановлении хозяйства.

В отношении принятия Конституции у политического руководства страны и представителей оппозиционных партий была следующая позиция: «Конституция Республики Армения будет принята “Конституционным Советом” после установления мира и окончательного решения вопроса о территориальных границах Республики Армения».

Главными источниками вооружения для армии стали склады российских войск, входивших в состав Кавказского фронта. Генерал Андраник Озанян позже вспоминал, что российская армия, уходя с Кавказа, оставила здесь 3000 артиллерийских орудий, 100 тысяч винтовок, 1 миллион бомб, 1 миллиард патронов и другое вооружение и оснащение. Кроме того, с вооружением формирующейся армянской армии помогла Великобритания, первоначально заинтересованная в усилении Армении как противовеса Османской Турции. Среди наиболее выдающихся военачальников армянской армии периода «Первой республики» обычно называют генерал-лейтенанта Мовсеса Михайловича Силикяна (Силикова, 1862–1937 г.), генерал-майора российской императорской армии, удина по происхождению, Драстамата Мартиросовича Канаяна (1883–1956 г., он же «генерал Дро») – легендарного дашнака, впоследствии бывшего комиссара армянского корпуса, а затем в 1920 г. – военного министра Республики Армения; полковника Арсена Самсоновича Тер-Погосяна (1875–1938 г.), командовавшего отрядами, остановившими наступление турецкой армии на Ереван в мае 1918 г.; генерал-майора Андраника Торосовича Озаняна (1865–1927 г.), у которого были весьма сложные отношения с правительством Республики Армении, поэтому его можно рассматривать не столько как командира соединения армянской армии, сколько как руководителя отдельных вооруженных формирований, созданных на основе Западно-армянской дивизии.

История Первой Республики Армения – это история практически непрекращающихся войн с соседями. В мае-июне 1918 г. и в сентябре-декабре 1920 г. армия Армении участвовала в войне с Турцией. В декабре 1918 г. Армения воевала с Грузией, в мае-августе 1918 г. – с Азербайджаном и «Аракской республикой» азербайджанцев Нахичевани, в марте-апреле 1920 г. участвовала в войне с Азербайджаном, развернувшейся на территории Нахичевани,

[9] *Вагаршян А.Г.,* Установление и применение смертной казни в Первой Республике Армения (1918 – 1920 гг.) // Новое слово в науке и практике: гипотезы и апробация результатов исследований. 2012, № 2, с. 149.
[10] Там же, с. 150.

Нагорного Карабаха, Зангезура и Гянджинского уезда»[11].

При этом также подчеркивается, что «этап Первой Армянской Республики (1918-1920 гг.) – возрождение героических традиций армянского народа и Вооруженных Сил Первой Армянской Республики в ходе религиозных и светских мероприятий; отражение героических традиций во внешней символике и другие[12].

Значительную роль в формировании военного права сыграл, принятый 23 ноября 1920 г. Советом министров, «Временный закон о должностных преступлениях», которым для военнослужащих предусматривалась ответственность, в том числе за совершение должностных преступлений[13].

Заключение

Изложенное выше, позволяет сделать вывод о том, что военное право в период существования Первой Республики Армения не представляло собой сложившуюся самостоятельную отрасль права, носило фрагментарный характер и отражало предыдущий историко-правовой опыт, что было обусловлено положением, в котором находилась Армения в этот исторический период. Многочисленные войны с различными участниками еще раз подчеркивали высокое военное искусство, которым обладали армянские военные, постоянно дающие отпор врагам и осуществляющие наступательные действия в целях защиты своей страны. Офицерский корпус ее состоял из армянских и русских офицеров бывшей царской армии. В этот период становления военного права сложились отдельные военно-правовые институты, оказавшие влияние на дальнейшее развитие правовой системы государства, что заложило основу для дальнейшего формирования военного права как самостоятельной отрасли права.

Аннотация. Статья посвящена анализу особенностей становления правового регулирования военной сферы в период существования Первой Республики Армения (1918–1920 гг.). В условиях постоянных вооружённых конфликтов и нестабильной государственности формирование военного права носило фрагментарный характер. Делается вывод о том, что военное право в рассматриваемый период ещё не сложилось как самостоятельная отрасль, однако были заложены отдельные военно-правовые институты, оказавшие влияние на дальнейшее развитие правовой системы.

Прослеживая преемственность формирования современного дискурса военно-правовой действительности армянской государственности, автор в качестве условий формирования военного права отметил: шесть войн, в которых принимала участие Первая Республика Армения за короткий период своего существования; приятие значительного количества (около 300) правовых актов с учетом реального опыта ведения боевых действий; возможность принятия Конституционным советом Конституции Республики Армения после наступления мира и решения территориального вопроса.

Опираясь на результаты исторических исследований, автор отметил отдельные военно-правовые институты, которые, по его мнению, оказали влияние на формирование военного права как самостоятельной отрасли права, а именно, отмечена значительная роль «Временного закона о должностных преступлениях», который предусматривал ответственность для военнослужащих, в том числе за совершение должностных преступлений.

[11] *Асланян Р.К., Дьяченко Е.В.,* Вооруженные силы Республики Армении – история и современность // URL: https://scienceforum.ru/2017/article/2017038072?ysclid=lutplsjp4w329755441 (дата обращения: 01.01.2024).

[12] *Саргсян А.Н.,* Воспитание военнослужащих Вооруженных Сил Республики Армения на героических традициях: дис. … канд. пед. наук. М., 2017, с. 11.

[13] *Вагаршян А.Г.,* Указ. соч., с. 152.

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է Հայաստանի Առաջին Հանրապետության (1918–1920 թթ.) օրոք զինվորական (ռազմական) ոլորտի իրավակարգավորման ձևավորման առանձնահատկությունների վերլուծությանը: Զինվորական (ռազմական) իրավունքի ձևավորումը նշված ժամանակահատվածում տեղի է ունեցել կտրտված կարգով, քանի որ պետությունը մշտապես գտնվել է զինված հակամարտությունների և անկայուն վիճակում: Եզրակացվում է, որ վերոնշյալ ժամանակահատվածում ռազմական իրավունքը դեռևս չէր զարգացել որպես ինքնուրույն ճյուղ, սակայն ստեղծվել էին որոշ զինվորական իրավունքի ինստիտուտներ, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել իրավական համակարգի հետագա զարգացման վրա:

Հետևելով հայոց պետականության ռազմաիրավական իրականության ժամանակակից դիսկուրսի ձևավորմանը՝ հեղինակը՝ որպես զինվորական (ռազմական) իրավունքի ձևավորման հիմնական պայմաններ, նշել է, որ պետությունն իր գոյության կարճ ժամանակահատվածում մասնակից էր դարձել վեց պատերազմների և տարաբնույթ ռազմական գործողությունների, հիմնվելով վերոնշյալ փորձերի վրա ընդունել է զգալի քանակի (300) իրավական ակտեր, խաղաղության հաստատումից և տարածքային հարցի լուծումից հետո նախատեսվում էր Սահմանադրական խորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման հնարավորությունը:

Պատմական հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը նշել է առանձին ռազմաիրավական ինստիտուտներ, որոնք, վերջինիս կարծիքով, ազդել են ռազմական իրավունքի՝ որպես իրավունքի անկախ ճյուղի ձևավորման վրա: Մասնավորապես՝ «Պաշտոնական հանցագործությունների մասին ժամանակավոր օրենքի» նշանակալի դերի մասին, որը զինծառայողների համար ևս նախատեսում էր պատասխանատվություն:

Annotation. The article is devoted to the analysis of the peculiarities of the formation of legal regulation of the military sphere during the existence of the First Republic of Armenia (1918–1920).In the context of constant armed conflicts and unstable statehood, the formation of military law was fragmentary.

It is concluded that military law in the period under review had not yet developed as an independent branch, but separate military-legal institutions had been established that influenced the further development of the legal system.

Tracing the continuity of the formation of the modern discourse of the military-legal reality of the Armenian statehood, the author noted the following as conditions for the formation of military law: six wars in which the First Republic of Armenia took part during the short period of its existence;six wars in which the First Republic of Armenia participated during the short period of its existence; the adoption of a significant number (about 300) of legal acts taking into account the actual experience of conducting military operations; the possibility of the adoption of the Constitution of the Republic of Armenia by the Constitutional Council after the establishment of peace and the resolution of the territorial issue.

Based on the results of historical research, the author noted individual military-legal institutions that, in his opinion, influenced the formation of military law as an independent branch of law,Namely, the significant role of the “Temporary Law on Official Crimes” was noted, which provided for liability for military personnel, including for the commission of official crimes.

Ключевые слова: *Первая Республика Армения, военное право, военно-правовые нормы, военно-уголовные нормы, военная история.*

Բանալի բառեր *- Հայաստանի Առաջին Հանրապետություն, զինվորական իրավունք, զինվորական իրավական նորմեր, զինվորական քրեական նորմեր, ռազմական պատմություն:*

Keywords: *First Republic of Armenia, military law, military legal norms, military criminal norms, military history.*

Список использованной литературы

Научная, учебная, специальная, литература

1. Асланян Р.К., Дьяченко Е.В. Вооруженные силы Республики Армении – история и современность // URL: https://scienceforum.ru /2017/article/2017038072?ysclid=lutplsjp4w329755441 (дата обращения: 10.01.2026).

2. Вагаршян А. Г. Установление и применение смертной казни в Первой Республике Армения (1918 – 1920 гг.) // Новое слово в науке и практике: гипотезы и апробация результатов исследований. 2012. № 2. С. 146-152.

3. Зинуров Р.Н. Роль национально-освободительного движения и «Дашнакцутюн» в создании Республики Армения в 1918 г.: Сб. мат. конф. «28 мая 1918 г. – рождение гражданина и армии Республики Армения». М., 2014.

4. История армянского народа: с древнейших времен до наших дней / Г.К. Саркисян, Т.Х. Акопян, А. Г. Абрамян и др.; Под ред. М.Г. Нерсисяна. Ереван: Издательство «Ереванского университета», 1980.

5. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; отв. ред. А.Ю. Меликян. М.: Мелихово, 2009.

6. Саргсян А.Н. Воспитание военнослужащих Вооруженных Сил Республики Армения на героических традициях: дис. … канд. пед. наук. М., 2017.

7. Сваранц А. Особенности формирования силовых структур Первой Республики Армения и их боевая деятельность накануне, в период и после существования Республики // Регион и мир. 2014. № 1. С. 39-44.

8. Bournoutian G. Eastern Armenia from the 17th Century to the Russian Annexation // The Armenian People from Ancient to Modern Times / Richard G. Hovannisian. Palgrave Macmillan, 1997.

9. Hewsen R.H. Armenia: A Historical Atlas. Chicago: University of Chicago Press, 2001.

Кахкцян А. - Генеральный штаб Вооруженных Сил Республики Армения, подполковник, Соискатель института права Российско-Армянского университета, эл. почта: arsen0915@yandex.ru.

Статья представлена в редакцию 12.01.2026 г., отправлена на рецензию 12.01.2026 г., рецензенты: кандидат юридических наук, Советник юстиции 2 класса В. Морозов, личную подпись Морозова Владимира Николаевича заверяю. Генеральный директор ООО «Центр правовой поддержки «Гранцев Альянс»» В. Свирина, принята к публикации: 02.07.2026.

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-10

ԱՐԱՐԱՏ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ

ARARAT BAYANDURYAN
PhD Student at the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Member of the Chamber of Advocates of the RA

АРАРАТ БАЯНДУРЯН
Аспирант Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения, член Палаты адвокатов РА
https://orcid.org/0009-0004-2740-1418

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

TYPES OF TRANSITIONAL JUSTICE

ВИДЫ ПЕРЕХОДНОГО ПРАВОСУДИЯ

Ներածություն

Ժամանակակից միջազգային և ներպետական իրավական համակարգերում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում անցումային արդարադատությունը՝ որպես այնպիսի մեխանիզմների և կառուցակարգերի համախումբ, որոնք կիրառվում են հասարակական-քաղաքական արմատական փոփոխությունների, ավտորիտար ռեժիմների տապալման կամ զանգվածային իրավախախտումներով ուղեկցված անցումային փուլերի պայմաններում: Նման ժամանակաշրջաններում դասական արդարադատության համակարգերը հաճախ ի վիճակի չեն լիարժեքորեն արձագանքելու նախկինում կատարված ծանր և համակարգային խախտումներին, ինչի արդյունքում առաջանում է արդարության վերականգնման, ճշմարտության բացահայտման և հասարակական վստահության վերակառուցման անհրաժեշտություն:

Անցումային արդարադատության գաղափարախոսությունը հիմնված է ոչ միայն մեղավորների իրավական պատասխանատվության ենթարկման, այլև զոհերի իրավունքների ճանաչման, սոցիալական հաշտեցման և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման վրա: Այն ներառում է բազմազան գործիքակազմ՝ սկսած քրեական հետապնդումից և ճշմարտության հանձնաժողովներից մինչև փոխհատուցման մեխանիզմներ, լյուստրացիա և վեթինգ, որոնք միասին ուղղված են անցյալի իրավախախտումների հետևանքների հաղթահարմանը և ապագայում դրանց կրկնության կանխմանը:

Հիմնական հետազոտություն

Անցումային շրջանի քրեական արդարադատության իրականացրած Գերմանիան և Ճապոնիան առաջիններից էին, որտեղ ստեղծվեցին միջազգային քրեական տրիբունալներ: Հետագայում նման պրակտիկան լայն տարածում գտավ նաև Հարավսլավիայում և Ռուանդայում, որտեղ նույնպես միջազգային քրեական դատարաններ ստեղծվեցին:

Միջազգային քրեական դատարաններից (տրիբունալներից) զատ՝ ընդունվել են նաև խառը (հիբրիտային) դատարանների ստեղծումը, որի լավագույն օրինակներ են Կամբոջան և Սիերա-Լեոնեն[1]:

Անհրաժեշտ է նշել, որ միջազգային բնույթ կրող դատարանները և տրիբունալները քրեական պատասխանատվության են ենթարկում ոչ թե պետություններին (կառավարություններին), այլ անհատներին, որոնք մեղադրվում են այնպիսի հանցագործությունների իրականացման մեջ, որոնք վտանգում են ողջ մարդկության անվտանգությունը: Թերևս վերոնշյալ տրիբունալների և խառը (միջազգային և ազգային) դատարանների գործունեության կարևորությունն արժևորելով էլ 1998 թվականի Հռոմում ստորագրվեց Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը[2]:

Բացի անցումային շրջանի տրիբունալներից՝ միջազգային արդարադատություն իրականացնող երկրները երբեմն արդարադատություն են իրականացնում իրենց իսկ ներպետական դատական ատյաններում:

Արդարության և ճշմարտության բացահայտում.

Արդարության և ճշմարտության բացահայտման գործընթացներն օգնում են փոխակերպվող հասարակություններին օբյեկտիվ և անաչառ քննության առարկա դարձնել նախկինում կատարված զանգվածային և համակարգված իրավախախտումները և, ամենակարևորը, երաշխիքների միջոցով կանխարգելել դրանց կրկնությունն ապագայում: Այդ ընթացակարգերը (կառուցակարգերը) հիմնականում իրականացվում են արդարության (ճշմարտության) և համաձայնողական (կամ հաշտեցման) հանձնաժողովների կողմից՝ որպես վերականգնողական արդարադատության եղանակ: Անհրաժեշտ է ընդգծել, որ մոտ 30-ից ավելի նմանօրինակ կառուցակարգեր արդեն իսկ հիմնադրվել են աշխարհի տարբեր երկրներում:

Այդպիսի կառուցակարգերի առավելությունն այն է, որ նմանատիպ մարմինները հնարավորություն են ստանում փաստահավաք գործունեություն իրականացնելու մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, նպաստում հաշվետվողականության ինստիտուտի ամրապնդմանը, պահպանում ապացույցները, բացահայտում մեղավորներին, հատուցման համապատասխան կարգ են մշակում և ձեռնամուխ լինում համակարգային վերափոխումների իրականացմանը:

Նրանք իրավասու են զոհերին հնարավորություն տալ իրենց խախտված լիարժեք տեղեկություններ ներկայացնելու՝ իրավունքների վերաբերյալ արդարադատությանը և խաղաղությանը վերականգնելու համար և դրանով իսկ հանրությանը հնարավորություն է ընձեռում հրապարակային բանավեճերի և քննարկումների միջոցով նախկինում կուտակված բազմապիսի խնդիրներին համարժեք լուծումներ գտնելու համար:

Վերականգնողական և փոխհատուցումների ընթացակարգերի իրականացման առանցքային հարցադրումները

[1] Մանրամասն տես *Գրիգորյան Հ. Մ.,* Ձինված հակամարտությունների կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության, միջազգային-իրավական և կազմակերպման հիմքերը: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2001:

[2] Մանրամասն տե՛ս, *Катенко Н.И.,* Международный уголовный суд.// Государство и право.2000, № 3 с.92-103.

Վերականգնողական և փոխհատուցումային ընթացակարգերը դասակարգվում են մի քանի չափանիշների հիման վրա: Դրանք կարող են լինել նյութական (դրամական, գույքային) և ոչ նյութական (բարի համբավի վերականգնում, արդարացում, աշխատանքի վերականգնում և այլն):

Փոխհատուցման (reparation) ընթացակարգերը ներառում են՝ նախնական իրավիճակի վերականգնում, կոմպենսացիա, ռեաբիլիտացիա, սատիսֆակցիա, կրկնության արգելքի երաշխիքների ապահովում:

Նախնական իրավիճակի վերականգնման օրինակներից են՝ արդարության, պատվի և արժանապատվության վերականգնումը, մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովումը, քաղաքացիության վերականգնելը, ազատ տեղաշարժի ապահովումը և այլն:

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է նաև իրականացնել պետության և ժողովրդի ակտիվներից գողունի վերադարձը և դրա արդարացի վերաբաշխումը, ինչը Հայաստանի ներկայիս գերխնդիրներից մեկն է:

Փոխհատուցումը (կոմպենսացիա) ֆինանսական (նյութական) բավարարումն է՝ ըստ հասցված վնասի չափի և ծավալի: Այն կարող է ծագել նյութական կամ բարոյական վնաս հասցնելուց, բաց թողնված օգուտից և այլն: Ֆինանսանյութական փոխհատուցումները կարող են լինել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ՝ ուղղված որևէ կոնկրետ խմբի: Կոմպենսացիայի տրամադրման եղանակներն են՝ միանվագ փոխհատուցումները, կենսաթոշակների տրամադրումը, երաշխիքների սահմանումը և այլն:

Ռեաբիլիտացիան ներառում է բարի համբավի վերականգնումը, բժշկական և հոգեբանական ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև իրավական և այլ սոցիալական ծառայությունների մատուցելը:

Սատիսֆիկացիան ներառում է միջոցառումների լայն շրջանակ, ներառյալ փաստերի հավաքումը և դրանց իսկության ստուգումը, ճշմարտության լիարժեք և հրապարակային բացահայտումը (որն իրականացվում է որպես առանձին ընթացակարգ՝ ճշմարտության հանձնաժողովների միջոցով), տուժածների պատիվն ու արժանապատվությունը, բարի համբավը և հեղինակությունը, իրավունքների և օրինական շահերը իրավաբանորեն ճանաչող դատական որոշումները և գործընթացները (որն իրականացվում է որպես առանձին կառուցակարգ՝ քրեական արդարադատության միջոցով), անհետ կորածների որոնողական աշխատանքների, մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացների, համապատասխան խորհրդատվությունների կազմակերպումը և այլն:

Արմատական և համակարգային բարեփոխումների իրականացումը.

Արմատական և համակարգային վերափոխումները (բարեփոխումները) իրականացվում են, որպեսզի ստեղծվեն սոցիալ-քաղաքական և իրավական երաշխիքներ՝ կանխելու նախկին հանցագործությունների կրկնությունն ապագայում: Այստեղ հիմնականում նկատի է առնվում, այսպես կոչված, լյուստրացիան (մաքրագործում, զտում) և վեթինգը (քաղաքական գործիչների զտում, տարանջատում):

Լյուստրացիան՝ լատիներեն lutratio բառի հոմանիշն է (Lustra մաքրագործում զոհաբերության միջոցով), որն օրենսդրորեն սահմանափակում է նախկին պետծառայողների (նաև որոշ քաղծառայողների) քաղաքական-աշխատանքային իրավունքները՝ հաշվի առնելով նախկին ռեժիմի ժամանակ նրանց ոչ իրավական «ծառայությունները» ավտորիտար ռեժիմին: Ենթադրվում է, որ լյուստրացիայի իրականացումը՝ նախ նախազգուշական միջոցառում է՝ ուղղված նոր ձևավորվող պետական ապարատի ծառայողների համար, երկրորդ՝ նոր ձևավորված իշխանությանը քաղաքական և սոցիալական լեգիտիմություն է հաղորդում՝ արմա-

տապես տարանջատվել նախկին ռեժիմի իշխանության, որպես կանոն, բարձրաստիճան ծառայողներից և նրանց աշխատաոճից:

Անցումային արդարադատության գործիքակազմերից է նաև վեթինգը (անձանց խոցելիության ստուգում):

Վեթինգը (անձանց խոցելիության ստուգման միջոց) որպես անցումային արդարադատության գործիքակազմ և ընթացակարգ էական նշանակություն ունի ապահովելու փոփոխվող դատական համակարգի իրական անկախությունը, մատչելիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև վերականգնելու քաղաքացիների (իրավաբանական անձանց և այլ սուբյեկտների) վստահությունը երկրի դատական իշխանության հանդեպ:

Վեթինգը (քաղաքական և պետական ծառայողների, գործիչների զտում) գործընթաց է[3], որի ընթացքում հետաքննություններ են իրականացվում պարզելու նախկին պետծառայողների կողմից պաշտոնական լիազորությունների սահմանազանցման դեպքերը և դրանց մեղավորության աստիճանը: Վեթինգի թիրախում կարող են գտնվել իրավապահ մարմինների և արդարադատության համակարգի աշխատակիցները, որոնք «առավել ջանասիրաբար են ծառայել» նախկին ռեժիմին: Սա նույնպես հսկայական նախազգուշական և կանխարգելիչ միջոցառումներ են, որպեսզի ուժային կառույցներն ապագայում չչարաշահեն իրենց վերապահված լիազորությունները:

Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ վեթինգը կարող է իրականացվել նաև քաղաքացիական ծառայողների նկատմամբ: Այս կապակցությամբ քննարկենք վեթինգի միջազգային փորձը, որի դրական և բացասական կողմերը կարող են ուսանելի լինել Հայաստանի համար դատավորների համընդհանուր վեթինգի մոդելի մշակման տեսանկյունից:

2014-2015 թթ. Ալբանիայի դատական համակարգում արձանագրվել էր կոռուպցիայի բարձր մակարդակ, հանրության ցածր վստահություն դատական իշխանության նկատմամբ: Այս ոլորտի բարեփոխումը համարվել էր առաջնահերթություն ԵՄ, ԱՄՆ հետ համագործակցության համատեքստում[4]: Դատավորների և դատախազների նկատմամբ իրականացվող վեթինգը՝ որպես բարեփոխումների գործիքներից մեկը, նախատեսվել էր 2015 թ. սահմանադրական փոփոխությունների անցումային դրույթներով, որոնք դրական էին որակվել Վենետիկի հանձնաժողովի կողմից[5]: Սահմանադրական փոփոխությունների հիման վրա ընդունվեց Վեթինգի մասին օրենքը, որը նախատեսում է եռափուլ վեթինգ հետևյալ չափանիշներով[6]:

Գույքի ստուգում. ենթադրում է բոլոր դատավորների և դատախազների գույքի և եկամուտների աուդիտ՝ <u>առանց ժամանակային սահմանափակման</u>: Այս քննության գործընթացում ապացուցման բեռը դրվում էր կոնկրետ վերագնահատում անցնող պաշտոնատար անձի վրա, որը պետք է ապացուցի իր գույքի կամ եկամուտի օրինականությունը:

Կապերի ստուգում. ներառում է անձի անցած և ներկա գործունեության ուսումնասիրություն՝ պարզելու, թե արդյոք հակումներ է դրսևորել ներառվելու հանցավոր խմբերում կամ

[3] Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո, Երևան, 2019: (https://armla.am/wp-content/uploads/2019/08/%U4%3 4%D5%A1 %D5%BF%D5%A1 %D5%AF%D5%A1 %D5%B6-%D5%8E%D5%A5%D5%A9%D5%AB%D5%B6%D5%A3- %D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%A E%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf:

[4] Տես Albania Report 2016 (Directorate-General for Neighbourhood and Enlargement Negotiations). 9 Nov 2016. https://enlargement.ec.europa.eu/albania-report-2016_en:

[5] Տես Venice Commission opinion: CDL-AD(2015)045 Or. Engl:

[6] Տես Policy Analysis: An Analysis of the Vetting Process in Albania PDF, https://www.legalpoliticalstudies.org/wp-content/uploads/2017/06/Policy-Analysis-An-Analysis-of-the-Vetting-Process-in-Albania.pdf:

գործելու նման խմբերի ճնշման ներքո, կամ ներառվել են ուղիղ կամ անուղղակի նման խմբերում: Այս փուլում հանրության շրջանում դժգոհություն է առաջացնում անվտանգության մարմինների ներգրավվածությունը: Այնուամենայնիվ, այս ռիսկը նվազեցվում էր, քանի որ վերջնական որոշումը կայացնում էր Անկախ հանձնաժողովը:

Արհեստավարժության գնահատում. Գնահատվելու են անաչառ և արհեստավարժ որոշումներ ընդունելու չափանիշով: Սա ներառում է նաև կառավարչական հմտությունների, էթիկայի, անձնական հատկանիշների գնահատում, որոնք սահմանվում են օրենքով: Եթե հմտությունները բավարար չեն, դատավորը կամ դատախազը կարող է ուղարկվել վերապատրաստման մասնագիտական ակադեմիա /School of Magistrates/, իսկ ավելի վատ ցուցանիշներ ունեցողները պարզապես ազատվում են պաշտոնից:

Վեթինգն իրականացնելու են Անկախ որակավորման հանձնաժողովն ու Վերաքննիչ հանձնաժողովը: Ալբանացի հարյուրավոր դատավորներ և դատախազներ հրաժարվեցին իրենց պաշտոններից նախքան վերստուգման մեկնարկը, իսկ որոշ հետազոտությունների համաձայն՝ դատավորների գրեթե կեսը ազատվեցին պաշտոններից վեթինգի արդյունքում: Դրա ավարտը նախանշվում է 2021 թ.: Օրենքի սահմանադրականության պարզման փուլում Վենետիկի հանձնաժողովը ներկայացրել է amicus curiae Ալբանիայի ՍԴ-ին հետևյալ հիմնական եզրահանգումներով[7]:

Վեթինգը կարող է արդարացվել արտակարգ պայմաններում և որպես կարճաժամկետ միջամտության գործիք, երբ այլ երկարաժամկետ միջոցները չեն կարող ապահովել արդյունավետ արդյունքներ;

- Գործընթացի անկախության և անաչառության սկզբունքի պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է վեթինգի իրականացումը անկախ մարմինների կողմից: Տվյալների հավաքման, հետաքննության իրականացման գործառույթները գործադիրին կից մարմիններին վերապահելը չի խախտում այս սկզբունքը:
- Որպեսզի ողջ վեթինգի գործընթացը համապատասխանի արդար դատաքննության ստանդարտներին, անհրաժեշտ է ապահովել պաշտոնից ազատված դատավորների համար անկախ վերաքննության հնարավորություն՝ վիճարկելու համար վերագնահատման արդյունքները:

Բոսնիա և Հերցեգովինայում դատավոր էին նշանակված ոչ որակյալ մասնագետներ, որոնք շարունակում էին ծառայել նախորդ կոռումպացված ռեժիմի օրակարգին[8]:

Չնայած երկրում բարեփոխումները սկսվեցին 1995 թ.՝ Դեյթոնյան խաղաղության համաձայնագրից հետո, այնուամենայնիվ դատական և դատախազական համակարգերի բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները սկսվեցին միայն 2001 թ., երբ ստեղծվեց Անկախ դատական և դատախազական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որն առաջարկեց տեղի ունեցող վերանայման/ստուգման գործընթացը փոխարինել բոլոր դատավորների և դատախազների վերանշանակման գործընթացով:

[7] Տե՛ս Venice Commission. (2016). Opinion No. 868/2016 – Amicus Curiae Brief for the Constitutional Court of Albania on the Law on the Transitional Re-evaluation of Judges and Prosecutors (CDL-AD(2016)036-e). Council of Europe. https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)036-e:

[8] United Nations Development Programme & International Center for Transitional Justice. (2006). Vetting public employees in post-conflict settings: Operational guidelines. https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-UNDP-Global-Vetting-Operational-Guidelines-2006-English.pdf.

Եզրակացություն

Անցումային արդարադատության գործընթացում կարևոր է ոչ միայն դատական համակարգի, այլ նաև գործադիր մարմինների և անվտանգության ծառայությունների վերահսկողության ապահովումը: Այն իրականացվում է՝ ստեղծելով անկախ տեսչական մարմիններ, որոնք վերահսկում են ծառայողական կարգապահության, լիազորությունների կիրառման և մարդու իրավունքների պահպանման գործընթացները: Այս կառույցները ոչ միայն նախազգուշացնում են ապօրինի գործողությունները, այլ նաև հնարավորություն են տալիս իրավական և քաղաքական պատասխանատվություն սահմանելու պատասխանատուների համար:

Անցումային արդարադատությունը բազմաբաղադրիչ և բազմաձև գործընթաց է, որի արդյունավետ իրականացումը պահանջում է տարբեր մեխանիզմների համադրված կիրառում՝ ճշմարտության բացահայտումից մինչև ինստիտուցիոնալ խորքային բարեփոխումներ:

Ամփոփագիր: Սույն հոդվածում հեղինակը քննարկում է անցումային արդարադատության իրականացման ձևերն ու մեխանիզմները, ներառյալ քրեական արդարադատությունը, բացահայտումն ու պատասխանատվության վերականգնողական ընթացակարգերը, ճշմարտության կոմպենսացիան, բարեփոխումները, լյուստրացիան և այլն: Նման մեխանիզմներն օգտագործվում են այն իրավախախտումների դեպքում, որոնք անհնար է լիարժեք իրավական գնահատել սովորական դատարանների միջոցով, և նպատակ ունեն ապահովել թե՛ իրավական գնահատական, թե՛ հասարակական ճշմարտության հաստատում, հատկապես արմատական և համակարգային իրավախախտումների համատեքստում:

Հոդվածում քննվում են արմատական և համակարգային բարեփոխումների անհրաժեշտությունը՝ լյուստրացիայի և վեթինգի կիրառման միջոցով՝ որպես նախկին ռեժիմի ազդեցության չեզոքացման և նոր պետական ու դատական համակարգերի նկատմամբ հանրային վստահության վերականգնման միջոցներ: Ներկայացվում է վեթինգի միջազգային փորձը, մասնավորապես՝ Ալբանիայի և Բոսնիա և Հերցեգովինայի օրինակներով՝ ընդգծելով դրա արդյունավետության պայմանները և հնարավոր ռիսկերը:

Annotation. This article examines the forms and mechanisms of implementing transitional justice, including criminal justice, fact-finding, restorative accountability procedures, truth compensation, reforms, lustration, and other measures. These mechanisms are applied to violations that cannot be fully assessed legally through ordinary courts and are aimed at ensuring both legal evaluation and the establishment of social truth, particularly in the context of radical and systemic violations.

The article examines the necessity of implementing radical and systemic reforms through the application of lustration and vetting as a means of neutralizing the influence of the former regime and restoring public trust in new state and judicial institutions. It presents international experience in conducting vetting, particularly through the examples of Albania and Bosnia and Herzegovina, emphasizing the conditions for its effectiveness and potential risks.

Аннотация. В статье рассматриваются формы и механизмы реализации переходного правосудия, включая уголовное преследование, установление фактов нарушений, восстановительные процедуры ответственности, компенсационные механизмы, институциональные реформы, люстрацию и иные меры. Указанные инструменты применяются в отношении массовых и системных нарушений, которые не могут быть в полной мере оценены в рамках традиционного судопроизводства, и направлены на достижение как юридической ответственности, так и установления общественно значимой истины.

Особое внимание уделяется необходимости проведения системных реформ посредством таких инструментов, как люстрация и веттинг, рассматриваемых в качестве средств нейтрализации влияния прежнего режима и восстановления общественного доверия к государственным и судебным

институтам. Анализируется международный опыт реализации процедур веттинга, в частности на примере Албании и Боснии и Герцеговины, с акцентом на условиях их эффективности и потенциальных рисках.

Բանալի բառեր *- Անցումային արդարադատություն, կառուցակարգեր և ընթացակարգեր, քրեական արդարադատություն, լյուստրացիա, ճշմարտության և վեթինգ, արադարության հանձնաժողովներ, արմատական համակարգային բարեփոխումներ, զանգվածային իրավախախտումներ:*

Keywords & phrases*: Transitional justice, mechanisms and procedures, criminal justice, lustration, truth and vetting, justice commissions, radical systemic reforms, mass violations.*

Ключевые слова: *переходное правосудие, структуры и процедуры, уголовное преследование, люстрация, комиссии по установлению истины, проверке (веттингу) и справедливости, радикальные системные реформы, массовые нарушения прав.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Катенко Н.И.Международный уголовный суд.// Государство и право.2000, № 3 с.92-103.
2. Albania Report 2016 (Directorate-General for Neighbourhood and Enlargement Negotiations). 9 Nov 2016.
3. Policy Analysis: An Analysis of the Vetting Process in Albania PDF
4. United Nations Development Programme & International Center for Transitional Justice. (2006). Vetting public employees in post-conflict settings: Operational guidelines.
5. Venice Commission opinion: CDL-AD(2015)045 Or. Engl.
6. Venice Commission. (2016). Opinion No. 868/2016 – Amicus Curiae Brief for the Constitutional Court of Albania on the Law on the Transitional Re-evaluation of Judges and Prosecutors (CDL-AD(2016)036-e). Council of Europe.
7. Գրիգորյան Հ. Մ., Ձինված հակամարտությունների կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության, միջազգային-իրավական և կազմակերպման հիմքերը: Սեղմագիր իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2001:
8. Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ, Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո, Երևան, 2019:

Բայանդուրյան Ա. - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, էլհասցե՝ ararat.bayanduryan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 24.01.2026 թ., տրվել է գրախոսության 24.01.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-17

ԱՐՄԵՆ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ
ՀՀ վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի հասարակագիտության ամբիոնի դոցենտ, դասախոս

ARMEN SHUKURYAN
Advisor of the Protocol Department of the Staff of the Prime Minister of the Republic of Armenia, coordinating certain functions within structural divisions, Senior Researcher at the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Candidate of Legal Sciences, Associate Professor, Lecturer at the Armenian State Pedagogical University

АРМЕН ШУКУРЯН
Советник отдела протокола Аппарата Премьер-министра Республики Армения, координирующего отдельные функции в структурных подразделениях, старший научный сотрудник Института философии, социологии и права НАН Республики Армения, кандидат юридических наук, доцент, преподаватель Армянского государственного педагогического университета
https://orcid.org/0009-0003-1359-0011

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

CONTENT-RELATED CHARACTERISTICS OF CONCEPTUAL APPROACHES TO CONTEMPORARY UNDERSTANDING OF LAW FROM THE PERSPECTIVE OF LEGAL THEORY AND PRACTICE

СОДЕРЖАТЕЛЬНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДОВ К СОВРЕМЕННОМУ ПОНИМАНИЮ ПРАВА С ПОЗИЦИИ ТЕОРИИ И ПРАКТИКИ ПРАВА

Ներածություն

Ժամանակակից իրավագիտության մեջ իրավունքի հասկացության հիմնախնդիրներին վերաբերվող հարցերն անհարժեշտ է բաժանել երկու խմբի: Հրապարակումների մեծ քանակն ու իրավունքի փիլիսոփայությանը վերաբերվող գրեթե բոլոր հարցերը նվիրված են իրավունքի էության մասին հարցի պատասխանին: Իրավունքի ընդհանուր տեսության շրջանակում այդ հիմնախնդրին է նվիրվում ատենախոսությունների և մենագրությունների հեղինակների ուշադրությունը, քանի որ ավանդույթ է դարձել իրավունքի էությանը վերաբերող սեփական դիրքորոշման արտահայտումը պետության և իրավունքի տեսության, հանգուցային հիմնախնդիրների դիտարկման ժամանակ: Իրենց կողմից վերլուծվում են իրավունքի էության հարցերը՝ ծագման, մեթոդաբանության, իրավունքի ճանաչման տեսության, դրա նկատմամբ մոտեցումների իրավունքի ընդհանուր տեսության առարկայի հարցերը: Ընդ որում, ժամանակակից իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են տարբեր, երբեմն նաև բևեռային տեսակետներ: Իրավունքի նկատմամբ նորմատիվային մոտեցումը խորապես հիմնավորել և ներկայացրել է Մ. Ի. Բայտինը, իսկ լայն հասկացությունը վերլուծել է Գ. Վ. Մալցևը: Հերմենևտիկական, ֆենոմենոլոգիական, հաղորդակցական, հասարակական-մշակութային և մշակութային-մարդաբանական մոտեցումները, որոնք ունեն ընդհանուր մեթոդաբանական հիմք, հիմնավորվել են Հ. Մ. Ստեփանյանի, Ա. Ի. Օվչիննիկովի, Ա. Վ. Պոլյակովի և Վ. Ն. Սինյուկովի աշխատություններում: Ինտեգրատիվ իրավաընկալումն իր զարգացումն ստացել է Վ. Գ. Գրաֆսկու աշխատություններում, իսկ ազատական հայեցակարգը մշակվել է Վ. Ս. Ներսեսյանցի կողմից: Հեղինակներից շատերն առաջարկում են ինտեգրատիվ իրավաընկալման, բնական իրավունքի տեսության և իրավունքի նկատմամբ տարբեր մոտեցումների սինթեզման սեփական մոդելները կամ պաշտպանում են դասական իրավաբանական պոզիտիվիզմի դիրքերը՝ իրավունքի տեսության և փիլիսոփայության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրման համատեքստում:

Հիմնական հետազոտություն

Իրավունքի մասին ցանկացած ուսմունքի համար ելակետային և որոշիչ նշանակություն ունի (միևնույն է փիլիսոփայության, թե իրավաբանության տեսակետից) դրա հիմքում ընկած հասկացման հայեցակարգային մոտեցումը: Հենց իրավահասկացման հայեցակարգային մոտեցումն է բնորոշում իրավաբանական ճանաչման պարադիզմը (իմաստային մոդելը, սկզբունքն ու օրինակը), իրավունքի մասին համապատասխան ուսմունքի գիտահրավական բուն բովանդակությունը, առարկան և մեթոդը[1]:

Դա պայմանավորված է ցանկացած հետևողական, սիստեմատիկորեն հիմնավորված, զարգացած ու կազմակերպված տեսության շրջանակներում գտնվող հասկացության գիտաճանաչողական կարգավիճակով ու նշանակությամբ: Ինչպես սերմի մեջ արդեն պարունակվում է ապագա որոշակի բույսը, այնպես էլ իրավունքի հասկացության

[1] Տե՛ս *Нерсесянц В. С.,* Философия права. 2-е изд. М., 2006, с. 20.

մեջ գիտական-վերացական տեսքով պարունակվում է որոշակի իրավական տեսություն, իրավունքի մասին ուսմունքի որոշակի հայեցակարգի (և տիպի) տեսական-իրավական իմաստն ու բովանդակությունը: Այսպիսով, եթե իրավունքի հասկացությունն իրավունքի սեղմ տեսությունն է, ապա իրավական տեսությունը դա իրավունքի ծավալուն հասկացությունն է: Չէ՞ որ միայն իրավունքի մասին որոշակի ամբողջական ուսմունքն է կարող տալ (իրավունքի փիլիսոփայության կամ իրավագիտության կոնկրետ հայեցակարգի տեսքով) իրավունքի հասկացության սիստեմատիկ և լիակատար բացահայտում՝ համապատասխան գիտական տեսության տեսքով:

Իրավունքի մասին այս կամ այն ուսմունքների միջտիպաբանական տարբերությունների ներտիպաբանական առանձնահատկությունների հաշվառումն էական նշանակություն ունի դրանց տեսական-իրավական բովանդակության կոնկրետ բնութագրման համար:

Նման մոտեցումը թույլ է տալիս ավելի առարկայորեն բնութագրել իրավահասկացման մոտեցումը, այնպես էլ դրա ներտիպաբանական առանձնահատկությունները՝ իրավահասկացման այլ հայեցակարգերի հետ նրանց հարաբերակցությամբ:

Պոզիտիվիստական (լեզիստական) իրավահասկացության և իրավագիտության լեգիստական հայեցակարգում ընկած է իրավունքի որպես հրամանի, որպես պետության պարտադիր սահմանումների, որպես պաշտոնական իշխանության կողմից հրահանգված պարտադիր կանոնների (նորմերի) ամբողջականության (համակարգի) հասկացությունը[2]:

Լեգիստական դիրքերից, որոնք ի սկզբանե իրավունքը հանգեցնում են օրենքին և փաստորեն նույնացնում են դրանք, ըստ էության, փաստորեն անհնար է որևէ բովանդակալից բան ասել օրենքի (պոզիտիվ իրավունքի) մասին, քանի որ այդ տեսանկյունից փաստորեն նշանակություն չունի (և, թերևս, անհնար է որոշել), թե կոնկրետ ինչպիսի՞ բովանդակության արտահայտման ձև է օրենքը (իրավակա՞ն, թե՞ կամայական-հակաիրավական): Այստեղ օրենքի գոյությունը (նրա հանրային-իշխանային տրվածությունը) իրավունքի դերում՝ նախորդում է այն իրավական էությանը (և այն իրավական բովանդակությանը), որի արտահայտությունը պետք է հանդիսանա այդ օրենքը որպես իրավունքի կրիչ:

Նոր ժամանակի լեզիզմի և իրավաբանական պոզիտիվիզմի ակունքների մոտ կանգնած է Հոբսը՝ ամենակարող պետության և իրավունքի՝ որպես իշխանության հրամանի իր հայեցակարգով «Օրենքի իրավական ուժը,- գրում է նա,- կայանում է միմիայն նրանում, որ այն հանդիսանում է սուվերենի հրամանը»[3]: Օրենք ասելով՝ այստեղ նկատի է առնվում ողջ գործող, այսինքն՝ այսպես կոչված պոզիտիվ իրավունքը: Իրավունքի նման ընկալումը հետագայում յուրացրին նաև լեզիզմի տարբեր ուղղությունների ներկայացուցիչները:

Կոնկրետ-պատմական առումով «իրավական պոզիտիվիզմի» կայացումն ու զարգացումը կապված է բուրժուական կարգերի հաղթանակի և ամրապնդման, պետության դերի աճի և այդ պայմաններում իրավունքի աղբյուրների համակարգում պետական ակտերի դերի և նշանակության բարձրացման հետ և այլն[4]:

---

[2] Տես *Гревцов Ю.И., Коллухин И. Ю.,* Энциклопедия правя. СПб., 2008, 35-36.

[3] Տես *Гоббс Т.,* Левиафан. М., 1936, с. 214.

[4] Իրավագիտության մեջ ընդունված է տարբերակել իրավունքի աղբյուրները ձևական իմաստով իրավունքի ձևական աղբյուր) և նյութական առումով (իրավունքի նյութական աղբյուր: Առաջինի տակ նկատի է առնվում իրավունքի արտահայտման, ձևակերպման այս կամ այն ձևը համապատասխան նորմատիվ իրավական ակտ, նախադեպ սովորույթային իրավունք և այլն), իսկ երկրորդի՝ այն, ինչը, համաձայն համապատասխան տեսակետի,

Գաղափարական առումով «իրավաբանական պոզիտիվիզմը» արտահայտեց հաղթող դասակարգի բուրժուազիայի փոփոխված իրավաբանական աշխարհայացքը, որն արդեն հասավ իր իրավական հավակնությունների ճանաչման օրենքով («պոզիտիվացման»), ինչպես նաև արտացոլեց առկա, պաշտոնական օրինակարգի պաշտպանության գաղափարախոսությունը քննադատորեն և ընդդիմորեն («ոչ պոզիտիվ») հնչող պահանջներից և իրավունքի՝ որպես «բնականի», «պարտի», «իդեալականի», «արդարի» մասին պատկերացումներից:

«Իրավաբանական պոզիտիվիզմի» հիմնական գաղափարներից և դրույթներից է իրավունքի՝ որպես իշխանության ստեղծվածքի մեկնումը, իրավունքի իշխանային հարկադրական բնույթի որպես նրա փաստորեն միակ տարբերակիչ հատկանիշի ճանաչումը, իրավունքի ձևական-տրամաբանական և իրավաբանական-դոգմատիկ վերլուծման մեթոդները, իրավունքի պոկումը և «մաքրազերծումը» հասարակական հարաբերություններից, իսկ իրավագիտության մեջ իրավունքի բնույթի, պատճառների, արժեքների, էության մասին «մետաֆիզիկական» դրույթներից: Նման դրույթներ XXI դարում Անգլիայում զարգացնում էին Դ. Օստինը, Շ. Ամուսը և այլք, Գերմանիայում Բ. Վինդշայդը, Կ. Հերբերը, Կ. Բերզբոմը, Պ. Լաբանդը, Ա. Ցիտելմանը, Ֆրանսիայում՝ Կաբանտուն և ուրիշները, Ռուսաստանում Ե. Վ. Վասկովսկին, Ա. Խ. Հոլմսթենը, Լ. Դ. Գրիմմը, Ս. Վ. Պախմանը, Գ. Ֆ. Շերշենևիչը և այլք: XX դարում այս մոտեցումը ներկայացված է այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են Վ. Դ. Կատկովի «ընդհանուր լեզվագիտությամբ բարեփոխված իրավագիտությունը», Հ. Կելզենի «իրավունքի մասին մաքուր ուսմունքը», Գ. Հարթի «իրավունքի հայեցակարգը» և այլն[5]:

Այսպես, Դ. Օստինը բնութագրում է իրավունքը որպես «քաղաքական ղեկավարի կամ սուվերենի կողմից սահմանված կանոնների ագրեգատ» (համալիր), և ընդգծում է. «Ամեն իրավունքը հրաման է, հրահանգ»: Շ. Ամոսը նույնպես պնդում է, որ «իրավունքը պետության գերագույն իշխանության հրամանն է տվյալ հասարակության մեջ անձանց գործողությունները վերահսկելու նպատակով»: Նմանօրինակ հայացքներ ուներ նաև Գ. Ֆ. Շերշենևիչը. «Իրավունքի ցանկացած նորմ՝ հրաման է»[6]: Իրավունքը, նրա գնահատմամբ, «պետության ծնունդ է», իսկ պետական իշխանությունը նա բնութագրում է որպես «այն նախնական փաստը, որից ելնում են, կառչելով մեկը մյուսից, իրավունքի նորմերը»[7]:

Իր հրամանով պետությունը ծնում է իրավունք՝ այդպիսին էր այդ ժամանակվա իրավահասկացման հավատի հանգանակը: Ըստ այդ տեսակետների՝ այն ամենը, ինչ հրամայում է պետությունը, իրավունք է: Դրանով իսկ իրավունքի տարբերությունը կամայականությունից զրկվում է իր օբյեկտիվ և բովանդակային իմաստից և նման մոտեցման կողմնակիցների համար կրում է միմիայն սուբյեկտիվ և ձևական բնույթ, նույնիսկ որոշակի սուբյեկտի (պետության մարմնի) ակներև, սակայն որոշակի ձևով (այս կամ այն ակտի՝

առաջացնում, ձևավորում է իրավունքը մարդու բերությունը, բանականությունը, հասարակությունը և այլն): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ իրավաբանական պոզիտիվիզմի (և ընդհանրապես լեզիզմի) համար օրենքը (պոզիտիվ իրավունքի բոլոր աղբյուրները, ըստ էության, հանդիսանում են իրավունքի աղբյուր նյութական իմաստով, քանի որ համաձայն այս տեսակետի, օրենքը ոչ թե արտահայտում և ձևակերպում է իրավունքը, այլ ձևում և ձևավորում է այն: Այստեղից էլ գալիս են նման մոտեցման համար բնորոշ իրավաբանական պատրանքները» օրենքի ամենակարողության և ըստ իր հայեցողության ցանկացած իրավունք ստեղծելու անսահմանափակ հնարավորության («ազատ կամքի») վերաբերյալ:

[5] Տես *Царьков И.И.,* Развитие правопонимания в европейской традиции права. СПб., 2006, с. 268-291:

[6] Տես *Шершеневич Г.Ф.,* Общая теория права. М., 1910. Вып. 1, с. 281:

[7] Նույն տեղում, էջ 314:

օրենքի, հրամանագրի, հրովարտակի, հրահանգի, շրջաբերականի և այլնի տեսքի) ներկայացված կամայականությունը ճանաչվում է իրավունք: Լեգիստական-պոզիտիվիստական մեկնությամբ պետական իշխանության հրամանները՝ օժտվում են գրեթե մոգական հատկություններով: Ստացվում է, որ նման հրամանով լուծվում են ոչ միայն սուբյեկտիվ (օրենսդրության նորմերի ձևակերպում), այլև օբյեկտիվ բնույթի (բուն իրավունքի ձևավորում, ստեղծում) և նույնիսկ բուն գիտական պլանի (իրավունքի առանձնահատկությունների, սոցիալական այլ ձևերից նրա տարբերությունների բացահայտում և այլն) խնդիրներ:

Որպես հրաման և հարկադիր կանոն են մեկնում իրավունքը նաև նեոպոզիտիվիստները (Հ. Քելզեն, Հ. Հարթ և այլք)[8]:

Պոզիտիվիստական-պրագմատիկ իր ուղղվածության պատճառով լեգիստական իրավագիտությունը զբաղվում է էմպիրիկ հիմնական երկու փաստերի պարզաբանմամբ: Դրանք են. 1) պաշտոնական իշխանության այդ հրամանների (հարկադրական պարտադիր սահմանումների), այսինքն, գործող իրավունքի (պոզիտիվ իրավունքի, օրենքի) այսպես կոչված աղբյուրների բուն տեսակների (ձևերի) բացահայտումը, դասակարգումը ու սիստեմավորումը, և 2) օրենսդրի կարծիքի (դիրքի) պարզաբանումը, այսինքն, իշխանության համապատասխան հրամանների, որպես իրավունքի աղբյուրների (ձևերի), նորմատիվ-կարգավորիչ բովանդակության բացահայտումը:

Համաձայն լեզիզմի՝ իրավունքի մասին ճշմարտությունը տրված է օրենսդրի (սուվերենի, պետության) կամքը, դիրքորոշումը, կարծիքն արտահայտող օրենքի մեջ: Այդ իսկ պատճառով իրավունքի մասին որոնելի գիտելիքն այստեղ կրում է թեև պաշտոնական իշխանային, բայց, այնուամենայնիվ, կարծիքի բնույթ: Համաձայն նման իրավաճանաչման տրամաբանության՝ միայն իրավունքը ստեղծող իշխանությունը գիտի, թե ինչ բան է իրավունքը և ինչով է այն տարբերվում ոչ իրավունքից՝ Գիտությունն էլ լավագույն դեպքում կարող է ադեկվատ կերպով հասնել և արտահայտել օրենքի (գործող իրավունքի) մեջ մարմնավորված իշխանահրամայական կարծիքը:

Այդպիսով պոզիտիվիստական իմացաբանությունը, ըստ էության, մերժում է իրավունքի տեսությունը և ճանաչում է միայն օրենքի մասին ուսմունքը օրենսգիտությունը, որի առարկան է հանդիսանում պոզիտիվ իրավունքը, իսկ նպատակն ու ուղենիշը իրավունքի դուրմը, այսինքն՝ գործող (պոզիտիվ) իրավունքի, նրա ուսումնասիրման, մեկնման, դասակարգման, սիստեմավորման եղանակների, կանոնների, հնարքների մասին հիմնական անխախտ դրույթների (կայունացված հեղինակավոր կարծիքների, դիրքորոշումների, մոտեցումների) ամբողջականությունը:

Օրենքի (գործող իրավունքի) պոզիտիվիստական իմացաբանությունը, դրա հետ մեկտեղ, ուղղված է ոչ թե օրենքի էության ճանաչմանը, ոչ թե գործող իրավունքի մասին (փաստացի տրված իրավունքում բացակայող) իմացության, գիտելիքի ձեռքբերմանը, այլ դրա՝ որպես արդեն ճանաչված և իմացած օբյեկտի ադեկվատ նկարագրությանը իրավաբանական-դոգմատիկ իմաստով: Համաձայն այս իրավահասկացման՝ իրավունքի մասին ողջ իմացությունն արդեն պաշտոնապես տրված է հենց բուն պոզիտիվ իրավունքի, նրա տեքստի մեջ և իրավունքի մասին պոզիտիվիստական ուսմունքի հիմնական խնդիրն օրենքի տեքստի ճիշտ մեկնման և այդ տեքստում առկա պաշտոնական իրավական գիտելիքի, օրենսդրի կարծիքի և դիրքորոշման ճիշտ շարադրման մեջ է:

[8] Տես *Козлихин И.Ю., Полоков А.В., Тимошина Е.В.,* История политических и правовых учений. СПб., 2007, с. 378-413:

Դրա հետ է կապված հատկապես պոզիտիվիստների (մանավանդ վերլուծական իրավագիտության ներկայացուցիչների) մեծ հետաքրքրությունն օրենքի լեզվաբանական և տեքստաբանական մեկնումների հանդեպ՝ անտեսելով նրա իրավական իմաստն ու բովանդակությունը: Նման մոտեցման արդյունքում իրավաբանական իմացաբանությունը փոխարինվում է լեգիստական լեզվաբանությամբ, համաձայն որի՝ տարբեր տեսակի ոչ պոզիտիվիստական հասկացությունները, գաղափարները և հայեցակարգերը (օրինակ՝ իրավունքի էությունը, իրավունքի գաղափարը, բնական իրավունքը, մարդու անօտարելի իրավունքները և այլն) ոչ այլ ինչ են, քան սուտ բառեր, լեզվական պատրանքներ և սոփեստություններ, սխալ բառօգտագործման արդյունք:

Նման տեսակետներ էր զարգացնում արդեն մոլի պոզիտիվիստ Ի. Բենտամը, որը զգալի դեր է կատարել վերլուծական իրավագիտության (Դ. Օստին և այլք) կայացման գործում: Բնական իրավունքը, ըստ նրա գնահատականի, զուտ բառային ֆիկցիա է, իսկ մարդու անօտարելի իրավունքները՝ երևակայության ցնորք:

Լեգիստական իրավահասկացությունը հակադրվում է բնական իրավունքի հայեցակարգը՝ իր պատմական (աստվածային իրավունք, բնական իրավունք, բանական իրավունք, տիեզերական իրավունք և այլն) և ժամանակակից («վերածնված բնական» իրավունքի հայեցակարգ) տարատեսակներով, որի համաձայն՝ արդար և իսկական (ճշմարիտ) իրավունքը՝ վերպոզիտիվիստական (բնական) իրավունքն է, իսկ պոզիտիվ (դրական) իրավունքը իր էությամբ ու բովանդակությամբ պետք է համահունչ լինի բնական իրավունքի հիմնադրույթներին: Այստեղից էլ բնական իրավունքի տեսության կողմնակիցները պնդում են, որ գործող իրավունքի (օրենսդրության) կատարելագործման միակ տրամաբանորեն հիմնավորված մեթոդաբանությունն այն է, որ դրական իրավունքի նորմերը բխեն բնական իրավունքի հիմնադրույթներից կամ, առնվազն, չհակասեն դրանց:

Այսպիսով, ժամանակակից իրավունքի տեսության մեջ և իրավական պրակտիկայում կարելի է առանձնացնել առնվազն երկու հայեցակարգային մոտեցումներ՝ վերածնված բնական իրավունքի և իրավաբանական (ազատական-իրավաբանական) հայեցակարգերը, որոնք իրենց էությամբ ու բովանդակային ուղղվածությամբ հակալեգիստական են:

Իրավաբանական (ազատական-իրավաբանական) մոտեցման շրջանակում հեղինակը ելնում է իրավունքի և օրենքի (պոզիտիվ իրավունքի) տարբերակման սկզբունքից: Ըստ այդ մոտեցման՝ իրավունքի տակ, այն օրենքից տարբերակելով և նրա հետ հարաբերակցության մեջ դիտարկելով, նկատի է առնվում ոչ թե բնական իրավունքը, այլ ձևական հավասարության գոյությունն ու դրա նորմատիվային արտահայտությունը (կոնկրետացումը)՝ որպես իրավունքի էության և տարբերակիչ սկզբունքի: Ընդ որում՝ ձևական հավասարության սկզբունքը, ըստ լիբերտար-իրավաբանական հայեցակարգի, մեկնվում ու բացատրվում է որպես իրավական ձևի (իրավունքի որպես հարաբերությունների ձև) երեք հիմնական բաղադրիչների ամբողջականություն: Դրանք են՝ աբստրակտ համընդհանուր հավասարությունը (բոլորի համար հավասար նորմ և չափ), ազատությունը և արդարությունը:

Որպես իրավահասկացման տարբեր ձևեր՝ բնական-իրավական մոտեցումը և լիբերտար մոտեցումը, իրենցից ներկայացնում են իրավունքի հանդեպ տեսական մոտեցման առաջացման, խորացման ու զարգացման փուլեր ու աստիճաններ. պատմական առաջընթաց տեսական-իրավական մտքի բնագավառում:

Լիբերտար մոտեցումը ենթադրում է (և ներառում է) իրավունքի ու օրենքի տարբերակման և հարաբերակցության բոլոր հնարավոր ձևերն անջատումից ու դրանց միջև հակամարտությունից (ոչ իրավական օրենքի դեպքում) մինչև դրանց համընկնում (իրավական օրենքի

դեպքում)[9]: Նույն տրամաբանությունն է գործում նաև իրավունքի ու պետության վերաբերյալ, ընդ որում լիբերտար-իրավաբանական տեսակետից պետությունը մեկնվում է իր իրավական հակաիրավական դրսևորումների ողջ դիապազոնում (իրավախախտ պետությունից մինչև իրավական պետություն):

Համաձայն լիբերտար իրավաբանական (ձևական-իրավաբանական) իրավահասկացման՝ իրավունքը հավասարության, ազատության ու արդարության հարաբերությունների ձև է՝ բնորոշված հարաբերությունների տվյալ ձևի մասնակիցների ձևական հավասարության սկզբունքով: Ամենուր, որտեղ կա, գործում է ձևական հավասարության սկզբունքը (և դրան կոնկրետացնող նորմերը), այնտեղ կա (գործում է) իրավունքը, հարաբերությունների իրավական ձևը: Ձևական հավասարությունը՝ որպես իրավունքի սկզբունք կազմում է բուն իրավական սկիզբը և հանդիսանում է իրավունքի տարբերակիչ հատկություն և սպեցիֆիկ հատկանիշ[10]:

Իրավական հավասարությունն այնքան աբստրակտ չէ, որքան թվային հավասարությունը մաթեմատիկայում: Տարբեր մարդկանց իրավական հավասարության հիմք (և չափանիշ) է հանդիսանում հասարակական հարաբերություններում նրա ազատությունը, ճանաչված և հաստատված իրավունակության և իրավասուբյեկտության տեսքով: Դա է իրավական հավասարության և ընդհանրապես իրավունքի առանձնահատկությունը:

Ազատության մեջ իրավական հավասարությունը, որպես ազատության հավասար չափ, նշանակում է համաչափություն, համարժեքություն իրավունքի սուբյեկտ հանդիսացող ազատ անհատների հարաբերություններում[11]:

Իրավական հավասարությունը՝ ազատ և իրարից անկախ իրավունքի սուբյեկտների հավասարություն է՝ ըստ բոլորի համար ընդհանուր մասշտաբի, միասնական նորմի, հավասար չափի:

Իրավական հավասարությունն ազատների հավասարություն է և ազատության հավասարություն, անհատների ազատության ընդհանուր մասշտաբ և հավասար չափ: Իրավունքը խոսում և գործում է այդ հավասարության լեզվով և միջոցներով և շնորհիվ դրա՝ հանդես է գալիս որպես մարդկանց համատեղ կյանքի ազատության գոյի, դրսևորման և իրականացման համընդհանուր և անհրաժեշտ ձև: Այս իմաստով կարելի է ասել, որ իրավունքը ազատության մաթեմատիկան է[12]:

Ընդ որում՝ կարելի է թերևս ենթադրել, որ մաթեմատիկական հավասարությունը, որպես առավել աբստրակտ կատեգորիա, ունի պատմականորեն ավելի ուշ ծագում և որոշ իմաստով ածանցյալ է իրավական հավասարությունից: Հավասարության սկզբունքի հետագա զարգացումն ու գիտական մշակումը հանգեցրել է այն պատկերացման, թե հավասարության գաղափարը իրավունքի մեջ է ներմուծվել մաթեմատիկայից:

Նման մեկնության կարելի է հանդիպել արդեն պյութագորասցիների մոտ, որոնց լուրջ հետաքրքրությունը մաթեմատիկայով զուգակցվում էին թվային միստիկայով հրապուրվելով և հավասարության մասին մաթեմատիկական պատկերացումները հասարակական երևույթների, այդ թվում նաև իրավունքի վրա տարածելու հետ: Համաձայն պյութագորասցիների՝ աշխարհի էությունը (ֆիզիկական և սոցիալական) իրենից ներկայացնում է թիվ և աշխարհում ամեն ինչն ունի թվային բնութագիր և արտահայտություն: Մեկնելով

[9] Տես *Чашин А.Н.,* Современные правовые учения России. М., 2014, с. 58-75:
[10] Տես *Нерсесянц В.С.,* Типология правопонимания //Право и политика. М., 2001, № 10, с. 5:
[11] Տես *Нерсесянц В.С.,* Философия права. М., 2004, с. 56-57.
[12] Տես *Нерсесянц В.С.,* Право-математика свободы. М., Юристь, 1996, с. 152-153:

հավասարությունը, որպես որոշակի (և իր բնույթով թվային) համամասնության պատշաճ չափ, նրանք իրենց սոցիալական մաթեմատիկայի ոգով արտահայտում էին արդարությունը (այսինքն իրավունքը՝ իր հավասարության սկզբունքով հանդերձ) «չորս» թվի տեսքով[13]:

Հավասարության մասին թվային (մաթեմատիկական) պատկերացումների տարածումը հասարակական հարաբերությունների վրա արտացոլում էր իրավունքի մասին անբավականաչափ զարգացած հայացքները և, ըստ էության, անտեսում էր հավասարության յուրահատկությունը մարդկանց սոցիալական կյանքում հենց որպես ազատ մարդկանց ձևական-իրավական հավասարության: Ունենալով ձևական հավասարության այդ սկզբունքը՝ իրավունքը ինքնին յուրատեսակ սոցիալական մաթեմատիկա է (հասարակական հարաբերություններում հավասարության և անհավասարության մասին ուսմունքի իմաստով):

Սոցիալական ոլորտում հավասարությունը միշտ իրավական հավասարություն է. ձևական-իրավական հավասարություն: Չէ՞ որ իրավական հավասարությունը, ինչպես ցանկացած հավասարություն վերացարկված է (ըստ սեփական հիմքի ու չափանիշի) փաստական տարբերություններից և այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար և ըստ բնորոշման կրում է բնույթ[14]:

Իրավունքի պատմությունը՝ ձևական (իրավական) հավասարության բովանդակության, ծավալի, մասշտաբի ու չափի առաջադիմող էվոլյուցիայի պատմություն է՝ բուն այդ սկզբունքի պահպանմամբ՝ որպես իրավունքի ցանկացած համակարգի սկզբունքի[15]: Մարդկանց հարաբերություններում ազատության և իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերին բնորոշ է ազատության սեփական մասշտաբ և սեփական չափ, ազատության ու իրավունքի հարաբերությունների և սուբյեկտների սեփական շրջանակ, մի խոսքով, ձևական (իրավական) հավասարության սկզբունքը իրենից ներկայացնում է իրավունքին մշտապես բնորոշ սկզբունք պատմականորեն փոխվող բովանդակությամբ:

Ձևական հասարակության սկզբունքի բովանդակության, ծավալի, գործողության ոլորտի պատմական էվոլյուցիան ընդհանուր առմամբ ոչ թե հերքում, այլ ընդհակառակը՝ ամրապնդում է տվյալ սկզբունքի նշանակությունը՝ որպես իրավունքի տարբերակիչ հատկանիշի սոցիալական կարգավորման (բարոյական, կրոնական և այլն) այլ տեսակների հետ հարաբերակցություններում և տարակարծություններում: Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է ասել, որ իրավունքը ազատության արտահայտման նորմատիվ ձև է հասարակական հարաբերություններում մարդկանց ձևական հավասարության սկզբունքի միջոցով:

Իրավական հավասարությունը և իրավական անհավասարությունը (հավասարությունը անհավասարությունը իրավունքի մեջ) հանդիսանում են նույն կարգի (մեկը մեկին ենթադրող և լրացնող) իրավական բնորոշումներ և հասկացություններ, որոնք հավասար չափով հակադրում են փաստացի տարբերություններին և տարբերվում են դրանցից: Տարբեր սուբյեկտների իրավական սուբյեկտների սկզբունքը ենթադրում է, որ նրանց կողմից ձեռք բերվող սուբյեկտիվ իրավունքները լինելու են անհավասար: Իրավունքի շնորհիվ տարբերությունների քաոսը վերափոխվում է **հավասարությունների և անհավասարությունների կարգի՝** համաձայնեցված ըստ միասնական հիմքի և ընդհանուր նորմի:

Որպես իրավական կարգավորման յուրահատուկ սկզբունքի, հավասարության դրսևոր-

[13] Տե՛ս *Мальцев Г.В.,* Культурные традиции права. Норма.М., 2013, С. 125-126.Նաև՝ **Bengston H.** Griechishe Geschichte. Munchen, 1960, էջ 108-109:

[14] Տե՛ս *Нерсесянц В.С.,* Право: мнигообразие определений и единство понятия// Советсое государство и право. 1983, № 10, с. 35:

[15] Տե՛ս *Нерсесянц В.С.,* Философия права. 1989, с. 333-334, 349-350:

ման ձևերը կրում են սոցիալական-պատմական բնույթ: Դրանով են պայմանավորված այդ ձևերի առանձնահատկությունները սոցիալ-տնտեսական տարբեր ֆորմացիաներում, իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերում, ինչպես նաև հասարակական կյանքում ձևական (իրավական) հավասարության սկզբունքի ծավալի ու բովանդակության, տեղի և դերի փոփոխումները:

Ամենուր, ուր գործում է իրավական հավասարության սկզբունքը. առկա է նաև իրավական սկիզբ և կարգավորման իրավական եղանակ, որտեղ կա իրավունք, կա նաև հավասարության սկզբունք: Այդ իսկ պատճառով ազատ անհատների ձևական հավասարությունը հանդիսանում է իրավունքի առավել վերացական (աբստրակտ) բնորոշումը ընդհանուր ցանկացած իրավունքի համար ու յուրահատուկ իրավունքի համար ընդհանրապես:

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցի լիբերտար-իրավաբանական հայեցակարգը բովանդակային իմաստով նորույթ է իրավունքի տեսության գիտակարգում, այն փորձում է նախ համահարթեցնել բնական իրավունքի տեսության և պոզիտիվ իրավունքի իրարամերժությանը և երկրորդ՝ տարբերակել իրավունքի և օրենքի, իրավական օրենքի և ոչ իրավական օրենքի բովանդակային առանձնահատկությունները:

Իհարկե, իրավակիրառ պրակտիկայում տարբերակումն իրավական օրենքի և ոչ իրավական օրենքի, չափազանց բարդ ինտելեկտուալ գործընթաց է, սակայն, **նախ՝** դրանում է նաև արտահայտվում իրավունքի բարդությունն ու բազմաբնույթը, **երկրորդ,** այդ հարցը, որոշակի վերապահումով կարող է լուծվել սահմանադրական արդարադատության կողմից:

Ամփոփագիր: Իրավական մտքի և իրավագիտության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման հակադարձ երկու տիպերի պայքարով: Իրավունքի հասկացողության մեկնաբանման և իրավունքի հասկացման այս երկու տիպերը պայմանականորեն կարելի է անվանել իրավահասկացության իրավաբանական և լեգիստական հայեցակարգային մոտեցումներ:

Իրավահասկացման այս երկու հայեցակարգային մոտեցումների հիմքում գոյություն ունեն իրավունքի հասկացողության տարբեր հայեցակարգեր և մեկնաբանման ուղղություններ:

Արդի իրավագիտության մեջ շարունակվում է իրավունքի և իրավահասկացման ուսմունքի մոդեռնիզացման գործընթացը, որն առաջացել էր XX դարի վերջում և XXI դարի սկզբներին հասարակական-քաղաքական պարադիգմի փոփոխությամբ: Իրավունքի նկատմամբ ժամանակակից մոտեցումների որոնումը, իրավունքի տեսության մեջ արդեն հայտնի մոդելների վերանայումն ու վերլուծությունը, ինչպես նաև նոր մոդելների մշակումը կարևոր փուլ են կազմում պետության և իրավունքի ժամանակակից տեսության ձևավորման գործում և ներկայացնում են խիստ արդիական տեսական և գործնական առումով:

Ակնհայտ է, որ իրավունքի տեսության հիմնախնդիրների լուծման բարդությունը պայմանավորված է ոչ այնքան իրավունքի միասնական բնորոշման բացակայությամբ, թեպետ նման բնորոշումն էլ խիստ կարևոր է, այլ սոցիալական կյանքի և այդ կյանքի վերաբերյալ պատկերացումների փոփոխականությամբ:

Այդ պատճառով իրավունքի տեսության հիմնախնդիրները մինչև օրս վերջնական լուծում չեն ստացել:

Հիմնարար իրավաբանական հասկացությունների, այդ թվում՝ իրավունքի, վերաիմաստավորման գործընթացը նախանշում է իրավական կարգավորման հիմնական տեսական կառույցների և մոդելների ձևակերպումն ու մշակումը:

Իրավունքի նկատմամբ մոտեցումների բազմակարծությունը, դրա ընկալման բազմազանությունը լիովին համարժեք են հումանիտար գիտությունների ժամանակակից զարգացմանը և չեն հանդիսանում ճգնաժամի հատկանիշ կամ իրավագիտության առանձնահատկություն: Դրույթների նույն բազմազանությունն է

նկատվում՝ հասարակության, քաղաքականության իմաստի ու հասկացության մասին հարցերում, իրավագիտության, սոցիոլոգիայի, մշակութաբանության ոլորտում, իշխանության մեջ: Իրավագիտության շրջանակներում մինչ օրս չեն նվաճվել հայացքների գոնե մոտավոր նմանություն գիտնականների շարքում այն կապակցությամբ, թե ինչպես պետք է հասկանալ իրավունքը: Բնությանը վերաբերվող հետազոտական մեկնաբանումների տարբերությունը հավասարակշռում է պետական իշխանության ներկայացուցիչների կարծիքների միասնությունը, ովքեր կողմնակից են ազատական, ժողովրդավարական ստանդարտներին, այդ թվում իրավունքի գնահատման գործում: Մինչդեռ ազատական իրավական մտածողությունն ու իրավաընկալումը միշտ չէ, որ ընկալունակ են փոխակերպվող հասարակության իրավական մշակույթի առանձնահատկությունների՝ իմաստավորման ու գնահատման համար:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ պետք է նշել, որ իրավական ճանաչողությունը գործ ունի պատմականորեն փոփոխվող իրականության, իրավունքի և իրավահասակացության հետ:

Annotation: The history and theory of legal thought and jurisprudence are permeated by the struggle between two opposing types of legal understanding. These two types of interpretation of the understanding of law and legal understanding may conditionally be called the juridical and the legist conceptual approaches to legal understanding.

These two conceptual approaches to legal understanding are based on different concepts of the notion of law and different directions of its interpretation.

In modern jurisprudence, the process of modernization of the doctrine of law and legal understanding continues. This process emerged at the end of the twentieth century and the beginning of the twenty-first century due to the change in the socio-political paradigm. The search for modern approaches to law, the revision and analysis of models already known in legal theory, as well as the development of new models, constitute an important stage in the formation of the modern theory of state and law and represent an issue of great relevance both theoretically and practically.

It is evident that the complexity of resolving the problems of the theory of law is conditioned not so much by the absence of a unified definition of law, although such a definition is itself highly important, but rather by the variability of social life and of perceptions concerning that life.

For this reason, the problems of the theory of law have not yet received a final solution.

The process of rethinking fundamental legal concepts, including the concept of law, outlines the formulation and development of the main theoretical structures and models of legal regulation.

The plurality of approaches to law and the diversity of its perception are fully consistent with the contemporary development of the humanities and do not constitute a sign of crisis or a specific feature of jurisprudence. The same diversity of propositions is observed in questions concerning the meaning and concept of society, politics, in the fields of jurisprudence, sociology, cultural studies, and power. Within jurisprudence, even an approximate similarity of views among scholars has not yet been achieved as to how law should be understood. The diversity of research interpretations concerning the nature of law is balanced by the unity of views of representatives of state authority who adhere to liberal and democratic standards, including in the assessment of law. At the same time, liberal legal thinking and legal perception are not always receptive to the particularities of the legal culture of a transforming society in terms of comprehension and evaluation.

Summarizing the above, it should be noted that legal cognition deals with historically changing reality, law, and legal understanding.

Аннотация. Статья посвящена анализу содержательных характеристик основных концептуальных подходов к современному пониманию права в контексте теории и практики правового регулирования. Автор исходит из того, что история правовой мысли и развитие юридической науки во многом определялись взаимодействием и противостоянием двух базовых типов правопонимания, которые условно могут быть обозначены как **юридический** и **легистский** подходы.

В основе указанных концептуальных моделей лежат различные представления о сущности права, его источниках, назначении и способах интерпретации. Показано, что в современной юридической науке продолжается процесс переосмысления традиционных теоретико-правовых концепций, обусловленный трансформацией общественно-политических процессов конца XX — начала XXI века. В этих условиях особую актуальность приобретают поиск новых подходов к пониманию права, критический анализ существующих теоретических моделей и разработка современных концепций правового регулирования.

Автор отмечает, что сложность решения фундаментальных проблем теории права связана не только с отсутствием общепризнанного определения права, но и с динамичным характером общественной жизни, изменением социальных ценностей и представлений о справедливости, государстве и правовом порядке. Именно поэтому вопросы сущности права и его понимания продолжают оставаться предметом научных дискуссий.

Особое внимание уделяется плюрализму современных правовых концепций. Подчеркивается, что многообразие подходов к пониманию права соответствует общим тенденциям развития гуманитарного знания и не свидетельствует о кризисе юридической науки. Аналогичный методологический плюрализм наблюдается и в исследованиях общества, политики, власти и культуры. Вместе с тем различие научных интерпретаций природы права нередко сочетается с относительным единством практико-правовых подходов, основанных на принципах правового государства, демократии и верховенства права. При этом либеральные модели правопонимания не всегда в полной мере учитывают особенности правовой культуры обществ, находящихся в состоянии социальной и институциональной трансформации.

В заключение обосновывается вывод о том, что правовое познание имеет дело с исторически изменяющейся социальной реальностью, вследствие чего право и правопонимание должны рассматриваться как динамичные и развивающиеся явления, требующие постоянного теоретического осмысления.

Բանալի բառեր *- Իրավունք, իրավահասկացում, լեգիստական, իրավաբանական, իրավունքի տեսություն, քաղաքականություն, իշխանություն, հասարակություն:*

Keywords*: law, legal understanding, legist, juridical, theory of law, politics, power, society.*

Ключевые слова: *право, правопонимание, юридический подход, легистский подход, теория права, правовое регулирование, правовая культура, политика, власть, общество.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Нерсесянц В.С., Философия права. 2-е изд. М., 2006, с. 20.
2. Гревцов Ю.И., Коллухин И. Ю., Энциклопедия правя. СПб., 2008, 35-36.
3. Гоббс Т., Левиафан. М., 1936, с. 214.
4. Царьков И.И., Развитие правопонимания в европейской традиции права. СПб.,2006,с. 268-291.
5. Шершеневич Г.Ф., Общая теория права. М., 1910. Вып. 1, с. 281.
6. Козлихин И.Ю., Полоков А.В., Тимошина Е.В., История политических и правовых учений. СПб., 2007, с. 378-413.
7. Нерсесянц В.С., Право и закон. М., 1983 նույնի՝ Общая теория права и государства. М., 1999, նույնի՝ Философия права. М., 2004.
8. Чашин А.Н., Современные правовые учения России. М., 2014, с. 58-75.
9. Нерсесянц В.С., Типология правопонимания //Право и политика. М., 2001, № 10, с. 5.
10. Нерсесянц В.С., Философия права. М., 2004, с. 56-57.
11. Нерсесянц В.С., Право-математика свободы. М., Юристь, 1996, с. 152-153:

12. Мальцев Г.В., Культурные традиции права. Норма. М., 2013, с. 125-126.Նաև՝ Bengston H., Griechishe Geschichte. Munchen, 1960, էջ 108-109:

13. Нерсесянц В.С., Право: мнигообразие определений и единство понятия // Советсое государство и право. 1983, № 10, с. 35:

14. Нерсесянц В.С., Философия права. 1989, с. 333-334, 349-350:

Շուքուրյան Ա. - ՀՀ վարչապետի աշխատակազմի արարողակարգի բաժնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի հասարակագիտության ամբիոնի դոցենտ, դասախոս, էլհասցե՝ armen.shukuryan@gov.am:

Ներկայացվել է խմբագրություն 23.03.2026 թ., տրվել է գրախոսության 23.03.2026 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ղազանչյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CONSTITUTIONAL LAW/ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-29

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Բարձրագույն դատական խորհրդի անդամ

KAREN TUMANYAN
Member of the Supreme Judicial Council

КАРЕН ТУМАНЯН
Член Высшего судебного совета
https://orcid.org/0009-0002-3231-4939

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԻՋՈՑՈՎ

ARBITRATION AS A MECHANISM FOR THE RESOLUTION OF ENVIRONMENTAL DISPUTES

АРБИТРАЖ КАК СПОСОБ РАЗРЕШЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКИХ СПОРОВ

Ներածություն

Ժամանակակից էկոլոգիական մարտահրավերների պայմաններում շրջակա միջավայրի վերաբերյալ վեճերի լուծման ավանդական դատական մեխանիզմները հաճախ բախվում են համակարգային սահմանափակումների, քանի որ ընդհանուր իրավասության դատարանները, որպես լայն իրավասության ինստիտուտներ, միշտ չէ, որ բավարար չափով հագեցած են նմանօրինակ վեճերի գիտատեխնիկական, բազմաճյուղ և հանրային բնույթը գնահատելու համար: Շրջակա միջավայրի վեճերը ներառում են բարդ պատճառահետևանքային կապեր, գիտականորեն անորոշ ռիսկեր, երկարաժամկետ կուտակային ազդեցություններ և հանրային ու միջսերնդային շահերի պաշտպանություն, ինչը հաճախ դուրս է դասական դատավարական մոդելների սահմաններից:

Միջազգային պրակտիկայում այս խնդրին արձագանքել են երկու հիմնական ուղղությամբ՝ մասնագիտացված շրջակա միջավայրի դատարանների և տրիբունալների ձևավորմամբ[1], ինչպես նաև շրջակա միջավայրի վեճերի արբիտրաժի զարգացման միջոցով, որի

[1] Տես Պրինգ Գ., Պրինգ Ք., *Բնապահպանական դատարաններ և տրիբունալներ. ուղեցույց քաղաքականություն մշակողների համար* (*Environmental Courts and Tribunals: A Guide for Policy Makers*). Նայրոբի՝ ՄԱԿ-ի Շրջակա

հիմնական նորմատիվ հենքը Մշտական արբիտրաժի դատարանի 2001 թվականի կանոններն են[2]:

Հայաստանի Հանրապետությունում, որտեղ բնապահպանական մարտահրավերները հատկապես արտահայտված են հանքարդյունաբերության, ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության ոլորտներում, անհրաժեշտ է ձևավորել այնպիսի մասնագիտացված ինստիտուցիոնալ կառուցակարգ, որը կապահովի շրջակա միջավայրի սահմանադրական պաշտպանության, հանրային շահի և ապագա սերունդների իրավունքների առավել արդյունավետ իրացումը: Այս համատեքստում հոդվածը հիմնավորում է «Շրջակա միջավայրի դատարանի» ստեղծման անհրաժեշտությունը՝ որպես «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում գործող մասնագիտացված արբիտրաժային ինստիտուտ, որը կոչված է լրացնելու գործող դատական համակարգը՝ առանց այն փոխարինելու:

Մեթոդներ. Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել և վերլուծվել են սահմանադրական և ներպետական իրավական նորմերը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և որոշ այլ երկրների ներպետական օրենսդրությունն ու այն փաստաթղթերը, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը: Հետազոտության շրջանակում կիրառվել են համեմատական իրավական մեթոդը, համակարգային մոտեցումը, ինչպես նաև նկարագրական և մեկնաբանական վերլուծության մեթոդները:

Հիմնական հետազոտություն

Շրջակա միջավայրի վեճերի առանձնահատկությունները և դատական ընդհանուր կարգավորման սահմանափակումները

Շրջակա միջավայրի վերաբերյալ վեճերն առանձնանում են բարդ գիտատեխնիկական հարցերով, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, աղտոտվածության շեմերի որոշմանը, տարածման մոդելավորմանը, էկոհամակարգային ծառայությունների արժեքավորմանը և գիտական անորոշության պայմաններում ռիսկերի կառավարմանը: Էկոլոգիական վնասի պատճառահետևանքային կապը հաճախ կուտակային, անուղղակի և ուշացած բնույթ ունի, ինչը դժվարացնում է դրա գնահատումը դասական դելիկտային իրավունքի անմիջական պատճառականության չափանիշներով:

Այս վեճերում շահագրգիռ սուբյեկտների շրջանակը սովորաբար ներառում է ոչ միայն առանձին կողմերին, այլև հանրությանը, համայնքներին և ապագա սերունդներին՝ ձևավորելով հավաքական կամ դիֆուզ իրավունքների համակարգ: Միաժամանակ նման գործերը պահանջում են ոչ միայն վնասի հատուցում, այլև բնական վիճակի վերականգնում, կանխարգելիչ միջոցառումներ և երկարաժամկետ մշտադիտարկում, ինչը դուրս է քաղաքացիական դատավարության ավանդական մոդելից: Դրանք նաև առաջացնում են սահմանադրական արժեքների բախում, որտեղ անհրաժեշտ է համաչափության սկզբունքով հավասարակշռել սեփականության իրավունքը, տնտեսական ազատությունը և շրջակա միջավայրի պահպանությունը:

Համեմատական փորձը ցույց է տալիս, որ ընդհանուր իրավասության դատարանները նման վեճերում բախվում են համակարգային խնդիրների՝ գործերի երկարատև քննության, մասնագիտացման պակասի, ապացուցողական բարդությունների և կանխարգելիչ մի-

միջավայրի ծրագիր (UNEP), 2016 թ.:

[2] Տես Մշտական արբիտրաժային դատարան (Permanent Court of Arbitration, PCA). *Բնական պաշարներին և (կամ) շրջակա միջավայրին վերաբերող վեճերի արբիտրաժի կամընտիր կանոններ* 2001 թ.:

ջամտության սահմանափակ կարողության պատճառով[3]: Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագրի տվյալներով՝ էկոլոգիական գործերը հաճախ տարիներով ձգձգվում են[4], մինչդեռ բնապահպանական իրավունքում առաջնային նշանակություն ունի կանխարգելման սկզբունքը (precautionary principle), որը պահանջում է իրավական միջամտություն նաև այն դեպքերում, երբ վտանգը դեռևս ամբողջությամբ ապացուցված չէ, սակայն առկա է զգալի և անդառնալի վնասի հավանականություն[5]:

Հատկապես բարդ են հանքարդյունաբերական վեճերը, որոնք ներառում են լիցենզիաների, բնապահպանական փորձաքննության, ընդերքօգտագործման, համայնքային շահերի և հետագա վերականգնման պարտավորությունների համակցված գնահատում: Այս առանձնահատկությունները հիմնավորում են շրջակա միջավայրի ոլորտում մասնագիտացված դատական կամ արբիտրաժային ինստիտուտների ստեղծման անհրաժեշտությունը:

Շրջակա միջավայրի վեճերի արբիտրաժի միջազգային իրավական հիմքերը

Շրջակա միջավայրի վեճերի արբիտրաժի միջազգային իրավական հիմքերը ձևավորվել են որպես միջազգային արբիտրաժային իրավունքի առանձին և մասնագիտացված ուղղություն՝ պայմանավորված էկոլոգիական վեճերի առանձնահատուկ բնույթով: Այս ոլորտի առաջին և առավել ընդգրկուն ակտը Մշտական արբիտրաժի դատարանի կողմից 2001 թվականին ընդունված «Շրջակա միջավայրի և (կամ) բնական պաշարների վերաբերյալ վեճերի արբիտրաժի կամընտիր կանոններն» են (այսուհետ՝ ՄԱԴ-ի կանոններ)[6], որոնք ստեղծվել են շրջակա միջավայրի և բնական պաշարների ոլորտում ծագող վեճերի լուծման դոկտրինալ և ընթացակարգային բացերը լրացնելու նպատակով: 2002 թվականին նույն ինստիտուտի կողմից ընդունված հաշտարարության կանոնների հետ միասին դրանք ձևավորել են էկոլոգիական վեճերի այլընտրանքային լուծման առավել ամբողջական միջազգային համակարգը[7]:

Կանոնների հիմնական նորարարությունը մասնագիտացված արբիտրների և գիտատեխնիկական փորձագետների առանձին ցուցակների ստեղծումն է, ինչը հնարավորություն է տալիս էկոլոգիական վեճերում համադրել իրավական և գիտական մասնագիտացումը: Դրանք նախատեսում են նաև գիտական ապացույցների գնահատման հատուկ ընթացակարգեր, շրջակա միջավայրի վնասի տեխնիկական վերլուծության առանձնահատկություններ, ինչպես նաև երրորդ կողմերի մասնակցության հնարավորություն՝ ապահովելով հանրային շահի լրացուցիչ ներկայացվածություն:

Միջազգային իրավական փաստաթղթերում՝ ՄԱԴ-ի կանոնները կիրառվել կամ ներառվել են մի շարք ոլորտներում, ներառյալ անդրսահմանային արդյունաբերական վթարների, բնական պաշարների օգտագործման և արտանետումների առևտրի համակարգերը[8]: Գործնա-

[3] Տես Կոտզե Լ. Ջ., Փաթերսոն Ա. Ռ., (խմբ.) «*Դատական իշխանության դերը բնապահպանական կառավարման համակարգում* (*The Role of the Judiciary in Environmental Governance*)» Kluwer Law International, 2009 թ.:

[4] Տես Պրինգ Գ., Պրինգ Ք., «*Բնապահպանական դատարաններ և տրիբունալներ. ուղեցույց քաղաքականություն մշակողների համար* (*Environmental Courts and Tribunals: A Guide for Policy Makers*)» Նայրոբի՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր (UNEP), 2016 թ.:

[5] Տես Տատար ընդդեմ Ռումինիայի (Tătar v. Romania), գանգատ թիվ 67021/01, 27 հունվարի 2009 թ.:

[6] Տես Մշտական արբիտրաժային դատարան (Permanent Court of Arbitration, PCA). Շրջակա միջավայրին և (կամ) բնական պաշարներին վերաբերող վեճերի արբիտրաժի կամընտիր կանոններ, 2001 թ.:

[7] Տես Մշտական արբիտրաժային դատարան (Permanent Court of Arbitration, PCA). *Շրջակա միջավայրին և (կամ) բնական պաշարներին վերաբերող վեճերի հաշտարար վարույթի կամընտիր կանոններ* (*Optional Rules for Conciliation of Disputes Relating to the Environment and/or Natural Resources*). 2002 թ.:

[8] Տես Ինդուս ջրերի Կիշենգանգա արբիտրաժ (Indus Waters Kishenganga Arbitration, Pakistan v. India), PCA Case No. 2011-01, 2013 թ.:

կանում՝ ՄԱԴ-ի կանոնները ներգրավված են եղել նաև Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի և կենսաբազմազանության վերաբերյալ միջազգային պարտավորությունների հետ կապված վեճերում[9]:

Շրջակա միջավայրի վեճերի արբիտրաժի երկրորդ կարևոր ուղղությունը ներդրումային արբիտրաժն է, որը հիմնված է երկկողմ ներդրումային համաձայնագրերի (BIT), Էներգետիկ խարտիայի պայմանագրի և բազմակողմ տնտեսական համաձայնագրերի վրա: Այս հարթության մեջ բնապահպանական վեճերը կարող են առաջանալ ինչպես ներդրողների կողմից պետության բնապահպանական կարգավորումների վիճարկման[10], այնպես էլ պետությունների կողմից ներդրողների դեմ ներկայացվող հակընդդեմ պահանջների շրջանակում[11]: Հատկապես կարևոր են «Ուրբասերն ընդդեմ Արգենտինայի» ((Urbaser v. Argentina), ICSID գործ թիվ ARB/07/26, դեկտեմբերի 8, 2016թ.-ի վճիռ) գործը, որով առաջին անգամ ընդունվեց պետության հակընդդեմ պահանջի քննության հնարավորությունը մարդու իրավունքների համատեքստում[12], և «Մեթանեքսն ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների ((Methanex Corp. v. United States)», UNCITRAL արբիտրաժ, վերջնական վճիռ՝ 3 օգոստոսի 2005 թ.) գործը, որտեղ ամրագրվեց, որ հանրային շահից բխող, բարեխիղճ և ոչ խտրական բնապահպանական կարգավորումը չի դիտարկվում որպես ներդրման բռնագրավում[13]:

Միջազգային իրավունքի մեջ առանցքային նշանակություն ունի նաև արբիտրաժելիության սկզբունքը, որը որոշում է՝ շրջակա միջավայրի որ վեճերն են ենթակա արբիտրաժային քննության[14]: Ընդհանուր մոտեցմամբ՝ հանրային իշխանության ուղղակի վարչական, քրեական կամ կարգավորիչ լիազորությունները հիմնականում դուրս են արբիտրաժից, մինչդեռ պայմանագրային, լիցենզիոն, բնապահպանական պարտավորությունների, շրջակա միջավայրի, սոցիալական և կորպորատիվ կառավարման չափանիշների կամ վերականգնողական պարտավորությունների խախտումների վերաբերյալ վեճերը ենթակա են արբիտրաժային քննության:

Հայաստանի Հանրապետության համար այս մոտեցումն առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես հանքարդյունաբերության ոլորտում, որտեղ «Ընդերքի մասին օրենսգիրքը» նախատեսում է պայմանագրային բնույթի լիցենզիոն հարաբերություններ[15]: Այս հարաբերություններից բխող բնապահպանական պարտավորությունների, ռեկուլտիվացիայի, ֆինանսական երաշխիքների, համայնքային համաձայնեցման կամ բնապահպանական պահանջների խախտումների վերաբերյալ վեճերը կարող են դառնալ մասնագիտացված արբիտ-

[9] Տես Միջազգային առևտրի պալատ (International Chamber of Commerce, ICC). «*Կլիմայի փոփոխությանն առնչվող վեճերի լուծումը արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման (ADR) մեխանիզմների միջոցով* (*Resolving Climate Change Related Disputes through Arbitration and ADR*)», Փարիզ, 2019 թ.:

[10] Տես «Ռոքհոփեր Իտալիա Ս.Պ.Ա.-ն ընդդեմ Իտալիայի Հանրապետության» (Rockhopper Italia S.p.A. v. Italian Republic), ICSID գործ թիվ ARB/17/14, վճիռ՝ 23 օգոստոսի 2022 թ.:

[11] Տես «Բերլինգթոն Ռիսորսիզն ընդդեմ Էկվադորի Հանրապետության» (Burlington Resources Inc. v. Republic of Ecuador), ICSID գործ թիվ ARB/08/5, վճիռ՝ 7 փետրվարի 2017 թ.:

[12] Տես «Ուրբասեր Ս.Ա. և Կոնսորցիո դե Ագուաս Բիլբաո Բիսկայա ընդդեմ Արգենտինայի Հանրապետության» (Urbaser S.A. and Consorcio de Aguas Bilbao Bizkaia v. Argentina), ICSID գործ թիվ ARB/07/26, վճիռ՝ 8 դեկտեմբերի 2016 թ.:

[13] Տես «Մեթանեքս կորպորացիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների» (Methanex Corp. v. United States of America), UNCITRAL արբիտրաժ, վերջնական վճիռ՝ 3 օգոստոսի 2005 թ.:

[14] Տես Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիա (New York Convention), 1958 թ. [6] UNCITRAL, Միջազգային առևտրային արբիտրաժի մոդելային օրենք (Model Law on International Commercial Arbitration), 1985 թ.:

[15] Տես Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին» օրենսգիրք, 2011 թ.:

րաժի առարկա, մինչդեռ լիցենզիայի տրամադրումը, դադարեցումը կամ անվավեր ճանաչումը շարունակում են մնալ բացառապես պետական իրավասության շրջանակում:

Այսպիսով, միջազգային փորձը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի ոլորտում մասնագիտացված արբիտրաժը կարող է ծառայել որպես բարձր արդյունավետությամբ լրացուցիչ ինստիտուցիոնալ մեխանիզմ, որը համադրում է մասնագիտական գիտական փորձաքննությունը, ընթացակարգային ճկունությունը, հանրային շահի պաշտպանությունը և պայմանագրային վեճերի արդյունավետ լուծումը՝ չփոխարինելով, այլ լրացնելով դատական և վարչական համակարգերը:

Մասնագիտացված շրջակա միջավայրի դատարանների միջազգային փորձը

Մասնագիտացված շրջակա միջավայրի դատարանների միջազգային փորձը ցույց է տալիս, որ տարբեր պետություններ ձևավորել են շրջակա միջավայրի վեճերի լուծման բազմազան, սակայն կառուցվածքային առումով համադրելի ինստիտուցիոնալ մոդելներ՝ նպատակ ունենալով հաղթահարել ընդհանուր դատական համակարգի սահմանափակումները:

Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի «Հողի և շրջակա միջավայրի դատարանը», որը գործում է 1980 թվականից, համարվում է աշխարհում առաջին շրջակա միջավայրի մասնագիտացված վերին ատյանի դատարանը[16]: Այն կազմված է դատավորներից և գիտնականներից, իսկ իրավասությունը տարածվում է շրջակա միջավայրի, հողերի, քաղաքաշինության և հանքարդյունաբերության ոլորտների վրա: Դատարանի կարևոր առանձնահատկություններն են պարտադիր հաշտարարությունը, արբիտրաժը, տեղում քննությունները և գիտական փորձագիտության անմիջական ներգրավումը, ինչը միջազգային իրավագիտության մեջ դիտարկվում է որպես լավագույն փորձ[17]:

Հնդկաստանի «Ազգային կանաչ տրիբունալը»՝ ստեղծված 2010 թվականին, մասնագիտացված օրենսդրական մարմին է, որը գործում է կյանքի իրավունքի և առողջ շրջակա միջավայրի սահմանադրական պաշտպանության հիման վրա[18]: Այն ներառում է դատական և փորձագիտական անդամների համակցված կազմ, քննության առարկա են էկոլոգիական հիմնական օրենքներից բխող քաղաքացիական գործերը, իսկ գործունեության հիմքում դրված են կայուն զարգացման, կանխարգելման և «աղտոտողը վճարում է» սկզբունքները: Տրիբունալն առանձնանում է նաև ընթացակարգային ճկունությամբ, ինքնուրույն գործեր հարուցելու հնարավորությամբ և որոշումների խիստ կատարողական մեխանիզմներով[19]:

Շվեդիայի «Հողի և շրջակա միջավայրի դատարանները» գործում են ընդհանուր դատական համակարգի շրջանակում՝ իրավաբան և գիտատեխնիկական մասնագիտությամբ դատավորների կազմով, ինչը համադրում է մասնագիտացումը և համակարգային ինտեգրումը: Չիլիի «Շրջակա միջավայրի դատարանները» և Քենիայի «Շրջակա միջավայրի և հողերի դատարանը» նույնպես ներկայացնում են մասնագիտացված մոդելներ՝ հարմարեցված ազգային

[16] Տես «Հողի և շրջակա միջավայրի դատարանի մասին» օրենք (Land and Environment Court Act 1979), Ավստրալիա, Նոր Հարավային Ուելս.:

[17] Տես Պրեստոն Բ. Ջ., *Դատական մասնագիտացման առավելությունները բնապահպանական իրավունքի ոլորտում* (*Benefits of Judicial Specialisation in Environmental Law*). *Pace Environmental Law Review*, 2012 թ.: Տես նաև՝ Պրեստոն Բ. Ջ., *Հաջողությամբ գործող բնապահպանական դատարանների և տրիբունալների բնութագրական հատկանիշները* (*Characteristics of Successful Environmental Courts and Tribunals*). *Journal of Environmental Law*, 2014 թ.:

[18] Տես «Ազգային կանաչ տրիբունալի մասին» օրենք Հնդկաստան, 2010 թ.:

[19] Տես Գիլ Գ. Ն., «*Բնապահպանական արդարադատությունը Հնդկաստանում. Հնդկաստանի Բնապահպանական ազգային տրիբունալը* (*Environmental Justice in India: The National Green Tribunal*). Routledge», 2017 թ.:

սահմանադրական և դատական կառուցակարգերին: Նոր Զելանդիայի «Շրջակա միջավայրի դատարանը» իրականացնում է պլանավորման որոշումների ըստ էության վերանայում[20]:

Այս համեմատական փորձը վկայում է, որ անկախ ընտրված ինստիտուցիոնալ ձևից՝ մասնագիտացված շրջակա միջավայրի դատարանների արդյունավետ գործունեության առանցքային նախապայմաններն են գիտատեխնիկական փորձագիտության ինստիտուցիոնալացումը, իրավաբանների և փորձագետների կազմի ապահովումը, ընթացակարգային ճկունությունը, կանխարգելիչ և վերականգնողական մոտեցումների կիրառումը, «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացումը, ինչպես նաև հանրային և ապագա սերունդների շահերի արդյունավետ պաշտպանությունը[21]: Այս մոդելները կարևոր ուղենիշ են Հայաստանի Հանրապետության համար՝ «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում մասնագիտացված «Շրջակա միջավայրի դատարան» ձևավորելու տեսական և գործնական հիմքերը մշակելու տեսանկյունից:

Համեմատական վերլուծությունը, սակայն, ցույց է տալիս, որ վերոնշյալ մոդելներից որևէ մեկի ուղղակի ներմուծումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ կարող է առաջացնել ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ սահմանադրական անհամապատասխանություններ: Ավստրալական մոդելը, թեև առավել զարգացած է մասնագիտացված դատական կառույցի և գիտատեխնիկական ինտեգրման տեսանկյունից, պահանջում է բարձր մակարդակի ֆինանսական, կադրային և դատական ինքնավարության ռեսուրսներ, որոնք կարող են դժվար իրագործելի լինել Հայաստանի պայմաններում:

Հնդկականի «Ազգային կանաչ տրիբունալի» մոդելն առանձնանում է լայն իրավասությամբ և ակտիվ միջամտությամբ, սակայն դրա չափազանց ուժեղացված կիսադատական լիազորությունները կարող են բարդություններ առաջացնել իշխանությունների բաժանման և վարչական արդարադատության գործող համակարգի հետ հարաբերակցության տեսանկյունից:

Շվեդական և նորզելանդական մոդելները, որոնք ինտեգրված են ընդհանուր դատական համակարգում, առավել կայուն են իրավական համակարգայնության առումով, սակայն կարող են սահմանափակել այն աստիճանի ինստիտուցիոնալ ինքնուրույնությունը, որն անհրաժեշտ է Հայաստանի առանձնահատուկ բնապահպանական մարտահրավերների պայմաններում:

Ուստի Հայաստանի համար առավել նպատակահարմար է ոչ թե որևէ օտարերկրյա մոդելի մեխանիկական փոխառությունը, այլ հատուկ իրավասությամբ (sui generis) կառուցակարգի ձևավորումը՝ «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում, որը կհամադրի միջազգային լավագույն փորձի առավել արդյունավետ բաղադրիչները՝ գիտատեխնիկական մասնագիտացումը, հանրային շահի առաջնայնությունը, կանխարգելիչ մոտեցումները և սահմանադրական համատեղելիությունը՝ միաժամանակ խուսափելով օտար մոդելների

---

[20] Տես Պրինգ Գ., Պրինգ Ք., *«Բնապահպանական դատարաններ և տրիբունալներ. ուղեցույց քաղաքականություն մշակողների համար (Environmental Courts and Tribunals: A Guide for Policy Makers)»,* Նայրոբի՝ ՄԱԿ-ի «Շրջակա միջավայրի ծրագիր (UNEP)», 2016 թ.: Տես նաև՝ Ամիրանտե Դ. *«Բնապահպանական դատարանները համեմատաիրավական տեսանկյունից (Environmental Courts in Comparative Perspective). Pace Environmental Law Review»,* 2012 թ.:

21 Տես Պրինգ Ջ., Պրինգ Ք., *«Բնապահպանական արդարադատության զարգացումը. բնապահպանական դատարանների և տրիբունալների սփեղծումն ու կատարելագործումը (Greening Justice: Creating and Improving Environmental Courts and Tribunals)»*, 2009 թ.: Տես նաև՝ Պրեստոն Բ. Ջ., *«Բնապահպանական դատարանների և տրիբունալների արդյունավետ գործունեության հիմնական հատկանիշները (Characteristics of Successful Environmental Courts and Tribunals), Journal of Environmental Law»*, 2014 թ.:

համակարգային ռիսկերից: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել Հայաստանի իրավական և կառավարման համակարգին առավել համապատասխան, ինստիտուցիոնալ առումով ճկուն և սահմանադրորեն հավասարակշռված բնապահպանական արդարադատության մոդել:

«Շրջակա միջավայրի դատարանի» մոդելը՝ որպես «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում գործող մասնագիտացված արբիտրաժային ինստիտուտ

«Շրջակա միջավայրի դատարանի» մոդելը՝ որպես «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում գործող մասնագիտացված արբիտրաժային ինստիտուտ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական և օրենսդրական համակարգի համատեքստում կարող է հիմնավորվել որպես բնապահպանական կառավարման և արդարադատության կատարելագործման նորարարական, սակայն իրավաչափ կառուցակարգ: Դրա սահմանադրական հիմքը նախևառաջ բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածից, որով պետությունը պարտավորվում է ապահովել շրջակա միջավայրի պաշտպանությունը, բարելավումը և վերականգնումը՝ կայուն զարգացման և ապագա սերունդների հանդեպ պատասխանատվության սկզբունքներով[22]: Այս դրույթը, համակցված Սահմանադրության 10-րդ հոդվածով ամրագրված բնական պաշարների ողջամիտ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության պետական պարտավորության, ինչպես նաև 3-րդ հոդվածով մարդու՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման հետ, ձևավորում է պետության պոզիտիվ սահմանադրական պարտավորությունների համալիր համակարգ, որը պահանջում է ոչ միայն ոլորտային կարգավորում, այլև արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների ստեղծում շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական արդարադատության ոլորտում:

Այս համատեքստում առաջարկվող մոդելը չի փոխարինում Հայաստանի Հանրապետության գործող դատական համակարգին և չի միջամտում դատական իշխանության սահմանադրական կառուցվածքին, այլ գործում է որպես հատուկ իրավասությամբ լրացնող մասնագիտացված արբիտրաժային մեխանիզմ՝ համատեղելի արդար դատաքննության իրավունքի, իրավական որոշակիության և իշխանությունների բաժանման սկզբունքների հետ: Դրա գործունեությունը կարող է հիմնվել Հայաստանի Հանրապետության «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի, պայմանագրային իրավահարաբերությունների, ինչպես նաև ոլորտային բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության համակցված կիրառման վրա՝ ապահովելով, որ մասնագիտացված քննության ենթարկվեն միայն այնպիսի վեճերը, որոնք իրենց բնույթով պայմանագրային, տեխնիկապես բարդ կամ բարձր մասնագիտական գնահատում պահանջող են[23]:

Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին» օրենսգիրքը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը ինչպես նաև լիցենզիոն և բնապահպանական պայմանագրային համակարգը ձևավորում են այնպիսի հարաբերություններ, որոնց շրջանակում հաճախ առաջանում են ոչ միայն վարչական, այլև պայմանագրային և վերականգնողական պարտավորություններից բխող բարդ վեճեր[24]: Այս առումով

[22] Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ.:
[23] Տես «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2006 թ.:
[24] Տես Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին» օրենսգիրք, 2011 թ.: Տես նաև՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2014 թ.:

մասնագիտացված բնապահպանական արբիտրաժը կարող է իրավաչափորեն քննել հատկապես բացառիկ բարդությամբ գործերը, որոնք կապված են կուտակային վնասների, միջսահմանային ազդեցությունների կամ գիտականորեն անորոշ ռիսկերի հետ, մասսայական կամ մեծածավալ վեճերը, որոնք վերաբերում են մեծաթիվ անձանց, համայնքների կամ լայն աշխարհագրական ազդեցության, ինչպես նաև հանքարդյունաբերական լիցենզիաներից և լիցենզիոն պայմանագրերից բխող բնապահպանական պարտավորությունների խախտումները, ներառյալ ռեկուլտիվացիայի, ֆինանսական երաշխիքների, համայնքային համաձայնեցման և մշտադիտարկման պարտավորությունների կատարման հետ կապված վեճերը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին և հանրային կարգի սկզբունքին համապատասխան, առաջարկվող մոդելը բացառում է պետական ուղղակի կարգավորիչ լիազորությունների ոլորտները՝ վարչական և քրեական պատասխանատվության կիրառումը, լիցենզիաների տրամադրումը, դադարեցումը կամ անվավեր ճանաչումը, պետական բնապահպանական փորձաքննության եզրակացությունների ուղղակի վիճարկումը, ինչպես նաև սահմանափակ անհատական վնասների վերաբերյալ դասական քաղաքացիաիրավական վեճերը: Այս սահմանազատումը կարևոր է, որպեսզի առաջարկվող դատարանը չվերածվի զուգահեռ պետական դատարանի, այլ պահպանի իր մասնագիտացված և լրացնող բնույթը:

«Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում նման մարմնի ներառումը կարող է հիմնավորվել որպես գործադիր իշխանությունից հարաբերականորեն անկախ, հանրային շահին միտված և գիտատեխնիկական կարողություններով օժտված ինստիտուցիոնալ կառուցակարգ: Այս ձևաչափը հնարավորություն կտա համատեղել ռազմավարական մշտադիտարկումը, գիտական փորձաքննությունը, հանրային մասնակցության ապահովումը, ինչպես նաև մասնագիտացված վեճերի լուծումը մեկ միասնական համակարգում: Այն առավել համահունչ է նաև Օրհուսի կոնվենցիայի պահանջներին[25], քանի որ կարող է ապահովել հանրության համար ավելի հասանելի, մասնագիտացված, թափանցիկ և արդյունավետ բնապահպանական արդարադատություն:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների պահպանման տեսանկյունից[26] նման մարմինը պետք է գործի անկախության, անկողմնակալության, կողմերի հավասարության, պատճառաբանված որոշումների և սահմանափակ դատական վերահսկողության երաշխիքներով, ինչը թույլ կտա այն ներդնել որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին համապատասխանող լրացուցիչ արդարադատական ինստիտուտ:

Հոդվածում առկա հանրային իրավունքի և արբիտրաժելիության սահմանների հավասարակշռման նպատակով նպատակահարմար է հատուկ ընդգծել, որ առաջարկվող «Շրջակա միջավայրի դատարանը» չի կարող գործել որպես հանրային իշխանության դասական վարչաիրավական կամ կարգավորիչ գործառույթների փոխարինող, այլ պետք է սահմանափակվի բացառապես այն բնապահպանական վեճերով, որոնք ունեն պայմանագրային, լիցենզիոն, վերականգնողական կամ բազմակողմ տեխնիկական բնույթ և որոնցում հնարավոր է կողմերի իրավահավասար մասնակցությունը՝ առանց պետության ինքնիշխան կարգավորիչ լիազորությունների սահմանափակման: Հարկ է հստակ ամրագրել, որ շրջակա միջավայրի ոլորտում

[25] Շրջակա միջավայրի հարցերով տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունմանը հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա), 1998 թ.:
[26] Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights), 1950 թ.:

վարչական ակտերի օրինականության վերահսկողությունը, լիցենզավորման, թույլտվությունների տրամադրման կամ դադարեցման հարցերը, ինչպես նաև հանրային կարգի հիմունքներին վերաբերող պարտադիր նորմերի կիրառումը պետք է մնան բացառապես պետական դատարանների և վարչական արդարադատության համակարգի իրավասության ներքո: Այսպիսի սահմանազատումը թույլ կտա բացառել արբիտրաժային կառուցակարգի հակասությունը հանրային շահի, սահմանադրական կարգի և իրավական պետության սկզբունքներին՝ միաժամանակ պահպանելով մասնագիտացված բնապահպանական արդարադատության արդյունավետությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հաստատում է, որ արբիտրաժը կարող է հանդիսանալ արդարադատության իրականացման իրավաչափ ձև, եթե այն հիմնված է կողմերի ազատ համաձայնության վրա և ապահովում է անկախության, անկողմնակալության ու արդար դատաքննության հիմնարար երաշխիքները: Այս մոտեցումը վերահաստատվել է «Բեգ Ս.պ.ա. ընդդեմ Իտալիայի» (Beg S.p.a. v. Italy, գանգատ թիվ 5312/11, 20 մայիսի 2021 թ.-ի գործով, որտեղ ՄԻԵԴ-ը շեշտեց, որ նույնիսկ կամավոր արբիտրաժի պարագայում պետությունը պարտավոր է երաշխավորել արբիտրաժային կազմի իրական անկախությունն ու անաչառությունը[27]: Դատարանը փաստեց, որ արբիտրաժը չի կարող գործել արդար դատաքննության իրավունքի, հանրային կարգի (public policy) և արդյունավետ դատական վերահսկողության հաշվին: Այսպիսով, Եվրոպական դատարանը ճանաչում է արբիտրաժը որպես արդարադատության լրացուցիչ ձև, սակայն միայն այն սահմաններում, որտեղ պահպանվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նվազագույն չափանիշները: Այս նախադեպը կարևոր տեսական հիմք է Հայաստանի համար առաջարկվող sui generis բնապահպանական արբիտրաժային մոդելի համար, քանի որ այն հիմնավորում է մասնագիտացված արբիտրաժի թույլատրելիությունը՝ պայմանով, որ վերջինս գործի սահմանադրական վերահսկողության, հանրային շահի և մարդու իրավունքների պաշտպանության հստակ շրջանակներում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, բնապահպանական և ընդերքօգտագործման օրենսդրության, ինչպես նաև միջազգային բնապահպանական և մարդու իրավունքների պարտավորությունների համատեքստում «Շրջակա միջավայրի դատարանը» կարող է բնութագրվել որպես նեղ մասնագիտացված, կանխարգելիչ, գիտատեխնիկականորեն հագեցած և հանրային շահին ուղղված իրավական կառուցակարգ, որը ոչ թե կրկնօրինակում է օտարերկրյա մոդելները, այլ ձևավորում է Հայաստանի իրավական համակարգին հարմարեցված ինքնուրույն ինստիտուցիոնալ լուծում: Այն կարող է դառնալ էկոլոգիական սահմանադրականության, հանրային շահի պաշտպանության, շրջակա միջավայրի արդյունավետ կառավարման և միջսերնդային պատասխանատվության գործնական իրացման կարևորագույն բաղադրիչ[28]:

Կազմակերպական կառուցվածքը և ընթացակարգային երաշխիքները.

Միջազգային լավագույն փորձի, հատկապես Հնդկաստանի «Ազգային կանաչ տրիբունալի» (National Green Tribunal, NGT) և Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի «Հողի և շրջակա միջավայրի դատարանի» (Land and Environment Court of New South Wales) մոդելների հաշվառմամբ՝ առաջարկվող «Շրջակա միջավայրի դատարանը» պետք է ունենա խառը մասնա-

[27] Տես Բեգ Ս.պ.ա. ընդդեմ Իտալիայի (Beg S.p.a. v. Italy), գանգատ թիվ 5312/11, 20 մայիսի 2021 թ.:
[28] Տես Բոյդ Դ. Ռ., *Բնապահպանական իրավունքների հեղափոխությունը* (The Environmental Rights Revolution), UBC Press, 2012 թ.:

գիտական կազմ՝ Նախագահ, իրավաբան-արբիտրներ և գիտատեխնիկական արբիտրներ: Նախագահը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն և առնվազն 15 տարվա մասնագիտական փորձ, իսկ իրավաբան և գիտատեխնիկական արբիտրները՝ համապատասխանաբար շրջակա միջավայրի, ընդերքի, վարչական իրավունքի, ինչպես նաև շրջակա միջավայրի գիտության, երկրաբանության (geology), ջրաբանության (hydrology), քիմիայի, կենսաբազմազանության և ինժեներական գիտությունների ոլորտներում բարձր մասնագիտական որակավորում:

Արբիտրների նշանակումը պետք է իրականացվի թափանցիկ և անկախ ընթացակարգով՝ առանց գործադիր իշխանության միջամտության: Այդ նպատակով կարող է ստեղծվել ինքնավար ընտրական հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի և մասնագիտական միավորումների ներկայացուցիչներ: Արբիտրների առնվազն հնգամյա պաշտոնավարումը՝ առանց վերանշանակման հնարավորության, կարող է ծառայել որպես ինստիտուցիոնալ անկախության լրացուցիչ երաշխիք:

Մասնագիտացված արբիտրաժի ընթացակարգերը պետք է համապատասխանեն Օրհուսի կոնվենցիայի պահանջներին՝ ապահովելով արդար, արագ, ոչ չափազանց ծախսատար և շահագրգիռ հանրության համար հասանելի քննություն, պատճառաբանված գրավոր որոշումներ և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ: Հանրային մասնակցությունը կարող է երաշխավորվել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների՝ դատարանի բարեկամի (amicus curiae) կարծիքով մասնակցությամբ, նիստերի բացությամբ, որոշումների հրապարակմամբ և մասսայական վեճերում համայնքների ներկայացուցիչների ներգրավմամբ: Թափանցիկությունն այստեղ ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ էկոլոգիական արբիտրաժը, ի տարբերություն սովորական առևտրային արբիտրաժի, վերաբերում է հանրային շահին:

Շրջակա միջավայրի վեճերի ապացուցողական չափանիշները պետք է հարմարեցվեն դրանց գիտատեխնիկական բարդությանը և կանխարգելիչ բնույթին: Կանխարգելման սկզբունքի (precautionary principle) կիրառման դեպքում դասական ապացուցման բեռը պետք է վերանայվի. զգալի և ակնհայտ ռիսկի նախնական ապացուցման (prima facie evidence) դեպքում ապացուցման բեռը պետք է տեղափոխվի պատասխանողի վրա: Այս մոտեցումը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Շվեյցարիայի Կլիմայի Տարեց Կանանց Միություն և այլք ընդդեմ Շվեյցարիայի» (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland, 2024) գործով արտահայտված դիրքորոշմանը, ըստ որի, պետությունը պետք է հիմնավորի, որ ձեռնարկել է անհրաժեշտ գործողություններ հնարավոր վնասը կանխելու համար[29]:

Առաջարկվող մոդելում պետք է նախատեսվեն գիտատեխնիկական ապացույցների լայն ընդունելիություն, արբիտրաժային կազմի կողմից փորձագետների ինքնուրույն նշանակման հնարավորություն գիտական անորոշության դեպքում, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ գործելու իրավասություն (suo motu)՝ կարևոր էկոլոգիական խնդիրների առկայության դեպքում: Արբիտրաժի որոշումները պետք է ունենան պարտադիր ուժ և կատարվեն պետական հարկադիր կատարման մեխանիզմներով՝ արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման ընթացակարգերին համապատասխան: Միաժամանակ պետք է ապահովվի դրանց սահմանափակ բողոքարկման հնարավորություն Վճռաբեկ դատարանում՝ ընթացակար-

[29] Տե՛ս Շվեյցարիայի Կլիմայի Տարեց Կանանց Միություն և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland), գանգատ թիվ 53600/20, 9 ապրիլի 2024 թ.:

գային էական խախտումների, հանրային կարգին հակասելու կամ իրավասության սահմանազանցման հիմքերով՝ համահունչ 1958 թվականի Նյու Յորքի կոնվենցիայի սկզբունքներին[30]:

Եզրակացություն

Ինստիտուցիոնալ մարտահրավերներ.

Առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել «Շրջակա միջավայրի դատարան»՝ որպես «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում գործող մասնագիտացված արբիտրաժային ինստիտուտ, որը կդառնա շրջակա միջավայրի վեճերի լուծման ինքնուրույն և նորարարական կառուցակարգ: Մոդելը հիմնված է միջազգային լավագույն փորձի՝ Մշտական արբիտրաժի դատարանի (Permanent Court of Arbitration, PCA), Հնդկաստանի «Ազգային կանաչ տրիբունալի» (National Green Tribunal) և Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի «Հողի և շրջակա միջավայրի դատարանի» (Land and Environment Court) համադրման վրա և նախատեսում է սահմանափակ իրավասություն՝ ուղղված հատկապես բարդ, մասսայական և հանքարդյունաբերական բնույթի վեճերի քննությանը[31]:

Առաջարկվող մոդելը հիմնված է երեք հիմնական տարրերի վրա՝ իրավաբանների և գիտնականների համատեղ կազմ, բնապահպանական ռիսկերի կանխարգելմանն ուղղված ճկուն ընթացակարգեր, ինչպես նաև հանրային մասնակցության և թափանցիկության ապահովում՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Մոդելը նախատեսում է նաև մասնագիտացված բնապահպանական արբիտրաժի օրենսդրական ամրագրում:

Միաժամանակ, առաջարկվող մոդելի արդյունավետությունը կախված է երեք հիմնական պայմաններից: Նախ, անհրաժեշտ է ապահովել դրա հանրային լեգիտիմությունը, քանի որ բնապահպանական վեճերը շոշափում են ոչ միայն մասնավոր, այլև հանրային շահերը: Այդ պատճառով առաջարկվող մարմինը պետք է գործի որպես հատուկ իրավասությամբ հանրային ինստիտուտ, այլ ոչ թե դասական մասնավոր արբիտրաժ: Երկրորդ, պետք է բացառվի «կարգավորիչ սառեցման» (regulatory chill) ռիսկը՝ օրենսդրորեն ամրագրելով, որ պետության օրինական և հանրային շահին ուղղված բնապահպանական միջոցառումները ենթակա չեն արբիտրաժային վերանայման: Երրորդ, անհրաժեշտ է հստակ սահմանազատել մասնագիտացված դատարանի և ընդհանուր իրավասության դատական համակարգի լիազորությունները՝ նախատեսելով, որ դրա որոշումները կարող են բողոքարկվել միայն Վճռաբեկ դատարան և միայն սահմանափակ ընթացակարգային հիմքերով:

Այսպիսով, առաջարկվող մոդելը ոչ թե փոխարինում է գործող դատական համակարգին, այլ լրացնում է այն՝ ստեղծելով Հայաստանի համար սահմանադրորեն հիմնավորված, մասնագիտացված, կանխարգելիչ և հանրային շահին ուղղված բնապահպանական արդարադատության նոր ինստիտուցիոնալ ճարտարապետություն: Այն կարող է դիտարկվել որպես էկոլոգիական սահմանադրականության և միջսերնդային պատասխանատվության գործնական իրացման նոր փուլ:

Օրենսդրությամբ պետք է հստակ սահմանվի մասնագիտացված բնապահպանական ար-

[30] Տես Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիա (New York Convention), 1958 թ.:

[31] Տես Տես Մշտական արբիտրաժային դատարան (Permanent Court of Arbitration (PCA)), *Շրջակա միջավայրին և/կամ բնական ռեսուրսներին առնչվող վեճերի արբիտրաժի կամընտիր կանոններ* (Optional Rules for Arbitration of Disputes Relating to the Environment and/or Natural Resources), 2001 թ.: Տես նաև՝ «Հողի և շրջակա միջավայրի դատարանի մասին» օրենք (Land and Environment Court Act 1979), Ավստրալիա, Նոր Հարավային Ուելս.: Տես նաև՝ «Ազգային կանաչ տրիբունալի մասին» օրենք (National Green Tribunal Act), Հնդկաստան, 2010 թ.:

բիտրաժի իրավասությունը՝ բացառելով հանրային կարգին, վարչական ակտերին և պետական կարգավորիչ լիազորությունների իրականացմանը վերաբերող վեճերը: Այդպիսի սահմանափակումը կապահովի հանրային շահի, սահմանադրական կարգի և պետական բնապահպանական քաղաքականության գերակայությունը, իսկ արբիտրաժը կգործի որպես դատական համակարգը լրացնող, ոչ թե փոխարինող մեխանիզմ:

Մասնագիտացված բնապահպանական արբիտրաժի իրավասությունը պետք է տարածվի միայն մասնավոր իրավահարաբերություններից ծագող բարդ, զանգվածային կամ մեծածավալ բնապահպանական վեճերի, ինչպես նաև հանքարդյունաբերական լիցենզիաների պայմանների և լիցենզիոն պայմանագրերի խախտման հետ կապված վեճերի վրա:

Ամփոփագիր: Սույն հոդվածում, համեմատական իրավագիտության և սահմանադրահիրավական դոկտրինի մեթոդների կիրառմամբ, հիմնավորվում է շրջակա միջավայրի վերաբերյալ առանձին կատեգորիաների վեճերի լուծման համար մասնագիտացված արբիտրաժային ինստիտուտի՝ «Շրջակա միջավայրի դատարանի» ստեղծման անհրաժեշտությունը՝ «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի» կազմում: Ուսումնասիրվում են Մշտական արբիտրաժի դատարան (Permanent Court of Arbitration, PCA) շրջակա միջավայրի վերաբերյալ վեճերի արբիտրաժի ընտրովի կանոնները (2001 թ.), Հնդկաստանի Ազգային կանաչ տրիբունալի, Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի «Հողի և շրջակա միջավայրի դատարանի» (Land and Environment Court), ինչպես նաև շրջակա միջավայրի մասնագիտացված դատարանների միջազգային փորձը:

Հոդվածում առաջարկվում է առարկայական իրավասության սահմանափակ մոդել, որի համաձայն՝ առաջարկվող արբիտրաժը քննում է ոչ բոլոր էկոլոգիական վեճերը, այլ միայն հատկապես բարդ, զանգվածային կամ մեծածավալ վեճերը, ինչպես նաև հանքարդյունաբերական լիցենզիաների պայմանների կամ լիցենզիոն պայմանագրերի խախտման դեպքերը:

Annotation. This article, employing the methods of comparative legal analysis and constitutional law doctrine, substantiates the necessity of establishing a specialized arbitral institution, namely an "Environmental Court," within the structure of the "Independent Environmental Protection Council" for the resolution of certain categories of environmental disputes. The study examines the Optional Rules for Arbitration of Disputes Relating to the Environment and/or Natural Resources (2001) adopted by the Permanent Court of Arbitration (PCA), as well as the international experience of the National Green Tribunal of India, the Land and Environment Court of New South Wales (Australia), and other specialized environmental courts and tribunals.

The article proposes a model of limited subject-matter jurisdiction, according to which the proposed arbitral institution would not consider all environmental disputes, but only particularly complex, mass, or large-scale disputes, as well as disputes arising from breaches of mining license conditions or licensing agreements.

Аннотация. В настоящей статье с использованием методов сравнительного правоведения и конституционно-правовой доктрины обосновывается необходимость создания специализированного арбитражного института — «Экологического суда» в составе «Независимого совета по охране окружающей среды» — для разрешения отдельных категорий экологических споров. Исследуются Факультативные правила арбитража споров, касающихся окружающей среды и (или) природных ресурсов, разработанные Постоянной палатой третейского суда (Permanent Court of Arbitration, PCA) в 2001 году, а также международный опыт функционирования Национального зелёного трибунала Индии, Суда по земельным и экологическим вопросам штата Новый Южный Уэльс Австралии (Land and Environment Court) и других специализированных экологических судов.

В статье предлагается модель ограниченной предметной юрисдикции, в соответствии с которой

предлагаемый арбитражный институт рассматривает не все экологические споры, а только наиболее сложные, массовые и крупномасштабные экологические споры, а также споры, связанные с нарушением условий горнодобывающих лицензий и лицензионных соглашений.

Բանալի բառեր *- շրջակա միջավայրի արբիտրաժ, մասնագիտացված էկոլոգիական արբիտրաժ, շրջակա միջավայրի դատարան, Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհուրդ, հանքարդյունաբերական լիցենզիաների վեճեր, զանգվածային էկոլոգիական վեճեր, մշտական արբիտրաժային դատարանի բնական պաշարներին և (կամ) շրջակա միջավայրին վերաբերող վեճերի արբիտրաժի կամընտիր կանոններ, Ազգային կանաչ տրիբունալ, Հողի և շրջակա միջավայրի դատարան, արբիտրաժելիություն, հանրային կարգ:*

Keywords: *environmental arbitration, specialized environmental arbitration, Environmental Court, Independent Environmental Protection Council, mining license disputes, mass environmental disputes, Permanent Court of Arbitration Optional Rules for Arbitration of Disputes Relating to the Environment and/or Natural Resources, National Green Tribunal, Land and Environment Court, arbitrability, public policy.*

Ключевые слова: *экологический арбитраж, специализированный экологический арбитраж, Экологический суд, Независимый совет по охране окружающей среды, экологические споры, споры, связанные с горнодобывающими лицензиями, массовые экологические споры, Факультативные правила арбитража споров, касающихся окружающей среды и (или) природных ресурсов Постоянной палаты третейского суда, Национальный зелёный трибунал, Суд по земельным и экологическим вопросам, арбитрабельность, публичный порядок.*

Օգտագործված գրականության ցանկ

I. Միջազգային իրավական աղբյուրներ

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights), 1950 թ.:
2. Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և իրավական պաշտպանության հասանելիության մասին կոնվենցիա (Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, Օրհուսի կոնվենցիա), 1998 թ.:
3. Մշտական արբիտրաժի դատարան (Permanent Court of Arbitration, PCA), «Շրջակա միջավայրի և (կամ) բնական պաշարների վերաբերյալ վեճերի արբիտրաժի ընտրովի կանոններ» (Optional Rules for Arbitration of Disputes Relating to the Environment and/or Natural Resources), 2001 թ.:
4. Մշտական արբիտրաժի դատարան (Permanent Court of Arbitration, PCA), «Շրջակա միջավայրի և (կամ) բնական պաշարների վերաբերյալ վեճերի հաշտարարության ընտրովի կանոններ» (Optional Rules for Conciliation of Disputes Relating to the Environment and/or Natural Resources), 2002 թ.:
5. Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիա (Convention on the Recognition and Enforcement of Foreign Arbitral Awards, New York Convention), 1958 թ.:
6. ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողով (UNCITRAL). Միջազգային առևտրային արբիտրաժի մոդելային օրենք (Model Law on International Commercial Arbitration), 1985 թ.:

II. Հայաստանի Հանրապետության և համեմատական ազգային իրավական աղբյուրներ

7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ.:
8. «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2006 թ.:
9. Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին» օրենսգիրք, 2011 թ.:
10. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 2014 թ.:
11. «Հողի և շրջակա միջավայրի դատարանի մասին» օրենք (Land and Environment Court Act 1979), Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս:
12. «Ազգային կանաչ տրիբունալի մասին» օրենք (National Green Tribunal Act), Հնդկաստան, 2010 թ.:

III. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք

13. Տատար ընդդեմ Ռումինիայի (Tătar v. Romania), գանգատ թիվ 67021/01, 27 հունվարի 2009 թ.:
14. Շվեյցարիայի Կլիմայի Տարեց Կանանց Միություն և այլք ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland), գանգատ թիվ 53600/20, 9 ապրիլի 2024 թ.:
15. Բեգ Ս.պ.ա. ընդդեմ Իտալիայի (Beg S.p.a. v. Italy), գանգատ թիվ 5312/11, 20 մայիսի 2021 թ.:

IV. Միջազգային արբիտրաժային նախադեպեր

16. Մեթանեքս կորպորացիա ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների (Methanex Corp. v. United States of America), UNCITRAL, 2005 թ.:
17. Ուրբազեր Ս.Ա. և այլք ընդդեմ Արգենտինայի Հանրապետության (Urbaser S.A. and Consorcio de Aguas Bilbao Bizkaia v. Argentina), ICSID Case No. ARB/07/26, 2016 թ.:
18. Բերլինգթոն Ռիսորսիզ ընդդեմ Էկվադորի Հանրապետության (Burlington Resources Inc. v. Republic of Ecuador), ICSID Case No. ARB/08/5, 2017 թ.:
19. Ռոքհոփեր Իտալիա ընդդեմ Իտալիայի Հանրապետության (Rockhopper Italia S.p.A. v. Italian Republic), ICSID Case No. ARB/17/14, 2022 թ.:
20. Ինդուս Ջրերի Կիշենգանգա արբիտրաժ (Indus Waters Kishenganga Arbitration, Pakistan v. India), PCA Case No. 2011-01, 2013 թ.:
21. Փրինգ, Ջորջ, Փրինգ, Քեթրին (Pring G., Pring C.) «Շրջակա միջավայրի դատարաններ և տրիբունալներ. ուղեցույց որոշում կայացնողների համար» (Environmental Courts and Tribunals: A Guide for Policy Makers), Միավորված ազգերի կազմակերպության Շրջակա միջավայրի ծրագիր (UNEP), Նայրոբի, 2016 թ.:
22. Փրինգ, Ջորջ, Փրինգ, Քեթրին (Pring G., Pring C.) «Կանաչ արդարադատություն. շրջակա միջավայրի դատարանների և տրիբունալների ստեղծումն ու կատարելագործումը» (Greening Justice: Creating and Improving Environmental Courts and Tribunals), 2009 թ.:
23. Փրեսթոն, Բրայան Ջ. (Preston B. J.) «Դատական մասնագիտացման առավելությունները շրջակա միջավայրի իրավունքում» (Benefits of Judicial Specialisation in Environmental Law), Pace Environmental Law Review, 2012 թ.:
24. Փրեսթոն, Բրայան Ջ. (Preston B. J.) «Հաջող մասնագիտացված շրջակա միջավայրի դատարանների բնութագրերը» (Characteristics of Successful Environmental Courts and Tribunals), Journal of Environmental Law, 2014 թ.:
25. Գիլ, Գուրդիփ Ն. (Gill G. N.) «Բնապահպանական արդարադատությունը Հնդկաստանում. Ազգային կանաչ տրիբունալը» (Environmental Justice in India: The National Green Tribunal), Routledge, 2017 թ.:
26. Ամիրանտե, Դոմենիկո (Amirante D.) «Շրջակա միջավայրի դատարանները համեմատական հեռանկարում» (Environmental Courts in Comparative Perspective), Pace Environmental Law Review, 2012 թ.:
27. Միջազգային առևտրի պալատ (International Chamber of Commerce, ICC) «Կլիմայական փոփոխության հետ կապված վեճերի լուծումը արբիտրաժի և այլընտրանքային վեճերի լուծման միջոցով» (Resolving

Climate Change Related Disputes through Arbitration and ADR), Փարիզ, 2019 թ.:

28. Բոյդ, Դեյվիդ Ռ. (Boyd D. R.) «Բնապահպանական իրավունքների հեղափոխությունը. սահմանադրությունների, մարդու իրավունքների և շրջակա միջավայրի գլոբալ ուսումնասիրություն» (The Environmental Rights Revolution), UBC Press, 2012 թ.:

29. Կոտզե, Լուի Ջ., Փաթերսոն, Ալեքսանդրա Ռ. (Kotzé L. J., Paterson A. R.) խմբ. «Դատական իշխանության դերը շրջակա միջավայրի կառավարման ոլորտում» (The Role of the Judiciary in Environmental Governance), Kluwer Law International, 2009 թ.:

Թումանյան Կ. - Բարձրագույն դատական խորհրդի անդամ, էլհասցե՝ kartumanyan@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 29.06.2026 թ., տրվել է գրախոսության 29.06.2026 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-44

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

ABRAHAMYAN ANAHIT
Applicant at the Faculty of Law, Eurasia International University

АБРААМЯН АНАИТ
Соискатель факультета юриспруденции Евразийского международного университета
https://orcid.org/0009-0004-0208-6482

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԿԱՆԵՐԻՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼՈՒ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

RISKS OF THE USE OF ARTIFICIAL INTELLIGENCE TOOLS IN THE CONTEXT OF THE PRINCIPLE OF EQUALITY OF ARMS AND THE RIGHT TO EXAMINE AND CHALLENGE WITNESSES

РИСКИ ПРИМЕНЕНИЯ ИНСТРУМЕНТОВ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА РАВЕНСТВА СТОРОН И ПРАВА НА ДОПРОС И ОСПАРИВАНИЕ СВИДЕТЕЛЕЙ

Ներածություն

Արդար դատաքննության իրավունքը փիլիսոփայական և իրավական արժեք է, որի ակունքները գտնվում են մարդու արժանապատվության, արդարության և իրավական արդարամտության հիմնարար գաղափարներում[1]: Դրա կարևորագույն տարրերից են կողմերի հավասարությունը և վկաներին հարցաքննելու և հակադարձելու իրավունքի հայեցակարգերը[2]: Ապացույցների ներկայացմանն ու գնահատմանը վերաբերող կանոնների մեծ մասը ձևավոր-

[1] Rejhan Kurtović and Maida Bećirović-Alić, "The Right on Human Dignity through the Prism of Trial within a Reasonable Time," [2020] Yearbook Human Rights Protection 468.
[2] Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (adopted 4 November 1950, entered into force 3 September 1953) 213 UNTS 221, art 6.

վել է այն ժամանակահատվածում, երբ դատարանում ապացույցները հիմնականում ներկայացվում էին մարդկային ցուցմունքների կամ փաստաթղթերի միջոցով[3]: Թվային աշխարհում այս սկզբունքները պետք է վերանայվեն՝ հաշվի առնելով դատական համակարգերի թվայնացման աստիճանը և ապացույցների ու որոշումների կայացման գործընթացներում տեխնոլոգիաների աճող օգտագործումը: Ալգորիթմների կիրառումը քրեական արդարադատության համակարգում առաջացնում է լուրջ մտահոգություններ՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի մասով: Այն նաև հարցականի տակ է դնում կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքների ապահովումը[4]:

Արհեստական բանականության համակարգերը կարող են կողմերի միջև ստեղծել անհավասարակշռություն, որի հասցեագրման համար դասական իրավական երաշխիքները բավարար չեն, ինչը պահանջում է մրցակցային դատավարության ապահովման համար նոր մոտեցումների ձևավորում: Հենց այս նպատակին է ուղղված սույն հոդվածը, որի արդիականությունը արդարադատության ոլորտում թվայնացման գործիքների կիրառման ընթացիկ աճով է պայմանավորած՝ համապատասխան իրավական երաշխիքների բացակայության պայմաններում:

Հիմնական հետազոտություն

«Կողմերի հավասարության» տերմինը բառացիորեն սահմանված չէ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի տեքստում: Այս հայեցակարգը զարգացման հիմքը եղել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը[5]: Սկզբունքը չի պահանջում կողմերի միջև ձևական հավասարություն կամ խիստ միատեսակ պայմանների առկայություն, այլ ենթադրում է, որ դատավարության կողմերից յուրաքանչյուրին պետք է երաշխավորել իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու հնարավորություն, որոնք, ի տարբերություն հակառակ կողմի, նրան չեն դնում էականորեն անբարենպաստ դրության մեջ[6]: Այլ կերպ ասած՝ կողմերի դրությունը դատաքննության ժամանակ պետք է լինի արդարացիորեն հավասար[7]:

Կողմերի հավասարության սկզբունքը դրված է ավելի լայն մրցակցային դատավարության հայեցակարգի հիմքում, որն ապահովում է դատական գործընթացի վրա ազդեցություն ունեցող բոլոր նյութերի վերաբերյալ տեղեկացված լինելու, դրանց հասանելիություն ունենալու և արձագանքելու կողմերի իրավունքը[8]: ՄԻԵԴ-ի ընդգծել է, որ կողմերը պետք է ոչ միայն ունենան հասանելիություն դատավարական նյութերին, այլ նաև իրական հնարավորություն արձագանքելու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին և ապացույցներին[9]: Ruiz-Mateos v. Spain գործով դատարանը գտավ, որ այն իրավիճակները, **երբ դատարանը հիմնվում է այնպիսի փաստաթղթերի կամ զեկույցների վրա, որոնց բովանդակությանը կողմերից**

[3] Sabine Gless, "AI in the Courtroom: A Comparative Analysis of Machine Evidence in Criminal Trials" [2020] Georgetown Journal of International Law 195.
[4] Council of Europe, Recommendation CM/Rec(2020)1 of the Committee of Ministers to member States on the human rights impacts of algorithmic systems (CoE 2020), para 11.
[5] *Borgers v Belgium* (1993) 15 EHRR 92., para 24.; տես նաև՝ Bönisch v Austria (1985) 9 EHRR 191, para 32.
[6] *Steel and Morris v United Kingdom* (2005) 41 EHRR 22.
[7] *De Haes and Gijsels v Belgium* (1997) 25 EHRR 1., para. 53.
[8] *Jespers v Belgium* (1981) 27 DR 61., para 63.
[9] *Brandstetter v Austria* (1991) 15 EHRR 378, para 67.

մեկը չի կարողացել ծանոթանալ կամ մեկնաբանել, խախտում են կողմերի հավասարության սկզբունքը[10]: Այսպիսով, հավասարությունը չի սահմանափակվում ֆորմալ ձևակերպմամբ, այլ պահանջում է **դատավարական նյութերի նկատմամբ լիարժեք տեղեկացվածություն և իրական ազդեցության հնարավորություն**[11]: ՄԻԵԴ-ի պրակտիկայում առկա են նաև սույն դրույթի բացառություններ, սակայն դրանք կիրառելի են միայն խիստ սահմանափակ դեպքերում՝ այլ անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության նպատակով[12] և միայն դատավարական այլ երաշխիքների առկայության պայմաններում[13]:

Դատավարության մրցակցային բնույթը տարածվում է նաև վկաների հարցաքննության գործընթացի վրա[14]: Վկաների հարցաքննման իրավունքները սահմանված են ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի տեքստում՝ 3-րդ մասի (d) ենթակետով, համաձայն որի՝ մեղադրյալը պետք է ունենա իրական հնարավորություն՝ հարցաքննելու իր դեմ վկայություն տվող վկաներին կամ ապահովելու նրանց հարցաքննությունը, ինչպես նաև ներկայացնելու և հարցաքննելու պաշտպանության վկաներին նույն պայմաններում: «Unterpertinger v. Austria» գործով ՄԻԵԴ-ը հստակեցրել է, որ դատավճիռը, որը հիմնված է վկաների ցուցմունքների վրա, որոնց հարցաքննելու հնարավորություն մեղադրյալին չի տրվել անհամատեղելի է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի պահանջների հետ[15]: Սույն դրույթից շեղումներ թույլատրվում են, երբ առկա են բավարար հակակշռող երաշխիքներ[16]: ՄԻԵԴ-ը «անհայտ վկաների» կողմից ներկայացված ցուցմունքների թույլատրելիությունը գնահատում է հետևյալ գործոնների լույսի ներքո. 1. Արդյո՞ք վկայի բացակայության համար կար հարգելի պատճառ, 2. Այդ վկայի ցուցմունքն արդյո՞ք կազմում էր վճռի կամ որոշման միակ կամ որոշիչ հիմքը և 3. Արդյո՞ք առկա էին համապատասխան երաշխիքներ մեղադրյալի իրավունքի սահմանափակումը հակակշռելու համար:

Վերոգրյալ դրույթների հստակեցման կարևորությունն այն է, որ արհեստական բանականության համակարգերն իրենց օգտագործման բնույթով կարող են նմանվել վկայությունների: Ինչպես շարադրվել է Չեսմանի աշխատությունում մեքենայական համակարգերը կարող են գեներացնել ապացույցներ առանց մարդկային միջամտության[17] և չնայած այն հանգամանքի, որ այդ ապացույցները կարող են լուրջ հետևանքներ ունենալ անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում, դրանց «հարցաքննումը» հնարավոր չէ[18]:

Նախկինում հնարավոր էր քննության ենթարկել այն անձանց, որոնք օգտագործում էին տեխնոլոգիական գործիքներ՝ ապացույցների ստեղծման կամ հավաքագրման նպատակով: Նրանց հարցաքննության միջոցով հնարավոր էր վիճարկել ստացված արդյունքները: Սակայն այսօր ապացույցների վերլուծության գործընթացում մարդկային գործոնի դերն աստիճանաբար նվազում է: Արհեստական բանականության գործիքները ձեռք են բերում ինքնավարության աննախադեպ մակարդակ, ինչի հետևանքով դրանց կողմից ձևակերպված եզրակացությունները որոշակի անձանց վերագրելը կամ այդ անձանցից այդ արդյունքների

[10] *Ruiz-Mateos v Spain* (1993) 16 EHRR 505, para 63.
[11] *Borgers v Belgium* (1993) 15 EHRR 92.; *Nideröst-Huber v Switzerland* (1997) 25 EHRR 709, *Foucher v France* (1998) 25 EHRR 234.
[12] *Van Mechelen and Others v Netherlands* (1998) 25 EHRR 647, para 58.
[13] *Doorson v Netherlands* (1996) 22 EHRR 330, para 72.
[14] *Barberà, Messegué and Jabardo v Spain* (1989) 11 EHRR 360, para 78.
[15] *Unterpertinger v Austria* (1988) 10 EHRR 394.
[16] *Al-Khawaja and Tahery v United Kingdom* (2012) 54 EHRR 23.
[17] Christian Chessman, "A "Source" of Error: Computer Code, Criminal Defendants, and the Constitution" [2017] 105 *California Law Review*, 179.
[18] Kian Jamasbi, "Face-to-Face: Confronting Machine-Generated Evidence" [2026] Law & Society: Public Law - Constitutional Law eJournal 1.

բացատրություն պահանջելը դառնում է ավելի ու ավելի դժվար[19]: Այստեղ կարևոր է նշել, որ «արհեստական բանականություն» հասկացությունը միասնական և հստակ սահմանում չունի: Այն ներառում է տարբեր ծրագրեր՝ տարբեր գործառույթներով և ինքնավարության տարբեր աստիճաններով: Օրինակ՝ առաջնային մակարդակում առկա է պարզ ավտոմատացումը, որտեղ համակարգերը գործում են նախապես սահմանված կանոնների և սցենարների հիման վրա՝ առանց «ուսուցման կամ հարմարվողականության»: Սպեկտրի մյուս ծայրում գտնվում են լիովին ինքնավար համակարգերը, որոնք կարող են գործել հարաբերականորեն անկախ՝ նվազագույն մարդկային միջամտությամբ[20]: Օրինակ՝ «agentic» արհեստական բանականությունը, որն այսօր դասակարգվում է առավել բարձր ինքնավարությամբ օժտված համակարգերի շարքում, էապես տարբերվում է պասիվ գեներատիվ արհեստական բանականությունից: Այն ունակ է նախաձեռնողական կերպով կողմնորոշվել միջավայրում, գործել Կիրառական ծրագրավորման ինտերֆեյսների (API-ների) միջոցով և հարմարվել նոր իրավիճակներին: Նման համակարգերի հիմնական կարողությունների շարքին են պատկանում ամբողջական աշխատանքային գործընթացների ավտոմատացումը, տվյալների վերլուծությունը և բազմափուլ որոշումների կայացումը: Նման համակարգերի օգտագործման պայմաններում հնարավոր չէ արդյունքները հստակ վերագրել որոշակի անձանց և հետևաբար այդ արդյունքներին հակազդելը դառնում է խնդրահարույց:

Արհեստական բանականության համակարգերի միջոցով ստեղծված ապացույցների վիճարկումն ավելի է բարդանում՝ պայմանավորված դրանց «սև արկղի» բնույթով[21]: Մեքենայական ուսուցման ալգորիթմների ներքին գործառույթները հաճախ լինում են սեփականության իրավունքով պաշտպանված և հետևաբար դուրս են հանրային վերահսկողությունից, ինչի հետևանքով մեղադրյալները զրկվում են այդ գործիքների աշխատանքը հասկանալու հնարավորությունից: Առավել մտահոգիչ է նաև լայնորեն տարածված այն կարծիքը, որ մեքենայական համակարգերի կողմից ստեղծված ապացույցները կամ տվյալները ի սկզբանե օբյեկտիվ են և հուսալի: Այս ընկալումը կարող է հանգեցնել նրան, որ նման ապացույցներին տրվի անհամաչափ մեծ նշանակություն դատավարության ընթացքում[22]:

Դասական պատկերացմամբ դատավարության ընթացքում վկաների ցուցմունքները կարող են կասկածի տակ դրվել՝ հիմնվելով վկայի կողմից նախկինում ստելու դեպքերի, հոգեկան վիճակի կամ այլ հանգամանքների վրա, որոնք կարող են ազդել ցուցմունքի արժանահավատության վրա: Մեքենաների դեպքում նման գնահատումը զգալիորեն ավելի բարդ է, հատկապես երբ բացակայում է հստակ տեղեկատվություն ծրագրի բնույթի, կիրառվող մոդելի կամ դրա սահմանափակումների վերաբերյալ: Այս համատեքստում անհրաժեշտ է, որ թե՛ դատարանները, թե՛ համապատասխան ծրագրերը ստեղծող և կիրառող անձինք գրանցեն այն բոլոր դեպքերը, երբ համակարգն արտադրել է սխալ կամ կեղծ տեղեկություն, և այդ տվյալները պետք է պարտադիր կերպով բացահայտվեն դատավարության ընթացքում: Brian Sites-ը վերլուծում է, որ դատարանները գնալով ավելի հաճախ մեքենայի կողմից գեներացված տվյալները դիտարկում են որպես հենց մեքենայի «հայտարարություններ», այլ ոչ թե

[19] Brian Sites, 'Rise of the Machines: Machine-Generated Data and the Confrontation Clause' (2015) 16 Columbia Science & Technology Law Review 36.
[20] National Institute of Standards and Technology, Artificial Intelligence Risk Management Framework (AI RMF 1.0) (NIST AI 100-1, 2023).
[21] Pasquale, F.: The Black Box Society: The Secret Algorithms That Control Money and Information. Harvard University Press, Cambridge (2015).
[22] Kian Jamasbi, "Face-to-Face: Confronting Machine-Generated Evidence" [2026] Law & Society: Public Law - Constitutional Law eJournal 1, p 15.

մարդկային փորձագիտական դիրքորոշում: Այս մոտեցման արդյունքում հարցաքննության իրավունքը հաճախ չի ապահովում մեղադրյալների հնարավորությունը հարցաքննելու այն անձանց, որոնք գործարկել կամ օգտագործել են տվյալ համակարգը և մասնակցել արդյունքի ձևավորմանը[23]:

Արհեստական բանականության համակարգերը՝ պայմանավորված թափանցիկության բացակայությամբ, նման են «թաքնված» վկաներին: Իհարկե ներկա պայմաններում այս համակարգերը չեն տալիս «վկայություն» դասական իմաստով, սակայն դրանց կիրառման բնույթը հաճախ ցուցաբերում է վկայության տարրեր: Արհեստական բանականության համակարգերը կարող են դատարանին փոխանցել փաստական նշանակություն ունեցող պնդումներ, օրինակ՝ տեսագրության մեջ պատկերված անձին նույնականացնելով մեղադրյալի հետ, կամ որ կոնկրետ տրանսպորտային միջոցը գտնվել է որոշակի վայրում և ժամանակում, կամ որ գրանցված ձայնային ազդանշանը, ամենայն հավանականությամբ, հրազենի կրակոցի արդյունք է: Ավելին, ինչպես պարզ է դառնում վերոգրյալ վերլուծությունից, դրանք կարող են գեներացնել ապացույցներ, կարծիքներ և որոշումներ, որոնք էական ազդեցություն են ունենում գործերի ելքի վրա: Այսպիսով, ՄԻԵԴ-ի գործող կարգավորումների տրամաբանության տեսանկյունից արհեստական բանականության համակարգերը կարող են օգտագործվել դատավարական գործընթացներում վկաներին նմանակող գործառույթների համար բացառապես հատուկ երաշխիքների առկայության պայմաններում և կողմերին պետք է հնարավորություն ընձեռվի ուսումնասիրելու, հակազդելու և հնարավոր է նաև հարցաքննելու արհեստական բանականության համակարգերին: Վերջինս առաջացնում է մի շարք հիմնահարցեր՝ կապված արհեստական բանականության համակարգերի իրավական կարգավիճակի հետ, սակայն այս հարցը պահանջում է խորքային վերլուծություն, որը դուրս է այս հոդվածի շրջանակից: Անհրաժեշտ է համաձայնվել նաև Զավոնսկիի դիրքորոշմանը, համաձայն որի՝ վկաների հարցաքննության իրավունքը պետք է ներառի նաև տվյալների և մեթոդաբանության «հարցաքննության» իրավունքը[24]: Այս դիրքորոշումը լիովին տեղավորվում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի տրամաբանության մեջ: Հարցաքննության իրավունքը չի սահմանափակվում միայն դասական վկայություններով: Ինչպես հաստատում են Brandstetter[25], Mantovanelli[26], Cottin[27], Luca[28], Mirilashvili[29] և Georgios Papageorgiou[30] գործերը, Կոնվենցիոն պաշտպանությունը տարածվում է նաև փորձագետների, փաստաթղթային ապացույցների և նույնիսկ համակարգչային ֆայլերի վրա, երբ դրանք էական ազդեցություն են ունենում գործի ելքի վրա: Արհեստական բանականության համակարգերի կիրառումը և գործունեությունն իր բնույթով նման է փորձագիտական ցուցմունքի: Cottin v. Belgium գործը հաստատում է, որ այն դեպքերում, երբ փորձագետի գործողությունները նշանակություն ունեն գործի ելքի համար, կողմերը պետք է ունենան իրական հնարավորություն ներգրավվելու փորձագիտական ապացույցների հետ աշխատանքում, և ոչ թե պարզապես պասիվ կերպով ընդունեն վերջնական եզրակացությունը այն բանից հետո, երբ էական աշխատանքն արդեն իրականացվել

[23] Brian Sites, 'Rise of the Machines: Machine-Generated Data and the Confrontation Clause' (2015) 16 Columbia Science & Technology Law Review 36.
[24] Aleš Završnik, 'Criminal Justice, Artificial Intelligence Systems and Human Rights' [2020] 20 *ERA Forum* 567.
[25] *Brandstetter v Austria* (1991) 15 EHRR 378.
[26] *Mantovanelli v France* (1997) 24 EHRR 370.
[27] *Cottin v Belgium* App no 48386/99 (ECtHR, 2 June 2005).
[28] *Luca v Italy* (2001) 36 EHRR 46.
[29] Mirilashvili v Russia App no 6293/04 (ECtHR, 11 December 2008).
[30] Georgios Papageorgiou v Greece App no 59506/00 (ECtHR, 9 May 2003).

է[31]: Այսպիսով՝ անկախ նրանից, թե ինչպես են դասակարգվում արհեստական բանականության համակարգերն ապացուցողական գործողությունների համատեքստում, դրանք պետք է ուղեկցվեն համապատասխան դատավարական երաշխիքներով, մասնավորապես՝ դրանց հասկանալու և հակազդելու իրական հնարավորությամբ: Սակայն, սա ինքնին հեշտ իրագործելի չէ: Առաջին հերթին, ինչպես արդեն նշվել է, արհեստական բանականության կիրառման հիմնական խնդիրներից մեկը թափանցիկության պակասն է: Դատավարական մրցակցայնության պահանջը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ կարող է վիճարկել մյուսի ներկայացրած փաստարկները[32]: Սակայն եթե որոշակի վերլուծական եզրակացություն ձևավորվել է բարդ ալգորիթմական մոդելի միջոցով, որի ներքին տրամաբանությունը հասանելի չէ կողմերին, ապա այդ եզրակացության արդյունավետ հակադարձումը դառնում է գործնականում անհնար: Ստացվում է, որ դատավարության մասնակիցները մրցակցում են ոչ միայն իրար դեմ, այլ նաև դատավարության նոր «թաքնված» դերակատարի և այս հանգամանքը պետք է միանշանակ հաշվի առնվի նոր օրենսդրական երաշխիքների ներդրման փուլում: Առավել հատկանշական է առևտրային գաղտնիքների հետ կապված սահմանափակումները, որոնք խոչընդոտում են ալգորիթմների գործելակերպի բացահայտմանը, ներառյալ՝ ինչ տվյալներ է այն հաշվի առնում և ինչպես է ընթանում այդ համակարգերի ուսուցման գործընթացը: Օրենսդիր և գործադիր իշխանությունները պետք է զգուշորեն բալանսավորեն այս երկու կարևորագույն իրավունքները:

Երկրորդ՝ իրավագիտական գրականությունում բարձրաձայնվել է այն մտահոգությունը, որ ԱԲ գործիքների կիրառումը կարող է բարդացնել դատավարությունում կողմերի միջև առկա ռեսուրսային անհավասարությունները: Սակայն արհեստական բանականության գործիքների թափանցիկությունն ինքնին բավարար չէ: Նույնիսկ այն դեպքերում, երբ օգտագործվող գործիքների վերաբերյալ տվյալները հասանելի են, դրա արդյունքները վիճարկելու համար հաճախ անհրաժեշտ է փորձագետի ներգրավում: Սովորական անձինք կարող են չունենալ բավարար տեխնիկական գիտելիքներ՝ հասկանալու այդ համակարգերի գործելակերպը, իսկ իրավաբաններն ու դատավորները ներկայում բավարար պատրաստվածություն չունեն այս ոլորտում: Ավելին, երբ նույնիսկ մեքենայական ուսուցման մոդելները մշակող անձինք չեն կարող հստակ բացատրել, թե ինչպես են մուտքային տվյալները համակցվում և վերափոխվում, այդ գործընթացների հետագծումը դառնում է առանձնապես բարդ հակառակ կողմի համար[33]:

Փաստաբանների կողմից արհեստական բանականության համակարգերի կիրառումը նույնպես կարող է ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ այն դեպքերում, երբ կողմերի ֆինանսական կարգավիճակը խիստ տարբերվում է, Հատկապես անվճար իրավաբանական օգնության պայմաններում: Իրավաբանական ոլորտի որակյալ ԱԲ գործիքների արժեքները բավականին բարձր են և այդուհանդերձ հասանելի են միայն մեծ իրավաբանական գրասենյակների: Սա իր հերթին ստեղծում է կողմերի անհավասարության մեծ ռիսկեր: Այն իրավաբանները, որոնք ունեն անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն այս ոլորտում, անխուսափելիորեն կբարձրացնեն իրենց ծառայությունների գինը, ինչի արդյունքում այդ հմտությունները հասանելի կդառնան հիմնականում ավելի ապահովված դատավա-

[31] Cottin v Belgium App no 48386/99 (ECtHR, 2 June 2005).
[32] Human Rights Committee, 'General Comment No 32: Article 14: Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial' (23 August 2007) UN Doc CCPR/C/GC/32., para. 13.
[33] Cynthia Rudin and Joanna Radin, 'Why Are We Using Black Box Models in AI When We Don't Need To? A Lesson From an Explainable AI Competition' [2019] Harvard Data Science Review 1.

րական կողմերին: Սա փաստացի կդնի մյուս մասնակիցներին անհավասար դրության մեջ՝ էլ ավելի խորացնելով արդեն իսկ գոյություն ունեցող դատավարական անհավասարությունները: Սա կողմերի հավասարության և մրցակցային դատավարության իրավունքների ևս մեկ շերտ է, որի վրա ազդում է արհեստական բանականությունը: Արհեստական բանականության հակազդելու անհրաժեշտությունը կարող է զգալիորեն ավելացնել դատական ծախսերը, հատկապես՝ թանկարժեք տեխնիկական ապացույցների ձեռքբերման, փորձագիտական եզրակացությունների և փորձագետների ճանապարհածախսերի մասով: Մեղադրող կողմը սովորաբար ունի ավելի լայն հնարավորություններ՝ օգտվելու լաբորատորիաներից, փորձագետներից և արտաքին մասնագետներից, մինչդեռ մեղադրյալները հաճախ նման ռեսուրսներ չունեն: Նույնը վերաբերում է նաև ֆինանսապես ապահովված կողմերին, որոնք կարող են ունենալ իրենց փորձագետների շրջանակը, անհասանելի մյուսների համար: Ավելին, երբեմն նրանք նույնիսկ «ամրագրում» են ուժեղ փորձագետներին միայն նրա համար, որ հակառակ կողմը չկարողանա օգտվել նրանցից: Արդյունքում, այն կողմը, որն ունի ավելի շատ ռեսուրսներ, կարող է ներգրավել ավելի լավ փորձագետներ և ավելի ուժեղ ներկայացնել իր դիրքորոշումը: Հաճախ հենց փորձագետների այս «պայքարը» կարող է որոշել գործի ելքը, և դա մեծապես կախված է կողմերի ֆինանսական հնարավորություններից:

Այնուամենայնիվ, հնարավոր չէ ռեսուրսների անհավասարության խնդիրը վերագրել միայն արհեստական բանականությանը, քանի որ այն գոյություն է ունեցել դատական համակարգի ձևավորման սկզբից ի վեր: Որոշ առումներով արհեստական բանականությունը կարող է նույնիսկ հեշտացնել գործընթացը կողմերի համար՝ հասանելի ձևով բացատրելով բարդ իրավական հասկացությունները, աջակցելով իրավական հետազոտությանը և տրամադրելով նախնական խորհուրդ:

Վերոշարադրյալ խնդիրների հասցեագրման համար առաջին հերթին անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ամրագրել ալգորիթմական թափանցիկության և բացատրելիության նվազագույն պահանջներ, որպեսզի դատավարության կողմերը կարողանան հասկանալ տեխնոլոգիական գործիքների կողմից ձևավորված եզրակացությունների հիմքերը և արդյունավետորեն վիճարկել դրանք: Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ նման գործիքներն օգտագործվում են ապացույցների գնահատման կամ որոշումների վրա ազդեցություն ունեցող վերլուծությունների համար: Միաժամանակ, կարևոր է, որ կողմերը ունենան անկախ փորձագետի անվճար հիմունքներով ներգրավման իրավունք, այս տվյալների վերլուծման և վիճարկման նպատակով:

Միևնույն ժամանակ, կողմերի միջև տեխնոլոգիական և ռեսուրսային անհավասարությունների հասցեագրման համար անհրաժեշտ է պետական քաղաքականության մակարդակում ապահովել համապատասխան գործիքների հասանելիություն կամ փոխհատուցող մեխանիզմներ, հատկապես անվճար իրավաբանական օգնության համակարգում: Հանրային պաշտպանի գրասենյակը պետք է զինված լինի արհեստական բանականության այնպիսի գործիքներով, որոնք կապահովեն իրենք մրցակցային դիրքն առավել խոշոր և կոմերցիոն փաստաբանական գրասենյակների նկատմամբ:

Վերջապես, առանցքային նշանակություն ունի նաև դատական համակարգի դերակատարների՝ դատավորների, փաստաբանների և այլ մասնակիցների շարունակական վերապատրաստումը: Միայն բավարար գիտելիքների և հմտությունների առկայության դեպքում հնարավոր կլինի ապահովել, որ տեխնոլոգիան կիրառվի վերահսկելի, թափանցիկ և արդար կերպով՝ պահպանելով կողմերի հավասարությունը և արդար դատաքննության հիմնարար սկզբունքները: Եթե դատավորները, փաստաբանները և այլ մասնակիցները բավարար կեր-

պով չեն հասկանում կիրառվող տեխնոլոգիական գործիքների տրամաբանությունը, հնարավորությունները և սահմանափակումները, ապա նրանք չեն կարող լիարժեք վերահսկել այդ գործիքների ազդեցությունը դատավարության վրա: Արդյունքում, որոշումները կարող են անուղղակիորեն հիմնվել այնպիսի մեխանիզմների վրա, որոնց քննադատական գնահատումը փաստացի բացակայում է: Բացի դրանից՝ տեխնոլոգիական գիտելիքների պակասը կարող է խորացնել անհավասարությունները դատավարության կողմերի միջև: Այսպիսով՝ դատավորների, դատախազների և փաստաբանների ուսուցման և վերապատրաստման ծրագրերը պետք է ներառեն արհեստական բանականության համակարգերի վերաբերյալ համապարփակ ծրագրեր: Նման կարողությունների զարգացումը պահանջում է պետական մակարդակով համակարգված քաղաքականության ձևավորում և համապատասխան կրթական ծրագրերի ներդրում, ինչպես նաև փաստաբանական պալատի և այլ մասնագիտական կառույցների ակտիվ ներգրավում այս գործընթացում:

Եզրակացություն

Եզրափակելով՝ կարելի է արձանագրել, որ արհեստական բանականության ինտեգրումը արդարադատության ոլորտում ոչ միայն տեխնոլոգիական առաջընթացի հարց է, այլև հիմնարար դատավարական սկզբունքների վերաիմաստավորման անհրաժեշտություն: Կողմերի հավասարության և մրցակցային դատավարության սկզբունքները, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն, ենթադրում են գործի վրա ազդեցություն ունեցող բոլոր նյութերին ծանոթանալու, հասկանալու և վիճարկելու իրական և արդյունավետ հնարավորություն: Սակայն արհեստական բանականության համակարգերի կիրառումը, թափանցիկության պակասի, բարդության և ինքնավարության պատճառով, էապես սահմանափակում է այդ հնարավորությունը:

Հոդվածում ներկայացված վերլուծությունը ցույց է տալիս, որ արհեստական բանականության կողմից գեներացված տվյալները ձեռք են բերում այնպիսի գործառույթներ, որոնք ավանդաբար վերագրվում էին վկաներին կամ փորձագետներին, սակայն առանց նրանց նկատմամբ կիրառելի դասական դատավարական երաշխիքների: Արդյունքում, ձևավորվում է մի իրավիճակ, որտեղ ապացույցները կարող են էական ազդեցություն ունենալ գործի ելքի վրա, բայց դրանց «հարցաքննությունը» կամ արդյունավետ վիճարկումը գործնականում դառնում է անհնար կամ խիստ սահմանափակ:

Այս համատեքստում առանցքային է նախ՝ ալգորիթմական թափանցիկության և բացատրելիության նվազագույն ստանդարտների սահմանումը, երկրորդ՝ կողմերի համար իրական և հավասար հնարավորությունների ապահովումը տեխնիկական ապացույցների վիճարկման հարցում, և երրորդ՝ դատական համակարգի մասնակիցների շարունակական վերապատրաստումը: Միայն այս պայմանների ապահովման դեպքում հնարավոր կլինի պահպանել արդար դատաքննության հիմնարար բովանդակությունը՝ նոր տեխնոլոգիաների դարաշրջանում:

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է արհեստական բանականության գործիքների կիրառման ռիսկերի ուսումնասիրությանը արդար դատաքննության երկու հիմնարար բաղադրիչների՝ կողմերի հավասարության և վկաներին հարցաքննելու ու հակադարձելու իրավունքի համատեքստում: Հոդվածում վերլուծվում է, թե ինչպես են թվայնացվող դատական գործընթացներում կիրառվող ալգորիթմական համակարգերը

փոխում ապացույցների ձևավորման, գնահատման և վիճարկման ավանդական մեխանիզմները: Հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ նման գործիքների անթափանցիկությունը կարող է սահմանափակել կողմերի իրական մասնակցությունը դատավարությանը, թուլացնել մրցակցային դատավարության էությունը և դժվարացնել տեխնոլոգիական եղանակով ստացված եզրակացությունների արդյունավետ հակադարձումը: Քննարկվում է նաև, որ արհեստական բանականության գործիքների հասանելիության անհավասարության համատեքստում, հատկապես ֆինանսական և մասնագիտական ռեսուրսների տարբերության պայմաններում, դատավարության մասնակիցների միջև առկա անհավասարությունները կարող են էապես խորանալ: Աշխատությունը հիմնավորում է, որ այս ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ են ալգորիթմական թափանցիկության նվազագույն չափանիշներ, անկախ վերահսկողություն և դատական համակարգի դերակատարների համապատասխան վերապատրաստում, որպեսզի տեխնոլոգիան ծառայի արդարադատությանը, այլ ոչ թե խաթարի այն: Միևնույն ժամանակ ընդգծվում է միջազգային և ազգային մակարդակներում համահունչ քաղաքականությունների մշակման կարևորությունը՝ տեխնոլոգիական զարգացումների և հիմնարար իրավունքների միջև կայուն հավասարակշռություն ապահովելու նպատակով:

Annotation. This article examines the risks associated with the use of artificial intelligence tools in the context of two fundamental components of the right to a fair trial: the principle of equality of arms and the right to examine and challenge witnesses. The article analyses how algorithmic systems used in digitalised judicial processes transform traditional mechanisms of evidence formation, evaluation, and contestation. Particular attention is paid to the fact that the opacity of such tools may limit the effective participation of parties in proceedings, weaken the adversarial nature of the trial, and hinder the effective challenge of technologically generated conclusions. It is also discussed that, in the context of unequal access to artificial intelligence tools—especially due to disparities in financial and professional resources—existing inequalities between parties may be significantly exacerbated. The study argues that mitigating these risks requires minimum standards of algorithmic transparency, independent oversight, and appropriate training of judicial actors, so that technology serves justice rather than undermines it. At the same time, the importance of developing coherent policies at both international and national levels is emphasised in order to ensure a sustainable balance between technological developments and fundamental rights.

Аннотация. Статья посвящена анализу рисков применения инструментов искусственного интеллекта в контексте двух ключевых элементов права на справедливое судебное разбирательство — принципа равенства сторон и права на допрос и оспаривание свидетелей. ~~В статье анализируется,~~ Рассматривается, каким образом алгоритмические системы, внедряемые в условиях цифровизации правосудия, трансформируют традиционные механизмы формирования, оценки и оспаривания доказательств.

Особое внимание уделяется проблеме непрозрачности алгоритмических решений, способной ограничивать реальное участие сторон в процессе, ослаблять состязательный характер судопроизводства и затруднять эффективное оспаривание выводов, полученных с использованием технологий искусственного интеллекта. Подчёркивается, что неравный доступ к таким инструментам, обусловленный различиями в финансовых и профессиональных ресурсах сторон, может приводить к углублению процессуального неравенства.

Обосновывается необходимость разработки и внедрения минимальных стандартов алгоритмической прозрачности, механизмов независимого контроля, а также повышения уровня профессиональной подготовки участников судебной системы. Делается вывод о важности формирования согласованных подходов на национальном и международном уровнях, направленных на обеспечение баланса между технологическим развитием и защитой фундаментальных прав.

Բանալի բառեր *- արհեստական բանականություն, արդարադատություն, արդար դատաքննություն, կողմերի հավասարություն, վկաների հարցաքննում, իրավունքի վերափոխում, ալգորիթմային կողմնակալություն, արդարադատության թվայնացում, թափանցիկություն, մրցակցային դատավարություն:*

Keywords*: Artificial intelligence, justice, fair trial, equality of arms, witness examination, transformation of*

law, algorithmic bias, digitalisation of justice, transparency, adversarial proceedings.

Ключевые слова: *искусственный интеллект, правосудие, справедливое судебное разбирательство, равенство сторон, право на допрос свидетелей, алгоритмическая предвзятость, цифровизация правосудия, прозрачность, состязательное судопроизводство.*

Օգտագործված գրականության ցանկ

Գիտական գրականություն

1. Kurtović R and Bećirović-Alić M, 'The Right on Human Dignity through the Prism of Trial within a Reasonable Time' (2020) 3 Yearbook Human Rights Protection 468
2. Simshaw D, 'Access to A.I. Justice: Avoiding an Inequitable Two-Tiered System of Legal Services' (2022) 24 Yale Journal of Law and Technology
3. Gless S, 'AI in the Courtroom: A Comparative Analysis of Machine Evidence in Criminal Trials' (2020) 51 Georgetown Journal of International Law 199
4. Chessman C, 'A "Source" of Error: Computer Code, Criminal Defendants, and the Constitution' (2017) 105 California Law Review 179
5. Jamasbi K, 'Face-to-Face: Confronting Machine-Generated Evidence' [2026] Law & Society: Public Law - Constitutional Law eJournal 1.
6. Sites B, 'Rise of the Machines: Machine-Generated Data and the Confrontation Clause' (2015) 16 Columbia Science & Technology Law Review 36
7. Pasquale F, The Black Box Society: The Secret Algorithms That Control Money and Information (Harvard University Press 2015)
8. Završnik A, 'Criminal Justice, Artificial Intelligence Systems and Human Rights' (2020) 20 ERA Forum 567

Rudin C and Radin J, 'Why Are We Using Black Box Models in AI When We Don't Need To? A Lesson From an Explainable AI Competition' (2019) Harvard Data Science Review

Միջազգային փաստաթղթեր

9. Council of Europe, Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (adopted 4 November 1950, entered into force 3 September 1953) ETS No 5
10. Human Rights Committee, 'General Comment No 32: Article 14: Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial' (23 August 2007) UN Doc CCPR/C/GC/32
11. Council of Europe, Recommendation CM/Rec(2020)1 of the Committee of Ministers to member States on the human rights impacts of algorithmic systems (2020)
12. National Institute of Standards and Technology, Artificial Intelligence Risk Management Framework (AI RMF 1.0) (NIST AI 100-1, 2023)

ՄԻԵԴ Նախադեպեր

13. *De Haes and Gijsels v Belgium* (1997) 25 EHRR 1
14. *Jespers v Belgium* (1981) 27 DR 61
15. *Dombo Beheer BV v Netherlands* (1994) 18 EHRR 213
16. *Ruiz-Mateos v Spain* (1993) 16 EHRR 505
17. *Foucher v France* (1998) 25 EHRR 234
18. *Rowe and Davis v United Kingdom* (2000) 30 EHRR 1
19. *Unterpertinger v Austria* (1988) 10 EHRR 394
20. *Doorson v Netherlands* (1996) 22 EHRR 330

21. *Al-Khawaja and Tahery v United Kingdom* (2012) 54 EHRR 23
22. *Borgers v Belgium* (1993) 15 EHRR 92
23. *Steel and Morris v United Kingdom* (2005) 41 EHRR 22
24. *Van Mechelen and Others v Netherlands* (1998) 25 EHRR 647
25. *Barberà, Messegué and Jabardo v Spain* (1989) 11 EHRR 360
26. *Brandstetter v Austria* (1991) 15 EHRR 378.
27. *Mantovanelli v France* (1997) 24 EHRR 370.
28. *Cottin v Belgium* App no 48386/99 (ECtHR, 2 June 2005).
29. *Luca v Italy* (2001) 36 EHRR 46.
30. *Mirilashvili v Russia* App no 6293/04 (ECtHR, 11 December 2008).
31. *Georgios Papageorgiou v Greece* App no 59506/00 (ECtHR, 9 May 2003).

Աբրահամյան Ա. - Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հայցորդ, էլհասցե՝ anahit.abrahamyan2023@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 23.01.2026 թ., տրվել է գրախոսության 23.01.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ա. Հայրապետյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/ ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-55

ԱՆԱՀԻՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ

ANAHIT TUMANYAN
Judge of the Court of First Instance of General Jurisdiction of Syunik Province, Republic of Armenia, Applicant at Russian-Armenian University

АНАИТ ТУМАНЯН
Судья суда первой инстанции общей юрисдикции Сюникской области Республики Армения, соискатель Российско-Армянского университета
https://orcid.org/0009-0001-2459-9754

ԱՆԱԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

THE APPLICATION OF ANALOGY IN THE CIVIL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA

ПРИМЕНЕНИЕ АНАЛОГИИ В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ներածություն

Անալոգիան՝ իրավունքի կարգավորման շրջանակից դուրս մնացած հասարակական հարաբերությունների, ինչպես նաև իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների չկանխատեսված զարգացումների ու փոփոխությունների հետևանքով առաջացած նոր փաստերի, երևույթների, իրավիճակների և դրսևորումների կարգավորման միջոց է: Այլ կերպ ասած՝ անալոգիան, օրենսդրի կողմից որոշակի փաստերի, երևույթների, իրավիճակների և դրսևորումների համար բաց թողնված իրավական կարգավորումը՝ իրավունքի բացը լրացնելու, հաղթահարելու իրավական միջոց է, հնարք:

Անալոգիայի կիրառելիությունն օրենսդրական մակարդակով ամրագրված է աշխարհի

գրեթե բոլոր երկրների իրավական համակարգերում: Այն գործածվել է դեռևս Հռոմեական իրավական համակարգում: Առաջին անգամ «անալոգիա» («analogia extra legem») տերմինն օգտագործել է Պլատոնն իր «Օրենքներ[1]» աշխատությունում՝ որպես համանմանություն, նմանօրինակություն, զուգադրություն: Հետագայում այն զարգացրել է նրա աշակերտը՝ Արիստոտելը, իր «Առաջին վերլուծություն[2]» գրքում, ով համանմանության, համադրության հիման վրա մտահանգում կատարելն անվանեց՝ Պարադիգմա (հոլովույթ): Ավելին, Արիստոտելը համանմանությունն ընկալում էր որպես ապացուցման, ստեղծագործական (էվրիստիկական) եղանակ: Եվ փաստորեն, այդ ընկալումը կիրառվում է ժամանակակից իրավունքի համակարգերում, քանի որ անալոգիան հենց իրավակիրառողի կողմից՝ իր հայեցողությամբ՝ ստեղծագործական մեկնաբանմամբ իրավունքի նորմի կամ սկզբունքների կիրառումն է՝ իրավունքի բացի խնդիրների լուծման միջոցներից մեկն է:

Ընդ որում՝ անալոգիան՝ որպես իրավական բացի լրացման միջոց առաջին անգամ օրենսդրական ձևակերպմամբ ամրագրվել է Հուստինիանոսի օրենսգրքում (2-րդ և 3-րդ գլուխներում)[3]:

Իրավունքի բացի հաղթահարման հիմնական տարբերակը օրենսդրական տարբերակն է, որը օրենսդիր մարմնի բացառիկ իրավասությունն է՝ երբ օրենսդիրը բացահայտելով որևէ իրավահարաբերությունում օրենսդրական բաց՝ օրինաստեղծ գործունեության միջոցով՝ օրենքի ընդունմամբ, փոփոխմամբ կամ լրացմամբ վերացնում է բացերը, թերի կարգավորումները, անհստակությունները:

Հիմնական հետազոտություն

Վերոնշյալ հիմնահարցերի համատեքստում հարկ է վերլուծել անալոգիայի կիրառումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում՝ որպես դատավարական բացերի լրացման և իրավունքի միատեսակ կիրառման ապահովման կարևոր միջոց:

Անալոգիայի ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ դատավարական հարաբերությունները միշտ չէ, որ կարող են ամբողջությամբ կարգավորվել գործող օրենսդրությամբ: Այս պայմաններում դատական պրակտիկայում առաջանում են իրավիճակներ, երբ կոնկրետ իրավահարաբերության նկատմամբ ուղղակի իրավական նորմի բացակայությունը պահանջում է իրավունքի ընդհանուր սկզբունքների կամ նմանատիպ հարաբերությունները կարգավորող նորմերի կիրառություն:

ՀՀ անկախությունից հետո քաղաքացիական դատավարական օրենսդրության զարգացման գործընթացը ցույց է տալիս, որ օրենսդիրը փորձել է նվազեցնել դատավարական բացերը, սակայն գործնականում դրանք դեռևս ամբողջությամբ վերացված չեն: Այդ պատճառով դատական պրակտիկայում անալոգիայի կիրառումը շարունակում է մնալ արդիական և անհրաժեշտ գործիք՝ հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ապահովել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի այն հարցը, թե որքանով է թույլատրելի անալոգիայի կիրառումն առանց օրենքի ուղղակի կարգավորման խախտման, և ինչ սահմաններ պետք է այն ունենա՝ իրավական համակարգի կայունությունը չվտանգելու համար:

[1] Տես Платон, «Законы». Кн.:9, 857 с., Полн. собр., соч. Т. 14, էջեր 86-87:
[2] Տես Аристотель. «Первая аналитика». Соч. 11, 24, 686:
[3] Տես Памятники Римского права https://ru.scribd.com/document/666806797

ՀՀ Սահմանադրական դատարանը ևս մի շարք որոշումներում[4], անդրադառնալով օրենսդրական, իրավական բացի վերաբերյալ կարգավորումներին, արձանագրել է, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Դրա հետ մեկտեղ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Փաստորեն Սահմանադրական դատարանը չի բացառել օրենսդիր իշխանությունից բացի այլ իշխանության, այլ մարմի՝ իրավակիրառողի կողմից իրավական բացի հաղթահարման, լրացման իրավասություն, որը հնարավոր է անալոգիայի կիրառմամբ:

Ավելին, գտնում ենք, որ օրենսդիրն է հենց այլ իրավակիրառողներին պատվիրակել անալոգիայի կիրառումը, ինչպես նախկինում՝ գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի[5] 88-րդ հոդվածով, այնպես էլ ներկայումս գործող՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի[6] 39-րդ հոդվածով:

ՀՀ իրավական համակարգի համար տարբեր ժամկետներում գործող այս երկու իրավակարգավորումներից ակնհայտ է, որ անալոգիան իրավական բացի լրացման ածանցյալ միջոց է, որպիսի իրավասությունը օրենսդիրն է վերապահել իշխանության այլ մարմիններին: Հետևաբար՝ ածանցյալ միջոցի կիրառմամբ նոր իրավակարգավորիչ սահմանելը, իրավական նորմը նորովի կիրառելն ու մեկնաբանելը, չի կարող դիտարկվել իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտում, ինչպիսի մտահոգություններ ունեն շատ իրավագետներ:

Իհարկե, դա չի կարող նշանակել, որ իրավակիրառողն անալոգիայի կիրառման հարցում ունի անսահմանափակ հայեցողություն: Այդ հայեցողությունն ևս սահմանափակված է օրենքով, որի վկայությունն է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն կարգավորումն, ըստ որի՝ անալոգիան կարող է կիրառվել, միայն օրենքով նախատեսված դեպքերում, և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը, ըստ որի՝ օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը:

Ավելին, այդ սահմանափակումներն ու արգելքները գրեթե նույնաբովանդակ կարգավորումներով, սահմանվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի[7] 88-րդ հոդվածի 2-րդ մասով, և ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասով[8]: Համաձայն այդ կարգավորումների, օրենքի կամ իրավունքի անալո-

[4] Տես Սահմանադրական դատարանի ՍԴՈ-864, ՍԴՈ-914 ՍԴՈ-933, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1315 որոշումներ
[5] Տես Իրավական ակտերի մասին ՀՀ օրենք՝ https://www.arlis.am/
[6] Տես Նորմատիվ Իրավական ակտերի մասին ՀՀ օրենք՝ https://www.arlis.am/
[7] Տես «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք հոդված 88՝ https://www.arlis.am/. օրենքն ուժի մեջ է մտել 31.05.2002 թ. և ուժը կորցրած է ճանաչվել 07.04.2018 թ. / չի գործում/:
[8] Տես «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք հոդված 39՝ https://www.arlis.am/ օրենքն ուժի մեջ է մտել 07.04.2018 թ-ից / գործում է /:

գիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց (նախկին կարգավորմամբ տարանջատվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց) իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

Այս կարգավորումներից ակնհայտ է, որ օրենսդիրը թույլատրում է իրավական, օրենսդրական բացերի պայմաններում «ստեղծել նորմ», սակայն կրկնում է՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժ չունենալու մասին Սահմանադրական արգելքը[9], որից էլ բացահայտվում է, թե ինչու է անալոգիայի կիրառումը թույլատրելի մասնավոր իրավունքում:

Անալոգիայի կիրառումը թույլատրելի համարելով՝ օրենսդիրը չի սահմանել դրա կիրառողների շրջանակը: Հետևաբար, անալոգիայի կիրառումը միայն ՀՀ Սահմանադրական դատարանին կամ դատական համակարգի բարձրագույն ատյաններին վերապահելը, ինչպես առաջարկում են որոշ իրավագետներ, անհամաչափ սահմանափակում է այդ ինստիտուտի կիրառման շրջանակը: Առավել ևս, որ ցանկացած իրավական խնդրի, այդ թվում՝ իրավական կամ օրենսդրական բացի անալոգիայի միջոցով լուծման հարց կարող են բարձրացնել իրավահարաբերությանը մասնակցող և իրավունքը կիրառող բոլոր սուբյեկտները՝ մասնավորապես դատավարության կողմերը, ինչպես նաև պետական այլ մարմինները: Այդպիսի բոլոր դեպքերը կարող են վիճարկվել դատարանում, իսկ դատարանի որոշումները՝ վերադաս ատյաններում: Ուստի, անալոգիա կիրառող վերջնական մարմինը, միևնույն է, դատարանն է:

Այդուհանդերձ, վերոգրյալից չի կարելի եզրահանգել, որ դատարանների կողմից անալոգիայի կիրառումը կարող է փոխարինել իրավաստեղծ գործունեությանը: Դատարանները չեն կարող անալոգիայի կիրառմամբ ստեղծել նոր նորմեր կամ սկզբունքներ, դատարանն անալոգիայի կիրառմամբ, արդեն իսկ օրենսդրի կողմից ամրագրված սկզբունքների և նորմերի նմանությամբ, այն է՝ նորմատիվ պատվիրանի առկայությամբ, այդ նորմերին և սկզբունքներին նոր մեկնաբանությամբ և պարզաբանմամբ կարգավորում է նոր առաջացած, ծագած փաստեր, հանգամանքներ, իրավիճակներ կամ հարաբերություններ: Հենց այս մտահոգությունն է փարատել Սահմանադրական դատարանը՝ վերը նշված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով սահմանազատելով օրենսդրական բացի այն դեպքերը, որոնք կարող են դառնալ Սահմանադրական դատարանի քննության առարկա:

Ընդ որում՝ անալոգիայի կիրառման ժամանակ, ավելին՝ այն պրակտիկայում ճիշտ կիրառելու համար, շատ կարևոր է, որ դատարանները կարողանան բացահայտել օրենսդրի իրական կամքը: Անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք օրենսդիրը թերացել է այդ խնդրի իրավական կարգավորման հարցում, արդյո՞ք օրենսդիրը բաց է թողել այդ խնդրի կարգավորումը, կամ չի կանխատեսել նման իրավիճակի, դեպքի առաջացման հնարավորությունը, թե՞ հենց օրենսդրի կամքն է այդ՝ վիճարկվող խնդիրը, հարցը, հնարավոր դեպքը, նոր փաստը չներառելու կոնկրետ իրավական կարգավորման շրջանակում՝ դրանով սահմանափակելով իրավական կարգավորման դեպքերի, փաստերի, սուբյեկտների շրջանակը: Օրինակ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է պահանջների և (կամ) սուբյեկտների շրջանակ, որոնց համար սահմանել է պետական տուրքի վճարման արտոնու-

[9] Տե՛ս ՀՀ Սահմանադրության 73 հոդված՝ https://www.arlis.am/

թյուն, որում ՝ արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ պետական տուրքի վճարման՝ ազատելու արտոնություն սահմանված չի եղել: Արդյունքում՝ նշվածը Սահմանադրական դատարանի որոշմամբ[10] համարվել է օրենքի բաց՝ կիրառվել է անալոգիա, որի հիման վրա Օրենսդիրը կատարել է համապատասխան փոփոխություն օրենքում[11]:

Սակայն միշտ չէ, որ օրենսդրական բացն Օրենսդրի բացթողումն է, այն կարող է լինել հենց օրենսդրի սահմանափակող, բացառող, արգելող կամքը, որի պարագայում անալոգիայի կիրառմամբ այդ կամքին հակասող բնույթի անալոգիայի կիրառումն իրավակիրառողի կողմից կհանդիսանա օրենսդիր իշխանության իրավասության միջամտություն, իրավակիրառողի իրավասությունների սահմանազանցում: Հետևաբար, անալոգիա պետք է կիրառել զգուշությամբ, որի պարագայում առավել ռիսկային է իրավունքի անալոգիայի կիրառումը, քան օրենքի անալոգիայի, քանի որ օրենքի անալոգիայի կիրառման ժամանակ իրավակիրառողն օրենսդրի պատվիրակված նորմը՝ կիրառում է արդեն իսկ օրենսդրի կողմից կիրառած հարաբերությանը համասեռ հասարակական հարաբերության նկատմամբ: Իսկ իրավունքի անալոգիայի դեպքում՝ բացառվում է օրենսդրի պատվիրակված նորմը, և անալոգիան կիրառվում է իրավունքի սկզբունքների հիման վրա, որի պայմանում ավելի է մեծանում օրենսդիր իշխանությանը միջամտելու հավանականությունը, և վտանգվում իշխանությունների տարանջատման սկզբունքի ապահովումը:

Այս առումով էլ հենց կարևորվում է ՀՀ քաղաքացիական դատավարությունում անալոգիայի կիրառման հիմնախնդիրներին անդրադառնալու անհրաժեշտությունը, քանի որ ներկայում՝ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ ՀՀ քաղաքացիական դատավարությունում՝ նախատեսվել է միայն իրավունքի անալոգիայի կիրառման հնարավորություն, և հակառակը՝ օրենքի անալոգիայի կիրառումն ուղղակիորեն արգելվել է:

Նախ պետք է փաստել, որ անկախացումից հետո ՀՀ-ում իրար հաջորդաբար գործել են երեք քաղաքացիական դատավարության օրենսգրքեր՝ 1. 1964 թվականի հունիսի 4-ին ընդունված Հայկական ՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը[12], 2. 1998 թվականի հունիսի 17-ին ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը[13], և 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը[14], որոնցից առաջին երկուսում նախատեսվել է և՛ օրենքի անալոգիայի կիրառում, և՛ իրավունքի անալոգիայի կիրառում, իսկ արդեն 2018 թվականից առայսօր գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածով՝ նախատեսվել է միայն իրավունքի անալոգիայի կիրառման հնարավորություն, հակառակը օրենքի անալոգիայի կիրառումն ուղղակիորեն արգելվել է:

Ավելին մինչև 2018 թվականի ապրիլի 07-ը գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե ծագած հարաբերություններն ուղղա-

[10] Տե՛ս Սահմանադրական դատարանի 14 դեկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ-929 որոշում:
[11] Տե՛ս Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի է.1, է.2, է.3, և է.4 կետեր / https://www.arlis.am/:
[12] Տե՛ս 04.06.1964 թ. ընդունված Հայկական ՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը 6-րդ հոդված / ուժը կորցրած է ճանաչվել 01.01.1999 թ./:
[13] Տե՛ս 17.06.1998 թ. ընդունված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը 10-րդ հոդվածի 3-րդ մաս / ուժի մեջ է մտել 01.01.1999 թ. և ուժը կորցրած է ճանաչվել 09.04.2018 թ-ից/ https://www.arlis.am/:
[14] Տե՛ս 17.06.1998 թ. ընդունված ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը 4-րդ հոդվածի 1-ին մաս / ուժի մեջ է մտել 09.04.2018 թ., գործում է / https://www.arlis.am/:

կիորեն կարգավորված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կարող են միայն օրենքով նախատեսված դեպքերում կիրառվել համանման հարաբերություններ կարգավորող իրավական ակտերը (անալոգիա)»:

Իսկ 2018 թվականի ապրիլի 07-ից առ այսօր գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝

«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա):

2. Օրենսդրության մեջ կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմի բացակայության և օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքները կամ տվյալ իրավահարաբերության էությանը համապատասխան իրավունքի ընդհանուր սկզբունքները (իրավունքի անալոգիա):

(…)»:

Մինչդեռ 2018 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ *«1. Վիճելի հարաբերությունը կարգավորող նյութահիրավական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից (իրավունքի անալոգիա): Դատավարական նորմերն օրենքի անալոգիայով չեն կիրառվում»:*

2018 թվականից գործող այս փոփոխության համաձայն՝ իրավակիրառ պրակտիկայում իշխող մեկնաբանմամբ իրավունքի անալոգիա թույլատրվում է, սակայն օրենքի անալոգիան՝ ոչ: Մինչդեռ եթե փոփոխված՝ դատավարական նորմը լեզվատրամաբանական, համեմատական, գործառնական մեթոդներով մեկնաբանենք, ակնհայտ է, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը սկսում է վիճելի իրավահարաբերություններում նյութական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայությամբ օրենքի անալոգիայի թույլատրման մասին: Հաջորդ նախադասությամբ օրենսդիրը՝ նման նորմերի բացակայության դեպքում սահմանել է վեճի լուծումն իրավունքի անալոգիայով, և միայն այս երկու նախադասություններից հետո, իմպերատիվ արգելք է սահմանվել դատավարական նորմերն օրենքի անալոգիայով կիրառելու համար:

Նախ գտնում ենք, որ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նյութական իրավունքի նորմերի անալոգիայի թույլատրման մասին կարգավորումն ավելորդ է, այն հիմնավորմամբ, որ նյութական իրավանորմերի՝ մասնավորապես՝ քաղաքացիական, աշխատանքային և ընտանեկան իրավանորմերի անալոգիայի կիրառման կարգավորումներն մանրամասն սահմանված են տվյալ նյութական իրավունքի ճյուղի՝ օրենսգրքերում[15], որով պայմանավորված էլ դատավարական իրավունքում և օրենսգրքում նյութահիրավական կարգավորումներն՝ դուրս են այդ իրավունքի ճյուղի կարգավորման առարկայի շրջանակից, որի համար էլ քաղաքացիադատավարական նորմերն անընդհատ փոփոխությունների են ենթարկվում, բացառե-

[15] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ հոդված/ https://www.arlis.am/:
ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդված / https://www.arlis.am/:
ՀՀ ընտանեկան օրենսգրքի 5-րդ հոդված / https://www.arlis.am/:

լու իրավունքի այլ ճյուղի կարգավորումներն դրանում ներառելու դեպքերը: Բացի այդ՝ նշված նորմի 2-րդ նախադասությունը՝ իրավունքի անալոգիայի կիրառումն թույլատրելի է համարում, ոչ թե դատավարական իրավահարաբերությունների նկատմամբ, այլ ինչպես և բառացի սահմանվել է նորմում **«նման նորմերի բացակայության դեպքում»** է իրավունքի անալոգիան թույլատրվում: Փաստորեն ակնհայտ է, որ «**Նման նորմերի»** արտահայտությամբ օրենսդիրն ի նկատի է ունեցել նախորդ նախադասությամբ սահմանված նորմերը, որոնք անվիճելիորեն նյութական իրավանորմերն են: Ստացվում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, բաղկացած 3 նախադասությունից՝ սահմանում է նյութական իրավանորմերի օրենքի և իրավունքի անալոգիայի կիրառման կարգավորումներ, և միայն 3-րդ նախադասությամբ սահմանում դատավարական նորմերի օրենքի անալոգիայով կիրառման անթույլատրելիություն: Այս վերլուծությամբ կարելի է եզրահանգել, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունում արգելվում է օրենքի անալոգիայի կիրառումը, սակայն իրավունքի անալոգիայի կիրառման մասին ոչ միայն կարգավորում, այլև արգելք սահմանված չէ: Իսկ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը:

Բառացի, տառացի մեկնաբանմամբ՝ դատավարական նորմերի կիրառումն օրենքի անալոգիայով՝ արգելված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, իրավունքի անալոգիայի կիրառումն արգելված չէ, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարությունում իրավունքի անալոգիայի կիրառումը թույլատրված է՝ «թույլատրվում է այն, ինչ արգելված չէ» կանոնի ուժով: Ի տարբերություն մինչև 2018 թ. գործող և ՀԽՍՀ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումների:

Այս դեպքում իրավաչափ հարց է ծագում, ավելի քան 20-ամյա իրավակիրառ պրակտիկայում՝ քաղաքացիական դատավարական նորմերի ոչ միայն իրավունքի, այլև օրենքի անալոգիայի կիրառումն ինչպիսի խնդիրներ է առաջացրել, որի պայմանում օրենսդիրն հարկ է համարել՝ 2018 թ. սկսած արգելել օրենքի անալոգիայի կիրառումը:

Նախ նման արգելքի սահմանման հիմնավորումներն բացահայտված չեն: Իրավակիրառ պրակտիկայում շուրջ 20 տարի դատավարական նորմերի անալոգիայով կիրառումը որևէ խնդիր չի առաջացրել: Հակառակը՝ հենց օրենքի անալոգիայի բազմակի կիրառումներն են օրենսդրին հնարավորություն տվել բացահայտելու օրենսդրական, իրավական բացերը, և համապատասխան փոփոխություններով լրացնելու դրանք, ի վերջո նաև ամբողջ՝ կոդիֆիկացված փոփոխությամբ հանդես գալու 2018 թ.:

Բացի դրանից՝ անհնարին է օրենսդրական այնպիսի կարգավորումներ սահմանել, որոնց պարագայում «իրավունքի բոլոր բաց»-երը լրացվեն, ավելին բացառվեն և կանխատեսվեն հետագայում հնարավոր այլ բացերը: Հետևաբար՝ օրենսդիրը պետք է «օրենքի անալոգիայի» կիրառմամբ՝ օրենսդրության ընդունման պահից սկսած՝ բացահայտի բոլոր խնդիրները և հենց այդ «օգնականի» միջոցով անընդհատ իրացնի իր կարգավորիչ ֆունկցիան:

Ավելին՝ ինչպես նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով 2-րդ մասով, այնպես էլ ներկայում գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ և նույնությամբ սահմանված են իրավունքի և օրենքի անալոգիայի կիրառման սահմանափակումներն ու արգելքները այն է՝ *«3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պա-*

տասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը»:

Հետևաբար գտնում ենք, որ նշված արգելքը բավարար է խուսափելու և բացառելու այն բացասական հետևանքները, որոնք կարող են առաջանալ անալոգիայի կիրառման դեպքում: Ուստի և գտնում ենք, որ իրավակիրառ պրակտիկայում դատավարական նորմերի օրենքի անալոգիայով կիրառման անթույլատրելիությունն արդարացված չէ:

Դատավարական նորմերի, այն էլ օրենքի անալոգիայի կիրառման արգելքը, դատավարական իրավահարաբերությունների զարգացման, փոփոխությունների պարագայում կարող է առաջացնել լուրջ խնդիրներ, քանի որ, եթե նյութական իրավունքում անալոգիայի կիրառումն թույլատրելի է, ապա նույն նյութական իրավունքի պաշտպանության դատավարական իրավահարաբերությունում օրենքի անալոգիայի կիրառման արգելումն կարող է հանգեցնել քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների դատական պաշտպանության իրավունքի ոչ միայն սահմանափակման, այլն զրկման:

Ցանկացած օրենսդրական փոփոխություն արդարացված է լինում, եթե այդ փոփոխությունն իրականում գործում է: Սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարական նորմերի օրենքի անալոգիայով կիրառման արգելքը պրակտիկայում չի գործում:

Հակառակը՝ դատավարական շատ հարաբերություններ ուղղակի կարգավորված չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, և դատարանները կիրառում են օրենքի անալոգիա, իհարկե առանց նշում կատարելու, որ դա օրենքի անալոգիա է, քանի որ դատարանը չի կարող իրավական խնդիրը չլուծել, այն հիմնավորմամբ, որ առկա չէ, այն կարգավորող նորմ:

Ինչպես նախկինում գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորված չեն եղել բազմաթիվ դեպքեր, և այդ բացերը լրացվում էին հիմնականում օրենքի անալոգիայով, այնպես էլ ներկայում գործող օրենսգրքում՝ կան բազմաթիվ բացեր, որոնք կարող են և հնարավոր են լրացվել բացառապես օրենքի անալոգիայով:

Այսպես՝ 1998թ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի միայն 90 հոդվածն էր նախատեսում հայցադիմումը վարույթ ընդունելու կարգավորումներ, մինչդեռ օրենսգիրքը սահմանելով հատուկ վարույթի կարգով դիմումներ ներկայացնելու հնարավորություն, չէր կարգավորել այն վարույթ ընդունելու ոչ կարգը և ոչ էլ ժամկետները:

Մինչդեռ շուրջ 20 տարի դատարանները հատուկ վարույթներով կիրառելով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի կարգավորումները՝ նույն 3 օրյա ժամկետում լուծել են այն վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցերը:

Մեկ այլ օրենսդրական բաց էլ առկա է եղել նախկինում այն դեպքերում, երբ դատարանները վրիպակներ, գրասխալներ կամ թվաբանական սխալներ էին թույլ տալիս, միջանկյալ դատական ակտերում՝ որոշումներում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու կամ փորձաքննություն նշանակելու կամ այլ որոշումներում,մինչդեռ օրենսգրքի 143-րդ հոդվածը հնարավորություն էր տալիս ուղղել բացառապես Վճռում թույլ տրված վրիպակները, գրասխալներն ու թվաբանական սխալները: Հետևաբար, ինչպես նախորդիվ բերված օրինակում, այնպես էլ այս դեպքում, դատարանները օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված նորմերի՝ օրենքի անալոգիայով կարգավորել են այդ բացը:

Հենց այս և այլ բացերի՝ օրենքի անալոգիայի միջոցով լրացման շնորհիվ է, որ Օրենս-

դիրը հետագայում՝ 2018 թվականին ընդունված և ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում օրենսդրական կարգավորմամբ լրացրել է այդ բացերը, մասնավորապես՝ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանելով նոր կարգավորում՝ այն մասին, որ Դատարանը հատուկ վարույթներն իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով, Օրենսդիրը լուծել է նաև հատուկ և այլ վարույթներով դիմումները վարույթ ընդունելու, վերադարձնելու և այլ ընդհանուր կարգավորումներ: Իսկ գործող օրենսգրքի 197-րդ հոդվածով, Օրենսդիրը սահմանելով «դատական ակտերում» վրիպակներ, գրասխալներ և թվաբանական սխալներ ուղղելու կարգավորում, բացառել է Վճռից բացի, այլ դատական ակտերում վրիպակներ, գրասխալներ և թվաբանական սխալներ թույլ տրված լինելու դեպքերի օրենսդրական բացերը:

Փաստորեն 2018 թվականին ծավալուն փոփոխություններով ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքով՝ ավելի ամբողջական և համապարփակ կարգավորումներով հանդերձ, օրենսդրական բացերն ամբողջությամբ չեն լրացվել, և ինչպես վերը բերված օրինակներում, ներկայումս ևս, առկա են դատավարական օրենսդրական բացեր, որոնք ակնհայտորեն հնարավոր չէ լրացնել իրավունքի անալոգիայով, ինչպես նախկինում առկա բացերի մասով բերված օրինակներում, ինչպիսի սահմանափակ հնարավորություն, որ օրենսդիրը ներկայումս սահմանել է:

Քաղաքացիական դատավարությունում գործի քննության համար առանցքային նշանակություն ունեցող հայցադիմումն ու դիմումները վարույթ ընդունելու կարգավորումների բացերն օրենսդրական եղանակով լրացնելով հանդերձ՝ հատկանշական է, որ Օրենսդիրն այդուհանդերձ ամբողջությամբ չի կարգավորել այդ իրավահարաբերությունները և առ այսօր բաց է մնացել քաղաքացիական գործն վարույթ ընդունելու կարգավորումները: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը 124-րդ հոդվածի ընդհանուր կարգավորմամբ, և այդ ընդհանուր կարգավորմանը հղում կատարելով 235 հոդվածով, սահմանում է հայցադիմումները և դիմումները վարույթ ընդունելու կարգավորումներ, ըստ որոնց՝ դրանք վարույթ են ընդունվում հիմնականում 7-օրյա ժամկետում:

Սակայն քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կարգավորում քաղաքացիական գործը վարույթ ընդունելու կարգի, ավելին վարույթ ընդունելու ժամկետների մասին:

Միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26 հոդվածն է սահմանում այլ դատարանից տարածքային ընդդատությամբ կամ ենթակայությամբ ստացված գործը ստանալու պահից 7-օրյա ժամկետում վարույթ ընդունելու կարգավորում: Մինչդեռ դատարաններում քաղաքացիական գործեր ստացվում են, ոչ միայն ընդդատությամբ կամ ենթակայությամբ այլ դատարանից ստացվելուց, այլև այլ դեպքերում, մասնավորապես՝ վերադաս դատարաններից՝ դատական ակտի բեկանումից հետո նոր կամ ամբողջ ծավալով գործի քննություն սկսելու համար, կամ նույն դատարանում՝ Դատարանի կազմը փոփոխվելու դեպքում, որը կարող է լինել տարբեր հիմքերով՝ բացարկի, ինքնաբացարկի, դատավորի այլ դատարան տեղափոխվելու, դատավորի լիազորությունները դադարելու, կամ՝ գործի վարույթից մի կամ մի քանի պահանջներ առանձնացվելու հիմքերով:

Ի դեպ այս դեպքերից միայն դատարանի կազմը փոփոխվելու դեպքում է օրենսդիրը կարգավորել գործը/ վերաքննիչ բողոքը/ վարույթ ընդունելու կարգավորում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով, ըստ որի՝ «Դատարանի կազմը

փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում»:

Այս կարգավորումից ակնհայտ է, որ թեև գործը վարույթ ընդունելու մասով իրավական բացը լրացվել է , սակայն վարույթ ընդունելու ժամկետի մասով շարունակվում է մնալ բաց: Ավելին ակնհայտ է, որ դատարանները չեն կարող առանց գործը վարույթ ընդունելու որևէ դատավարական գործողություն կատարել, բացի դրանից՝ առավել քան ակնհայտ է, որ դատարանները՝ դատարանի կազմը փոփոխվելու հիմքով քաղաքացիական գործ ստանալիս, գործը վարույթ են ընդունում հիմնականում այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում, կամ եռօրյա ժամկետում, եթե դատավարական օրենսգրքով որոշակի տեսակի հայցերով հայցադիմումը վարույթ ընդունելու համար նախատեսված է ավելի կրճատ ժամկետ՝ օրինակ աշխատանքի վերականգնելու պահանջի վերաբերյալ գործերով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մաս): Դրանով, ըստ էության, դատարանները կիրառում են առնվազն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի նախատեսված նորմը, այն է՝ օրենքի անալոգիա, անկախ դրա մասին նշում չկատարելու:

Ինչ վերաբերում է վերադաս դատարանից ստացված գործի վարույթ ընդունելու ժամկետին, ապա օրենսդիրն այս դեպքում ևս չի սահմանել ոչ գործը վարույթ ընդունելու կարգավորումը, ոչ էլ ժամկետը: Օրենսդիրն ընդամենը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով, նախնական դատական նիստ նշանակելու կարգավորումներ սահմանելիս, դրանում ներառել է նաև վերադաս դատարանից ստացված գործով նախնական դատական նիստ նշանակելու ժամկետները հետևյալ շարադրանքով՝ «Առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, **ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում** նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց»:

Հետևաբար օրենսդրի վերը նշված պահանջը պահպանելու համար, նշված դեպքում, դատարանները վերադաս դատարանից գործը ստանալիս այն վարույթ են ընդունում եռօրյա ժամկետում:

Կարգավորման նման բաց կա նաև գործից մեկ կամ մի քանի վարույթներն առանձնացնելու դեպքերում, անկախ այն հանգամանքի, թե առանձնացված գործը, որ դատավորին է հանձնվում՝ նույն կազմով, թե այլ կազմով դատարանի:

Միևնույն է՝ նույն դատավորի, թե նոր կազմով դատավորի կողմից գործի քննությունը կարող է սկսվել բացառապես գործը վարույթ ընդունվելուց հետո: Այս անհերքելի փաստով պայմանավորված էլ դատական պրակտիկայում, քաղաքացիական գործերն ընդունվում են վարույթ կամ յոթնօրյա կամ եռօրյա ժամկետներում:

Այս պարագայում իրավաչափ հարց է առաջանում, արդյո՞ք դատական պրակտիկայում քաղաքացիական գործերի յոթնօրյա կամ եռօրյա ժամկետում վարույթ ընդունելն հայցադիմումը վարույթ ընդունելու ժամկետը կարգավորող օրենքի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատավարական նորմի կիրառման անալոգիա չէ՞: Եթե ոչ, ապա ՀՀ-ում դատարաններն ինչպե՞ս են որոշում քաղաքացիական գործերը վարույթ ընդունելու ժամկետները, արդյո՞ք դա կարող է համարվել իրավունքի անալոգիա:

Առաջադրված այս հարցերի տրամաբանական պատասխանն ողջամտորեն ենթադրվում է՝ քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարաբերությունը կարգավորող նորմի բա-

ցակայության դեպքում, դատարաններն այն վարույթ են ընդունում նույնանման հարաբերություններ՝ այն է հայցադիմումը վարույթ ընդունելու հարաբերությունը կարգավորող օրենքի նորմերով՝ փաստացի կիրառելով օրենքի անալոգիա, ինչքան էլ որ քաղաքացիական դատավարությունում օրենքի անալոգիայի կիրառումն անթույլատրելի է:

Բերված օրինակը միակ և եզակի օրինակներից չէ, իրավական բաց առկա է նաև դատավարական այլ կարգավորումներում: Մասնավորապես հատուկ վարույթներով դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք ներգրավելու անհրաժեշտության կամ միջնորդության դեպքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդհանրապես բացի գործին մասնակցող անձանց կազմը սահմանող 31-րդ հոդվածից, որում ի թիվս այլ անձանց՝ դիմողների հետ մեկտեղ սահմանել է նաև, դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձանց մասին, ինչպես այդ հոդվածով, այնպես էլ որևէ այլ հոդվածով չի սահմանում դիմումի քննության ելքով շահագրգռված անձանց հասկացությունը, առկա չէ կարգավորումներ նրանց գործին ներգրավելու կարգի, ժամկետների, հիմքերի, եղանակի մասին: Այն է, թե ո՞ւմ նախաձեռնությամբ, գործի քննության ո՞ր փուլում, ի՞նչ եղանակով ի՞նչ ժամկետներում, և ինչպիսի որոշմամբ՝ առանձին ակտի ձևո՞վ, թե՞ դատական նիստում բանավոր՝ արձանագրային որոշմամբ, կարող են շահագրգռված անձինք ներգրավվել գործով, ավելին չի բացահայտվել, թե ովքեր կարող են ունենալ այդ կարգավիճակը:

Սակայն դատարաններում, հատուկ վարույթի գործերով, մասնավորապես՝ իրավաբանական փաստերի հաստատման գործերով, օրինակ ժառանգության ընդունման փաստի, ազգակցական կապի փաստի, աշխատանքային ստաժի հաստատման փաստի (վերջինիս մասով նույնիսկ կա ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ[16]), անգործունակ ճանաչելու կամ այն վերացնելու, անհայտ բացակայող, մահացած ճանաչելու կամ այն վերացնելու պահանջներով հատուկ վարույթներում, սովորաբար ներգրավվում են շահագրգռված անձինք, ում համար որևէ փաստի հաստատման դեպքում կառաջանան, կփոփոխվեն կամ կդադարեն իրավունքներ և պարտականություններ այդ փաստից ծագող:

Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքով (37-րդ և 47-րդ հոդվածներ), օրենսդիրը դատավարության մասնակիցների շրջանակում ներառել է նաև իրավասու անձանց և մարմիններին՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Փաստորեն օրենսդիրը դատավարության մասնակիցների կազմում ներառելով կողմերից, բացի գործի ելքով որոշակի շահագրգռվածություն ունեցող անձանց՝ երրորդ անձանց, դիմումի ելքով շահագրգռված անձանց, ինչպես նաև իրավասու մարմիններին կամ անձանց, թեև ոչ ամբողջական, բայց և բացահայտել է դրանցից երկուսի՝ 3-րդ անձանց և իրավասու մարմիններին գործին ներգրավվելու դեպքերը:

Առաջին՝ 3-րդ անձանց դեպքում՝ նրանք գործին ներգրավվում են կողմերի կամ հենց 3-րդ անձանց միջնորդություններով կամ ինքնուրույն պահանջ ներկայացնելու միջոցով, ավելին դատարանին տրվել է իրավասություն նրանց ծանուցել նրանց իրավունքների իրացման և կարգի մասին, և իմպերատիվ կարգով սահմանել այդ հարցը լուծելու առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ, նույնիսկ մերժելու դեպքում (36-38-րդ հոդվածներ):

Երկրորդ՝ իրավասու մարմինների դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է, որ այս մար-

[16] Տե՛ս թիվ ԱՐԴ/4208/02/16 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 17.09.2018 թվականի որոշում / https://www.arlis.am/:

մինների կամ անձանց մասնակցությունը որոշակի բնույթի գործերով, օրենքի համաձայն, պարտադիր է, և ինչպես դատավարական (օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մաս), այնպես էլ նյութական իրավունքի այլ նորմերով՝ (օրինակ՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդված) սահմանվել է նաև նրանց և ներգրավման կարգն և իրավասությունների բնույթը:

Մինչդեռ Օրենսդիրը որևէ նորմով, ոչ դատավարական և ոչ էլ նյութական իրավունքի այլ նորմով, դիմումի ելքով շահագրգռված անձանց մասին կարգավորումներ չի սահմանել:

Այս օրենսդրական բացերը լրացվել են իրավակիրառ պրակտիկայում նախադեպային որոշումներով: Ավելին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ[17] բացահայտվել է իրավասու մարմնի և դիմումի ելքով շահագրգռված անձանց տարբերությունը, արձանագրելով, որ իրավասու անձինք և մարմինները, գործի ելքում չունեն նյութաիրավական շահ, սակայն վերջիններիս մասնակցությունը կոչված է ապահովելու արդարադատության արդյունավետ իրականացումը, մի դեպքում նպաստելով խոցելի անձանց շարքում գտնվող անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությանը (օրինակ՝ երեխաների շահերին առնչվող գործերով խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությունը), մեկ այլ դեպքում՝ գործի բազմակողմանի և լրիվ քննությանը:

Փաստորեն դիմումի ելքով շահագրգռված անձինք գործի ելքով ունեն նյութաիրավական շահ, ինչպես հայցային վարույթում 3-րդ անձինք: Հետևաբար, եթե հատուկ վարույթի գործերով գործի քննությամբ դատարանը պարզում է, որ առկա են դիմումի ելքով շահագրգռված անձինք, ապա իրավակիրառ պրակտիկայում տարբեր դատարանների կողմից տարբեր լուծումներ են տրվում՝ մի մասը կայացնում է առանձին ակտի ձևով որոշում, մյուսները բանավոր՝ արձանագրային որոշում՝ նշելով այդ անձանց նյութաիրավական շահ ունենալու հիմքերն ու հիմնավորումները և նշված անձանց ներգրավում են գործին, մյուսները նշված անձանց ծանուցում են դատարանում քննվող գործով նրանց հնարավոր նյութաիրավական շահագրգռվածության մասին, և նրանց ներգրավման հարցը թողնում նրանց հայեցողությանը: Այս հարցի լուծման տարբերակներից մեկն էլ այն է, որ շահագրգռված անձինք դիմողի միջնորդության բավարարման արդյունքում, գործով հանդես են գալիս որպես վկաներ, և իրենց ցուցմունքով դիրքորոշում են հայտնում նյութաիրավական շահագրգռվածության առկայության կամ բացակայության մասին, որն էլ դատարանները բավարար են համարում շահագրգռվածության հարցն հաղթահարված համարելու համար:

Դատարաններն ըստ էության այդ հարցերը լուծում են հայցային վարույթի համար ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձանց գործին ներգրավելու կարգավորումներով, փաստացի կիրառելով նմանատիպ հարաբերությունը կարգավորող օրենքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի անալոգիա: Դատարանների այս գործողությունները ճիշտ են, քանի որ երրորդ անձինք և շահագրգռված անձինք դատարանի վարույթում քննվող գործով ունեն նման շահ՝ նյութաիրավական շահ, նման է նաև նրանց գործի մասնակցության նպատակը՝ բացառելու այլ անձի իրավունքների վրա ազդեցություն ունեցող հարցի լուծումը, առանց այդ անձի մասնակցության, տարբեր են միայն վարույթի տեսակները՝ հայցային և հատուկ:

Հետևաբար՝ այդ հարաբերությունները նման են, և մեկ հարաբերությունը կարգավորող նորմի բացակայությունը կարող է, հնարավոր է և իրավաչափ է լրացնել նման հարաբերու-

[17] Տես թիվ ԵԴ/3061/02/19 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 23.01.2021 թվականի որոշում / https://www.arlis.am/:

թյունը կարագավորող նորմով՝ այսինք հենց օրենքի անալոգիայով:

Հաջորդ դեպքը ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանով փոխարինելու, կամ նոր պատասխանող ներգրավելու կարգավորումներն են սահմանված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 172-րդ, 173-րդ հոդվածներով:

Փաստորեն ինչպես պատշաճ պատասխանողը, այնպես էլ նոր պատասխանողը ՀՀ քաղ. Դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված գործին մասնակցող այն անձն է, որի դեմ հայց է ներկայացվել առաջին ատյանի դատարան:

Իսկ պատասխանողի դեմ հայցը ներկայացվում է հայցադիմումով, որի ձևին և բովանդակությանն առաջադրված պահանջները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածով, ավելին, որի դեմ ներկայացված հայցադիմումի և կցվող փաստաթղթերի ցանկը կարգավորող նորմերը սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածով:

Ընդ որում, եթե պատասխանողի դեմ նշված պահանջների չպահպանմամբ հայց է ներկայացվում դատարան, ապա հայցադիմումը վերադարձվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, դեռ ավելին հայցվորին տրվում է եռօրյա ժամկետ հայցադիմումի նշված թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար:

Մինչդեռ ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 172-րդ, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածով սահմանված պատշաճ պատասխանող, կամ նոր պատասխանող ներգրավելու դեպքերում, օրենսդիրը բաց է թողել պատշաճ կամ նոր պատասխանողի դեմ ներկայացված հայցադիմումի մասով պահանջները: Հարց է ծագում, ի՞նչ պետք է անի դատարանը, եթե նոր պատասխանող ներգրավելու միջնորդությունը պարունակում է նոր պատասխանող ներգրավելու հիմքերը և հիմնավորումները, սակայն չի նշվել պատասխանողի հայրանունը, հաշվառման հասցեն, կամ նոր պատասխանողին ուղղված պահանջն առանձնացված չէ՝ ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի պահանջի, կամ նրան չի ուղարկվել նրա դեմ ներկայացված հայցադիմումի ու հայցանյութերի օրինակը:

Չենք կարծում, որ նման միջնորդությունը հնարավոր է թույլատրել: Այն չքննարկելու դեպքում խախտվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 1.1-ին կետի պահանջը, մերժելու դեպքում՝ խախտվում է հայցվորի տնօրինչական իրավունքը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի ուժով այլևս չի կարող նույն հիմքով միջնորդություն ներկայացնել, բավարարելու դեպքում, խախտվում է դատավարական մի շարք սկզբունքներ՝ մրցակցության և հավասարության սկզբունքը, այդ թվում պատասխանողի դատական պաշտպանության իրավունքը:

Միակ ողջամիտ, տրամաբանական հնարավորությունը նման միջնորդությունը վերադարձնելն է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի կարգավորումներով՝ այն է օրենքի անալոգիայով, հայցվորին տալով հնարավորություն դատարանի մատնանշած բոլոր թերություններն վերացնելու և 3-օրյա ժամկետում կրկին ներկայացնելու համար: Ավելին ինչպես սկզբնական հայց ներկայացնելիս, այնպես էլ գործի քննության ընթացքում նոր պատասխանողի դեմ պահանջ ներկայացնելիս հայցվորին չի կարող տրվել ավելի քան 2 անգամ հայցադիմումի թերությունները վերացնելու հնարավորություն: Դա կհանդիսանա իրավունքի չարաշահում , մրցակցության և հավասարության սկզբունքի խախտում:

Նման խնդրահարույց իրավիճակ կարող է առաջանալ նաև հայցի առարկայի և հիմքերի փոփոխությունը թույլատրելու միջնորդություն ներկայացնելիս, երբ հայցի առարկան փո-

փոխվում է ոչ հստակ, և չի առանձնացվում մի քանի պատասխանողների դեմ ներկայացված պահանջները, և թեև այդ փոփոխությունը չի հանգեցնում այն իրավունքով կամ օրենքով պահպանվող շահի փոփոխության, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է և քննվող գործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, այդուհանդերձ այդ միջնորդության բավարարման, մերժման, չքննարկման հետևանքները կհանգեցնեն վերը նշված նույն բացասական հետևանքներին: Փաստորեն այս հարցում բաց է մնացել հայցի առարկայի և հիմքերի փոփոխությունը՝ փաստորեն փոփոխված հայցադիմումը վերադարձնելու կարգավորումը:

Ավելին օրենսդրի փոփոխությունը սահմանված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 7-րդ մասով՝ պետական տուրքը վճարված չլինելու կամ այդ մասով որևէ արտոնություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացված չլինելու դեպքում, միջնորդությունը չքննարկելու մասին, ամբողջական չէ, այն հայցադիմումը վերադարձնելու հիմք է հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

Հետևաբար ինչպես պատշաճ պատասխանողին, նոր պատասխանող ներգրավելու կարգավորումներում, այնպես էլ հայցի առարկան և հիմքերը փոխելու կարգավորումներում առկա այս բացերը պրակտիկայում դատարանների կողմից լրացվում են դրանք վերադարձնելու մասին դատավարական օրենքի՝ 127-րդ հոդվածի նորմերի անալոգիայով:

Այս օրինակները սպառիչ չեն, և ամեն օրենսդրական բացի առկայություն ազդակ է օրենսդրի համար, այդ բացերը օրենսդրական փոփոխությունների միջոցով լուծելու համար:

Սակայն նույնիսկ այս և այլ բացերը փոփոխությամբ լրացնելու դեպքում, իրավունքի, դատավարական իրավահարաբերությունների անընդհատ զարգացումը, հանգեցնելու է նոր առաջացած հարաբերությունը կարգավորող իրավական նորմերի բացակայության և օրենքի անալոգիայի կիրառման անհրաժեշտության:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքների ամփոփման հիման վրա կարելի է հանգել այն հիմնական եզրահանգմանը, որ անալոգիայի կիրառումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում հանդիսանում է դատավարական իրավակարգավորման բացերի հաղթահարման և արդարադատության արդյունավետության ապահովման կարևոր իրավական գործիք: Այն թույլ է տալիս ապահովել դատական գործընթացների շարունակականությունը այն դեպքերում, երբ գործող օրենսդրությունը չի պարունակում կոնկրետ և ուղղակի կարգավորում:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անալոգիայի կիրառումը պետք է դիտարկվի որպես բացառիկ բնույթ ունեցող իրավական միջոց, որի օգտագործումը հնարավոր է միայն հստակ սահմանված պայմանների առկայության դեպքում: Մասնավորապես՝ այն չի կարող հանգեցնել իրավական որոշակիության, օրինականության և կանխատեսելիության սկզբունքների խախտման, որոնք հանդիսանում են իրավական պետության հիմնարար հիմքեր:

Հետազոտության ընթացքում պարզվել է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության զարգացման ներկայիս փուլում, չնայած օրենսդրական բարեփոխումներին, դեռևս առկա են իրավական բացեր, որոնք գործնականում պահանջում են օրենքի անալոգիայի կիրառում: Սակայն այդ կիրառումը պետք է ուղեկցվի միասնական դատական մոտեցումների ձևավորմամբ՝ կանխելու իրավակիրառ պրակտիկայի տարաբնույթ մեկնաբանությունները:

Այսպիսով, կարելի է փաստել, որ անալոգիայի ինստիտուտը, ճիշտ իրավական սահմանների և չափանիշների պահպանման պայմաններում, նպաստում է քաղաքացիական դատավարության համակարգային զարգացմանը և դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

Հետևաբար առաջարկում ենք թվարկված բացերը լրացնել համապատասխան փոփոխությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածից հանել դատավարական նորմերի օրենքի անալոգիայով կիրառելու արգելքը, հաջորդող հնարավոր բացերը լրացնելու և մեկնաբանելու հնարավորությունը տալ դատարաններին: Իսկ դատարանների ցանկացած սխալ մեկնաբանումներ կարող են բողոքարկվել, որն էլ կնպաստի իրավունքի զարգացմանը:

Ամփոփագիր: Սույն հոդվածում ուսումնասիրվում են անալոգիայի կիրառման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում՝ հատուկ ուշադրություն դարձնելով օրենքի անալոգիայի կիրառման անհրաժեշտությանը քաղաքացիական դատավարության ոլորտում: Հետազոտության հիմնական նպատակը անալոգիայի կիրառման իրավական հիմքերի, պայմանների և սահմանների բացահայտումն է՝ հաշվի առնելով դրա դերը դատավարական բացերի լրացման գործընթացում և արդարադատության արդյունավետության ապահովման գործում:

Այս նպատակով կատարվել է ՀՀ անկախությունից հետո ձևավորված օրենսդրական կարգավորումների համալիր վերլուծություն և համեմատություն: Ուսումնասիրվել են քաղաքացիական դատավարական հարաբերությունների զարգացման հիմնական փուլերը, օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև դրանց ազդեցությունը դատավարական պրակտիկայի վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն իրավական նորմերին, որոնք կարգավորում են դատավարական բացերի հաղթահարման մեխանիզմները, այդ թվում՝ օրենքի անալոգիայի կիրառման հնարավորությունները:

Հոդվածում ընդգծվում է, որ դատավարական իրավակարգավորման ոչ ամբողջականությունը որոշ դեպքերում պահանջում է անալոգիայի կիրառություն՝ որպես իրավունքի զարգացման և արդարադատության շարունակականության ապահովման գործիք: Միաժամանակ վերլուծվում են այն սահմանները, որոնց շրջանակներում անալոգիան կարող է կիրառվել՝ առանց իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության սկզբունքների խախտման:

Այսպիսով, հոդվածը նպատակ ունի ձևավորել համակարգային պատկերացում անալոգիայի դերի մասին քաղաքացիական դատավարությունում և դրա կիրառման անհրաժեշտության վերաբերյալ՝ ՀՀ իրավական զարգացումների համատեքստում:

Annotation. This article examines the features of the application of analogy in the legal system of the Republic of Armenia, with particular emphasis on the necessity of applying analogy of law in the field of civil procedure. The main objective of the study is to identify the legal foundations, conditions, and limits of the application of analogy, taking into account its role in filling procedural gaps and ensuring the effectiveness of justice.

For this purpose, a comprehensive analysis and comparative study of legislative regulations formed after the independence of the Republic of Armenia has been conducted. The main stages of the development of civil procedural legal relations, legislative changes, and their impact on judicial practice have been examined. Special attention is given to legal norms regulating mechanisms for overcoming procedural gaps, including the possibility of applying analogy of law.

The article emphasizes that the incompleteness of procedural regulation in certain cases requires the use of analogy as an instrument for the development of law and the continuity of justice. At the same time, it analyzes the limits within which an analogy may be applied without violating the principles of legal certainty and predictability of law.

Thus, the article aims to form a systematic understanding of the role of analogy in civil procedure and the necessity of its application within the context of the legal development of the Republic of Armenia.

Аннотация. В статье исследуются особенности применения аналогии в правовой системе Республики Армения с акцентом на использование аналогии закона в сфере гражданского судопроизводства. Целью исследования является определение правовых оснований, условий и пределов применения аналогии с учётом её значения для преодоления пробелов в процессуальном регулировании и обеспечения эффективности правосудия.

Для достижения поставленной цели проведён *комплексный анализ и сравнительное исследование законодательных норм, сформировавшихся после обретения независимости Республики Армения*. Рассмотрены основные этапы развития гражданского процессуального законодательства, законодательные реформы и их влияние на судебную практику. Особое внимание уделено правовым механизмам преодоления пробелов в процессуальном регулировании, включая применение аналогии закона.

В статье обосновывается, что неполнота процессуального регулирования в ряде случаев обусловливает необходимость использования аналогии как инструмента обеспечения непрерывности правосудия и развития правовой системы. Одновременно анализируются пределы применения аналогии, позволяющие сохранить баланс между восполнением пробелов в законодательстве и соблюдением принципов правовой определённости, законности и предсказуемости правоприменения.

Сделан вывод о том, что применение аналогии в гражданском судопроизводстве выступает важным механизмом обеспечения эффективной судебной защиты и способствует дальнейшему совершенствованию правовой системы Республики Армения.

Բանալի բառեր - *անալոգիա, իրավունքի բաց, օրենսդրական բացերի հաղթահարում, բացերի լրացում, իրավաստեղծ, իրավակիրառ, համանմանություն, իրավունքի նորմեր:*

Keywords: *Analogy, Legal gap, Overcoming legislative gaps, Filling the gaps, Law-making, Law-applying, Similarity, Legal norms.*

Ключевые слова: *аналогия, пробелы в праве, преодоление законодательных пробелов, заполнение пробелов, правотворчество, правоприменение, сходства, правовые нормы*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն,
2. Հայկական ՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը 6-րդ հոդված /ուժը կորցրած է ճանաչվել 01.01.1999 թ.,
3. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
4. ՀՀ ընտանեկան օրենսգիրք,
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք,
7. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ուժի մեջ է մտել 31.05.2002 թ. և ուժը կորցրած է ճանաչվել 07.04.2018 թ.,
8. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, օրենքն ուժի մեջ է մտել 07.04.2018 թ.,
9. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք,
10. ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-929 որոշում,
11. ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի փետրվարի 5-ի թիվ ՍԴՈ-864,

12. ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-914,
13. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հունարի 25-ի թիվ ՍԴՈ-933,
14. ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 8-ի թիվ ՍԴՈ-1143,
15. ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1315,
16. ԱՐԴ/4208/02/16 քաղաքացիական գործով 17.09.2018 թվականի Վճռաբեկ դատարանի որոշում,
17. Платон, «Законы». Кн.:9, 857 с., Полн.собр., соч.Т.14, 125 էջ:
18. Аристотель. «Первая аналитика». 686 էջ:
19. Памятники Римского права https://ru.scribd.com/document/666806797,
20. www.arlis.am
21. www.datalex.am

Թումանյան Ա. - ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, Ռուս - Հայկական համալսարանի հայցորդ, էլհասցե՝ antumanyan@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 06.04.2026 թ., տրվել է գրախոսության 06.04.2026 թ., երաշխավորվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/CRIMINAL LAW/УГОЛОВНОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-72

АРМЕН ТУМАНЯН
Кандидат юридических наук

ԱՐՄԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

ARMEN TUMANYAN
Candidate of Legal Sciences
https://orcid.org/0009-0001-3908-1093

КОРРУПЦИЯ КАК ПРАВОВАЯ ПРОБЛЕМА

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

CORRUPTION AS A LEGAL PROBLEM

Введение

В современных условиях коррупция представляет собой одну из наиболее масштабных и многогранных угроз национальной безопасности и стабильности правового порядка. Являясь деструктивным социальным феноменом, она не ограничивается простым извлечением частной выгоды из должностных полномочий, а выступает катализатором системной деградации общественных институтов.

Актуальность данной проблемы обусловлена тем, что коррупция оказывает глубокое негативное воздействие на нормальную, слаженную деятельность государственного аппарата. Рационально выстроенные бюрократические процедуры подменяются теневым механизмом взаимодействия, что неизбежно ведет к снижению эффективности государственного управления и нерациональному распределению бюджетных ресурсов.

Более того, систематические коррупционные проявления подрывают доверие общества к существующим властным структурам. Когда личный интерес должностного лица превалирует над общественным благом, происходит отчуждение граждан от государства, что создает почву для правового нигилизма и социальной напряженности. Деформация принципа социальной справедливости и равенства всех перед законом дискредитирует саму идею демократического правового государства.

Основное исследование

Это «корень, из которого вытекает во все времена и при всяких соблазнах презрение ко всем законам»[1]

1. Термин «коррупция» этимологически происходит от латинского «corruption», что в Римском праве понималось как ‘портить, разрушать, ломать, подкупать’. Этим термином обозначались как преступления crimen publica, так и иные правонарушения – delicta private, а также аморальные проступки и в том числе такие дела, которые просто не заслуживали одобрения со стороны римского народа. По существу данный термин означал сговор нескольких участников, целью которых было неправомерное влияние, например на судебный процесс и слом нормального хода управления общественными делами[2]. С течением времени название «коррупция» распространилось на любые действия, связанные с подкупом кого-либо деньгами или иными материальными благами.

Наряду с этим в том же римском праве «коррумпировать» обозначало ‘портить желудок вредной пищей, портить воду, расточать состояние, уничтожать имущество, позорить достоинство’[3].

2. Следует отметить, что коррупция имеет глубокие исторические корни. Она возникла с образованием первых государств, в результате утверждения институтов власти, издания законов, разделения труда и, наконец, появления касты государственных служащих, чиновников, должностных лиц. Сохранившиеся памятники права, сочинения по искусству государственного управления и религиозная литература содержат не только упоминания о коррупционной деятельности, но также называют ее причины, обосновывают необходимость борьбы с ней и предлагают меры предупреждения и профилактики. Так, например, Библия в Ветхом Завете указывает на греховную природу коррупции: «Ибо Я знаю, как многочисленны ваши преступления и как тяжки грехи ваши: вы – враги правового, берете взятки и возвращаете в суде дела бедных».

В русских летописях XIII в. упоминается мздоимство (совершение чиновником законных действий в пользу просителя из корыстных побуждений) и лихоимство (совершение чиновником незаконных действий в пользу просителя из корыстных побуждений), т.е. взяточничество в том или ином выражении. Первое законодательное ограничение коррупционной деятельности в России было осуществлено в царствование Ивана III. Иван IV Грозный впервые ввел смертную казнь в качестве наказания за чрезмерность во взятках. Процветала коррупция и в период Российской империи[4].

Попытки противодействия коррупции уголовно-правовыми методами предпринимались также и в Древней Армении. Так, например, законодательство Киликийского Армянского государства еще в начале XIII в. характеризовало взяточничество как свойство продажности

---

[1] *Гоббс Т.* Левиафан. М., 1936, с. 234.

[2] *Фиалковская И.Д.* Противодействие коррупции как цель контрольно-надзорной деятельности в государственном управлении: зарубежный опыт//Материалы Всероссийской научно-практической конференции «Актуальные вопросы контроля и надзора в социально-значимых сферах деятельности общества и государства». Н. Новгород, 2015, с. 477.

[3] Римское право: понятие, термины, определения: [Пер. с чеш.]/Милан Бартошек; [Спец науч. Ред., авт. Предисл. И коммент. З.М. Черниловский]. М.: Юрид. лит., 1989. 447с.

[4] *Петрович А.И., Бобровская Н.О.* Коррупция: криминологические и уголовно-правовые аспекты. Учебно- методическое пособие. Минск 2009, с. 4.

интересов власти. Статья 10 Судебника Смбата Спарапета[5] «О продажности, Закон Божий за взятку» сформулирована следующим образом: «Если доказано против судьи церковного или мирского, что он продает Закон Божий за взятку, то его лишают судейского стула»[6].

Кроме того, в своде законов Судебника Мхитара Гоша (приблизительно 1184 год н.э.), а именно в части второй «Светский закон», устанавливается противоправность действий блюстителей закона (судей) за корыстные действия. Указанная статья гласит: «Если судья действует пристрастно, он должен быть лишен этого звания». В данном случае автор имеет в виду случаи получения выгоды судьями при исполнении своих обязанностей без нарушения ими действующего законодательства[7].

В средневековых армянских документах, а также в русских летописях упоминаются и иные деяния коррупционного характера, такие как:

*вымогательство («тяжба»), когда судья или чиновник намеренно затягивал дело, чтобы измотать просителя или заставить его заплатить;

*непотизм и кумовство – назначение на должности родственников и «своих» людей, что было основой кадровой политики. Данное деяние не считалось преступлением, а наоборот, воспринималось как способ обеспечения лояльности;

*казнокрадство – присвоение государственных (княжеских, царских) средств, что часто рассматривалось не как должностное преступление, а как личная обида правителю или кража и наказывалось по усмотрению монарха (часто лишением имущества или опалой).

3. В целях предотвращения коррупционной угрозы мировым сообществом выработано и принято множество документов, в которых определены правовые и организационные меры противодействия коррупции. Многие положения этих документов имплементированы в законодательство соответствующих государств. Кроме этого, проблемам коррупции посвящено множество научных исследований как в сфере права, так и в сфере иных смежных наук. Однако можно с уверенностью отметить, что единое понимание сущности и содержания данного негативного феномена в настоящее время отсутствует.

Так, А.И. Долгова определяет коррупцию как «социальное явление, характеризующееся подкупом-продажностью государственных или иных служащих и на этой основе корыстным использованием ими в личных либо в узкогрупповых, корпоративных интересах официальных служебных полномочий, связанных с ними авторитета и возможностей»[8].

В.В. Лунеев рассматривает коррупцию «как социально-правовое или криминалистическое явление, которое охватывает ряд преступлений, представляющих злоупотребление государственной властью и иными должностными полномочиями для получения материальной и иной выгоды в личных целях, в целях третьих лиц или групп».[9]

По мнению С.Ш. Цагикяна, коррупция представляет собой «социально-правовое, политико-экономическое и нравственное явление, выражающееся в использовании государственным служащим, либо служащим коммерческих и иных организаций служебных полномочий и возможностей своего должностного статуса с корыстной целью в личных, групповых и

[5] Спарапет-военоначальник, Министр обороны (примеч. автора).
[6] Смбат Спарапет. Судебник. Ереван, 1954.
[7] *Мхитар Гош,* Армянский судебник-Ереван, 1954.
[8] Криминология: Учеб. для юрид вузов/под общей ред. А.И. Долговой. М., 1997, с. 501.
[9] *Лунеев В.В.* Коррупция в России//Государство и право. 2007. №11, с. 20.

корпоративных интересах либо предоставление этим лицам таковых благ и преимуществ со стороны физических и юридических лиц»[10].

На наш взгляд, здесь необходим более простой подход к понятию этого деструктивного феномена, и мы предлагаем определить его как «продажность государственных чиновников, должностных лиц, общественных и политических деятелей, готовых обменять свою совесть, достоинство и самоуважение на определенные преимущества, что подрывает устои государственного строя, нормального функционирования общественного организма и ест их как «ржа железо».

4. Впервые официальное определение коррупции было дано на 34-й сессии Генеральной Ассамблеи ООН 17 декабря 1979 года. Согласно пункту b) статьи 7 Кодекса поведения должностных лиц по поддержанию правопорядка, который был принят резолюцией 34/169 (далее – Кодекс ООН 34/169), под коррупцией следует понимать совершение или несовершение должностным лицом какого-либо действия при исполнении обязанностей или по причине этих обязанностей в результате требуемых или принятых подарков, обещаний или стимулов или их незаконное получение всякий раз, когда имеет место такое действие или бездействие. Вместе с тем Кодекс тем же пунктом той же статьи оставляет право определения понятия коррупции в соответствии с национальным правом[11].

Таким образом, из анализа понятия коррупции, изложенного в Кодексе ООН 34/169, можно заключить, что коррупционным может быть признано преступление:

* субъектом которого является должностное лицо;
* оно совершено им в рамках своих полномочий;
* необходимым элементом субъективной стороны является корыстный мотив.

Иными словами, исторически первое международно-правовое определение коррупции носило консервативный сжатый характер, отождествляя ее исключительно с коррупционным подкупом должностных лиц публичного сектора. В качестве предмета подкупа рассматриваются материальные предметы и любые неимущественные блага.

В Справочном документе Организации Объединенных Наций о международной борьбе с коррупцией, подготовленном Секретариатом ООН 13 апреля 1995 года, (далее – Справочный документ) закреплено, что «коррупция – это злоупотребление государственной властью для получения выгод в личных целях»[12].

Как видно, в отличие от узкого дисциплинарно-этического подхода в Кодексе ООН 34/169, Секретариат ООН определяет коррупцию не как частный случай, а как системное злоупотребление властью в личных целях, что дает возможность расширительного толкования данного деструктивного феномена как симбиоза экономической и организованной преступности, направленного против нормального функционирования государственного аппарата и являющегося действенным инструментом проникновения преступности и, в том числе организованной, в государственные структуры.

Текст Конвенции Совета Европы, принятой 27 января 1999 года в Страсбурге (далее –

[10] *Цагикян С.Ш.* Противодействие коррупции в Армении. СПб.: Антарес, 2008.

[11] Кодекс поведения должностных лиц по поддержанию правопорядка, принятый на Генеральной Ассамблее ООН 17 декабря 1979 года резолюцией 34/169// СПС «Консультант плюс» России.

[12] Справочный документ Организации Объединенных Наций о международной борьбе с коррупцией, подготовленный Секретариатом ООН 13 апреля 1995 года/Кошелев С.В. «Понятие коррупции в международном праве»/Журнал «Вестник Волгоградской Академии МВД России, 2012.

Конвенция Совета Европы), в отличие от Кодекса ООН 34/169 и Справочного документа, не содержит конкретного определения понятия коррупции. Здесь установлен перечень преступлений, которые по мнению его авторов необходимо отнести к категории коррупционных. Вторая глава данного международного документа перечисляет те противоправные деяния, которые подлежат криминализации на национальном уровне и относит к ним: активный подкуп национальных публичных должностных лиц, пассивный подкуп национальных публичных должностных лиц, подкуп членов национальных публичных собраний, подкуп иностранных должностных лиц, подкуп членов иностранных публичных собраний, активный подкуп в частном секторе, пассивный подкуп в частном секторе, подкуп должностных лиц международных организаций, подкуп международных членов парламентских собраний, подкуп судей и должностных лиц международных судов, злоупотребление влиянием в корыстных целях, отмывание доходов от преступлений, связанных с коррупцией, правонарушения в сфере бухгалтерского учета (статьи 2-14)[13].

Комплексный анализ правовых норм статей 2-14 Конвенции Совета Европы позволяет сделать вывод, что все их составы с субъективной стороны характеризуются исключительно прямым умыслом, когда субъект осознает общественную опасность своих действий (бездействия), предвидит их вредные последствия и активно желает их наступления (в оригинале документа используется формулировка «intentional» – преднамеренно, умышленно). Само деяние должно быть совершено сознательно с целью получения выгоды, что предполагает также обязательное наличие корыстного мотива. Субъектами преступлений, предусмотренных статьями 2-14, являются публичные должностные лица (статьи 2 и 3), члены национальных и иностранных публичных собраний, должностные лица международных парламентских собраний (статьи 4, 6, 10), иностранные публичные должностные лица (статья 5), лица, которые руководят предприятиями частного сектора или работают в них в том или ином качестве (статья 7), должностные лица международных организаций (статья 9), судьи и должностные лица международных судов (статья 11)[14].

Следует отметить, что субъектом активного подкупа как национальных должностных лиц, так и активного подкупа в частном секторе также может быть любое заинтересованное лицо, решение проблемы которого зависит от соответствующего публичного должностного лица или от лица, который руководит предприятием частного сектора или работает в нем в том или ином качестве.

Вместе с тем, если подкуп публичного должностного лица оказывает деструктивное воздействие на нормальное функционирование государственного аппарата, подрывает доверие граждан к правовым институтам общества, и ведет к политической нестабильности, нарушению прав человека, неэффективному распределению бюджетных средств, то коммерческий подкуп в частном секторе негативно влияет на справедливую конкуренцию, деловую репутацию и интересы частных лиц, таких как клиенты и акционеры соответствующего юридического лица, искажает рыночные механизмы, в результате, например, контракты получает не лучший поставщик, а тот кто платит «откат», что приводит к росту цен для конечного потребителя и снижению качества товаров.

[13] Конвенция Совета Европы «Об уголовной ответственности за коррупцию (Страсбург, 27января 1999 года)//СПС «Консультант плюс России.
[14] Конвенция Совета Европы «Об уголовной ответственности за коррупцию (Страсбург, 27января 1999 года)//СПС «Консультант плюс России.

Можно с уверенностью утверждать, что оба вышеупомянутых вида подкупа одинаково опасны.

Конвенцией Совета Европы предусмотрена также ответственность юридических лиц в случае их вовлеченности или причастности к совершению коррупционного преступления Так, пунктом 1 статьи 18 установлено, что каждая Сторона принимает такие законодательные и иные меры, которые могут потребоваться для обеспечения того, чтобы юридические лица могли быть привлечены к ответственности в связи с совершением уголовных правонарушений, заключающихся в активном подкупе, злоупотреблении влиянием в корыстных целях и отмывании доходов, признанных в качестве таковых в соответствии с настоящей Конвенцией и совершенных в их интересах каким-либо физическим лицом, действующим в своем личном качестве или в составе органа юридического лица и занимавшим руководящую должность в юридическом лице, в процессе:

выполнения представительских функций от имени юридического лица;

или

осуществления права на принятие решений от имени юридического лица;

или

осуществления контрольных функций в рамках юридического лица;

а также в связи с участием такого физического лица в вышеупомянутых правонарушениях в качестве соучастника или подстрекателя.

При этом ответственность юридического лица не исключает возможности уголовного преследования физических лиц, совершивших, подстрекавших к совершению или участвовавших в совершении уголовных правонарушений, указанных в пункте 1 (Статья 18 пункт 3)[15].

Из данных международно-правовых норм следует, что для привлечения к ответственности юридического лица коррупционное преступление должно быть совершено физическим лицом, действующим в своем личном качестве или в составе органа юридического лица и занимавшим руководящую должность в юридическом лице, однако не в своих личных интересах, а в интересах представляемого им юридического лица, при этом юридическое лицо несет все виды ответственности (гражданской, административной и т.п.) за исключением уголовной, к которой может быть привлечено соответствующее физическое лицо.

5. Конвенция ООН против коррупции, принятая Генеральной Ассамблеей ООН на 51-ом пленарном заседании от 31 октября 2003 года (далее – КПК ООН) явилась логическим продолжением процесса международно-правовой унификации антикоррупционных стандартов, начатого на европейском континенте и стала глобальным регулятором противодействия этому деструктивному феномену.

Однако в отличие от Конвенции Совета Европы авторы КПК ООН пришли к выводу и утверждают, что коррупцию невозможно искоренить исключительно репрессивными мерами. Введение требований о прозрачности финансирования политических партий, создании независимых антикоррупционных органов и кодексов поведения служащих, несомненно, стало качественным шагом вперед.

Рассматриваемый документ впервые на глобальном уровне провозгласил возвращение активов, похищенных коррупционерами «основополагающим принципом Конвенции» (статья

[15] Конвенция Совета Европы «Об уголовной ответственности за коррупцию (Страсбург, 27января 1999 года)//СПС «Консультант плюс России.

51 КПК ООН). При этом, из смысла правовых норм главы V следует, что этот принцип распространяется также и на имущество, вывезенное за пределы страны деятельности субъекта коррупционного преступления. Данный вывод подтверждается нормами статьи 53 «Меры для непосредственного возвращения имущества», статьи 54 «Механизмы изъятия имущества посредством международного сотрудничества в деле конфискации», статьи 55 «Международное сотрудничество в целях конфискации».

КПК ООН вышла за рамки классического «подкупа», инкорпорировав в междуна-родное право такие составы, как хищение государственного имущества (ст. 17), злоупотребление служебным положением (ст. 19), незаконное обогащение (ст. 20) и воспрепятствование отправлению правосудия (ст. 25).

Юридико-технический инструментарий КПК ООН характеризуется сочетанием императивных предписаний и дискреционных полномочий, предоставляемых государствам-участникам. Если в отношении так называемых базовых форм коррупции (за исключением подкупа в частном секторе) КПК ООН использует обязывающие формулировки, такие как каждое государство-участник «принимает такие законодательные и иные меры…», то применительно к иным деликтам авторы переходят к диспозитивным конструкциям-«рассматривает возможность принятия таких законодательных и иных мер…».

Подобная дискреция предоставляется в вопросе криминализации таких составов коррупционных преступлений как злоупотребление влиянием в корыстных целях (ст. 18), злоупотребление служебным положением (ст. 19), незаконное обогащение (ст. 20), подкуп в частном секторе (ст. 21), хищение имущества в частном секторе (ст. 22).

По всей видимости, такой «гибкий» подход обусловлен доктринальным признанием более низкого уровня общественной опасности или меньшей степени деструктивности их последствий по сравнению с «классическим» взяточничеством.

В противовес глобальному ооновскому стандарту, Конвенция Совета Европы базируется на принципе абсолютной императивности («принимает законодательные и иные меры»), нивелируя различия в степени общественной опасности отдельных коррупционных посягательств и требуя их тотальной и безусловной криминализации.

На наш взгляд, разница в правовых подходах в вопросе криминализации коррупционных преступлений исходит из следующих условий и обстоятельств.

Страны-члены Совета Европы объединены общим европейским правовым наследием (англо-саксонское и континентальное право), общей приверженностью Европейской конвенции по правам человека (ЕКПЧ), что позволяет утверждать о наличии у них как схожих правовых стандартов, так и аналогичного юридического менталитета, правосознания. Близость правовых культур более чем 40 государств, подписавших Конвенцию Совета Европы, позволило зафиксировать бескомпромиссные, жесткие уголовно-правовые дефиниции.

В свою очередь КПК ООН объединяет более чем 190 государств, представляющих собой совершенно разнородную среду, где сталкиваются не только романо-германское и англо-саксонское правовые семьи, но и мусульманское (шариатское) право, социалистические правовые модели стран Азии, а также государств с переходной или нестабильной экономикой. Выработать единый жесткий стандарт уголовного преследования, подобный Конвенции Совета Европы, одновременно для всех практически невозможно без потери участников. Включение дискреционных положений в КПК ООН стало ответом на стремление многих государств сохранить автономию в решении вопросов криминализации, что сделало диспозитивность

необходимым условием для достижения глобального консенсуса.

6. Федеральный закон Российской Федерации «О противодействии коррупции от 25 декабря 2008 года (далее-ФЗ-273) содержит определение понятий «коррупция» и «противодействие коррупции».

Так, «коррупция» в соответствии с указанным правовым документом определяется как злоупотребление служебным положением, дача взятки, получение взятки, злоупотребление полномочиями, коммерческий подкуп, подкуп либо иное незаконное использование физическим лицом своего должностного положения вопреки законным интересам общества и государства в целях получения выгоды в виде денег, ценностей, иного имущества или услуг имущественного характера, иных имущественных прав для себя или для третьих лиц либо незаконное предоставление такой выгоды указанному лицу другими физическими лицами, а также совершение указанных деяний от имени или в интересах юридического лица (пп. а) и б) пункта 1) статьи 1 ФЗ-№273).

Как видно, перечень преступлений, которые могут быть отнесены к коррупционным, не является исчерпывающим и может быть дополнен иными деликтами в случае, если они совершаются:

* вопреки законным интересам общества и государства;

*в целях получения выгоды (корыстный мотив);

*физическим лицом с использованием своего должностного положения.

«Противодействие коррупции» – деятельность федеральных органов государственной власти, органов государственной власти субъектов Российской Федерации, органов местного самоуправления, институтов гражданского общества, организаций и физических лиц в пределах их полномочий по предупреждению коррупции, в том числе по выявлению и последующему устранению причин коррупции (профилактика коррупции); по выявлению, предупреждению, пресечению, раскрытию и расследованию коррупционных правонарушений (борьба с коррупцией); по минимизации и (или) ликвидации последствий коррупционных правонарушений (пп. а), б) и в) пункта 2 статьи 1 ФЗ-№273)[16].

Законодательное разграничение дефиниций, представленное в статье 1 ФЗ-№273, выступает концептуальным базисом, предопределяющим выбор конкретных правовых инструментов минимизации коррупционных рисков. В системной связи с легальным определением «противодействие коррупции», которое включает не только борьбу, но и широкомасштабную превенцию (пп. а) пункта 2 статьи 1 ФЗ №273), центральное место занимает институт конфликта интересов, который в пункте 1 статьи 10 определяется как «ситуация, при которой личная заинтересованность (прямая или косвенная) лица, занимающего должность, замещение которой предусматривает обязанность принимать меры по предотвращению и урегулированию конфликта интересов, влияет или может повлиять на надлежащее, объективное и беспристрастное исполнение им должностных (служебных) обязанностей (осуществление полномочий)».

Конфликт интересов в контексте ФЗ № 273 содержательно раскрывает саму природу коррупционного правонарушения. Именно в точке пересечения личной заинтересованности служащего и его публичных обязанностей, описываемой статьей 10, закладывается та

[16] Федеральный закон Российской Федерации «О противодействии коррупции от 25 декабря 2008 года (ФЗ-273)// СПС «Консультант плюс России.

деструктивная модель поведения вопреки законным интересам общества и государства, которая де-юре признается коррупцией в рамках статьи 1 исследуемого нормативного акта.

Таким образом, переход от нормативного описания коррупционных деликтов в статье 1 к регламентации конфликта интересов в статье 10 отражает логику законодателя, который от фиксации самой сущности противоправного деструктивного феномена переходит к материализации ключевого механизма его предупреждения.

Следует отметить, что в Российской Федерации, впервые на законодательном уровне институт конфликта интересов используется в Федеральном законе от 27 июля 2004 года №79-ФЗ «О государственной гражданской службе Российской Федерации (далее ФЗ-№79), в котором статьей 19 «Урегулирование конфликта интересов на гражданской службе» предусмотрено, что случаи возникновения у гражданского служащего личной заинтересованности, которая приводит или может привести к конфликту интересов, предотвращаются в целях недопущения причинения вреда законным интересам граждан, организаций, общества, субъекта Российской Федерации или Российской Федерации (пункт 2). Той же статьей, установлена также ответственность, которая может состоять в изменении должностного или служебного положения гражданского служащего, являющегося стороной конфликта интересов, вплоть до его отстранения от исполнения должностных (служебных) обязанностей в установленном порядке и (или) в его отказе от выгоды, явившейся причиной его возникновения. При этом, непринятие гражданским служащим мер по предотвращению или урегулированию конфликта интересов является правонарушением, влекущим его увольнение с гражданской службы, за исключением случаев, установленных федеральными законами.

Здесь отсылка к иным случаям, установленным федеральными законами, отражает стремление законодателя к дифференциации ответственности в зависимости от степени общественной опасности и тяжести последствий совершенного деяния при наличии конфликта интересов. Безусловное увольнение в связи с утратой доверия правомерно замещается альтернативными дисциплинарными взысканиями (замечание, выговор) в случае малозначительности проступка, либо влечет полное освобождение от ответственности, если надлежащему урегулированию конфликта интересов препятствовали юридически верифицированные обстоятельства непреодолимой силы. Это свидетельствует об отходе российской правовой доктрины от слепого карательного автоматизма в пользу принципов справедливости и соразмерности наказания.

Конституционный Суд Российской Федерации в постановлении от 26 декабря 2025 года №51-П по делу о проверке конституционности статьи 10, частей 1, 2, 4-6 статьи 1, части 4.1 статьи 12.1 и пункта 1 части 1 статьи 13.1 Федерального закона «О противодействии коррупции», части 10 статьи 29 Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в единой системе публичной власти», а также части 1 статьи 34, статьи 35 и части 7.1 статьи 40 Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» в связи с запросом законодательного собрания Челябинской области указал: «Как следует из ряда положений о комиссиях по соблюдению требований к служебному поведению или урегулированию конфликта интересов различных государственных органов, комиссия может в том числе признать отсутствие конфликта интересов; признать, что личная заинтересованность приводит или может привести к конфликту интересов, и рекомендовать принять меры по урегулированию конфликта интересов или по недопущению его возникновения; признать несоблюдение требования об урегулировании

конфликта интересов и рекомендовать указать лицу на недопустимость несоблюдения требований об урегулировании конфликта интересов либо применить конкретную меру ответственности. Тем самым законодательство устанавливает неисчерпывающий перечень принимаемых в целях предотвращения или урегулирования конфликта интересов мер, что позволяет учесть специфику конкретной ситуации, особенности замещаемой лицом публичной должности и другие значимые обстоятельства. Однако их непринятие во всяком случае является коррупционным правонарушением, влекущим увольнение лица, замещающего публично значимую должность, в соответствии с законодательством Российской Федерации, за исключением случаев, предусмотренных законом»[17].

Исследование правовой природы конфликта интересов, закрепленного в статье 10 ФЗ-№273, обнаруживает его глубокие международно-правовые корни, детерминированные эволюцией стандартов ООН в сфере публичного управления.

Первые нормативные контуры пресечения личной заинтересованности должностных лиц были обозначены в Кодексе поведения должностных лиц по поддержанию правопорядка ООН 1979 года, затем частично были воспроизведены в Справочном документе Секретариата ООН 1995 года. Далее эта превентивная идея нашла отражение в Разделе II «Коллизии интересов и отказ от права» Международного кодекса поведения государственных должностных лиц 1996 года, принятого Генеральной Ассамблеей ООН резолюцией 51/59, где пунктом 4 установлен прямой запрет на использование государственными должностными лицами своего официального положения для неподобающего извлечения личных выгод или личных финансовых выгод для своих семей. Им также не дозволено участвовать в каких-либо сделках, занимать положение, выполнять функции и иметь финансовые, коммерческие или иные аналогичные интересы, которые не совместимы с их должностью, функциями, обязанностями или их отправлением[18]. В последующем институт конфликта интересов трансформировался в обязательный глобальный стандарт в статьях 7 и 8 КПК ООН 2003 года. Здесь необходимо констатировать, что европейский законодатель в Конвенции Совета Европы проигнорировал данный институт, сосредоточившись исключительно на уголовной репрессии.

7. Что касается Армении, то в последние годы здесь была сформулирована совершенно иная концепция антикоррупционной деятельности.

В рамках этой концепции законом от 28 июня 2017 года №ЗР-96 была создана Комиссия по предупреждению коррупции (далее – Комиссия), которая является автономным, независимым органом, напрямую не относится ни к одной ветви власти и, в принципе, выполняет контрольно-предупредительные функции, такие как утверждение формы деклараций должностных лиц и их анализ, контроль за соблюдением правил этики, нарушениями режима ограничений и запретов, в том числе недопущения конфликта интересов, применение дисциплинарных мер или, как крайняя мера, передача материалов в Прокуратуру.

Комиссия подотчетна Национальному Собранию Республики Армения, перед которым

[17] Постановление Конституционного Суда Российской Федерации от 26 декабря 2025 года №51-П по делу о проверке конституционности статьи 10, частей 1,2.4-6 статьи 1, части 4.1 статьи 12.1 и пункта 1 части 1 статьи 13.1 Федерального закона «О противодействии коррупции», части 10 статьи 29 Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в единой системе публичной власти», а также части 1 статьи 34, статьи 35 и части 7.1 статьи 40 Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» в связи с запросом законодательного собрания Челябинской области//СПС «Консультант плюс»
[18] un.org/ru\documents/decl_conv/conventions/int_code_of_conduct.shtml

отчитывается о проделанной работе и которое назначает его членов[19].

Кроме этого, Законом Республики Армения от 17 апреля 2017 года №ЗР-147 был создан антикоррупционный комитет, который является автономным следственно-оперативным органом, и в соответствии с частью 1 статьи 4 организует и осуществляет досудебное уголовное производство по предполагаемым коррупционным преступлениям, отнесенным к его юрисдикции Уголовно-процессуальным кодексом Республики Армения[20].

В 2021-2022 годах были внесены изменения в Судебный кодекс Республики Армения от 07 февраля 2018 года. В судебной иерархии появились специализированные антикоррупционные суды первой, апелляционной и кассационной инстанций (соответственно подпункт 4) пункта 2 статьи 2, подпункт 4) пункта 1 статьи 28, подпункт 4) пункта 2 статьи 30), которым стали подсудны исключительно уголовные преступления коррупционной направленности[21].

Здесь следует отметить, что при совокупности преступлений безусловный приоритет отдается антикоррупционным органам специальной юрисдикции. Если в структуре вменяемой множественности преступлений присутствует хотя бы одно, которое является коррупционной направленности, досудебная и судебная юрисдикция по всем уголовным делом переходит к Антикоррупционному комитету и далее к Антикоррупционному суду, что, по мнению авторов, является гарантией комплексного и независимого исследования должностных злоупотреблений.

Создание и функционирование специализированной вертикали антикоррупционных судов Республики Армения, естественно, требовало своего материально-правового отражения в нормах Уголовного кодекса, который был принят в 2021 году. Приложением №1 к УК РА (далее – Приложение №1) установлен перечень коррупционных преступлений (всего 40 составов), совершение которых согласно статье 260 Уголовно-процессуального кодекса Республики Армения подсудно антикоррупционным судам первой инстанции и далее по вертикали-антикоррупционному апелляционному и кассационному судам[22].

Следует отметить, что в теории права и, особенно уголовного, юридическая сила и безупречность принятия любого кодифицированного правового акта детерминированы не только политической волей законодателя, но и строгим соблюдением процессуального порядка.

Кроме этого, применимо к Приложению №1 содержание деликтов, обособленных в нем, по своему содержанию должно отвечать критерию соответствия фундаментальной концепции коррупции.

Однако, несмотря на институциональную реформу, проведенную в Республике Армения, детальный анализ нормативной базы указывает на глубокое противоречие, ставящее под сомнение ее продуктивность и тем более прогрессивность. С нашей точки зрения ключевой дефект материально-правового регулирования заключается в том, что при наличии, как кажется, исчерпывающего перечня деликтов, установленных в Приложении №1, в праве государства отсутствует легальное, законодательно установленное базовое определение понятия «коррупция». Отсюда возникает естественный вопрос: какие элементы структуры этих преступлений (субъект, объект, субъективная сторона, объективная сторона) по мнению армянского законодателя, какие характерные, отличительные признаки, свойства или каче-

[19] Закон Республики Армения «О комиссии по предупреждению коррупции»//СПС «Арлис».
[20] Закон Республики Армения «Об антикоррупционном комитете»//СПС «Арлис».
[21] Судебный кодекс Республики Армения//СПС «Арлис».
[22] Уголовный кодекс Республики Армения, Уголовно-процессуальный кодекс Республики Армения//СПС «Арлис».

ства выражают коррупционность данных преступлений и в чем заключается их идентичность, исходя из которой они внесены в общий перечень?

Вместе с тем, в теории права и законодательной технике конструирование специального реестра преступлений в отрыве от дескриптивной дефиниции родового понятия считается дефектом нормотворчества. В отсутствие легального критерия «коррупционности» не считаем возможным верифицировать и признать доктринально легитимным отнесение конкретных составов преступлений, перечисленных в Приложении №1, именно к коррупционным деяниям. С юридической точки зрения, данный нормативный вакуум влечет за собой кризис легитимности всей антикоррупционной вертикали.

Приложение №1, лишенное понятийно-дефинитивного фундамента, фактически утрачивает свою материальную правовую силу и не может повлечь за собой предусмотренные законом правовые последствия, так как законодатель предлагает правоприменителю перечень элементов, не определив саму сущность системы, к которой они относятся. Законодательная неопределенность границ самого понятия «коррупция» девальвирует и размывает первоначальный государственно-правовой смысл образования всей специализированной триады органов (Комиссии по предотвращению коррупции, Антикоррупционного комитета и Антикоррупционных судов). Изменение ординарной подследственности и подсудности дел в пользу специализированных институтов (особенно при поглощении смежных составов совокупности преступлений) лишается законных оснований, превращаясь в дискреционный правоприменительный произвол.

Справедливости ради необходимо отметить, что, конструируя материальный реестр преступлений коррупционной направленности, армянский законодатель, в отсутствие легальной дефиниции родового понятия, скажем так, латентно следовал логике фундаментальных актов международного права. Действительно, ни Конвенция Совета Европы об уголовной ответственности за коррупцию 1999 года, ни Конвенция ООН против коррупции 2003 года не содержат универсального определения «коррупции» и ограничиваются перечислением конкретных составов преступлений, которые, по их мнению, признаются коррупционными. Однако данное обстоятельство не может служить полноценным оправданием дефектов национальной нормотворческой деятельности.

Во-первых, международные договоры преследуют цели глобального компромисса и оперируют лаконичными каталогами, тогда как объем уголовных деликтов в Приложении №1 более чем в два раза превышает перечни, предложенные Советом Европы и ООН (Армения – 40; СЕ – 13; ООН – 17), что свидетельствует об искусственном расширении границ уголовной репрессии на национальном уровне;

Во-вторых, ни в самом Уголовном кодексе, ни в приложениях к нему нет ни единой ссылки на упомянутые международные конвенции, которая юридически или хотя бы логически обосновывала рецепцию такого методологического подхода.

Следовательно, в контексте верификации законности правовой системы Армении ссылки на международный опыт не играет решающей роли. Международные конвенции выступают лишь рекомендательным ориентиром, но они не способны восполнить дефицит легитимности и подменить собой обязательное требование национальной процедуры о необходимости наличия базового закона.

В-третьих, все преступления, указанные в Конвенциях как коррупционные, объединены совершенно идентичными элементами – прямым умыслом, корыстным мотивом, субъектом,

целью, что нельзя сказать о преступлениях в Приложении №1, где определены и совмещены деликты, может и идентичные по умыслу, однако различные как по мотиву, так и по субъектам.

Включение в Приложение № 1 общекриминальных составов без четкой привязки к коррупционному мотиву снижает эффективность проведенной реформы. Ряд статей, зафиксированных в перечне, по своей правовой природе не является изначально коррупционным. Эти преступления могут совершаться вне рамок коррупционных сделок, на основе личного эгоизма, корысти, некомпетентности или желания скрыть иные правонарушения.

Вызывает сомнение коррупционность таких преступлений против конституционных прав и свобод граждан (глава 28 УК РА), как получение избирательной взятки (статья 218), дача избирательной взятки (статья 219) посредничество в предвыборной взятке (статья 220), нарушение запрета на благотворительность во время референдума или выборов (статья 221), непроизведение установленных законом расходов на предвыборную пропаганду во время выборов в Национальное собрание из предвыборного фонда или непроизведение расходов на пропаганду по референдуму из фонда финансирования пропаганды по референдуму или недекларирование данных, подлежащих декларированию, или непредставление декларации (статья 221.1), привлечение в пользу партии незаконного пожертвования в крупном размере (статья 231), запрет на превышение установленного законом размера пожертвования партии или обход запрета на пожертвования из недопустимых законом источников в крупных размерах (статья 232).

Так, анализ статей 218, 219, 220 УК РА выявляет глубокое системное противоречие в их материально-правовой оценке. Включение этих составов в Приложение № 1 к УК РА (каталог коррупционных преступлений) является, на наш взгляд, грубой технико-юридической ошибкой, поскольку по своей правовой природе эти деликты относятся к категории общеуголовных посягательств на конституционные права граждан, а не к коррупции.

Главный доктринальный признак любого публичного коррупционного деяния – это наличие специального субъекта, а именно, должностного лица (лица, наделенного властными полномочиями или выполняющего управленческие функции), которое разменивает свой официальный статус на материальные или нематериальные блага. В то время как субъектом преступления, предусмотренного статьей 218 УК РА выступает обычный гражданин-избиратель (физическое вменяемое лицо, достигшее возраста уголовной ответственности). Избиратель не наделен никакими государственно-властными или распорядительными полномочиями. Он распоряжается своим личным конституционным правом голоса. Субъектом статьи 219 УК РА может быть любой рядовой гражданин, представитель предвыборного штаба или кандидат. Поскольку в диспозиции статей 218-220 УК РА субъекты не обладают и не обязаны обладать статусом должностного лица, данные преступления априори выпадают из классической парадигмы коррупции. Приравнивание обычного гражданина, продающего свой голос, к коррумпированному чиновнику разрушает саму концепцию должностных и коррупционных деликтов.

Кроме этого, родовым объектом коррупционных преступлений всегда является нормальная, законная деятельность государственного аппарата или интересы службы в коммерческих организациях, в то время как родовой объект избирательной взятки – это избирательные права граждан и конституционный порядок формирования органов государственной власти. Это сфера политических отношений, а не злоупотребление служебным положением в

бюрократическом аппарате.

Здесь можно предположить, что термин «взятка» применительно к избирательному процессу используется законодателем как юридическая метафора, а не как строгий уголовно-правовой термин.

В классической коррупционной сделке (например, ст. 435, 436 УК РА) должностное лицо получает благо за конкретное действие или бездействие по службе, при этом в рамках своих полномочий.

В статьях 218-220 УК РА благо передается за реализацию (или отказ от реализации) личного конституционного права. Гражданин на избирательном участке действует не как агент государства, а как суверенная личность. Совершаемое им деяние является формой политического подкупа, и ни в коем случае не коррупцией.

Проведенный обособленный анализ преступлений против избирательных прав граждан и порядка проведения референдумов (выборов) позволяет сделать фундаментальный теоретический вывод об их концептуальной несовместимости с материальным содержанием коррупции. Все без исключения посягательства, направленные против электорального процесса, объединены единой деструктивной целью – подорвать нормальный ход демократического волеизъявления путем различного рода фальсификаций, незаконного финансирования или иных противоправных действий. Однако данная имманентная вредоносность носит сугубо политический характер, что исключает возможность их криминализации в качестве коррупционных актов.

Ключевой доктринальный аргумент против признания электоральных деликтов коррупционными лежит в плоскости анализа их объективной стороны и субъектного состава. Данные преступления не обязательно совершаются должностными лицами или лицами, наделенными властными полномочиями. В своей основе они конструируются как общеуголовные составы с общим субъектом.

В правовой ткани этих норм отсутствует главный элемент публичной коррупции – зависимость решения тех или иных вопросов «просителя» от действий должностного лица в рамках его официальной компетенции. Рядовой гражданин, фальсифицирующий избирательный бюллетень, или кандидат, нарушающий запрет на благотворительность, не разменивают наднациональный или государственный властный ресурс и не действуют как агенты бюрократического аппарата. Они преследуют цель деформации политического процесса, а не извлечения взаимной выгоды.

Следовательно, включение всей группы электоральных преступлений в Приложение №1 лишает данный нормативный перечень научной обоснованности. Попытка законодателя искусственно приравнять посягательства на конституционный строй к должностному мздоимству размывает границы антикоррупционной юрисдикции и превращает Приложение №1 в эклектический реестр, не имеющий подлинной юридической силы, что девальвирует саму идею специализации в Антикоррупционном комитете и Антикоррупционных судах.

Логическая асимметрия нормотворчества отечественного законодателя проявляется в избирательном подходе к формированию Приложения №1.

В антикоррупционный каталог включены преступления, предусмотренные статьями 218-221, 221.1, 231, 232 УК РА, но при этом за его пределами остались преступления, предусмотренные статьями 215 (нарушение тайны голосования), 216 (изготовление подложных избирательных бюллетеней для голосования или конвертов для голосования, марок, отрывных корешков или

выдача, или реализация заведомо подложных избирательных бюллетеней для голосования или конвертов для голосования, марок, отрывных корешков), 217 (похищение предметов, необходимых для надлежащей организации избирательного процесса).

Подобная селекция деликтов лишена всяких научно-правовых оснований, поскольку исключенные составы (ст. 215-217) абсолютно идентичны включенным (218-221, 221.1, 231, 232) как по родовому, так и по видовому объектам посягательства-все они защищают человека и, конкретно, его конституционные права. Более того, они не имеют содержательных отличий по элементам состава, которые могли бы оправдать их разделение: во всех этих нормах отсутствует обязательный специальный субъект – должностное лицо, а объективная сторона не описывает классическую коррупционную сделку.

Наряду с этим, выявленные изъяны нормативного конструирования Приложения №1 не исчерпываются искусственным отнесением к коррупции посягательств на институты электоральной демократии. Демонстрируя системную непоследовательность, национальный законодатель расширил границы антикоррупционной юрисдикции такими преступлениями как мошенничество (часть 2 пункт 2 статьи 255) и вымогательство (часть 2 пункт 9 статьи 258), если они совершены с использованием властных и или служебных полномочий, или обусловленного им воздействия (квалифицированный состав). Однако механическое добавление должностного признака не способны изменить их родовую принадлежность.

В системе уголовного права разграничения деликтов проводится, прежде всего, по охраняемым общественным отношениям. Обнаруженное здесь несоответствие носит фундаментальный характер.

Родовым и видовым объектом мошенничества и вымогательства выступают отношения собственности. Общественная опасность этих преступлений заключается в противоправном, корыстном перераспределении чужого имущества в пользу преступника, в данном случае в пользу мошенника или вымогателя. Права собственности здесь защищаются независимо от статуса посягающего лица.

Для коррупционных преступлений родовым/видовым объектом, как это было неоднократно сказано выше, выступают: государственная власть, интересы государственной, публичной службы или нормальное функционирование бюрократического (либо коммерческого) аппарата.

Служебные полномочия или должностной статус в квалифицированных составах мошенничества и вымогательства играют роль исключительно факультативного признака, то есть от изменения субъекта этих преступлений сама их сущность не изменяется. Кабинет чиновника или его форменная одежда здесь выступают лишь в качестве «инструмента» (по аналогии отмычка или оружие в воровстве или грабеже, разбое), облегчающего доступ к имуществу жертвы или подавляющего ее волю, но ни в коем случае не превращают посягательство на собственность в должностную коррупцию.

Таким образом, квалифицированные составы мошенничества и вымогательства по своему объекту, субъективной стороне и волевому механизму остаются классическими общеуголовными корыстными посягательствами против собственности. Использование властного статуса в данном случае является лишь отягчающим обстоятельством, повышающим общественную опасность хищения, но не наделяет его признаками коррупционного преступления. Искусственная инкорпорация этих статей в Приложение №1 лишена научно-правовых оснований и преследует исключительно цели ложной институциональной загрузки специализированных органов.

Если в вопросе избирательных нарушений законодатель проигнорировал отсутствие должностного субъекта, то в экономическом секторе он допустил иную доктринальную ошибку – подменил подлинный коррупционный синаллагмат ординарными корыстными посягательствами на собственность.

В данном аспекте можно предположить, что столь масштабное искусственное расширение перечня деликтов в Приложении №1 за счет общеуголовных и, в том числе, электоральных составов преследует цель прагматично обосновать создание дорогостоящей инфраструктуры специализированных следственных и судебных органов. В политологии права и критическом анализе государственной политики (Policy Analysis) данный феномен классифицируется как «симуляция антикоррупционной продуктивности»[23].

Данный концептуальный термин в академическом дискурсе благодаря исследованиям эффективности институтов государственного управления в странах с переходной экономикой (в частности, в трудах политологов правоохранительной сферы и аналитиков ГРЕКО)[24] использовался для описания так называемых «бюрократических ловушек», когда новые антикоррупционные ведомства, не имея возможности быстро продемонстрировать успехи в расследовании сложной верхушечной коррупции, вынуждены искусственно расширять свою юрисдикцию[25].

По этой причине исполнительная власть стремится «перезагрузить» новые структуры валовыми показателями смежных, легко раскрываемых экономических, а в нашем случае еще и электоральных преступлений. Тем самым реальное противодействие коррупции подменяется имитацией высокой операционной загруженности правоохранительной и судебной вертикали, призванной оправдать ее содержание перед обществом и международными донорами.

Итак, как было сказано выше, понятие коррупции было определено еще Кодексом поведения должностных лиц по поддержанию правопорядка, принятом на 34-й сессии Генеральной Ассамблеи ООН 17 декабря 1979 года. На основе данного определения законодатель обязан был сформировать легальную дефиницию на уровне национального права, с учетом исторически сложившихся деструктивных практик современной Армении, таких как, к примеру, феномен «бытовой коррупции» и непотизм; правовой нигилизм и деформация правосознания и т.д., без которой практически невозможно определить различие между общеуголовным и коррупционным преступлением.

Что касается права, предоставленного пунктом b) статьи 7 Кодекса, то оно, как кажется, заключалось лишь в конкретном содержании, а не в необходимости формулировании самого понятия коррупции, которое должно иметь на законодательном уровне каждое государство с учетом местных условий, каждое государство, которое действительно одной из основных целей своей деятельности рассматривает борьбу с коррупцией.

8. Вместе с тем, помимо концептуальных противоречий, связанных с перегрузкой антикоррупционного каталога общеуголовными составами, система противодействия

[23] См.: *Mungiu-Pippidi A.* The Quest for Good Governance: How Societies Develop Anti-Corruption Resilience.-Cambridge University Press, 2015.-P.112-118.

[24] См.: Стандарты ОЭСР и ГРЕКО в Восточной Европе: Мониторинг антикоррупционных реформ в Армении. Пятый раунд.-Париж: Антикоррупционная сеть ОЭСР для стран Восточной Европы и Центральной Азии (ACN), 2024.-С.14-19.

[25] См.: *Старцев Я.Ю.* Перспективные повороты в осмыслении феномена коррупции: симуляция статистики и размывание значимости угроз//Актуальные проблемы научного обеспечения противодействия коррупции: сборник трудов международной научно-практической конференции.-Екатеринбург, 2019.-С.42-45.

коррупции в Армении сталкивается с изъянами формально-технического характера.

Юридико-технический анализ структуры УК РА выявляет отсутствие системных связей между самим текстом и его Приложением №1.

В тексте уголовного закона нет ни одной отсылочной нормы, которая бы указывала на наличие подобного Приложения №1 к УК РА и тем самым легитимировала применение этого перечня следственными органами, а конкретнее, антикоррупционным комитетом и соответствующими судами. Столь явный дефект законодательной техники оставляет открытым фундаментальный вопрос: каким образом и на каком нормативном основании данный изолированный список деликтов стал приложением к уголовному кодексу Республики Армения, что существенно подрывает архитектоническую целостность и системность материального уголовного права страны.

Между тем, пункт 9 статьи 13 Закона РА от 21 марта 2018 года «О нормативных правовых актах» напрямую указывает, что «уставы, порядки, перечни, таблицы и прочее, **утверждаемые** нормативно-правовым актом закрепляются в форме приложений, являющихся неотделимой частью нормативно-правового акта. Приложения не имеют юридической силы без данного нормативно-правового акта. Соответствующие положения нормативно-правового акта содержат ссылку на эти статьи.

Из данной правовой нормы следует, что «уставы, порядки, перечни, таблицы и прочее» могут считаться легитимными и подлежат применению правоприменительными органами только при наличии двух условий:

*они должны быть утверждены в основном тексте нормативно-правового акта или акта о введении его в действие;

*в соответствующих статьях нормативно правового акта есть ссылки на положения этих приложений.

Анализ Общей и Особенной частей УК РА, а также Закона РА от 18 июня 2022 года №ЗР-144 «О введении в действие Уголовного кодекса Республики Армения»[26] позволяет утверждать, что в них отсутствуют отсылочные нормы к Приложению №1. В связи с этим, на наш взгляд, этот документ выглядит изолированным чужеродным элементом. В самом кодифицированном акте не прописан сам механизм интеграции, из-за чего остается неясным, на каком законном основании данный перечень вообще имплантирован в структуру уголовного закона и приобрел статус его официального приложения.

Проявление избирательности и внутренней противоречивости законодательной техники УК РА становится еще более очевидным при сравнительном анализе с иными действующими нормативно-правовыми актами.

Прямые нормативные отсылки к приложениям эксплицитно зафиксированы, например, в Законе РА от 12 декабря 2013 года «О заработной плате государственных служащих и лиц, занимающих должности государственных служащих», где ссылки к приложениям имеются в пункте 2 статьи 9 (ссылка на приложение 1), пункте 1 статьи 14.4 (ссылка на приложение 1), пункте 2 статьи 16 (ссылки на приложения 3, 4, 5, 6, 7, 7.1, 8) и т.д.

В данном случае технико-юридическая связь безупречна: бланкетные диспозиции этих статей прямо предписывают совершать определенные действия (расчет должностных ставок,

[26] Закон РА от 18 июня 2022 года №ЗР-144 «О введении в действие Уголовного кодекса Республики Армения»// СПС «Арлис».

вознаграждений) согласно соответствующему приложению.

9. Исследование генезиса и эволюции антикоррупционного инструментария Республики Армения позволяет утверждать, что современные юридико-технические дефекты Приложения №1 имеют глубокие исторические корни. Источником и непосредственным праотцом нынешнего законодательного каталога, по-видимому, выступил перечень коррупционных преступлений, утвержденный приказом Генерального прокурора Республики Армения от 19 ноября 2008 года №82 (9)[27]. В соответствии с данным ведомственным актом, коррупционными признавались всего 31 состав преступлений и в том числе такие, как злостное уклонение от налогов, пошлин и иных платежей (статья 205), злоупотребление служебными полномочиями (статья 308), превышение служебных полномочий (статья 309), незаконное участие в предпринимательской деятельности (статья 310), получение взятки (статья 311), дача взятки (статья 312), посредничество во взятке (статья 313), самовольное присвоение земельных участков, являющихся государственной или общинной собственностью, а также неприменение мер по приостановке, предотвращению самовольного строительства зданий и построек и т.п.[28]

Здесь на первый план выступает фундаментальный и серьезный вопрос государственно-правового характера: как мог статус уголовно-наказуемых деяний как «коррупционных» определяться не законом, а подзаконным ведомственным актом-приказом генпрокурора? Насколько легитимна и правомерна подобная квалификация преступлений правоохранительным органом?

С точки зрения общей теории права и конституционных стандартов ответ на этот вопрос носит однозначно отрицательный характер. Подобный порядок ведомственного нормотворчества страдает дефицитом легитимности в силу трех ключевых правовых факторов:

1. Нарушение принципа законности (Nullum crimen sine lege).

Согласно Конституции Республики Армения и фундаментальным догмам уголовного права, преступность деяния, его классификация, квалифицирующие признаки, правовые последствия и категория могут определятся исключительно законом, принятым высшим законодательным (представительным) органом власти. Делегирование полномочий по содержательному определению правовой природы преступлений главе исполнительного, правоохранительного ведомства прямо подрывает этот материальный принцип и может быть квалифицирован как правовой произвол.

2. Выход за рамки конституционной компетенции прокуратуры.

В соответствии с пунктом 1 статьи 176 Конституции Республики Армения, Прокуратура является единой системой, которой руководит Генеральный прокурор[29].

Органы прокуратуры, являясь институтами правоприменения, осуществляют функции надзора и государственного обвинения, но не наделены законодательными функциями. Издавая приказ №82 (9), Генеральный прокурор де-факто осуществил нормотворческую экспансию в сферу материального уголовного права, присвоив себе исключительную дискрецию по определению содержания и природы преступления, категории преступных деяний.

3. Искусственное конструирование процессуальных последствий.

[27] Камышанский Д.Ю. Уголовно-правовые меры противодействия коррупции в Республике Армения//Образование и право №6, 2009, с.134-138.

[28] В данном случае автор ссылается на нормы утратившего силу Уголовного кодекса Республики Армения.

[29] Конституция Республики Армения//СПС «Арлис».

Хотя приказ позиционировался как внутренний документ, необходимый для упорядочения статистического учета, отнесение преступления к категории коррупционных неизбежно имело серьезные материальные и процессуальные последствия – повышенную общественную опасность и, исходя из этого, специфику применения мер пресечения и особый режим оперативно-розыскных мероприятий.

Таким образом, ретроспективный анализ убедительно доказывает, что антикоррупционная политика Армении изначально развивалась в рамках дефектной парадигмы, где правовой статус ключевых институтов определялся методами административно-ведомственного диктата. Тот факт, что с 2008 года по 2017 год (приказ признан утратившим силу) квалификация деяний как коррупционных базировалась на нелегитимном с конституционной точки зрения, приказе прокурора, предопределил современную технико-юридическую проблему в виде Приложения №1.

Заключение

10. Исходя из вышеизложенного, считаем целесообразным в ближайшее время разработать и принять соответствующий Закон Республики Армения «О противодействии коррупции». Этот базовый комплексный нормативный акт призван устранить дефицит легитимности и восстановить верховенство права посредством реализации следующих ключевых шагов:

1. Нормативная детерминация понятийного аппарата.

В структуре Закона необходимо зафиксировать четкие, научно обоснованные и аутентичные международным конвенциям легальные дефиниции понятий **«коррупция»** и **«противодействие коррупции»**. Именно этот понятийно-дефинитивный фундамент позволит в дальнейшем провести необходимую ревизию материального уголовного права и признать легитимным отнесение конкретных деликтов к коррупционной категории.

2. Институционализация многоаспектной превенции.

Новый закон должен наряду с карательной государственной политикой предусмотреть вопросы предупреждения коррупционных проявлений, закрепив целостную систему комплексных профилактических мер во всех сферах публичного и частного сектора.

Только через выстраивание строгой иерархической связи между базовым превентивным законом, четко определяющим существо коррупции, и уголовно-правовым каталогом преступлений антикоррупционная система может обрести подлинную правовую силу, автономию и социальную эффективность, превратившись из конъюнктурного инструмента статистического учета в действенный механизм защиты основ правового государства.

Аннотация. Статья посвящена критическому сравнительному и технико-юридическому анализу антикоррупционного законодательства Российской Федерации и Республики Армения.

Автор исследует эволюцию международно-правовых стандартов от ранних документов ООН и Конвенции Совета Европы 1999 г. до Конвенции ООН 2003 г., выявляя различие императивного и диспозитивного подходов к криминализации.

Основное внимание уделено критическому разбору Приложения № 1 к Уголовному кодексу Республики Армения 2021 г. Делается попытка доказать, что в условиях отсутствия легального базового определения понятия «коррупция» инкорпорация в указанное Приложение №1 общеуголовных деликтов против собственности (мошенничество, вымогательство) является дефектом правотворчества, направленным на

«симуляцию антикоррупционной продуктивности» и искусственную загрузку специализированных судов. Выявлены дефекты в самом построении УК РА, выразившиеся в отсутствии отсылочных норм к Приложению № 1.

В качестве решения доктринального тупика обосновывается необходимость принятия комплексного базового Закона РА «О противодействии коррупции».

Ամփոփագիր: Սույն գիտական հոդվածը նվիրված է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն օրենսդրության համեմատական և իրավական կարգավորման վերլուծությանը:

Հեղինակը հետազոտել է միջազգային իրավական ստանդարտների զարգացումը՝ սկսած ՄԱԿ-ի վաղ շրջանի փաստաթղթերից և Եվրոպայի խորհրդի 1999 թվականի կոնվենցիայից մինչև ՄԱԿ-ի 2003 թվականի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան՝ փորձելով բացահայտել կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քրեականացման իմպերատիվ և դիսպոզիտիվ մոտեցումների միջև առկա տարբերությունները:

Հոդվածում հիմնական ուշադրությունը կենտրոնացված է Հայաստանի Հանրապետության 2021 թվականի քրեական օրենսգրքի Հավելված 1-ի քննադատական վերլուծության վրա: Հեղինակը փորձ է անում հիմնավորել, որ կոռուպցիայի լեգալ սահմանման բացակայության պայմաններում ընդհանուր քրեական հանցագործությունների՝ մասնավորապես խարդախության և շորթման, ներառումը նշված Հավելվածում իրավաստեղծ գործունեության թերություն է: Հեղինակի գնահատմամբ՝ այդ մոտեցումը նպաստում է «հակակոռուպցիոն գործունեության սիմուլյացիային» և հանգեցնում մասնագիտացված դատարանների արհեստական ծանրաբեռնվածության:

Սույն դոկտրինալ փակուղու լուծումը հիմնավորվում է «Կոռուպցիայի հակազդման մասին» համալիր բազային օրենքի ընդունմամբ:

Annotation. The article provides a critical comparative, technical and legal analysis of the anti-corruption legislation of the Russian Federation and the Republic of Armenia.

The author examines the evolution of international legal standards from early UN documents and the 1999 Council of Europe Convention to the 2003 UN Convention, revealing the dichotomy between mandatory and discretionary criminalization approaches.

The primary focus is placed on a critical review of Annex 1 to the Criminal Code of the Republic of Armenia (2021). It is argued that in the absence of a legal basic definition of corruption, the incorporation of ordinary criminal property offenses (such as fraud and extortion) into this Annex constitutes a legislative defect aimed at the «simulation of anti-corruption productivity» and artificial workload generation for specialized courts. Architectural defects within the Criminal Code of Armenia are identified, specifically the complete absence of cross-reference norms to Annex 1.

To resolve this doctrinal deadlock, the author substantiates the urgent need to adopt a comprehensive fundamental law of the Republic of Armenia «On Combating Corruption».

***Ключевые слова**: коррупция, конфликт интересов, Приложение № 1, законодательная техника, антикоррупционный суд, симуляция продуктивности, электоральные преступления.*

Բանալի բառեր - կոռուպցիա, շահերի բախում, Հավելված 1, օրենսդրական տեխնիկա, հակակոռուպցիոն դատարան, «արդյունավետության սիմուլյացիա», էլեկտորալ հանցագործություններ:

***Keywords**: corruption, conflict of interest, Annex 1 to the Criminal Code of Armenia, legislative technique, anti-corruption court, simulation of productivity, electoral offenses.*

СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

I. Международно-правовые акты и официальные документы ООН и Совета Европы

1. Конвенция Организации Объединенных Наций против коррупции: [принята в г. Нью-Йорке 31.10.2003 Резолюцией 58/4 на 51-ом пленарном заседании 58-ой сессии Генеральной Ассамблеи ООН]// СПС «Консультант плюс».

2. Конвенция об уголовной ответственности за коррупцию: [принята в г. Страсбурге 27.01.1999, ETS № 173] // Совет Европы//СПС «Консультант плюс».

3. Международный кодекс поведения государственных должностных лиц: [принят Резолюцией Генеральной Ассамблеи ООН 51/59 от 12.12.1996]//СПС «Консультант плюс».

4. Кодекс поведения должностных лиц по поддержанию правопорядка: [принят Резолюцией Генеральной Ассамблеи ООН 34/169 от 17.12.1979]//СПС «Консультант плюс».

5.Борьба с национальной и транснациональной экономической и организованной преступностью и роль уголовного права в защите окружающей среды: национальный опыт и международное сотрудничество: справочный документ, подготовленный Секретариатом ООН по международной борьбе с коррупцией от 13.04.1995//Девятый Конгресс ООН по предупреждению преступности и обращению с правонарушителями (Каир, 29 апреля – 8 мая 1995 г.). — Doc. A/CONF.169/14.

6. Группа государств против коррупции (ГРЕКО). Пятый раунд оценки: Предотвращение коррупции и содействие добропорядочности в центральных органах исполнительной власти и правоохранительных органах. Оценочный доклад: Республика Армения. — Страсбург: Совет Европы, 2023. — Doc. GRECO Eval V Rep (2023).

II.Нормативно-правовые акты Российской Федерации

7. Федеральный закон «О противодействии коррупции» от 25.12.2008 № 273-ФЗ (в актуальной редакции)//Собрание законодательства Российской Федерации//СПС «Консультант плюс».

8. Федеральный закон «О государственной гражданской службе Российской Федерации» от 27.07.2004 № 79-ФЗ (в актуальной редакции)//Собрание законодательства Российской Федерации//СПС «Консультант плюс».

9. Федеральный закон «О внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации» от 10.07.2023 № 286-ФЗ [об освобождении от ответственности ввиду обстоятельств непреодолимой силы]//Собрание законодательства Российской Федерации//СПС «Консультант плюс».

10. Постановление Конституционного Суда Российской Федерации от 26 декабря 2025 года №51-П по делу о проверке конституционности статьи 10, частей 1,2.4-6 статьи 1, части 4.1 статьи 12.1 и пункта 1 части 1 статьи 13.1 Федерального закона «О противодействии коррупции», части 10 статьи 29 Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в единой системе публичной власти», а также части 1 статьи 34, статьи 35 и части 7.1 статьи 40 Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» в связи с запросом законодательного собрания Челябинской области//СПС «Консультант плюс»

III Нормативно-правовые акты Республики Армения

11. Конституция Республики Армения//СПС «Арлис».

12. Конституционный закон Республики Армения «О судебном кодексе Республики Армения// Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

13. Конституционный закон Республики Армения «О нормативных правовых актах» от 21.03.2018 № ЗР-180 // Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

14. Уголовный кодекс Республики Армения от 05.05.2021 [вступил в силу 01.07.2022] // Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

15. Уголовно-процессуальный кодекс Республики Армения// Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

16. Закон Республики Армения «О введении в действие Уголовного кодекса Республики Армения» от 09.06.2022 № ЗР-144 //Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

17. Закон Республики Армения «Об общественной службе» от 23.03.2018 № ЗР-206//Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

18. Закон Республики Армения «О комиссии по предупреждению коррупции»// Официальные ведомости Республики Армения.

19. Закон Республики Армения «Об антикоррупционном комитете»// Официальные ведомости Республики Армения//СПС «Арлис».

20. Уголовный кодекс Республики Армения 2003 года [утратил силу].

21. Приказ Генерального прокурора Республики Армения «Об утверждении перечня коррупционных преступлений» от 19.11.2008 № 82 (9) [утратил силу].

IV. Научная литература и монографии

22. Гоббс Т. Левиафан. М., 1936.

23. Камышанский Д.Ю. Уголовно-правовые меры противодействия коррупции в Республике Армения// Образование и право №6, 2009.

24. Кошелев С.В. «Понятие коррупции в международном праве»/Журнал «Вестник Волгоградской Академии МВД России, 2012.

25. Криминология: Учеб. для юрид вузов/под общей ред. А.И. Долговой. М., 1997.

26. Лунеев В.В. Коррупция в России//Государство и право. 2007. №11.

27. Мхитар Гош. Армянский судебник-Ереван, 1954.

28. Петрович А.И., Бобровская Н.О. Коррупция: криминологические и уголовно-правовые аспекты. Учебно-методическое пособие. Минск 2009.

29. Римское право: понятие, термины, определения: [Пер. с чеш.]/Милан Бартошек; [Спец науч. Ред., авт. Предисл. И коммент. З.М. Черниловский]. М.: Юрид. лит., 1989.

30. Смбат Спарапет. Судебник. Ереван, 1954.

31. Старцев Я.Ю. Перспективные повороты в осмыслении феномена коррупции: симуляция статистики и размывание значимости угроз // Актуальные проблемы научного обеспечения противодействия коррупции: сборник трудов международной научно-практической конференции. — Екатеринбург, 2019.

32. Фиалковская И.Д. Противодействие коррупции как цель контрольно-надзорной деятельности в государственном управлении: зарубежный опыт//Материалы Всероссийской научно-практической конференции «Актуальные вопросы контроля и надзора в социально-значимых сферах деятельности общества и государства». Н. Новгород, 2015.

33. Цагикян С.Ш. Противодействие коррупции в Армении. СПб.: Антарес, 2008.

34. *Mungiu-Pippidi A*. The Quest for Good Governance: How Societies Develop Anti-Corruption Resilience / A. Mungiu-Pippidi. — Cambridge : Cambridge University Press, 2015. — 286 p. [Анализ концепции Simulated Anti-Corruption Reforms].

Туманян А. - кандидат юридических наук, эл. почта: tumanarmen@gmail.com.

Статья представлена в редакцию 03.06.2026 г., отправлена на рецензию 03.06.2026 г., рецензенты: кандидат юридических наук В. Симонян, принята к публикации: 02.07.2026.

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-94

ԱԼԻՍԱ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ALISA AMIRKHANYAN
Senior Prosecutor at the Department of Organizational, Supervisory and Legal Support Affairs of the Prosecutor General's Office of the Republic of Armenia
Applicant at the Chair of Criminal Law of Yerevan State University

АЛИСА АМИРХАНЯН
Старший прокурор Управления организационно-контрольного и правового обеспечения Генеральной прокуратуры Республики Армения, соискатель кафедры уголовного права Ереванского государственного университета
https://orcid.org/0009-0003-7169-9701

ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳՐԱՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏ

THE RELATIONSHIP BETWEEN ILLEGAL ENRICHMENT AND THE CONFISCATION OF CRIMINALLY ACQUIRED PROPERTY

СООТНОШЕНИЕ НЕЗАКОННОГО ОБОГАЩЕНИЯ И ИНСТИТУТА КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА, ПРИОБРЕТЁННОГО ПРЕСТУПНЫМ ПУТЁМ

Ներածություն

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավումը կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի առանցքային իրավական գործիքներից է: Այն հնարավորություն է տալիս պետությանը վերադարձնելու հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքը կամ այլ նյութական օգուտը՝ նպաստելով սոցիալական արդարության վերականգնմանը, սոցիալական բևեռացման նվազեցմանը և իրավապահ ու արդարադատության համակարգերի նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Գույքի բռնագրավման ինստիտուտը քրեաիրավական կարգավորման տիրույթում ժամանակի ընթացքում ենթարկվել է էական զարգացումների: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին իրավական համակարգում ներդրվել են քրեական վարույթից դուրս գործող՝ քաղա-

քացիաիրավական կառուցակարգեր, որոնք ուղղված են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը:

Սույն հոդվածում իրականացվում է գույքի բռնագրավման ինստիտուտի էվոլյուցիայի և դրա արդի դրսևորումների համալիր վերլուծություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով քրեաիրավական կարգավորման շրջանակում դրա զարգացման առանձնահատկություններին, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական կառուցակարգի հետ դրա հարաբերակցությանը՝ ապօրինի հարստացման հանցանքի համատեքստում:

Վերլուծության արդյունքում, ի թիվս այլնի, բացահայտվում են նշված ինստիտուտների սահմանազատման հիմնական չափանիշները՝ ցույց տալով, որ քաղաքացիաիրավական բռնագանձման կառուցակարգը, պահպանելով սեփականության իրավունքի սահմանադրական երաշխիքները, գործնականում լրացնում է քրեաիրավական մեխանիզմի սահմանափակումները և որոշ դեպքերում ապահովում է ապօրինի հարստացման դեմ պայքարի առավել բարձր արդյունավետություն:

Հիմնական հետազոտություն

Միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերում, ինչպիսին են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» կոնվենցիան, ԵՄ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Վարշավայի կոնվենցիան, Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱԹՖ) հանձնարարականները սահմանում են հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման կառուցակարգեր: Նշված փաստաթղթերը նախատեսում են գույքի բռնագրավման իրականացում ինչպես քրեական վարույթի շրջանակում՝ անձի դատապարտման հիման վրա, այնպես էլ առանց դատապարտման, որը պայմանավորված է հանցավոր եկամուտների հայտնաբերման և վերադարձման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

Ըստ այդմ, առանձնացվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման երկու հիմնական տեսակ՝ դատապարտման վրա հիմնված գույքի բռնագրավում և դատապարտման վրա չհիմնված գույքի բռնագրավում[1]:

Դատապարտման վրա հիմնված գույքի բռնագրավումը երբեմն անվանվում է նաև քրեական բռնագրավում: Այն այնպիսի հանցագործությունից ստացված գույքի (եկամտի) բռնագրավումն է հօգուտ պետության, որի կատարման մեջ անձը ճանաչվել է մեղավոր և դատապարտվել է: Ըստ այդմ, դատապարտման վրա հիմնված գույքի բռնագրավման իրավական հիմքը դատարանի կողմից կայացված մեղադրական դատավճիռն է:

Դատապարտման վրա հիմնված գույքի բռնագրավման ինստիտուտը ՀՀ իրավական համակարգում զարգացել է փուլային կերպով՝ արտացոլելով օրենսդրի մոտեցումների փոփոխությունը դրա իրավական բնույթի և նպատակների վերաբերյալ:

Սկզբնական փուլում՝ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում, հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման վերաբերյալ դրույթները ներառված էին գույքի բռնագրավում պատժատեսակի կարգավորման շրջանակում: Մասնավորապես, համա-

[1] Տե՛ս UNODC E4J University Module Series: Organized Crime, Module 10: Sentencing and Confiscation in Organized Crime Module 10: Sentencing and Confiscation in Organized Crime.

պատասխան դրույթները նախատեսված էին օրենսգրքի 55-րդ հոդվածում՝ առանց հստակ տարանջատելու գույքի բռնագրավումը՝ որպես պատժատեսակ և հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավումը՝ որպես ինքնուրույն քրեաիրավական միջոց:

Սակայն, նշված երկու ինստիտուտներն իրենց իրավական բնույթով, խնդիրներով ու նպատակներով էապես տարբեր են, որը հետագայում արձանագրվել է նաև դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի ՍԴՈ-983 որոշմամբ ընդգծել է, որ գույքի բռնագրավում պատժատեսակ և հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավումն ունեն տարբեր օբյեկտներ և տարբեր իրավական նպատակներ: Առաջինի դեպքում բռնագրավման օբյեկտը դատապարտյալի օրինական գույքն է, և այն ծառայում է պատժիչ ու կանխարգելիչ նպատակների իրականացմանը՝ հանդիսանալով քրեական պատասխանատվության միջոց: Մինչդեռ երկրորդի պարագայում խոսքը վերաբերում է հանցագործության արդյունքում ստացված գույքին, որը ենթակա է պարտադիր բռնագրավման՝ անկախ հանցագործության ծանրությունից և ուղղված է հանցավոր ճանապարհով ստացված գույքը տնտեսական շրջանառությունից դուրս բերելուն[2]:

Այսպիսով, եթե գույքի բռնագրավումը՝ որպես պատժատեսակ, կապված է անձի նկատմամբ քրեական պատժի կիրառման հետ, ապա հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավումն ունի առավելապես վերականգնողական (restorative) և կանխարգելիչ բնույթ՝ նպատակ ունենալով վերացնել հանցագործության տնտեսական հետևանքները՝ անկախ պատժիչ ազդեցությունից:

Նշված տարբերակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2014 թվականին օրենսդրական փոփոխություններով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց 103.1 հոդվածով («Բռնագանձում»), որով հստակեցվեց հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավման ինստիտուտի բովանդակությունը և կիրառման շրջանակը: Թեև օգտագործվեց «բռնագանձում» տերմինը, դրա բովանդակությունը վերաբերում էր հենց հանցագործության արդյունքում առաջացած կամ ստացված գույքի, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների և այլ օգուտների բռնագրավմանը, իսկ եզրութաբանական փոփոխությունը նպատակ ուներ գույքի բռնագրավում պատժատեսակի գործողության պայմաններում առավել ընդգծել այս երկու ինստիտուտների տարբերությունը:

Հետագա զարգացմամբ, 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավումն առանձնացվեց որպես ինքնուրույն քրեաիրավական միջոց և կարգավորվեց անվտանգության միջոցների շրջանակում: Ընդ որում, քրեական նոր օրենսգրքում այս ինստիտուտը վերնագրված է՝ **հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը,** իսկ գործող քրեական օրենսգրքում գույքի բռնագրավումը՝ որպես պատժատեսակ, նախատեսված չէ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «***Հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, հանցագործության առարկան դատարանի կողմից ենթակա են պարտադիր բռնագրավման՝ անհատույց վերցման, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:***

Սա նշանակում է, որ բռնագրավման ենթակա օբյեկտների (առարկաների) շրջանակը

[2] Տես առավել մանրամասն ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի ՍԴՈ-983 որոշման 9-րդ կետ:

սահմանելիս օրենսդիրը ընդլայնել է այն՝ սահմանելով, որ բռնագրավման ենթակա է, ըստ էության, ցանկացած հանցանքի կատարման արդյունքում **ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքը և միջոցը, ինչպես նաև հանցագործության առարկան՝ անկախ այն հանգամանքից՝ տվյալ գույքը, եկամուտը, գործիքը, միջոցը կամ առարկան հանդիսանում է դատապարտյալի (այն անձի, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացիոն հիմքով), թե երրորդ անձի սեփականությունը:**

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման նման օրենսդրական ամրագրումը կարևոր իրավական հիմք է, այդ թվում՝ ապօրինի հարստացման հանցանքի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը և այլ տեսակի օգուտը հօգուտ պետության բռնագրավելու համար: Հաշվի առնելով այն, որ ապօրինի հարստացումը, այսպես կոչված, «ապրելակերպի» հանցանք (lifestyle offence) է, հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ գույքի բռնագրավման առարկա է հանդիսանում ինչպես հանցանքի կատարման արդյունքում ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն ձեռք բերված գույքը և այլ օգուտը: Սակայն, գործնականում, հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված գույքի բռնագրավման կիրառման համար անհրաժեշտ է հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով կատարված հանցանքի մեջ անձի մեղավորության հաստատում, հիշյալ ինստիտուտի կիրառման արդյունավետությունը չի կարող բավարար գնահատվել:

Գիտական գրականության մեջ ևս ընդգծվում է, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի վերադարձման քրեաիրավական մեխանիզմների արդյունավետությունը հաճախ սահմանափակվում է ապացուցողական և գործնական մի շարք դժվարություններով: Մասնավորապես, նշվում է, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտումն ու հետապնդումը կարող են պահանջել բարդ ֆինանսական վերլուծություններ, դժվար ձեռքբերվող ապացույցներ և թանկարժեք տեխնիկական փորձաքննություններ, որոնց իրականացումը բոլոր պետությունների համար հասանելի չէ: Բացի այդ, կոռուպցիոն հանցագործությունների զոհ հանդիսացող հանրությունը շատ դեպքերում տեղեկացված չի լինում կատարվող հանցագործության մասին, իսկ նման հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվություն ունեցող անձինք երբեմն իրենք են ներգրավված լինում հանցավոր գործունեության մեջ կամ կարող են ազդեցության ենթարկվել, ինչն էականորեն բարդացնում է ապացույցների հավաքագրման գործընթացը[3]:

Ինչ վերաբերում է դատապարտման վրա չհիմնված գույքի բռնագրավման հնարավորությանը, ապա մեր օրենսդրությունը նման երկու կառուցակարգ է նախատեսում՝ ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցված քրեական հետապնդման շրջանակում հանցավոր գույքի բռնագրավումը և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը: Այս կառուցակարգերից առաջինը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ *Դատարանի կողմից քրեական հետապնդումը ոչ ռեաբիլիտացիոն հիմքով դադարեցնելն արգելք չէ սույն հոդվածով նախատեսված հանցավոր ծագում ունեցող գույքը, եկամուտը կամ այլ տեսակի օգուտը, հանցագործության գործիքը, միջոցը կամ հանցագործության առարկան*

[3] Տես On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger, p. 5.

բռնագրավելու համար: Իսկ երկրորդ կառուցակարգը մեր իրավական համակարգ ներդրվեց 2020 թվականին՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» 2020 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-240-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագրավման հնարավորություն ընձեռող մեխանիզմների առկայությունը, ինչպես նշվեց վերը, ողջունվում է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայում, ինչպես նաև Վարշավայի կոնվենցիայում, ՖԱԹՖ Հանձնարարականներում, ԵՄ հրահանգներում և մի շարք այլ միջազգային փաստաթղթերում, իսկ նմանօրինակ մեխանիզմներ արդեն ներդրված են բազմաթիվ երկրներում:

Ի տարբերություն դատապարտման վրա հիմնված գույքի բռնագրավման՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգը գործում է քրեական վարույթից դուրս՝ հնարավորություն տալով հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը դուրս բերել տնտեսական շրջանառությունից քաղաքացիական դատավարության կարգով:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման վերը նշված մոդելները՝ իրենց կիրառման առանձնահատկությունների և արդյունավետության գնահատման համատեքստում քննարկման առարկա են դարձել նաև տարբեր հեղինակների կողմից:

Այսպես՝ Ս. Ս. Չերնյավսկին և Ա. Ա. Վոզնյուկը նշում են, որ աշխարհում ամենատարածվածն են դարձել ապօրինի հարստացման դեմ իրավական հակազդեցության երկու մոդելներ՝ անհիմն հարստացման ճանաչումը որպես քրեական հանցագործություն և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելը և այն գույքի բռնագրավումը քաղաքացիական կարգով, որի ծագումը անձը չի կարող բացատրել: Մեծ մասամբ, սա ակտիվների բռնագրավումն է, որը հիմնված չէ մեղադրական դատավճռի վրա, կամ այսպես կոչված քաղաքացիական բռնագրավումը: Այս մոդելներն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ՝ կապված մարդու իրավունքների պահպանման և հնարավոր խախտման, ինչպես նաև ապօրինի հարստացմանը հակազդելու ներուժի հետ[4]:

Օրենքով նախատեսված ընթացակարգով իրականացվող բռնագանձման նպատակների, քրեական դատավարության կարգով հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավման և Օրենքով նախատեսված ընթացակարգի տարբերակման, ինչպես նաև առհասարակ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգի կիրառման առանձնահատկությունների սահմանման առումով ուղենիշային նշանակություն ունի ՀՀ սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-1776 որոշումը (այսուհետ՝ Որոշում):

Հիշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը ձևավորել է անկյունաքարային իրավական դիրքորոշումներ, որոնք որոշիչ նշանակություն ունեն Օրենքով նախատեսված կառուցակարգի կիրառման և հետագա զարգացման համար:

Սույն հոդվածի շրջանակում նպատակահարմար է անդրադառնալ այն հիմնական հարցադրումներին, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգի առանձնահատկությունները և այն տարբերակել ապօրինի հարստացման դեմ պայքարի քրեաիրավական գործիքակազմից:

[4] Տե՛ս Bohdan Bezginskyi "Objective Side of the Composition of the Criminal Offence of Unlawful Enrichment". Law Journal of the National Academy of Internal Affairs, 11(1), p. 56.

Այսպես՝ անդրադառնալով Օրենքով նախատեսված ընթացակարգով իրականացվող գույքի բռնագանձման ինստիտուտի նպատակներին՝ Սահմանադրական դատարանը հստակեցրել է, որ այդ միջամտությունը սեփականության իրավունքին հետապնդում է երկակի նպատակ՝ կոռուպցիայի և հանցավորության դեմ պայքար (Որոշման 10-րդ կետ):

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը Որոշման 161-րդ կետում անդրադարձել է քրեական վարույթի շրջանակներում իրականացվող գույքի բռնագրավման և Օրենքով նախատեսված քաղաքացիաիրավական բռնագանձման միջև առկա սկզբունքային տարբերություններին: Մասնավորապես, դատարանն արձանագրել է, որ քրեական դատավարության շրջանակներում կիրառվող «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական շեմը կիրառելի չէ քաղաքացիական բռնագանձման ընթացակարգի համար:

Այս դիրքորոշման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Օրենքով նախատեսված կառուցակարգի նպատակը հանցավոր վարքագծի հաստատումը չէ, այլ՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը տնտեսական շրջանառությունից դուրս բերելը: Հետևաբար, տվյալ դեպքում բավարար է ոչ թե հանցանքի և գույքի միջև խիստ պատճառահետևանքային կապի ապացուցումը, այլ գույքի ապօրինի ծագման ողջամիտ հավանականության հիմնավորումը:

Այդ համատեքստում Սահմանադրական դատարանը ձևակերպում է կարևոր չափանիշ՝ **քաղաքացիական դատավարության կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար անհրաժեշտ է, որ առկա լինի այնպիսի փաստական համակցություն, որի պայմաններում անաչառ դիտորդի համար ավելի հավանական է, որ գույքը ունի ապօրինի, քան օրինական ծագում:** Այս մոտեցումը, մի կողմից, թույլ է տալիս նվազեցնել ապացուցողական շեմը, իսկ մյուս կողմից՝ պահպանել արդար դատաքննության երաշխիքները՝ պատասխանողի վրա դնելով իր գույքի օրինական ծագումը հիմնավորելու պարտականություն:

Անդրադառնալով Օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակում սեփականության իրավունքին միջամտության համաչափության սահմանադրական պահանջին՝ Սահմանադրական դատարանը կարևորում է գույքի արժեքային շեմի սահմանումը՝ որպես հավասարակշռող գործոն: Մասնավորապես, դատարանը արձանագրում է, որ բռնագանձման ենթակա է բացառապես այն գույքը, որի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը (Որոշման 138-140-րդ կետեր):

Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ՝ նշված շեմը նպատակ ունի սահմանափակել Օրենքի կիրառման շրջանակը՝ այն տարածելով միայն էական արժեք ունեցող գույքի վրա և այդպիսով նվազեցնելով սեփականության իրավունքին միջամտության ինտենսիվությունը: Միևնույն ժամանակ, դատարանը, համադրելով այդ շեմը բարձրաստիճան պաշտոնատար անձանց եկամուտների հետ, եզրակացնում է, որ նման արժեքային շեմը համաչափ է՝ հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի հանրային շահը:

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը ձևակերպում է այն պայմանները, որոնց համակցությամբ գույքի բռնագանձումը կարող է համարվել սահմանադրական տեսանկյունից ընդունելի: Մասնավորապես, երբ՝

(1) գույքը պատկանում է օրենքով սահմանված սուբյեկտին,

(2) դրա արժեքը գերազանցում է սահմանված նվազագույն շեմը,

(3) այն ձեռք է բերվել պաշտոնավարման ընթացքում,

(4) պատասխանողը չի հիմնավորում դրա օրինական ծագումը՝ իր դատավարական իրավունքների ապահովման պայմաններում (Որոշման 150-րդ կետ):

Այսպիսով, արժեքային շեմի սահմանումը հանդես է գալիս որպես համաչափության

սկզբունքի ապահովման առանցքային երաշխիք՝ մի կողմից սահմանափակելով պետության միջամտության շրջանակը, իսկ մյուս կողմից՝ ապահովելով կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը:

Անդրադառնալով Օրենքի հնարավոր հետադարձ կիրառությանը՝ Սահմանադրական դատարանը, հղում կատարելով Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումներին[5], տարբերակում է «իրական» հետադարձ ուժ ունեցող նորմերը և այն նորմերը, որոնք կարգավորում են շարունակվող իրավահարաբերություններ: Առաջին դեպքում հետադարձ ուժի արգելքը կրում է խիստ բնույթ, մինչդեռ երկրորդ դեպքում թույլատրելի է ավելի ճկուն մոտեցում, եթե միջամտությունը համաչափ է (Որոշման 182-րդ կետ):

Այս համատեքստում Սահմանադրական դատարանը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ «Գոգիտիձեն և այլք ընդդեմ Վրաստանի» գործով[6], կարևորում են այն հանգամանքը, որ ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, թեև ծագել է անցյալում, սակայն շարունակում է գոյություն ունենալ նաև ներկայում: Հետևաբար, նման գույքի նկատմամբ միջամտությունը պետք է դիտարկել ոչ թե որպես անցյալում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ հետադարձ ազդեցություն, այլ որպես շարունակվող իրավական վիճակի կարգավորում (Որոշման 183-րդ կետ):

Սույն մոտեցման հիման վրա Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Օրենքը չի հանդիսանում հետադարձ ուժ ունեցող իրավական ակտ Սահմանադրության իմաստով, քանի որ այն միջամտում է ոչ թե ավարտված իրավահարաբերություններին, այլ շարունակվող՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքի պատկանելության իրավիճակին:

Միաժամանակ դատարանն ընդգծում է, որ Օրենքի ընդունմամբ նոր սահմանափակում չի դրվել անձանց վրա. պաշտոնատար անձինք մինչ այդ էլ պարտավոր էին զերծ մնալ ապօրինի եկամուտներից և հիմնավորել իրենց գույքի ծագումը: Օրենքով պարզապես ներդրվել են ընթացակարգային մեխանիզմներ՝ այդ պահանջների իրականացման ապահովման և ապօրինի ծագում ունեցող գույքը բռնագանձելու համար:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի մոտեցմամբ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը չի կարող վայելել նույն պաշտպանությունը, ինչ օրինական ծագում ունեցող գույքը, և դրա բռնագանձումը չի դիտարկվում որպես իրավաչափության սկզբունքի խախտում, այլ՝ որպես հանրային շահի իրացման միջոց:

Բացի դրանից՝ դատարանը հստակեցրել է նաև ժամանակային սահմանները՝ կապված գույքի ձեռքբերման պահի հետ: Մասնավորապես, մինչ պաշտոնավարման մեկնարկը ձեռք բերված գույքի ուսումնասիրությունն ինքնին թույլատրելի է, սակայն դրա բռնագանձումը դուրս է Օրենքի նպատակներից, քանի որ վերջինս ուղղված է հանրային ծառայության համակարգում կոռուպցիայի դեմ պայքարին: Հետևաբար, որպես բռնագանձման ենթակա գույք պետք է դիտարկվի միայն այն գույքը, որը ձեռք է բերվել պաշտոնավարման ընթացքում (Որոշման 148-րդ կետ):

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք, կարելի է առանձնացնել այն հիմնական տարբերակիչ առանձնահատկությունները, որոնք բնորոշ են ապօրինի հարստացման դեմ պայքարին քրեաիրավական գործողության տիրույթում և ապօրինի հարստացման դեմ պայքարին՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա՝ քաղաքացիաիրավական գործողության տիրույթում: Այսպես՝

[5] Տես Վենետիկի հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի CDL-AD(2022)048 կարծիքը (թիվ 1108/2022), էջ 11, կետեր 45, 48:
[6] Տես Gogitidze and others v. Georgia, no. 36862/05, §99, 12 May 2015:

➢ Քրեաիրավական գործողության տիրույթում ապօրինի հարստացման դեմ պայքարի նպատակը, ըստ էության, ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակներում, քրեաիրավական ու քրեադատավարական գործիքակազմերի կիրառմամբ կոռուպցիայի դեմ պայքարն է: Օրենքով նախատեսված ընթացակարգի կիրառման նպատակը, ինչպես նշվեց վերը՝ Սահմանադրական դատարանի քննարկվող որոշման համատեքստում, **կոռուպցիայի և հանցավորության դեմ պայքարն է՝** այնքանով, որքանով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործիքակազմը Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կիրառելի է Օրենքով նախատեսված հանցանքների այնպիսի շրջանակի նկատմամբ (Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետ), որն իր մեջ ներառում է ինչպես կոռուպցիոն բնույթի հանցանքները, այնպես էլ մի շարք այլ, իրենց բնույթով կոռուպցիոն չհամարվող հանցանքներ (թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցանքներ, մարդկանց թրաֆիքինգ, մաքսանենգության հետ կապված հանցանքներ և այլն): Քննարկման առարկա չդարձնելով այն հանգամանքը, թե ինչ չափանիշով են կոռուպցիոն չհամարվող նույնաբնույթ մի քանի հանցանքներից որոշները ներառվել Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետում, որոշները՝ ոչ (հիշյալ հարցի քննարկումը դուրս է սույն հոդվածի քննարկման առարկայի շրջանակից)՝ այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ քաղաքացիաիրավական գործողության տիրույթում ապօրինի հարստացման դեմ պայքարն ավելի լայն բովանդակություն ունի և չի սահմանափակվում միայն կոռուպցիայի դեմ պայքարով:

➢ Ապօրինի հարստացման հանցանքի կատարման համար անձի դատապարտումը և հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ այլ օգուտի բռնագրավումը, ինչպես նշվեց վերը, պահանջում են հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով կատարված հանցանքում անձի մեղավորության հաստատում, այնինչ, Օրենքով նախատեսված ընթացակարգի պարագայում բավարար է ցույց տալը, որ բռնագանձման ենթակա գույքի և բռնագանձման վարույթի համար հիմք հանդիսացող հանցանքի միջև առկա է կապ, կամ, այլ կերպ ասած՝ բռնագանձման ենթակա գույքը կարող է գեներացված լինել հանցավոր վարքագծի արդյունքում:

➢ Ի տարբերություն քրեական օրենքը հետադարձությամբ կիրառելու անթույլատրելիության սկզբունքին՝ Օրենքի կիրառումը հետադարձությամբ հնարավոր է՝ այնքանով, որքանով Օրենքը ոչ թե միջամտում է անցյալում տեղի ունեցած, այլ դրա ընդունումից հետո էլ շարունակվող՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող գույքն անձին պատկանելու դրությանը:

➢ Հաջորդ տարբերակիչ առանձնահատկությունը վերաբերում է անձի գույքի և օրինական եկամուտների մինչև անհամապատասխանության սահմանաչափին:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն առկա է, եթե գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը և (կամ) ծախսն **էականորեն** գերազանցում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով: Ընդ որում, հոդվածում **էական է համարվում 3 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):**

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «***Ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման, եթե ներկայացված ապացույցների գնահատմամբ դատարանը հանգում է հետևության, որ այդպիսի գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը»:***

Այն հանգամանքը, որ ապօրինի հարստացման հանցակազմի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ անձի գույքի և օրինական եկամուտների մինչև անհամապատասխանու-

թյան սահմանաչափն ավելի նվազ է, քան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համար անհրաժեշտ սահմանաչափն է, բխում է քննարկվող ինստիտուտների բնույթի, բովանդակության և հետապնդած նպատակների տարբերությունից:

Այսպես՝ ապօրինի հարստացման դեմ քրեաիրավական գործիքակազմով պայքարելու պարագայում, երբ առկա է կատարված հանցանքում անձի մեղավորությունը հիմնավորելու անհամեմատ ավելի բարձր ստանդարտ, երբ մեղադրյալն ամբողջ ծավալով օգտվում է քրեադատավարական օրենսդրությամբ իրեն վերապահված պաշտպանական ողջ գործիքակազմից, երբ գործում է քրեական օրենքը հետադարձությամբ կիրառելու անթույլատրելիության սկզբունքը, առավել ցածր սահմանաչափի նախատեսումը հիմնավոր է թվում: Մինչդեռ ապօրինի հարստացման դեմ քաղաքացիաիրավական գործիքակազմով պայքարելու պարագայում Օրենքով նախատեսված՝ 50 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը կարևոր երաշխիք է սեփականության իրավունքին միջամտության համաչափության սահմանադրական պահանջը բավարարելու տեսանկյունից:

Քրեաիրավական և քաղաքացիաիրավական գործողության տիրույթներում ապօրինի հարստացման դեմ պայքարի ընդհանրություններին ու տարբերակիչ առանձնահատկություններին անդրադարձ է կատարել նաև Բազելի ինստիտուտի ակտիվների վերականգնման միջազգային կենտրոնի (ICAR) քաղաքականության և հետազոտությունների ղեկավար Ա. Դորնբիերերը, ով իրավացիորեն արձանագրում է, որ ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական ապօրինի հարստացման մեխանիզմների կիրառման հիմքում ընկած է նույն առանցքային հանգամանքի գնահատումը՝ անձի փաստացի ունեցած գույքի և նրա օրինական եկամուտների միջև անհամապատասխանության առկայությունը: Միաժամանակ, տվյալ կառուցակարգերի կիրառման համար պարտադիր չէ ապացուցել առանձին կամ նախորդող հանցավոր գործունեության կատարված լինելը: Հեղինակն առանձնացնում է նաև երկու մեխանիզմների դատավարական կարգի, ապացուցման ստանդարտների և դրանց արդյունքում վրա հասնող իրավական հետևանքների տարբերությունները՝ որպես դրանց հիմնական տարբերակիչ հատկանիշներ[7]:

Այսպիսով՝ վերլուծության ենթարկելով այն հիմնական տարբերությունները, որոնք բնորոշ են ապօրինի հարստացման դեմ պայքարին քրեաիրավական և Օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակում՝ կարելի է եզրակացնել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը հնարավորություն է տալիս առավել արդյունավետորեն պայքարելու ապօրինի հարստացման դեմ:

Այդ մասին են վկայում նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով արձանագրված գործնական արդյունքները: Մասնավորապես, ՀՀ դատախազության կողմից հրապարակվող պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ 2021 թվականին դատարան է ներկայացվել 3 հայցադիմում, որոնցով պահանջվել է բռնագանձել 18 անշարժ և 7 շարժական գույք, ինչպես նաև դրամական միջոցներ և իրավաբանական անձանցում մասնակցություններ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է ավելի քան 13 միլիարդ ՀՀ դրամ[8]:

2022 թվականին ներկայացված հայցադիմումների թիվը հասել է 21-ի, որոնցով պահանջվել է բռնագանձել ավելի քան 200 անշարժ և շուրջ 45 շարժական գույք, ինչպես նաև իրավա-

[7] Տես Illicit enrichment; A guide to Laws targeting unexplained wealth; Andrew Dornbierer; 2021 Basel Institute on Governance. p. 35:

[8] Տես 2021 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների և դրանց արյունքների մասին ՀՀ դատախազության հաշվետվությունը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf:

բանական անձանցում մասնակցություն: Ներկայացված հայցերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 100 միլիարդ ՀՀ դրամ[9]:

2023 թվականին արձանագրվել է կտրուկ աճ. դատարան է ներկայացվել 71 հայցադիմում, որոնց ընդհանուր հայցագինը գերազանցել է 417 միլիարդ ՀՀ դրամը: Բռնագանձման ենթակա են եղել հարյուրավոր անշարժ և շարժական գույքեր, ինչպես նաև զգալի թվով մասնակցություններ իրավաբանական անձանցում[10]:

2024 թվականին դատարան է ներկայացվել 43 հայցադիմում՝ ավելի քան 100 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր հայցագնով: Նույն տարում դատարանների կողմից կայացվել են ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակի բավարարող վճիռներ[11]:

2025 թվականի տվյալներով՝ դատարաններում քննվող հայցերի թիվը հասել է 155-ի, որոնց ընդհանուր հայցագինը կազմում է շուրջ 595 միլիարդ ՀՀ դրամ: Նույն ժամանակահատվածում արձանագրվել են նաև գործնական նշանակություն ունեցող առաջին վերջնական դատական ակտերը, որոնց հիման վրա իրականացվել է կոնկրետ գույքերի բռնագանձում հօգուտ Հայաստանի Հանրապետության:

Բացի այդ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգի գործարկման ժամանակահատվածում կնքվել են հաշտության մի շարք համաձայնություններ, որոնց արդյունքում պետության սեփականությանն են անցել ինչպես անշարժ և շարժական գույքեր, այնպես էլ զգալի դրամական միջոցներ՝ ավելի քան 5 միլիարդ դրամ ընդհանուր արժեքով[12]:

Վերոնշյալ տվյալները ցույց են տալիս, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգը կարճ ժամանակահատվածում ձևավորվել է որպես հանցավոր եկամուտների դեմ պայքարի կարևոր իրավական գործիք:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ ապօրինի հարստացման դեմ պայքարի քրեաիրավական և քաղաքացիաիրավական մեխանիզմները հիմնված են տարբեր իրավական տրամաբանությունների վրա և հետապնդում են փոխկապակցված, սակայն ոչ նույնական նպատակներ:

Քրեաիրավական գործիքակազմն ուղղված է անձի քրեական պատասխանատվության ապահովմանը՝ ենթադրելով հանցակազմի բոլոր տարրերի, այդ թվում՝ մեղավորության ապացուցում «հիմնավոր կասկածից վեր» չափանիշով: Այս մոդելը երաշխավորում է անձի իրավունքների առավելագույն պաշտպանություն, սակայն միաժամանակ սահմանափակում է դրա արդյունավետությունը այն դեպքերում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքի և կոնկրետ հանցավոր վարքագծի միջև պատճառահետևանքային կապի ապացուցումը բարդ է:

Ի տարբերություն դրա՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման քաղաքա-

[9] Տես ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության 2022 թվականի աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf:

[10] Տես ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության 2023 թվականի աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf:

[11] Տես ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության 2024 թվականի աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf:

[12] Տես ՀՀ դատախազության 2025 թվականի գործունեության մասին հաղորդումը՝ հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_309_7496428529.pdf:

ցիաիրավական կառուցակարգը հիմնված է գույքային անհամապատասխանության բացահայտման և դրա օրինականության հիմնավորման պարտականության բաշխման այլ տրամաբանության վրա: Այն թույլ է տալիս միջամտել սեփականության իրավունքին ոչ թե հանցավոր վարքագծի լիարժեք ապացուցման, այլ գույքի ապօրինի ծագման ողջամիտ հավանականության հաստատման պայմաններում՝ էապես ընդլայնելով պետության միջամտության գործիքակազմը:

Այս համատեքստում հիմնավորված է այն դիրքորոշումը, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը կարող է դիտարկվել որպես առավել արդյունավետ գործիք հատկապես այն իրավիճակներում, երբ քրեական հետապնդումը բախվում է ապացուցողական կամ դատավարական խոչընդոտների: Միևնույն ժամանակ, այն չի կարող փոխարինել քրեական պատասխանատվությանը, քանի որ չի հետապնդում պատժիչ նպատակ և չի ապահովում հանցավոր վարքագծի դատապարտման ընդհանուր կանխարգելիչ ազդեցությունը:

Հետևաբար, ապօրինի հարստացման դեմ պայքարի արդյունավետ մոդելը պետք է կառուցվի ոչ թե նշված մեխանիզմների մրցակցության, այլ դրանց ֆունկցիոնալ համադրման հիման վրա, որտեղ՝

- քրեական իրավունքը կիրառվում է այն դեպքերում, երբ հնարավոր է ապահովել մեղավորության ապացուցման բարձր ստանդարտը,
- քաղաքացիաիրավական բռնագանձման մեխանիզմը լրացնում է այդ համակարգը՝ ապահովելով ապօրինի ծագում ունեցող գույքի դուրսբերումը շրջանառությունից նաև այն դեպքերում, երբ քրեական հետապնդումը չի հանգեցնում դատապարտման:

Նման երկաստիճան (dual-track) մոտեցումը համահունչ է միջազգային հակակոռուպցիոն չափանիշներին և կարող է ծառայել որպես արդյունավետ մոդել ապօրինի հարստացման դեմ համակարգային պայքարի ապահովման համար:

Ամփոփագիր: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավումը հանդիսանում է կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կարևոր իրավական գործիք, որի միջոցով պետությունը հնարավորություն է ստանում վերադարձնել հանցավոր գործունեության արդյունքում ստացված գույքը կամ այլ նյութական օգուտը:

Վերջին տարիներին, քրեաիրավական կարգավորումներից բացի, իրավական համակարգում ներդրվել են նաև քաղաքացիաիրավական կառուցակարգեր՝ ուղղված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը:

Հոդվածում իրականացվում է գույքի բռնագրավման ինստիտուտի զարգացման և դրա արդի դրսևորումների վերլուծություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով քրեաիրավական և քաղաքացիաիրավական մեխանիզմների հարաբերակցությանը: Արդյունքում բացահայտվում են դրանց սահմանազատման հիմնական չափանիշները և ցույց է տրվում, որ քաղաքացիաիրավական կառուցակարգը լրացնում է քրեաիրավական մեխանիզմը՝ միաժամանակ ապահովելով սեփականության սահմանադրական երաշխիքների պահպանումը և ապօրինի հարստացման դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը:

Annotation. The confiscation of property obtained through criminal means is an important legal instrument in combating corruption and organized crime, through which the state is able to recover property or other material benefits derived from criminal activity.

In recent years, alongside criminal-law regulation, civil-law mechanisms aimed at the confiscation of property of illicit origin have also been introduced into the legal system.

This article analyzes the development of the institution of asset confiscation and its current manifestations, with particular attention to the relationship between criminal law and civil law mechanisms. As a result, the main criteria for distinguishing these mechanisms are identified, and it is shown that the civil-law mechanism complements the criminal-law one, while simultaneously ensuring the preservation of constitutional guarantees of property rights and enhancing the effectiveness of combating illegal enrichment.

Аннотация. Конфискация имущества, полученного преступным путём, является одним из ключевых правовых инструментов противодействия коррупции и организованной преступности. Посредством данного института государство получает возможность изымать имущество и иные материальные блага, приобретённые в результате противоправной деятельности.

В последние годы наряду с уголовно-правовыми механизмами в правовой системе получили развитие гражданско-правовые процедуры конфискации имущества незаконного происхождения.

В статье анализируются историческое развитие института конфискации имущества и современные тенденции его правового регулирования с особым акцентом на соотношение уголовно-правовых и гражданско-правовых механизмов. Выявляются основные критерии их разграничения и обосновывается, что гражданско-правовой механизм дополняет уголовно-правовой, одновременно обеспечивая сохранение конституционных гарантий права собственности и повышение эффективности противодействия незаконному обогащению.

Բանալի բառեր *- ապօրինի հարստացում, գույքի բռնագրավում, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, ապօրինի ծագում ունեցող գույք, կոռուպցիայի դեմ պայքար, քաղաքացիաիրավական բռնագանձում:*

Keywords: *illegal enrichment; asset confiscation; confiscation of criminally acquired property; property of illicit origin; anti-corruption; civil forfeiture.*

Ключевые слова: *незаконное обогащение, конфискация имущества, имущество преступного происхождения, имущество незаконного происхождения, борьба с коррупцией, гражданско-правовая конфискация.*

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք (05.05.2021 թվականի ՀՕ-199-Ն).
2. ՀՀ քրեական օրենսգիրք (18.04.2003 թվականի ՀՕ-528-Ն).
3. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» (16.04.2020 թվականի ապրիլի ՀՕ-240-Ն).
4. «Կոռուպցիայի դեմ» 2003 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիա.
5. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» 2003 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիա.
6. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ԵԽ 2008 թվականի Վարշավայի կոնվենցիա
7. ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի ՍԴՈ-983 որոշում.
8. ՀՀ Սահմանադրական դատարանի 2025 թվականի ՍԴՈ-1776 որոշում.
9. Gogitidze and others v. Georgia, no. 36862/05, §99, 12 May 2015.
10. Վենետիկի հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի CDL-AD(2022)048 կարծիքը (թիվ

1108/2022).

11. Illicit enrichment; A guide to Laws targeting unexplained wealth; Andrew Dornbierer; 2021 Basel Institute on Governance.

12. UNODC E4J University Module Series: Organized Crime, Module 10: Sentencing and Confiscation in Organized Crime Module 10: Sentencing and Confiscation in Organized Crime.

13. On the take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias, Tammar Berger.

14. Bohdan Bezginskyi "Objective Side of the Composition of the Criminal Offence of Unlawful Enrichment". Law Journal of the National Academy of Internal Affairs, 11(1).

15. 2021 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների և դրանց արդյունքների մասին ՀՀ դատախազության հաշվետվություն. տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf.

16. ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության 2022 թվականի աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն՝ տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf.

17. ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության 2023 թվականի աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն՝ տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf.

18. ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության 2024 թվականի աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն՝ տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_295_4498496308.pdf.

19. ՀՀ դատախազության 2025 թվականի գործունեության մասին հաղորդում՝ տե՛ս հետևյալ համացանցային հղմամբ՝ https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_309_7496428529.pdf:

Ամիրխանյան Ա. - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլհասցե՝ amirkhanyan.alisa@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 16.03.2026 թ., տրվել է գրախոսության 16.03.2026 թ., երաշխավորվել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու Մ. Մկրտչյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-107

ԴԱՎԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

DAVIT TOVMASYAN
Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Postgraduate Student at the Chair of Criminal Law,
Faculty of Law, Yerevan State University

ДАВИД ТОВМАСЯН
Член Палаты адвокатов Республики Армения,
аспирант кафедры уголовного права юридического факультета
Ереванского государственного университета,
https://orcid.org/0009-0006-6959-6529

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

CRIMINAL LIABILITY OF LEGAL ENTITIES IN THE SYSTEM OF CRIMINAL LIABILITY

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В СИСТЕМЕ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Ներածություն

Ժամանակակից քրեական քաղաքականության զարգացման մեջ իրավաբանական անձանց պատասխանատվության հարցը վաղուց դադարել է լինել միայն տեսական քննարկման առարկա: Միջազգային հակակոռուպցիոն և այլ պայմանագրային պարտավորությունների[1] ազդեցությամբ բազմաթիվ պետություններ իրենց օրենսդրությամբ նախատեսել են կազմակերպությունների նկատմամբ պատասխանատվության տարբեր ձևեր, այդ թվում՝ քրեական բնույթի ներգործության միջոցներ: Հայաստանի Հանրապետությունում ևս 2021 թվականի քրեական օրենսգրքով ամրագրվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը, ինչը խնդիրը դարձրել է ոչ միայն տեսական, այլև գործնական ու դոգ-

[1] Տես՝ Միավորված ազգերի կազմակերպության **«Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա**, ինչպես նաև Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 19.11.2008 թ. 2008/99/ԵՀ «**հրահանգ՝ շրջակա միջավայրի պաշտպանության մասին քրեական իրավունքի միջոցով**», Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր:

մատիկ առումով արդիական:

Սակայն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության օրենսդրական ամրագրումը ինքնին դեռ չի լուծում քրեական պատասխանատվության համակարգում դրա տեղը հստակեցնելու հարցը: Գործող քրեական օրենսգրքում հանցանքի, մեղքի և անձնական պատասխանատվության դասական մոտեցումը շարունակում է հիմնականում կապված մնալ ֆիզիկական անձի վարքագծի հետ, մինչդեռ իրավաբանական անձը ներառված է քրեական պատասխանատվության սուբյեկտների համակարգում հատուկ հիմքերով և առանձին նորմատիվ ռեժիմով: Այդ պատճառով հիմնարար է դառնում հարցը, թե ինչպե՞ս պետք է բացատրել իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը, երբ հանցանքի դասական մոդելը նրա նկատմամբ նույն ձևով չի վերարտադրվում:

Սույն հոդվածի նպատակը ՀՀ քրեական պատասխանատվության համակարգում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության տեղը բացահայտելն է՝ վերլուծելով դրա դոգմատիկ բնույթը, իրավական հիմքերը և ընդհանուր քրեաիրավական սկզբունքների հետ դրա հարաբերակցությունը: Այդ նպատակով ուսումնասիրվում են, մի կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔՕ) ընդհանուր մասի այն դրույթները, որոնք վերաբերում են հանցանքին, մեղքին և անձնական պատասխանատվության սկզբունքին, իսկ մյուս կողմից՝ իրավաբանական անձանց պատասխանատվության հատուկ հիմքերը և դրանց կառուցվածքը: Հետազոտության շրջանակում օգտագործվում է նաև համեմատական-իրավական նյութ, որպեսզի գնահատվի, թե ինչ օրենսդրական մոդելներով են տարբեր պետություններ լուծում նույն խնդիրը:

Հոդվածի գիտական նորույթն այն է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ՀՀ քրեական իրավունքի շրջանակում մեկնաբանվում է ոչ թե որպես ֆիզիկական անձի պատասխանատվության ածանցյալ կրկնություն, այլ որպես հատուկ վերագրելիության վրա հիմնված քրեական պատասխանատվության համակարգի ներսում գործող առանձնահատուկ կառուցակարգ, և այդ մոտեցման հիման վրա առաջարկվում են ՔՕ 5-րդ և 6-րդ հոդվածների մակարդակում համակարգային օրենսդրական հստակեցումներ:

Հիմնական հետազոտություն

Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՔՕ) 2-րդ հոդվածը քրեական օրենսդրության խնդիրների շարքում առանձնացնում է «քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձի և հանցանք կատարած անձի» պատասխանատվության արդարացիությունը»: Նույն նորմի ձևակերպումից ինքնին հետևում է, որ օրենսդիրը տարբերակում է «քրեական պատասխանատվության ենթակա իրավաբանական անձ» և «հանցանք կատարած անձ» հասկացությունները՝ դրանք չներկայացնելով որպես միանգամայն նույնաբովանդակ իրավական կատեգորիաներ:

Այս տարբերակումը պատահական չէ. այն ցույց է տալիս, որ իրավաբանական անձը օրենսգրքում չի ներկայացվում որպես հանցանք կատարող նույն իմաստով և ֆունկցիոնալ ծավալով, ինչ ֆիզիկական անձը, մինչդեռ միաժամանակ ամրագրված է նրա նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառելիությունը, թեև իրավաբանական անձի կողմից հանցանք կատարելու կամ հանցակազմի սուբյեկտ լինելու գաղափարը օրենսդրական ձևակերպումներում ուղղակի և դասական եղանակով արտահայտված չէ:

Նշված մոտեցումը առերևույթ խնդրահարույց է քրեական պատասխանատվության դասական ընկալման տեսանկյունից, քանի որ քրեական պատասխանատվության հիմքը հան-

ցանքն է[2]: Այս իսկ պատճառով առաջանում է տեսական անհամաչափություն և հարցադրում, թե իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը որքանով է համընկնում քրեական պատասխանատվության դասական պատկերացման հետ և արդյոք այն պետք է ընկալվի որպես նույն ինստիտուտի հատուկ ձև, թե որպես դրա կառուցվածքային առումով առանձնահատուկ դրսևորում:

ՔՕ 4-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվությունը կապվում է հանցանքի հետ, իսկ ՔՕ 16-րդ հոդվածով հանցանքը սահմանվում է որպես քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարք: ՔՕ 19-րդ հոդվածը, իր հերթին, քրեական պատասխանատվության սուբյեկտների շարքում ներառում է նաև իրավաբանական անձին: Այս նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսգրքում մի կողմից պահպանվում է հանցանքի դասական՝ ֆիզիկական անձակենտրոն մոդելը, իսկ մյուս կողմից քրեական պատասխանատվության համակարգում ընդգրկվում է նաև իրավաբանական անձը, որը նույն իմաստով չի ներկայացվում որպես հանցագործության սուբյեկտ:

Վերոգրյալի համատեքստում հիմնարար է դառնում այն հարցը, թե ինչպե՞ս է հնարավոր իրավաբանական անձին ենթարկել քրեական պատասխանատվության, եթե դրա նախապայմանը հանցանքի կատարումն է, մինչդեռ օրենսդիրը որպես հանցանք կատարելու ունակ սուբյեկտ ճանաչում է միայն ֆիզիկական անձին, իսկ հանցագործության հատկանիշ հանդիսացող մեղավորությունը ևս վերագրվում է բացառապես ֆիզիկական անձին:

Այսպես. Անձնական պատասխանատվության[3], ըստ մեղքի պատասխանատվության[4], արդարության և պատասխանատվության անհատականացման[5] սկզբունքները ձևակերպված են հիմնականում ֆիզիկական անձակենտրոն տրամաբանությամբ և չեն պարունակում իրավաբանական անձանց նկատմամբ դրանց կիրառելիությունն ապահովող բավարար հատուկ չափանիշներ: Ուստի քրեական օրենսդրության ընդհանուր սկզբունքների մակարդակում իրավաբանական անձի պատասխանատվությունը նույն աստիճանի ուղղակիությամբ արտահայտված չէ, ինչ ֆիզիկական անձինը:

Տեսության մեջ հենց այս հանգույցում է կենտրոնանում հիմնական առարկությունը. Բ. Վ. Վոլժենկինը, շարադրելով քննադատական մոտեցումը, ընդգծում է, որ «մեղքը, ոչ այլ ինչ է քան անձի՝ իր կատարած արարքի նկատմամբ հոգեբանական վերաբերմունքը», և այդ պատճառով իրավաբանական անձանց նկատմամբ դասական մեղքի և անձնական պատասխանատվության սկզբունքների մեխանիկական տարածումը խնդրահարույց է[6]: Սակայն Ի. Վ. Սիտկովսկին իրավացիորեն նշում է, որ խնդիրը ոչ այնքան իրավաբանական անձի ան-

[2] **ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով** սահմանված է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այն արարքի համար, որը կատարման պահին հանցանք չի համարվել:

[3] **ՔՕ 5-րդ հոդվածի համաձայն՝** յուրաքանչյուր ֆիզիկական անձ ենթակա է քրեական պատասխանատվության միայն իր կատարած հանցանքի համար:

[4] **ՔՕ 6-րդ հոդվածի համաձայն՝** քրեական պատասխանատվության ենթակա չէ այն ֆիզիկական անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված արարքը կատարել է առանց մեղքի կամ կատարել է անզգուշությամբ այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը միայն դիտավորությամբ կատարելու համար:

[5] **ՔՕ 7-րդ հոդվածի առաջին մասի համաձայն**՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության, պատժի կամ քրեաիրավական ներգործության այլ միջոցների ենթարկելը կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելը պետք է լինի արդարացի՝ ապահովելով ինչպես կիրառվող օրենսդրության, այնպես էլ պետական հակազդեցության համաչափությունը կատարված հանցանքին, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը:

[6] Տե՛ս *Волженкин Б. В.,* Уголовная ответственность юридических лиц. СПб., 1998, էջ 25–26:

ձնական պատասխանատվության հնարավորության լիակատար մերժումն է, որքան մեղքի վերաբերյալ գերակշռող պատկերացումների և իրավաբանական անձի վարքագծի որոշման առանձնահատկությունների միջև առաջացող կոլիզիաների հաղթահարումը[7]:

Սակայն դրանից չի հետևում, թե իրավաբանական անձը դուրս է մնացել քրեական պատասխանատվության համակարգից: Ընդհակառակը, ՔՕ 19-րդ հոդվածն իրավաբանական անձին ներառում է քրեական պատասխանատվության սուբյեկտների շրջանակում, իսկ ՔՕ 123-րդ հոդվածով սահմանվում են այն հատուկ հիմքերը, որոնց առկայության դեպքում իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Օրենսդիրը պատասխանատվությունը կապում է ոչ թե իրավաբանական անձի «սեփական» հանցանքի անմիջական կատարման, այլ այն դեպքերի հետ, երբ հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի, իսկ որոշ դեպքերում նաև աշխատողի կողմից՝ իրավաբանական անձի անունից, ի շահ նրա կամ նրա միջոցով, ինչպես նաև այն դեպքերի հետ, երբ իրավաբանական անձի կողմից չի ապահովվել օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, և հենց այդ հանգամանքն է հանգեցրել համապատասխան անձանց կողմից հանցանքի կատարմանը:

Այս առումով իրավաբանական անձի պատասխանատվությունը կարելի է բնութագրել ոչ թե որպես անմիջականորեն նույնաբնույթ պատասխանատվություն, ինչ ֆիզիկական անձինը, այլ որպես հատուկ նորմատիվ վերագրելիության վրա հիմնված քրեական պատասխանատվություն, որն առաջանում է հանցանքի և իրավաբանական անձի միջև օրենքով նախատեսված հատուկ կապի առկայության դեպքում:

Արտասահմանյան գրականության մեջ նման իրավիճակների համար առաջարկվել են տարբեր մոդելներ. Ջ. Գոբերտը խոսում է իրավաբանական անձանց պատասխանատվության «մեղքի չորս մոդելների»-ի մասին՝ դրանով իսկ փաստելով, որ հարցը չի հանգում միայն անհատի մեղքի պարզ տեղափոխմանը կազմակերպության վրա, այլ պահանջում է հատուկ վերագրելիություն[8]: Այս դիտարկումը համահունչ է նաև սույն հոդվածում պաշտպանվող այն մոտեցմանը, որ իրավաբանական անձի պատասխանատվությունը պետք է մեկնաբանել որպես հատուկ վերագրելիության վրա հիմնված քրեական պատասխանատվություն, այլ ոչ թե դասական նույնականացում ֆիզիկական անձի պատասխանատվության հետ:

Միևնույն ժամանակ պատասխանատվության այս տեսակը չի կարելի դիտարկել որպես զուտ արտաքրեաիրավական հետևանք, քանի որ ՔՕ 123-րդ հոդվածի 5-րդ մասը ուղղակիորեն սահմանում է, որ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը, իսկ ֆիզիկական անձին պատասխանատվությունից ազատելը ինքնին հիմք չէ իրավաբանական անձին պատասխանատվությունից ազատելու համար: Հետևաբար <u>խոսքը քրեական պատասխանատվության համակարգի ներսում գործող, սակայն կառուցվածքային առումով առանձնահատուկ՝ sui generis կոնցեպտի մասին</u> է, որը պահպանվում է քրեական իրավունքի շրջանակներում, սակայն տարբերվում է ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող դասական մոդելից:

Հատկանշական է, որ այս կոնցեպտի յուրահատկությամբ պայմանավորված՝ իրավաբանական անձի նկատմամբ կիրառվում են ոչ թե պատիժներ, այլ քրեաիրավական ներգործու-

[7] Տես *Ситковский И. В.,* Уголовная ответственность юридических лиц: автореф. дис. … канд. юрид. наук. М., 2003, էջ 7:
[8] Տես *Gobert J.,* "Corporate Criminality: Four Models of Fault", Legal Studies, 1994, vol. 14, no. 3, էջ 393–410:

թյան միջոցներ, որոնք նշանակվում են առանձին կանոններով՝ հաշվի առնելով ի թիվս այլնի նաև ՔՕ 123-րդ հոդվածով նախատեսված անձանց գործողությունները[9]: Սա նշանակում է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը քրեական իրավունքի համակարգում պահպանվում է ոչ թե դասական «հանցանք-պատիժ» շղթայով, այլ հատուկ նորմատիվ ռեժիմով:

Նշվածից բխում է, որ *իրավաբանական անձի պատասխանատվությունը ավելի ճշգրիտ է բնութագրել որպես հատուկ վերագրելիության վրա հիմնված քրեական պատասխանատվություն, որի նյութահրավական նախադրյալը ֆիզիկական անձի մեղավոր հանցավոր վարքագիծն է, իսկ նորմատիվ հիմքը՝ այդ վարքագծի կապը իրավաբանական անձի շահի, գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների հետ:* Հենց այս իմաստով իրավաբանական անձի պատասխանատվությունը միջնորդավորված է, սակայն միևնույն ժամանակ ինքնուրույն է քրեական պատասխանատվության համակարգում իր նորմատիվ տեղով և իրավական հետևանքներով :

Անդրադառնալով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի քրեական օրենսդրությամբ որպես քրեական իրավունքի ինքնուրույն ինստիտուտի ամրագրմանը՝ հարկ է արձանագրել, որ այս հարցում օրենսդրական տեխնիկան համեմատական իրավունքում միատեսակ չէ: Ընդհանուր առմամբ՝ հնարավոր է տարբերակել առնվազն երեք հիմնական մոդել: Առաջին մոդելի դեպքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը կարգավորվում է քրեական օրենսգրքից դուրս՝ հատուկ օրենքով[10]: Երկրորդ մոդելի դեպքում ինստիտուտը ներառված է հենց քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում, սակայն որպես առանձին տիտղոս, բաժին կամ գլուխ. այդպիսի կառուցվածք ունի[11]: Երրորդ մոդելի դեպքում իրավաբանական անձանց պատասխանատվությունը չի առանձնացվում որպես ամբողջական ինքնուրույն բաժին, այլ տեղակայվում է ընդհանուր պատասխանատվության մասին նույն տիտղոսում կամ նույնիսկ նույն հոդվածում, որտեղ կարգավորվում է նաև ֆիզիկական անձանց պատասխանատվությունը[12]:

Հատուկ օրենքով կարգավորման մոդելի առավելությունն այն է, որ օրենսդիրը կարողանում է մեկ վայրում համախմբել ամբողջ ինստիտուտը՝ առանց ընդհանուր քրեական օրենսգրքի ավանդական կատեգորիաները արհեստականորեն վերաձևակերպելու: Այս տեխնիկան հատկապես արդյունավետ է այն երկրներում, որտեղ իրավաբանական անձանց պատաս-

[9] **Ծանոթագրություն.** ՀՀ ՔՕ 127-րդ հոդվածը, մեր կարծիքով, որոշակի առումով լրացնում է պատժի անհատականացման և արդարության սկզբունքի և քննարկման առարկա ինստիտուտի միջև կապը, ուստի այս սկզբունքի լրացման անհրաժեշտությունը սույն հոդվածում չի քննարկվում:

[10] **Ծանոթագրություն.** Այսպիսի օրինակ է **Չեխիայի** 2011 թվականի «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և դրանց նկատմամբ վարույթի մասին» օրենքը, որն առանձին ակտով սահմանում է պատասխանատվության սկզբունքները, վերագրման կանոնները, պատժատեսակները և դատավարական առանձնահատկությունները:

[11] **Ծանոթագրություն.** Նման օրինակ է **Ռումինիայի** քրեական օրենսգրքի Titlul VI-ը («Răspunderea penală a persoanei juridice», հոդվածներ 135-151), որը ներառում է ոչ միայն պատասխանատվության պայմանների մասին 135-րդ հոդվածը, այլև իրավաբանական անձի նկատմամբ պատիժների, վաղեմության և այլ հետևանքների հատուկ կարգավորումները:

[12] **Ծանոթագրություն.** Այսպիսի օրինակներ են՝ **Ֆրանսիայում** personnes morales-ի պատասխանատվությունը տեղադրված է նույն Titre II-ում, որտեղ ձևակերպված են նաև պատասխանատվության ընդհանուր կանոնները, իսկ հոդված 121-2-ը անմիջապես կապում է իրավաբանական անձանց պատասխանատվությունը 121-4-ից 121-7 հոդվածների տարբերակումների հետ: **Պորտուգալիայում** 11-րդ հոդվածն արդեն իր վերնագրով միաժամանակ վերաբերում է «ֆիզիկական և իրավաբանական անձանց» պատասխանատվությանը, իսկ **Իսպանիայում** իրավաբանական անձանց պատասխանատվության մասին 31 bis-ը և հաջորդ հոդվածները տեղակայված են Libro I-ի այն նույն Titulo II-ում, որը վերաբերում է «քրեականապես պատասխանատու անձանց»:

խանատվությունը ներմուծվել է ավելի ուշ և պահանջել է ոչ միայն նյութական, այլև դատավարական առանձին կանոններ. (օրինակ՝ Չեխիայում): Սակայն այս մոդելը նաև թույլ կողմ ունի. երբ ինստիտուտը դուրս է բերվում քրեական օրենսգրքի համակարգից, աճում է ընդհանուր սկզբունքների և հատուկ կարգավորման միջև «հեռավորությունը», և իրավակիրառողը ստիպված է անընդհատ «անցում» կատարել երկու ակտերի միջև, որպեսզի հասկանա, թե ինչ ծավալով են ընդհանուր մասի դրույթները կիրառելի իրավաբանական անձի նկատմամբ: Այլ կերպ՝ այս մոդելը բարձրացնում է ինստիտուտի տեսանելիությունը, բայց կարող է թուլացնել նրա համակարգային ինտեգրումը քրեական իրավունքի ընդհանուր դոգմատիկայի մեջ: Այդ գնահատականը բխում է հատուկ օրենքի ինքնաբավությունից և դրա՝ ընդհանուր քրեական օրենսգրքից ֆորմալ առանձնացված լինելուց: Այս տեսանկյունից գրականության մեջ ընդգծվում է, որ առանձին ակտով լուծումը երբեմն դժվարացնում է ինստիտուտի ներդաշնակ տեղավորումը քրեաիրավական համակարգում, մինչդեռ ընդհանուր սկզբունքների և հատուկ կանոնների նույն միջավայրում ամրագրումը նպաստում է ներքին համահնչությանը, միասնական իրավաբանական լեզվին և ավելի կանխատեսելի կիրառմանը[13]:

Առանձին տիտղոսով կամ նույն քրեական օրենսգրքում առանձին բաժնով ամրագրելու մոդելը համեմատաբար ավելի հավասարակշռված է: Այդ դեպքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը մնում է քրեական օրենսգրքի ընդհանուր համակարգում, բայց միաժամանակ ստանում է սեփական նորմատիվ «տարածքը»: Այս մոդելի առավելությունն այն է, որ այն ապահովում է և՛ համակարգայնություն, և՛ ինստիտուցիոնալ տեսանելիություն. իրավակիրառողին պարզ է, որ ինստիտուտը քրեական իրավունքի մասն է, բայց միաժամանակ պարզ է նաև, որ դրա կիրառումը պահանջում է հատուկ կանոնների հաշվառում: Օրինակ Քրիստինա դե Մալիեն, համեմատական դիտանկյունից, ինստիտուտի արդյունավետությունը կապում է ոչ միայն առանձին նորմ ունենալու, այլ նաև այն ընդհանուր քրեաիրավական համակարգի մեջ ճիշտ տեղավորելու հետ, ինչը տալիս է իրավական որոշակիության կանխատեսելի երաշխիքներ[14]: Միևնույն ժամանակ, այս մոդելի լիարժեքությունը կախված է նրանից, թե արդյոք օրենսդիրը ձևավորել է բավարար «կամուրջներ» ընդհանուր սկզբունքների և հատուկ բաժնի միջև: Առլի Լոֆնանի դիտարկմամբ՝ քրեական պատասխանատվության ընդհանուր սկզբունքները կառուցակարգում և համակարգում են քրեական իրավունքը՝ ապահովելով դրա ներքին համահնչությունը, ինչպես նաև ձևավորում են միասնական հասկացական լեզու քրեական իրավունքի և այդ ոլորտում գործող իրավաբանների համար:[15]:

Գտնում ենք, որ եթե այդ «իրավական կամուրջները» սահմանափակվում են ընդամենը հղումային ձևակերպումներով, իսկ մեղքի, վերագրելիության կամ կորպորատիվ մեղավորության դոգմատիկ բովանդակությունը չի բացվում, ապա առանձնացված բաժինը կարող է

[13] Տես *Dobrocsi S.*, Procedural Issues Regarding the Criminal Liability of Legal Persons in Hungary, in: Dny práva 2012 – Days of Law 2012. Část VII. Trestněprávní a procesní alternativy v trestním právu individuálním a kolektivním, Brno, Masarykova univerzita, 2013, էջ 1359–1370,
Ferenčíková S., Slovakia: National Regulations in the Shadow of a Common Past, in: Váradi-Csema E. (ed.), Criminal Legal Studies: European Challenges and Central European Responses in the Criminal Science of the 21st Century, Miskolc–Budapest, Central European Academic Publishing, 2022, էջ 205–224,
Dupont C., Rass-Masson N., Evaluation Study on the Implementation of Directive 2008/99/EC on the Protection of the Environment through Criminal Law by Member States. Final Report, Brussels, Milieu Ltd. (prepared for the European Commission, DG Justice), 2013 (update May 2014), էջ 97:
[14] Տես *De Maglie C.,* "Models of Corporate Criminal Liability in Comparative Law", Washington University Global Studies Law Review, 2005, vol. 4, no. 3, էջ 547–566:
[15] Տես *Loughnan A.,* "The Very Foundations of Any System of Criminal Justice': Criminal Responsibility in the Australian Model Criminal Code," International Journal for Crime, Justice and Social Democracy, 2017, vol. 6, no. 3, էջ 8–24:

մնալ կառուցվածքային առումով հաջողված, բայց բովանդակային առումով ոչ ամբողջական, իսկ կապող նորմերի ոչ ամբողջական ձևակերպումները կամ դրանց բացակայությունը բացասական է անդրադառնում ինստիտուտի էությունը ճիշտ ընկալելու և կիրառելու վրա:

Ընդհանուր պատասխանատվության նույն գլխում կամ նույն հոդվածում իրավաբանական անձանց պատասխանատվությունը տեղադրելու մոդելը, իր հերթին, ունի այլ տրամաբանություն: Այս լուծման առավելությունն այն է, որ իրավաբանական անձանց պատասխանատվությունը անմիջապես ներառվում է քրեական պատասխանատվության ընդհանուր դոգմատիկ համատեքստի մեջ, և օրենսդիրը հաճախ հենց նույն նորմատիվ հանգույցում է ձևակերպում ընդհանուր սկզբունքներից դեպի կորպորատիվ պատասխանատվություն տանող «կամուրջները»: Բայց նույն պատճառով էլ այս մոդելը պահանջում է շատ բարձր օրենսդրական ճշգրտություն. եթե նույն գլխում զուգորդվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվության մասին դրույթները, սակայն հատուկ չի բացատրվում, թե ինչպես են «մեղք», «անձնական պատասխանատվություն», «հանցանքի կատարում» և նման կատեգորիաները փոխակերպվում իրավաբանական անձի դեպքում, ապա համակարգը կարող է թվալ ինտեգրված, բայց գործնականում մնալ դոգմատիկ առումով երկիմաստ կամ առնվազն անորոշ:

Ջոնաթան Քլաֆը նույն խնդիրը ձևակերպում է արդեն կիրառական հարթությունում՝ նշելով, որ ինտեգրված կառուցվածքը ինքնին բավարար չէ, եթե մեղքի, անձնական պատասխանատվության և վերագրման կատեգորիաները չեն դարձել բավականաչափ օպերացիոն և հստակ[16]:

Հետևաբար՝ որևէ մոդել ինքնին լավագույնը չէ: Հատուկ օրենքով կարգավորումը ապահովում է ինստիտուտի ինքնավարությունն ու մանրամասնությունը, բայց թուլացնում է դրա անմիջական կապը ընդհանուր քրեական իրավունքի հետ: Նույն օրենսգրքում առանձին բաժնով կարգավորումը համադրում է համակարգայնությունն ու ինստիտուցիոնալ ինքնությունը, սակայն դրա արդյունավետությունը կախված է ընդհանուր սկզբունքների հետ ձևավորված կապերի որակից: Իսկ ընդհանուր պատասխանատվության նույն գլխում տեղադրումը կարող է առավել օրգանական ինտեգրում ապահովել միայն այն դեպքում, երբ օրենսդիրը բավարար հստակությամբ բացում է կորպորատիվ պատասխանատվության ինքնուրույն տրամաբանությունը:

Այս համեմատական դիտանկյունը մեթոդաբանական հիմք է տալիս արդեն առանձին անդրադառնալու ՀՀ քրեական օրենսգրքին և գնահատելու, թե 7-րդ բաժնով առանձնացման պայմաններում արդյոք ստեղծվել են բավարար դոգմատիկ կապեր ընդհանուր սկզբունքների և իրավաբանական անձանց պատասխանատվության հատուկ ռեժիմի միջև:

Այս համատեքստում անդրադառնալով ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքին՝ գտնում ենք, որ այս սկզբունքի նորմատիվ շարունակությունը պետք է հիմնվի ոչ թե վերագրելիության ամբողջ մեխանիզմի կամ պատասխանատվության բացառման բոլոր հիմքերի վերարտադրման, այլ հենց մեղքի հանգույցի վրա: Այլ կերպ՝ իրավաբանական անձի նկատմամբ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի գործարկումը պետք է կապել ոչ թե «մեղավոր վարքագծի» ընդհանրական գաղափարի, այլ ՔՕ 123-րդ հոդվածով նախատեսված անձանց կողմից կատարված արարքում մեղքի առկայության կամ բացակայության հետ:

Մեղքի վրա հիմնված պատասխանատվության սկզբունքի վերաիմաստավորման համա-

[16] Տե՛ս *Clough J.*, "Improving the Effectiveness of Corporate Criminal Liability," in: *Levy R., O'Brien M., Rice S., Ridge P., Thornton M.* (eds.), New Directions for Law in Australia: Essays in Contemporary Law Reform, Canberra, ANU Press, 2017, էջ 164–172:

տեքստում կարևոր նշանակություն ունի Ս. Ու. Բյուելի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ կազմակերպությունների պատասխանատվությունը պետք է հնարավորինս սերտորեն կապվի ինստիտուցիոնալ մեղադրելիության հետ, քանի որ վերադասի պատասխանատվության սկզբունքը չափազանց ընդարձակ կիրառություն ունի[17]: Այս դրույթով՝ իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հարցում մեղքի սկզբունքը պահպանվում է ոչ թե ցանկացած կապի բավարար համարելու, այլ իրավաբանական անձի հետ հատուկ - նորմատիվ կապ ունենալու համատեքստում:

Նույն տրամաբանությամբ՝ ՔՕ 5-րդ հոդվածում նախատեսված անձնական պատասխանատվության սկզբունքը չի կարող բառացիորեն տարածվել իրավաբանական անձի վրա, քանի որ վերջինս հանցանք կատարող դասական սուբյեկտ չէ: Ուստի իրավաբանական անձի վերաբերյալ լրացումը պետք է հիմնվի ոչ թե «իր կատարած հանցանքի համար պատասխանատվության» գաղափարի, այլ ֆիզիկական անձի կատարած հանցանքի՝ իրավաբանական անձին վերագրվելու հանգամանքի վրա: Այստեղ առանցքայինը հենց վերագրելիությունն է՝ որպես իրավաբանական անձի պատասխանատվության նյութահիրավական հիմք:

ՀՀ քրեական օրենսգրքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտն առանձնացված է Ընդհանուր մասի ինքնուրույն՝ 7-րդ բաժնում, սակայն այդ առանձնացումը դեռևս չի ուղեկցվում բավարար դոգմատիկ հստակությամբ: ՔՕ 122-րդ հոդվածի 6-րդ մասը միայն հղումային կարգով նախատեսում է, որ իրավաբանական անձը պատասխանատվության է ենթարկվում օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով 7-րդ բաժնի կանոնները, իսկ ՔՕ 123-րդ հոդվածը սահմանում է ոչ թե իրավաբանական անձի մեղքի կամ կորպորատիվ մեղավորության հասկացությունը, այլ պատասխանատվության առաջացման պայմանները: ՔՕ 125-րդ հոդվածի 1-ին մասը, իր հերթին, միայն ամրագրում է, որ Ընդհանուր մասի հիմքերով ազատումը կիրառելի է իրավաբանական անձի նկատմամբ այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են նրա նկատմամբ: Հետևաբար օրենսգրքում բացակայում է այն ընդհանուր դոգմատիկ «կամուրջը», որը կբացատրեր, թե ինչպես են անձնական պատասխանատվության, մեղքի և վերագրելիության ընդհանուր քրեաիրավական կատեգորիաները փոխակերպվում և կիրառվում իրավաբանական անձի նկատմամբ, ինչի հետևանքով ինստիտուտի գործարկման տրամաբանությունը մնում է ոչ ամբողջությամբ թափանցիկ թե՛ տեսության, թե՛ իրավակիրառ պրակտիկայի համար:

Վերոգրյալից բխում է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասով քննարկման առարկա սկզբունքները նպատակահարմար է հստակեցնել իրավաբանական անձի նկատմամբ կիրառման համատեքստում[18]: Այդպիսի լուծումը ոչ միայն կվերացնի ընդհանուր և հատուկ նորմերի միջև առկա անհամապատասխանությունը, այլև կապահովի իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի առավել հետևողական դոգմատիկ հիմնավորում:

Մասնավորապես՝ անդրադառնալով անձնական պատասխանատվության սկզբունքին՝ առաջարկվում է 5-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով, հետևյալ ձևակերպմամբ[19]՝

---

[17] Տե՛ս *Buell S. W.*, "The Blaming Function of Entity Criminal Liability", Indiana Law Journal, 2006, vol. 81, no. 2, էջ 525–526:

[18] **Ծանոթագրություն.** Խնդիրը ՔՕ 123-րդ հոդվածով նախատեսված հատուկ հիմքերի բացակայությունը չէ, այլ այն, որ ՔՕ ընդհանուր սկզբունքները բավարար չափով չեն կապվում իրավաբանական անձանց պատասխանատվության հատուկ ռեժիմի հետ, ուստի լուծումը պետք է տրվի հենց սկզբունքների մակարդակում:

[19] **Ծանոթագրություն.** Այս ձևակերպումը պահպանում է 5-րդ հոդվածի նյութահիրավական տրամաբանությունը, սակայն իրավաբանական անձի դեպքում այն հիմնվում է ոչ թե նրա «սեփական հանցանքի», այլ իրավաբանական անձին վերագրվող հանցանքի հիման վրա:

Իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության այն հանցանքի համար, որը սույն օրենսգրքի 123-րդ հոդվածին համապատասխան վերագրվում է իրավաբանական անձին:

Առաջարկվող լրացումը վերաբերում է ոչ թե իրավաբանական անձի «իր իսկ կատարած հանցանքին», այլ ֆիզիկական անձի կատարած հանցանքի՝ իրավաբանական անձին վերագրելիությանը: Այդ առումով կարող է առաջին հայացքից տպավորություն ստեղծվել, թե հոդվածի վերնագրի և առաջարկվող նոր բովանդակության միջև առկա է որոշակի օրենսդրական համաչափության խնդիր, որը մեր կարծիքով հաղթահարելի է, քանի որ «անձնային պատասխանատվությունը» լայն իմաստով ենթադրում է նաև, որ ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել օտար վարքագծի համար, եթե այդ վարքագիծը օրենքով սահմանված չափանիշներով վերագրելի չէ հենց իրեն: Նման մեկնաբանությունը խորթ չէ հայրենական քրեական իրավունքին, որի դրսևորումներից է նաև հանցանքը միջնորդավորված կատարելու[20] վերաբերյալ իրավակարգավորումը: Այս մոտեցման պայմաններում իրավաբանական անձի պատասխանատվությունը ևս պահպանում է իր անձնավորված բնույթը, քանի որ այն չի հիմնվում պատահական կամ ձևական կապի վրա, այլ կարող է առաջանալ միայն ՔՕ 123-րդ հոդվածով նախատեսված հատուկ վերագրելիության պայմանների առկայության դեպքում:

Անդրադառնալով ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքին՝ *Առաջարկվում է 6-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով, հետևյալ ձևակերպմամբ՝*

«Իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե սույն օրենսգրքի 123-րդ հոդվածով նախատեսված անձը սույն օրենսգրքով նախատեսված արարքը կատարել է առանց մեղքի կամ կատարել է անզգուշությամբ այն դեպքում, երբ օրենքը քրեական պատասխանատվություն է նախատեսում տվյալ արարքը միայն դիտավորությամբ կատարելու համար»:

Գտնում ենք, որ նմանօրինակ լրացումը կարևոր է իրավաբանական անձի քրեական պատասխանատվության շրջանակում մեղքի խնդրի ճիշտ ընկալման և մեկնաբանման համար, քանի որ այն հստակեցնում է, որ իրավաբանական անձի պատասխանատվության հարցում մեղքը պետք է գնահատվի ՔՕ 123-րդ հոդվածով նախատեսված համապատասխան ֆիզիկական անձի մեղքի առկայության կամ բացակայության հիման վրա՝ առանց վերագրելիության ամբողջ կառուցակարգի վերարտադրության կամ նեղացման, մինչդեռ վերագրելիության մյուս պայմանները պահպանում են իրենց ինքնուրույն նշանակությունը[21]: Դրանով թուլացվում է նաև այն տեսական առարկությունը, թե իրավաբանական անձը չի կարող լինել քրեական պատասխանատվության սուբյեկտ, քանի որ չի կարող ունենալ մեղք:

Համեմատական տեսությամբ ևս հաստատում է սույն եզրակացության կենսունակությունը. իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության խնդիրը հիմնականում դիտարկվում է ոչ թե որպես քրեական իրավունքի սահմաններից դուրս եկող ինստիտուտ, այլ որպես դասական սկզբունքների վերահիմաստավորում պահանջող առանձնահատուկ կառուցակարգ, որի ներսում առանցքային դեր են խաղում վերագրելիության, մեղքի և սկզբունքնե-

[20] **ՔՕ 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն**՝ համակատարումը բացակայում է, երբ հանցանք կատարողն օգտագործում է այնպիսի անձի, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ տվյալ հանցագործության համար որպես կատարող պատասխանատվության չի ենթարկվում:

ՔՕ 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կատարող է համարվում նաև այն անձը, որը հանցանքը կատարել է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, կամ ենթակա չէ տվյալ հանցագործության համար որպես կատարող, կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ:

[21] **Ծանոթագրություն.** Առաջարկվող փոփոխությունը միտված չէ կորպորատիվ մեղքի կամ դրա բացառման չափորոշիչների ինքնուրույն կարգավորմանը, քանի որ այդ խնդիրը արդեն իսկ լուծվում է ՔՕ 124-րդ հոդվածով:

րի վերաձևակերպված չափանիշները[22]:

Եզրակացություն

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ՀՀ քրեական իրավունքում չի կարող մեկնաբանվել ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության դասական մոդելի նույն տրամաբանությամբ: Գործող օրենսդրությամբ իրավաբանական անձը չի ներկայացվում որպես հանցագործության սուբյեկտ դասական իմաստով, իսկ նրա պատասխանատվությունը պետք է հասկանալ որպես հատուկ վերագրելիության վրա հիմնված և քրեական պատասխանատվության համակարգի ներսում գործող առանձնահատուկ կառուցակարգ:

Քրեական օրենսդրության ընդհանուր սկզբունքների և իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հատուկ նորմերի միջև առկա է համակարգային խզում, քանի որ ընդհանուր մասի սկզբունքները ձևակերպված են ֆիզիկական անձակենտրոն տրամաբանությամբ, իսկ իրավաբանական անձանց պատասխանատվության հիմքերը՝ առանց բավարար դոգմատիկ կապի:

Այս պայմաններում հիմնավորված է ՔՕ 5-րդ և 6-րդ հոդվածներում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունը՝ հստակեցնելու իրավաբանական անձի պատասխանատվության վերագրելի հիմքը և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի կիրառությունը իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի հետ, ինչը կնպաստի դրա դոգմատիկ ամբողջականության, իրավական որոշակիության և արդյունավետ կիրառման ապահովմանը:

Ամփոփագիր: Սույն հոդվածը նվիրված է ՀՀ քրեական պատասխանատվության համակարգում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության տեղը բացահայտելուն: Հոդվածում հիմնավորվում է, որ գործող օրենսդրությամբ իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը չի կարող ընկալվել որպես դասական իմաստով ինքնուրույն հանցանք կատարած սուբյեկտի պատասխանատվություն, այլ պետք է մեկնաբանվի որպես հատուկ վերագրելիության վրա հիմնված՝ քրեական պատասխանատվության համակարգի ներսում գործող ինքնուրույն կառուցակարգ: Միաժամանակ բացահայտվում է, որ քրեական օրենսդրության ընդհանուր սկզբունքների և իրավաբանական անձանց վերաբերյալ հատուկ նորմերի միջև առկա են համակարգային ոչ բավարար կապեր, որոնց հաղթահարման նպատակով առաջարկվում են օրենսդրական լրացումներ՝ ՔՕ 5-րդ և 6-րդ հոդվածներում՝ ուղղված անձնական պատասխանատվության՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքների ընկալման ու կիրառման չափանիշների հստակեցմանը իրավաբանական անձանց նկատմամբ:

Annotation. This article is devoted to identifying the place of criminal liability of legal entities within the system of criminal liability of the Republic of Armenia. It substantiates that, under the current legislation, the criminal liability of a legal entity cannot be understood as the liability of a subject that has independently committed a crime in the classical sense, but should instead be interpreted as an autonomous construct operating within the system of criminal liability and based on special attribution. At the same time, the article reveals that there are insufficient systemic links between the general principles of criminal legislation and the special norms concerning legal entities. To overcome this gap, it proposes legislative amendments to Articles 5 and 6 of the Criminal Code aimed at clarifying the criteria for understanding and applying the principles of personal responsibility and fault-based liability with regard to legal entities.

[22] Առավել մանրամասն՝ Տես *Beale S. S.,* (….) նույն տեղում, և *Gobert J.,* (….) նույն տեղում:

Аннотация. Настоящая статья посвящена определению места уголовной ответственности юридических лиц в системе уголовной ответственности Республики Армения. В статье обосновывается, что в соответствии с действующим законодательством уголовная ответственность юридического лица не может рассматриваться как ответственность субъекта, самостоятельно совершившего преступление в классическом понимании данного института. Она должна толковаться как самостоятельная правовая конструкция, функционирующая в рамках системы уголовной ответственности и основанная на механизме специального вменения.

Одновременно выявляется, что между общими принципами уголовного законодательства и специальными нормами, регулирующими уголовную ответственность юридических лиц, сохраняются недостаточные системные взаимосвязи. Для преодоления данной проблемы предлагается внести соответствующие дополнения в статьи 5 и 6 Уголовного кодекса Республики Армения, направленные на уточнение содержания и особенностей применения принципов личной ответственности и ответственности вины в отношении юридических лиц.

Բանալի բառեր *- իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն, քրեական պատասխանատվության համակարգ, անձնական պատասխանատվություն, վերագրելիություն, մեղք, սկզբունքներ:*

Keywords: *criminal liability of legal entities, system of criminal liability, personal responsibility, attribution, guilt, principles.*

Ключевые слова: *уголовная ответственность юридических лиц, система уголовной ответственности, личная ответственность, специальное вменение, вина, принципы уголовного права.*

Օգտագործված գրականության ցանկ

Իրավական ակտեր

1. Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 19.11.2008 թ. 2008/99/ԵՀ հրահանգ՝ շրջակա միջավայրի պաշտպանության մասին քրեական իրավունքի միջոցով, Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր, OJ L 328, 06.12.2008, էջ 28–37,
2. Չեխիայի Հանրապետության՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և դրանց նկատմամբ վարույթի մասին օրենք, 27.10.2011 թ., թիվ 418/2011 ժողովածու (Coll.), ուժի մեջ է մտել 01.01.2012 թ.,
3. Իսպանիայի քրեական օրենսգիրք, 23.11.1995 թ. Օրգանական օրենք թիվ 10/1995, Գիրք I, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը վերաբերող հոդված 31 bis, որը ավելացվել է 22.06.2010 թ. Օրգանական օրենք 5/2010-ով և վերախմբագրվել 30.03.2015 թ. Օրգանական օրենք 1/2015-ով,
4. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՀ օրենք, ընդունված 05.05.2021 թ., ՀՕ-199-Ն,
5. Միավորված ազգերի կազմակերպության «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, ընդունված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 31.10.2003 թ. 58/4 բանաձևով, Նյու Յորք,
6. Պորտուգալիայի քրեական օրենսգիրք, հաստատված 23.09.1982 թ. թիվ 400/82 հրամանագրով, հետագա փոփոխություններով, ներառյալ 04.09.2007 թ. թիվ 59/2007 օրենքը, հոդված 11՝ «Ֆիզիկական և իրավաբանական անձանց պատասխանատվությունը»,
7. Ռումինիայի քրեական օրենսգիրք, Legea nr. 286/2009 privind Codul penal, ընդունված 17.07.2009 թ., հրապարակված 24.07.2009 թ., ուժի մեջ՝ 01.02.2014 թ., Վերնագիր VI,
8. Ֆրանսիայի քրեական օրենսգիրք, ընդունված 22.07.1992 թ. թիվ 92-683 օրենքով, ուժի մեջ՝ 01.03.1994 թ., Գիրք I, Վերնագիր II, հոդված 121-2:

Մենագրություններ, հոդվածներ և զեկույցներ

1. Beale S. S., “A Response to the Critics of Corporate Criminal Liability”, American Criminal Law Review, 2009, vol. 46, no. 4, էջ 1481–1505,

2. Buell S. W., “The Blaming Function of Entity Criminal Liability”, Indiana Law Journal, 2006, vol. 81, no. 2, էջ 473–537,

3. Clough J., “Improving the Effectiveness of Corporate Criminal Liability: Old Challenges in a Transnational World”, in: Levy R., O’Brien M., Rice S., Ridge P., Thornton M. (eds.), New Directions for Law in Australia: Essays in Contemporary Law Reform, Acton ACT: ANU Press, 2017, էջ 163–172,

4. De Maglie C., “Models of Corporate Criminal Liability in Comparative Law”, Washington University Global Studies Law Review, 2005, vol. 4, no. 3, էջ 547–566,

5. Dobrocsi S., “Procedural Issues Regarding the Criminal Liability of Legal Persons in Hungary”, in: Dny práva 2012 – Days of Law 2012. Část VII. Trestněprávní a procesní alternativy v trestním právu individuálním a kolektivním, Brno: Masarykova univerzita, 2013, էջ 1360–1371,

6. Dupont C., Rass-Masson N., Evaluation Study on the Implementation of Directive 2008/99/EC on the Protection of the Environment through Criminal Law by Member States. Final Report, Brussels: Milieu Ltd. (prepared for the European Commission, DG Justice), March 2013 (update May 2014), էջ 97,

7. Ferenčíková S., “Slovakia: National Regulations in the Shadow of a Common Past”, in: Váradi-Csema E. (ed.), Criminal Legal Studies: European Challenges and Central European Responses in the Criminal Science of the 21st Century, Miskolc–Budapest: Central European Academic Publishing, 2022, էջ 205–224.

8. Gobert J., “Corporate Criminality: Four Models of Fault”, Legal Studies, 1994, vol. 14, no. 3, էջ 393–410,

9. Loughnan A., “‘The Very Foundations of Any System of Criminal Justice’: Criminal Responsibility in the Australian Model Criminal Code”, International Journal for Crime, Justice and Social Democracy, 2017, vol. 6, no. 3, էջ 8–24,

10. Волженкин Б. В., Уголовная ответственность юридических лиц, СПб., 1998, էջ 40,

11. Ситковский И. В., Уголовная ответственность юридических лиц: автореф. дис. … канд. юрид. наук, М., 2003, էջ 30:

Թովմասյան Դ. - ՀՀ փաստաբանների պալատի անդամ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, էլհասցե՝ Tovmasyan.law@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 17.04.2026 թ., տրվել է գրախոսության 17.04.2026 թ., երաշխավորվել է ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մարգարյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-119

ՎԱՐԱԶԴԱՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ.

VARAZDAT SUKIASYAN
PhD in Law,
Lecturer at the Department of Criminal Law and Criminal Procedure Law, Institute of Law and Politics of the Russian-Armenian University

ВАРАЗДАТ СУКИАСЯН
Кандидат юридических наук,
преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права Российско-Армянского университета
https://orcid.org/0009-0007-5303-6372

IN ABSENTIA ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

IN ABSENTIA TRIAL AT THE INTERNATIONAL CRIMINAL COURT

СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО IN ABSENTIA В МЕЖДУНАРОДНОМ УГОЛОВНОМ СУДЕ

The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25YR-5E005).

Ներածություն

Արդար դատաքննության իրավունքը ճանաչվել է 1948 թվականին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և հետագայում ներառվել է բոլոր միջազգային և տարածաշրջանային մարդու իրավունքների փաստաթղթերում: Դրանց շարքում առաջատար նշանակություն ունի 1966 թվականի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը: Այն մարդու իրավունքների առավել լայնորեն վավերացված պայմանագրերից է՝ ունենալով աշխարհի բոլոր տարածաշրջաններից 173 մասնակից պետություն,

ինչպես նաև մշտական մասնագիտացված մարմին՝ Մարդու իրավունքների կոմիտե, որը վերահսկում է դրա դրույթների կատարման ընթացքը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ICCPR, 1966 թվականի դեկտեմբերի 16) 14-րդ հոդվածն արդար դատաքննության իրավունքի մեկնարկային կետն ու կազմակերպչական սկզբունքն է: 14-րդ հոդվածը ծառայել է որպես մոդել Եվրոպայի, Ամերիկայի, Աֆրիկայի և արաբական տարածաշրջանի պայմանագրերի, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի կողմից ընդունված ոչ պարտադիր հռչակագրի համար[1]: Տարածաշրջանային պայմանագրերում արդար դատաքննության իրավունքի ծավալն ու ձևակերպումները տարբեր են. որոշ բաղադրիչ իրավունքներ ապահովվում են ավելի բարձր մակարդակով, մինչդեռ մյուսները՝ ավելի սահմանափակ կամ ընդհանրապես բացակայում են: Այնուամենայնիվ, ICCPR-ի 14-րդ հոդվածը միջազգային պաշտպանության առանցք և հիմք է ծառայել նաև միջազգային քրեական դատարանների կանոնադրություններում մեղադրյալի իրավունքների ձևավորման համար:

Միջազգային փաստաթղթերը, պայմանագրային մարմինները, ինչպես նաև առկա գիտական գրականությունը ներկայացնում են արդար դատաքննության իրավունքը կազմող բաղադրիչ իրավունքների տարբեր ցանկեր[2]:

ICCPR-ի 14-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է դատարանների և տրիբունալների առջև հավասարության իրավունքը, ինչպես նաև իրավասու, անկախ և անաչառ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքննության իրավունքը և հրապարակային դատավճիռ՝ սահմանափակ բացառություններով: 14-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է անմեղության կանխավարկածին, իսկ 14-րդ հոդվածի 3-րդ կետի (ա)–(գ) ենթակետերը սահմանում են նվազագույն դատավարական երաշխիքները: Առանձին գլուխներ նվիրված են նաև բողոքարկման իրավունքին և իրավական պաշտպանության միջոցներին՝ համապատասխանաբար 14-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն: Մեկ այլ գլուխ անդրադառնում է կրկնակի դատապարտման արգելքին (double jeopardy), որն ամրագրված է 14-րդ հոդվածի 7-րդ կետում:

Դատավարությանը ներկա լինելու իրավունքը ներառված չէ ՄԻԵԿ-ում, սակայն այն բխում է արդար դատաքննության իրավունքների այլ բաղադրիչներից, ներառյալ անձամբ կամ փաստաբանի օգնությամբ պաշտպանվելու, թարգմանչի ծառայություններից օգտվելու և անմեղության կանխավարկածի իրավունքները:

Սակայն, մեղադրյալի բացակայությամբ ընթացակարգերի հարցը դեռևս բավարար չափով զարգացած չէ, քանի որ նման դեպքերը համեմատաբար հազվադեպ են միջազգային քրեական իրավունքում:

Հիմնական հետազոտություն

Դատավարությանը ներկա լինելու իրավունք

Չնայած մեղադրյալի՝ դատավարությանը ներկա լինելու իրավունքի հիմնարար նշանակությանը, ազգային իրավակարգերում դրա կիրառման առնչությամբ ձևավորվել է էականորեն տարաբնույթ պրակտիկա: Քաղաքացիական իրավունքի համակարգերին բնորոշ է in

[1] ECHR; ACHR; ACHPR; Arab Charter; ASEAN Declaration.

[2] Օրենքով ստեղծված իրավասու, անկախ և անաչառ դատարանի իրավունք, հրապարակային դատավարության իրավունք, անմեղ համարվելու իրավունք, պաշտպանություն նախապատրաստելու իրավունք, փաստաբան ունենալու իրավունք, անհապաղ դատվելու իրավունք, **ներկա գտնվելու իրավունք**, վկաներին հարցաքննելու իրավունք, թարգմանիչ ունենալու իրավունք, լռության իրավունք, վերաքննության իրավունք, հավասարության իրավունք, կրկնակի վտանգի չենթարկվելու իրավունք:

absentia դատավարությունների թույլատրելիությունը՝ պայմանով, որ վերջինիս ներկայանալու պարագայում երաշխավորվում է գործի վերանայման իրավունքը[3]: Ընդհակառակը, ընդհանուր իրավունքի համակարգերում in absentia դատավարությունները դիտարկվում են որպես սկզբունքորեն անընդունելի՝ բացառությամբ բացառիկ իրավիճակների, մասնավորապես՝ մեղադրյալի ոչ պատշաճ վարքագծի հետևանքով առաջացած ժամանակավոր բացակայության դեպքերի[4]:

Միջազգային քրեական արդարադատության մարմինները, լինելով քաղաքացիական և ընդհանուր իրավունքի համակարգերի տարրեր համադրող հիբրիդային կառուցվածքներ, ցուցաբերում են ոչ միասնական մոտեցում մեղադրյալի in absentia դատավարության թույլատրելիության հարցում: Մասնավորապես, Միջազգային քրեական դատարանը մեղադրյալի ներկայությունը սահմանում է և որպես սուբյեկտիվ իրավունք, և որպես դատավարական պարտականություն, մինչդեռ Լիբանանի հատուկ տրիբունալը միջազգային քրեական արդարադատության համակարգում առանձնանում է in absentia դատավարությունների իրականացումը թույլատրող իր նորմատիվ կարգավորումներով:

Լիբանանի հատուկ տրիբունալի որդեգրած մոտեցումը սկզբնական շրջանում արժանացավ հակասական գնահատականների՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը նախորդ միջազգային տրիբունալների ձևավորման ընթացքում հետևողականորեն առաջ էր քաշել այն սկզբունքը, համաձայն որի՝ դատավարությունը չպետք է սկսվի մինչև մեղադրյալի ֆիզիկական ներկայությունը միջազգային դատարանի առջև: Այս դիրքորոշումը մասնավորապես արտացոլվել էր նախկին Յուգոսլավիայի համար ստեղծված միջազգային քրեական տրիբունալի հիմնադրման գործընթացում, որտեղ ընդգծվել էր, որ in absentia դատավարությունների նախատեսումը կարող է հակասել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածով ամրագրված՝ մեղադրյալի՝ իր ներկայությամբ դատվելու իրավունքին:

Միևնույն ժամանակ, Լիբանանի հատուկ տրիբունալի առաջին նախագահ Անտոնիո Կասեզեի ներկայացրած բացատրական հուշագրում հիմնավորվում էր, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի նախադեպային իրավունքը բազմիցս հաստատել է in absentia դատավարությունների համատեղելիությունն արդար դատաքննության սկզբունքների հետ՝ պայմանով, որ ապահովվում են մեղադրյալի իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ գործընթացային երաշխիքները[5]:

Վերջնական արդյունքում, Լիբանանի հատուկ տրիբունալի կողմից in absentia դատավարությունների կիրառման սկզբունքը ընդունվեց միջազգային հանրության և շահագրգիռ մասնակիցների կողմից՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն հանգամանքը, որ կիրառելի ազգային իրավունքը թույլ էր տալիս նման ընթացակարգեր, ինչպես նաև առկա քաղաքական իրողությունները, որոնց պայմաններում տրիբունալի իրավազորության ներքո ենթադրվող հանցագործությունների մեջ կասկածվող անձանց ձերբակալությունը գործնականում քիչ հավանական էր[6]:

Մեղադրյալի՝ դատավարությանը ներկա գտնվելու իրավունքը Քաղաքացիական և քաղա-

[3] *T. Marauhn,* 'The Right of the Accused to Be Tried in His or Her Presence', in D. Weissbrodt & R. Wolfrum (eds), The Right to a Fair Trial (Springer 1997), 764:
[4] *W. A. Schabas,* The International Criminal Court, A Commentary (2nd edn, OUP 2016), 964– 65:
[5] STL, 'Explanatory Memorandum by the Tribunal's President to Rules of Procedure and Evidence' (2009), §35; see also §§36, 39. See s. 6 (Conditions for Trials in the Absence of the Defendant):
[6] *A. Clooney and P. Webb,* The Right to a Fair Trial in International Law (Oxford University Press, 2021) p. 447:

քական իրավունքների միջազգային դաշնագրում ամրագրված է առանց վերապահումների՝ ի տարբերություն այլ բաղադրիչ իրավունքների, օրինակ՝ հրապարակային դատաքննության իրավունքի: Պետությունները պարտավոր են պահպանել խիստ պայմաններ, երբ իրականացնում են քրեական վարույթ մեղադրյալի բացակայությամբ, այդ թվում՝ ապահովելով վերաքննության (վերադատության) իրավունքը:

Ներկա գտնվելու իրավունքի սահմանափակման նեղ շրջանակներ մշակվել են միջազգային մարմինների նախադեպային իրավունքում: Դրանք ներառում են, մասնավորապես, մեղադրյալի կողմից իրավունքի բացահայտ հրաժարումը, ենթադրյալ հրաժարումը՝ փախուստի դիմելու կամ դատավարությանը խանգարող վարքագծի դրսևորման միջոցով, ինչպես նաև այն դեպքերը, երբ մեղադրյալը չի կարող ներկայանալ հիվանդության պատճառով, կամ երբ դատարանը քննում է ազգային անվտանգությանն առնչվող հարցեր կամ խոցելի վկաների պաշտպանության խնդիրներ: Ներկա գտնվելու իրավունքը տարածվում է դատավարության ամբողջ ընթացքի վրա:

Միջազգային մակարդակում այս իրավունքի բովանդակության սահմանման շրջանակում առաջանում են մի շարք հիմնարար հարցեր, մասնավորապես՝ արդյո՞ք ներկայությունը պետք է դիտարկվի որպես իրավունք, թե նաև պարտականություն, արդյո՞ք այն կարող է ապահովվել տեսաձայնային կապի կամ այլ տեխնոլոգիական միջոցների եղանակով, ինչպե՞ս պետք է երաշխավորվեն պաշտպանության կողմի իրավունքները in absentia դատավարության ընթացքում, ի՞նչ պայմաններով կարող են համարվել իրավաչափ բացահայտ և ենթադրյալ հրաժարումները տվյալ իրավունքից, ինչպե՞ս պետք է կարգավորվի հիվանդ վիճակում գտնվող մեղադրյալների մասնակցությունը, ինչպես նաև՝ in absentia դատավարությունից հետո վերաքննության իրավունքի ապահովման հարցը:

Մեղադրյալի՝ դատավարությանը ներկա գտնվելու իրավունքը ապահովում է, որ վերջինս կարողանա երևալ և լսվել՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր պաշտպանի միջոցով, ինչպես նաև հետևել դատավարության ընթացքին և արդյունավետորեն մասնակցել դրան[7]: Այս իրավունքը հնարավորություն է տալիս լիարժեք իրագործելու արդար դատաքննության այլ բաղադրիչ իրավունքներ, ինչպիսիք են վկաներին հարցաքննելու իրավունքը և անձամբ պաշտպանվելու իրավունքը[8]: Բացի դրանից՝ այն դեպքերում, երբ մեղադրյալը ցուցմունք է տալիս դատավարության ընթացքում, նրա ներկայությունը հնարավորություն է տալիս դատարանին «ստուգելու նրա հայտարարությունների ճշգրտությունը և համադրելու դրանք տուժողի, ինչպես նաև վկաների ցուցմունքների հետ»: Այսպիսի ստուգման, համադրման և գնահատման գործընթացը բարձրացնում է հանրության վստահությունը արդարադատության իրականացման նկատմամբ:

Մեղադրյալի՝ ներկա գտնվելու իրավունքը ուղղակիորեն ամրագրված չէ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում կամ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայում, սակայն այն բխեցվել է արդար դատաքննության այլ բաղադրիչ իրավունքներից՝ ներառյալ արդար դատաքննության, անձամբ կամ պաշտպանի միջոցով պաշտպանվելու, թարգմանչի օգնությունից օգտվելու և անմեղության կանխավարկածի իրավունք-

[7] ECtHR (GC), Zana v. Turkey (69/ 1996/ 688/ 880), 25 November 1997, §68:
[8] ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35. Տե՛ս նաև ECtHR, Sigurþórsson v. Iceland (App. no. 38797/ 17), 16 July 2019, §42; ECtHR, Lazu v. Republic of Moldova (App. no. 46182/ 08), 5 July 2016, §42. Cf. ECtHR, Popa v. Romania (App. no. 1814/ 11), 18 February 2020, §§45– 47. Տե՛ս հաջորդիվ ICC, Prosecutor v. Ruto et al. (ICC- 01/ 09- 01/ 11 OA 5), Judgment on the Appeal of the Prosecutor against the Decision of Trial Chamber V(a) of 18 June 2013 entitled 'Decision on Mr Ruto's Request for Excusal from Continuous Presence at Trial', 25 October 2013 (այսուհետ: 'ICC Ruto Appeal Judgment of 25 October 2013'), §§47– 49:

ներից[9]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ ներկա գտնվելու իրավունքը հանդիսանում է «արդար դատաքննության» բաղադրիչ՝ ըստ Եվրոպական կոնվենցիայի 6(1) հոդվածի՝ ընդգծելով, որ «դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող է մեղադրյալը իրականացնել իր իրավունքները … առանց դատավարությանը ներկա գտնվելու»: Դատարանը նաև շեշտել է, որ քրեական գործով մեղադրյալի ներկայությունը դատարանում ապահովելու պարտավորությունը հանդիսանում է 6-րդ հոդվածի էական պահանջներից մեկը[10]: Այս իրավունքը նաև ուղղակիորեն ամրագրված է Եվրոպական միության օրենսդրության մեջ, որը պարտադրում է անդամ պետություններին ապահովել, որ կասկածյալներն ու մեղադրյալներն ունենան դատավարությանը ներկա գտնվելու իրավունք[11]:

Ի տարբերություն վերը նշվածի, ներկա գտնվելու իրավունքը ներառված չէ Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայում և բացահայտորեն չի ճանաչվել որպես արդար դատաքննության բաղադրիչ՝ միջամերիկյան մարմինների նախադեպային իրավունքում: Այնուամենայնիվ, այն կարող է դիտարկվել որպես ներհատուկ այնպիսի իրավունքներին, ինչպիսիք են «դատաքննության իրավունքը», մեղադրյալի՝ «անձամբ պաշտպանվելու իրավունքը», «դատարանում ներկայացված վկաներին հարցաքննելու իրավունքը», «հրապարակային դատաքննության իրավունքը», ինչպես նաև անձնական ազատության իրավունքը[12]: Քանի որ ներկա գտնվելու իրավունքը սերտորեն կապված է այս իրավունքների հետ, միջամերիկյան համակարգում դրա պաշտպանության էական թուլացում չի դիտվում:

Ամերիկյան կոնվենցիայում այս իրավունքի բացակայությունը պետք է դիտարկել այն հանգամանքի լույսի ներքո, որ Լատինական Ամերիկայի դատարաններում դատավարությունները հաճախ հիմնված են գրավոր ընթացակարգերի վրա: Այդ պատճառով միջամերիկյան դատարանը նշել է, որ դատաքննության իրավունքը պարտադիր չէ, որ բոլոր դեպքերում իրականացվի բանավոր ձևով, թեև որոշ վարույթներում դա կարող է անհրաժեշտ լինել[13]: Ներկա գտնվելու իրավունքը նույնպես բացակայում է Հարավարևելյան Ասիայի մարդու իրավունքների հռչակագրում և Մարդու իրավունքների արաբական խարտիայում:

<u>«Ներկա լինելը իրավո՞ւնք, թե՞ պարտականություն»</u>

Մեղադրյալի ներկայությունն ընկալվում է որպես նրա իրավունք՝ ներկա գտնվելու իր դատավարությանը, ինչը ենթադրում է, որ նա կարող է հրաժարվել այդ իրավունքից և որոշել չներկայանալ[14]:

Մարդու իրավունքների կոմիտեն ներկայությունը դիտարկում է որպես մեղադրյալի իրավունք և նշել է, որ մեղադրյալները ոչ միայն «իրավունք ունեն» ներկա գտնվելու, այլ նաև

[9] ECtHR, Colozza v. Italy (App. no. 9024/ 80), 12 February 1985, §27. See also ECtHR (GC), Hermi v. Italy (App. no. 18114/ 02), 18 October 2006, §§58– 59; ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §81; ECtHR, T. v. Italy (App. no. 14104/ 88), 12 October 1992, §26; ECtHR, Brozicek v. Italy (App. no. 10964/ 84), 19 December 1989, §45 (as evidenced by the 'object and purpose of [Article 6] taken as a whole').
COE, Report of the Committee of Experts on Human Rights to the Committee of Ministers (1970) H(70)7, 39:

[10] ECtHR, Stoichkov v. Bulgaria (App. no. 9808/ 02), 24 March 2005, §56:

[11] Directive (EU) 2016/ 343 of the European Parliament and of the Council of 9 March 2016 on the strengthening of certain aspects of the presumption of innocence and of the right to be present at the trial in criminal proceedings (hereinafter: 'EU Presence Directive') Art. 8(1). See also §33:

[12] IACtHR, Herrera Espinoza v. Ecuador (Series C, no. 316), 1 September 2016, §174, Տես նաև՝ IACtHR, Constitutional Tribunal v. Ecuador (Series C, no. 268), 28 August 2013, §181:

[13] IACtHR, Apitz Barbera v. Venezuela (Series C, no. 182), 5 August 2008, §75. See also IACtHR, Palamara- Iribarne v. Chile (Series C, no. 135), 22 November 2005, §167:

[14] *C. H. Wheeler,* 'Right or Duty? Is the Accused's Presence at Trial a Right or a Duty Under International Criminal Law?' (2017) 28 Criminal Law Forum 99, 101ff:

կարող են «հրաժարվել իրենց ներկայության իրավունքի իրականացումից»[15]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որդեգրել է համանման, սակայն առավել զգուշավոր մոտեցում[16]: Այն դիտարկում է ներկա գտնվելու իրավունքը որպես «դատաքննության իրավունքի» բաղադրիչ, միևնույն ժամանակ ընդգծելով, որ «արդար քրեական գործընթացի շահերից ելնելով՝ վճռորոշ նշանակություն ունի մեղադրյալի ներկայությունը»[17]: Դատարանը, հետևաբար, արձանագրել է, որ օրենսդիրը պետք է կարողանա կանխել անհիմն բացակայությունները: Այն ընդունել է նաև, որ դատարան չներկայանալու համար կարող են կիրառվել «պատժամիջոցներ», պայմանով, որ դրանք համաչափ լինեն տվյալ գործի հանգամանքներին: Անհամաչափ են համարվում այնպիսի միջոցները, որոնք, օրինակ, սահմանափակում են իրավաբանական օգնության իրավունքը, քանի որ մեղադրյալը չի կորցնում իր պաշտպան ունենալու իրավունքը դատարան չներկայանալու պատճառով[18]:

Միջազգային քրեական դատարանների պրակտիկայում առկա են տարաձայնություններ այն հարցում, թե արդյո՞ք մեղադրյալի ներկայությունը հանդիսանում է իրավունք, թե՞ նաև պարտականություն: Միջազգային քրեական դատարանից բացի այլ միջազգային դատարանները այն դիտարկում են որպես իրավունք[19]: Սակայն ICC-ն ներկայությունը գնահատում է միաժամանակ որպես իրավունք և պարտականություն, ինչը նշանակում է, որ մեղադրյալը կարող է հարկադրվել ներկայանալ, օրինակ՝ ձերբակալության միջոցով: ICC-ն նշել է, որ թեև «անվիճելի է, որ դատավարությանը ներկայությունը մեղադրյալի իրավունք է» և այն կարող է կամավոր հրաժարվել միջազգային իրավունքի շրջանակում[20], միևնույն ժամանակ նրա կանոնադրությունը նախատեսում է առանձին դրույթ, համաձայն որի՝ մեղադրյալը «*պետք է ներկա գտնվի դատավարության ընթացքում*»: Դատարանի մեկնաբանությամբ՝ կանոնադրությունը հստակորեն հաստատում է, որ մեղադրյալի ներկայությունը նաև պարտականություն է, որը կարող է ապահովվել հարկադրանքի միջոցներով, եթե նա կամավոր չի ներկայանում[21]: Ավելին, այս պարտականությունը ենթադրում է դատավարության ընթացքում շարունակական ներկայություն: Միայն «բացառիկ հանգամանքներում» ICC-ն կարող է իր հայեցողությամբ ազատել մեղադրյալին շարունակական ներկայության պահանջից՝ case-by-case basis գնահատման հիման վրա: Նման բացառիկ հանգամանք է ճանաչվել այն իրավիճակը, երբ երկու մեղադրյալներ ստիպված էին կատարել «արտակարգ հանրային պարտականություններ», քանի որ նրանք զբաղեցնում էին Քենիայի նախագահի և փոխնախագահի պաշտոնները[22]:

Մեղադրյալի՝ դատավարությանը ներկա գտնվելու իրավունքն արդար դատաքննության

[15] HRC, General Comment No. 32 (2007), §36. Տես նաև HRC, Mbenge v. Democratic Republic of the Congo (Comm. no. 16/ 1977), 25 March 1983, §14.1:
[16] ECtHR, Neziraj v. Germany (App. no. 30804/ 07), 8 November 2012, §47; ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35:
[17] ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35; ECtHR, Cani v. Albania (App. no. 11006/ 06), 6 March 2012, §49; ECtHR, Pietiläinen v. Finland (App. no. 13566/ 06), 22 September 2009, §31; ECtHR, Stoichkov v. Bulgaria (App. no. 9808/ 02), 24 March 2005, §55:
[18] ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §92. See also ECtHR, Cani v. Albania App. no. 11006/ 06), 6 March 2012, §49; ECtHR, Pietiläinen v. Finland (App. no. 13566/ 06), 22 September 2009, §31; ECtHR, Stoichkov v. Bulgaria (App. no. 9808/ 02), 24 March 2005, §55; ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35:
[19] ICTR, Prosecutor v. Nahimana et al. (ICTR- 99- 52- A), Judgment, 28 November 2007 (hereinafter: 'ICTR Nahimana Appeal Judgment of 28 November 2007'), §§94–116:
[20] ICC Ruto Decision of 18 June 2013, §§35, 37 (citing ECtHR jurisprudence in n 6); ICTR Nahimana Appeal Judgment of 28 November 2007, §107:
[21] ICC, Prosecutor v. Gbagbo et al. (ICC- 02/ 11- 01/ 15- 1355- Red):
[22] ICC RPE Rule 134quater; ICC, Prosecutor v. Kenyatta (ICC- 01/ 09- 02/ 11):

հիմնարար տարրերից մեկն է, որն ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածում և զարգացվել է միջազգային ու տարածաշրջանային իրավունքի շրջանակում: Այն ապահովում է մեղադրյալի արդյունավետ մասնակցությունը դատավարությանը և սերտորեն կապված է պաշտպանության այլ հիմնարար իրավունքների իրականացման հետ:

Միևնույն ժամանակ, միջազգային և տարածաշրջանային իրավական համակարգերում առկա է էական տարբերակված մոտեցում այս իրավունքի բնույթի և սահմանափակումների վերաբերյալ: Թեև գերակշռող դիրքորոշմամբ այն դիտարկվում է որպես մեղադրյալի իրավունք, որոշ համակարգեր, մասնավորապես Միջազգային քրեական դատարանը, այն մեկնաբանում են նաև որպես պարտականություն, ինչը ենթադրում է ներկայության հարկադիր ապահովման հնարավորություն և սահմանափակում է այդ իրավունքից հրաժարվելու շրջանակը:

Բացի դրանից՝ in absentia դատավարությունների թույլատրելիությունը մնում է բացառիկ և խիստ պայմանավորված երևույթ, որի կիրառումը սահմանափակվում է նեղ շրջանակներով և ուղեկցվում է դատավարական երաշխիքների ապահովման պարտադիր պահանջով: Այս համատեքստում Լիբանանի հատուկ տրիբունալը բացառություն է՝ իր ավելի լայն մոտեցմամբ, մինչդեռ միջազգային իրավունքի ընդհանուր միտումը շարունակում է նախապատվությունը տալ մեղադրյալի ֆիզիկական ներկայությանը:

Վերջիվերջո, կարելի է եզրակացնել, որ մեղադրյալի ներկայության իրավունքը, լինելով արդար դատաքննության առանցքային բաղադրիչ, զարգանում է որպես բարդ և բազմաշերտ ինստիտուտ, որի բովանդակությունը ձևավորվում է ինչպես իրավական նորմերի, այնպես էլ գործնական և քաղաքական իրողությունների փոխազդեցության արդյունքում:

<u>In absentia դատավարությունը մեղադրանքի հաստատման փուլում</u>

Թեև մեղադրյալի՝ դատավարությանը ներկա գտնվելու իրավունքը Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածում ամրագրված է առանց վերապահումների, Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է, որ այդ դրույթը «և 14-րդ հոդվածում ամրագրված պատշաճ դատավարության այլ պահանջները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ in absentia դատավարությունները մշտապես անթույլատրելի համարվեն՝ անկախ մեղադրյալի բացակայության պատճառներից»[23]: Նմանապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «մեղադրյալի բացակայությամբ իրականացվող դատավարությունները ինքնին չեն հակասում» արդար դատաքննության իրավունքին[24]:

Այնուամենայնիվ, որպեսզի in absentia դատավարությունը համարվի արդար դատաքննությանը համապատասխան, անհրաժեշտ է պահպանել մի շարք պարտադիր պայմաններ.

(i) պետությունը պարտավոր է պատշաճ կերպով տեղեկացնել մեղադրյալին դատավարության մասին,

(ii) պետությունը պարտավոր է դատարանին հանձնել իր հսկողության տակ գտնվող մեղադրյալին,

(iii) պետությունը պարտավոր է ապահովել մեղադրյալի պաշտպանության իրավունքները, ներառյալ՝ պաշտպանի ներկայություն, և

(iv) պետությունը պարտավոր է տրամադրել վերաքննության հնարավորություն, եթե մեղադրյալը ներկայանա և չապացուցվի, որ նա հրաժարվել է ներկա գտնվելու իր իրավունքից կամ դիտավորությամբ խուսափել է դատավարությունից[25]:

[23] HRC, Mbenge v. Democratic Republic of the Congo (Comm. no. 16/ 1977), 25 March 1983, §14.1:
[24] ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §82:
[25] HRC, Maleki v. Italy (Comm. no. 699/ 1996), 15 July 1999, §§9.2– 9.4; ECtHR (GC), Sejdovic v. Italy (App.

Միջազգային քրեական դատարանի Նախադատական III պալատը 2024 թվականի դեկտեմբերի 12-ին «Դատախազն ընդդեմ Ջոզեֆ Քոնիի» գործով նշանակել էր մեղադրանքների հաստատման լսումը, որը տեղի ունեցավ 2025 թվականի սեպտեմբերի 9-ին in absentia եղանակով: Պալատը սահմանել է նշված ամսաթիվը՝ հաշվի առնելով իր պարտականությունը՝ ապահովելու բավարար ժամանակահատված՝ (i) Մեղադրանքի կողմի համար՝ պատշաճ կերպով իրականացնելու առանձին որոշումներով տրված ցուցումները՝ ապացույցների բացահայտման և մեղադրանքների փաստաթղթի վերաներկայացման վերաբերյալ, և (ii) Պաշտպանության կողմի համար՝ պատշաճ պատրաստվելու մեղադրանքների հաստատման լսմանը:

Ինչ վերաբերում է in absentia վարույթ իրականացնելու համար անհրաժեշտ «հիմնավոր պատճառի» (good cause) առկայությանը՝ համաձայն Դատարանի ընթացակարգային 125(1) կանոնի, մեղադրանքի կողմը ներկայացրել էր երեք հիմնական հիմնավորում.

(i) դատավարության շարունակումը, անկախ մեղադրյալի երկարատև փախուստից, ցույց կտա, որ արդարադատությունը չի կարող խափանվել,

(ii) նման վարույթը կարող է խթանել միջազգային հանրության ջանքերը՝ մեղադրյալին հայտնաբերելու և ձերբակալելու ուղղությամբ, ինչպես նաև թույլ կտա գործը անմիջապես տեղափոխել դատաքննության փուլ նրա ձերբակալման դեպքում, և

(iii) կստեղծի հնարավորություն զոհերի համար արտահայտելու իրենց դիրքորոշումն ու մտահոգությունները:

Հռոմի կանոնադրությունը նախատեսում է, որ նախադատական փուլում մեղադրանքների հաստատման վարույթը կարող է իրականացվել կասկածյալի բացակայությամբ՝ որոշակի պայմանների առկայության դեպքում: Տվյալ գործով Պալատը գտել է, որ՝ (i) պարոն Քոնին հանդիսանում է անձ, որը «չի կարող հայտնաբերվել»՝ Հռոմի կանոնադրության 61(2)(բ) հոդվածի իմաստով, (ii) ձեռնարկվել են բոլոր ողջամիտ քայլերը՝ ապահովելու նրա ներկայությունը և նրան տեղեկացնելու մեղադրանքների ու լսման ամսաթվի մասին (սկզբնապես նշանակված՝ 2024 թվականի հոկտեմբերի 15-ին, և այժմ՝ 2025 թվականի սեպտեմբերի 9-ին), և (iii) առկա են հիմքեր՝ լսումը անցկացնելու in absentia կարգով[26]:

Հռոմի կանոնադրության 61-րդ հոդվածով նախատեսված մեղադրանքների հաստատման վարույթն ակնհայտորեն այնպիսի գործընթաց է, որտեղ կասկածյալի իրավունքների լիարժեք չապահովումը կարող է հանգեցնել լուրջ վնասների հետագա դատավարության ընթացքում: Ի տարբերություն նախաքննության փուլում կիրառվող *ex parte* ընթացակարգերի, որտեղ դատախազը ներկայացնում է ձերբակալման օրդերի կամ ծանուցման միջնորդություն և մեղադրանքների փաստաթուղթ, նախադատական փուլում գործընթացի առանցքը տեղափոխվում է քննությունից դեպի մեղադրանք, ինչը պահանջում է անցում միակողմանի ընթացակարգերից դեպի կասկածյալի իրավունքների ուժեղացված պաշտպանություն: Հենց այս փուլում է, որ իրավունքների չապահովումը կարող է էականորեն վնասել ապագա դատաքննության արդարությանը:

Մեղադրանքների հաստատման վարույթի հիմնական նպատակը կայանում է նրանում, որ «ապահովվի անձանց իրավունքների պաշտպանությունը՝ երաշխավորելով, որ գործերը և մեղադրանքները փոխանցվում են դատաքննության միայն այն դեպքում, երբ դրանք հիմնավորված են բավարար ապացույցներով»:

Մեղադրանքների հաստատման վարույթը նաև ապահովում է, որ «գործի շրջանակները հստակ սահմանվեն դատաքննության համար»: Հռոմի կանոնադրության 74(2) հոդվածը սահ-

no. 56581/ 00), 1 March 2006, §§81– 95:

[26] Situation in The Republic of Uganda in the case of the Prosecutor v. Joseph Kony, ICC-02/04-01/05 12 December 2024:

մանափակում է դատավճռի հիմքում ընկած փաստերը միայն հաստատված մեղադրանքներով, իսկ Դատարանի կանոնակարգի 55-րդ կանոնը թույլ է տալիս միայն իրավական որակման սահմանափակ փոփոխություն՝ առանց փաստերի շրջանակը ընդլայնելու: Վերաքննիչ պալատը ընդգծել է, որ դատաքննության ընթացքում գործի փաստերը և մեղադրանքները խիստ սահմանափակվում են նախադատական պալատի կողմից հաստատված շրջանակներով, և դատական պալատը չի կարող անտեսել կամ չեղարկել այդ մեղադրանքները[27]:

Մեղադրանքների հաստատման վարույթի այս կարևոր վերահսկողական դերը չի նվազում նույնիսկ այն դեպքում, երբ լսումներն անցկացվում են in absentia: Ընդհակառակը, հենց այս հանգամանքներն են հիմք հանդիսացել, որ նախադատական պալատը Քոնիի գործում ընդգծի, որ ICC-ի կանոնադրության «հիմնական դիրքորոշումն» այն է, որ կասկածյալը պետք է ներկա լինի նման լսումներին՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը և ազդեցությունը ապագա դատավարության վրա: Թեև Վերաքննիչ պալատը ընդունել է այս մոտեցումը, այն խուսափել է կասկածյալի նյութական իրավունքների՝ մասնավորապես ներկա գտնվելու իրավունքի, խորքային քննարկումից՝ սահմանափակվելով այն դիտարկմամբ, որ կասկածյալը հետագայում կկարողանա օգտվել Հռոմի կանոնադրության 67-րդ հոդվածով նախատեսված իրավունքներից:

Թեև Հռոմի կանոնադրության 61(2)(բ) հոդվածը սահմանափակվում է միայն այն պահանջով, որ ձեռնարկվեն «ողջամիտ քայլեր … անձին մեղադրանքների մասին տեղեկացնելու համար», և թե՛ Նախադատական պալատ II-ը, թե՛ III-ը գտել են, որ կասկածյալի իրական տեղեկացվածությունը իր դեմ վարույթի վերաբերյալ պարտադիր չէ, այս մոտեցումը ակնհայտորեն հակասում է հաստատված մարդու իրավունքների իրավունքի սկզբունքներին:

Այս մոտեցումը նաև հակասում է Միջազգային քրեական դատարանի Վերաքննիչ պալատի դիրքորոշմանն[28] առ այն, որ անձի դատարան չներկայանալը ինքնին չի կարող դիտարկվել որպես ներկա գտնվելու իրավունքից լռելյայն հրաժարում: Դատարանը կարողացավ խուսափել այս խնդրի մանրամասն քննարկումից Քոնիի գործով, հավանաբար այն պատճառով, որ առկա էին բավարար ապացույցներ՝ վկայող այն մասին, որ կասկածյալը տեղյակ էր իր ձերբակալման օրդերի մասին: Այնուամենայնիվ, նույնը չի կարելի ասել այն հարցի վերաբերյալ, թե արդյոք նա իրականում տեղեկացված էր մեղադրանքների հաստատման վարույթի անցկացման մասին:

<u>«De novo քննությունը միջազգային և ազգային մակարդակներում»</u>

<u>Միջազգային մակարդակ</u>

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն՝ այն դեպքում, երբ in absentia դատավարություն է իրականացվել առանց մեղադրյալի միանշանակ կերպով հրաժարման, ապա այդ խախտումը կարող է վերացվել, եթե մեղադրյալը ունենա իր ներկայությամբ լիարժեք վերաքննության իրավունք: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան հանձնաժողովը և Եվրոպական միության օրենսդրությունը նման վերաքննությունը բնութագրել են որպես մեղադրանքի էության «նոր քննություն» (fresh determination of the merits)[29]: Լիբանանի հատուկ տրիբունալի կանոնադրությու-

[27] Decision on the Prosecutor's Appeal against the 'Decision on the Prosecution's Request to Amend the Updated Document Containing the Charges pursuant to Article 61(9) of the Statute', Ruto and Sang (ICC-01/09-01/11-1123), Appeals Chamber, 13 December 2013, § 29; Judgment on the Appeal of Mr Jean-Pierre Bemba Gombo against Trial Chamber III's 'Judgment pursuant to Article 74 of the Statute', Bemba (ICC-01/05-01/08-3636-Red), Appeals Chamber, 8 June 2018, §§ 114–115:

[28] Ruto and Sang OA5 Judgment, supra note 31, § 54.

[29] HRC, Maleki v. Italy (Comm. no. 699/ 1996), 15 July 1999, §9.5 (violation of Art. 14(1)). See also HRC, Concluding

նը նախատեսում է, որ in absentia դատապարտված մեղադրյալը, որը չի նշանակել իր ընտրությամբ պաշտպան, ունի իր ներկայությամբ վերադատվելու իրավունք նույն տրիբունալի առջև, եթե չի ընդունում դատավճիռը:

Եվրոպական դատարանը արձանագրել է, որ ներկա գտնվելու իրավունքի խախտման դեպքում ամենահամապատասխան վերականգնողական միջոցը «սկզբունքորեն հանդիսանում է *de novo* դատաքննությունը կամ վարույթի վերաբացումը՝ համապատասխանաբար և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան»: Դատարանը նաև նշել է, որ in absentia դատավարությունից հետո վերաքննության իրավունքը գնահատելիս ազգային մարմինները կարող են ուսումնասիրել, թե արդյոք գործի նյութերում առկա են հանգամանքներ, որոնք ցույց են տալիս, որ մեղադրյալի բացակայությունը պայմանավորված է եղել նրա կամքից անկախ հանգամանքներով:

Միևնույն ժամանակ, ազգային մարմինները չեն կարող ապացուցման բեռը դնել մեղադրյալի վրա՝ պահանջելով ապացուցել, որ նա չի փորձել խուսափել արդարադատությունից կամ որ իր բացակայությունը պայմանավորված է եղել անհաղթահարելի ուժով (force majeure): Ի հակադրություն, Աֆրիկյան հանձնաժողովի արդար դատաքննության սկզբունքները կարծես թե նման բեռը դնում են մեղադրյալի վրա՝ սահմանելով նրա «իրավունքը դիմելու վարույթի վերաբացման համար՝ ապացուցելով, որ ծանուցումը եղել է անբավարար, չի հանձնվել անձամբ իրեն, կամ որ իր չներկայանալը պայմանավորված է եղել իր վերահսկողությունից դուրս արտակարգ հանգամանքներով»[30]:

Ազգային մակարդակ

Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը, այն է հեռակա վարույթը ՀՀ իրավական համակարգ է ներմուծվել դեռևս 2021 թվականին նախկին քրեական դատավարության օրենսգրքի պայմաններում[31]: Սկզբնական շրջանում իրավակիրառ պրակտիկայում հարց էր առաջացել թե արդյո՞ք կարելի է նախկինում հարուցված քրեական գործերով իրականացնել հեռակա վարույթ, երբ գործի հարուցման պահին այդ ինստիտուտն առկա չի եղել: Այս հարցին անդրադարձավ Վճռաբեկ դատարանը *Մանուկ Խաչատրյանի* գործով որոշմամբ, արձանագրելով, որ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի իմաստով **«սկսված վարույթ»** եզրույթը պետք է մեկնաբանել ոչ թե լայն՝ քրեական վարույթ սկսված լինելու (քրեական գործ հարուցված լինելու), այլ ավելի նեղ՝ կոնկրետ այն իրավահարաբերությունը **սկսված լինելու** իմաստով, որը կարգավորում է քրեադատավարական կիրառվող նորմը: Այդ համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարության որևէ փուլում օրենսդրությամբ նոր քրեադատավարական ինստիտուտ նախատեսելով, ինքնին, անձի վիճակը չի կարող վատթարանալ, եթե այդ ինստիտուտով նախատեսված իրավահարաբերությունն անձի և պետության միջև դեռևս սկսված չի եղել: Դեռ

Observations, Croatia (2009) UN Doc. CCPR/ C/ HRV/ CO/ 2, §11; ECtHR, Maksimov v Azerbaijan (App. no. 38228/ 05), 8 October 2009, §46 and operative provisions (violation of Art. 6(1)); ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §§82, 86 (violation of Art. 6(1)); ECtHR, Colozza v. Italy (App. no. 9024/80), 12 February 1985, §29 (violation of Art. 6(1)):

[30] ACmHPR Principles on Fair Trial in Africa Principle N(6)(c)(ii). Տես նաև CoM of the COE Resolution (75)11 on the criteria governing proceedings held in the absence of the accused, 21 May 1975, §§1– 9: In absentia դատված անձը ունի վերադատության իրավունք, եթե կարողանա ապացուցել, որ իր բացակայությունը և այդ մասին դատարանին չտեղեկացնելը պայմանավորված են իր վերահսկողությունից դուրս գտնվող պատճառներով:

[31] Հայաստանի Հանրապետությունում հեռակա վարույթի գործարկման ցուցանիշները խոսուն են նվազման առումով, մասնավորապես՝ 2022 թվականից մինչ օրս մինչդատական քրեական վարույթի ընթացքում իրականացվել է 125 հեռակա քրեական վարույթ: Մասնավորապես՝ 2022 թվականի ընթացքում իրականացվել է 53 հեռակա վարույթ, 2023 թվականին՝ 34, 2024 թվականին՝ 29, իսկ 2025 թվականին՝ 9-ը:

ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինքնին հեռակա վարույթը դրա կիրառման՝ օրենքով սահմանված հիմքերով ու պայմաններով հանդերձ, չի ենթադրում անձի վիճակի վատթարացում[32]:

Սա, թերևս բարձր դատարանի առաջին արձագանքն էր հեռակա վարույթի ինստիտուտին, սակայն ոչ վերջին, քանի որ հեռակա վարույթով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը մեղադրյալի կողմից մեղավորության վիճարկման մասով բողոքարկելու և նոր քննություն ստանալու հնարավորությունները սահմանափակված են: Նշված դեպքում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության համատեքստում նախապատվությունը տրվել է վերջնական դատական ակտի կայունության և կանխատեսելիության սկզբունքի պահպանմանը[33]: Նման մոտեցումը չի համապատասխանում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, այնքանով, որ *Sejdovic v. Italy* գործով, Եվրոպական դատարանն օգտագործել է ըստ էության նոր քննություն (fresh determination) արտահայտությունը[34]: Սա նշանակում է, որ խոսքը ոչ թե վերանայման կամ վերաքննության մասին է, այլ մեղադրանքի վերաբերյալ նոր քննության մասին, որի չապահովումը կհանգեցնի արդարադատության մերժման: Ուստի այն պնդումը, որ նախապատվությունը տրվել է վերջնական դատական ակտի կայունության և կանխատեսելիության սկզբունքի պահպանմանը, չի կարող համարվել իրավաչափ, քանի որ այն իրականացվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի շրջանցմամբ:

<u>Եզրակացություն</u>

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեղադրյալի՝ դատավարությանը ներկա գտնվելու իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության առանցքային բաղադրիչ, որը ձևավորվում և զարգանում է միջազգային և ազգային իրավական համակարգերի փոխազդեցության արդյունքում: Չնայած այն հանգամանքին, որ այս իրավունքն ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածում առանց վերապահումների, դրա կիրառման շրջանակները և սահմանափակումները տարբեր իրավակարգերում շարունակում են մնալ հակասական:

Հատկապես կարևոր է այն, որ in absentia դատավարությունները, թեև սկզբունքորեն չեն համարվում ինքնին անթույլատրելի, կարող են համարվել արդար դատաքննության պահանջներին համապատասխան միայն այն դեպքում, երբ ապահովում են խիստ դատավարական երաշխիքներ, ներառյալ՝ պատշաճ ծանուցումը, պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը և de novo քննության հնարավորությունը: Այս պահանջները բխում են ինչպես մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերից, այնպես էլ միջազգային դատական մարմինների նախադեպային իրավունքից:

Միջազգային քրեական արդարադատության համակարգում, մասնավորապես Միջազգային քրեական դատարանի շրջանակում, ձևավորվել է յուրահատուկ մոտեցում, որի համաձայն մեղադրյալի ներկայությունը դիտարկվում է ոչ միայն որպես իրավունք, այլ նաև որպես պարտականություն: Այս մոտեցումը էականորեն տարբերվում է մարդու իրավունքների միջազգային իրավունքի ավանդական ընկալումից և առաջացնում է լուրջ հարցեր՝ կապված իրավունքի էության, դրա հրաժարման պայմանների և դատավարական հավասարակշռության պահպանման հետ:

---

[32] *Մանուկ Խաչատրյանի* գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 7-ի թիվ ԵԴ/0363/01/22 որոշումը:
[33] ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ., էջ 606:
[34] Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §121:

Հատուկ ուշադրության է արժանի մեղադրանքների հաստատման (confirmation of charges) փուլը, որը, իր բնույթով, հանդիսանում է ոչ միայն ընթացակարգային, այլ նաև նյութական նշանակություն ունեցող փուլ: Այն ծառայում է որպես կարևոր ֆիլտր՝ ապահովելով, որ միայն բավարար ապացույցներով հիմնավորված գործերը փոխանցվեն դատաքննության փուլ: Այս փուլում մեղադրյալի իրավունքների սահմանափակումը, հատկապես in absentia վարույթի պայմաններում, կարող է ունենալ անդառնալի հետևանքներ հետագա դատավարության արդարության համար:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հռոմի կանոնադրության գործող կարգավորումները չեն ապահովում հստակ և արդյունավետ մեխանիզմ՝ in absentia մեղադրանքների դեպքում մեղադրյալի համար de novo քննության իրավունքը երաշխավորելու համար: Սա հակասում է մարդու իրավունքների միջազգային իրավունքի այն հիմնարար սկզբունքին, համաձայն որի՝ նման խախտումը կարող է վերացվել միայն գործի էության լիարժեք նոր քննության միջոցով:

Ազգային մակարդակում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում, հեռակա վարույթի ներդրումը և դրա կիրառման պրակտիկան ևս վկայում են, որ առկա է de novo քննության անհամապատասխանություն դատական ակտերի կայունության և մեղադրյալի պաշտպանության իրավունքների միջև: Սակայն միջազգային չափանիշների լույսի ներքո ակնհայտ է, որ դատական ակտի կայունության սկզբունքը չի կարող գերակշռել արդար դատաքննության հիմնարար երաշխիքների նկատմամբ:

Ամփոփագիր: Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ քրեական գործերով մեղադրվողներն ունեն իրավունք ներկա գտնվելու իրենց դեմ ընթացող դատավարությանը: Սույն հոդվածը ուսումնասիրում է, թե արդյոք Միջազգային քրեական դատարանում (ICC) մեղադրանքների հաստատման ընթացակարգը, երբ այն իրականացվում է մեղադրյալի բացակայությամբ (հոդված 61(2)), համապատասխանում է մարդու իրավունքների միջազգային իրավունքին: Հենվելով տարածաշրջանային մարդու իրավունքների դատարանների և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի պրակտիկայի վրա, արձանագրվել է, որ եթե մեղադրյալը հետագայում ներկայանա դատարան, բայց չունենա իր գործի նոր ամբողջական քննության *(de novo)* իրավունք, ապա այդպիսի ընթացակարգը կհակասի մարդու իրավունքների միջազգային իրավունքի պահանջներին:

Annotation: One of the fundamental principles of international human rights law is that persons accused in criminal proceedings have the right to be present at their trial. This article examines whether the confirmation of charges procedure before the International Criminal Court, when conducted in the absence of the accused (Article 61(2)), is compatible with international human rights law. Drawing on the jurisprudence of regional human rights courts and the United Nations Human Rights Committee, it is argued that where an accused subsequently appears before the Court but is not afforded the right to a full retrial (de novo), such a procedure would be inconsistent with the requirements of international human rights law.

Аннотация. Одним из фундаментальных принципов международного права прав человека является право лица, обвиняемого в совершении преступления, присутствовать при судебном разбирательстве по своему делу. В настоящей статье рассматривается вопрос о том, соответствует ли процедура подтверждения обвинений в Международном уголовном суде, проводимая в отсутствие обвиняемого (статья 61(2) Римского статута), требованиям международного права прав человека.

Опираясь на практику региональных судов по правам человека, а также Комитета ООН по правам человека, автор приходит к выводу, что в тех случаях, когда обвиняемый впоследствии предстаёт перед Судом, но не получает права на новое полноценное рассмотрение дела по существу (*de novo*), подобная процедура может противоречить международным стандартам справедливого судебного разбирательства.

Բանալի բառեր *– Միջազգային քրեական դատարան, հեռակա դատավարություն, գործի նոր քննություն, պաշտպանության իրավունք, դատական ակտերի կայունություն, Հռոմի սփատուտ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան:*

Keywords: *International Criminal Court, in absentia proceedings, de novo review, right to defence, stability of judicial decisions, Rome Statute, European Court of Human Rights.*

Ключевые слова: *Международный уголовный суд, заочное производство, новое рассмотрение дела, право на защиту, стабильность судебных актов, Римский статут, Европейский суд по правам человека.*

Օգտագործված գրականության ցանկ:

1. T. Marauhn, 'The Right of the Accused to Be Tried in His or Her Presence', in D. Weissbrodt & R. Wolfrum (eds), The Right to a Fair Trial (Springer 1997), 764:
2. W. A. Schabas, The International Criminal Court, A Commentary (2nd edn, OUP 2016), 964– 65:
3. STL, 'Explanatory Memorandum by the Tribunal's President to Rules of Procedure and Evidence' (2009), §35; Տես նաև §§ 36, 39.
4. A. Clooney and P. Webb, The Right to a Fair Trial in International Law (Oxford University Press, 2021) p. 447:
5. ECtHR (GC), Zana v. Turkey (69/ 1996/ 688/ 880), 25 November 1997, §68:
6. ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35. Տես նաև ECtHR, Sigurþórsson v. Iceland (App. no. 38797/ 17), 16 July 2019, §42; ECtHR, Lazu v. Republic of Moldova (App. no. 46182/ 08), 5 July 2016, §42. Cf. ECtHR, Popa v. Romania (App. no. 1814/ 11), 18 February 2020, §§45– 47. Տես հաջորդիվ ICC, Prosecutor v. Ruto et al. (ICC- 01/ 09- 01/ 11 OA 5), Judgment on the Appeal of the Prosecutor against the Decision of Trial Chamber V(a) of 18 June 2013 entitled 'Decision on Mr Ruto's Request for Excusal from Continuous Presence at Trial', 25 October 2013 (այսուհետ: 'ICC Ruto Appeal Judgment of 25 October 2013'), §§47– 49:
7. ECtHR, Colozza v. Italy (App. no. 9024/ 80), 12 February 1985, §27. See also ECtHR (GC), Hermi v. Italy (App. no. 18114/ 02), 18 October 2006, §§58– 59; ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §81; ECtHR, T. v. Italy (App. no. 14104/ 88), 12 October 1992, §26; ECtHR, Brozicek v. Italy (App. no. 10964/ 84), 19 December 1989, §45 (as evidenced by the 'object and purpose of [Article 6] taken as a whole'). Տես նաև COE, Report of the Committee of Experts on Human Rights to the Committee of Ministers (1970) H(70)7, 39:
8. ECtHR, Stoichkov v. Bulgaria (App. no. 9808/ 02), 24 March 2005, §56:
9. Directive (EU) 2016/ 343 of the European Parliament and of the Council of 9 March 2016 on the strengthening of certain aspects of the presumption of innocence and of the right to be present at the trial in criminal proceedings (hereinafter: 'EU Presence Directive') Art. 8(1). See also §33: IACtHR, Herrera Espinoza v. Ecuador (Series C, no. 316), 1 September 2016, §174, Տես նաև՝ IACtHR, Constitutional Tribunal v. Ecuador (Series C, no. 268), 28 August 2013, §181:
10. IACtHR, Apitz Barbera v. Venezuela (Series C, no. 182), 5 August 2008, §75. Տես նաև IACtHR, Palamara-Iribarne v. Chile (Series C, no. 135), 22 November 2005, §167:
11. C. H. Wheeler, 'Right or Duty? Is the Accused's Presence at Trial a Right or a Duty Under International Criminal Law?' (2017) 28 Criminal Law Forum 99, 101ff:
12. HRC, General Comment No. 32 (2007), §36. Տես նաև HRC, Mbenge v. Democratic Republic of the Congo (Comm. no. 16/ 1977), 25 March 1983, §14.1:
13. ECtHR, Neziraj v. Germany (App. no. 30804/ 07), 8 November 2012, §47; ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35:
14. ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35; ECtHR, Cani v. Albania (App. no. 11006/ 06), 6 March 2012, §49; ECtHR, Pietiläinen v. Finland (App. no. 13566/ 06), 22 September 2009, §31;

ECtHR, Stoichkov v. Bulgaria (App. no. 9808/ 02), 24 March 2005, §55:

15. ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §92. See also ECtHR, Cani v. Albania App. no. 11006/ 06), 6 March 2012, §49; ECtHR, Pietiläinen v. Finland (App. no. 13566/ 06), 22 September 2009, §31;

16. ECtHR, Stoichkov v. Bulgaria (App. no. 9808/ 02), 24 March 2005, §55; ECtHR, Poitrimol v. France (App. no. 14032/ 88), 23 November 1993, §35:

17. ICTR, Prosecutor v. Nahimana et al. (ICTR- 99- 52- A), Judgment, 28 November 2007 (hereinafter: 'ICTR Nahimana Appeal Judgment of 28 November 2007'), §§94– 116:

18. ICC Ruto Decision of 18 June 2013, §§35, 37 (citing ECtHR jurisprudence in n 6); ICTR Nahimana Appeal Judgment of 28 November 2007, §107:

19. ICC, Prosecutor v. Gbagbo et al. (ICC- 02/ 11- 01/ 15- 1355- Red):

20. ICC RPE Rule 134quater; ICC, Prosecutor v. Kenyatta (ICC- 01/ 09- 02/ 11):

21. HRC, Mbenge v. Democratic Republic of the Congo (Comm. no. 16/ 1977), 25 March 1983, §14.1:

22. ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §82: HRC, Maleki v. Italy (Comm. no. 699/ 1996), 15 July 1999, §§9.2– 9.4; ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §§81– 95:

23. Situation in The Republic of Uganda in the case of the Prosecutor v. Joseph Kony, ICC-02/04-01/05 12 December 2024:

24. Decision on the Prosecutor's Appeal against the 'Decision on the Prosecution's Request to Amend the Updated Document Containing the Charges pursuant to Article 61(9) of the Statute', Ruto and Sang (ICC-01/09-01/11-1123), Appeals Chamber, 13 December 2013, § 29; Judgment on the Appeal of Mr Jean-Pierre Bemba Gombo against Trial Chamber III's 'Judgment pursuant to Article 74 of the Statute', Bemba (ICC-01/05-01/08-3636-Red), Appeals Chamber, 8 June 2018, §§ 114–115:

25. Ruto and Sang OA5 Judgment, supra note 31, § 54.

26. HRC, Maleki v. Italy (Comm. no. 699/ 1996), 15 July 1999, §9.5 (violation of Art. 14(1)). See also HRC, Concluding Observations, Croatia (2009) UN Doc. CCPR/ C/ HRV/ CO/ 2, §11; ECtHR, Maksimov v Azerbaijan (App. no. 38228/ 05), 8 October 2009, §46 and operative provisions (violation of Art. 6(1)); ECtHR (GC), Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §§82, 86 (violation of Art. 6(1)); ECtHR, Colozza v. Italy (App. no. 9024/80), 12 February 1985, §29 (violation of Art. 6(1)):

27. ACmHPR Principles on Fair Trial in Africa Principle N(6)(c)(ii). Տե՛ս նաև CoM of the COE Resolution (75)11 on the criteria governing proceedings held in the absence of the accused, 21 May 1975, §§1– 9:

28. Մանուկ Խաչատրյանի գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունիսի 7-ի թիվ ԵԴ/0363/01/22 որոշումը:

29. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծում-ների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ., էջ 606:

30. Sejdovic v. Italy (App. no. 56581/ 00), 1 March 2006, §121:

Վ. Սուքիասյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի դասախոս, ի.գ.թ, էլփոստ՝ varazdatsukiasyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 05.05.2026 թ., տրվել է գրախոսության 05.05.2026 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. Ե. Դանիելյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-133

ԻՆԳԱ ԱՎԱԳՅԱՆ
«Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան, «Գլաձոր» համալսարանի հայցորդ

INGA AVAGYAN
"Private Legal Center" Law Firm, Founding Director, Advocate Applicant at the Gladzor University

ИНГА АВАГЯН
Учредитель и директор юридической фирмы «Частный юридический центр», адвокат, соискатель университета «Гладзор»
https://orcid.org/0009-0009-1020-3446

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄՆ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՓՈ՞Ւ, ԹԵ՞ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ

FOREIGN EXAMINATION OF EVIDENCE IS AN INDEPENDENT STAGE OF EVIDENCE OR A TYPE OF EVIDENCE EVALUATION

СУДЕБНОЕ ИССЛЕДОВАНИЕ ДОКАЗАТЕЛЬСТВ: САМОСТОЯТЕЛЬНЫЙ ЭТАП ДОКАЗЫВАНИЯ ИЛИ ФОРМА ОЦЕНКИ ДОКАЗАТЕЛЬСТВ

Ներածություն

Քրեական դատավարության նպատակը դատավարության խնդիրների իրականացումն է՝ քրեական գործերով վերջնական դատական ակտեր կայացնելը:

Քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը, նրա մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է պարզել միայն մեկ ճանապարհով՝ ապացույցների ստուգման և ապացուցման միջոցով: Այդ իսկ պատճառով, քրեական գործերով վերջնական դատավարական ակտեր կայացնելու նախորդող փուլը բարդ գործընթաց է, որը կոչվում է ապացուցում: Ապացուցումը ծանրակշիռ տեղ և դեր ունի քրեական դատավարությունում և պատահական չէ, որ դատավարական գործողությունների մեծա-

մասնությունն ուղղված է ապացույցների հավաքմանը, ստուգմանը (հետազոտմանը) և գնահատմանը:

Հասարակական արժեքները պաշտպանելու անհրաժեշտությունը հանգեցրեց քրեական դատավարության զարգացմանը՝ հիմնված մրցակցային դատավարության սկզբունքի և դատարանի՝ ապացույցների շրջանակներում հանգամանքները պարզելու հիմնական գործառույթի վրա: Նմանօրինակ հանգամանքները պարզելու ամենակարևոր մեխանիզմն ապացույցն է. ապացույցների հավաքագրումը, ստուգումը և գնահատումը: Ապացույցների ճիշտ գնահատումը քննվող և վերանայվող քրեական գործով օրինական, պատճառաբանված և արդար դատավարական որոշումների վերջնական արդյունքն է:

Հիմնական հետազոտություն

Քրեական դատավարության առջև ծառացած մարտահրավերները հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր քրեական գործում հնարավորին ճշգրիտ պարզվեն հանցագործություն կատարողը և դրա կատարման հանգամանքները: Վարույթն իրականացնող մարմինները հետազոտում են ապացույցները՝ պարզելու հանցագործության հանգամանքները՝ հիմնվելով նախորդած կամ դրանից բխող պահպանված հետքերի, առարկաների, փաստերի վրա: Այս ամենը նպաստում է հանցագործության վերականգնմանը և պարզելուն, թե ով, երբ և ինչպես է այն կատարել:

Յուրաքանչյուր քրեական գործով պետք է պարզվեն կատարված արարքի հանգամանքները, որոնք սահմանված են քրեական դատավարության օրենսգրքով: Ակնհայտ է, որ վերը նկարագրվածը կարող է պարզել քրեական դատավարության ընթացքում՝ ապացուցման միջոցով: Ապացույցներն ու ապացուցումը քրեական դատավարության բնույթն ու բովանդակությունն որոշող հիմնարար հարցեր են: Ապացուցումը ներկայացվում է որպես ամբողջ քրեական գործընթացի շարժիչ ուժ՝ ապահովելով գործընթացի մեկ փուլից մյուսի անցումը մինչև քրեական գործի վերջնական լուծումը, ինչպես նաև քրեական դատավարության նպատակների իրականացումը:

Ինչպես նշում է Վ. Դ. Արսենևը, ապացուցումը քրեական դատավարության գործունեության կենտրոնական բաղադրիչն է, քրեական դատավարության «սիրտը»:

Այն ամբողջ քրեական գործընթացի միջուկն է: Քրեական գործով ապացուցման առարկան նույնն է բոլոր փուլերում, բայց դրա ձևերը տարբեր են՝ պայմանավորված առանձին փուլերում լուծվող կոնկրետ խնդիրներով:

Կախված այս առանձնահատկություններից՝ տարբեր են նաև ապացուցման մեջ ներգրավված անձանց լիազորությունները, որոնք ուղղված են հանցագործության հանգամանքները պարզելուն: Քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը մեծապես կախված է հանցագործության մասին տեղեկատվություն ստանալուց և իրականացվող պատշաճ գործողություններից, ինչպես նաև ապացույցների ստուգման և գնահատման ճիշտ իրականացումից:

Քրեական դատավարության օրենսգրքով ձևակերպված քրեական դատավարության իրավունքի առջև ծառացած խնդիրները հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հաստատել դատարանի կողմից քննվող կամ լուծվող քրեական գործում ապացույցի առարկայի մեջ ներառված բոլոր հանգամանքները, դրանք հաստատել հնարավորին իրականությանը համապատասխան:

Ապացուցումը քրեական գործին վերաբերող հանգամանքները պարզելու և ստուգելու միակ դատավարական միջոցն է, բայց այն ճշմարտությանը հասնելու միակ միջոցը չէ: Պետք

է տարբերակել քրեական դատավարության ընթացքում սովորաբար օգտագործվող որոշումներից և գործողություններից, որոնք հնարավորություն են տալիս որոշ հանգամանքները պարզաբանելու համար: Այսպիսով, քննիչը, քննչական գործողություններ կատարելիս (խուզարկություն, առգրավում, զննում, հարցաքննություն և այլն), ստանում է մեծ քանակությամբ տեղեկատվություն, որը դեռևս ապացույց չէ, պատշաճ կերպով չի ներկայացվել դատավարականորեն ձևակերպված ձևով և չի ապահովվել համապատասխան դատավարական փաստաթղթով:

Քրեական դատավարության մեջ ապացուցումը նպատակ ունի պարզել որոշակի հանգամանքներ: Սրանք քրեաիրավական և քրեադատավարական բնույթի հանգամանքներ են, որոնք ենթակա են պարզման յուրաքանչյուր քրեական գործով, կապված են արդյո՞ք հանցագործության հետ և հնարավորություն են տալի՞ս լուծել քրեական գործը: Դրանք կազմում եմ ապացուցման առարկան, որը նշված է քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածում, այն է՝ 1. Քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա են՝

1) դեպքը և դրա հանգամանքները (ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

2) մեղադրյալի առնչությունը դեպքին.

3) ենթադրյալ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները.

4) մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ.

5) քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները.

6) մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները.

7) ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը.

8) այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից.

9) այն հանգամանքները, որոնցով անձը հիմնավորում է վարույթի ընթացքում իր գույքային պահանջները.

10) այն հանգամանքները, որոնցով վարույթի մասնակիցը կամ այլ անձը հիմնավորում է իր պահանջները:

2. Սույն օրենսգրքով նախատեսված վարույթի առանձին տեսակների համար կարող է սահմանվել ապացուցման ենթակա հանգամանքների այլ շրջանակ:

Անդրադառնալով ապացուցման ենթակա պարտադիր հանգամանքներին, այն համադրելով քրեական օրենսգրքով սահմանված նորմերի հետ և վերլուծության ենթարկելով ընդհանուր համատեքստում հանգում ենք հետևության, որ անձի կողմից կատարված ենթադրյալ արարքը հիմնավորվում կամ հերքվում է քրեական գործի ընթացքում հետազոտված և թույլատրելի ճանաչած ապացույցների և փաստական տվյալների հիման վրա:

Քրեական գործերով իրականացվող դատավարական գործողությունների եզրափակիչ փուլը, այն է՝ վերդիկտ կայացնելու համար, դատարանի առաջ բարձրացված է լուծման ենթակա հարցերի շրջանակ, որոնց համաձայն դատարանը պետք է պատասխանի ստորև նշված հարցերին՝

(…)

1) ապացուցված են արդյոք մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքները (արարքը).

2) ապացուցված է արդյոք այդ արարքի քրեական հակաիրավականությունը.

3) ապացուցված է արդյոք մեղադրյալի կողմից այդ արարքը կատարելը.

4) ապացուցված է արդյոք մեղադրյալի մեղավորությունը տվյալ արարքը կատարելու մեջ:

(…):

Վերը նշված հարցերին հստակ պատասխանելու համար կարևոր է հաստատված համարել մեղքը, այն է՝ պահպանված լինի «ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ 1. Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, որը սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը կատարել է մեղավորությամբ:

2. Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարքը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե այն կատարողը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը կամ թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել դա:

3. Սույն օրենսգիրքը հիմնվում է արարքի հակաիրավականությունը գիտակցելու կամ դա գիտակցելու կարողության կանխավարկածի վրա»:

Մեղքը իրավաբանության մեջ հանցագործության սուբյեկտիվ կողմի հիմնական տարրն է, որն իրենից ներկայացնում է անձի հոգեբանական վերաբերմունքը իր կողմից կատարող հանրորեն վտանգավոր արարքի և դրա հետևանքների նկատմամբ: Առանց մեղքի պատասխանատվություն ժամանակակից իրավական համակարգում, որպես կանոն, բացառվում է:

Այսպես, մեղքը հանցագործության կազմի անհրաժեշտ տարր է, որը հաստատում է անձի արարքի կամավորությունը և գիտակցվածությունը: Այն ցույց է տալիս, որ անձը գիտակցել է իր վարքագծի հակաիրավական լինելը:

Ավելին, անձի մեղավորությունը հաստատելու համար կարևոր է պարզել անձի կողմից կատարված արարքի այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ հանցակազմի հատկանիշներ են և տվյալ անձը գիտակցել է այդ հանգամանքները (քր.օր.-ի 25-րդ հոդված):[1]

Ապացուցման ինքնուրույն հանգամանքներ են նաև արարքի փաստական հանգամանքների մեջ սխալի դեպքում[2], որոնց ճիշտ վերլուծության արդյունքում հնարավոր կլինի միայն արարքին ճիշտ գնահատական տալը:

Այսպես՝ բաղկացական հանցագործությունների դեպքում հանցակազմի ինքնուրույն հատկանիշներ պարունակող արարքն ուղղակիորեն նկարագրված է բուն հանցագործության դիսպոզիցիայում կամ դրա որակյալ տեսակներում, դրա բաղկացուցիչ մասն է կազմում, ուստի դրանք, իրենց ներքին միասնությամբ պայմանավորված, դիտակվում են մեկ հանցագործություն: Բացառություն են կազմում սակայն, այն դեպքերը, երբ հանցագործության մաս կազմող հանցանքի համար օրենքով ավելի խիստ կամ հավասար պատիժ է նախատեսված, քան ամբողջ հանցագործության համար: Նման դեպքերում արարքները որակվում են առանձին՝ համակցության կանոններով, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իրավակարգավորումներից՝ «եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»[3]:

Կոնկրետ գործերով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը պարզելիս սկզբունքային նշանակություն ունեն քրեական օրենքի այն նորմերը, որոնցում սահմանված են հանցակիցների պատասխանատվության, հանցագործությունների բազմակիության, հանցագործությունների փուլերի, քրեաիրավական նորմերի մրցակցության գնահատման կանոննե-

[1] Տե՛ս քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մաս:
[2] Տես քրեական օրենսգրքի 28-րդ հոդված:
[3] Տես Վճռաբեկ դատարանի 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴ/0129/01/20 որոշումը:

րը[4], բացի դրանից՝ վերջնական դատական ակտ կայացնելիս պետք է անդրադառնալ ինչպես «ապացույցների բավարարությանը», այնպես էլ՝ «ապացուցման առարկային»:

«Ապացույցների բավարարություն» հասկացության էությունը, ապացույցների բավարարությունը որոշելու ընդհանուր չափանիշները, դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը Վճռաբեկ դատարանը քննարկել և վերլուծել է Ս. Սաքանյանի վերաբերյալ գործով կայացրած որոշման շրջանակներում:

Մասնավորապես, վկայակոչված որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, համեմատական վերլուծության ենթարկելով «ապացուցման առարկա» և «ապացույցների բավարարություն» հասկացությունները, նշել է. «(…) եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական նյութի հետ, որը վերաբերում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ինչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:

Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:

Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը[5]:

Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության հիման վրա արձանագրում է ապացույցների բավարարությունը որոշելու հետևյալ ընդհանուր չափանիշները՝

1) վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունք,

2) դատավարական որոշումների հիմնավորվածություն և պատճառաբանվածություն,

3) անմեղության կանխավարկած»[6]:

Դատավարական ապացուցումը չի սահմանափակվում միայն մտավոր գործունեությամբ

[4] Հիմք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ, 44-րդ, 47-րդ հոդվածներ:

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի վերաբերյալ* թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում:

[6] Տե՛ս *Սիրակ Սաքանյանի* վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ կետերը, իսկ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքի, դատավարական որոշումների հիմնավորվածության և պատճառաբանվածության, անմեղության կանխավարկածի մասին մանրամասն տե՛ս նույն որոշման 16-19-րդ կետերը:

և եզրակացություններով, այլև ներառում է ապացույցներ հավաքելու և ստուգելու գործնական գործողություններ: Այսպիսով, ապացուցումն ունի ինչպես ճանաչողական, այնպես էլ գործնական կողմեր:

Լինելով ոչ միայն մտավոր, այլև գործնական գործունեություն, ապացուցումը ենթակա է մանրամասն օրենսդրական կարգավորման, որը կազմում է դրա իրավական կողմը և դատավարական ձևը: Դատավարական ձևի պահպանումը ապահովում է.

- գործով ճշմարտությունը պարզելու ամենաարդյունավետ ընթացակարգը, քանի որ ապացուցման դատավարական կանոնները խտացնում են դարավոր իրավական փորձը և արտացոլում քրեական գործի հանգամանքները պարզելու ամենաօպտիմալ մեթոդները.

- քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը.

- ապացուցողական գործունեության արդյունքների վավերացումը (գրանցումը), որը պայմաններ է ստեղծում հավաքված ապացույցները ստուգելու և, դրա հիման վրա, գործի հանգամանքների հուսալի իմացության համար՝ ոչ միայն ապացույցները անմիջականորեն հավաքող ապացույցի սուբյեկտի, այլև բարձրագույն դատավարական մարմինների (մեղադրող, դատարան) և քրեական դատավարության մյուս մասնակիցների կողմից:

«Ապացուցում» տերմինի սահմանումը Քրեական դատավարության օրենսգրքում բացակայում է, սակայն ըստ էության, Քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը սահմանել է, որ Ապացուցումը սույն օրենսգրքով նախատեսված՝ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է:

Քրեական դատավարության օրենսգիրքն իրավաբանորեն սահմանում է ապացուցումը՝ որպես գիտելիքի հատուկ ձևի, և դրա բաղադրիչ տարրերի ամբողջության՝ ապացույցների հավաքագրման, ստուգման և գնահատման միջև կապը՝ քրեական գործի օրինական, ողջամիտ և արդարացի լուծման համար կարևոր հանգամանքներ պարզելու համար: Այստեղ մենք նշում ենք, որ ապացուցման տարրերի նույնականացումը ցույց է տալիս այս հասկացության բաժանելիությունը, որի արդյունքում դրանք կարող են գոյություն ունենալ ինչպես համատեղ, այնպես էլ անկախ, և ոչ միայն տեսական, այլև գործնական առումով: Այսպիսով, հնարավոր են իրավիճակներ, երբ տեղի է ունենում միայն ապացույցների գնահատում (օրինակ՝ վերադաս դատարաններում) կամ միայն դրանց հավաքագրում (երբ քննիչը քննչական գործողություն է իրականացնում մեկ այլ քննիչի առանձին հանձնարարականի հիման վրա): Ապացուցումը, այս կամ այն չափով (հաշվի առնելով դրա տարրերի բաժանելիությունը), իրականացվում է քրեական դատավարության գործնականում բոլոր փուլերում (գոնե ապացույցների գնահատման տեսքով): Սակայն, լիարժեք ապացուցումը, որպես ապացույցների հավաքագրման, ստուգման և գնահատման միաժամանակյա համադրություն, տեղի է ունենում միայն նախնական քննության և դատաքննության փուլերում, այսինքն՝ այնտեղ, որտեղ կա քննություն: Այս իմաստով «քննություն» հասկացությունը և դրա բոլոր ածանցյալները (քննիչ, քննություն, քննչական գործողություն, դատական քննություն և այլն) մայրցամաքային ավանդույթում տերմինաբանական ցուցիչ են այն բանի, որ համապատասխան փուլը, գործողությունը, պաշտոնատար անձը և այլն կոչված են լուծելու քրեական դատավարության ապացուցման խնդիրները: Այլ կերպ ասած, «ապացուցում» և «քննություն» հասկացությունները (իրենց բոլոր տարբերակներով) փոխկապակցված են՝ քննությունը նպատակ ունի ապացուցել (նրա գործիքն է), և ապացուցումն անհնար է առանց քննության, գոնե ապացույցներ հավա-

քելու տեսանկյունից:

Առաջին ատյանի դատարանում ապացույցների հետազոտման և ստուգման հարցը հատկապես արդիական է, հաշվի առնելով, որ քրեական գործերով, ըստ էության, քննությունը տարվում է առաջին ատյանում և հանդիսանում է կենտրոնական ու կարևոր փուլ:

Հարկ է նշել, որ ապացուցումը ոչ միայն գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով իրականացվող գործունեություն է, այլ նաև վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք հաստատելու կամ հերքելու նպատակ ունեցող գործունեություն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցները հավաքվում են քրեական վարույթի ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողությունների կատարման միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով՝ օտարերկրյա իրավասու մարմինների կողմից համապատասխան գործողությունների կատարման միջոցով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթի ընթացքում հավաքված ապացույցները ենթակա են պատշաճ ստուգման՝ ստացված ապացույցի ձևի և բովանդակության վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ստացման աղբյուրները վերհանելու միջոցով:

Դատարանը քրեական գործի քննության ընթացքում լսում է մեղադրյալին, տուժողին, վկաներին, փորձագետին, ուսումնասիրում է իրեղեն ապացույցները, գրավոր ապացույցները, և կատարում է դրանից բխող դատավարական գործողություններ՝ ապացույցները հետազոտելու համար:

Վերլուծելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի կիրառման պրակտիկան, ապացույցների հետազոտման կարգի մասին, ապա հարկ է նշել, որ օրենքը չի բացահայտում դրա ամբողջ էությունը, այլ միայն մակերեսորեն կարգավորում է Առաջին ատյանի դատարանում ապացուցման գործընթացի արտաքին ձևը՝ առանց անդրադառնալու քրեական գործով յուրաքանչյուր ապացույցի վերլուծության գործնական և բովանդակային առանձնահատկությունները:

Այս առումով հատկապես հետաքրքիր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը: Մասնավորապես, եթե վերլուծենք որոշումները և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան, ակնհայտ կդառնա, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կարգավորումը, ի թիվս այլնի՝ դատարանին պարտավորեցնում է պատշաճ կերպով ուսումնասիրել գործով հետազոտվող ապացույցների վերաբերյալ դատավարության մասնակիցների ներկայացրած դիտարկումները, փաստարկները և հիմնավորումները, որի հիման վրա անաչառորեն որոշում կայացնի հետազոտված ապացույցի համապատասխանությունն ու վերաբերելիությունը:

Կարևոր է ընդգծել, որ քրեական գործերով ապացույցները պետք է հետազոտվեն՝ ստուգվեն բացառապես մեղադրյալի մասնակցությամբ, ապահովելով քրեական դատավարությամբ սահմանված մրցակցային սկզբունքը:

Բացի դրանից՝ դատարանում պետք է հետազոտվեն՝ ստուգվեն այն ապացույցները, որոնք պատասխանատու փաստեր կարող են լինեն ներկայացված մեղադրանքում անձի մեղավորության կամ անմեղության փաստը հաստատելու համար:

Դատարանների կողմից Կոնվենցիայի կիրառումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի ցանկացած խախտու-

մից խուսափելու համար:

Օրենսդիրը քրեական գործով ապացուցման գործընթացի հիմքում նախատեսել է մրցակցային դատավարության սկզբունքը, որը կանխորոշում է ժամանակակից քրեական դատավարության տիպաբանությունը:

Քրեական դատավարության գրականության մեջ մրցակցային դատավարությունը մեկնաբանվում է որպես գործով կողմերի միջև հարաբերությունների որոշակի կարգ, որոնք հակասում են իրենց դատավարական շահերին և ապացույցների հետազոտման գործընթացում նրանց համատեղ գործունեության կազմակերպմանը, որը դրսևորվում է գործողությունների և խոսքերի փոխանակմամբ[7]: Դատական քննության շրջանակում ապացույցները հետազոտելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ նախաքննության փուլերում ինչպես քննչական, այնպես էլ օպերատիվ գործողությունները ճանաչվում են որպես ապացույց, որոնք ենթակա են պարտադիր ստուգման դատարանում:

Այս առումով Գ. Բ. Չեդժեմովը ճիշտ է ընդգծել՝ «նախաքննության մարմինների և դատարանի եզրակացությունների միջև տարբերությունը ոչ թե նրանց կողմից արտահայտված օբյեկտիվ ճշմարտության բնույթի է, այլ գործընթացի յուրաքանչյուր փուլում ճշմարտության հաստատմամբ պայմանավորված իրավական հետևանքների մեջ»: Նախաքննության ընթացքում ճշմարտությունը հիմք է հանդիսանում մեղադրանք առաջադրելու, քրեական պատասխանատվության ենթարկելու համար, իսկ դատական նիստում՝ դատավճիռ կայացնելու համար[8]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից:

2. Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ:

3. Ոչ մի տվյալ նախապես հավաստի ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև քննիչը և դատախազը չպետք է կանխակալ վերաբերմունք դրսևորեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանք չեն գնահատվել:

Նշվածով պայմանավորված հարկ է նշել ապացուցման երեք տարրերը՝ ապացույց հավաքելը, ստուգելը, գնահատելը, սակայն ապացուցման այս երեք տարրերը ոչ թե միմյանց հաջորդում են, այլ անընդհատ կրկնվում են: Այսպես՝ ապացույցները կարող են ստուգվել ապացույցների հավաքման ընթացքում:

Ապացույցների հավաքումը և ստուգումը չի տարանջատվում ապացույցների գնահատումից, իսկ ապացույցների գնահատումը միշտ չէ, որ եզրափակում է քրեական վարույթը:

Ապացույցներն ստուգում է ապացուցման գործընթացին ներգրավված անձանց առավել լայն շրջանակ: Օրինակ՝ ապացույցի ձևը և բովանդակությունը վերլուծելու, այն այլ ապացույցների հետ համադրելու եղանակով ապացույցն ստուգում են ինչպես վարույթի հանրային մասնակիցները և դատարանը, այնպես էլ վարույթի մասնավոր մասնակիցները: Ապացույց-

[7] *Смирнов В. П.,* Противоборство сторон как сущность принципа состязательности уголовного судопроизводства // Государство и право. 1998, No 3, с. 59.
[8] *Чеджемов Г. Б.,* Судебное следствие. М., 1979, с. 4.

ները ստուգելու արդյունքում դատախազն իրավասու է հանձնարարել քննիչին պարզել մեղադրանքի գործառույթի իրականացման համար նշանակություն ունեցող հանգամանքներ, իսկ քննչական մարմնի ղեկավարն իրավասու է հանձնարարել քննիչին կատարելու առանձին քննչական գործողություններ: Ապացույցի ձևը և բովանդակությունը վերլուծում, այն այլ ապացույցների հետ համադրում են նաև պաշտպանը, քրեական վարույթի այլ մասնավոր մասնակիցները: Նախաքննության ընթացքում վարույթի մասնավոր մասնակիցները կարող են ստուգել իրենց հասանելի առանձին ապացույցները: Օրինակ՝ պաշտպանը նախաքննության ընթացքում վերլուծում է իր մասնակցությամբ կատարված քննչական գործողության արձանագրության ձևը և բովանդակությունը[9]:

Հետևաբար, մենք նշում ենք, որ քրեական դատավարության մինչդատական փուլերում մրցակցային դատավարությունը սահմանափակ է, քանի որ պաշտպանը չի կարող լիովին իրականացնել իր լիազորությունների ողջ զինանոցը և մեծապես կախված է դատական քննությունից: Սակայն հենց դատական քննության ընթացքում է, որ պաշտպանը կարող է բացահայտել իր ողջ ներուժը և ներկայացնել բոլոր ապացույցներն ամբողջությամբ, ինչը ենթադրում է քրեական գործի բոլոր նյութերի առավելագույնս ամբողջական և օբյեկտիվ ուսումնասիրություն:

Մ. Ս. Ստրոգովիչը գրել է ապացույցների ստուգման մասին, որը բաղկացած է դրանց ճշգրտության կամ սխալ լինելու հաստատումից: Նա ստուգման մեթոդներն անվանեց ապացույցների ուսումնասիրությունը, այդ ապացույցները հաստատող կամ հերքող նոր ապացույցների որոնում և ապացույցների համեմատությունը գործում առկա այլ ապացույցների հետ, արդյունքում արձանագրելով, որ ստուգման արդյունքը ապացույցների գնահատումն է[10]:

Ա. Ի. Տրուսովն ապացույցների ստուգման հասկացությունը ներառում է դրանց գնահատման հասկացության մեջ: «Ապացույցների ուսումնասիրություն» տերմինն օգտագործում է Պ. Ֆ.Պաշկևիչը, որը հասկանում է որպես ապացույցի սուբյեկտի գործունեություն ապացույցների ուսումնասիրման և դրանց ստուգման գործում, և նշում է, որ միայն ապացույցների մանրակրկիտ ուսունասիրության արդյունքում է հնարավոր դառնում դրանց ճիշտ իրավական գնահատական տալը: Հղում կատարելով քրեական դատավարության օրենսգրքին՝ հեղինակները կարծում են, որ «հետազոտությունը» ներառում է ինչպես տեղեկատվություն ստանալու գործընթացը, այնպես էլ ստացված տեղեկատվության ստուգումը: Ա. Ռ. Բելկինի կարծիքով՝ ապացույցների ուսումնասիրությունն ապացույցի կողմից դրանց բովանդակության իմացության, այդ բովանդակությունը կազմող փաստական տվյալների գոյության հուսալիության ստուգման, ապացույցների համապատասխանության և ընդունելիության որոշման, ինչպես նաև գործի մյուս բոլոր ապացույցների հետ համապատասխանության հաստատման առարկա է: Միևնույն ժամանակ Ա. Ռ. Բելկինը ընդգծում է ապացույցների գնահատումը ապացուցման գործընթացում պետք է հասկանալ որպես ճշմարտությունը հաստատելու համար հավաքված ապացույցների դերի և նշանակության որոշման տրամաբանական, մտածված գործընթաց[11]:

Այսպես՝ քրեական դատավարությունում ապացույցների դատական հետազոտումը, ապացույցների գնահատումը և վերջնական քրեաիրավական գնահատական տալը միմյանց

[9] Գիտաուսումնական ձեռնարկ, *Արթուր Ղամբարյան, Արտակ Հովհաննիսյան, Գրիգոր Չապանյան,* ապացուցման միջոցները և ապացուցումը ՀՀ քրեական դատավարությունում, Երևան 2025:
[10] *Строгович М. С.*, Курс советского уголовного процесса. Основные положения науки уголовного процесса. Т. 1. М., 1968, с. 302.
[11] *Белкин А.Р.,* Теория доказывания в уголовном судопроизводстве. М., 2007, с. 234.

հետ սերտ կապված են, բայց տարբեր իրավական ինստիտուտներ են: Դատական հետազոտումը՝ ապացույցների ուսումնասիրում, բացահայտում և ստուգումն է, իսկ գնահատումը՝ ապացույցների իրավական արժեքի որոշումը: Այսինքն՝ նախ հետազոտում ենք, հետո՝ գնահատում: Ավելին, հետազոտումը՝ փաստերի բացահայտում է, իսկ գնահատումը՝ իրավական եզրահանգում, որոնք էլ տարբերվում են ինչպես ձևով, այնպես էլ ժամանակային պահով, այն է՝ հետազոտումը դա արտաքին ընթացակարգային գործողությունների ձև է, որը կատարվում է դատաքննության ընթացքում, իսկ գնահատումը ներքին, մտավոր գործընթաց է, որը կատարվում է վերջնական դատավճռի կայացման պահին: Սակայն կարևոր է նշել, որ թեև դատական հետազոտումը ինքնուրույն փուլ է, բայց այն անմիջականորեն ծառայում է ապացույցների գնահատմանը: Այսինքն՝ առանց պատշաճ դատական հետազոտման հնարավոր չէ օրինական և հիմնավոր գնահատում կատարել:

Եզրակացություն

Ապացույցների դատական հետազոտումը քրեական դատավարությունում ապացույցների հետ աշխատելու ինքնուրույն փուլ է, որն ուղղված է ապացույցների բացահայտման, ստուգման և հրապարակման վրա, իսկ ապացույցների գնահատումը դատարանի ներքին համոզմունքով իրականացվող մտավոր-իրավական գործընթաց է և չի կարող նույնացվել դատական հետազոտման հետ:

Քրեական դատավարության տեսության մեջ ընդունված է որոշակի դիրքորոշումներ՝ ապացույցների դատական հետազոտման և գնահատման վերաբերյալ: Այն է՝ մի շարք հեղինակներ գտնում եմ, որ ապացույցների դատական հետազոտումն ինքնուրույն նշանակություն չունի և հանդիսանում է ապացույցների գնահատման փուլային դրսևորում, որի համաձայն՝ ապացույցների գնահատումը շարունակական գործընթաց է, դատական հետազոտումը դա արտաքին, ընթացակարգային կողմն է, իսկ դատարանն ապացույցը սկսում է գնահատել հենց դրա հետազոտման պահից: Դատարանը դեռ հետազոտման ընթացքում ձևավորում է նախնական ներքին համոզմունք և առանց հետազոտման հնարավոր չէ գնահատում՝ հետևաբար դրանք տարանջատելն արհեստական է:

Մյուս կողմից դատական հետազոտումն ինքնուրույն փուլ է, այսինքն՝ ժամանակակից քրեական դատավարության գիտության մեջ գերակշռող է այն մոտեցումը, ըստ որի՝ ապացույցների դատական հետազոտումը և դրանց գնահատումը տարբեր իրավական ինստիտուտներ են: Դատական հետազոտումը դատարանի ընթացակարգային գործունեությունն է, գնահատումը՝ մտավոր-իրավական գործունեությունը, հետազոտումը՝ նախադրյալ է գնահատման համար, բայց ոչ դրա ձևը: Հետազոտումը կարգավորվում է կոնկրետ դատավարական նորմերով, գնահատումը չի կարգավորվում քայլ առ քայլ, այլ իրականացվում է ներքին համոզմամբ, վերջնական գնահատումն էլ արտահայտվում է միայն դատական ակտում:

Ամփոփելով վերը նկարագրվածը՝ կարելի է եզրահանգել, որ առավել հիմնավորված և ժամանակակից քրեական դատավարության սկզբունքներին համապատասխանում է այն մոտեցումը, ըստ որի՝ ապացույցների դատական հետազոտումը ինքնուրույն, օրենքով կարգավորված դատավարական փուլ է, որը նպատակ ունի ապահովել ապացույցների հրապարակումը, ստուգումը և անմիջականությունը, իսկ ապացույցների գնահատումը դատարանի ներքին համոզմամբ իրականացվող մտավոր-իրավական գործընթաց է, որը չի կարող նույնացվել դատական հետազոտման հետ, որոնցով հաստատվում կամ հերքվում է անձին ներկայացված մեղադրանքը՝ ամփոփելով հանցագործության փուլերը, հանցակիցների տեսակները, նրանց պատասխանատվության ենթարկելու քրեաիրավական նորմերը:

Ամփոփագիր: ՀՀ քրեական դատավարության հիմնական նպատակներն են ենթադրյալ հանցանքների վերաբերյալ արդյունավետ վարույթի իրականացումը՝ անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման, հանցագործությունների բացահայտման, հանցավոր արարք կատարած անձանց արդարացի պատիժ ենթարկելու և անմեղներին քրեական պատասխանատվությունից զերծ պահելու միջոցով:

Այսօր, երբ շարունակվում է զարգանալ և բարեփոխումների ենթարկվել իրավական համակարգը, արդիական է դառնում դատավարության մեջ ապացուցման որակի բարձրացման խնդիրը, սակայն առավել քան կարևոր է, քրեական գործերով դատաքննություն իրականացնելիս դատական համակարգը գործի այնպես, որ քաղաքացին վստահ լինինարդարության վերականգմանը:

Ապացուցման սահմանները հստակեցնելուց է կախված, թե կոնկրետ քրեական գործի շրջանակներում ինչ հարցեր պետք է պարզվեն, արդյոք դրանք կարող են վերաբերել հանցանքի առկայությանը, մեղավորի ինքնությանը, պատասխանատվությունը բացառող հանգամանքներին: Այս սահմաններն ուղղակիորեն ազդում են ապացույցների հավաքման և գնահատման գործընթացի վրա և միևնույն ժամանակ, բավարարության չափանիշների սահմանումը թույլ է տալիս հասկանալ, թե երբ կարող ենք համարել, որ տվյալ գործով ներկայացված ապացույցները բավարար են վերջնական որոշում կայացնելու համար:

Տվյալ ուղղությամբ կարևոր դեր ունեն Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված մոտեցումները, որոնց համաձայն՝ բավարար ապացույցների առկայությունը ենթադրում է անմեղության կանխավարկածի հաղթահարում, օբյեկտիվ փաստերի վրա հիմնված ներքին համոզմունքի ձևավորում, որը հանգեցնում է վերջնական դատական ակտ կայացնելուն:

Այսպես, կարող ենք արձանագրել, որ քրեական դատավարության մեջ ապացուցումը նպատակ ունի պարզել որոշակի հանգամանքներ, այն է քրեաիրավական և քրեադատավարական բնույթի հանգամանքներ, որոնք ենթակա են պարզման յուրաքանչյուր քրեական գործով: Կոնկրետ գործերով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը պարզելիս սկզբունքային նշանակություն ունեն քրեական օրենքի այն նորմերը, որոնցում սահմանված են հանցակիցների պատասխանատվությունը, հանցագործությունների բազմակիությունը, կատարած հանցագործությունների որակման խնդիրները, որոնք հնարավորություն կտան քրեական գործերով ճշմարտությունը բացահայտելուն:

Annotation. The main objectives of the RA criminal justice system are to carry out effective proceedings on alleged crimes by guaranteeing individual rights and freedoms, uncovering crimes, fairly punishing those who have committed a criminal act, and releasing innocent people from criminal liability.

Today, as the legal system continues to evolve and undergo reforms, the problem of improving the quality of evidence in the judicial process becomes urgent, but it is more than important that when conducting criminal proceedings, the judicial system acts in such a way that the citizen is confident that justice will be restored.

The clarification of the limits of proof determines which issues should be clarified in a particular criminal case, whether they may relate to the existence of a crime, the identity of the perpetrator, or circumstances precluding liability. These limitations directly affect the process of collecting and evaluating evidence, and at the same time, defining sufficiency criteria allows us to understand when we can consider the evidence presented in this particular case to be sufficient to make a final decision.

An important role in this direction is played by the approaches formed by the Court of Cassation, according to which the availability of sufficient evidence implies overcoming the presumption of innocence and the formation of an internal conviction based on objective facts, which leads to the final judicial act.

Thus, we can state that evidence in criminal proceedings is aimed at clarifying certain circumstances, namely circumstances of a criminal law and criminal procedure nature, which are subject to clarification in each criminal case. When determining the range of circumstances to be proved in specific cases, the norms of criminal law are of fundamental importance, which define the responsibility of accomplices, the multiplicity of crimes, and the qualification of crimes committed, which will establish the truth in criminal cases.

Аннотация. Основными целями уголовного судопроизводства Республики Армения являются обеспечение эффективного производства по уголовным делам посредством гарантирования прав и свобод личности, раскрытия преступлений, справедливого наказания лиц, совершивших преступления, а также освобождения невиновных от уголовной ответственности.

В условиях продолжающегося реформирования правовой системы особую актуальность приобретает проблема повышения качества доказывания в судебном процессе. Вместе с тем принципиально важно, чтобы судебное разбирательство по уголовным делам осуществлялось таким образом, чтобы обеспечивалось доверие общества к правосудию и формировалась уверенность граждан в восстановлении справедливости.

В статье рассматриваются пределы доказывания, от определения которых зависит круг обстоятельств, подлежащих установлению по конкретному уголовному делу, включая наличие события преступления, личность виновного, а также обстоятельства, исключающие уголовную ответственность. Подчёркивается, что пределы доказывания непосредственно влияют на процессы собирания, исследования и оценки доказательств, тогда как определение критериев их достаточности позволяет установить, являются ли представленные доказательства достаточными для принятия окончательного судебного решения.

Особое внимание уделяется подходам, сформированным Кассационным судом, согласно которым достаточность доказательств предполагает преодоление презумпции невиновности и формирование внутреннего убеждения суда, основанного на совокупности объективных фактов, необходимых для вынесения итогового судебного акта.

В результате исследования делается вывод о том, что доказывание в уголовном судопроизводстве направлено на установление обстоятельств уголовно-правового и уголовно-процессуального характера, подлежащих выяснению по каждому уголовному делу. При этом существенное значение имеют нормы уголовного права, регулирующие вопросы соучастия, множественности преступлений и квалификации деяний, поскольку именно они определяют содержание предмета доказывания и способствуют установлению истины по уголовному делу.

***Բանալի բառեր** – ապացույցներ, ապացույցների սպուգում, գնահատում, հավաքում, մրցակցային դատավարություն, ապացույցների հետազոտում:*

***Keywords:** evidence, evidence verification, evaluation, collection, adversarial proceedings, evidence research.*

***Ключевые слова:** доказательства, исследование доказательств, оценка доказательств, пределы доказывания, достаточность доказательств, состязательное судопроизводство, уголовный процесс.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Գիտաուսումնական ձեռնարկ, *Արթուր Ղամբարյան, Արտակ Հովհաննիսյան, Գրիգոր Չապանյան,* ապացուցման միջոցները և ապացուցումը ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2025:

2. *Смирнов В. П.* Противоборство сторон как сущность принципа состязательности уголовного судопроизводства // Государство и право. 1998. No 3. С. 59.

3. *Чеджемов Г. Б.* Судебное следствие. М., 1979. С. 4.

4. *Строгович М. С.* Курс советского уголовного процесса. Основные положения науки уголовного процесса. Т. 1. М., 1968. С. 302.

5. *Белкин А. Р.* Теория доказывания в уголовном судопроизводстве. М., 2007. С. 234.

6. Վճռաբեկ դատարանի 2023 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴ/0129/01/20 որոշում:

7. Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* վերաբերյալ թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում:

8. Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի *Սիրակ Սաքանյանի* վերաբերյալ թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշում:

Ավագյան Ի. - «Մասնավոր իրավական կենտրոն» փաստաբանական գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան, «Գլաձոր» համալսարանի հայցորդ, էլհասցե՝ ingaavagyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 02.04.2026 թ., տրվել է գրախոսության 02.04.2026 թ., երաշխավորվել է ի.գ.դ., ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, Հայ-Ռուսական համալսարանի պրոֆեսոր Ս. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-146

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
https://orcid.org/0000-0002-6322-4664
ԳՐԻԳՈՐ ՉԱՊԱՆՅԱՆ
Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան
https://orcid.org/0009-0008-8719-4253

ARTUR GHAMBARYAN
Head of the Department of Legal Theory and Constitutional Law at the Russian-Armenian University, Professor of the Academy of Public Administration of the Republic of Armenia, Doctor of Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia
GRIGOR CHAPANYAN
Applicant at the Department of Criminal Law and Criminal Procedure of the Russian-Armenian University, Member of the Chamber of Advocates of the RA, Attorney

АРТУР ГАМБАРЯН
Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления РА, доктор юридических наук, профессор, Заслуженный юрист РА
ГРИГОР ЧАПАНЯН
Соискатель кафедры уголовного права и уголовного процесса Российско-Армянского университета, член Палаты адвокатов РА, адвокат

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԴԵՄ ԱՌԱՐԿԵԼԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

OBJECTING TO THE TERMINATION OF CRIMINAL PROSECUTION AND ITS LEGAL CONSEQUENCES

ВОЗРАЖЕНИЕ ПРОТИВ ПРЕКРАЩЕНИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И ЕГО ПРАВОВЫЕ ПОСЛЕДСТВИЯ

Ներածություն

Հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական կարգը կարող է ներառել հետևյալ փուլերը՝

1) քրեական հետապնդումը դադարեցնելու նախադրյալների պարզում և գործընթացի նախաձեռնում,

2) հսկող դատախազի կողմից որոշման կայացում և որոշման հետ ծանոթացում,

3) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման ստուգում,

4) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման վերացում և քրեական հետապնդման նորոգում:

Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մաս) պարզելու դեպքում քննիչը նախաձեռնում է քրեական հետապնդումը դադարեցնելու գործընթաց: Նա ստուգում է, թե հայտնաբերված քրեական հետապնդումը բացառող հանգամանքները ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի որ կետին են համապատասխանում:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության դեպքում հետապնդումը պետք է դադարեցվի, սակայն քրեական հետապնդումը դադարեցնելու որոշ հիմքերի առկայության դեպքում այս ընդհանուր կանոնը չի գործում, քանի որ օրենքով նախատեսված է քրեական հետապնդումը չդադարեցնելու և քրեական վարույթը շարունակելու հնարավորություն: Այսպես՝ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված է քրեական հետապնդումը դադարեցնելու ոչ ռեաբիլիտացնող հիմքերի (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 12-14-րդ կետեր) առկայության դեպքում քրեական վարույթը շարունակելու բացառիկ հնարավորություն, եթե շահագրգիռ անձն առարկում է քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ: Քրեական հետապնդումը դադարեցնելու այս հիմքերի առկայության պարագայում քննիչը սկսում է ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված փաստակազմը ստուգելու գործընթացը, մասնավորապես՝ մահացածի օրինական ներկայացուցչի կամ հետապնդվող անձի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ դիրքորոշումը պարզելու գործընթաց, քանի որ թվարկված հիմքերը ոչ ռեաբիլիտացնող են:

Քրեական հետապնդումը դադարեցնելու ոչ ռեաբիլիտացնող հիմքերի առկայության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում և քրեական վարույթը շարունակվում է, եթե առկա են ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նախատեսված պայմանները՝

1) քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկությունը.

2) առարկության՝ անձին մեղսագրվող արարք չկատարելու պատճառը:

Այս պայմանները ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը կիրառելու փաստակազմի (հիպոթեզի) տարրերն են, որոնց առկայության դեպքում գործում է ոչ թե քրեական հետապնդումը դադարեցնելու ընդհանուր կանոնը, այլ այդ կանոնից բացառությունը՝ քրեական հետապնդումը չի դադարեցվում և վարույթը շարունակվում է (առարկություն ներկայացնելու պայմանի մասին՝ հաջորդիվ):

Այս պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը չեն կարող կիրառվել: Օրինակ՝ եթե անձն առարկում է հետապնդումը դադարեցնելու դեմ, սակայն չի նշում առարկելու պատճառը կամ որպես պատճառ նշում է զուտ

հետապնդումը շարունակելու մասին իր սուբյեկտիվ ցանկությունը, ապա բացակայում է ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի կիրառման երկրորդ պայմանը, այսինքն՝ առարկությունը ներկայացվել է ոչ թե իրեն մեղսագրվող արարքը չկատարելու պատճառով, այլ ուրիշ պատճառաբանությամբ: Նման իրավիճակում կիրառվում է քրեական հետապնդման դադարեցնելու ընդհանուր կանոնը. թեև մեղադրյալը ներկայացրել է քրեական հետապնդումը դադարեցնելու մասին առարկություն, սակայն այն առարկայազուրկ (որակազուր) առարկություն է[1], ուստի նման դեպքերում քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման: Այս մոտեցումն արդարացվում է քրեադատավարական ռեսուրսների տնտեսման հանգամանքով:

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նախատեսված պայմանները պետք է պարզել՝ ըստ հերթականության: Եթե օրինակ՝ առաջին պայմանը (առարկության պայմանը) բացակայում է, ապա երկրորդ պայմանը (մեղսագրվող արարքը կատարած չլինելու պայմանը) քննարկելն անիմաստ է:

Հիմնական հետազոտություն

1. Քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ կամքի արտահայտման եղանակները

Քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ կամք արտահայտելու կապակցությամբ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում օգտագործվում է «(...) եթե անձն առարկում է դրա դեմ այն հիմքով, որ (...)» ձևակերպումը, որը ճիշտ մեկնաբանելու և կիրառելու համար անհրաժեշտ է քննարկել կամքի արտահայտման եղանակները կամ ձևերը:

Տեսության մեջ առանձնացվում են կամքի արտահայտման ուղղակի և անուղղակի, կամ անմիջական և միջնորդավորված եղանակները[2]: Կամքի անուղղակի արտահայտումն անվանում են նաև լռելյայն կամահայտնություն[3]: Ուղղակի կամ անուղղակի կամահայտնության փոխարեն առավել ընդունելի է «դրական (պոզիտիվ) կամ (բացասական) նեգատիվ կամահայտնություն» ձևակերպումների օգտագործումը: Դրական է կամքի այն արտահայտումը, որը դրսևորվում է անձի ակտիվ վարքագծով: Դրական կամահայտնությունը, ի տարբերություն բացասականի, ունի արտահայտման եղանակ (կամքը գրավոր, բանավոր խոսքով կամ կոնկլուդենտ գործողությամբ արտահայտելը), որի միջոցով հնարավոր է անմիջապես ընկալել անձի կամքը: Վերջինս հակադրվում է անգործությանը, որը կազմում է բացասական կամահայտնության բովանդակությունը[4]:

Քրեական դատավարության գիտության մեջ մեղադրյալի կամահայտնությունը, կախված քրեադատավարական գործունեության ակտիվությունից, բաժանվում է՝ դրական կամ բացասական կամահայտնության: Մեղադրյալի դրական կամահայտնության բովանդակությունը որոշակի գործողությունների կատարումն է, որոնք ուղղված են արտահայտված կամքի իրականացմանը, օրինակ՝ ցուցմունք տալու համաձայնությունը և, որպես արդյունք, ցուցմունք տալը: Մեղադրյալի բացասական կամահայտնության բովանդակությունն անգործությունն է, օրինակ՝ վերջին խոսքից հրաժարվելը: Սա պասիվ վարքագիծ է կամ լռություն, այսինքն՝

[1] ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի իմաստով հետապնդման դադարեցման դեմ ներկայացված առարկությունը կհամարվի որակյալ միայն այն պարագայում, երբ նրա հիմքում դրված կլինի մեղսագրվող արարքը չկատարելու հանգամանքը:

[2] *Эннекцерус Л.,* Курс германского гражданского права. Том I, полутом 2: Введение и общая часть. Под ред. Д. М. Генкина и проф. И. Б. Новицкого. М., Изд-во иностранной литературы, 1950, с. 145-147.

[3] *Ойгензихт В. А.,* Воля и волеизъявление (Очерки теории, философии и психологии права) / Академия наук Таджикской ССР; Отв. Ред. академик АН Таджикской ССР С.А. Раджабов. Душанбе, 1983, с. 126-127.

[4] *Красавчиков О. А.,* Юридические факты в советском гражданском праве. М., Госюриздат, 1958, с. 100-102.

օրենքով թույլատրված գործողությունների բացակայություն: Այս դեպքում չի կարելի հերքել կամքի առկայությունը (խոսքը կամքի բացակայության մասին չէ), այս դեպքում բացակայում է կամքի դրական արտահայտումը: Անգործության հիմքում ընկած է կամքը, որն արտահայտվում է վարքագծի որոշակի ակտ կատարելուց կամային, նպատակաուղղված կերպով հրաժարվելու մեջ[5]:

Տեսության մեջ և գործնականում հաճախ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ կամքի արտահայտման եղանակների նուրբ տարբերություններն անտեսվում են, մասնավորապես կարևորություն չի տրվում այն հարցին, թե օրենսդիրը ինչպես է ձևակերպել իրավական նորմի փաստակազմը՝ «համաձայնություն ներկայացնելո՞ւ», թե՞ «չներկայացնելու» ձևաչափով:

Օրինակ՝ տեսության մեջ նշվում է, որ «քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկության բացակայություն» և «քրեական հետապնդումը դադարեցնելու համաձայնություն» հասկացությունները նույնական են[6], սակայն այս մոտեցումը վիճելի է, քանի որ չի պարզաբանվում «քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկության բացակայություն» ասելով նկատի ունեն միայն *պոզիտիվ* եղանակով առարկության բացակայության մասին հայտնելը (օրինակ՝ մեղադրյալը գրավոր հայտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ *առարկություն չունի* կամ միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին), թե՞ առարկության բացակայություն են համարում նաև իրավիճակի (քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության և իրենց իրավունքների) մասին տեղեկացված անձի *լռությունը* (առարկություն չներկայացնելը):

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր պրակտիկայում ևս անուշադրության է մատնել «համաձայնություն ներկայացնելու» և «առարկություն չներկայացնելու» ձևակերպումների նուրբ տարբերությունները: Այսպես՝ 1998 թ. ՀՀ ՔրԴՕ 35-րդ հոդվածի 6-րդ մասը ձևակերպված էր հետևյալ կերպ. «(...) քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա **դեմ առարկում է մեղադրյալը»** (ընդգծումը՝ իմ): ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԳԴ5/0022/01/10 գործով 20.10.2011 թ. որոշմամբ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներում «առարկել - չառարկել» օրենսդրական ձևակերպումների փոխարեն օգտագործել է «մեղադրյալի համաձայնություն» ձևակերպումը.

« (...) քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի **համաձայնությունը**, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով» (ընդգծումը՝ իմ):

Թեև օրենքում օգտագործվում էր «դրա դեմ առարկում է մեղադրյալը» ձևակերպումը, ՀՀ Վճռաբեկ դատարանը դրա փոխարեն ներմուծել է «մեղադրյալի համաձայնություն» ձևակերպումը (տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0180/01/15 գործով 30.08.2017 թ. որոշումը)[7]:

Այսպիսով՝ քննարկվող հարցի համատեքստում «*պոզիտիվ համաձայնություն*» և «*առար-*

[5] *Артамонова Е. А.*, Волеизъявление обвиняемого в уголовном судопроизводстве: монография. М., Юрлитинформ, 2019, с. 118-119.

[6] *Смолькова И. В.*, Признание обвиняемым своей вины: доказательственное и правовое значение. М., Юрлитинформ, 2017, с. 308.

[7] ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0121/11/14 գործով 27.03.2015 թ. որոշմամբ «համաձայնություն» եզրույթի հետ միասին օգտագործել է «առարկություն» եզրույթը:

կություն (անհամաձայնություն) չներկայացնել» ձևակերպումների տարբերակումն ունի սկզբունքային նշանակություն:

Եթե իրավական նորմում կամքի արտահայտումը ձևակերպվել է *պոզիտիվ* եղանակով արտահայտած համաձայնության ձևաչափով, ապա պահանջվում է անձի պոզիտիվ կամահայտնություն, այսինքն՝ անձը պետք է գրավոր, բանավոր կամ մեկ այլ ձևով հստակ արտահայտի իր կամքը (համաձայնությունը կամ անհամաձայնությունը)[8]: Իրավական նորմի՝ պոզիտիվ համաձայնություն պահանջող հիպոթեզի պարագայում իրավական հետևանքը վրա է հասնում, եթե առկա է անձի պոզիտիվ եղանակով արտահայտած համաձայնությունը: Ենթադրենք իրավական նորմը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, եթե անձը համաձայն է դրա հետ»: Այս դեպքում կամքի արտահայտման միակ եղանակն անձի պոզիտիվ (գրավոր, բանավոր կամ այլ տեսանելի) ձևն է: Եթե անձը քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ պոզիտիվ եղանակով կամք չի հայտնում, ապա քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել, քանի որ բացակայում է նորմի հիպոթեզը՝ անձի համաձայնությունը:

Եթե իրավական նորմում կամքի արտահայտումը ձևակերպվել է *առարկություն (անհամաձայնություն) չներկայացնելու* ձևաչափով, ապա առարկության բացակայությունը կարող է արտահայտվել երկու եղանակով՝

1) պոզիտիվ կամահայտնությամբ, որից տեսանելի է կամքի բովանդակությունը, օրինակ՝ իրավասու մարմնին հասցեագրված նամակում մեղադրյալը հայտնում է, որ չի առարկում քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ,

2) լռությամբ, որից թեև կամքի բովանդակությունը ուղղակիորեն տեսանելի չէ, սակայն դրանից հնարավոր է անել որոշակի եզրահանգումներ: Օրինակ՝ *իրավիճակի մասին տեղեկացված անձը*[9] գրավոր կամ այլ կերպ առարկություն չի հայտնում, որի դեպքում նրա լռությունը համարվում է որպես առարկության բացակայություն (լռությունը հավասարեցվում է առարկություն չունենալուն): Այս ձևակերպման դեպքում մեղադրյալի լռությունն իրավական հետևանք է առաջացնում ոչ թե անմիջապես, այլ լռության փաստից բխեցվող՝ չառարկելու մասին եզրահանգման միջոցով[10]:

Սովորաբար անձի լռությունը per se ոչինչ չի արտահայտում[11], սակայն «քրեական հետապնդումը դեմ լռությամբ չառարկել» ձևակերպման ներքո նկատի ունենք այն իրավիճակները, երբ մեղադրյալի լռությունից *բխեցվում է* քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ

[8] «Նեգատիվ կամ պոզիտիվ կամահայտնություն» ձևակերպման մեջ «նեգատիվ» կամ «պոզիտիվ» բառերն օգտագործվում են ոչ թե կամքի բովանդակությունը (համաձայնությունը կամ անհամաձայնությունը) բնորոշելու, այլ կամքի արտահայտման եղանակները, ձևերը բնորոշելու համար:

[9] Առարկություն (անհամաձայնություն) չներկայացնելը կարելի է համարել լռելյայն համաձայնություն, եթե անձը *պատշաճ տեղեկացված է եղել* իրավիճակի մասին և առարկություն չի ներկայացրել: Իրավիճակի մասին չտեղեկացված անձի կողմից առարկություն չներկայացնելը չի կարող համարվել լռելյայն համաձայնություն: Ենթադրենք օրենքը սահմանում է, որ քրեական հետապնդումը կարելի է դադարեցնել, եթե մեղադրյալը չի առարկում դրա դեմ: Այս պարագայում, եթե մեղադրյալը տեղեկացված չէ քրեական հետապնդման կամ այն դադարեցնելու դատախազի մտադրության մասին, ապա առարկություն չներկայացնելը չի կարող դիտվել որպես քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ լռելյայն համաձայնություն:

[10] *Гамбарян А. С.,* Правовые режимы молчания и фиктивных выводов, вытекающих из него // Журнал российского права, 2019, № 12, с. 19-29, Молчание в праве (доктрина, практика и техника): монография. Под ред. А. С. Гамбаряна. М., Юрлитинформ, 2021, с. 239-247.

[11] *Гамбарян А. С.,* Отказ от субъективного права молчанием (tacit waiver) // Теория и практика общественного развития, 2018, № 4, с. 67-71, *Гамбарян А. С.,* Отказ от процессуальных субъективных прав молчанием // Трансформация и цифровизация правового регулирования общественных отношений в современных реалиях и условиях пандемии: коллективная монография / Под ред. И.В. Воронцовой. - Казань: Отечество, 2020, с. 270-277.

չառարկելու մասին *ենթադրյալ եզրահանգում*:

Այսպիսով, եթե քրեական հետապնդումը դադարեցնելու համար պահանջվում է անձի համաձայնությունը, ապա դա պետք է հասկանալ անձի պոզիտիվ եղանակով արտահայտված համաձայնությունը, իսկ եթե օրենքում պարզապես օգտագործված է «առարկություն չներկայացնել» ձևակերպումը, ապա մեղադրյալը կարող է մի դեպքում պոզիտիվ (ուղղակի) եղանակով հայտնել քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու մասին, մեկ այլ դեպքում մեղադրյալը, տեղեկացված լինելով քրեական հետապնդումը դադարեցնելու հնարավորության մասին, կարող է հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որևէ դիրքորոշում չհայտնել, պարզապես լռել, որից բխեցվում է քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու մասին եզրահանգումը:

2. Առարկության չներկայացնելը որպես քրեական հետապնդումը դադարեցնելու պայման

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված կարգավորման պարագայում գործում է հետևյալ տրամաբանությունը. առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք (օրինակ՝ համաներումը և այլն), սակայն օրենքը թույլ է տալիս շարունակել քրեական վարույթը միայն այն պայմանով, որ անձն առարկում է քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ, այն պատճառով, որ ինքը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը: Այսինք՝ ընտրվել է ոչ թե «համաձայն է քրեական հետապնդումը դադարեցնելու հետ» ձևաչափը, այլ «չի առարկում դրա դեմ» ձևաչափը:

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 12-14-րդ կետերով նախատեսված հանգամանքների առկայությունը քրեական հետապնդումը բացառող չէ, եթե՝

1) մահացածի օրինական ներկայացուցիչն առարկում է հետապնդումը դադարեցնելու դեմ այն հիմքով, որ մահացածը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը,

2) հետապնդման ենթակա անձն ինքն առարկում է հետապնդումը դադարեցնելու դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Իսկ ինչպես պետք է վարվել այն դեպքում, երբ անձը քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ պոզիտիվ եղանակով առարկություն չի հայտնում, քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ դիրքորոշում չի հայտնում (լռում է):

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման վերաբերյալ դատախազությունում ձևավորվել է այնպիսի մոտեցում, ըստ որի՝ եթե անձն իր նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքերի առկայության պայմաններում քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ դիրքորոշում չի հայտնում, ապա հետապնդումը չպետք է դադարեցվի և վարույթը պետք է շարունակվի ընդհանուր կարգով: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազը պատգամավորի նկատմամբ հետապնդում հարուցելու թույլտվություն ստանալու ժամանակ ՀՀ ազգային ժողովում նշել է.

«Այն դեպքերում, երբ անձն իր նկատմամբ ոչ արդարացնող հիմքերի առկայության պայմաններում դիրքորոշում չի հայտնում, ապա հետապնդումը չպետք է դադարեցվի և վարույթը պետք է շարունակվի ընդհանուր կարգով»[12]:

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 4-րդ մասի նման մեկնաբանությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ չեն տարբերակվում կամքի արտահայտման եղանակները, անտեսվում են «համաձայնություն - առարկություն - չառարկել» ձևակերպումների նուրբ տար-

[12] Տես ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանի կողմից ՀՀ ԱԺ պատգամավոր Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու թույլտվության հարցի վերաբերյալ 2023 թվականի փետրվարի 7-ի ելույթը: // https://www.youtube.com/watch?v=fapHQmr51_Q

բերությունները:

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ընտրվել է կամքի արտահայտման՝ ոչ թե պոզիտիվ համաձայնության, այլ «առարկել – չառարկ» ձևաչափը, քանի որ այդ նորմերում օգտագործվում է « (...) եթե անձն առարկում է դրա դեմ այն հիմքով, որ (...)» ձևակերպումը: Սա նշանակում է, որ առարկության չներկայացնելը կարող է արտահայտվել ինչպես պոզիտիվ կամահայտնությամբ (օրինակ՝ մեղադրյալը հայտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություն չունի կամ միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին), այնպես էլ լռությամբ, երբ իրավիճակի մասին տեղեկացված անձը գրավոր կամ այլ կերպ առարկություն չի ներկայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ, որի պարագայում լռությունը հավասարեցվում է քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելուն (լռելյան համաձայնություն):

Այլ կերպ ասած՝ քրեական վարույթը շարունակելու համար պարտադիր պայման է տվյալ անձի (կամ նրա ներկայացուցչի) կողմից ակտիվ առարկության հայտնելը: Եթե անձը պոզիտիվ եղանակով չի առարկում քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ, ապա քրեական հետապնդումը դադարեցվում է: Քրեական հետապնդումը դադարեցվում է նաև այն դեպքում, երբ անձը քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություն պոզիտիվ եղանակով չի հայտնում (լռում է, առարկելու վերաբերյալ դիրքորոշում չի հայտնում), ապա այդ լռությունը հավասարեցվում է չառարկելուն: Այսինքն՝ գործում է ընդհանուր կանոնը՝ քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման:

Այս բարդ ձևակերպումներով հարցը ավելի պարզ ներկայացնելու համար նշենք, որ ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շահագրգիռ անձին ըստ էության տալիս են ընտրության երկու տարբերակ՝ առարկելու և չառարկելու:

Քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելու տարբերակն ընտրելու դեպքում անձը պահանջում է, որ իր մեղադրանքը քննվի դատարանում, որպեսզի փաստական տվյալներով ապացուցվի իր անմեղությունը կամ, ըստ օրենքի տերմինաբանության, որպեսզի պաշտոնապես հաստատվի, որ ինքը չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու տարբերակն ընտրելու դեպքում անձը հրաժարվում է դատական քննությունից և չի առարկում (այդ թվում՝ լռության եղանակով), որ հետապնդումը դադարեցվի ոչ ռեաբիլիտացնող հիմքով: Նա նախընտրում է ավարտել գործընթացը՝ առանց իրեն մեղսագրվող արարքը կատարելու վերաբերյալ հարցը կամ անմեղության հարցը լուծելու:

Կարևոր է ընդգծել, որ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու տարբերակի դեպքում քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ անձի պոզիտիվ եղանակով արտահայտված կամքից կամ նրա լռությունից եզրահանգում է կատարվում բացառապես քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություն չունենալու մասին, սակայն ոչ թե իրեն մեղսագրվող արարքը կատարելու համաձայնության կամ այսպես կոչված «մեղքի ընդունման» մասին»: Պատկերավոր ասած՝ լռությունը = քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելուն, սակայն՝ լռությունը ≠ մեղսագրվող արարքը կատարելու մասին համաձայնության:

3. Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդություն ներկայացնելը

Գործնականում, քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի առկայության դեպքում, մեղադրյալն է միջնորդություն ներկայացնում քրեական հետապնդումը դադարեցնե-

լու մասին[13]: Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին մեղադրյալի միջնորդությունը նշանակում է, որ նա պոզիտիվ եղանակով կամք է հայտնում այն մասին, որ նա չի առարկում քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ, սակայն դա չի նշանակում, որ նա այդ միջնորդությամբ համաձայնվում է մեղսագրվող արարքը կատարելու հետ: Անձը կարող է լիովին համոզված լինել իր անմեղության մեջ, չընդունել իրեն մեղսագրվող արարքը կատարելու մեղադրանքը, բայց միջնորդել դադարեցնել հետապնդումը վաղեմության ժամկետի պատճառով, եթե դա իր և իր փաստաբանի գնահատմամբ առավել նպատակահարմար ռազմավարություն է: Այս ընտրության վրա կարող են ազդել տարբեր գործոններ, որոնք չեն ենթադրում մեղսագրվող արարքի կատարման ընդունում, օրինակ՝ դատական քննության ձգձգումներից և հոգեբանական լարվածությունից խուսափելու ցանկությունը, ֆինանսական և ժամանակային ռեսուրսների խնայողությունը, հանրային ուշադրությունից խուսափելու ձգտումը և այլն:

Հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդություն ներկայացնելու փաստից որևէ կերպ չի կարելի եզրակացնել, որ մեղադրյալն ընդունում է իրեն մեղսագրվող արարքի կատարումը: Քննարկվող հարցի տեսանկյունից, հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդությունը և մեղսագրվող արարքը կատարելը սկզբունքորեն տարբեր իրավիճակներ են: Եթե անձը չի առարկում քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ, այդ թվում՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդություն ներկայացնելու եղանակով, ապա ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 4-րդ մասը (նորմի փաստակազմի առաջին պայմանի բացակայության հիմքով) արդեն իսկ ենթակա չէ կիրառման, ուստի ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պայմանը՝ «մեղսագրվող արարքը չկատարելու» պայմանը քննարկելու հերթին չի հասնում:

Այս մոտեցման ընդդիմախոսները պնդում են, որ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելու մեղադրյալի միակ պատճառը կարող է լինել մեղսագրվող արարքը չկատարելը, հետևաբար, հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելը նշանակում է, որ մեղադրյալն ընդունում է իրեն մեղսագրվող արարքը: Այս պնդումը «հակառակ եզրահանգման» (argumentum a contrario) տրամաբանական կանոնի սխալ կիրառման արդյունք է: Ըստ էության, մեր ընդդիմախոսները նշում են, որ եթե իրեն մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով ներկայացվող քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելը հանգեցնում է «B» հետևանքի (քրեական վարույթի շարունակում), ապա քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելը պետք է հանգեցնի «ոչ-B» հետևանքի (քրեական հետապնդման դադարեցում), նաև լրացուցիչ ենթադրության՝ իրեն մեղսագրվող արարքի ընդունման: Սակայն քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելը հանգեցնում է միայն և միայն մեկ իրավական հետևանքի՝ քրեական հետապնդման դադարեցման:

Գործնականում քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ուղիղ արտահայտված համաձայնությունը մեկնաբանվում է այնպես, որ անձն համաձայն է նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման մեջ նկարագրված փաստական հանգամանքների հետ: Օրինակ՝ երբեմն քաղաքացիական դատավարությունում քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ պոզիտիվ եղանակով արտահայտված կամքին տրվում է իրավական (ապացուցողական) նշանակություն, այն մեկնաբանվում է այնպես, որ մեղադրյալը համաձայն է նաև քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ նկարագրված հանգամանքների հետ: Այսպես՝ թիվ ՎԴ2/0085/05/08 քաղաքացիական գործով 19.05.2008 թ. վճռով դատարանը հաստատված է համարել և վճռի հիմքում է դրել հետևյալ հանգամանքը.

[13] Կրկին նշենք, որ նման միջնորդություն ներկայացնելը իրականության մեջ ոչինչ չի փոխում, քանի որ իրավասու մարմինը ի պաշտոնե պարտավոր է հետապնդումը դադարեցնել, եթե ակնհայտորեն առկա է հետապնդումը դադարեցնելու ոչ հայեցողական հիմք:

«Է. Բ-ի նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը 07.02.2006 թ. կարճվել է ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներման ակտի հիման վրա, որից **առաջ նա համաձայնություն է տվել** գործի վարույթը կարճելուն և քրեական հետապնդում չիրականացնելուն (ընդգծումը՝ հեղ.): Քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման մեջ նշվում է, որ քննությամբ հաստատված է համարվել այն հանգամանքը, որ Է. Բ-ն անձամբ և իր ներկայացուցիչների միջոցով 2004–2005 թթ. ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետություն է արտահանել տարբեր տրամաչափի պողպատյա խողովակներ, սակայն ներկայացված հարկային հաշվետվություններում և հարկման հիմք համարվող փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խուսափել է պետական բյուջե վճարել խոշոր չափի գումար»:

Նշված քաղաքացիական գործով դատարանը, ըստ էության, շեշտել է այն, որ անձը, համաձայնություն տալով կարճելու քրեական գործով վարույթը, միաժամանակ համաձայնվել է քրեական գործի վարույթը կարճելու որոշման մեջ նշված հանգամանքների հետ:

Որպեսզի քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ մեղադրյալի արտահայտած կամքը հետագայում քաղաքացիական դատավարությունում չօգտագործվի նրա դեմ, առաջարկվում են հետևյալ ռազմավարությունները:

Եթե ընտրվել է քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ պոզիտիվ եղանակով կամք արտահայտելու ռազմավարությունը, ապա անհրաժեշտ է խուսափել քրեական դատավարության ընթացքում քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ուղիղ եղանակով *համաձայնություն* հայտնելուց: Դրա փոխարեն պետք է ընտրել քրեական հետապնդման վերաբերյալ պոզիտիվ եղանակով *չառարկելու տարբերակը*, օրինակ՝ մեղադրյալը հայտնում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություն չունի կամ միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Ընդ որում, դիմումում կամ միջնորդությունում պետք է հստակ նշել, որ դիմումը կամ միջնորդությունը քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու մասին է, ոչ թե՝ մեղսագրվող արարքի ընդունման կամ փաստական հանգամանքների ճանաչման:

Առավել անվտանգ ռազմավարությունը քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ լռությամբ չառարկելու տարբերակն է, այսինքն՝ ի պատասխան քննիչի հարցադրմանը մեղադրյալը քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու վերաբերյալ ուղիղ կամք չի հայտնում, նա լռում է, ինչը նշանակում է, որ նա ոչ դեմ է, ոչ էլ կողմ, սակայն մեղադրյալի լռությունից *բխեցվում է* քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ չառարկելու մասին ենթադրյալ եզրահանգում, որի պայմաններում քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման:

Նման ռազմավարության ընտրության պայմաններում քրեական հետապնդումը դադարեցնելը քաղաքացիական գործերով որևէ դեպքում չի կարող ունենալ իրավական (ապացուցողական) նշանակություն, իսկ քաղաքացիական վեճը քննող դատարանը՝ մեղադրյալի լռությունը չի կարող հավասարեցնել հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ նկարագրված հանգամանքների վերաբերյալ մեղադրյալի համաձայնության հետ: Այս իրավիճակը նման է ամերիկյան իրավունքում հայտնի «nolo contendere»–ի հետևանքներին, որի հիմքում ընկած է «չեմ ցանկանում վիճել», «չեմ ցանկանում վիճարկել» լատինական արտահայտությունը: Ամերիկյան իրավունքում nolo contendere առկա է այն դեպքում, երբ մեղադրյալը մեղքը չի ընդունում, բայց նաև չի վիճարկում այն[14]: Այս դեպքում մեղադրյալը չի ցանկանում մասնակցել

[14] Տես *Ղամբարյան Ա.*, Լռությունը իրավունքում (համատեսական և քրեադատավարական տեսանկյունները):

մրցակցային դատավարությանը, սակայն տեխնիկապես չի հայտարարում մեղքն ընդունելու մասին: «Nolo contendere»-ի հայտարարության[15] հիմնական առավելությունն այն է, որ մեղադրանքը չվիճարկելու մասին հայտարարությունից ենթադրաբար բխող մեղքի ընդունումը, ի տարբերություն մեղքն ընդունելու մասին հայտարարության, քաղաքացիական հայցը քննելիս իրավախախտման որևէ տարրի ապացուցման համար անթույլատրելի է[16]:

Եզրակացություն

ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի ճիշտ կիրառման համար սկզբունքային նշանակություն ունի «համաձայնություն» և «առարկության բացակայություն» հասկացությունների տարանջատումը: Օրենսդրական «չառարկել» ձևակերպումը նշանակում է, որ անձի լռությունը դիտվում է որպես քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություն չունենալու արտահայտություն, և այն չի կարող հավասարեցվել մեղքի ընդունմանը կամ մեղսագրվող արարքի հետ համաձայնությանը:

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում է քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկելու իրավական ինստիտուտը: Հեղինակները վերլուծում են քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ շահագրգիռ անձանց կամքի արտահայտման եղանակները՝ տարանջատելով պոզիտիվ և նեգատիվ կամահայտնությունը, ինչպես նաև «համաձայնություն» և «առարկության բացակայություն» հասկացությունների միջև եղած տարբերությունը:

Հատուկ ուշադրություն է դարձվում այն դեպքերին, երբ քրեական հետապնդումը դադարեցվում է ոչ ռեաբիլիտացնող հիմքերով (օրինակ՝ մահ, համաներում, ապաքրեականացում): Հեղինակները պարզաբանում են, որ օրենսդրական «չառարկել» ձևակերպումը նշանակում է, որ անձի լռությունը պետք է դիտվի որպես քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ առարկություն չունենալու արտահայտություն, ինչը չի նշանակում մեղսագրվող արարքի հետ համաձայնություն: Այս համատեքստում վերլուծվում է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը և դատախազության մոտեցումը:

Հոդվածում առանձնակի կարևորություն է տրվում քրեական հետապնդումը դադարեցնելու մասին միջնորդության իրավական հետևանքներին և դրա հնարավոր ազդեցությանը քաղաքացիական դատավարությունում: Հեղինակները ներկայացնում են այն ռազմավարությունները, որոնք թույլ կտան խուսափելու այնպիսի իրավիճակներից, երբ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ մեղադրյալի արտահայտած կամքը հետագայում քաղաքացիական դատավարությունում օգտագործվում է իր դեմ, և զուգահեռներ են անցկացնում ամերիկյան իրավունքում հայտնի «nolo contendere» ինստիտուտի հետ:

Annotation. The article examines the legal institution of objecting to the termination of criminal prosecution. The authors analyze the methods by which interested parties express their will regarding the termination of criminal prosecution, distinguishing between positive and negative expressions of will, as well as the differences between the concepts of “consent” and “absence of objection.”

Special attention is paid to cases where criminal prosecution is terminated on non-rehabilitative grounds (e.g., death, amnesty, decriminalization). The authors clarify that the legislative formulation “not to object” means that a person’s silence should be regarded as an expression of having no objection to the termination of criminal prosecution, which does not imply agreement with the imputed act. In this context, the legal position of the RA

Երևան, Տիգրան Մեծ, 2020, էջ 108-109:

[15] Ի տարբերություն լռության, nolo contendere-ը մեղադրյալի ակտիվ, պոզիտիվ եղանակով հայտարարությունն է: Այն չի ենթադրում լռություն: Մեղադրյալը դատարանում հստակ հայտարարում է, որ չի ընդունում մեղքը, բայց չի վիճարկելու մեղադրանքը:

[16] Уильям Бернам. Правовая система США. Пер. с англ. 3-й выпуск. М., Новая юстиция, 2006, с. 466.

Court of Cassation and the approach of the prosecutor's office are also analyzed.

The article places particular importance on the legal consequences of a motion to terminate criminal prosecution and its potential impact on civil proceedings. The authors present strategies designed to prevent situations where the defendant's expression of will regarding the termination of criminal prosecution is subsequently used against them in civil proceedings and draw parallels with the "nolo contendere" institution known in American law.

Аннотация. В статье исследуется правовой институт возражения против прекращения уголовного преследования. Авторы анализируют формы волеизъявления заинтересованных лиц в контексте прекращения уголовного преследования, разграничивая позитивное и негативное волеизъявление, а также содержание понятий «согласие» и «отсутствие возражения».

Особое внимание уделяется прекращению уголовного преследования по нереабилитирующим основаниям, включая смерть обвиняемого, амнистию и декриминализацию деяния. Авторы обосновывают, что используемая законодателем формулировка «не возражать» предполагает возможность признания молчания лица отсутствием возражений против прекращения уголовного преследования, однако такое поведение не может рассматриваться как признание вины либо согласие с предъявленным обвинением. В данном контексте анализируются также правовые позиции Кассационного суда Республики Армения и подходы органов прокуратуры.

Отдельное внимание уделяется правовым последствиям ходатайства о прекращении уголовного преследования и его возможному влиянию на последующее гражданское судопроизводство. Авторы предлагают правовые механизмы, направленные на предотвращение ситуаций, при которых волеизъявление обвиняемого о прекращении уголовного преследования может впоследствии использоваться против него в гражданском процессе, а также проводят сравнительно-правовой анализ с институтом *nolo contendere*, известным американскому праву.

Բանալի բառեր *- քրեական հետապնդման դադարեցում, ոչ ռեաբիլիտացնող հիմքեր, կամքի արտահայտում, առարկություն, լռություն, համաձայնություն, մեղադրյալի իրավունքներ, nolo contendere:*

Keywords: *termination of criminal prosecution, non-rehabilitative grounds, expression of will, objection, silence, consent, rights of the accused, nolo contendere.*

Ключевые слова: *прекращение уголовного преследования, нереабилитирующие основания, волеизъявление, возражение, согласие, молчание, права обвиняемого, nolo contendere.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Ղամբարյան Ա., Լռությունը իրավունքում (համատեսական և քրեադատավարական տեսանկյուններ): Երևան, Տիգրան Մեծ, 2020, 312 էջ:

2. Артамонова Е. А., Волеизъявление обвиняемого в уголовном судопроизводстве: монография. М.: Юрлитинформ, 2019. 330 с.

3. Гамбарян А. С., Отказ от процессуальных субъективных прав молчанием // Трансформация и цифровизация правового регулирования общественных отношений в современных реалиях и условиях пандемии: коллективная монография / Под ред. И.В. Воронцовой. - Казань: Отечество, 2020, с. 270-277.

4. Гамбарян А. С., Отказ от субъективного права молчанием (tacit waiver) // Теория и практика общественного развития. 2018, № 4, с. 67-71.

5. Гамбарян А. С., Правовые режимы молчания и фиктивных выводов, вытекающих из него // Журнал российского права, 2019, № 12, с. 19-29.

6. Красавчиков О. А., Юридические факты в советском гражданском праве. М.: Госюриздат, 1958. 183 с.
7. Молчание в праве (доктрина, практика и техника): монография. Под ред. А. С. Гамбаряна. М., Юрлитинформ, 2021, 336 с.
8. Ойгензихт В. А., Воля и волеизъявление (Очерки теории, философии и психологии права) / Академия наук Таджикской ССР; Отв. Ред. академик АН Таджикской ССР С.А. Раджабов. Душанбе, 1983. 256 с.
9. Смолькова И. В. Признание обвиняемым своей вины: доказательственное и правовое значение. М.: Юрлитинформ, 2017. 432 с.
10. Уильям Бернам. Правовая система США. Пер. с англ. 3-й выпуск. М.: Новая юстиция, 2006. 1211 с.
11. Эннекцерус Л., Курс германского гражданского права. Том I, полутом 2: Введение и общая часть. Под ред. Д. М. Генкина и проф. И. Б. Новицкого. М.: Изд-во иностранной литературы, 1950. 483 с.

ՂԱՄԲԱՐՅԱՆ Ա. - Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, էլհասցե՝ artur.ghambaryan@gmail.com:

ՉԱՊԱՆՅԱՆ Գ. - Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ, ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, էլհասցե՝ advocate.chapanyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 27.03.2026 թ., տրվել է գրախոսության 27.03.2026 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. թեկնածու Զ. Հարությունյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-158

ԳԵՂԵՑԻԿ ԲԱԼՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ
ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային սփորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

GEGHETSIK BALYAN
PhD Student at the Chair of Criminal Procedure and Criminalistics of Yerevan State University
Advisor Coordinating Separate Functions in Structural Units of the Ministry of Justice of the RA

ГЕХЕЦИК БАЛЯН
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики Ереванского государственного университета,
советник, координирующий отдельные функции в структурных подразделениях Министерства юстиции Республики Армения
https://orcid.org/0009-0009-1251-2293

ԲԱՐԵԽԻՂՃ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԳՈՒՅՔԻ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

MECHANISMS FOR PROTECTING THE RIGHTS OF BONA FIDE THIRD PARTIES WITHIN THE FRAMEWORK OF THE PROPERTY SEIZURE INSTITUTE

МЕХАНИЗМЫ ЗАЩИТЫ ПРАВ ДОБРОСОВЕСТНЫХ ТРЕТЬИХ ЛИЦ В РАМКАХ ИНСТИТУТА АРЕСТА ИМУЩЕСТВА

Ներածություն

Իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում մշտապես ուշադրության կենտրոնում է եղել գույքի բարեխիղճ ձեռք բերողի իրավունքների պաշտպանության հարցը: Բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, առկա են օրենսդրական կարգավորումներ, որոնք միտված են ապահովել գույքի բարեխիղճ ձեռք բերողի սեփականության իրավունքի համապարփակ պաշտպանությունը՝ միաժամանակ արդարացի հավասարակշռություն պահպանե-

լով հանրային և մասնավոր շահերի միջև: Բարեխիղճ ձեռք բերողի իրավունքների պաշտպանության համատեքստում կարևորագույն հարցերից մեկը սեփականության իրավունքով վերջինիս պատկանող գույքի բռնագրավման իրավաչափության հարցն է: Որպես ընդհանուր սկզբունք՝ շատ երկրներում գործում է բարեխիղճ ձեռք բերողի գույքի բռնագրավման արգելքը, որին զուգահեռ, սակայն, կան տարբեր երկրների օրենսդրական ակտերով սահմանված բացառիկ հիմքեր, որոնք թույլ են տալիս գույքը բռնագրավել նաև երրորդ անձից՝ անկախ վերջինիս բարեխիղճ լինելու հանգամանքից:

Հոդվածի նպատակն է միջազգային փորձի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում վերլուծել բարեխիղճ երրորդ անձի գույքի արգելադրման և հետագա բռնագրավման իրավաչափության վերաբերյալ ներպետական կարգավորումները, ինչպես նաև անդրադառնալ այս հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված նախադեպային դիրքորոշումներին, մասնավորապես՝ «բարեխղճության կանխավարկած» հասկացության էությանն ու նշանակությանը:

Հիմնական հետազոտություն

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի[1] 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հատուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բռնագրավումը կամ բռնագանձումն ապահովելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ ստացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ.

2) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց.

3) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ.

4) ապացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է.

5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից և այն

[1] Ընդունվել է 30.06.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., գործում է:

տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը:

ՀՀ քրեական օրենսգրքի[2] 121-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած գույքը, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտը կամ այլ տեսակի օգուտը միախառնված է օրինական ճանապարհով ստացված գույքի հետ, պատկանում է բարեխիղճ երրորդ անձի, կամ այն չի հայտնաբերվել, ապա բռնագրավման է ենթակա համարժեք գույք:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բռնագրավման ենթակա չէ հանցանք կատարած անձի կամ նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ գույքն այն ցանկին համապատասխան, որը սահմանված է օրենքով, բարեխիղճ երրորդ անձի գույքը, տուժողին վերադարձման ենթակա գույքը, ինչպես նաև տուժողին հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ գույքը: (...):

Վերոշարադրյալ իրավական կարգավորումներում արտացոլված է քրեական վարույթի շրջանակում բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, որն ընդգծվել է նաև մի շարք միջազգային իրավական ակտերում: Մասնավորապես, ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի[3] 31-րդ հոդվածը («Սառեցնելը, առգրավումը և բռնագրավումը») սահմանում է Մասնակից պետությունների կողմից գույքի հետագա բռնագրավումն ապահովելու նպատակով միջոցներ ձեռնարկելու, այդ թվում՝ գույքի սառեցման և առգրավման առանձնահատկությունները: Նույն հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ այդ հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ վնաս պատճառվի բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին: Բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները հաշվի առնելու անհրաժեշտությունն ընդգծվել է նաև ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի այլ դրույթներում (34-րդ հոդված («Կոռուպցիոն արարքների հետևանքները»), 55-րդ հոդված («Բռնագրավման նպատակով միջազգային համագործակցությունը»), 57-րդ հոդված («Ակտիվները վերադարձնելը և դրանք տնօրինելը») հոդված):

ՖԱԹՖ-ի հանձնարարականներով[4] նույնպես ընդգծվել է բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների պաշտպանության կարևորությունը, այդ թվում՝ գույքի բռնագրավում իրականացնելիս: Մասնավորապես, ՖԱԹՖ-ի հանձնարարականների համաձայն՝ երկրները պետք է ունենան միջոցներ, որպիսիք սահմանված են Վիեննայի և Պալերմոյի կոնվենցիաներով և Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով, այդ թվում՝ օրենսդրորեն սահմանված միջոցներ, որոնք իրավասու մարմիններին հնարավորություն են տալիս սառեցնելու կամ արգելադրելու և բռնագրավելու ստորև թվարկվածները՝ չխախտելով բարեխիղճ երրորդ անձանց իրավունքները. (...):

Իրավունքի տեսության և պրակտիկայի մեջ մշտապես քննարկման առարկա է եղել գույքի «սկզբնական» սեփականատիրոջ և գույքի բարեխիղճ ձեռք բերողի իրավունքների և օրինական շահերի հարաբերակցության հարցը[5]: Այս առումով էական նշանակություն ունի քրե-

[2] Ընդունվել է 05.05.2021 թ., ուժի մեջ է մտել 01.07.2022 թ., գործում է:

[3] Ընդունվել է 31.10.2003 թ.:

[4] ՖԱԹՖ-ի հանձնարարականներ, «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ», փետրվար, 2012, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.fatf-gafi.org/content/dam/fatf-gafi/translations/Recommendations/FATF-40-Rec-2012-Armenian.pdf.coredownload.inline.pdf (վերջին մուտք՝ 12.04.2026):

[5] Տես *Արսեն Թավադյան,* Վինդիկացիայի և ռեստիտուցիայի հայցերի մրցակցությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, էջ 243:

ադատավարական հարաբերությունների շրջանակում բարեխիղճ ձեռք բերողից գույքը բռնագրավելու իրավական հնարավորությունը, **որից ուղղակիորեն ածանցված է նաև նույն գույքի արգելադրման իրավաչափության հարցը:**

Քննարկվող թեմայով ռուսական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույն խնդիրը տարիներ շարունակ առկա է եղել նաև Ռուսաստանում, և 1864 թվականի քրեական դատավարության կանոնադրության ընդունումից հետո ավելի քան 30 տարի անհասկանալի էր մնում, թե քրեական վարույթի ավարտին ում պետք է փոխանցվեր հանցագործության ընթացքում գողացված և հետագայում հայտնաբերված գույքը՝ տուժող ճանաչված սկզբնական սեփականատիրոջը, թե՝ հետագա բարեխիղճ գնորդին, որը տեղյակ չէր ձեռք բերված գույքի հանցավոր ծագման մասին:

Վեճը վերջնականապես լուծվեց Կառավարող Սենատի Գլխավոր ժողովի կողմից 1896 թ. կանոնակարգի ընդունմամբ, որի համաձայն՝ «գույքի սեփականատիրոջը վերադարձնելը որոշում է քրեական դատարանը՝ անկախ նրանից, թե որտեղ է գտնվում գույքը, օրինակ՝ գրավատանը, պահառուի մոտ և այլն[6]»:

Վ. Կ. Սլուչևսկին, անդրադառնալով այս հարցին, արդարացիորեն նշել է, որ անհամաձայնության աղբյուրը արմատացած է երկու տեսակի շահերի հաշտեցման դժվարության մեջ, որոնցից մեկը պահանջում է այն անձի սեփականության իրավունքի պաշտպանությունը, որը այն ձեռք չի բերել հանցագործության միջոցով, իսկ մյուսը՝ քրեական արարքով խախտված իրավական կարգավիճակի վերականգնումը՝ գողացված գույքը հանցագործության զոհին վերադարձնելով[7]:

ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի վերոշարադրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությամբ առաջին հայացքից կարող է թվալ, որ քրեական վարույթի շրջանակներում գույքի «սկզբնական» տիրապետողի և գույքի բարեխիղճ ձեռք բերողի շահերի հակասության դեպքում օրենսդիրը նախապատվությունը տվել է բարեխիղճ ձեռք բերողի շահերի պաշտպանությանը: Բանն այն է, որ օրենսդիրը իմպերատիվ կարգավորմամբ սահմանել է, որ գույքը ենթակա չէ բռնագրավման, ի թիվս այլնի, այն դեպքերում, երբ պատկանում է բարեխիղճ երրորդ անձին: Որպես այս իրավիճակում խնդրի լուծում օրենսդիրը նախատեսել է համարժեք գույքի բռնագրավման կանոն: **Գտնում ենք, որ բարեխիղճ երրորդ անձի, մասնավորապես՝ բարեխիղճ ձեռք բերողի գույքը որոշակի պայմանների միաժամանակյա առկայության պարագայում պետք է ենթակա լինի բռնագրավման, ըստ այդմ՝ պետք է առկա լինի նաև նույն գույքն արգելադրելու իրավական հնարավորություն՝ դրա հետագա բռնագրավումն ապահովելու նպատակով:**

Առաջ քաշված տեսակետի հիմնավորման համար պետք է նախ վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված բարեխիղճ երրորդ անձի հասկացությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ բարեխիղճ երրորդ անձ է համարվում այն անձը, որը ձեռք է բերել հանցավոր ծագում ունեցող գույքը կամ ծանրաբեռնել է այն իր իրավունքներով, բայց չգիտեր և չէր կարող իմանալ, որ այդ գույքը հանցագործության արդյունքով ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք է, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք կամ միջոց կամ հան-

[6] Տես *Мурылева-Казак Виталия Владимировна,* Процессуальные средства защиты имущественных прав лиц, не являющихся участниками уголовного судопроизводства, Москва, 2023, էջ 47:

[7] Տես *Случевский Владимир Константинович,* Учебник русского уголовного процесса в 2 ч., Ч. II, Судопроизводство, 2014, էջ 151:

ցագործության առարկա: Բարեխիղճ երրորդ անձ է համարվում նաև այն անձը, որի գույքն իր կամքից անկախ հանգամանքներով դուրս է եկել իր տիրապետությունից, կամ որը գույքը հանձնել է այլ անձի, եթե նա չգիտեր ու չէր կարող իմանալ, որ այդ գույքն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործել հանցանք կատարելու նպատակներով:

Նախ նկատենք, որ ի տարբերություն քաղաքացիական օրենսդրության՝ ՀՀ քրեական օրենսգիրքը կիրառում է ոչ թե «բարեխիղճ ձեռք բերող», այլ՝ «բարեխիղճ երրորդ անձ» եզրույթը, որն, ըստ էության, *«bona fide third parties»* եզրույթի բառացի թարգմանությունն է և իր մեջ ներառում է ոչ միայն գույքի բարեխիղճ ձեռք բերողին, այլև գույքի բարեխիղճ «սկզբնական» սեփականատիրոջը: Ինչպես նշվեց, թե՛ տեսության մեջ և թե՛ գործնականում որպես կանոն հակասություն է առաջանում հենց գույքի բարեխիղճ ձեռք բերողի և իրավունքը խախտված սեփականատիրոջ շահերի միջև, և օրենսդիրը պետք է սահմանի այդ հակասությունների լուծման հնարավոր ուղիները՝ յուրաքանչյուր դեպքում նախապատվությունը տալով կա՛մ գույքի բարեխիղճ ձեռք բերողի, կա՛մ գույքի սկզբնական սեփականատիրոջ շահերին: Մինչդեռ այս երկու սուբյեկտների «հավասարեցման», նրանց նույնական իրավական կարգավիճակի պայմաններում անհասկանալի է, թե հակասության դեպքում ինչպես պետք է հավասարակշռվեն նրանց շահերը, և որպես բարեխիղճ երրորդ անձ՝ նրանցից ում պետք է տրվի նախապատվությունը:

Խնդիրն առավել պատկերավոր նկարագրելու համար քննարկենք հետևյալ իրավիճակը. Գույքը հափշտակության հետևանքով, այսինքն՝ սեփականատիրոջ կամքից անկախ, դուրս է գալիս սեփականատիրոջ տիրապետությունից, այնուհետև վաճառվում երրորդ անձի, ով չգիտեր և չէր կարող իմանալ գույքի՝ հանցագործության արդյունքում ստացված լինելու հանգամանքը: Այս իրավիճակում, փաստորեն, գույքը, բարեխիղճ երրորդ անձից (սկզբնական սեփականատիրոջից) հափշտակվելով, փոխանցվել է մեկ այլ բարեխիղճ երրորդ անձի (բարեխիղճ ձեռք բերողին), որպիսի պայմաններում նույն գույքի նկատմամբ իրավունքների առնչությամբ հակասություն է առաջացել երկու բարեխիղճ երրորդ անձանց իրավունքների միջև:

Այս առումով գտնում ենք, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված՝ գույքային իրավահարաբերություններ կարգավորող դրույթները պետք է համապատասխանեցվեն ՀՀ քաղաքացիական օրենսդրության տրամաբանությանը: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը որպես ընդհանուր կանոն նախապատվություն է տալիս գույքի բարեխիղճ ձեռք բերողի իրավունքների պահպանմանը: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է այն պայմանները, որոնց միաժամանակյա առկայության պարագայում գույքը բարեխիղճ ձեռք բերողից ենթակա է վերադարձման սկզբնական սեփականատիրոջը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքն անհատույց է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա սեփականատերը բոլոր դեպքերում իրավունք ունի հետ պահանջել այդ գույքը:

«Կատարողական վարույթի մասին» նոր օրենքով այս ոլորտում կատարված բարեփոխումները ևս սահմանում և զարգացնում են բարեխիղճ գնորդին պաշտպանելու տրամա-

բանությունը՝ որպես ընդհանուր կանոն բացառելով ձեռք բերված գույքը նրանից հետ պահանջելու հնարավորությունը, սակայն դրան զուգահեռ, այստեղ ևս սահմանվել են բացառիկ դեպքեր, երբ իրավունքը խախտված սեփականատիրոջ շահը պետք է գերակայի գույք ձեռք բերած բարեխիղճ գնորդի շահի նկատմամբ (ինչպես, օրինակ, վինդիկացիոն հայցի պարագայում է)[8]:

ՀՀ Վռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, արձանագրել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքն ինքնին հիմք չէ օրենքի պահանջներին հակասող գործարքն անվավեր ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջը մերժելու համար, քանի որ գույքի բարեխիղճ ձեռք բերողն օրենքով պաշտպանված չէ սեփականատիրոջ՝ գույքը վերադարձնելու պահանջից, եթե գույքը վերջինիս տիրապետումից դուրս է եկել անկախ նրա կամքից[9]:

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, կրկին անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությանը, արձանագրել է հետևյալը.

«(...) գույքը ձեռք բերողը կարող է օրենսդրության տեսանկյունից դիտվել որպես բարեխիղճ ձեռք բերող, եթե գույքը ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր կամ չէր կարող իմանալ: Օրենսդիրն ամրագրել է այն ելակետային դրույթը, որ այս պարագայում գույքը հետ չի կարող պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որոշ նախապայմանների առկայության պարագայում, այնուամենայնիվ, հնարավորություն է նախատեսված նման գույքը հետ պահանջելու բարեխիղճ ձեռք բերողից, ինչը նպատակ է հետապնդում հավասարակշռելու նաև գույքի սեփականատիրոջ իրավունքները՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում հնարավոր է, որ գույքը վերջինիս տիրապետությունից դուրս եկած լինի անկախ սեփականատիրոջ կամքից: Այս պարագայում օրենսդիրն առաջնորդվել է այն դրույթով, որ սեփականատերը նպատակ չի ունեցել գույքը տնօրինելու օտարման եղանակով[10]»:

Այսպիսով, առկա է որոշակի անհամապատասխանություն քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգավորումների և քաղաքացիաիրավական վերոշարադրյալ նորմերի հետ: Գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով պետք է նախատեսվեն որոշ դեպքերում բարեխիղճ ձեռք բերողից գույքը բռնագրավելու, գույքը սկզբնական սեփականատիրոջը վերադարձնելն ապահովելու վերաբերյալ իրավական կարգավորումներ, որպիսի պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ բռնագրավման ոչ ենթակա գույքի արգելադրման արգելքը կստանա այլ բովանդակություն: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքով բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքի բռնագրավման հնարավորություն[11] նախատեսելու պարագայում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կստանա նաև արգելադրել այդ գույքը՝ հենց դրա հետագա բռնագրավումն

[8] Տես *Վահագն Դալլաքյան, Տիգրան Մարկոսյան,* «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Երևան, 2024:

[9] Տես ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով 05.09.2007 թ. որոշում:

[10] Տես ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՇԴ/0056/02/13 քաղաքացիական գործով 07.04.2018 թ. որոշում:

[11] Տվյալ դեպքում խոսքը հենց քրեադատավարական կառուցակարգով նման հնարավորության ապահովման մասին է, քանի որ գտնում ենք, որ քրեական վարույթի առկայության պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված գույքի «վերջնական ճակատագիրը» պետք է հստակեցվի հենց քրեական վարույթի շրջանակներում՝ բացառելով քրեական վարույթի ավարտից հետո անձի գույքային իրավունքները քաղաքացիադատավարական մեխանիզմներով պաշտպանելու անհրաժեշտությունը:

ապահովելու նպատակով: Ընդ որում, այս դեպքում պետք է ուղղակիորեն նախատեսել գույքը բնեղենով բռնագրավելու հնարավորություն՝ հաշվի առնելով անձի գույքային իրավունքների համակողմանի պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ որոշ բացառիկ դեպքերում երրորդ անձի գույքի բռնագրավումը բնեղենով հնարավոր է, նույնիսկ եթե երրորդ անձը բարեխիղճ է:

Օրինակ, Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 131-21-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է բռնագրավման պարտադիր դեպքերը (երբ գույքը հանցագործության առարկա է կամ հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացված գույք), որոնց պարագայում գույքը բռնագրավվում է՝ անկախ նրանից, թե ով է սեփականատերը: Այս դեպքում կարող է բռնագրավվել նաև բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքը[12]:

Բելգիայի օրենսդրությունը նույնպես նախատեսում է հանցագործության առարկա կամ գործիք հանդիսացող տրանսպորտային միջոցների, սարքերի, գործիքների կամ իրերի՝ երրորդ անձից բռնագրավման հնարավորություն: Այս դեպքում բռնագրավումը հնարավոր է, նույնիսկ երբ իրը պատկանում է բարեխիղճ երրորդ անձի[13]:

Բարեխիղճ երրորդ անձի գույքի բռնագրավման, ըստ այդմ՝ դրա արգելադրման իրավաչափության հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արտահայտելով դիրքորոշում առ այն, որ այդպիսի գույքն արգելադրվել չի կարող՝ հաշվի առնելով դրա՝ հետագայում բռնագրավման ենթակա չլինելու հանգամանքը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է ետևյալը.

«*Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երրորդ անձանց սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների ապահովման տեսանկյունից երրորդ անձանց գույքի նկատմամբ արգելադրում կիրառելիս պարտադիր է անձի բարեխղճության հարցի քննարկումը: **Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը գույքի արգելադրման մասին որոշմամբ պետք է ներկայացնի այնպիսի փաստարկներ, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկածներ կհարուցեն գույքի ձեռքբերման պահին երրորդ անձի կողմից գույքի հանցավոր ծագում ունենալու հանգամանքի գիտակցման կամ դրա գիտակցման հնարավորության վերաբերյալ:** Հետևաբար երրորդ անձի գույք արգելադրելիս պետք է ելնել երրորդ անձի **«բարեխղճության կանխավարկած»-ից,** որը պետք է հաղթահարվի վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան հիմնավորումների ներկայացմամբ: Ընդ որում, վարույթն իրականացնող մարմնի կողմից ոչ թե պետք է ապացուցվի գույքի սեփականատիրոջ կողմից ձեռք բերված գույքի հանցավոր ճանապարհով ստացված լինելու փաստի գիտակցումը, այլ պետք է հիմնավորվի անձի կողմից գույքի հանցավոր ծագում ունենալու գիտակցման հնարավորության առկայության այն նվազագույն շեմը, որը հնարավորություն կտա գնահատել անձի բարեխիղճ երրորդ անձ չհանդիսանալու հանգամանքը[14]»:*

Վճռաբեկ դատարանը, վերլուծելով գործող օրենսդրական կարգավորումները, արդարացիորեն եկել է այն եզրահանգման, որ գործող կարգավորումներով բարեխիղճ երրորդ անձի գույքի բռնագրավման իմպերատիվ արգելքի պայմաններում այդպիսի գույքը չպետք է նաև արգելադրվի: Վճռաբեկ դատարանի դիրքորոշումն այս տեսանկյունից տարակարծության

[12] Տես *Francesco Rossi,* Improving confiscation procedures in the European Union, Italy, 2019, էջ 211, Eleonora Cervellera, Chapter 6 France: Cooperation in Criminal Matters between Mutual Recognition and Protection of Fundamental Rights – the Contribution of France, Facilitating Judicial Cooperation in the EU, 2025, էջ 177:
[13] Տես *Francesco Rossi,* Improving confiscation procedures in the European Union, Italy, 2019, էջ 109:
[14] Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՀԿԴ/0038/15/23 քրեական գործով 26.11.2024 թ. որոշում:

տեղիք չի տալիս: Միևնույն ժամանակ գործնական առումով խնդրահարույց կարող է լինել Վճռաբեկ դատարանի արձանագրումն առ այն, որ ցանկացած դեպքում երրորդ անձի գույք արգելադրելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաղթահարի երրորդ անձի «բարեխղճության կանխավարկածը»: Գտնում ենք, **երրորդ անձի «բարեխղճության կանխավարկածը» հաղթահարելու անհրաժեշտություն առկա է վերջինիս գույքը բռնագրավելու վերաբերյալ վերջնական դատական ակտ կայացնելու փուլում,** իսկ գույքի արգելադրում իրականացնելիս վարույթն իրականացնող մարմնի համար ապացուցման ենթակա այս հանգամանքի սահմանումը չի բխում գույքի արգելադրման և բռնագրավման կառուցակարգերի էությունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է բարեխիղճ երրորդ անձի գույքի բռնագրավումը, **և հենց գույքի բռնագրավումն իրականացնելիս է, որ պետք է հաղթահարվի երրորդ անձի բարեխղճության կանխավարկածը:** Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեսանկյունից բարեխղճության կանխավարկածն առաջին հերթին ենթադրում է, որ հակառակի հիմնավորման բեռը ամբողջ ծավալով պետք է կրի պետությունը, ուստի երրորդ անձին պատկանող գույք բռնագրավելու համար մեղադրող կողմը պետք է կարողանա ապացուցել, որ երրորդ անձն անբարեխիղճ է, որի պայմաններում միայն նրա սեփականության իրավունքին միջամտությունը կարող է համարվել իրավաչափ: Ընդ որում, Եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ երրորդ անձի բարեխղճությունը գնահատելիս, ի թիվս այլ գործոնների, պետք է հաշվի առնվի երրորդ անձի՝ հանցանքի հետ ունեցած կապը, հանցավոր գործողություններում նրա ներգրավվածության աստիճանը:

Ըստ Եվրոպական դատարանի, որպեսզի բռնագրավումը համատեղելի լինի Կոնվենցիայի թիվ 1 արձանագրություն 1-ին հոդվածի հետ, անհրաժեշտ է, որ պետությունը պահպանի արդարացի հավասարակշռություն *(“fair balance”)* պետության և անհատի շահերի միջև: Արդարացի հավասարակշռության ապահովումը կախված է բազմաթիվ գործոններից, և գույքի սեփականատիրոջ վարքագիծը, ներառյալ նրա մեղքի աստիճանը կամ ցուցաբերած զգուշությունը, այն հանգամանքներից են, որոնք պետք է հաշվի առնել ընդհանուր հանգամանքների ամբողջության մեջ[15]:

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում է արձանագրել՝ ի թիվս այլնի հաշվի առնելով, որ ներպետական մարմինների կողմից երրորդ անձի գույք բռնագրավելիս հաշվի չի առնվել վերջինիս բարեխղճությունը[16]:

Երրորդ անձի գույքն արգելադրելիս վերջինիս «բարեխղճության կանխավարկածը» հաղթահարելու պահանջը, վարույթն իրականացնող մարմնի վրա, ըստ էության, «ապացուցման հավելյալ բեռ» է դնում, քանի որ յուրաքանչյուր դեպքում դատավարական հարկադրանքի այս միջոցը կիրառելիս վարույթն իրականացնող մարմինը, ի թիվս հիմնավորման ենթակա այլ հանգամանքների, պետք է հիմնավորի նաև երրորդ անձի անբարեխիղճ լինելու հանգամանքը՝ այդպիսով հաղթահարելով Վճռաբեկ դատարանի կողմից առաջ քաշված կանխավար-

[15] Տե՛ս Agosi v. United Kingdom, Application no. 9118/80, Judgment 24.10.1986, § 54:
[16] Տե՛ս Sud Fondi srl and Others v. Italy, Application no. 75909/01, Judgment 20.1.2009:

կածը: Սա կարող է էապես խոչընդոտել դատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակների իրագործելիությանը, ինչպես նաև խախտել արդարացի հավասարակշռությունը հանրային և մասնավոր շահերի միջև:

Այս տեսակետի հիմնավորման համար նախ նշենք, որ օրենսդիրը սահմանել է գույքի արգելադրման **անհապաղության պահանջ:** Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերի առերևույթ առկայության դեպքում քննիչը համապատասխան գույքի արգելադրումն իրականացնում է անհապաղ: Զուգահեռներ անցկացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված համանման ինստիտուտի՝ հայցի ապահովման հետ՝ նշենք, որ այստեղ ևս գործում է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը սեղմ ժամկետում քննելու պահանջ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննում է առանց դատական նիստ հրավիրելու ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը, (...):

Գույքի արգելադրման անհապաղության օրենսդրական պահանջի սահմանումն ինքնանպատակ չէ, այն բխում է այս ինստիտուտի էությունից ու նպատակներից: Այդ պահանջի չպահպանումը կարող է հանգեցնել գույքի վնասմանը, ոչնչացմանը, օտարմանը կամ այլ կերպ անհնարին դարձնել արգելադրման նպատակների իրագործումը և անդառնալի ազդեցություն ունենալ վարույթի ընթացքի վրա: Պատահական չէ, որ հստակ դատավարական ժամկետ սահմանելու փոխարեն օրենսդիրը նախատեսել է անհապաղության պահանջ՝ նկատի ունենալով, որ **համապատասխան հիմքերի առկայության դեպքում գույքը պետք է արգելադրվի հնարավոր ամենասեղմ ժամկետներում:** Ի թիվս այլնի, գույքն անհապաղ արգելադրելու անհրաժեշտությամբ է պայմանավորված նաև այն, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը գույքի արգելադրման նկատմամբ սահմանել է հենց **հետագա** դատական վերահսկողության կառուցակարգ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը» վերտառությամբ 26-րդ հոդվածով, ի թիվս այլնի, ամրագրված է, որ վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրումը ենթակա է պարտադիր դատական ստուգման: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի համաձայն՝ սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթը հարուցվում է գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ քննիչի միջնորդության հիման վրա, որը դատարան է ներկայացվում **համապատասխան գույքն արգելադրելուց հետո՝ եռօրյա ժամկետում:**

Վերոշարադրյալի համատեքստում գտնում ենք, որ անձի բարեխղճության «ստուգումը» ևս կարող է իրականացվել հետագա կարգով: Մասնավորապես **առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու միջոցով նախատեսել, որ յուրաքանչյուր դեպքում երրորդ անձի գույքն արգելադրելուց հետո վարույթն իրականացնող մարմինը անհապաղ միջոցներ է ձեռնարկում՝ պարզելու արգելադրված գույքի սեփականատիրոջ բարեխղճությունը: Այն պարագայում, երբ ի հայտ են գալիս երրորդ անձի բարեխղճության մասին վկայող տվյալներ, գույքի արգելադրում իրականացրած սուբյեկտը սեփական նախաձեռնությամբ անհապաղ պետք է վերացնի արգելադրումը:** Այս դեպքում, թեև նվազագույնի է հասցվում երրորդ անձին գույքային կամ այլ վնաս պատճառելու հավանականությունը, սակայն այդպիսիք առկա լինելու դեպքում վերջինս պետք է իրական հնարավորություն ունենա պահանջել և ստանալ նաև իրեն պատճառված վնասների ամբողջ ծավալով հատուցում: Կարծում ենք, որ նման կարգավորումներ նախատեսելու պարագայում

հնարավոր է ապահովել գույքի արգելադրմամբ հետապնդվող նպատակների անխոչընդոտ իրականացումը, խուսափել գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխությունից և միաժամանակ նվազագույնի հասցնել անձի սեփականության իրավունքին միջամտության ինտենսիվությունը:

Վերոշարադրյալից զատ՝ պետք է նկատել, որ բարեխղճության կամ առհասարակ որևէ կանխավարկածի հաղթահարման պահանջը չի բխում գույքի արգելադրման համար օրենսդրի կողմից սահմանված ապացուցողական չափանիշի տրամաբանությունից: Այսպես, օրենսդիրը գույքն արգելադրելու համար որպես ապացուցման չափանիշ սահմանել է մի դեպքում ապացույցների գերակշռությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի դեպքում), մեկ այլ դեպքում՝ ողջամիտ ենթադրությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքի դեպքում): Այս երկու հասկացությունների բովանդակությանն անդրադարձ է կատարվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույցում», որում մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«Ապացուցման շեմն այն չափանիշն է, որի հիման վրա գնահատվում են ապացույցները և հաստատվում (կամ հերքվում) են փաստերը: Ապացույցների գերակշռությունը նշանակում է, որ մի կողմը ներկայացրել է իր պնդումների իրավացիությունը հաստատող թեկուզև մի փոքր ավելի ծանրակշիռ (սակայն ամենևին ոչ բացարձակ համոզիչ) ապացույցներ, քան մյուս կողմը: Այլ կերպ ասած՝ ապացուցման այս չափանիշով որոշում կայացնելուց հետևություն է արվում, որ առաջ քաշված թեզը կամ արված պնդումն ավելի հավանական է, քան թե՝ ոչ (օրինակ՝ խարդախության համար մեղադրվող անձն իրեն վերագրվող արարքի հետ համընկնող ժամանակահատվածում ձեռք է բերել մոտավորապես այն գումարին համարժեք անշարժ գույք, որը նա ենթադրաբար հափշտակել է, ուստի կարելի է պնդել, որ այն ստացվել է հանցագործության արդյունքում):

Ինչ վերաբերում է ողջամիտ ենթադրությանը, ապա այն ապացուցման ավելի թեթև բեռ է սահմանում: Վերջինս կարելի է բնութագրել որպես որոշակի փաստերի վրա հիմնված տրամաբանական, խելամիտ եզրահանգում առ այն, որ կանխատեսվող գործողությունը կամ իրադարձությունը միանգամայն հնարավոր է կամ կարող է տեղի ունենալ (օրինակ՝ մեղադրյալի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձը՝ նրա ծնողը, քրեական վարույթի ընթացքում օտարել է իրեն սեփականության իրավունքով պատկանող երկու տրանսպորտային միջոցներից մեկը, ինչից կարելի է ողջամտորեն ենթադրել, որ նա կարող է օտարել կամ թաքցնել նաև երկրորդը)»[17]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ գույքի արգելադրման վերաբերյալ որոշում կայացնելիս վարույթն իրականացնող մարմինն առաջնորդվում է շատ ցածր ապացուցման չափանիշներով՝ ի համեմատ քրեական վարույթի շրջանակում այս կամ այն փաստի հաստատման համար սահմանված ապացուցման մյուս չափանիշների: Սա նշանակում է, որ անձի գույքն արգելադրելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում անհրաժեշտ չէ, օրինակ, հիմնավոր կասկած, որպիսին անհրաժեշտ է անձի նկատմամբ խափանման միջոց կիրառելու պարագայում: Այս դեպքում, իհարկե, չի կարող խոսք լինել նաև հիմնավոր կասկածից վեր

[17] Տես *Հրայր Ղուկասյան, Դավիթ Մելքոնյան, Արսեն Նիկողոսյան,* Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ., էջեր 205-206:

ապացուցման չափանիշի մասին, որն անհրաժեշտ է անձի նկատմամբ մեղադրական դատական ակտ կայացնելու դեպքում: Ստացվում է, որ գույքի արգելադրման հիմքերի առկայությունը հավաստելիս վարույթն իրականացնող մարմինը կրում է շատ ցածր ապացուցման բեռ՝ առաջնորդվելով ողջամիտ ենթադրությամբ կամ հավանականությունների հավասարակշռմամբ *("balance of probabilities"),* մինչդեռ երրորդ անձի գույքի արգելադրման անհրաժեշտության դեպքում պարտադիր է համարվում նաև վերջինիս բարեխիղճ լինելու կանխավարկածը հաղթահարելը, ինչն ընդհանուր առմամբ չի բխում այս ինստիտուտի շրջանակներում գործող ապացուցման չափանիշների տրամաբանությունից:

Այս համատեքստում մեկ այլ կարևոր խնդիր է այն, որ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված չեն հստակ չափանիշներ, որոնց կիրառմամբ վարույթն իրականացնող մարմինը պետք է գնահատի երրորդ անձի բարեխղճությունը: Վճռաբեկ դատարանն, ըստ էության, վերոհիշյալ որոշմամբ նույնպես չի սահմանել նման չափանիշներ, այլ բացառապես նշել է անձի սուբյեկտիվ ընկալումը կարևորելու մասին: Այս առումով սուբյեկտիվ ընկալումը պարզելու անհրաժեշտությունը բխում է «բարեխիղճ երրորդ անձ» հասկացության օրենսդրական ձևակերպումից, քանի որ օրենսդիրն օգտագործում է «չգիտեր», «չէր կարող իմանալ» բառերը, ինչն ինքնին վկայում է, որ անձի բարեխղճությունն ուղղակիորեն կապված է վերջինիս սուբյեկտիվ ընկալման (իմացության) հետ, մինչդեռ հստակ չէ, թե ինչ եղանակով քննիչը կամ դատարանը պետք է գույքի արգելադրման փուլում պարզեն կոնկրետ գույքի առնչությամբ անձի սուբյեկտիվ ընկալումը: Անձի բարեխղճության գնահատման պրակտիկա առկա է քաղաքացիական գործերով, և այս հարցին բազմիցս անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ գույքը ձեռք բերողի անբարեխղճության մասին կարող է վկայել օրինակ այն, որ վերջինս իմացել է կամ իր կարգավիճակով պայմանավորված առնվազն պետք է իմանար գույքը վաճառող սուբյեկտի մոտ համապատասխան լիազորությունների բացակայության մասին[18]:

Թեև քաղաքացիական գործերով ձևավորված չափանիշները կարող են մասամբ կիրառելի լինել նաև քրեական վարույթի շրջանակներում երրորդ անձի բարեխղճությունը գնահատելիս, սակայն պետք է հաշվի առնել, որ այս դեպքում առկա են բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք կարող են կապված լինել գույքի հանցավոր ծագման, հնարավոր հանցավոր համաձայնությունների, հանցավոր գործողություններում անձի ներգրավվածության աստիճանի և այլ գործոնների հետ: Այնուամենայնիվ, ցանկացած պարագայում գույքը ձեռք բերողի բարեխղճությունը պարզելը ենթադրելու է մեծածավալ դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտություն (կադաստրային գործերի ուսումնասիրություն, ապացուցողական գործողությունների իրականացում, օրինակ՝ տարբեր անձանց հարցաքննություններ և այլն), որպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմնի համար օբյեկտիվորեն անհնար է դառնալու գույքի արգելադրման անհապաղության պահանջի պահպանումը:

Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանի թիվ ՀԿԴ/0038/15/23 գործով առկա է նաև հատուկ կարծիք, որով մասնավորապես արտահայտվել է հետևյալ դիրքորոշումը.

«(...) չնայած գույքի արգելադրման նպատակների և հիմքերի առկայության պայմաններում՝ բարեխիղճ (bona fide) երրորդ անձին պատկանող գույքի արգելադրման արգելքին՝ համապատասխան գույքի՝ հանցավոր ծագում ունենալու հիմքերի առերևույթ առկայության դեպքում դրա արգելադրումն անհապաղ իրականացնելու պահանջի առկայության պայման-

[18] Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-1476 (ՎԴ) քաղաքացիական գործով 10.10.2007թ. որոշում, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով 08.10.2020թ. որոշում, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ/2259/02/20 քաղաքացիական գործով 17.12.2024թ. որոշում:

ներում ոչ իրատեսական է երրորդ անձանց գույքի նկատմամբ արգելադրում կիրառելիս անձի բարեխղճության հարցի քննարկումը՝ պայմանով, որ առկա չեն անձի բարեխղճության մասին աներկբայորեն վկայող ապացույցներ: Գույքի արգելադրման սկզբնական փուլում, ինչպես բխում է գործող օրենսդրական կարգավորումներից, քննիչը պետք է ապացույցների գերակշռությամբ հիմնավորի գույքի՝ հանցավոր ճանապարհով սպացված, հանցագործության գործիք կամ միջոց լինելու հանգամանքները, այլ ոչ թե երրորդ անձի կողմից գույքի՝ հանցավոր ծագում ունենալու հանգամանքի գիտակցումը կամ գիտակցման հնարավորությունը: Վերոհիշյալը, սակայն, չի ենթադրում, որ քրեական վարույթի ընթացքում երրորդ անձի գույքը կարող է շարունակաբար պահվել արգելանքի տակ առանց վերջինիս՝ բարեխիղճ ձեռքբերող լինելու հարցի քննարկման, ինչը կարող է հանգեցնել սեփականության իրավունքի ոչ համաչափ սահմանափակման: Վերոնշյալ իրավիճակը բացառելուն ուղղված գործիքակազմ է սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական երաշխիքների շրջանակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ սեփականության իրավունքի սահմանափակումը վերացնելու միջնորդության քննարկման ընթացակարգը, որը հնարավորություն է տալիս գույքի սեփականատիրոջը, դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձին կամ նրանց ներկայացուցչին մինչդատական վարույթի ընթացքում գույքի արգելադրումից երեք ամիս հետո միջնորդություն ներկայացնելու դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին, որի շրջանակում կարող է քննարկման առարկա դարձվել անձի՝ բարեխիղճ ձեռքբերող լինելու մասին հարցը[19]»:

Այսպիսով, հատուկ կարծիքով, ըստ էության նույնպես, արդարացված չի համարվել գույքն արգելադրելիս անձի «բարեխղճության կանխավարկածը» հաղթահարելու պարտադիր պահանջը, և ի սկզբանե գույքի արգելադրմանը խոչընդոտող գործոն է համարվել բացառապես անձի բարեխղճության մասին աներկբայորեն վկայող տվյալների առկայությունը: Հատուկ կարծիքով արգելադրված գույքի սեփականատիրոջ իրավունքների սահմանափակումը հակակշռող կարևոր երաշխիք է դիտարկվել նաև գույքի արգելադրումը վերացնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **արգելադրված գույքի սեփականատերը,** դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձը կամ նրանց ներկայացուցիչը իրավունք ունեն մինչդատական վարույթի ընթացքում միջնորդություն ներկայացնելու դատարան գույքի արգելադրումը վերացնելու մասին ոչ շուտ, քան գույքի արգելադրումից երեք ամիս հետո:

Եզրակացություն

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ գույքը ենթակա չէ բռնագրավման, ի թիվս այլնի, այն դեպքերում, երբ պատկանում է բարեխիղճ երրորդ անձին: Այս դեպքերում օրենսդիրը նախատեսել է համարժեք գույքի բռնագրավման կանոն: ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը թեև որպես ընդհանուր կանոն նախապատվություն է տալիս գույքի բարեխիղճ ձեռք բերողի իրավունքների պահպանմանը, սակայն դրան զուգահեռ սահմանում է այն պայմանները, որոնց միաժամանակյա առկայության պարագայում գույքը բարեխիղճ ձեռք բերողից ենթակա է վերադարձման սկզբնական սեփականատիրոջը: Արտասահմանյան մի շարք երկրների իրավական կարգավորումներով ևս նախատեսվում են որոշակի բացառիկ դեպքեր, որոնց հիմքով գույքը կարող է բռնագրավվել նաև բարեխիղճ երրորդ անձից: Վերոշարադրյալից

[19] Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՀԿԴ/0038/15/23 քրեական գործով 26.11.2024թ. որոշման հատուկ կարծիք:

ելնելով՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով ևս պետք է նախատեսվեն որոշ դեպքերում բարեխիղճ ձեռք բերողից գույքը բռնագրավելու, գույքը սկզբնական սեփականատիրոջը վերադարձնելն ապահովելու վերաբերյալ իրավական կարգավորումներ, որպիսի պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ բռնագրավման ոչ ենթակա գույքի արգելադրման արգելքը կստանա այլ բովանդակություն: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքով բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքի բռնագրավման հնարավորություն նախատեսելու պարագայում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կստանա նաև արգելադրել այդ գույքը՝ հենց դրա հետագա բռնագրավումն ապահովելու նպատակով: Ընդ որում, այս դեպքում պետք է ուղղակիորեն նախատեսել գույքը բնեղենով բռնագրավելու հնարավորություն՝ հաշվի առնելով անձի գույքային իրավունքների համակողմանի պաշտպանություն ապահովելու անհրաժեշտությունը:

Հստակ է այն, որ գործող օրենսդրական կարգավորումներով բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքի բռնագրավման իմպերատիվ արգելքի պայմաններում այդ գույքը չի կարող արգելադրվել: Միևնույն ժամանակ, հիմնվելով կատարված ուսումնասիրությունների վրա, գտնում ենք, որ **երրորդ անձի «բարեխղճության կանխավարկածը» հաղթահարելու անհրաժեշտություն առկա է վերջինիս գույքը բռնագրավելու վերաբերյալ վերջնական դատական ակտ կայացնելու փուլում:** Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, թիվ ՀԿԴ/0038/15/23 քրեական գործի շրջանակներում արտահայտել է դիրքորոշում առ այն, որ ցանկացած դեպքում երրորդ անձի գույք **արգելադրելիս** վարույթն իրականացնող մարմինը պետք է հաղթահարի երրորդ անձի «բարեխղճության կանխավարկածը»: Կարծում ենք, որ գույքի արգելադրում իրականացնելիս վարույթն իրականացնող մարմնի համար ապացուցման ենթակա այս հանգամանքի սահմանումն առաջին հերթին չի բխում գույքի արգելադրման և բռնագրավման կառուցակարգերի էությունից: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ «բարեխղճության կանխավարկածը» հաղթահարելու պահանջը կարող է էապես խոչընդոտել դատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակների իրագործելիությանը, խախտել արդարացի հավասարակշռությունը հանրային և մասնավոր շահերի միջև:

Յուրաքանչյուր դեպքում երրորդ անձի գույքն արգելադրելիս վերջինիս «բարեխղճության կանխավարկածի» հաղթահարման պահանջ սահմանելը նախ կարող է խոչընդոտել գույքի արգելադրման **անհապաղության** օրենսդրական պահանջի պահպանմանը, որի հետևանքով գույքի արգելադրմամբ հետապնդվող նպատակները (մասնավորապես՝ գույքի փաստական և իրավական վիճակի պահպանումը) կարող են դառնալ անիրագործելի, իսկ դատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառումը՝ ինքնանպատակ:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից գույքի արգելադրման փուլում «բարեխղճության կանխավարկածը» հաղթահարելու պահանջը չի բխում նաև գույքի արգելադրման ինստիտուտի ընդհանուր տրամաբանությունից՝ հաշվի առնելով գործող ցածր ապացուցողական չափանիշները՝ «ապացույցների գերակշռությունը» և «ողջամիտ ենթադրությունը»:

Վերոշարադրյալից ելնելով՝ եզրահանգում ենք, որ առավել նպատակահարմար է անձի բարեխղճության հարցի քննարկումը ևս իրականացնել հետագա կարգով (ինչպես և այս դեպքում դատական վերահսկողությունն է), որի նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու միջոցով նախատեսել, որ յուրաքանչյուր դեպքում երրորդ անձի գույքն արգելադրելուց հետո վարույթն իրականացնող մարմինը անհապաղ միջոցներ է ձեռնարկում՝ պարզելու արգելադրված գույքի սեփականատիրոջ բարեխղճությունը: Այն պարագայում, երբ ի հայտ են գալիս երրորդ անձի բարեխղճության մասին վկայող տվյալներ, գույքի արգելադրում իրականացրած սուբյեկտը սեփական նախա-

ձեռնությամբ անհապաղ պետք է վերացնի արգելադրումը:

Հարկ է հավելել, որ գործող օրենսդրական կարգավորումներով բարեխիղճ երրորդ անձի իրավունքների պաշտպանության կարևոր մեխանիզմ է նաև վերջինիս կողմից գույքի արգելադրումը վերացնելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավական հնարավորությունը, ինչը ևս վկայում է «բարեխղճության կանխավարկածով» առաջնորդվելու բացարձակ անհրաժեշտության բացակայության մասին:

Ամփոփագիր: Հոդվածի շրջանակում վերլուծության է ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված բարեխիղճ երրորդ անձ հասկացության բովանդակությունը, անդրադարձ է կատարվել բարեխիղճ երրորդ անձի գույքը բռնագրավելու, այդ գույքի նկատմամբ որպես դատավարական հարկադրանքի միջոց գույքի արգելադրում կիրառելու հնարավորության հարցերին:

Հետազոտությունն իրականացնելիս ուսումնասիրության առարկա են դարձվել ՀՀ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումները՝ բարեխիղճ երրորդ անձին պատկանող գույքի արգելադրման և բռնագրավման իրավաչափության վերաբերյալ: Քննարկվել է Վճռաբեկ դատարանի կողմից ամրագրված «բարեխղճության կանխավարկածը»՝ որպես երրորդ անձին պատկանող գույքի արգելադրման չափանիշ:

Annotation. This article analyzes the content of the concept of a bona fide third party as defined by the Criminal Code of the Republic of Armenia. It addresses the issues concerning the possibility of confiscating the property of a bona fide third party, as well as the application of property seizure as a procedural coercive measure in relation to such property.

The study examines the precedent-based legal positions of the Cassation Court of the Republic of Armenia and the European Court of Human Rights regarding the lawfulness of seizure and confiscation of property belonging to a bona fide third party. Particular attention is paid to the presumption of good faith established by the Cassation Court as a criterion for applying seizure to property owned by a third party.

Аннотация. В данной статье анализируется содержание понятия «добросовестное третье лицо», закреплённого в Уголовном законодательстве Республики Армения. В контексте этого понятия изучается применение института ареста имущества и конфискации имущества в уголовном судопроизводстве Республики Армения. Рассматриваются условия и пределы применения мер процессуального принуждения в отношении принадлежащего ему имущества.

В ходе исследования изучены прецедентные правовые позиции Кассационного суда Республики Армения и Европейского суда по правам человека, касающиеся правомерности ареста и конфискации имущества, принадлежащего добросовестному третьему лицу. Особое внимание уделено закреплённой Кассационным судом презумпции добросовестности как одному из критериев применения ареста имущества, принадлежащего третьим лицам.

Բանալի բառեր *– գույքի բռնագրավում, գույքի արգելադրում, բարեխղճություն, բարեխղճության կանխավարկած, անհապաղություն, ապացուցողական չափանիշ, հավանականությունների հավասարակշռում:*

Key words: *Confiscation of property, property seizure, good faith, presumption of good faith, immediacy, standard of proof, balance of probabilities.*

Ключевые слова: *конфискация имущества, арест имущества, добросовестность, презумпция добросовестности, непосредственность, стандарт доказывания, баланс вероятностей.*

Օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 30.06.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ.:
2. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ.:
3. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, ընդունվել է 31.10.2003թ.:
4. ՖԱԹՖ-ի հանձնարարականներ, «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտներ», փետրվար 2012, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.fatf-gafi.org/content/dam/fatf-gafi/translations/Recommendations/FATF-40-Rec-2012-Armenian.pdf.coredownload.inline.pdf (վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 10):
5. Արսեն Թավադյան, Վինդիկացիայի և ռեստիտուցիայի հայցերի մրցակցությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017:
6. Հրայր Ղուկասյան, Դավիթ Մելքոնյան, Արսեն Նիկողոսյան, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022:
7. Վահագն Դալլաքյան, Տիգրան Մարկոսյան, «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Երևան, 2024:
8. Eleonora Cervellera, Chapter 6 France: Cooperation in Criminal Matters between Mutual Recognition and Protection of Fundamental Rights – the Contribution of France, Facilitating Judicial Cooperation in the EU, 2025:
9. Francesco Rossi, Improving confiscation procedures in the European Union, Italy, 2019:
10. Мурылева-Казак Виталия Владимировна, Процессуальные средства защиты имущественных прав лиц, не являющихся участниками уголовного судопроизводства, Москва, 2023:
11. Случевский Владимир Константинович, Учебник русского уголовного процесса в 2 ч., Ч. II, Судопроизводство, 2014:
12. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-1311 (ՎԴ) քաղաքացիական գործով 05.09.2007թ. որոշում:
13. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ 3-1476 (ՎԴ) քաղաքացիական գործով 10.10.2007թ. որոշում:
14. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵՇԴ/0056/02/13 քաղաքացիական գործով 07.04.2018թ. որոշում:
15. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով 08.10.2020թ. որոշում:
16. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՀԿԴ/0038/15/23 քրեական գործով 26.11.2024թ. որոշում:
17. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՀԿԴ/0038/15/23 քրեական գործով 26.11.2024թ. որոշման հատուկ կարծիք:
18. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թիվ ՏԴ/2259/02/20 քաղաքացիական գործով 17.12.2024թ. որոշում:
19. Agosi v. United Kingdom, Application no. 9118/80, Judgment 24.10.1986:
20. Sud Fondi srl and Others v. Italy, Application no. 75909/01, Judgment 20.01.2009:

Բալյան Գ. - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող, էլհասցե՝ geghetsik.balyan@ysu.am:

Ներկայացվել է խմբագրություն 25.05.2026 թ., տրվել է գրախոսության 25.05.2026 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դեկտոր, պրոֆեսոր Գ. Ղազինայնի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-173

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս,
Հայ-Ռուսական համալսարանի ավագ դասախոս

ARTAK GEVORGYAN
PhD in Law,
Senior Lecturer at the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the RA,
Senior Lecturer at the Armenian-Russian University

АРТАК ГЕВОРГЯН
Кандидат юридических наук,
старший преподаватель Образовательного комплекса Министерства внутренних дел РА,
старший преподаватель Российско-Армянского университета
https://orcid.org/0009-0009-7384-5585

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՆԻ ԻՐԱՎԱՉԱՓ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

RULES FOR THE LAWFUL USE OF MILITARY DRONES IN TIME OF WAR

ПРАВИЛА ЗАКОННОГО ИСПОЛЬЗОВАНИЯ ВОЕННЫХ ДРОНОВ ВО ВРЕМЯ ВООРУЖЁННЫХ КОНФЛИКТОВ

Ներածություն

Անօդաչու թռչող սարքերի ռազմական կիրառության ոլորտում միջազգային-իրավական փաստաթուղթ՝ բազմակողմ կոնվենցիա, այսօր չկա: Ինչ վերաբերում է ռազմական դրոնների կիրառությանը, ապա, կարծում ենք, այն պետք է դիտարկել 2 տեսանկյունից, որի ամփոփումն էլ հիմք կտա հասկանալու՝ արդյոք պատերազմի ընթացքում, ռազմական գործողությունների ժամանակ ռազմական դրոնի օգտագործումն իրավաչափ, օրինական է: Դրանք են՝

- ✓ **պատերազմելու իրավունքը (Jus ad bellum),**
- ✓ **միջազգային մարդասիրական իրավունքը (Jus in bello):**

Իսկ ինչ է ռազմական դրոնը: Ըստ Դ. Կելսեյի՝ դրոնն անօդաչու, **հեռակառավարվող թռչող սարք** է, որի չափսերը տատանվում են կառավարվող խաղալիք օդանավից մինչև 15

տոննայի[1]:

Անօդաչու թռչող սարքերի **ռազմականացված օգտագործումը** ժամանակակից պատերազմներում դառնում է անխուսափելի, ավելին՝ այն դարձել է մարտադաշտի էական, շարժիչ ուժը: Դրանք օգտագործվում են ինչպես **հարձակողական, մարտական**, այնպես էլ **պաշտպանական** նպատակներով:

Ռազմական դրոնները կարող են լինել ստորջրյա, վերգետնյա, օդային: Շատ դեպքերում, անօդաչու թռչող սարքերը **փոխարինում են սովորական զինվորներին**՝ իրականացնելու ձանձրալի, կեղտոտ և վտանգավոր[2] գործողություններ[3]՝ առանց մարդկային կորուստների:

Վերոնշյալն ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ **դրոնն անօդաչու թռչող սարք է (ԱԹՍ),** որը հեռակառավարվում է անձի կողմից, ընդ որում՝ այդ անձը չի գտնվում դրոնի մեջ կամ վրա, գտնվում է դրանից հեռու, այլ ֆիզիկական օբյեկտի մեջ կամ վրա, կամ տակ: Ավելին՝ դրոնի օգտագործումը հնարավորություն է տալիս դրոնի խոցման դեպքում չկորցնելու իր կառավարողին (ի տարբերություն օդանավի կամ ուղղաթիռի), քանի որ դրոնը կառավարողը, օպերատորը ֆիզիկապես գտնվում է այլ վայրում:

Հիմնական հետազոտություն

ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ իրավաչափությունը **խիստ իմաստով որոշակիություն** է և **անվիճելի ձևով կանխատեսելիություն**[4], այն **արդյունավետության երաշխիք** է և դարձել է պարտադիր նախապայման, որպեսզի հանրային իշխանության սուբյեկտներն իրենց գործառույթներն իրականացնելիս իրենց չհամարեն օրենքից վեր[5]: Ինչ վերաբերում է սուբյեկտի իրավաչափ վարքագծին, ապա իրավաչափ վարքագիծն անհատական և կոլեկտիվ սուբյեկտների սոցիալապես անհրաժեշտ, ցանկալի կամ **թույլատրելի** արարքն է, որը համապատասխանում է իրավական նորմերի պահանջներին կամ **չի հակասում դրանց**[6]:

Վերը նշվածի համատեքստում կարող ենք արձանագրել, որ իրավաչափությունը **չարգելված, թույլատրելի, անհրաժեշտ, կայունություն և կանխատեսելիություն ապահովող, որոշակի և հիմնարար** բնույթի երաշխիք է (սկզբունք, վարքագծի մոդել), հետևաբար՝ որպես օրինակելի վարքագծի ուղղորդիչ՝ սույն գիտական հոդվածի շրջանակում քննարկվող հարցերի համար այն առանցքային, ելակետային նշանակություն ունի:

ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ: ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: Jus ad bellum-ը սահմանում է պետության կողմից պատերազմի մեջ ներգրավվելու **օրինական պատճառները** և կենտրոնանում է որոշակի չափանիշների վրա, որոնք **պատերազմը դարձ-**

---

[1] *Kelsey A.,* Flying robots: Everything you need to know about drones, J. 7, 2013, http://www.popsci.com/technology/article/2013-03/drone-any-other-name (վերջին մուտք՝ 29.12.2025).

[2] *Teems J.,* Overview of army robotic convoy technology programs, Robob. Report, 2007, p. 1.

[3] Կարող են թռչել վտանգավոր, քիմիական նյութերով լի վայրերի վրայով, ինչպես նաև փոթորիկներ, հրաբուխներ, ամպեր հետազոտել և այլն:

[4] *Constantinescu M., Muraru I., Iorgovan A.,* Revizuirea Constituţiei României.Explicaţii şi comentarii, Bucureşti, Editura Rosetti, 2003, p. 6.

[5] *Stoian A.,* The Principle Of Legality, Principle Of Public Law, November 2015, International conference KNOWLEDGE-BASED ORGANIZATION 21(2), p. 513.

[6] Պետության և իրավունքի տեսություն: Ուսումն. ձեռնարկ: Հեղ. խումբ: Գիտ. խմբագիրներ՝ Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., 3-րդ լրամշ. հրատ., 2018, էջ 593:

նում են արդարացի[7]: Jus ad bellum-ը վերաբերում է այն **պայմաններին**, որոնց դեպքում պետությունները կարող են դիմել պատերազմի կամ զինված ուժի կիրառման[8]:

Ըստ Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ նաև՝ ՄԱԿ) կանոնադրության 51-րդ հոդվածի՝ սույն կանոնադրությունը ոչնչով չի խաթարում **անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը** ՄԱԿ-ի որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ:

Վերը նշվածից բխում է, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը **պետությանն իրավունք է տալիս ռազմական գործողություններ ձեռնարկել,** եթե հարձակման է ենթարկվել, այսինքն՝ **միջազգայնորեն ուղղակի ամրագրվել է պետության ինքնապաշտպանվելու իրավունքը (Jus ad bellum):**

Ինչպես նկատեցինք, Jus ad bellum-ը պետությանն իրավունք է վերապահում ռազմական գործողություններ սկսել կամ սկսված ռազմական գործողությանը մասնակցել: Որպես երկրորդ իրավիճակի օրինակ՝ հակառակորդն է նախահարձակ եղել, և հարձակման ենթարկված պետությունը պատասխան քայլեր է ձեռնարկել **(ինքնապաշտպանվել),** կամ պետությունը ռազմական դաշինքի անդամ է, և հարձակվել են ռազմական դաշինքի մեկ այլ պետության վրա, և անհրաժեշտ է աջակցել դաշնակցին **(դաշնակցի պաշտպանություն):**

Պատերազմելու իրավունքի հիմքում ընկած **է ուժի կիրառման իրավաչափությունը,** քանի որ կանխորոշում է պետության իրավաչափ, օրինական, ոչ կամայական պատերազմելու հայեցողությունը: Այսինքն՝ **պատերազմ սկսելու, վարելու իրավունքը սովորութային դարձած, ինչպես նաև միջազգայնորեն ճանաչված երաշխիք է, որը պետությանն իրավաչափ հնարավորություն է ընձեռնում ռազմական գործողություններ սկսել:**

Շեշտադրելով ինքնապաշտպանվելու իրավունքի դերը՝ միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել վերջինիս **չարաշահման դեպքը**, մասնավորապես, վերջին տասնամյակում ակնհայտ են այն դեպքերը, երբ **մեկ պետությունը դրոնի օգտագործմամբ այլ պետության տարածքում թիրախներ, մարդկանց է խոցում, ոչնչացնում՝** դա պայմանավորելով իր ինքնապաշտպանվելու իրավունքի հետ. գործնականում դա հիմնավորում են այնպես, որ ոչնչացված (չեզոքացված) սուբյեկտն ոչնչացրած (չեզոքացրած) պետության համար ակնհայտ սպառնալիք է եղել՝ մասնակցել է տարբեր ռազմական հարձակումների պլանավորմանը, կազմակերպմանը կամ ահաբեկչական գործողությունների իրականացմանը:

Համաձայնվելով Ն. Լուբելի այն տեսակետին, որ զինված բախումների զինանոցում դրոնի հայտնվելը մեծացրել է մարտադաշտի (ռազմական գործողությունների տարածքի) շրջագիծը[9], անհրաժեշտ է փաստել, որ **պատերազմ վարելու իրավունքը, ինքնապաշտպանվելու իրավունքը որևէ արգելք չի նախատեսում դրոնի՝ ռազմական գործողությունների ժամանակ չօգտագործելու վերաբերյալ:**

Դրոնը՝ որպես պատերազմ վարելու իրավունքի, ինքնապաշտպանվելու իրավունք իրացման **միջոց[10],** դասվում է չարգելված զենքերի[11] և ռազմամթերքի շարքին, հետևաբար՝ վերջի-

[7] *Nabulsi K.,* Crimes of war: What the public should know: Jus ad bellum, Jus in bello, 1999, p. 1.
[8] *Kolb R.,* Origin of the twin terms jus ad bellum and jus in bello, International Review of the Red Cross, No. 320, 1997, p. 553.
[9] *Lubell N. and Derejko N.,* A Global Battlefield? Drones and the geographical scope of armed conflict, 1 Journal of International criminal justice, 2013, p. 9.
[10] Դրոնն ունի **երկակի նշանակություն**: Այն և՛ **տրանսպորտային միջոց** է (օրինակ՝ փոխադրում է սարք, պարկեր և այլն), և՛ կարող է օգտագործվել **որպես զենք** (օրինակ՝ hunter-killer՝ որսորդ-սպանող դրոնը):
[11] **Դրոնները կարող են հագեցած լինել զենքերով**, ինչպիսիք են **հրազենը, պայթուցիկ նյութերը, քիմիական,**

նիս կիրառությունն **իրավաչափ է, արգելված չէ:**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: Jus in bello-ն կարգավորում է զինված հակամարտության մեջ ներգրավված **կողմերի վարքագիծը.** միջազգային մարդասիրական իրավունքը հոմանիշ է jus in bello-ին. այն ձգտում է նվազագույնի հասցնել զինված հակամարտություններում տառապանքները[12]: Միջազգային մարդասիրական իրավունքը նաև անվանվում է զինված բախումների իրավունք (Law of Armed Conflict)[13]:

Այսինքն՝ միջազգային մարդասիրական իրավունքը կանոնարկում է պատերազմող կողմերի վարքագիծը՝ անկախ այն հանգամանքից, թե որ կողմն է սկսել ռազմական գործողությունը, որ կողմն է նախահարձակ եղել և որ կողմը պաշտպանվել (ինքնապաշտպանության իրավունքի իրացում), ինչ շարժառիթով: Միջազգային մարդասիրական իրավունքը պատերազմի ժամանակ արգելված մեթոդներ և միջոցներ չկիրառելու ազդակ է:

Նշենք, որ միջազգային մարդասիրական իրավունքի հիմքը ժնևյան 1949 թվականի կոնվենցիաները[14] և դրանց կից լրացուցիչ արձանագրություններն[15] են: Իրավական տեսանկյունից կարևոր են նաև Օդային, Ցամաքային և Ծովային կոնվենցիաները[16]:

Ինչ վերաբերում է **դրոնի՝ որպես պատերազմ վարելու միջոցի** կիրառության հարցին, ապա միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում ռազմական դրոնի կիրառումը անհրաժեշտ է ուսումնասիրել 4 հիմնական կանոնների (սկզբունքների) շրջանակում, որոնք են՝ **տարբերակումը, համաչափությունը, նախազգուշացումը, ռազմական անհրաժեշտությունը:**

կենսաբանական կամ ռադիոլոգիական նյութերը, բացի դրանից՝ դրոնը կարող է օգտագործվել որպես **կինետիկ զենք** հարվածային հարձակման համար, օրինակ՝ ռեակտիվ ինքնաթիռի շարժիչի դեմ (The Weaponization of Unmanned Aerial Systems, rmcglobal.com/wp-content/uploads/2022/08/The-Weaponization-of-Unmanned-Aerial-Systems-UAS-September-2018.pdf, (վերջին մուտք՝ 29.12.2025)):

[12] www.icrc.org/en/document/what-are-jus-ad-bellum-and-jus-bello-0 (վերջին մուտք՝ 29.12.2025).

[13] *Foy J.,* Autonomous weapons systems taking the human out of international humanitarian law, Legal studies, 2014, pp. 47-53.

[14] Չորս կոնվենցիաներն են.

- «Գործող բանակում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիա **(Առաջին կոնվենցիա)**
- «Ծովում զինված ուժերի վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» ժնևի 1949 թվականի կոնվենցիա **(Երկրորդ կոնվենցիա)**
- «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» ժնևի 1949 թվականի կոնվենցիա **(Երրորդ կոնվենցիա)**
- «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» ժնևի 1949 թվականի կոնվենցիա **(Չորրորդ կոնվենցիա)**

[15] Երեք լրացուցիչ արձանագրություններն են.

- «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնևի 1977 թվականի արձանագրություն **(Առաջին լրացուցիչ արձանագրություն)**
- «Ոչ միջազգային բնույթի կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնևի 1977 թվականի արձանագրություն **(Երկրորդ լրացուցիչ արձանագրություն)**
- «Լրացուցիչ տարբերանշանի օգտագործման մասին» ժնևի 1977 թվականի արձանագրություն **(Երրորդ լրացուցիչ արձանագրություն)**

[16] Օդում, ծովում և ցամաքում կիրառելի կոնվենցիաներն են.

- «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» Հաագայի 1899 թվականի կոնվենցիա **(Ցամաքային կոնվենցիա)**
- «Ծովային պատերազմի ժամանակ պատերազմող կողմերի միջև հարաբերությունները կարգավորող օրենքների մասին» Հաագայի 1907 թվականի կոնվենցիա **(Ծովային կոնվենցիա)**
- «Օդային պատերազմ վարելու կանոնների մասին» Հաագայի 1923 թվականի (**Օդային կոնվենցիա.** պաշտոնապես կոչվում է՝ «Պատերազմի և օդային պատերազմի ժամանակ անլար հեռահաղորդակցության վերահսկողության կանոնների մասին» կոնվենցիա)

ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ՝ Առաջին լրացուցիչ արձանագրության 48-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ հարգանքն ու պաշտպանությունն ապահովելու նպատակով, **ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է տարբերակեն քաղաքացիական բնակչությունը և մարտիկներին**, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտները՝ ռազմական օբյեկտներից, և համապատասխանաբար իրենց գործողություններն ուղղեն միայն ռազմական օբյեկտների դեմ:

Առաջին լրացուցիչ արձանագրության 51-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ **ոչ ընտրողական բնույթի հարձակումներն արգելվում են:**

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ տարբերակման սկզբունքը կոչված է չեզոքացնելու ոչ ռազմական օբյեկտներին հասցվող վնասը, պաշտպանելու քաղաքացիական անձանց կյանքը: Տարբերակման սկզբունքը ելակետային դրույթ է այն մասին, որ նույնիսկ ռազմական գործողության ժամանակ պետք է տարբերակել, հետևաբար՝ իրավաչափ թիրախ համարել միայն հակառակորդի մարդկային ուժերը, զինտեխնիկան, զենքը, ռազմամթերքը, ռազմական շինությունները կամ որևէ այլ օբյեկտ, տրանսպորտային միջոց, որն օգտագործվում է ռազմական նպատակով:

ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ՝ Առաջին լրացուցիչ արձանագրության 51-րդ հոդվածի 5-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հարձակումների այլ տեսակների շարքում հարկ է ոչ ընտրողական բնույթի հարձակումներ համարել այն **հարձակումը,** որը, ինչպես կարելի է սպասել, զուգահեռաբար կառաջացնի **զոհեր** քաղաքացիական բնակչության շրջանում, **վիրավորներ՝** քաղաքացիական անձանց թվից, և **վնաս** կպատճառի քաղաքացիական օբյեկտներին, կամ երկուսը միասին, որոնք **չափազանց մեծ կլինեն** համեմատած այն կոնկրետ և անմիջական ռազմական առավելությանը, որին ենթադրվում է այդ ձևով հասնել:

*Վերը նշված նորմի վերլուծությունից բխում է, որ **համաչափության սկզբունքը** կոչված է **հավասարակշռելու** պատճառված վնասը և ձեռք բերված ռազմական առավելությունը, հետևաբար՝ **պատճառված վնասը** (մարդկանց մահ, գույքի ոչնչացում) և ձեռք բերված **ռազմական առավելությունը** (առանցքային հենակետերի գրավում, կապակցող ճանապարհների, հանգույցների վերահսկում և այլն) պետք է լինեն ողջամիտ հավասարակշռության մեջ: Ռազմական օգուտը, առավելությունը չպետք է գերակայի պատճառված վնասին, և եթե նպատակին կարելի է հասնել **նվազագույն վնաս հասցնելով,** ապա պետք է ընտրել վերջին տարբերակը: Ռազմական նպատակին հասնելը չի կարող գերակա արժեք լինել **անհամաչափ վնաս** պատճառելու համեմատ:*

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ Ցամաքային կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն՝ պաշարումների և ռմբակոծությունների ժամանակ **պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝** որքան հնարավոր է շատ խնայելու կրոնի, արվեստի, գիտության և բարեգործության համար նախատեսված շենքերը, հիվանդանոցները և հիվանդների ու վիրավորների հավաքման վայրերը, եթե դրանք միաժամանակ չեն օգտագործվում ռազմական նպատակներով: Պաշարվածները պետք է նշեն այդ **շենքերը կամ վայրերը որոշակի և տեսանելի նշաններով, որոնք նախապես պետք է տեղեկացվեն հարձակվողներին:**

Առաջին լրացուցիչ արձանագրության 57-րդ հոդվածի (**Նախազգուշական միջոցները հարձակման ժամանակ**) համաձայն՝ ռազմական գործողություններ անցկացնելիս մշտապես **պետք է հոգ տարվի խնայելու** քաղաքացիական բնակչությանը, քաղաքացիական անձանց և քաղաքացիական օբյեկտները: Հարձակումների վերաբերմամբ **ձեռնարկվում են նախազգուշական միջոցներ:**

*Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ **նախազգուշացման սկզբունքը** կոչ-*

*ված է երաշխավորելու ոչ ռազմական օբյեկտների և անձանց ռազմական թիրախ չդառնալու կանոնը: Այն **կանխարգելիչ գործառույթ** ունի, նպատակաուղղված է քաղաքացիական անձանց շրջանում **զոհերի և վնասների բացառմանը կամ նվազագույնի հասցմանը,** քաղաքացիական և հատուկ նշանակության օբյեկտների (կրոնական, առողջապահական հաստատություններ և այլն) **պահպանությանը և ռազմական թիրախ չդառնալուն**:*

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ: Ցամաքային կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն՝ հակամարտող կողմերի իրավունքը՝ թշնամուն **վնաս հասցնելու միջոցներ ձեռնարկելու, անսահմանափակ չէ:**

Առաջին լրացուցիչ արձանագրության 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավող տերությունը **չի կարող բռնագրավել** քաղաքացիական բժշկական կազմավորումները, դրանց սարքավորումները (…):

*Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ **ռազմական անհրաժեշտության** սկզբունքը կոչված է նվազեցնելու ոչ անհրաժեշտ ռազմական ուժի կիրառությունը, այսինքն՝ **եթե չկա ռազմական անհրաժեշտություն,** այսինքն՝ կարիք, որն ունի միայն ռազմական նշանակություն, **ապա օբյեկտը կամ սուբյեկտը չպետք է ոչնչացվեն**: Իհարկե, հաճախ այս սկզբունքը կարող է **չարաշահվել,** քանի որ յուրաքանչյուր անգամ **թիրախի խոցումը, անհամաչափ ուժի կիրառումը** կարող է ներկայացվել ռազմական անհրաժեշտությամբ պայմանավորված արարք: **Ռազմական անհրաժեշտության սկզբունքի չպահպանման** օրինակ է այն, երբ **ճանապարհին ականապատվում է**, թեպետև այն ականապատելու ռազմական անհրաժեշտություն չկա (օրինակ՝ դա կատարվել է այդ ճանապարհով քաղաքացիական անձանց փախուստը կանխելու համար):*

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՆԻ ԵՎ ՉՈՐՍ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂԵԼՈՒԹՅՈՒՆԸ: Ինչ վերաբերում է ռազմական դրոնի՝ որպես ռազմական գործողության միջոցի վերահսկելիության հարցին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջինիս նկատմամբ վերահսկողությունը խիստ կանոնարկված, ուղղորդված է, այսինքն՝ **անձն է հրահանգներ տալիս, ղեկավարում, վերահսկում հետագիծը, սկսում և ավարտում գործընթացը:**

Չեն կարող **անսահմանափակ հետևանքներ** առաջանան, կամ դրոնը կառավարումից դուրս գա[17] (խոսքը կայուն անկառավարելի վիճակի մասին է) և արդյունքում քաղաքացիական անձանց և օբյեկտները վնասի: Դրոնի օգտագործման ժամանակ **հնարավոր է տարբերակել** ռազմական և քաղաքացիական անձանց, օբյեկտները, հետևաբար՝ խոցել միայն ռազմական սուբյեկտին, օբյեկտին. չէ՞ որ դրոնն ունի **տեսահսկման համակարգ**, իսկ զարգացած տեխնոլոգիական լուծման դեպքում՝ նաև **համազգեստի տարբերակման** հնարավորություն:

Համաչափ վնասի պատճառումը ևս դրոնի կիրառության տիրույթում է, քանի որ մարդու՝ բանական էակի ուղղորդմամբ է կատարում որոշակի առաջադրանք, այսինքն՝ **դրոնը հետագծելի է և վերահսկելի:**

Դրոնը՝ որպես պատերազմ վարելու միջոց, նաև **ազդարարող, նախազգուշացնող գործառույթ ունի,** մասնավորապես՝ դրոնի վրա հնարավոր է տեղադրել ազդարարման սարք, կամ վերջինիս միջոցով հակառակորդին, քաղաքացիական անձանց տեղեկություններ փոխանցել, թռուցիկներ տարածել սպասվող ռազմական գործողության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է դրոնի՝ ռազմական անհրաժեշտության կանոնին բավարարելուն, ապա անհրաժեշտ է նշել, որ ռազմական անհրաժեշտություն որոշողը մարդն է, իսկ դրոնը՝ միջոց,

[17] Միևնույն ժամանակ անհրաժեշտ է փաստել, որ ցանկացած զենք ունի նշանակետի, թիրախի սխալ խոցման հավանականության որոշակի աստիճան:

հետևաբար՝ հակառակորդին ինչ աստիճանի վնաս հասցնել, արդյոք դա պայմանավորված է ռազմական անհրաժեշտությամբ, դրոնը կիրառողի, հրահանգներ տվողի տիրույթում են, այսինքն՝ վերահսկելի են:

Համադրելով դրոնի կիրառությունը վերը նշված չորս կանոններին՝ կարելի է արձանագրել, որ դրոնի կիրառությունը բավարարում է ***տարբերակման, համաչափության, նախազգուշացման և ռազմական անհրաժեշտության*** *կանոնների պահանջներին, հետևաբար՝* ***միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից պատերազմի ժամանակ ռազմական դրոնի՝ որպես պատերազմ վարելու միջոցի կիրառությունը թույլատրելի է, արգելված չէ:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք նշել որ.

1. Ռազմական դրոններն ունեն GPS (համաշխարհային դիրքորոշման համակարգ), տեսահսկման, առցանց հեռարձակման, երկարատև (օրերով) անխափան աշխատելու, գիշերային ժամերին աշխատելու, ջերմային սենսորներով, այլ սարքավորումներով և արհեստական բանականության օգնությամբ մարդկանց և օբյեկտներին, համազգեստով և սովորական հագուստով անձանց տարբերակելու գերժամանակակից հնարավորություններ, հետևաբար՝ **լիովին համապատասխանում են պատերազմի ժամանակ թույլատրելի, չարգելված միջոցի պահանջներին**: Այստեղ և՛ համաչափության, և՛ տարբերակման, և՛ նախազգուշացման սկզբունքներն են պահպանվում:

2. Դրոններն ինքնավար չեն, դրանք **հեռակառավարվում են մարդու կողմից,** հետևաբար՝ դրանք **վերահսկելի են,** այսինքն՝ ռազմական անհրաժեշտության սկզբունքի որոշողը ևս մարդն է: Իրենց բնույթով դրոնները ծայրահեղ տառապանքներ պատճառելու ազդեցություն չունեն, **եթե դրանք չեն չարաշահվում** մարդու կողմից, ինչպես օրինակ՝ ցանկացած զենք:

3. Քանի որ դրոնները գործարկվում են այն թիրախների ուղղությամբ, որոնց վերաբերյալ **նախապես տվյալներ են ձեռք բերվել, հավաքվել**, հետևաբար՝ **սխալի հավանականությունը, ոչ համաչափ վնասի պատճառումը էականորեն նվազում է,** եթե ոչ՝ զրոյանում: Ավելին՝ անօդաչու թռչող սարքերի արդյունաբերության մեջ **արհեստական բանականության կիրառումը կապահովի առավել բարձր ճշգրտության գործունեություն** (գերճշգրիտ ռազմական դրոն), այդ թվում՝ թիրախի հայտնաբերում և դիպուկ ոչնչացում:

4. Այսօր **որևէ միջազգային-իրավական ակտ** չի արգելում պատերազմի ժամանակ ռազմական դրոնի՝ որպես պատերազմ վարելու միջոցի օգտագործումը, հետևաբար՝ **արգելքի բացառումն** արդեն իսկ ճանապարհ է հարթում վերջինիս կիրառությունն իրավաչափ դիտարկելու համար: Միևնույն ժամանակ գործող իրավական կարգավորումները հստակ պահանջում են, որ **կիրառվող միջոցները (զենք, զինամթերք) պետք է համապատասխանեն** պատերազմելու իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի կանոններին**:** Հետևաբար՝ **ռազմական դրոնի կիրառման արգելքի բացակայությունը** և **պատերազմելու իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի կանոններին համապատասխանելը** բավարար են, որպեսզի պատերազմի ժամանակ ռազմական դրոնի կիրառությունը **թույլատրելի, իրավաչափ** համարվի:

5. Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրահանգել**, որ ռազմական դրոնի իրավաչափ կիրառության հիմքերը** պատերազմելու իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի վերը նշված սկզբունքները և կանոններն են, որոնց կենտրոնում մարդու իրավունքներն են:

Ամփոփագիր: Հոդվածում հեղինակը ներկայացրել է պատերազմի, ռազմական գործողությունների ժամանակ դրոնի՝ որպես պատերազմ վարելու միջոցի կիրառման իրավաչափության հարցը՝ ընդգծելով ռազմական դրոնի կիրառության շրջանակը, պատերազմ վարելու միջոց հանդիսանալու հանգամանքը: Հեղինակն իրավաչափության հարցն ուսումնասիրել է երկու՝ պատերազմելու իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից: Պատերազմելու իրավունքի համատեքստում հեղինակն անդրադարձել է ինքնապաշտպանվելու իրավունքին, Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության կարգավորմանը, պատերազմելու իրավունքի հիմքում ընկած ուժի կիրառման իրավաչափությանը: Միջազգային մարդասիրական իրավունքի համատեքստում անդրադարձել է չորս հիմնարար կանոններին (սկզբունքներին)՝ տարբերակման, համաչափության, նախազգուշացման և ռազմական անհրաժեշտության՝ ժնևյան 1949 թվականի կոնվենցիաների, դրանց կից լրացուցիչ արձանագրությունների և այլ իրավական նորմերի լույսի ներքո: Տարբերակման սկզբունքի շրջանակում հեղինակն անդրադարձել է քաղաքացիական բնակչությանը և օբյեկտներին ռազմական սուբյեկտներից (կոմբատանտ) և օբյեկտներից տարբերակմանը: Համաչափության սկզբունքի շրջանակում հեղինակն անդրադարձել է պատճառված վնասը և ձեռք բերված ռազմական առավելությունը հավասարակշռելու, համաչափ դարձնելու հարցին՝ շեշտադրելով նվազագույն վնաս հասցնելու հանգամանքը: Նախազգուշացման սկզբունքի շրջանակում հեղինակը կարևորել է այս սկզբունքի՝ որպես կանխարգելիչ գործառույթ լինելու հանգամանքը: Ռազմական անհրաժեշտության սկզբունքի շրջանակում հեղինակն անդրադարձել է այն կարևոր գաղափարին, որ այս սկզբունքը կոչված է նվազեցնելու ոչ անհրաժեշտ ռազմական ուժի կիրառությունը:

Annotation In the article, the author presented the issue of the legality of using drones as a means of waging war during war and military operations, emphasizing the scope of use of military drones, the fact of being a means of waging war. The author studied the issue of legality from two perspectives: the right to wage war and international humanitarian law. In the context of the right to wage war, the author addressed the right to self-defense, the regulation of the Charter of the United Nations, and the legality of the use of force underlying the right to wage war. In the context of international humanitarian law, he addressed four fundamental rules (principles): distinction, proportionality, warning, and military necessity, in the light of the 1949 Geneva Conventions, their Additional Protocols, and other legal norms. Within the framework of the principle of distinction, the author addressed the distinction between the civilian population and military subjects (combatants) and objects. Within the framework of the principle of proportionality, the author addressed the issue of balancing and making proportional the damage caused and the military advantage gained, emphasizing the fact of causing minimal damage. Within the framework of the principle of precaution, the author emphasized the fact of this principle as a preventive function. Within the framework of the principle of military necessity, the author addressed the important idea that this principle is designed to reduce the use of unnecessary military force.

Аннотация. В статье рассматриваются вопросы правомерности использования военных беспилотных летательных аппаратов (дронов) в ходе вооружённых конфликтов и военных операций. Автор подчёркивает масштабы современного применения беспилотников и их значение как одного из основных средств ведения войны. Проблема законности использования военных дронов анализируется в двух аспектах: с точки зрения права на ведение войны и международного гуманитарного права. В контексте права на ведение войны рассматриваются право государств на самооборону, положения Устава Организации Объединённых Наций, а также основания законного применения силы, лежащую в основе права на ведение войны. В рамках международного гуманитарного права автор исследует четыре основополагающих принципа: различия, соразмерности, предосторожности и военной необходимости, закреплённые в Женевских конвенциях 1949 года, Дополнительных протоколах к ним и иных международно-правовых актах. При анализе принципа различия рассматривается необходимость чёткого разграничения между гражданским населением и гражданскими объектами, с одной стороны, и комбатантами (как военными субъектами) и военными объектами — с другой. В контексте принципа соразмерности исследуется соотношение между

предполагаемой военной выгодой и возможным сопутствующим ущербом гражданскому населению и объектам, а также подчёркивается необходимость минимизации такого ущерба. Рассматривая принцип предосторожности, автор акцентирует внимание на его превентивной функции. В рамках принципа военной необходимости подчёркивается, что применение силы должно ограничиваться исключительно достижением законных военных целей и исключать использование чрезмерной или излишней силы.

Բանալի բառեր *- անօդաչու թռչող սարք, ռազմական դրոն, պատերազմելու իրավունք, մարդասիրական իրավունք, մարդու իրավունքներ:*

Keywords: *unmanned aerial vehicle, military drone, right to wage war, humanitarian law, human rights.*

Ключевые слова: *беспилотный летательный аппарат, военный дрон, международное гуманитарное право, право на ведение войны, право на самооборону, вооружённый конфликт.*

Օգտագործված գրականության ցանկ

Միջազգային-իրավական ակտեր

1) «Գործող բանակում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիա **(Առաջին կոնվենցիա)**

2) «Ծովում զինված ուժերի վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» ժնևի 1949 թվականի կոնվենցիա **(Երկրորդ կոնվենցիա)**

3) «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» ժնևի 1949 թվականի կոնվենցիա **(Երրորդ կոնվենցիա)**

4) «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» ժնևի 1949 թվականի կոնվենցիա **(Չորրորդ կոնվենցիա)**

5) «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնևի 1977 թվականի արձանագրություն **(Առաջին լրացուցիչ արձանագրություն)**

6) «Ոչ միջազգային բնույթի կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնևի 1977 թվականի արձանագրություն **(Երկրորդ լրացուցիչ արձանագրություն)**

7) «Լրացուցիչ տարբերանշանի օգտագործման մասին» ժնևի 1977 թվականի արձանագրություն **(Երրորդ լրացուցիչ արձանագրություն)**

8) «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» Հաագայի 1899 թվականի կոնվենցիա **(Ցամաքային կոնվենցիա)**

9) «Ծովային պատերազմի ժամանակ պատերազմող կողմերի միջև հարաբերությունները կարգավորող օրենքների մասին» Հաագայի 1907 թվականի կոնվենցիա **(Ծովային կոնվենցիա)**

10) «Օդային պատերազմ վարելու կանոնների մասին» Հաագայի 1923 թվականի կոնվենցիա **(Օդային կոնվենցիա՝** «Պատերազմի և օդային պատերազմի ժամանակ անլար հեռահաղորդակցության վերահսկողության կանոնների մասին»**)**

Տեսական գրականություն

1) Constantinescu M., Muraru I., Iorgovan A., Revizuirea Constituţiei României.Explicaţii şi comentarii, Bucureşti, Editura Rosetti, 2003, p. 6

2) Foy J., Autonomous weapons systems taking the human out of international humanitarian ıaw, Legal studies, 2014, pp. 53

3) Kelsey A., Flying robots: Everything you need to know about drones, J. 7, 2013, http://www.popsci.com/technology/article/ 2013-03/drone-any-other-name (վերջին մուտք՝ 29.12.2025)

4) Kolb R., Origin of the twin terms jus ad bellum and jus in bello, International Review of the Red Cross, No. 320, 1997, p. 553

5) Lubell N. and Derejko N., A Global Battlefield? Drones and the geographical scope of armed conflict, 1 Journal of International criminal justice, 2013, p. 9

6) Nabulsi K., Crimes of war: What the public should know: Jus ad bellum, Jus in bello, 1999, p. 1

7) Stoian A., The Principle Of Legality, Principle Of Public Law, November 2015, International conference KNOWLEDGE-BASED ORGANIZATION 21(2), p. 513

8) Teems J., Overview of army robotic convoy technology programs, Robob. Report, 2007, p. 1

9) Պետության և իրավունքի տեսություն: Ուսումն. ձեռնարկ: Հեղ. խումբ: Գիտ. խմբագիրներ՝ Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., 3-րդ լրամշ. հրատ., 2018, էջ 593

10) www.icrc.org/en/document/what-are-jus-ad-bellum-and-jus-bello-0 (վերջին մուտք՝ 29.12.2025).

Գևորգյան Ա. - իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս, Հայ-Ռուսական համալսարանի ավագ դասախոս, էլհասցե՝ artak2020gevorgyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 09.02.2026 թ., տրվել է գրախոսության 09.02.2026 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վաստակավոր իրավաբան, Ռուս-հայկական համալսարանի իրավունքի ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ղեկավար Ա. Ղամբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-183

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու, փաստաբան Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու
https://orcid.org/0009-0002-3636-6701
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու, փաստաբան, իրավունքի մագիստրոս
https://orcid.org/0009-0008-9047-9639

MARTIN MANUKYAN
Responsible for monitoring the work of the Office of the Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate, Lecturer of the Department of Jurisprudence of the Yerevan University "Gladzor", Candidate of Legal Sciences
VAHE HOVHANNISYAN
Responsible for monitoring the work of the Office of the Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate, Master of Law

МАРТИН МАНУКЯН
Ответственный за мониторинг деятельности Аппарата общественного защитника Палаты адвокатов Республики Армения, адвокат, преподаватель кафедры юриспруденции Ереванского университета «Гладзор», кандидат юридических наук
ВАГЕ ОГАНЕСЯН
Ответственный за мониторинг деятельности Аппарата общественного защитника Палаты адвокатов Республики Армения, адвокат, магистр права

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼԻՍ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ԱՅԴ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԻՐԱՎԱՀԱՄ ԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ON THE RESULTS OF A COMPARATIVE LEGAL ANALYSIS OF INTERNATIONAL PRACTICE IN DEPRIVING MEMBERS OF IMMUNITY, CONSIDERING THE PARTICIPATION OF A LAWYER MANDATORY

О РЕЗУЛЬТАТАХ СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОГО АНАЛИЗА МЕЖДУНАРОДНОЙ ПРАКТИКИ ЛИШЕНИЯ ДЕПУТАТСКОЙ НЕПРИКОСНОВЕННОСТИ (ИММУНИТЕТА) В КОНТЕКСТЕ ОБЯЗАТЕЛЬНОГО УЧАСТИЯ АДВОКАТА

Ներածություն

Սույն հոդվածը նպատակ ունի համակարգված ներկայացնել պատգամավորական անձեռնմխելիության ընթացակարգերը տարբեր իրավական համակարգերում, գնահատել հայաստանյան իրավակարգավորումների համապատասխանությունը միջազգային չափանիշներին, ինչպես պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելիս փաստաբանի մասնակցությունը պարտադիր համարելու առաջարկի իրավաչափությունը:

Ժամանակակից ժողովրդավարական պետություններում անձեռնմխելիությունը դիտարկվում է որպես գործառութային երաշխիք, այլ ոչ թե անձնական արտոնություն: Միջազգային միտումն ուղղված է դրա սահմանափակմանն ու հաշվետվողականության ուժեղացմանը:

Խորհրդարանի անդամները՝ պատգամավորները, ունեն հատուկ իրավական կարգավիճակ, որի կարևորագույն տարրերից մեկն էլ **պատգամավորական անձեռնմխելիությունն է:** Միևնույն ժամանակ, ժամանակակից իրավական պետություններում գործում է նաև **օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը:**Այս երկու սկզբունքների միջև երբեմն առաջանում է հակասություն: Եթե պատգամավորներն ունենան լայն անձեռնմխելիություն, ապա կարող է առաջանալ անպատժելիության վտանգ, իսկ եթե անձեռնմխելիությունը չափազանց սահմանափակ է, ապա հնարավոր է իրավական և քաղաքական հետապնդում:

Հետևաբար, պետությունները փորձում են գտնել հավասարակշռված լուծումներ՝ ապահովելու ինչպես պատգամավորների անկախությունը, այնպես էլ արդարադատության արդյունավետ իրականացումը:

Հոդվածում առաջարկվել է սահմանադրական օրենքով ամրագրել, որ անձեռնմխելիությունից զրկելու հարցը քննարկելիս փաստաբան (պաշտպան) ներգրավելը, որպես խորհրդարանում միջնորդությունը ներկայացնող դատախազին հակակշիռ, պատգամավորի ընտրությամբ՝ պետք է պարտադիր համարվի, ինչը, ոչ միայն համահունչ է միջազգային պրակտիկային, այլև «զենքերի հավասարության» և հավասարակշռման երաշխիք կհանդիսանա:

Հիմնական հետազոտություն

Պատգամավորական անձեռնմխելիությունը դասական սահմանադրական ինստիտուտ է, որը ձևավորվել է իշխանությունների բաժանման սկզբունքի և օրենսդիր իշխանության անկախության ապահովման նպատակով: Այն հատկապես կարևորվում է քաղաքական մրցակցության և բազմակարծության պայմաններում՝ կանխելու գործադիր իշխանության հնարավոր ճնշումներն օրենսդիր մարմնի նկատմամբ:

Միջազգային փորձը պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու և քրեական պա-

տասխանատվության ենթարկելու հարցերի վերաբերյալ բավականին բազմազան է, քանի որ յուրաքանչյուր երկիր ունի իր սահմանադրական և օրենսդրական առանձնահատկությունները, որոնք հիմնված են պատմական, քաղաքական և իրավական ավանդույթների վրա:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ անձեռնմխելիությունը չի նշանակում անպատժելիություն[1]: Այն պաշտպանության միջոց է, որպեսզի խորհրդարանը կարողանա ստուգել, թե արդյոք հետապնդումը քաղաքական կամ իրավական շարժառիթներ ունի՞, թե՞ ոչ: Նկատենք նաև, որ վերջին տասնամյակում միջազգային միտումն ուղղված է անձեռնմխելիության շրջանակի նեղացմանը:

Այդուհանդերձ՝ պատգամավորական անձեռնմխելիությունը գործում է բազմաթիվ երկրներում **(Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Ռուսաստան, Թուրքիա, ԱՄՆ** (մասնակի), **Հայաստան** և այլն:) Դրան հակառակ՝ որոշ երկրներում այն վերացվել է կամ գործում է սահմանափակ (**Միացյալ Թագավորություն**, **Նիդեռլանդներ, Նորվեգիա, Կանադա):**

Առանձին երկրներում պատգամավորական անձեռնմխելիությունը վերացվել, կամ գրեթե վերացվել է **(Ավստրալիա, Նոր Զելանդիա**):

Վերջին տարիներին մի քանի երկրներում փորձեր են արվել վերացնել կամ խիստ սահմանափակել պատգամավորական անձեռնմխելիությունը (**Վրաստան, Իտալիա, Ֆրանսիա, Թուրքիա, Ավստրիա, Լեհաստան, Պորտուգալիա, Բելգիա, Ռումինիա, Արգենտինա**): Կան նաև երկրներ, որտեղ պատգամավորներն ունեն ամենալայն անձեռնմխելիությունը (**Իսպանիա, Հունաստան, Բրազիլիա, Մեքսիկա):** Նման լայն անձեռնմխելիությունը նախատեսված է, որպեսզի պատգամավորները կարողանան ազատորեն քննադատել իշխանությանը, արտահայտել քաղաքական կարծիք, չվախենալ քաղաքական հետապնդումներից:

Հայաստանի Հանրապետությունում պատգամավորական անձեռնմխելիությունը միջին մակարդակի է:

ՄԱԿ-ի հակակոռուպցիոն կոնվենցիան (UNCAC,) և Եվրոպայի խորհրդի GRECO-ն (Group of States against Corruption) առաջարկում են սահմանափակել պատգամավորական անձեռնմխելիության շրջանակը, որպեսզի այն չդառնա կոռուպցիայի և հանցագործությունների քողարկիչ[2]: Պակաս կարևոր չէ և այն հանգամանքը, որ Վենետիկի հանձնաժողովի կողմից առաջարկվող չափորոշիչների համաձայն՝ պատգամավորի անձեռնմխելիությունը պետք է սահմանափակվի միայն խորհրդարանական գործունեությամբ, իսկ անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը պետք է լինի թափանցիկ՝ առանց քաղաքական կողմնակալության: Միջազգային դատարանները ևս, ինչպես օրինակ՝ Միջազգային քրեական դատարանը, մերժում են անձեռնմխելիությունը միջազգային հանցագործությունների (գենոցիդ, պատերազմական հանցագործություններ և այլն) դեպքերում[3]:

Պատգամավորական անձեռնմխելիությունն առաջ է եկել պատմականորեն: Դեռևս 17-18-րդ դարերում Եվրոպայում թագավորները կամ կառավարությունները կարող էին ձերբակալել կամ դատապարտել պատգամավորներին, եթե նրանք քննադատում էին իշխանությանը: Այդ պատճառով խորհրդարանները սկսեցին պահանջել հատուկ պաշտպանություն պատգամավորների համար[4]:

Այսօր արդեն պատգամավորական անձեռնմխելիությունը սահմանադրական իրավունքի կարևոր ինստիտուտ է: Այն պատգամավորի իրավական կարգավիճակի բաղադրիչն է և ունի

[1] *Кутафин О.Е.,* Конституционное право России. Москва, Юрист, 2001, с. 113.
[2] *Баглай М.В.,* Конституционное право Российской Федерации. Москва, Норма, 2013, с. 97.
[3] *Марченко М.Н.,* Конституционное право зарубежных стран. Москва, Проспект, 2014, с. 162.
[4] *Чиркин В.Е.,* Парламентское право, Москва, Норма, 2006, с. 57.

երկու հիմնական նպատակ՝

1. ապահովել պատգամավորների անկախ գործունեությունը,
2. պաշտպանել խորհրդարանն արտաքին միջամտություններից:

Գիտական գրականության մեջ պատգամավորական անձեռնմխելիությունը հաճախ սահմանվում է որպես պատգամավորի նկատմամբ քրեական կամ վարչական հետապնդում իրականացնելու հատուկ սահմանափակումներ: Այն նախատեսված է բացառապես պատգամավորի գործունեության արդյունավետ իրականացման համար և չի կարող դիտվել որպես անձնական արտոնություն:

Ընդունված է տարբերակել պատգամավորական անձեռնմխելիության երկու տեսակ.

Ինդեմնիտետ, ինչը նշանակում է, որ պատգամավորները չեն կարող ենթարկվել իրավական պատասխանատվության իրենց պաշտոնական գործունեության ընթացքում արտահայտած կարծիքների կամ քվեարկության համար: Այս սկզբունքը պաշտպանում է պատգամավորների խոսքի ազատությունը խորհրդարանում: Այն գործում է գրեթե բոլոր ժողովրդավարական պետություններում և համարվում է խորհրդարանական ժողովրդավարության կարևոր երաշխիք:

Իմունիտետ, սա վերաբերում է պատգամավորին քրեական հետապնդումից պաշտպանելուն: Շատ երկրներում պատգամավորին ձերբակալելու կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է խորհրդարանի համաձայնությունը: Այս մեխանիզմը նախատեսված է կանխելու գործադիր իշխանության կողմից պատգամավորների նկատմամբ ճնշումները:

Պատգամավորական անձեռնմխելիությունն ունի մի շարք կարևոր գործառույթներ.

1. ապահովում է խորհրդարանի անկախությունը,
2. պաշտպանում է պատգամավորներին իրավական կամ քաղաքական հետապնդումներից,
3. նպաստում է ազատ քաղաքական քննարկումների իրականացմանը:

Միևնույն ժամանակ, այս ինստիտուտը կարող է առաջացնել նաև խնդիրներ, եթե այն կիրառվում է չափազանց լայն ձևով:

Միջազգային պրակտիկայում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը, սովորաբար, հետևյալն է.

Դիմումի (միջնորդության) ներկայացում: Դատախազությունը կամ դատարանը դիմում է խորհրդարանի նախագահին կամ համապատասխան հանձնաժողովին՝ խնդրելով համաձայնություն տալ պատգամավորի քրեական հետապնդման կամ ձերբակալության համար: **Դիմումը (միջնորդությունը) պետք է պարունակի հանցագործության մանրամասն նկարագրություն և ապացույցներ:**

Հանձնաժողովում քննարկում: Խորհրդարանի հատուկ հանձնաժողովը (օրինակ՝ իրավական հարցերի կամ արտոնությունների հանձնաժողով) ուսումնասիրում է դիմումը (միջնորդությունը): Այս փուլում ստուգվում է, թե արդյոք կա՞ «**fumus persecutionis**» (հետապնդման կասկածելի շարժառիթներ)[5], այսինքն՝ քաղաքական հետապնդման նշաններ: Եթե կան այդպիսիք (օրինակ՝ դիմումը (միջնորդությունը) ներկայացվել է առանց բավարար ապացույցների), ապա հանձնաժողովի կողմից խորհրդարանի լիագումար նիստին պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու վերաբերյալ բացասական եզրակացություն է ներկայացվում:

Խորհրդարանի լիագումար (պլենար) նիստում քվեարկություն: Հանձնաժողովի առա-

[5] *Чиркин В.Е.,* Парламентское право, Москва, Норма, 2006, с. 57.

ջարկությունը քննարկվում է խորհրդարանի լիագումար նիստում: Միջազգային պրակտիկայում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը կարող է քվեարկվել ինչպես բաց, այնպես էլ գաղտնի քվեարկությամբ: Սակայն ժամանակակից ժողովրդավարական պետությունների մեծ մասում առավել տարածված է բաց քվեարկության մեխանիզմը, քանի որ այն ապահովում է գործընթացի թափանցիկությունը և պատգամավորների քաղաքական պատասխանատվությունը: Օրինակ՝ **Գերմանիայում** Բունդեսթագը պատգամավորների անձեռնմխելիության հարցերը, սովորաբար, քննարկում և լուծում է բաց քվեարկությամբ: Նման մոտեցում է կիրառվում **Ֆրանսիայում**, որտեղ Ազգային ժողովը պատգամավորների անձեռնմխելիության հարցերը լուծում է հրապարակային քվեարկությամբ: Պատգամավորների անձեռնմխելիության հարցերը բաց քվեարկությամբ է լուծվում նաև **Թուրքիայում, Հոլանդիայում**, **Ճապոնիայում** , **Ռուսաստանի Դաշնությունում**՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Միևնույն ժամանակ, որոշ երկրներում կիրառվում է նաև գաղտնի քվեարկության պրակտիկա[6]: Այդպիսի մոտեցումը նպատակ ունի ապահովելու պատգամավորների ազատ կամաարտահայտությունը և նվազեցնելու քաղաքական կամ կուսակցական ճնշումների ազդեցությունը որոշման վրա: Օրինակ՝ **Իտալիայում** որոշ խորհրդարանական ընթացակարգերի ընթացքում կարող է կիրառվել գաղտնի քվեարկություն, ինչը թույլ է տալիս պատգամավորներին որոշումներն ընդունել առանց արտաքին ազդեցությունների:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը նմանօրինակ հարցերը քննում է բաց նիստում, իսկ քվեարկությունը կատարում է բաց եղանակով: Այս մոտեցումը համապատասխանում է խորհրդարանական գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքին:

Արտակարգ դեպքեր (իրավիճակներ): Եթե հարցի քննարկման ժամանակամիջոցում խորհրդարանն արձակուրդում է, ապա, որոշումը կայացնում է խորհրդարանի նախագահությունը կամ բյուրոն, ինչը, հետագայում հաստատվում է խորհրդարանի ընդլայնված նիստում: Միջազգային պրակտիկայում տարածված մեխանիզմ է նաև խորհրդարանի արտահերթ նիստ հրավիրելը: Այդ դեպքում խորհրդարանի նախագահը կամ պետության ղեկավարը հրավիրում են **հատուկ նիստ**, որը քննարկում և քվեարկում է տվյալ հարցը: Եթե խորհրդարանը նստաշրջանում չէ, ապա պետք է հատուկ հրավիրվի՝ այդ հարցը լուծելու համար (**Գերմանիա, Հնդկաստան, Հունաստան, Սլովենիա**):

Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգերը շատ երկրներում թեև իրար նման են, այնուամենայնիվ, դրանք նաև տարբերվում են: Որոշ երկրներում, օրինակ՝ **Չիլիում**, պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը չի քվեարկվում խորհրդարանում[7]: Այն լուծվում է դատարանի որոշմամբ, ինչը նպատակ ունի ապահովելու գործընթացի իրավական և ոչ քաղաքական բնույթը: Չիլիից բացի՝ կան նաև այլ երկրներ, որտեղ պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու հարցը լուծվում է ոչ թե խորհրդարանի, այլ դատարանի որոշմամբ **(Պերու, Բոլիվիա, Կոլումբիա):**

Անդրադարձ կատարելով մի շարք երկրների խորհրդարանների պրակտիկային՝ նշենք.

Ֆրանսիայի փորձը

Ֆրանսիայում պատգամավորական անձեռնմխելիությունը կարգավորվում է Սահմանադրությամբ: Պատգամավորները չեն կարող ենթարկվել քրեական հետապնդման առանց խորհրդարանի համաձայնության: Սակայն, կան որոշ բացառություններ. օրինակ՝ եթե պատ-

[6] *Баглай М.В.,* Конституционное право зарубежных стран, Москва, Норма, 2007, с. 183.
[7] *Shaw M. N.,* Internacional Law. Cambridge: Cambridge Uniwersity Press, 2017, p. 76.

գամավորը ձերբակալվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում իրավապահ մարմինները կարող են իրականացնել անհրաժեշտ գործողություններն առանց խորհրդարանի թույլտվության:

Գերմանիայի փորձը

Գերմանիայում պատգամավորական անձեռնմխելիությունն ամրագրված է Հիմնական օրենքով: Բունդեսթագի անդամների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու համար անհրաժեշտ է խորհրդարանի թույլտվությունը: Բունդեսթագում գործում է հատուկ հանձնաժողով, որը ուսումնասիրում է նման դիմումները և ներկայացնում համապատասխան առաջարկություններ:

Իտալիայի փորձը

Իտալիայում պատգամավորական անձեռնմխելիությունը նախկինում շատ լայն էր: Իրականացված բարեփոխումների արդյունքում այն զգալիորեն սահմանափակվել է, սակայն, որոշ հատուկ դատավարական գործողությունների համար դեռևս պահանջվում է խորհրդարանի թույլտվությունը:

Միացյալ Նահանգների փորձը

ԱՄՆ-ում պատգամավորական անձեռնմխելիությունը սահմանափակ բնույթ ունի: Կոնգրեսի անդամները պաշտպանված են միայն իրենց օրենսդրական գործունեության շրջանակում արտահայտած կարծիքների համար, սակայն քրեական իրավախախտումների դեպքում նրանք կարող են ենթարկվել պատասխանատվության այնպես, ինչպես ցանկացած այլ քաղաքացի:

Եվրոպական խորհրդարան[8]: Եվրոպական խորհրդարանի անդամներն ունեն անձեռնմխելիություն, ինչից կարող են զրկվել իրավական հարցերի հանձնաժողովի առաջարկությամբ և լիագումար նիստի քվեարկությամբ: Եթե մեղադրանքը քաղաքական բնույթի է, ապա հանձնաժողովի կողմից լիագումար նիստին ներկայացվում է բացասական եզրակացություն, ինչի հիման վրա՝ պատգամավորը չի կարող զրկվել անձեռնմխելիությունից: Թե՛ Եվրոպայի խորհուրդը, թե՛ Վենետիկի Հանձնաժողովը նշում են, որ անձեռնմխելիությունը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ կա քաղաքական հետապնդման իրական վտանգ: Նրանց կարծիքով՝ անձեռնմխելիությունը չպետք է դառնա **անպատժելիության միջոց:**

Հայաստանի Հանրապետության փորձը.

Հայաստանի Հանրապետությունում պատգամավորական անձեռնմխելիությունը ամրագրված է Սահմանադրությամբ[9], որի 96-րդ հոդվածի համաձայն՝ «Պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար:

Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

Մեծ Բրիտանիայի փորձը. Այստեղ չկա անձեռնմխելիություն, պատգամավորները կա-

[8] *Shaw M. N.*, Internacional Law. Cambridge: Cambridge Uniwersity Press, 2017, p. 76.

[9] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում:

րող են ենթարկվել քրեական հետապնդման՝ առանց խորհրդարանի համաձայնության:

Չիլիի փորձը. Վերը նշվեց, որ անձեռնմխելիությունից զրկում է դատարանը (վերաքննիչ դատարան), ոչ թե խորհրդարանը: Դատարանի այդ որոշումը պատգամավորը կարող է բողոքարկել Գերագույն դատարան:

Կոլումբիայի փորձը. Անձեռնմխելիությունից զրկում է Գերագույն դատարանը:

Թուրքիայի փորձը. Անձեռնմխելիությունից զրկում է խորհրդարանը, սակայն, պատգամավորը կարող է դա բողոքարկել Սահմանադրական դատարան:

Հորդանանի **փորձը.** Խորհրդարանի իրավական հարցերի հանձնաժողովը 15 օրվա ընթացքում քննարկում է պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու դիմումը, սակայն, վերջնական որոշում կայացվում է խորհրդարանի պլենար նիստում:

Նորվեգիայի փորձը. Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելը սահմանափակ է՝ միայն ձերբակալության դեպքում: Քրեական հետապնդման համար չկա ընթացակարգային անձեռնմխելիություն:

Մալթայի փորձը. Քրեական հետապնդման համար չկա ընթացակարգային անձեռնմխելիություն:

Վենետիկի հանձնաժողովի 2014 թվականի հիմնարար զեկույցում ամրագրված է, որ անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը պետք է համապատասխանի ընդհանուր ընթացակարգային իրավունքի սկզբունքներին, այդ թվում՝

1. թափանցիկությանը,
2. անաչառությանը,
3. իրավական որոշակիությանը,
4. հակառակ կողմին լսելու իրավունքին,
5. պաշտպանության իրավունքին:

Վենետիկի հանձնաժողովն իր զեկույցում նշել է նաև, որ պատգամավորը պետք է ունենա նաև ներկայացվելու իրավունք, և դա կարող է արվել՝

- Մեկ այլ պատգամավորի կողմից,
- Արտաքին փաստաբանի կողմից:

Բացի այդ՝ Եվրոպական խորհրդարանի կանոնակարգում ամրագրված է, որ՝

- Պատգամավորը պարտադիր հրավիրվում է լսման խորհրդարանի իրավական հարցերի հանձնաժողովում,

- Նա կարող է ներկայացնել փաստաթղթեր, գրավոր և իրեղեն ապացույցներ,

- Փաստաբանը կարող է խորհուրդներ տալ ընթացքում, բայց չի կարող ելույթ ունենալ հանձնաժողովում (չի կարող քննարկումներ անցկացնել հանձնաժողովի անդամների հետ, բայց կարող է խորհրդակցել պատգամավորի հետ):

Եվրոպական խորհրդարանի կանոնակարգում վերը ամրագրվածն հարց է առաջացնում՝ պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը քննարկելիս պարտադի՞ր է արդյոք փաստաբանի մասնակցությունը, թե՞ ոչ:

Ազգային խորհրդարանների պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նման դեպքերում եվրոպական և այլ ժողովրդավարական մի շարք երկրներում պատգամավորը իրավունք ունի ներգրավելու փաստաբան՝ որպես միջնորդությունը խորհրդարանին ներկայացնող անձին (տվյալ դեպքում՝ դատախազին) հակակշիռ:

Մասնավորապես.

Գերմանիայում

- իրավական հարցերի հանձնաժողովում և պլենար նիստում քննարկման ժամանակ

պատգամավորը կարող է ունենալ փաստաբան, որն իրավական խորհրդատվություններ է տալիս և օգնում է ձևակերպել դիրքորոշումը:

Ֆրանսիայում

– իրավական հարցերի հանձնաժողովը լսում է պատգամավորին, որը պրակտիկայում նշված հանձնաժողով է ներկայանում փաստաբանով:

Իտալիայում, Իսպանիայում, Լեհաստանում

– հարցի քննարկման ժամանակ, հատկապես բարդ կամ հասարակական ինչեղություն ունեցող գործերով՝ իրավական հարցերի հանձնաժողովում թույլատրվում է փաստաբանի մասնակցություն:

Թուրքիայում

- Սահմանադրական դատարանում բողոքարկման փուլում փաստաբանի մասնակցությունը պարտադիր է, իսկ խորհրդարանական փուլում՝ թույլատրելի:

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաև հարցը, թե ինչո՞վ է փաստաբանի մասնակցությունը կարևոր և, կարո՞ղ է, արդյոք, փաստաբանի մասնակցությունը դիտարկվել որպես դատախազին հակակշիռ, թե ոչ:

Սույն հոդվածի հեղինակները կարծում են, որ դատախազը, սովորաբար, իր միջնորդությունում ներկայացնում է անհրաժեշտ ապացույցներ և փաստարկներ՝ հիմնավորելու համար, որ հետապնդումը քաղաքական շարժառիթներ չունի և որ ապացույցները բավարար են պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու համաձայնություն տալու համար: Սակայն, մյուս կողմից՝ ակնհայտ է նաև այն, որ առանց փաստաբանի մասնակցության՝ պատգամավորը դատախազի համեմատ կարող է անհավասար դիրքում հայտնվել՝ հատկապես, եթե գործը բարդ է, կամ անհրաժեշտություն է առաջանում հենց խորհրդարանում հերքել իր դեմ բերված փաստարկները:

Մեր կարծիքով՝ խորհրդարանում փաստաբանի մասնակցությունը թույլ կտար կամ առնվազն հնարավորություն կընձեռեր՝

1. վերլուծելու դատախազի միջնորդության հիմնավորվածությունը,
2. ներկայացնելու հակափաստարկներ,
3. ընդգծելու միջնորդության քաղաքական շարժառիթները,
4. պահանջելու լրացուցիչ ապացույցների ներկայացում և դրանց ստուգում:

Այլ խոսքով՝ առանց նշված հակակշիռների պատշաճի ստուգման ՝ պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը խորհրդարանում կարող է վերածվել մեծամասնության քաղաքական որոշման: Եթե դրան գումարենք և այն հանգամանքը, որ խնդրո առնչությամբ միջազգային կառույցները (Վենետիկի հանձնաժողով, Եվրոպական խորհրդարան) չեն բացառում, որ պատգամավորն իրավունք ունի ներգրավելու փաստաբան՝ իր շահերը պատշաճ ներկայացնելու համար[10], ապա մեր համոզմամբ՝ փաստաբանի մասնակցությունը տվյալ դեպքում ոչ միայն արդարության երաշխիք է, այլև կարող է կանխել անձեռնմխելիության ինստիտուտի չարաշահումը թե՛ մեծամասնության, թե՛ ընդդիմության կողմից: Շատ երկրներում սա արդեն ստանդարտ պրակտիկա է, և բարեփոխումների ժամանակ հաճախ ընդունվում է հենց Եվրոպական խորհրդարանի մոդելը:

Պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի հետ կապված՝ փաստաբանի պարտադիր մասնակցության օգտին մեր կողմից բերվող փաստարկները հետևյալն են.

1. **Իրավական հավասարակշռություն** - դատախազը բարձրակարգ իրավաբան է, իսկ

[10] *Shaw M. N.,* Internacional Law. Cambridge: Cambridge Uniwersity Press, 2017, p. 76.

եթե պատգամավորը իրավաբան չէ, ապա դա ինքնին կարող է հանգեցնել անհավասարակշռության,

2. **Բարդ իրավական գնահատումներ** - եթե քննարկվում է ապացույցների, իրավական հիմքերի, անձեռնմխելիության ծավալի վերաբերյալ հարցեր, ապա փաստաբանի մասնագիտական աջակցությունն ավելի քան տրամաբանական է,

3. **Արդար ընթացակարգի երաշխիք** - թեպետ Ազգային ժողովը դատարան չէ, բայց նրա ընդունած որոշումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ,

4. **Քաղաքական մեծամասնության հնարավոր ճնշման ռիսկ** - փաստաբանի խոսքը, մասնագիտական աջակցությունն ու իրավական վերլուծությունները կարող են որոշակիորեն հավասարակշռել քաղաքական գործոնը

5.Գործընթացի ավելի բարձր իրավական մշակույթ - փաստաբանը կարող է ներկայացնել իրավական հակափաստարկներ:

Դրա հետ մեկտեղ, պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի հետ կապված՝ փաստաբանի պարտադիր մասնակցության դեմ բերվող փաստարկները կարող են պատճառաբանվել նրանով, որ.

1. Ազգային ժողովը քաղաքական մարմին է,

2. Պատգամավորն օրենսդիր է և, ենթադրվում է, որ ունի բավարար քաղաքական և իրավական գիտելիքներ՝ ինքն իրեն պաշտպանելու համար,

3.Եթե պրակտիկայում դատախազ-փաստաբան մոդել ձևավորվի, ապա խորհրդարանը իրեն վերագրելով թեկուզ սահմանափակ դատական գործառույթներ՝ կվերածվի կիսադատարանի:

Միջազգային պրակտիկայի հաշվառմամբ՝ անդրադարձ կատարելով մեզանում գործող իրավակարգավորումներին, նշենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը քննարկելիս գլխավոր դատախազի մասնակցությունը պարտադիր է, քանի որ հենց նա է Ազգային ժողովին ներկայացնում միջնորդությունը: Դատախազը գալիս է խորհրդարան և ներկայացնում է հիմնավորումը: Պատգամավորները կարող են հարցեր տալ և քննարկել հարցը, այնուհետև հարցը դրվում է քվեարկության: Եթե պատգամավորների մեծամասնությունը քվեարկում է կողմ, ապա՝ պատգամավորի անձեռնմխելիությունը հանվում է և իրավապահ մարմինները կարող են սկսել քրեական հետապնդում:

Դարձյալ նույն տրամաբանական հարցն է առաջանում՝ եթե Գլխավոր դատախազի մասնակցությունը պարտադիր է, ապա ինչո՞ւ չպետք է պարտադիր համարվի փաստաբանի (պաշտպանի) մասնակցությունը, մի կողմից՝ որպես պատգամավորի ներկայացուցիչ, մյուս կողմից՝ որպես «Գլխավոր դատախազին հակակշիռ»:

Գործող օրենսդրությամբ պարտադիր չէ, մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **64-րդ հոդվածի առաջին մասը** հռչակում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին»:

Սահմանադրության հիշյալ նորմի տրամաբանությունից հետևում է, որ տվյալ դեպքում պատգամավորն իրավունք ունի ունենալ փաստաբան և, վերջինս կարող է մասնակցել Ազգային ժողովի նիստին, եթե պատգամավորն այդպես է ցանկանում, ինչը, բխում է Սահմանադրությամբ երաշխավորված պաշտպանության իրավունքի ընդհանուր սկզբունքից:

Ավելին, հոդվածի հեղինակների **մասնագիտական կարծիքն այն է**, որ եթե խոսքը գնում է իրավունքի պաշտպանության առավելագույն երաշխավորման մասին, ապա պատգամա-

վորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի քննարկմանը փաստաբանի մասնակցությունը «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով պետք է ամրագրվի և, ըստ այդմ՝ պարտադիր համարվի, ինչն էլ ենթադրում է նշված սահմանադրական օրենքում համապատասխան ընթացակարգերով անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

Ավելին՝ մեր կարծիքով, խորհրդարանում որքան ավելի «դատական» է դառնում ընթացակարգը, այնքան ավելի ուժեղ պետք է լինեն պաշտպանական երաշխիքները և, որպես դրա հետևանք՝ փաստաբանի պարտադիր մասնակցության հնարավորությունը: Եթե խորհրդարանում պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցի առնչությամբ իրավական պարզաբանումներ ու հիմնավորումներ ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում, (իսկ դա, մեր համոզմամբ, առաջանում է), ապա փաստաբանի պարտադիր մասնակցությունը ոչ միայն այլընտրանք չունի, այլև, ինչպես վերը նշվեց՝ կարող է հակակշռել մի այնպիսի կարևոր գործոնի, ինչպիսին՝ քաղաքական գործոնն է:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության **64-րդ հոդվածի առաջին մասը,** գտնում ենք, որ երբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկվում է պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը, ապա պատգամավորն իրավունք ունի իրավական աջակցություն հայցելու նպատակով փաստաբան ներգրավելու: Դա ոչ միայն համահունչ կլինի միջազգային փորձին, այլև, որպես արդար ընթացակարգի ապահովման երաշխիք կապահովի պատգամավորի իրավական անհրաժեշտ պաշտպանություն ստանալու իրավունքը: Այս իրավունքը հատկապես կարևոր է, քանի որ անձեռնմխելիությունից զրկելու ընթացակարգը խորհրդարանում թեև քաղաքական բնույթ ունի, բայց կարող է ուղղակիորեն ազդել պատգամավորի հեղինակության և քրեական հետապնդման հետագա ընթացքի վրա:

Քննարկվող հարցի հետ կապված՝ սույն հոդվածի հեղինակներն անհրաժեշտ են համարում անդարադառնալ նաև հարցին՝ թե ինչ ասել է «պառլամենտի դատական գործառույթ» և, տվյալ դեպքում այն ինչ աղերսներ ունի (կամ կարող է ունենալ) պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հետ:

Պառլամենտը թեև պետական իշխանության օրենսդիր մարմինն է, սակայն իր հիմնական օրենսդրական գործունեությունից բացի՝ իրականացնում է նաև մի շարք այլ գործառույթներ[11]: Դրանցից կարևորներից մեկը **դատական կամ դատահիրավական գործառույթն է**, որի շրջանակում պառլամենտը որոշ դեպքերում մասնակցում է բարձր պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցերի քննարկմանը: Պառլամենտի դատական (կամ դատահիրավական վերահսկողության) գործառույթը նշանակում է, որ պառլամենտը որոշ դեպքերում մասնակցում է արդարադատության կամ իրավական պատասխանատվության գործընթացներին: **Սա չի նշանակում, որ պառլամենտը դատարան է, բայց այն ունի իրավական-քաղաքական որոշումներ ընդունելու լիազորություններ,** որոնք առնչվում են դատական գործընթացներին: **Չնայած պառլամենտը դատարան չէ և չի իրականացնում դասական արդարադատություն, սակայն այն կարևոր դեր ունի պետական իրավական համակարգում՝ ապահովելով օրենքի գերակայությունն ու ժողովրդավարական վերահսկողությունը պետական իշխանության նկատմամբ**:

Պառլամենտի դատական գործառույթի հիմնական դրսևորումներն են.

1. **Պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցեր**. օրինակ՝ պառլամենտը կարող է սկսել պաշտոնանկության կամ մեղադրանքի գործընթաց (իմպիչմենտ) բարձր պաշ-

[11] *Հարությունյան Գ.,* «Սահմանադրական իրավունք», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2016 թ., էջ 143:

տոնատար անձանց նկատմամբ: Այն հատուկ սահմանադրական գործընթաց է, կիրառվում է տարբեր երկրներում, հատկապես այն երկրներում, որտեղ կա նախագահական կամ խառը կառավարման համակարգ **(ԱՄՆ, Բրազիլիա, Կորեա, ՈՒկրաինա, Ֆիլիպիններ, Լիտվա, Հայաստան** և այլն):

2. Պատգամավորական անձեռնմխելիության հարցերի քննարկում. Պառլամենտը որոշում է՝թույլատրել, թե ոչ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդումը:

3. Քննիչ հանձնաժողովների ստեղծում. Պառլամենտը կարող է ստեղծել հանձնաժողովներ՝ ուսումնասիրելու իրավական կամ պետական կարևոր հարցեր:

Այսպիսով՝ պառլամենտի դատական գործառույթը դրսևորվում է այն պահին, երբ **այն որոշում է անձեռնմխելիությունից զրկելու հարցը**: Դա անհրաժեշտ է, որպեսզի մի կողմից պաշտպանի պատգամավորի անկախությունը, իսկ մյուս կողմից՝ ապահովվի օրենքի առաջ հավասարությունը:

Եզրակացություն

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության **64-րդ հոդվածի առաջին մասը՝** գտնում ենք, որ երբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկվում է պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու հարցը, ապա «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու միջոցով՝ ամրագրել, որ անձեռնմխելիությունից զրկելու հարցը քննարկելիս փաստաբան (պաշտպան) ներգրավելը, որպես խորհրդարանում միջնորդությունը ներկայացնող դատախազին հակակշիռ, պատգամավորի ընտրությամբ՝ պետք է պարտադիր համարվի, ինչը, ոչ միայն համահունչ է միջազգային պրակտիկային, այլև «զենքերի հավասարության» և հավասարակշռման երաշխիք կհանդիսանա:

Ամփոփագիր: Սույն ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում անձեռնմխելիությունը դիտարկվում է որպես գործառութային երաշխիք, այլ ոչ թե անձնական արտոնություն և, միջազգային միտումն ուղղված է դրա սահմանափակմանն ու հաշվետվողականության ուժեղացմանը:

Խորհրդարանի անդամները՝ պատգամավորները, ունեն հատուկ իրավական կարգավիճակ, որի կարևորագույն տարրերից մեկն էլ պատգամավորական անձեռնմխելիությունն է**:** Միևնույն ժամանակ, ժամանակակից իրավական պետություններում գործում է նաև օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը**:** Այս երկու սկզբունքների միջև երբեմն առաջանում է հակասություն: Եթե պատգամավորները ունենան լայն անձեռնմխելիություն, ապա կարող է առաջանալ անպատժելիության վտանգ, իսկ եթե անձեռնմխելիությունը չափազանց սահմանափակ է, ապա հնարավոր է իրավական կամ քաղաքական հետապնդում: Հետևաբար, պետությունները փորձում են գտնել հավասարակշռված լուծումներ՝ ապահովելու ինչպես պատգամավորների անկախությունը, այնպես էլ արդարադատության արդյունավետ իրականացումը:

Հոդվածում առաջարկվել է սահմանադրական օրենքով ամրագրել, որ անձեռնմխելիությունից զրկելու հարցը քննարկելիս փաստաբան (պաշտպան) ներգրավելը, որպես խորհրդարանում միջնորդությունը ներկայացնող դատախազին հակակշիռ, պատգամավորի ընտրությամբ պետք է պարտադիր համարվի, ինչը ոչ միայն համահունչ է միջազգային պրակտիկային, այլև «զենքերի հավասարության» և հավասարակշռման երաշխիք կհանդիսանա:

Annotation. *The purpose of this study is to demonstrate that in modern democratic states, immunity is viewed as a functional guarantee, not a personal privilege, and the international trend is toward limiting it and*

strengthening accountability.

Members of parliament (MPs) enjoy a special legal status, one of the most important elements of which is parliamentary immunity. At the same time, modern constitutional states uphold the principle of equality before the law. Sometimes a conflict arises between these two principles. If MPs enjoy broad immunity, the risk of impunity may arise, while if the immunity is too limited, legal or political persecution may ensue. Therefore, states seek balanced solutions to ensure both the independence of parliamentarians and the effective administration of justice.

The article proposes enshrining in constitutional law a provision stipulating that, when considering the waiver of immunity, the participation of a lawyer (defense counsel) as a counterweight to the prosecutor presenting the petition to parliament, at the member's discretion, should be considered mandatory. This not only complies with international practice but also serves as a guarantee of "equality of arms" and balance.

Аннотация. Цель исследования — показать, что в современных демократических государствах парламентская неприкосновенность (иммунитет) рассматривается преимущественно как функциональная гарантия независимости депутата, а не как личная привилегия, при этом международная практика демонстрирует тенденцию к её ограничению и усилению подотчётности.

Отмечается, что члены парламента, депутаты, обладают особым правовым статусом, важнейшим элементом которого является парламентская неприкосновенность (иммунитет). Вместе с тем принцип равенства всех перед законом может вступать в противоречие с широкими пределами иммунитета: его чрезмерное расширение создаёт риск безнаказанности, тогда как чрезмерное ограничение — риск политически мотивированного или юридического преследования. В этой связи государства стремятся к выработке сбалансированных механизмов, обеспечивающих как независимость парламентариев, так и эффективное осуществление правосудия.

На основе сравнительно-правового анализа международной практики в статье обосновывается необходимость закрепления на конституционном уровне положения об обязательном участии адвоката (защитника) при рассмотрении вопроса о лишении депутата иммунитета. Подчёркивается, что участие защитника, действующего в качестве процессуального противовеса прокурору, обращающемуся с соответствующим ходатайством в парламент, по выбору депутата, способствует обеспечению принципа равенства сторон и поддержанию процессуального баланса.

Բանալի բառեր *- խորհրդարան, պատգամավոր, պատգամավորական անձեռնմխելիություն, միջազգային փորձ, Վենետիկի հանձնաժողով, Եվրոպական խորհրդարան, ինդեմնիտետ, իմունիտետ, փաստաբան, դատախազ:*

Keywords: *parliament, member of parliament, parliamentary immunity, international experience, Venice Commission, European Parliament, compensation, immunity, lawyer, prosecutor.*

Ключевые слова: парламент, депутат, парламентский иммунитет, международная практика, Венецианская комиссия, Европейский парламент, компенсация, иммунитет, адвокат, прокурор.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում :

2. Հարությունյան Գ., «Սահմանադրական իրավունք», Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2016 թ., էջ 143:

3. Кутафин О.Е., Конституционное право России. Москва, Юрист, 2001 с. 113.

4. Баглай М.В., Конституционное право Российской Федерации. Москва, Норма, 2013, с. 97.
5. Марченко М.Н., Конституционное право зарубежных стран. Москва, Проспект, 2014, с. 162.
6. Чиркин В.Е., Парламентское право, Москва, Норма, 2006, с. 57.
7. Баглай М.В., Конституционное право зарубежных стран, Москва, Норма, 2007, с. 183.
8. Shaw M. N., Internacional Law. Cambridge: Cambridge Uniwersity Press, 2017, p. 76.
9. Nowak J. Rotynda R., Principles of constitycional Law StPayl: West academic Pyblishing, 2010. p. 128.
10. Erskine May, Parliamentary Privilece. London: Lexisnexis, 2011, p. 120.

Մանուկյան Մ. - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու, փաստաբան Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլհասցե՝ martin_manukyan_1955@mail.ru:

Հովհաննիսյան Վ. - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու, փաստաբան, իրավունքի մագիստրոս, էլհասցե՝ vhadvocate@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 16.03.2026 թ., տրվել է գրախոսության 16.03.2026 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

https://doi.org/10.59546/18290744-2026.4-6-196

ՀՈՎՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

HOVSEP KOCHARYAN
PhD in Law

ОВСЕП КОЧАРЯН
Кандидат юридических наук
https://orcid.org/0009-0005-5533-2605

ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ 7(1)(k) ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆ

LEGAL ISSUES OF CRIMES AGAINST HUMANITY IN THE CONTEXT OF ARTICLE 7(1)(k) OF THE ROME STATUTE: THE ARMENIAN LEGAL PERSPECTIVE

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ ЧЕЛОВЕЧНОСТИ В КОНТЕКСТЕ СТАТЬИ 7(1)(K) РИМСКОГО СТАТУТА: АРМЯНСКИЙ ПРАВОВОЙ ПОДХОД

The research was supported by the higher Education and Science Committee of MESCS RA (Research project N. 25YR-5E005)

Ներածություն

Հոդվածում քննարկվում են միջազգային քրեական իրավունքում մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները՝ Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի Ստատուտի 7-րդ հոդվածի համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվում 7(1)(k) ենթակետին, որը նախատեսում է «այլ անմարդկային գործողությունների» բաց ցուցակ: *Հոդվածում նաև* վերլուծվում է 7-րդ հոդվածի կիրառման բարդությունները՝ կապված հստակ չափանիշների բացակայության հետ, ինչպես նաև «*համանմանության*» և ընդարձակ մեկնաբանության ռիսկերի հետ: Հեղինակը նշում է, որ դա կարող է վտանգ ներկայացնել օրինականության սկզբունքի պահպանման համար: Բացի դրանից՝ հոդվածում ուսումնասիրվում է միջազգային տրիբունալների և ՄՔԴ-ի գործելակերպը, ինչպես նաև 7(1)(k) ենթակետի մեկնաբանման և կիրառման դոկտրինալ մոտեցումները:

Հիմնական հետազոտություն.

I. Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը/ իրավական բնութագիրը

Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները *(crimes against humanity)* հատուկ տեղ են զբաղեցնում միջազգային քրեական իրավունքի համակարգում՝ ներկայացնելով միջազգային հանցագործությունների ամենավտանգավոր և դատապարտելի ձևերից մեկը՝ *ցեղասպանության (genocide)*, *ռազմական հանցագործությունների (war crimes)* և *ագրեսիայի (aggression)* հետ զուգահեռ[1]: ՀՀ-ն՝ վավերացնելով Հռոմի ստատուտը *(Rome Statute of the International Criminal Court)*, ընդունել է ՄՔԴ-ի իրավազորությունը՝ այդ Ստատուտով նախատեսված երեք միջազգային հանցագործությունների, այդ թվում՝ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ, բացառությամբ ագրեսիայի հանցագործության[2]: :Հետևաբար, ՄՔԴ-ն իրավասություն ունի քննության առնելու ՀՀ-ի իրավազորության ներքո կատարված մարդկության դեմ ուղղված հանցագործությունները՝ Հռոմի Ստատուտով սահմանված պայմանների առկայության դեպքում[3]: Մարդասիրության սկզբունքը, ըստ էության, բխում է հայտնի «Մարտենսի վերապահումից» *(Martens clause)*[4]*:* Այդ վերապահման իմաստը կայանում է նրանում, որ պետությունների կողմից չնախատեսված դեպքերում քաղաքացիական բնակչությունը և պատերազմողները (կոմբատանտները) մնում են միջազգային իրավունքի սկզբունքների պաշտպանության և գործողության ներքո, քանի որ դրանք բխում են քաղաքակիրթ ժողովուրդների միջև հաստատված սովորույթներից, մարդասիրության օրենք-

1 Cassese, A. (2002). *'Crimes against Humanity'*, in Antonio Cassese, Paola Gaeta, and John RWD Jones (eds), *The Rome Statute of the International Criminal Court: A Commentary* (2002; online edn, Oxford Law Pro), https://doi.org/10.1093/law/9780199243129.003.0019.

2 Հարկ է նշել, որ ի տարբերություն մյուս միջազգային հանցագործությունների, ներառյալ մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների, ագրեսիայի հանցագործության մասով իրավիճակը տարբերվում է, քանի որ դրա նկատմամբ ՄՔԴ իրավազորության լիարժեք կիրառման համար անհրաժեշտ է նաև Կամպալայի փոփոխությունների *(Kampala Amendments)* վավերացումը ՀՀ-ի կողմից, որն իր հերթին նախատեսում է ագրեսիայի հանցագործության սահմանումն ու իրավազորության իրականացման հատուկ պայմանները: Քանի որ ՀՀ-ն դեռևս չի վավերացրել Կամպալայի փոփոխությունները, ՄՔԴ-ն, որպես ընդհանուր կանոն, չի կարող իրականացնել իր իրավազորությունը Հայաստանի քաղաքացիների կամ Հայաստանի դեմ կատարված ագրեսիայի հանցագործության նկատմամբ՝ պետությունների նախաձեռնած վարույթների շրջանակում: Սա նշանակում է, որ ՄՔԴ-ն, որպես ընդհանուր կանոն, չի կարող իր նախաձեռնությամբ *(proprio motu)* քննել Հայաստանի տարածքում կամ նրա դեմ կատարված ագրեսիայի հանցագործությունները: Այնուամենայնիվ, այս իրավական սահմանափակումը չի նվազեցնում ՀՀ քրեական օրենսգիրքը (ՀՀ ՔՕ) միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու կարևորությունը: Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ ագրեսիայի հանցագործության վերաբերյալ ՄՔԴ իրավազորությունը կարող է կիրառելի դառնալ նաև Կամպալայի փոփոխությունները չվավերացրած պետության նկատմամբ, եթե իրավիճակը Դատարանին փոխանցվի ԱԽ անվտանգության խորհուրդի *(United Nations Security Council)* կողմից՝ ՄԱԿ կանոնադրության VII գլխի հիման վրա: Ագրեսիայի հանցագործության՝ ՀՀ քրեական օրենսգրքում իրավական կարգավորման առանձնահատկություններին և առկա հիմնախնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ հետևյալ աշխատությունում՝ Kocharyan, H. (2026). The Crime of Aggression under the Rome Statute: Challenges of Cyberaggression and Information Sovereignty In the context of the Criminal Code of the Republic of Armenia. *Judicial Power,* Vol. Jan-Mar, 2026, Vol. 1-3, pp. 174-205. Available at: www.ajra.am/images/files/Judicial_Power/2026/15._Hovsep_Qocharyan.pdf

3 Petrossian, G. (2023). Armenia as the 124th Member to the Rome Statute. *Opinion Juris*. Available at: https://opiniojuris.org/2023/09/22/armenia-as-the-124th-member-to-the-rome-statute/

4 Meron, T. (2000). "The Martens Clause, Principles of Humanity, and Dictates of Public Conscience." *The American Journal of International Law*, Vol. 94, No. 1, 2000, pp. 78–89. https://doi.org/10.2307/2555232; See also: Stapleton-Coory, M. (2019). "The Enduring Legacy of the Martens Clause: Resolving the Conflict of Morality in International Humanitarian Law". *Adelaide Law Review*, Vol. 40, No. 2, pp. 471-484. Available at: https://law.adelaide.edu.au/ua/media/1011/ALR_40(2)_15_Stapleton-Coory_Web.pdf

ներից և հասարակական գիտակցության պահանջներից[5]: Հնարավոր է որոշակի զուգահեռ անցկացնել մարդկայնության դեմ ուղված հանցագործության համատեքստում օգտագործվող *«այլ անմարդկային արարքներ» (other inhumane acts)* հասկացության և *Martens Clause*-ի միջև: Երկուսն էլ միջազգային իրավունքում կատարում են «բացերը լրացնող» գործառույթ[6]: Մասնավորապես՝ Մարտենսի դրույթը ձևավորվել է այն նպատակով, որպեսզի միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանությունը չսահմանափակվի միայն հստակ կոդիֆիկացված նորմերով: Այն նախատեսում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ նոր զինատեսակները կամ պատերազմի նոր մեթոդները դեռևս իրավական հատուկ կարգավորում չունեն, պետությունները և հակամարտության մասնակիցները շարունակում են կապված մնալ մարդասիրության սկզբունքներով և հանրային խղճի պահանջներով: Այսպիսով, Մարտենսի դրույթը ծառայում է որպես իրավական «ապահովագրական մեխանիզմ» իրավունքի բացերի պայմաններում[7]: Նմանատիպ տրամաբանություն կարելի է տեսնել նաև *«այլ անմարդկային արարքներ»* կատեգորիայում մարդկայնության դեմ հանցագործությունների շրջանակում, որոնց կանդրադառնանք ավելի մանրամասն սույն աշխատության մեջ:

Մարդկայնության դեմ հանցագործությունները որպես միջազգային հանցագործությունների ինքնուրույն կատեգորիա առաջին անգամ ամրագրվեցին Նյուրնբերգյան դատավարության կանոնադրությամբ (1945 թ.)[8]: Հետագա զարգացումը արտացոլվեց ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի 1996 թ. նախագծում և Հռոմի ստատուտում (1998 թ.): Ավելին՝ մարդկայնության դեմ հանցագործությունների ավելի հստակ սահմանում տրվեց *“Prosecuter vs. Drazen Erdemovic”* դատական գործում[9]: Միևնույն ժամանակ, Ռուանդայի վերաբերյալ Միջազգային քրեական տրիբունալի որոշման մեջ *“Prosecuter vs. Akayesu”* դատական գործում մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները բնութագրելիս մի կողմից նրանք մատնանշվել են իրենց բնույթով որպես *անմարդկային գործողություններ, որոնք առաջացնում են ծանր տառապանքներ, ծանր մարմնական վնասվածքներ, ֆիզիկական կամ հոգեկան առողջության լուրջ վնաս*, իսկ մյուս կողմից առանձնացվել է *նշված գործողությունների ուղղվածությունը*, որոնք կատարվել են որպես *քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ համակարգված հարձակումների մաս՝ ազգային, քաղաքական, էթնիկական, ռասայական կամ կրոնական դրդապատճառներով*[10]:

Նշենք, որ 1996 թ. խմբագրությամբ խաղաղության և մարդկայնության անվտանգության դեմ հանցագործությունների օրենսգրքի նախագծի 18-րդ հոդվածում առաջին անգամ միջազգային մակարդակով ամրագրվեցին մարդկայնության դեմ հանցագործությունների երկու կարևոր կառուցողական հատկանիշներ՝ ***1) դրանց համակարգված ձևով կամ խո-***

[5] Giladi, R. (2014). The enactment of irony: Reflections on the origins of the Martens Clause. *European Journal of International Law*, Vol. 25, No. 3, pp. 847–869. https://doi.org/10.1093/ejil/chu053

[6] Ventura, M.J. & Sadat, L.N. The Illegal Use of Force (Other Inhumane Act) as a Crime Against Humanity: An Assessment of the Case for a New Crime at the International Criminal Court. In: *Seeking Accountability for the Unlawful Use of Force. Cambridge University Press*; 2018: pp. 386-424.

[7] von Bernstorff, J. (2009). Martens Clause. *Max Planck Encyclopedia of Public International Law [MPEPIL]*. Available at: https://opil.ouplaw.com/display/10.1093/law:epil/9780199231690/law-9780199231690-e327

[8] «Եվրոպական առանցքի երկրների գլխավոր ռազմական հանցագործներին դատելու և պատժելու համար ստեղծված Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրություն» (Լոնդոն, 8 օգոստոսի 1945 թ.):

[9] *Prosecuter vs. Drazen Erdemovic*. International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of the Former Yugoslavia since 1991. para. 28. Available at: https://www.icty.org/x/cases/erdemovic/tjug/en/erd-tsj961129e.pdf

[10] *Prosecutor v. Jean-Paul Akayesu*. International Criminal Tribunal for Rwanda. Case No. ICTR-96-4-T. Decision of: 2 September 1998. Available at: https://www.worldcourts.com/ictr/eng/decisions/1998.09.02_Prosecutor_v_Akayesu.pdf

շոր մասշտաբով կատարելը ("committed in a systematic manner or on a large scale"), և ***2) կառավարության, որևէ կազմակերպության կամ խմբի ղեկավարությամբ հրահրելը կամ իրականացնելը ("instigated or directed by a Government or by any organization or group")***[11]: Դա նշանակում է, որ նման գործողությունների իրավական գնահատման մեջ կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հանցավոր արարքի կազմն, այլև դրա կատարումը ***լայնածավալ*** *("on a large scale")* կամ ***համակարգված*** *("in a systematic manner")* համատեքստում: Այսպիսով, տվյալ արարքը չի կարող դիտարկվել մեկուսացված կերպով, այլ պետք է կազմի ավելի լայնածավալ գործողությունների կամ քաղաքականության մաս: Միևնույն ժամանակ, *«ցանկացած քաղաքացիական բնակչություն»* ձևակերպումը, իր հերթին, ընդլայնում է մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների կիրառության շրջանակը: Ավելին՝ *Tadić*[12] և *Blaškić*[13] գործերում նույնպես նշվում էր, որ լայնածավալ կամ համակարգված հարձակման պահանջը ենթադրվում է այն հանգամանքից, որ այդ հանցագործությունների թիրախը պետք է լինի *«բնակչությունը»:* Մասնավորապես, *«ցանկացած քաղաքացիական բնակչություն»* ձևակերպման մեջ *«ցանկացած»* բառը սկզբնապես օգտագործվել է ընդգծելու համար, որ մարդկայնության դեմ հանցագործությունների զոհերը պարտադիր չէ լինեն օտար պետության քաղաքացիներ: Այս մոտեցումը ձևավորվել է այն ժամանակաշրջանում, երբ մարդկայնության դեմ հանցագործությունները դեռևս կապվում էին պատերազմի իրավունքի *(jus in bello)* հետ: Ժամանակակից միջազգային քրեական իրավունքում *«ցանկացած»* եզրույթը ցույց է տալիս, որ քաղաքացիական բնակչության ոչ մի խումբ չի բացառվում իրավական պաշտպանության շրջանակից: Այսինքն՝ այն ենթադրում է *«քաղաքացիական բնակչություն»* հասկացության լայն մեկնաբանություն: Հետևաբար, *«ցանկացած քաղաքացիական բնակչություն»* արտահայտությունը հիմնականում մատնանշում է զոհերի բազմության առկայությունը: Տրիբունալների դատական պրակտիկան նաև հաստատել է, որ *«քաղաքացիական»* կարող են համարվել նաև այն անձինք, ովքեր տվյալ պահին անմիջական մասնակցություն չեն ունենում ռազմական գործողություններին: Դրանց թվում են՝ զենքը վայր դրած զինվորները, վիրավորված, կալանավորված կամ մարտունակությունից դուրս եկած անձինք, դիմադրության շարժման նախկին անդամները *(hors de combat)*[14]*:* Այսպիսով, որոշիչը ոչ թե անձի պաշտոնական կարգավիճակն է, այլ նրա կոնկրետ իրավիճակը հանցագործության կատարման պահին: Եթե անձը տվյալ պահին չի մասնակցում ռազմական գործողություններին, նա կարող է դիտվել որպես քաղաքացիական անձ: Բացի այդ, տրիբունալները նշել են, որ բնակչության քաղաքացիական բնույթը չի վերանում միայն այն պատճառով, որ տվյալ խմբում առկա են որոշ ոչ քաղաքացիական կամ զինված անձինք[15]: Եթե բնակչության մեծամասնությունը քաղաքացիական է, ապա այն շարունակում է համարվել *«քաղաքացիական բնակչություն»* միջազգային քրեական իրավունքի իմաստով[16]:

---

[11] Draft Code of Crimes against the Peace and Security of Mankind 1996. Available at: https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft_articles/7_4_1996.pdf

[12] *Prosecutor v. Dusko Tadic*. International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of Former Yugoslavia. Decision of 2 octobre 1995. Available at: https://www.icty.org/x/cases/tadic/acdec/en/51002.htm

[13] *Prosecutor v Blaškić* (Judgment) IT-95-14-A (ICTY, 29 July 2004).

[14] Nicholson, J. (2016). Is the Requirement That Crimes Against Humanity Be Committed Against a "Civilian Population" Really Necessary? *Opinion Juris*. Available at: https://opiniojuris.org/2016/07/04/is-the-requirement-that-crimes-against-humanity-be-committed-against-a-civilian-population-really-necessary/

[15] *Prosecutor v. Blaškić* - Para 115: The Trial Chamber also stated that the *"presence of soldiers within an intentionally targeted civilian population does not alter the civilian nature of that population."*

[16] *Prosecutor v. Stanislav Galić*. Judgement Summary. Appeals Chamber. The Hague, 30 November 2006. Available at:

Միևնույն ժամանակ, մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների իրավական սահմանումն ամրագրված է նաև Միջազգային Քրեական Դատարանի (ՄՔԴ) Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածում: Ըստ այդմ՝ մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ ասելով, պետք է հասկանալ Հռոմի Ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված ցանկացած արարք, որը կատարվել է *<u>քաղաքացիական բնակչության վրա</u> ("directed against any civilian population") <u>լայնածավալ կամ համակարգված (կանոնավոր) հարձակման շրջանակներում</u> ("committed as part of a widespread or systematic attack")*՝ պայմանով, որ *<u>կատարողը գիտակցի նման համատեքստում մասնակցության փաստը</u> ("with knowledge of the attack")*[17]: Հատկանշական է, որ *«with knowledge of the attack»* տարրը նշված չէ ՀՀ ՔՕ-ի դիսպոզիցիայում այն պարագայում, երբ Հռոմի ստատուտի համատեքստում մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունը կազմված է ոչ միայն օբյեկտիվ արարքներից, այլև հատուկ սուբյեկտիվ տարրից: Այսինքն՝ հանցակազմի պարտադիր տարր է կոնտեքստային գիտակցությունը *(contextual knowledge)*[18] *:* Օրենսդիրը, հավանաբար, հատուկ չի ամրագրել հարձակման մասին գիտակցման սուբյեկտիվ տարրը ՀՀ քրեական օրենսգրքի դիսպոզիցիայում մի քանի պատճառներով: Նախ, քրեական իրավունքում մեղքի և դիտավորության ընդհանուր կանոնները սովորաբար արդեն ենթադրում են, որ անձը պետք է գիտակցի իր գործողությունների բնույթն ու հանգամանքները: Այդ պատճառով օրենսդիրը կարող էր համարել, որ կոնտեքստային գիտակցությունը *(contextual knowledge)* բխում է հանցակազմի ընդհանուր սուբյեկտիվ տարրերից և կարիք չկա այն առանձին վերարտադրելու: Երկրորդ, ՀՀ ՔՕ-ը հաճախ օգտագործում է ավելի ընդհանուր և կարճ ձևակերպումներ՝ խուսափելով միջազգային փաստաթղթերի չափազանց մանրամասն կառուցվածքից: Հռոմի ստատուտը նախատեսված է միջազգային քրեական արդարադատության համար և այդ պատճառով առավել մանրակրկիտ է սահմանում ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ տարրերը: Երրորդ, հնարավոր է, որ օրենսդիրը նպատակ է ունեցել չսահմանափակել կիրառման շրջանակը չափազանց խիստ ապացուցողական պահանջով: *«Հարձակման մասին գիտակցությունը»* միջազգային քրեական իրավունքում բարդ ապացուցվող հանգամանք է, և դրա բացակայությունը դիսպոզիցիայում կարող է պայմանավորված լինել ազգային դատավարությունում ապացուցման գործընթացը չբարդացնելու ձգտմամբ: Բացի դրանից՝ *«հարձակման մասին գիտակցության»* տարրի հատուկ չվերարտադրումը կարող է բացատրվել նաև նրանով, որ Հռոմի ստատուտը տվյալ հարցում սահմանում է առավել բարձր և նեղ ապացուցողական նշաձող, մինչդեռ ազգային օրենսդիրը ձգտել է պահպանել ավելի լայն կարգավորման շրջանակ՝ ընդգրկելով այնպիսի իրավիճակներ ևս, որոնք կարող էին դուրս մնալ ստատուտի չափազանց խիստ չափանիշների կիրառման պայմաններում: Մենք հակված ենք այն կարծիքին, որ *«հարձակման մասին գիտակցության» (contextual knowledge)* համատեքստային տարրի բացակայությունը ՀՀ ՔՕ-ի 135-րդ հոդվածի դիսպոզիցիայում կարող է հանգեցնել այն իրավիճակին, երբ ազգային քրեական իրավակիրառ պրակտիկայում *«այլ անմարդկային արարքների»* հասկացությունը փաստացի ավելի լայն բովանդակություն կունենա, քան միջազգային քրեական իրավունքում, մասնավորապես՝ Հռոմի ստատուտի համապատասխան դրույթի իմաստով:

Հիմնական տարրը, որը տարբերակում է մարդկայնության դեմ ուղղված հանցագոր-

https://www.icty.org/x/cases/galic/acjug/en/061130_Galic_summary_en.pdf

[17] Article 7. *Crimes against humanity*. Rome Statute of the International Criminal Court. Available at: https://www.icc-cpi.int/sites/default/files/2024-05/Rome-Statute-eng.pdf

[18] Guénaël, M. (2020). 'Chapeau or Contextual Elements', *International Crimes: Law and Practice: Volume II: Crimes Against Humanity* (online edn, Oxford Law Pro), https://doi.org/10.1093/law/9780198860099.003.0005.

ծությունները այլ ծանր արարքներից, դա կատարման համատեքստն է: Այսինքն՝ վերոնշյալ գործողությունները պետք է լինեն ***քաղաքականության մի մաս*** *("organizational policy")*, որն ուղղված է քաղաքացիական բնակչության դեմ *("a course of conduct involving the multiple commission of acts against any civilian population")*: Նշենք, որ մարդկայնության դեմ հանցագործությունների կարևոր տարրերից է *«քաղաքականության տարրը» (policy element)*, այսինքն՝ հանցագործությունը պետք է որևէ կերպ կապված լինի պետության կամ տվյալ տարածքում փաստացի իշխանություն իրականացնող կազմակերպության քաղաքականության հետ:[19] Միջազգային տրիբունալների պրակտիկան հաստատել է, որ այդ քաղաքականությունը պարտադիր չէ ձևավորվի պաշտոնական պետական մակարդակով՝ այն կարող է բխել նաև որևէ կազմակերպությունից, որը փաստացի վերահսկում է տարածքը[20]: Քաղաքականությունը կարող է լինել ինչպես բացահայտ, այնպես էլ անուղղակի կամ փաստացի: Համակարգված հարձակման դեպքում քաղաքականությունը դրսևորվում է կազմակերպված և ուղղորդված գործողություններով, այսինքն՝ հարձակումն իրականացվում է նախապես մշակված ծրագրի կամ ուղղության համաձայն:[21] Լայնածավալ, բայց ոչ համակարգված հարձակման դեպքում քաղաքականությունը կարող է արտահայտվել նաև պետության կամ իշխանության կանխամտածված անգործությամբ՝ երբ այն, ունենալով միջամտելու հնարավորություն և պարտավորություն, գիտակցաբար չի կանխում զանգվածային հանցագործությունները: Այսպիսով, նույնիսկ հանցագործությունների հանդուրժումը կարող է դիտվել որպես քաղաքականության դրսևորում: Հետևաբար, թե՛ համակարգված, թե՛ լայնածավալ հարձակումների դեպքում անհրաժեշտ է որոշակի կապ պետության կամ փաստացի իշխանություն իրականացնող կառույցի քաղաքականության հետ: Այսինքն՝ վերը նշված արարքներից յուրաքանչյուրը, եթե այն կատարվել վերոնշյալ համատեքստում, ենթակա է որակման որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն *("crime against humanity")*՝ անկախ ներպետական օրենսդրությունից կամ զինված հակամարտության առկայությունից:

Ավելին, ինչպես 1996 թ. խմբագրությամբ խաղաղության և մարդկայնության անվտանգության դեմ հանցագործությունների օրենսգրքի նախագծի 18-րդ հոդվածում[22], այնպես էլ Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտի 7-րդ հոդվածում չեն նախատեսում, որ նման հանցագործությունները պետք է կատարվեն միայն պատերազմի ժամանակ կամ կապված լինեն խաղաղության դեմ հանցագործությունների կամ պատերազմական հանցագործությունների հետ: Օրինակ, Նախկին Հարավսլավիայի և Միջազգային քրեական տրիբունալի դատավարություններից մեկի ժամանակ նշվել է հետևյալը՝ *«ներկայումս սովորական միջազգային իրավունքի համընդհանուր ընդունված կանոն է, որ մարդկայնության դեմ հանցագործությունները անմիջական կապի կարիք չունեն միջազգային զինված հակամարտության հետ»* [23]*:* Այս օբյեկտիվ տարրերի համատեքստում ***«քաղաքացիական բնակչության դեմ***

[19] Mettraux G. (2011). The Definition of Crimes Against Humanity and the Question of a "Policy" Element. In: Sadat L.N., ed. Forging a Convention for Crimes against Humanity. *Cambridge University Press;* 2011: pp. 142-176.
[20] *Prosecutor v. Katanga and Ngudjolo Chui*, ICC-01/04-01/07, Decision on the Confirmation of Charges, 30 Sept 2008, para. 396.
[21] Schabas, W. A. (2008). State Policy as an Element of International Crimes. *The Journal of Criminal Law and Criminology* (1973-), Vol. 98, No. 3, pp. 953–982. http://www.jstor.org/stable/40042791
[22] Draft Code of Crimes against the Peace and Security of Mankind 1996. Available at: https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft_articles/7_4_1996.pdf
[23] Prosecutor v. Dusko Tadic. International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of Former Yugoslavia. Decision of 2 octobre 1995. Available at: https://www.icty.org/x/cases/tadic/acdec/en/51002.htm

<u>հարձակման»</u> *(“attack directed against any civilian population”)* տակ հասկացվում է մի վարքագիծ, որը ներառում է բազմակի գործողությունների իրականացում *(“multiple commission”)*, ինչպես նշված է Հռոմի Ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին կետում՝ որոնք իրականացվում են ցանկացած քաղաքացիական բնակչության դեմ *(“against any civilian population”)* և իրականացվում է այնպիսի պետական կամ կազմակերպչական քաղաքականության շրջանակներում, որը նպատակ ունի իրականացնել նման հարձակում *(“pursuant to or in furtherance of a State or organizational policy to commit such attack”)*: Այս գործողությունները պարտադիր չէ, որ ռազմական հարձակում լինեն, քանի որ նման հարձակման իրականացման նպատակ ունեցող քաղաքականությունը ենթադրում է, որ պետությունը կամ կազմակերպությունը կարող են ակտիվորեն խրախուսել այդ վարքագիծը որպես հարձակում քաղաքացիական բնակչության դեմ կամ դրդել դրան: Բացառիկ հանգամանքներում սա կարող է արտահայտվել նույնիսկ դիտավորությամբ կատարված անգործությամբ, որը գիտակցաբար ուղղված է նման հարձակմանը դրդելուն՝ թեև կառավարության կամ կազմակերպության որևէ գործողության բացակայությունը ինքնին չի կարող դիտվել որպես նման քաղաքականության իրականացման ապացույց: Իհարկե, սույն հարցը խնդրահարույց է, քանի որ տվյալ հանցագործությունը կարող է կատարվել նաև անգործությամբ՝ հաշվի առնելով, որ ՀՀ ՔՕ-ի 135-ի դիսպոզիցիայում օգտագործված *«արարք»* եզրույթը քրեական իրավունքում ներառում է ոչ միայն գործողությունը *(action)*, այլև անգործությունը *(omission)* անգործությամբ (օրինակ՝ բնաջնջման դեպքում): Այսինքն՝ *«քաղաքացիական բնակչության դեմ ուղղված հարձակում» (“attack directed against any civilian population”)* նշանակում է վարքագծի այնպիսի ընթացք, որը ներառում է 1-ին կետում նշված արարքների բազմակի կատարում որևէ քաղաքացիական բնակչության նկատմամբ՝ պետության կամ կազմակերպության քաղաքականությանը համապատասխան կամ այդ քաղաքականության իրականացմանն աջակցելու նպատակով:

ՀՀ ՔՕ-ում օգտագործվող *«արարք»* բառի շեշտադրումն իրավական տեսանկյունից թույլ է տալիս ենթադրել, որ պետությունը կամ խումբը կարող է *«հարձակվել»,* ինչպես դա նշված է Հռոմի Ստատուտում՝ պարզապես անգործությամբ, քանի որ ինչպես արդեն նշվել է *«արարք»* կարող է ընդգրկել ոչ միայն գործողությունները *(action),* այլ նաև անգործությունը *(omission):* Օրինակ՝ *Akayesu* գործով ICTR-ի դատական պալատը նշել է, որ հարձակումը կարող է արտահայտվել ինչպես բռնի գործողություններով (սպանություն, ոչնչացում, ստրկացում և այլն), այնպես էլ ոչ բռնի մեթոդներով, օրինակ՝ ապարտեիդի համակարգի հաստատմամբ կամ բնակչության նկատմամբ համակարգված ճնշմամբ[24]: Հետագա դատական պրակտիկան հստակեցրել է, որ հարձակումը ոչ թե մեկ առանձին հանցագործություն է, այլ բազմաթիվ հանցավոր արարքների ամբողջություն, որոնք իրականացվում են լայնածավալ կամ համակարգված կերպով: Միաժամանակ, ընդգծվում է, որ *«հարձակում»*-ը կարող է ներառել տարբեր բնույթի հանցագործությունների համակցություն՝ սպանություններ, բռնաբարություններ, տեղահանումներ և այլ անմարդկային արարքներ: Տրիբունալների մոտեցմամբ՝ պարտադիր չէ, որ հարձակումը կատարվի բազմաթիվ անձանց կողմից կամ տարբեր ժամանակահատվածներում՝ նույնիսկ մեկ անձի գործողությունը կարող է հանգեցնել բազմակի հանցագործությունների կատարման և, հետևաբար, կազմել *«հարձակում»*: Վերջապես, միջազգային քրեական իրավունքի շրջանակներում հաստատվել է, որ *«հարձակում»* հասկացությունը չի պահանջում ռազմական բնույթ և կարող է դրսևորվել ցանկացած համակարգված կամ լայնա-

[24] Prosecutor v. Jean-Paul Akayesu, Case No. ICTR-96-4-T, Judgment (2 September 1998), para. 581.

ծավալ գործողությամբ, որն ուղղված է քաղաքացիական բնակչության դեմ[25]:

ՀՀ ՔՕ-ի 135-րդ հոդվածը նախատեսում է հետևյալը՝ *1. Քաղաքացիական անձանց դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակման շրջանակում հետևյալ արարքներից որևէ մեկը կատարելը:* Ինչպես տեսնում ենք, դիսպոզիցիան, որը հիմնված է Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի տրամաբանության վրա, կառուցված է որպես բաց և համակցված նորմ, որտեղ պատասխանատվությունը պայմանավորվում է երեք հիմնական տարրով՝ *(ա) քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակում*, *(բ) այդ հարձակման քաղաքական կամ կազմակերպչական քաղաքականության առկայություն*[26], և *(գ) հոդվածի 1-ին մասում թվարկված արարքներից որևէ մեկի կատարում*: Այս կառուցվածքը ցույց է տալիս, որ տվյալ հանցակազմի էությունը ոչ թե առանձին գործողության ձևական բնույթն է, այլ դրա ինտեգրումը պետական կամ կազմակերպված քաղաքականության մեջ և դրա համակարգային բնույթը: Մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների դիսպոզիցիան միջանկյալ և ավելի լայն կառուցվածք ունի. այն չի պահանջում հատուկ ոչնչացման նպատակ (ի տարբերություն ցեղասպանության) և չի սահմանափակվում զինված հակամարտության առկայությամբ (ի տարբերություն զինվորական հանցագործությունների): Փոխարենը, այն կենտրոնանում է քաղաքացիական բնակչության նկատմամբ համակարգային կամ լայնածավալ հարձակման վրա, որը կարող է ներառել նաև խաղաղ ժամանակաշրջանում իրականացվող պետական կամ կազմակերպված բռնության քաղաքականություն:

II. Հռոմի ստատուտի 7(1)(k) ենթակետի մեկնաբանության սահմանները՝ օրինականության սկզբունքը

Չնայած թվացյալ որոշակիությանը, Հռոմի Ստատուտի 7-րդ հոդվածը կարող է գործնականում առաջացնել մի շարք խնդիրներ՝ բաց և ընդարձակ մեկնաբանության համատեքստում[27]: Առաջին հայացքից, ձևականորեն 7(1)*"a–j"* ենթակետերում շարադրված արարքների ցանկը ներկայացվում է որպես սպառիչ: Այնուամենայնիվ, 7(1)"k" ենթակետի ներառումը՝ *«համանման բնույթի այլ անմարդկային գործողություններ» («other inhumane acts of a similar character»)* պայմանականորեն բաց ցանկի է վերածում նշված հոդվածով ամրագրած մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները: Այսպես՝ Հռոմի Ստատուտի 7(1)(k) հոդվածի համաձայն, մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները կարող են կատարվել այնպիսի գործողությունների շրջանակում, որոնք ուղղակիորեն չեն նշվում, բայց ունեն ***«համանման բնույթ»*** *(«similar character»),* պայմանով, որ դրանք ենթադրում են *դիտավորյալ ծանր տառապանք կամ ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը լուրջ վնաս պատճառելը*: Այսպիսով, Հռոմի Ստատուտն, փաստորեն, թույլ է տալիս ներառել հանցավոր վարքի նոր, նախկինում հայտնի կամ ոչ տիպիկ դրսևորումներ, որոնք համապատասխանում են դաժանության և սոցիալական վտանգի աստիճանին արդեն իսկ ամրագրված արարքներին:

---

[25] International Criminal Tribunal for the former Yugoslavia, Prosecutor v. Kunarac et al., Case No. IT-96-23 & IT-96-23/1-A, Appeals Judgment, 12 June 2002, para. 86

[26] *Քաղաքացիական անձանց դեմ ուղղված հարձակում՝ քաղաքացիական անձանց դեմ ուղղված՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքների բազմակի կատարում, որոնք ձեռնարկվում են պետության կամ կազմակերպության՝ նման հարձակում իրականացնելուն ուղղված քաղաքականություն վարելու կամ այդ քաղաքականությանն աջակցելու նպատակով:*

[27] *Prosecutor v. Kayishema and Ruzindana*. International Criminal Tribunal for Rwanda. Case No. ICTR-95-1-T. Decision of 21 May 1999. Available at: https://www.worldcourts.com/ictr/eng/decisions/1999.05.21_Prosecutor_v_Kayishema_1.pdf; International Criminal Tribunal for Rwanda. Prosecutor v. Bagilishema. ICTR-95-IA-T. Delivered on: 8 June 2001. Available at: https://www.worldcourts.com/ictr/eng/decisions/2001.06.08_Prosecutor_v_Bagilishema.pdf

Մեկնաբանելով այս դրույթը՝ ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը նույնպես մատնանշել է, որ անհնար է ամրագրել մարդկայնության դեմ հանցագործություններ կազմող անմարդկային գործողությունների սպառիչ ցանկը[28]: Ընդ որում՝ ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի *(International Law Commission)* կողմից ***«այլ անմարդկային գործողություններ»*** հասկացությունն ինքնին սահմանափակ մեկնաբանություն է ստացել: Առաջին հերթին, արգելված գործողությունների այս կատեգորիան ընդգրկում է միայն լրացուցիչ գործողություններ, որոնք շատ նման են նախորդ ենթակետերում արդեն իսկ արտացոլված արարքներին: Եվ երկրորդ, նման գործողությունները պետք է իրականում վնաս պատճառեն մարդուն, ուղղակիորեն ուղղված լինեն նրա ֆիզիկական կամ մտավոր ամբողջականության, առողջության կամ մարդկային արժանապատվության դեմ: Սակայն 7(1)"k" ենթակետի կիրառման հիմնական դժվարությունը «***համանման***» *("similar")* հասկացության ճշգրիտ և գործառնական չափանիշների բացակայությունն է: Այս հանգամանքը պահանջում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համապարփակ իրավական վերլուծություն՝ որոշելու համար, թե արդյոք արարքների նոր ձևերը իրենց բնույթով, հետևանքների ծանրությունն ու ուղղվածությունը համեմատելի են նրանց հետ, որոնք արդեն ճանաչվել են մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ: Քանի որ գնահատումն իրականացվում է որակական համադրման միջոցով, մեր կարծիքով, դա ստեղծում է սուբյեկտիվ և ընդարձակ մեկնաբանման զգալի ռիսկեր, որոնք կարող են հակասել օրինականության սկզբունքին *(nullum crimen sine lege)*[29]*:* Օրինակ կարող են ծառայել այնպիսի արարքների որակելու փորձերը, ինչպիսիք են էկոցիդը[30], գենդերային խտրականությունը *(gender apartheid)* [31], դաժան ծեծերը (օրինակ, *Kordić*[32] գործով ներկայացված դեպքերը) և այլն[33]: Բացի դրանից՝ հանցագործությամբ պատճառված վնասը լայնորեն է դիտարկվում տվյալ համատեքստում: Այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական վնասով (ծանր վնասվածք, հաշմանդամություն), այնպես էլ զգալի հոգեկան խանգարումներով, ներառյալ տուժածների հոգեկան վիճակի երկարաժամկետ հետևանքները: Սա ընդլայնում է հանցագործությունների շրջանակը՝ հաշվի առնելով ոչ միայն անմիջական ֆիզիկական (մարմնական) ազդեցությունը, այլև երկարատև հոգեբանական վնասը:[34]

---

[28] MacNeil, G. (2021). Other Inhumane Acts: Development and Critique. In: *Legality Matters. International Criminal Justice Series*, Vol 28., T.M.C. Asser Press, The Hague. https://doi.org/10.1007/978-94-6265-443-3_5

[29] Haenen, I. (2013). Classifying Acts as Crimes Against Humanity in the Rome Statute of the International Criminal Court. *German Law Journal*. Vol. 14 No. 07, p. 821. Available at: https://germanlawjournal.com/wp-content/uploads/GLJ_Vol_14_No_07_Haenen.pdf

[30] Sharpston, E. (2022). From "Do Trees Have Rights?" to Wondering About Ecocide: Some Legal Reflections. *Environmental Policy and Law*, Vol. 52, No. 2, pp. 117-131.; See also: Higgins, Polly *et al.*, (2013). Protecting the planet: a proposal for a law of ecocide. *Crime Law Soc Change*. Vol. 59, pp. 251–266 (2013). https://doi.org/10.1007/s10611-013-9413-6

[31] Grey, R. (2025). On Hope, Reform and Risk: The Rome Statute's Definition of 'Gender' and the Crimes Against Humanity Convention. *European Journal of International Law*. Vol. 36, No. 2, pp. 369–398. https://doi.org/10.1093/ejil/chaf026

[32] Prosecutor v. Kordić & Čerkez, Case No. IT-95-14/2-A, Judgment (Int'l Crim. Trib. for the Former Yugoslavia Dec. 17, 2004).

[33] Maučec, Gregor (2021). Law Development by the International Criminal Court as a Way to Enhance the Protection of Minorities—the Case for Intersectional Consideration of Mass Atrocities. *Journal of International Dispute Settlement*. Vol. 12, No. 1, pp. 42–83, https://doi.org/10.1093/jnlids/idaa029

[34] ICTY, *Prosecutor v. Delalić et al.,* ''Judgement", IT-96-21-T, 16 November 1998, para. 1034. *"Prosecutor v. Delalić"* գործով դատական պալատը նշել է. *«Վերոնշյալ փաստերը վկայում են, որ Դրագան Կուլյանինը բազմաթիվ անգամ դիտավորությամբ ենթարկվել է վատ վերաբերմունքի իր կալանքի ընթացքում Չելեբիչի ճամբարում: Դատական պալատը եզրակացնում է, որ վերը նկարագրված ծեծերը պարոն Կուլյանինին պատճառել են լուրջ տառապանք և ֆիզիկական վնասվածքներ: Հետևաբար, վերը նշված յուրաքանչյուր առանձին վատ վերաբերմունքի դրվագի վերաբերյալ, Դատական պալատը գտնում է, որ Մարտական գործողությունների կանոնագրքի 2-րդ հոդվածի*

Կարելի է ենթադրել, որ 7(1)"k" ենթակետի դատական մեկնաբանության համատեքստում ՄՔԴ-ն կարող է անխուսափելիորեն հայտնվել «ստեղծագործ մեկնաբանի» դիրքում, որն անցնում է Հռոմի Ստատուտի տեքստի սահմաններից դուրս[35]: Դա իր հերթին կարող է գնահատվել որպես հետին թվով նորմատիվ իրավաստեղծ գործունեություն: Նախադեպային կայուն պրակտիկայի բացակայության պայմաններում սա ստեղծում է ՄՔԴ-ի համար իրավական որոշակիության վակուում, հատկապես՝ արարքների համադրելի ծանրության չափանիշների և անալոգիայի կիրառման թույլատրելի սահմանների հարցում[36]: Չնայած Հռոմի ստատուտի մեջ 7(1)"k" ենթակետի առկայությանը, ՄՔԴ-ն հազվադեպ է դիմում դրա օգտագործմանը հանցագործությունների որակավորման մեջ: Օրինակ՝ Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի, Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալի և հենց ՄՔԴ-ի պրակտիկան ցույց է տալիս, որ դեպքերի ճնշող մեծամասնությունում դատարանները նախընտրում են ապավինել հանցագործությունների հատուկ թվարկված բաղադրություններին՝ խուսափելով բաց կատեգորիաների դիմելուց[37]: Մեր կարծիքով, դա պայմանավորված է ինչպես իրավական որոշակիություն ապահովելու անհրաժեշտությամբ, այնպես էլ կամայական և հետահայաց իրավապահ մարմինների մեղադրանքներից խուսափելու ցանկությամբ: Օրինակ՝ "*Prosecutor v. Slobodan Milosevic"* գործում մարդկայնության դեմ հանցագործությունների որակավորումն իրականացվում էր ավանդական կատեգորիաներով, ինչն ապահովում էր իրավական որոշակիության բարձր աստիճան և նվազեցնում էր ընդարձակ մեկնաբանման ռիսկը[38]: Հռոմի Ստատուտի 7(1)"k" ենթակետը օգտագործվել է չափազանց հազվադեպ և միայն այն դեպքերում, երբ արարքներն իսկապես ունեցել են անմարդկային գործողությունների բնութագիր, բայց չեն տեղավորվել կոնկրետ ենթակետերի համատեքստում[39]: Դա բացատրվում է օրինականության սկզբունքի *(nullum crimen sine lege)* և միջազգային քրեական իրավունքի զարգացման պայմաններում իրավապահ մարմինների ճկունության պահանջների միջև հավասարակշռման անհրաժեշտությամբ[40]: Մասնավորապես՝ "*Prosecutor v. Katanga, ICC-01/04-01/07"* գործում դատարանը, այնուամենայնիվ, թողնում է տերմինի ընդլայնման համար էական հնարավորություններ՝ նշելով, որ *«այլ անմարդկային գործողությունների»* իմաստը որոշելու համար պետք է ուշադրություն դարձնել միջազգային մարդու իրավունքների իրավունքին *(international human rights law)*[41]: Սակայն եթե ուշադրություն դարձնենք, դա նշանակում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ հանցագործությունը դասվում է թվարկված հան-

հիման վրա՝ դիտավորությամբ մեծ տառապանք կամ լուրջ վնաս պատճառելու հանցագործությունը, ինչպես նաև 3-րդ հոդվածով սահմանված դաժան վերաբերմունքը, ապացուցված են կասկածից վեր»:

[35] MacNeil, G. (2021). Other Inhumane Acts: Development and Critique. In: Legality Matters. International Criminal Justice Series, vol 28. T.M.C. Asser Press, The Hague. https://doi.org/10.1007/978-94-6265-443-3_5

[36] ICC, *Prosecutor v. Muthaura, Kenyatta and Ali*, "Decision on the Confirmation of Charges Pursuant to Article 61(7)(a) and (b) of the Rome Statute", ICC-01/09-02/11, 23 January 2012, para. 277.

[37] Roberts, Ch. (2017). On the Definition of Crimes Against Humanity and Other Widespread or Systematic Human Rights Violations. *University of Pennsylvania Journal of Law and Social Change*. Available at: https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1202&context=jlasc

[38] ICTY, *Prosecutor v. Slobodan Milosevic* (Decision on Motion for Judgement of Acquittal). Case No. IT-02-54-T Date: 16 June 2004. Available at: https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2004/58449

[39] Morris, V. & Scharf, M.P., An Insider's Guide to The International Criminal Tribunal for the Former Yugoslavia, vol. 1 (Transnational Publishers, Irvington-on-Hudson, 1995).

[40] Wetherill, M.A. (2019) *Judicial Interpretation and Nullum Crimen Sine Lege at the International Criminal Court: An Exercise in Utilizing 'Other Inhumane Acts' under Crimes Against Humanity*. Doctor of Philosophy (PhD) thesis, University of Kent,. (KAR id:81863)

[41] ICC, *Prosecutor v. Germain Katanga*, Trial Chamber II's Judgement pursuant to article 74 f the Statute, ICC-01/04-01/07, 7 March 2014, Available at: https://www.icc-cpi.int/Pages/record.aspx?docNo=ICC-01/04-01/07-3436

ցագործությունների շարքին, ՄՔԴ-ն կարող է իր իրավասությունը կիրառել միայն հետևյալ երեք պայմաններից որևէ մեկի կատարման դեպքում. *1) եթե որևէ անդամ պետություն դիմում է դատախազին տվյալ իրավիճակով զբաղվելու համար, 2) եթե ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը փոխանցում է իրավիճակը դատախազին,* կամ *3) եթե Դատարանի դատախազն ինքն է նախաձեռնում քննություն և սրանում է նախաքննական պալատի թույլտվությունը քննություն սկսելու համար (proprio motu)*[42]: Այսինքն՝ շատ դեպքերում, *«այլ անմարդկային գործողությունների»* որակավորումը կախված է պետությունից, ՄԱԿ-ի ԱԽ-ից կամ Դատախազից:

"*Prosecutor v. Dominic Ongwen"* գործով, դատարանը քննարկել է՝ արդյոք հարկադրաբար ամուսնությունը կարելի է դիտարկել որպես սեռական ստրկության արդեն թվարկված հանցանք, թե այն *«այլ անմարդկային գործողություն»* է[43]:Դատարանը գտավ, որ հարկադրաբար ամուսնությունը *(forced marriage)* համարվում է *«այլ անմարդկային գործողություն»,* քանի որ այն էապես տարբերվում է սեռական ստրկության հանցանքից: Զգալի կարևորությամբ, դատարանը ձևակերպեց մի թեստ, որով որոշվում է՝ արդյոք որևէ գործողություն կարող է իրավաչափ կերպով որակվել որպես *«այլ անմարդկային գործողություն»*: Այդ թեստը կարելի է ձևակերպել երկու բաղադրիչով՝ *1) <u>կատարողը պատճառում է մեծ տառապանք կամ լուրջ վնաս մարմնի, հոգեկան կամ ֆիզիկական առողջությանը</u>* և *2) <u>գործողությունը պետք է լինի համարժեք լրջության՝ համեմատելի մյուս թվարկված հանցանքների հետ</u>*[44]: Բացի դրանից՝ դատարանը շեշտեց, որ պետք է բավարարել նաև Հոդված 7-ի ընդհանուր պահանջները, ներառյալ՝ այն, որ կատարողը պետք է գործի՝ իմանալով, որ իր գործողությունները հանդիսանում են քաղաքացիական բնակչության դեմ իրականացվող լայնածավալ կամ համակարգված հարձակման մաս[45] :Միևնույն ժամանակ, *"Prosecutor v. Muthaura, Kenyatta and Ali"* գործով, դատարանը նշեց, որ գործողությունները, որոնք արդեն դասակարգված են որպես թվարկված հանցանքներ, չի կարելի կրկնակի կերպով որակել որպես *«այլ անմարդկային գործողություններ»:* Դատարանը ընդգծեց, որ հոդված 7(1)(k)-ը պետք է *«մեկնաբանվի պահպանողական ձևով»* [46] *:* Այսինքն, դատարանը գտավ, որ լուրջ ֆիզիկական վնաս հասցնող գործողությունները և դեպքերը, երբ ընտանիքի անդամներին ստիպել են ականատես լինել իրենց հարազատների սպանությանը կամ խեղմանն, համապատասխանում են *«այլ անմարդկային գործողությունների»* սահմանմանը, քանի որ զոհերին պատճառված վնասը համարժեք էր թվարկված հանցագործությունների ծանրությանը: Սակայն դատարանը եզրակացրեց, որ զոհերի գույքի ոչնչացումը չի համարվում *«այլ անմարդկային գործողություն»*, քանի որ ապացույցները ցույց չեն տվել, որ այդ գործողությունները հանգեցրել են *«հոգեկան առողջությանը լուրջ վնասի»*՝ ինչպես պահանջվում է սահմանման մեջ: *"Prosecutor v. Laurent Gbagbo and Charles Blé Goudé"* գործով, պալատը գտավ, որ կան բավարար հիմքեր եզրակացնելու, որ զոհերին տարբեր հարձակումների ընթացքում հասցված վնասվածքները կարող են որակվել որպես *«այլ անմարդկային գործողություններ»*, քանի որ այդ գործողությունները *«բնույթով նման էին Հոդված 7(a)-ում թվարկված այլ գործողություններին... [և] պատճառել են մեծ տառա-*

[42] Art. 27; *Prosecutor v. Omar Hassan Ahmed Al-Bashir*, ICC-02/05-01/09 OA2, Judgment in the Jordan Referral re Al-Bashir Appeal, 113 (May 6, 2019) (confirming that there is an *"absence of a rule of customary international law recognizing Head of State immunity before international courts in the exercise of jurisdiction"*).

[43] ICC, *Prosecutor v. Dominic Ongwen*. ICC-02/04-01/15-1762-Red. 04 February 2021. Trial Chamber IX. Decision. Available at: https://www.icc-cpi.int/court-record/icc-02/04-01/15-1762-red

[44] Ibid.

[45] Ibid.

[46] ICC, *Prosecutor v. Muthaura, Kenyatta and Ali,* "Decision on the Confirmation of Charges Pursuant to Article 61(7)(a) and (b) of the Rome Statute", ICC-01/09-02/11, 23 January 2012, para. 269.

պանք և լուրջ մարմնական վնասվածքներ»[47] *:* Միևնույն ժամանակ, *"Prosecutor v. Kupreskic"* գործով տրիբունալը որոշեց, որ տրիբունալի կանոնադրության 5(i) հոդվածով նախատեսված *«այլ անմարդկային գործողությունները»* չափազանց անճշգրիտ են և ընդհանրական, որպեսզի կարողանան հանդիսանալ վստահելի չափանիշ Տրիբունալի աշխատանքի համար, և, հետևաբար, հակասում են քրեական իրավունքի «հստակության» սկզբունքին[48]: Այնուամենայնիվ, դատավորները որոշեցին, որ այդ արգելքը նախատեսված է որպես պահուստային կարգավիճակ ունեցող դրույթ, և պալատը կարող է դիմել միջազգային մարդու իրավունքների իրավունքին *(international human rights law)*՝ *«որոշելու մարդու հիմնարար իրավունքների մի շարք, որոնց խախտումը կարող է, կախված ուղեկցող հանգամանքներից, կազմել մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն»* [49] :

Փաստորեն, 7(1)"k" ենթակետը մնում է պոտենցիալ, բայց չիրականացված կարգավորմամբ մեխանիզմ, որը հայեցակարգային բաց է ստեղծում նորմի և դրա կիրառման միջև: Չնայած ՄՔԴ-ի պրակտիկայում 7(1)"k" ենթակետի սահմանափակ կիրառմանը, առանձին նախադեպեր թույլ են տալիս հետևել դրա մեկնաբանման փորձերին: Օրինակ, *"Prosecutor v. Thomas Lubanga Dyilo"* դատարանը քննարկեց երեխաների որպես զինվորներ օգտագործումը որպես մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն որակելու հարցը: Չնայած *Thomas Lubanga Dyilo-ն*, ի վերջո, դատապարտվեց պատերազմական հանցագործությունների համար, քննարկման ընթացքում քննարկվեց անչափահասների դեմ ուղղված որոշակի գործողություններ որակելու հնարավորությունը որպես «***<u>այլ անմարդկային գործողություններ»</u>***[50]:Սա նշանակալի ներդրում է դարձել "k" ենթակետի մեկնաբանության զարգացման գործում: Նմանապես, *"Prosecutor v. Jean-Pierre Bemba Gombo"* գործով, դատարանը, ուսումնասիրելով սեռական բռնության ծավալները, դիտարկել է 7(1)"k" ենթակետի շրջանակներում բռնության որոշակի ձևերի ճանաչման հնարավորությունը, որպես գործողություններ, որոնք առաջացրել են ծանր տառապանքներ արդեն նշված ձևակերպումների շրջանակներից դուրս: Չնայած դատավճիռը հետագայում չեղյալ հայտարարվեց, 7(1)"k" հոդվածի լույսի ներքո այդ

[47] *Prosecutor v. Laurent Gbagbo and Charles Blé Goudé* ICC-02/11-01/15. Available at: https://www.icc-cpi.int/cdi/gbagbo-goude

[48] *Prosecutor v. Kupreskic et al.* (Trial Judgement). Case No.: IT-95-16-T. 14 January 2000. Available at: https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2000/91846

[49] Սակայն, մեր կարծիքով, այս հիմնավորումը բավարար չէ մի քանի պատճառներով: Նախ՝ մարդու իրավունքների սկզբունքները պաշտպանում են օրինականության սկզբունքը՝ այլ ոչ թե խաթարում այն: Երկրորդ՝ ակնկալել, որ մեղադրյալը կարող էր կանխատեսել իր արարքի հանցավոր լինելը՝ հիմնվելով միջազգային իրավունքի բազմաթիվ և ոչ համակարգված աղբյուրների համադրության վրա, անիրատեսական է և հակասում է առողջ տրամաբանությանը: Բացի դրանից՝ միջազգային քրեական իրավունքը նախատեսված չէ այս կերպ գործելու համար: Այլ կերպ ասած, իրավունքի մեկ ոլորտի բովանդակային էությունը չպետք է կախված լինի պատահական հղումներից դեպի այլ իրավական համակարգեր: Չորրորդ՝ այս համակարգը պետք է ինքն իրեն ուղղած լիներ՝ հստակ սահմանելով այդ հանցագործությունները: Ինչպես նշում է M. Cherif Bassiouni-ն. *«Այս բառերին բովանդակություն և նյութ տալը և հստակ իրավական տարրեր սահմանելը, որոնք կդարձնեին դրանք հանցավոր արարքներ, խնդիր էր 1946 թվականին: Սակայն այս խնդիրները 50 տարի անց էլ չլուծված թողնելը՝ առավել մտահոգիչ է»:* Նա նաև ընդգծում է տարբերությունը քրեական իրավունքի մասնագետի («պենալիստ») և հանրային միջազգային իրավունքի մասնագետի («փաբլիսիստ») միջև: Առաջինը, իբր, կողմնակից է օրինականության խիստ սկզբունքին, իսկ երկրորդը՝ հարմարավետ է գործում միջազգային հանցագործությունների համար բաց ավարտով իրավական աղբյուրների կիրառմամբ: M. Cherif Bassiouni-ն նաև նշում է, որ *«Փաբլիսիստի համար այն փաստը, որ այս բառերը ժամանակի ընթացքում պահպանվել են և վերահաստատվել են հաջորդող փաստաթղթերում, դրանք ավելի ուժեղ է դարձնում: Իսկ պենալիստի համար՝ հստակության բացակայությունը չի կարող վերացվել ոչ ժամանակով, ոչ կրկնությամբ»:*

[50] ICC, *The Prosecutor v. Thomas Lubanga Dyilo*, ICC601/04601/06, Pre-Trial Chamber I, Decision on Confirmation of Charges, 29 January 2007, available at: http://www.icc-cpi.int

գործողությունների կարգավիճակի իրավական քննարկումը ընդգծում է նախադեպային բազայի առկայությունը, թեկուզ մասնատված: Այսպիսով, չնայած ՄՔԴ-ն հաճախ ուղղակիորեն չի անդրադառնում 7(1)"k" ենթակետին, որպես հիմնական որակավորման տարր, դրա նշանակությունը աստիճանաբար աճում է մարդկայնության դեմ հանցագործությունների շրջանակի ընդլայնման համատեքստում՝ հատկապես բռնության նոր ձևերի քննարկման ժամանակ, որոնք ընդգրկված չեն ավանդական ցուցակում[51]:

Բացի դրանից՝ միջազգային քրեական իրավունքում *«այլ անմարդկային արարքներ» (other inhumane acts)* որպես մարդկության դեմ հանցագործություն և պատերազմական հանցագործություններ միջև առաջանում է նաև *lex specialis derogat generali*-ի խնդիրը, ինչպես նաև իդեալական համակցություն հարցը[52]: Քանի որ *«այլ անմարդկային արարքները»* նախատեսված են որպես բաց կատեգորիա՝ ընդգրկելու այնպիսի ծանր գործողություններ, որոնք իրենց բնույթով համեմատելի են մարդկության դեմ հանցագործությունների մյուս ձևերի հետ, սակայն հստակ սահմանված չեն Ստատուտում, նույն փաստական վարքագիծը հաճախ կարող է որակվել նաև որպես պատերազմական հանցագործություն: Այս իրավիճակում առաջանում է հարց՝ արդյոք նույն արարքը կարող է միաժամանակ գնահատվել և՛ որպես պատերազմական հանցագործություն, և՛ որպես մարդկայնության դեմ հանցագործության տեսակ՝ *«այլ անմարդկային արարքներ»:* Դատարանների պրակտիկայում հաճախ կիրառվել է *lex specialis derogat generali* սկզբունքը[53]: Ըստ այս մոտեցման՝ եթե նույն արարքը միաժամանակ ընդգրկվում է ընդհանուր և ավելի հատուկ նորմերով, ապա գերակայություն է տրվում առավել հատուկ նորմին: Դատավոր Cassese-ի տեսակետով, երբ նույն փաստը կարող է որակվել և՛ որպես պատերազմական հանցագործություն, և՛ որպես մարդկության դեմ հանցագործություն, հաճախ վերջինս դիտվում է որպես ավելի հատուկ նորմ, որովհետև այն պահանջում է լրացուցիչ համատեքստային տարր՝ լայնածավալ կամ համակարգված հարձակում քաղաքացիական բնակչության դեմ[54] :Այս մոտեցումը արտահայտվել է նաև *Prosecutor v. Kupreškić* գործում, որտեղ դատարանը նշել էր, որ երկու իրավախախտումների հարաբերակցությունը կարելի է պատկերացնել «համակենտրոն շրջանների» տեսքով. մեկը ավելի լայն է և ամբողջությամբ ներառում է մյուսը[55]: Այսպիսով, պատերազմական հանցագործությունը կարող է հանդիսանալ ավելի ընդհանուր արգելք, մինչդեռ մարդկության դեմ հանցագործությունը՝ ավելի կոնկրետ և ծանրացված որակում՝ իր համատեքստային տարրերի շնորհիվ: Սակայն միջազգային տրիբունալները ամբողջությամբ չեն բացառել նույն փաստերի հիման վրա միաժամանակյա մեղադրանք առաջադրելու հնարավորությունը: Այստեղ է առաջանում իդեալական համակցության գաղափարը, որը մայրցամաքային քրեական իրավունքում նշանակում է, որ մեկ արարքով խախտվում են մի քանի քրեական նորմեր[56]: Տրիբունալների պրակտիկան

[51] ICC, *The Prosecutor v. Jean-Pierre Bemba Gombo*. No. ICC-01/05-01/13 A6 A7 A8 A9. Date: 8 March 2018. Available at: https://worldcourts.com/icc/eng/decisions/2018.03.08_Prosecutor_v_Bemba_Gombo_3.pdf

[52] Palombino, F.M. (2016). Cumulation of offences and purposes of sentencing in international criminal law: A troublesome inheritance of the Second World War. International Comparative Jurisprudence Vol. 2, Issue 2, December 2016, pp. 89-92. https://doi.org/10.1016/j.icj.2017.02.003

[53] Reaching the sentencing stage, the ICTY has delivered concurrent sentences for offences that were cumulatively charged in relation to the same set of facts. *Prosecutor v. Tadic*, 14 November 1995; *Prosecutor v. Delalic (the Celebici case),* 16 November 1998, *Prosecutor v. Furundzija*, 10 December 1998.

[54] Separate Opinion of Judge Cassese, *Prosecutor v. Tadic*, 26 January 2000, para. 7.

[55] *Prosecutor v. Kupreskic*, 14 January 2000, para. 683

[56] Walther, S. (2002). 'Cumulation of Offences', in Antonio Cassese, Paola Gaeta, and John RWD Jones (eds), The Rome Statute of the International Criminal Court: A Commentary (2002; online edn, Oxford Law Pro), https://doi.org/10.1093/law/9780199243129.003.0023

ընդունում էր, որ նույն փաստերի հիման վրա հնարավոր է կուտակային որակում *(cumulative charging)*[57], եթե՝ *1) հանցակազմերը ունեն տարբեր տարրեր*; *2) դրանք պաշտպանում են տարբեր իրավական օբյեկտներ;* և *3) երկու որակումներն էլ անհրաժեշտ են մեղադրյալի վարքագիծը լիարժեք նկարագրելու համար:* Այս տրամաբանությամբ նույն գործողությունը կարող էր միաժամանակ դիտվել որպես պատերազմական հանցագործություն և *«այլ անմարդկային արարք»,* քանի որ առաջինը պաշտպանում է զինված հակամարտության ընթացքում հումանիտար կարգը, իսկ երկրորդը՝ քաղաքացիական բնակչության հիմնարար իրավունքները լայնածավալ կամ համակարգված հարձակման պայմաններում: Այսպիսով, *«այլ անմարդկային արարքների»* և պատերազմական հանցագործությունների հարաբերակցությունը միջազգային քրեական իրավունքում ցույց է տալիս երկու մրցակցող մոտեցումների գոյությունը՝ *lex specialis* մոտեցումը ձգտում է խուսափել նույն արարքի կրկնակի իրավական գնահատումից՝ նախապատվություն տալով առավել հատուկ նորմին, մինչդեռ իդեալական համակցության մոտեցումը թույլ է տալիս նույն վարքագծի բազմակի որակում, եթե տարբեր նորմերը պաշտպանում են տարբեր օբյեկտներ և ունեն տարբեր տարրեր: Միջազգային տրիբունալների զարգացող պրակտիկան ցույց է տալիս, որ այս հարցում չկա ամբողջովին միասնական լուծում, սակայն ընդհանուր միտումը հավասարակշռություն գտնելն է՝ մեկ կողմից ապահովելով հանցագործության ամբողջական իրավական նկարագրությունը, մյուս կողմից՝ խուսափելով անարդար կրկնակի դատապարտումից:

III. 7(1)(k) ենթակետի կիրառումը՝ ՀՀ ՔՕ 135-րդ հոդվածի համատեքստում

ՀՀ ՔՕ 135-րդ հոդվածը սահմանում է քրեաիրավական պատասխանատվություն մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների համար, որոնք իրականացվել են քաղաքացիական անձանց դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակումների շրջանակներում: Հանցակազմը ձևավորված է հիմնականում Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի դրույթների հիման վրա: Սակայն, չնայած համակարգային նմանությանը, ՀՀ ՔՕ 135-րդ հոդվածը, մեր կարծիքով, իր ներկայիս խմբագրությամբ չի արտացոլում Հռոմի ստատուտի, ինչպես նաև նախադեպային մեկնաբանությունների ամբողջականությունն ու բազմաբնույթ կիրառություններն, որոնք ձևավորվել են Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ), նախկին Հարավսլավիայի (ICTY) և Ռուանդայի (ICTR) հարցերով տրիբունալների իրավասության ներքո կայացված որոշումներում: Օրինակ, դատական պրակտիկան (օրինակ՝ ICTY և ICC որոշումները) ընդգծում է այնպիսի արարքների վտանգավորությունը, ինչպիսիք են *սննդից, ջրից, դեղորայքից կամ բժշկական օգնությունից դիտավորությամբ զրկելը*[58]: Չնայած ՀՀ օրենսդրությունում այսպիսի գործողությունները տեսականորեն հնարավոր է ներառել *«բնաջնջման»* կամ այլ հոդվածների ընդհանուր շրջանակում, դրանք ներկայում չեն դիտարկվում որպես առանձին անմարդկային արարքներ՝ ինքնուրույն հանցակազմի տեսակետից: Նմանապես, բացակայում է իրավական հստակ կարգավորումը՝ կապված *բժշկական կամ կենսաբանական փորձարկումների հետ*, որոնք իրականացվում են առանց անձի կամավոր համաձայնության խաղաղ պայմաններում[59]: Մինչդեռ այդ արարքները միջազգային քրեական իրավունքում հա-

[57] United Nations - International Residual Mechanism for Criminal Tribunals. Available at: https://cld.irmct.org/notions/show/221/cumulative-charging

[58] International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of Former Yugoslavia since 1991. *Prosecutor v. Stanislav Galic*. Case No. IT-98-29-T. Date: 5 December 2003. Available at: https://www.refworld.org/jurisprudence/caselaw/icty/2003/40194

[59] Bikundo, E. (2020). "Chapter 3 The Case for Decoupling Unlawful Experiments from the Armed Conflict Nexus".

մարվում են մարդու արժանապատվության կոպիտ ոտնահարում՝ հաճախ հավասարեցվող խոշտանգման *(torture)* կամ անմարդկային վերաբերմունքի այլ ձևերին:

Ավելին՝ ՀՀ ՔՕ-ի 135-րդ հոդվածի համատեքստում խնդրահարույց է նաև այն հանգամանքը, որ որոշ արարքներ, որոնք կատարվել են մահացած մարմինների նկատմամբ, փաստացի դուրս են մնում դասական ձևակերպված դիսպոզիցիաների շրջանակից, թեև իրենց ծանրությամբ և սոցիալական ազդեցությամբ դրանք համադրելի են կենդանի անձանց նկատմամբ իրականացվող անմարդկային գործողությունների հետ: Այս առումով հատկանշական է *Prosecutor v. Niyitegeka* գործը՝ կապված Ռուանդայի ցեղասպանության համատեքստում կատարված գործողությունների հետ[60]: Դատական քննության ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ մեղադրյալը ներկա է գտնվել թութսի համայնքի ներկայացուցիչների սպանությանը, այդ թվում՝ Ասիել Կաբանդայի գլխատմանը և ամորձատմանը, ինչպես նաև նրա մարմնի նկատմամբ հետմահու դաժան վերաբերմունքին, երբ կտրված սեռական օրգանները ցուցադրաբար օգտագործվել են որպես վախի և նվաստացման միջոց և մահացած կնոջ մարմնի նկատմամբ սեռական բնույթի գործողության կատարմանը[61]: Դատարանը կիրառել է *«ծանրության համադրելիություն» (seriousness comparable)* մոտեցումը՝ փաստելով, որ տվյալ արարքները, թեև բառացիորեն չեն համընկնում հանցակազմում թվարկված վարքագծերի հետ, իրենց էությամբ համադրելի են դրանց ծանրության աստիճանին[62] :Այս մոտեցումը որոշ առումով հիշեցնում է *ejusdem generis* մեկնաբանության սկզբունքը, սակայն կիրառվում է առավել ընդարձակ ձևով՝ կենտրոնանալով ոչ թե ձևական դասակարգման, այլ արարքի նյութական ծանրության վրա[63]: Միևնույն ժամանակ, նման մոտեցումը առաջացնում է որոշակի տեսական լարվածություն միջազգային նախադեպային իրավունքի այլ դիրքորոշումների հետ: Մասնավորապես՝ *Prosecutor v. Tadić* գործում ձևավորված այն ընկալման հետ, ըստ որի՝ համապատասխան հանցակազմերը, հատկապես անմարդկայնության դեմ ուղղված արարքները, հիմնականում ենթադրում են կենդանի անձանց նկատմամբ իրականացված գործողություններ[64]: Այս երկու մոտեցումների միջև առկա հակասությունը կարող է լուծվել այն լայն մեկնաբանությամբ, որ քննարկվող վարքագիծը, թեև ուղղակիորեն վերաբերում է մահացած մարմիններին, իր իրական իրավական էությամբ ուղղված է կենդանի անձանց՝ մասնավորապես համապատասխան համայնքի արժանապատվության և հոգեկան ամբողջականության դեմ: Սակայն խնդրահարույց է այն հանգամանքը, որ *Prosecutor v. Niyitegeka* գործով դատական ակտում այս իրավական կապը հստակորեն չի ձևակերպվում, և դատարանը որևէ ուղղակի հղում չի կատարում *Prosecutor v. Tadić* գործով ձևավորված նախադեպի վրա: Արդյունքում ձևավորվում է որոշակի իրավական անորոշություն՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք նման արարքները պետք է դիտարկվեն որպես ինքնուրույն քրեականորեն պատժելի վարքագիծ, թե որպես արդեն գոյություն ունեցող հանցակազմերի ընդլայնված մեկնաբանու-

In Biolaw and International Criminal Law, (Leiden, The Netherlands: Brill | Nijhoff, 2020), DOI: https://doi.org/10.1163/9789004364424_005

[60] Prosecutor v. Niyitegeka (Emmanuel Niyitegeka) ICTR-96-14-A, Appeal Judgment, 9 July 2004.

[61] Ibid.

[62] Mitgutsch, I. (2022). (In-)Sufficient Gravity of Cases before the International Criminal Court Developing a Gravity Test through Case Law. *Voelkerrechtsblog*. Available at: https://voelkerrechtsblog.org/in-sufficient-gravity-of-cases-before-the-international-criminal-court/

[63] Robinson D. (1999). Defining “Crimes Against Humanity” at the Rome Conference. American Journal of International Law. 1999;93(1):43-57. doi:10.2307/2997955

[64] ICTY, *Prosecutor v. Duško Tadić*, Case No. IT-94-1-A, Appeals Chamber Judgment, 15 July 1999, para. 271 (and generally paras. 249–272).

թյուն՝ հիմնված զոհերի համայնքի նկատմամբ հոգեբանական և արժանապատվային ազդեցության վրա:

Բացի դրանից՝ չնայած միջազգային քրեական իրավունքում արձանագրվել էին կանանց և աղջիկների առևանգման, սեռական շահագործման ու հարկադիր համակեցության դեպքեր, *«հարկադիր ամուսնությունը» (forced marriage)* որպես առանձին հանցակազմ սկզբնապես հստակ նախատեսված չէր որևէ միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ:[65] Միայն Սիեռա Լեոնեի Հատուկ դատարանի (SCSL) դատական պրակտիկայի շրջանակում այն առաջին անգամ ճանաչվեց որպես ինքնուրույն հանցագործություն՝ որակվելով որպես մարդկայնության դեմ ուղղված *«այլ անմարդկային արարք»*[66]*:* ICTR-ի և ICTY-ի կանոնադրություններում սեռական բռնության ձևերից հատուկ նշված էր հիմնականում բռնաբարությունը, մինչդեռ SCSL-ի կանոնադրությունը լրացուցիչ ներառում էր սեռական ստրկությունը, հարկադիր պոռնկությունը, հարկադիր հղիությունը և սեռական բռնության այլ ձևեր: Սակայն նույնիսկ այդ կանոնադրությունը բացահայտորեն չէր նախատեսում *«հարկադիր ամուսնություն»* հասկացությունը:[67] ՀՀ ՔՕ-ի 135-րդ հոդվածը այդպիսի առանձին հանցակազմ նույնպես չի նախատեսում: Այսպիսի բացերը ցույց են տալիս, որ չնայած նրան, որ ազգային մակարդակում դիսպոզիցիան ապահովում է հստակ իրավական հենարան, բայց միջազգային ստանդարտների համեմատ այն պահանջում է հստակեցումներ և համալիր մոտեցում՝ համընդհանուր իրավակարգի հետ համահունչ լինելու համար:

IV. Եզրակացություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին մասի «k» ենթակետով նախատեսված «այլ անմարդկային արարքների» բաց ձևակերպումը կարևոր դեր է կատարում միջազգային քրեական իրավունքի զարգացման և նոր տեսակի հանցավոր վարքագծի ընդգրկման տեսանկյունից, սակայն միաժամանակ առաջացնում է իրավական որոշակիության և կանխատեսելիության խնդիրներ: Այդ հանգամանքը կարող է բացասաբար անդրադառնալ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավակիրառ պրակտիկայի վրա, հատկապես՝ կոմպլեմենտարության սկզբունքի արդյունավետ իրականացման համատեքստում: ՀՀ ՔՕ-ի տեսանկյունից նպատակահարմար է միջազգային դատական պրակտիկայում արդեն իսկ ճանաչում ստացած և բավարար չափով հստակեցված «այլ անմարդկային արարքների» մի մասը արտացոլել օրենսգրքի 135-րդ հոդվածում: Նման մոտեցումը կբարձրացնի իրավական որոշակիությունը, կհեշտացնի հանցագործությունների ճիշտ որակավորումը և դատական ակտերի հիմնավորումը, ինչպես նաև կնվազեցնի լայն և կամայական մեկնաբանությունների հնարավորությունը:

Միաժամանակ, անհրաժեշտ է պահպանել նաև բաց բնույթի նորմատիվ մեխանիզմ, որը հնարավորություն կտա իրավական համակարգին արձագանքել ապագայում ի հայտ եկող այնպիսի անմարդկային վարքագծի ձևերին, որոնք ներկայումս չեն կարող ամբողջությամբ կանխատեսվել օրենսդրությամբ: Այսպիսով, կոդիֆիկացված և բաց կարգավորումների հա-

[65] Special Court for Sierra Leone (SCSL), Prosecutor v. Brima, Kamara and Kanu (AFRC Case), Case No. SCSL-2004-16-A, Appeals Judgment, 22 February 2008, paras. 182–201.

[66] SCSL, Prosecutor v. Sesay, Kallon and Gbao (RUF Case), Case No. SCSL-04-15-A, Appeals Judgment, 26 October 2009.

[67] Ador, A. (2022). Forced Marriage as a Crime Against Humanity under other Inhumane Acts in International Law. Available at: https://centreforafricanjustice.org/forced-marriage-as-a-crime-against-humanity-under-other-inhumane-acts-in-international-law/

մադրման վրա հիմնված հիբրիդային մոդելը կարող է ապահովել իրավական որոշակիության և միջազգային քրեական իրավունքի զարգացման պահանջների միջև անհրաժեշտ հավասարակշռությունը՝ միաժամանակ նպաստելով ՀՀ ՔՕ-ի համապատասխանեցմանը միջազգային քրեական իրավունքի ժամանակակից չափանիշներին և կոմպլեմենտարության սկզբունքի առավել արդյունավետ իրագործմանը:

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում են միջազգային քրեական իրավունքում մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները՝ որպես օրինակ դիտարկելով Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում 7(1)(k) ենթակետին, որը նախատեսում է «այլ անմարդկային արարքների» բաց կատեգորիա:

Վերլուծվում են Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի կիրառման դժվարությունները, որոնք պայմանավորված են համապատասխան արարքների որակավորման հստակ չափանիշների բացակայությամբ, ինչպես նաև քրեաիրավական նորմերի անալոգիայի և ընդլայնական մեկնաբանության կիրառման ռիսկերով: Հեղինակը նշում է, որ նման մոտեցումները կարող են վտանգել օրինականության սկզբունքի պահպանումը, որը միջազգային քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է:

Բացի այդ, հոդվածում ուսումնասիրվում են միջազգային քրեական տրիբունալների և Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) դատական պրակտիկան, ինչպես նաև Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 7(1)(k) ենթակետի մեկնաբանության և կիրառման հիմնական դոկտրինալ մոտեցումները:

Annotation. The article examines the specific features of the legal regulation of crimes against humanity in international criminal law, using Article 7 of the Rome Statute of the International Criminal Court (ICC) as an example. Particular attention is paid to Article 7(1)(k), which provides for an open-ended category of "other inhumane acts". The paper also analyzes the difficulties in applying Article 7 due to the lack of clear criteria, as well as the risks associated with analogy and expansive interpretation. The author notes that this may pose a threat to the principle of legality. In addition, the practice of international tribunals and the ICC, as well as doctrinal approaches to the interpretation and application of Article 7(1)(k), are discussed.

Аннотация. В статье рассматриваются особенности правового регулирования преступлений против человечности в международном уголовном праве на примере статьи 7 Римского статута Международного уголовного суда (МУС). Особое внимание уделяется подпункту 7(1)(k), предусматривающему открытую категорию «иных бесчеловечных деяний».

Анализируются сложности применения статьи 7 Римского статута, обусловленные отсутствием чётких критериев квалификации соответствующих деяний, а также рисками использования аналогии и расширительного толкования уголовно-правовых норм. Автор отмечает, что подобные подходы могут создавать угрозу соблюдению принципа законности как одного из основополагающих принципов международного уголовного права.

Кроме того, в статье рассматриваются практика международных уголовных трибуналов и Международного уголовного суда (МУС), а также основные доктринальные подходы к толкованию и применению подпункта 7(1)(k) статьи 7 Римского статута.

Բանալի բառեր *- մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ, այլ անմարդկային գործողություններ, ՄՔԴ, Հռոմի Սփատուտ, համանմանություն:*

Keywords: *crimes against humanity; other inhumane acts; ICC; Rome Statute; similarity.*

Ключевые слова: *преступления против человечности, иные бесчеловечные деяния, Международный уголовный суд, МУС, Римский статут, принцип законности, аналогия.*

Օգտագործված գրականության ցանկ

1) Ador, A. (2022). Forced Marriage as a Crime Against Humanity under Other Inhumane Acts in International Law. Available at: https://centreforafricanjustice.org/forced-marriage-as-a-crime-against-humanity-under-other-inhumane-acts-in-international-law/;

2) Andreopoulos, G. (2019). Genocide, War Crimes, and Crimes against Humanity. In: Natarajan M, ed. *International and Transnational Crime and Justice. Cambridge University Press*; 2019: pp. 321-326.

3) Annas, G. (2014). Crimes against the human species ('type II crimes against humanity' explained). In: van Beers B., Corrias, L., Werner, W.G., eds. Humanity across International Law and Biolaw. Cambridge University Press; 2014:115-132.

4) Bassiouni, C.M.. (1999) Crimes Against Humanity in International Criminal Law. xli-610. https://via.library.depaul.edu/lawfacpubs/343;

5) Bekou, O. (2002). Crimes at Crossroads: Incorporating International Crimes at the National Level, *JICJ*, Vol. 10. 677–680.

6) Benzing, M. (2003). The Complementarity Regime of the International Criminal Court: International Criminal Justice between State Sovereignty and the Fight against Impunity. *Max Planck UNYB*. pp. 591 – 632. Available at: https://www.mpil.de/files/pdf3/mpunyb_benzing_7.pdf;

7) Birkett, D.J. (2019). Twenty Years of the Rome Statute of the International Criminal Court: Appraising the State of National Implementing Legislation in Asia. *Chinese Journal of International Law*. Vol. 18, No. 2, pp. 353–392, https://doi.org/10.1093/chinesejil/jmz014;

8) Cassese, A. (2002). *'Crimes against Humanity'*, in Antonio Cassese, Paola Gaeta, and John RWD Jones (eds), *The Rome Statute of the International Criminal Court: A Commentary* (2002; online edn, Oxford Law Pro), https://doi.org/10.1093/law/9780199243129.003.0019;

9) Cattin, D.D. (2025). The Unique Function of the Crime Against Humanity of Other Inhumane Acts in The Progressive Development and Codification Of International Criminal Law, Vol. 8, *Cardozo Int'l & Compar. L. Rev.*, 615. Available at: https://larc.cardozo.yu.edu/ciclr/vol8/iss3/4;

10) Gottlieb, Y. (2020). Attacks Against Cultural Heritage as a Crime Against Humanity, 52 Case W. Res. J. Int'l L. 287 (2020) Available at: https://scholarlycommons.law.case.edu/jil/vol52/iss1/15;

11) Grey, R. (2025). On Hope, Reform and Risk: The Rome Statute's Definition of 'Gender' and the Crimes Against Humanity Convention. *European Journal of International Law*. Vol. 36, No. 2, pp. 369–398. https://doi.org/10.1093/ejil/chaf026;

12) Haenen, I. (2013). Classifying Acts as Crimes Against Humanity in the Rome Statute of the International Criminal Court. *German Law Journal*. Vol. 14 No. 07, p. 821. Available at: https://germanlawjournal.com/wp-content/uploads/GLJ_Vol_14_No_07_Haenen.pdf

13) Jackson, D.M. (2011). Jus in Bello. In: Chatterjee, D.K. (eds) Encyclopedia of Global Justice. *Springer, Dordrecht*. https://doi.org/10.1007/978-1-4020-9160-5_63;

14) Lagoutte, S. (2016). Thomas Gammeltoft-Hansen, and John Cerone (eds), Tracing the Roles of Soft Law in Human Rights (Oxford, 2016; online edn, Oxford Academic, 19 Jan. 2017), https://doi.org/10.1093/acprof:oso/9780198791409.001.0001;

15) Lamb, S. (2002). 'Nullum Crimen, Nulla Poena Sine Lege in International Criminal Law', in Antonio Cassese, Paola Gaeta, and John RWD Jones (eds), The Rome Statute of the International Criminal Court: A Commentary (2002; online edn, Oxford Law Pro), https://doi.org/10.1093/law/9780199243129.003.0037;

16) Lipovský, M. (2025). The Principle of Complementarity. In: Svaček, O., Faix, M. (eds) Prosecution of War Crimes before the ICC. Global Issues. *Palgrave Macmillan, Cham*. https://doi.org/10.1007/978-3-031-84216-0_4;

17) MacNeil, G. (2021). Other Inhumane Acts: Development and Critique. In: *Legality Matters. International Criminal Justice Series*, Vol 28., T.M.C. Asser Press, The Hague. https://doi.org/10.1007/978-94-6265-443-3_5;

18) Maučec, G. (2021). Law Development by the International Criminal Court as a Way to Enhance the Protection of Minorities—the Case for Intersectional Consideration of Mass Atrocities. *Journal of International Dispute Settlement*, Vol. 12, No. 1, pp. 42–83, https://doi.org/10.1093/jnlids/idaa029

19) Meron, T. (2000). "The Martens Clause, Principles of Humanity, and Dictates of Public Conscience." *The American Journal of International Law*, Vol. 94, No. 1, 2000, pp. 78–89. https://doi.org/10.2307/2555232;

20) Mettraux G. (2011). The Definition of Crimes Against Humanity and the Question of a "Policy" Element. In: Sadat L.N., ed. Forging a Convention for Crimes against Humanity. *Cambridge University Press;* 2011: pp. 142-176.

21) Pérez-León A. & Pablo, J. (2017). The Close Relationship Between Serious Human Rights Violations and Crimes Against Humanity: International Criminalization of Serious Abuses. *Anuario Mexicano de Derecho Internacional*. Vol. 17, pp. 145-186. https://doi.org/10.22201/iij.24487872e.2017.17.11034

22) Rastan, R. (2017). What is 'Substantially the Same *Conduct'? Unpacking the ICC's 'First Limb' Complementarity Jurisprudence, Journal* of International Criminal Justice, Vol. 15, Issue 1, March 2017, pp. 1–29, https://doi.org/10.1093/jicj/mqx004

23) Roberts, Ch. (2017). On the Definition of Crimes Against Humanity and Other Widespread or Systematic Human Rights Violations. *University of Pennsylvania Journal of Law and Social Change*. Available at: https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=1202&context=jlasc

24) Robinson, D. (1999). Defining "Crimes Against Humanity" at the Rome Conference. American Journal of International Law. 1999;93(1):43-57. doi:10.2307/2997955

25) Schabas, W. A. (2008). State Policy as an Element of International Crimes. *The Journal of Criminal Law and Criminology* (1973-), Vol. 98, No. 3, pp. 953–982. http://www.jstor.org/stable/40042791

Քոչարյան Հ. - իրավաբանական գիտությունների թեկնածու, էլհասցե՝ hovsep.kocharyan.28@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 21.05.2026 թ., տրվել է գրախոսության 21.05.2026 թ., երաշխավորվել է ի.գ.թ. Լ. Վարդանյանի կողմից, ընդունվել է տպագրության 02.07.2026 թ.:

ԵԴ1/1194/06/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

10 ապրիլի 2026 թվական ք.Երևան

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ մեղադրյալ Նարեկ Անդրանիկի Եղիազարյանի պաշտպան Մ.Ավագյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2023 թվականի հոկտեմբերի 16-ին՝ ժամը 01:00-ին, Նարեկ Եղիազարյանն ապօրինի զենք և զինամթերք ձեռք բերելու, պահելու և իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել է:

Նույն օրը որոշում է կայացվել Ն.Եղիազարյանին ձերբակալելու մասին:

2023 թվականի հոկտեմբերի 16-ին, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 14872523 քրեական վարույթը:

2023 թվականի հոկտեմբերի 18-ին, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով, նախաձեռնվել է թիվ 14873023 քրեական վարույթը:

Նույն օրը որոշում է կայացվել թիվ 14873023 և 14872523 քրեական վարույթները մեկ վարույթում միացնելու, և նախաքննությունը 14872523 համարով շարունակելու մասին:

2023 թվականի հոկտեմբերի 18-ին, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Համբարձումյանի որոշմամբ Ն.Եղիազարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով:

2023 թվականի հոկտեմբերի 19-ին որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալ Ն.Եղիազարյանին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված կարգով, ձերբակալելու մասին:

Նույն օրը՝ ժամը 01:05-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի աշխատակիցների կողմից Ն.Եղիազարյանը ձերբակալվել է:

2023 թվականի հոկտեմբերի 19-ին մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի պաշտպան Մ.Ավագյանը բողոք է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ խնդրելով անհապաղ քննարկել մեղադրյալի ձերբակալման իրավաչափությունը՝ վերջինիս ձերբակալելու պահին անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի բացակայության, և 60 ժամը լրանալուց հետո վերջինի նկատմամբ խափանման միջոց կալանքն ընտրելու միջնորդության բացակայության պայմաններում նրան ձերբակալված պահելու հիմքերով:

Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2023 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի պաշտպան Մ.Ավագյանի բողոքը բավարարվել է և հաստատվել 2023 թվականի հոկտեմբերի 16-ի ձերբակալման ընթացքում մեղադրյալ Ն.Եղիազարյանի իրավունքների խախտման փաստը: Նույն որոշմամբ՝ նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարվել է, և մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով՝ հաշվակցելով 2023 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 19-ն անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը, և կալանքի սկիզբը հաշվվել է 2023 թվականի հոկտեմբերի 19-ից:

3. Մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի պաշտպան Մ.Ավագյանի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան), 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակի, բեկանել է Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ որոշումը, և նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարել մասնակի՝ մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի նկատմամբ համակցված կիրառելով տնային կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով, և գրավը՝ 8.000.000 (ութ միլիոն) ՀՀ դրամի չափով: Տնային կալանքի ժամկետին հաշվակցվել է մեղադրյալի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածը:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի պաշտպան Մ.Ավագյանը բերել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը, Ն.Եղիազարյանի ձերբակալումը համարելով իրավաչափ, թույլ է տվել դատական սխալ, որն ազդել է վարույթի ելքի վրա, և միաժամանակ բողոքի հիմնավորումներով բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ, ի թիվս այլնի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ, 111-րդ և 288-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար:

5.1. Ի հիմնավորումն վերոնշյալ պայմանի՝ բողոք բերած անձը փաստարկել է, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ապօրինի ձերբակալման պայմաններում կիրառվել է կրկնակի ձերբակալություն, մասնավորապես՝ որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալելու մասին՝ այն պայմաններում, երբ Ն.Եղիազարյանն այդ որոշման կայացման ժամանակ չի հանդիսացել ձերբակալման սուբյեկտ՝ այն է՝ **ազատության մեջ գտնվող մեղադրյալ**, ինչը, բողոքաբերի գնահատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի ուժով, հիմք է նախաքննության մարմնի միջնորդությունը մերժելու համար:

Նշվածի համատեքստում, բողոքաբերն ընդգծել է, որ Ն.Եղիազարյանի նկատմամբ կիրառված առաջին և երկրորդ ձերբակալումները եղել են մեկը մյուսի շարունակությունը, և նպատակ են հետապնդել առավել երկար ժամանակ ստանալ՝ մեղադրյալի դեմ ապացույցներ հավաքելու և վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը դատարան ներկայացնելու համար, որպիսի հանգամանքն ընդունվել է նաև նախաքննության մարմնի կողմից՝ դատական նիստի ընթացքում:

Բողոքաբերի գնահատմամբ՝ քննիչը Ն.Եղիազարյանին երկրորդ անգամ ձերբակալելու մասին որոշումը կայացրել է ոչ թե վերջինին ազատ արձակելուց հետո, այլ ձերբակալվածի կարգավիճակ ունենալու ժամանակ՝ հաշվի առնելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի և Երևան քաղաքի ձերբակալվածներին պահելու վայրի միջև առկա հեռավորությունը, որպիսի պայմաններում ողջամիտ չէ 5 րոպեի ընթացքում քննիչի կողմից համապատասխան որոշում կայացնելը, այն ոստիկանության աշխատակիցներին հանձնելը և վերջիններիս կողմից Երևան քաղաքի ձերբակալվածներին պահելու վայր հասնելը:

Բողոքաբերն ընդգծել է, որ անձին երկրորդ անգամ՝ ձերբակալվածներին պահելու վայրի մոտից անմիջապես ձերբակալելը (մինչև երկրորդ ձերբակալումը՝ ձևական առումով եղել է 5 րոպե ժամանակային խզում) չի կարող մեկնաբանվել իբրև անձի ազատության մեջ գտնվելու փաստի առկայություն, հետևաբար Ն.Եղիազարյանի ձերբակալումը 72 ժամից վերաճել է 96 ժամի, որպիսի խախտումն իր բնույթով էական է և կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, քանի որ նման մոտեցումն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ ձերբակալման առավելագույն՝ 72 ժամյա սահմանափակմանը, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի կարգավորումներին:

5.2. Բացի այդ, բողոքաբերի պնդմամբ՝ ստորադաս դատարանները մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը հաստատելիս, հաշվի չեն առել այն հանգամանքը, որ խնդրո առարկա ենթադրյալ հրազենը ողորկափող է և չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկա, հետևաբար Ն.Եղիազարյանի ենթադրյալ գործողություններում ակնհայտորեն բացակայում է հանցակազմը:

Ավելին՝ միջնորդությանը կից ներկայացված նյութերով չեն հիմնավորվել Ն.Եղիազարյանի կողմից զենքը վաճառելու կամ այլ կերպ իրացնելու հանգամանքները, որպիսի պայմաններում կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց, որն ինչպես առանձին, այնպես էլ վերը նշված խախտումների հետ համակցության մեջ, հանդիսանում է վարույթի ելքի վրա ազդող՝ անձի հիմնարար իրավունքները խախտող դատական սխալ:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է մասնակի բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը, կայացնել դրան

փոխարինող դատական ակտ, այն է՝ հաստատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով՝ Ն.Եղիազարյանի ձերբակալման ոչ իրավաչափ լինելը, արձանագրել հիմնավոր կասկածի բացակայությունը, և մերժել քննիչի միջնորդությունը:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Նարեկ Եղիազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն արարքի համար, որ նա. *«(...) ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և իրացրել է հրազեն:*

Այսպես.

*Նարեկ Եղիազարյանը չունենալով «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված հրազենի, ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու՝ այն ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և իրացնելու իրավունք, ինչպես նաև հրազենի և ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում օրենքով սահմանված կարգով ձևակերպված համապատասխան թույլտվություն, քննությամբ դեռևս չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և 2023 թվականի հոկտեմբերի 16-ին Երևան քաղաքի ******** ****** փողոցի ***** հասցեի մոտակայքում ******* ****** **********-ին իրացրել է ողորկափող հրազեն հանդիսացող՝ ձևափոխված «ANSAR 1071» մոդելի «2302618» համարի 9 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակ, որը հայտնաբերվել և վերցվել է 2023 թվականի հոկտեմբերի 16-ին իրականացված՝ ******* ******-ի *********-ի անձնական խուզարկությամբ»*[1]*:*

8. ՀՀ ՆԳՆ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պետ Լ.Սաֆարյանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ի գրության համաձայն՝ «*(...) ներկայացված թվով 1 հատ փաթեթում առկա օբյեկտը հանդիսանում է.*

- գործարանային արտադրության «ANSAR 1071» մոդելի «2302618» համարի 9մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակ, որը ձևափոխված է (փամփշտանոցի արտաքին աջակողմյան հատվածում գտնվող գազերի արտանետման անցքը ինքնաշեն եղանակով փակված է, փողանցքը տաշված է և սահմանափակիչը բացակայում է):

*- ներկայացված ատրճանակը՝ փամփշտանոցում 9մմ ձայնային փամփուշտ տեղադրելու և փողանցքից համապատասխան կառուցվածքային տվյալներով արկ (կապարից գնդակ, մետաղագնդիկ և այլն) տեղադրելու դեպքում պիտանի է կրակելու համար և հանդիսանում է (կարող է օգտագործվել) **ողորկափող հրազեն**:(...)»*[2]*:*

9. Նախաքննության մարմնի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 19-ին որոշում է կայացվել՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալ Ն.Եղիազարյանին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված կարգով ձերբակալելու մասին, և նույն օրը՝ ժամը 01:05-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի աշխատակիցների կողմից Ն.Եղիազարյանը ձերբակալվել է: Ձերբակալման արձանագրության մեջ Ն.Եղիազարյանի կողմից արվել է հետևյալ հայտարարությունը. *«(...) Ես փաստացի ազատության մեջ չեմ գտնվել, քանի որ Երևան քաղաքի ՁՊՎ-ի մուտքի անմիջապես առաջ ինձ մոտեցել են ոստիկանության աշխատակիցները, և հայտնել, որ ձերբակալված եմ քննիչի որոշման հիման վրա (...)»*[3]*:*

[1] Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 5-6:
[2] Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 56:
[3] Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 75-77, 80-83:

10. Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 19-ի որոշման համաձայն՝ *«(...) [թ]ե՛ Նարեկ Եղիազարյանին ձերբակալելու մասին արձանագրության, թե՛ վերջինիս ձերբակալելու մասին որոշման մեջ որևէ տեղեկատվություն առկա չէ այն մասին, թե որոնք են այն հիմքերը, որոնք կարող էին վկայել Նարեկ Եղիազարյանին ձերբակալելիս վերջինիս կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներ կատարած լինելու հիմնավոր կասկածն անմիջականորեն ծագած լինելու մասին: Ավելին՝ հիշյալ հանգամանքը հավաստող՝ օրենքով ձեռք բերված փաստեր կամ տեղեկություններ չեն ներկայացվել նաև միջնորդության քննության ընթացքում:*

Դատարանն իր այս հետևությունը պայմանավորում է նաև այն հանգամանքով, որ օպերատիվ փվյալների առկայության վերաբերյալ քննիչի միջնորդության մեջ նշված փաստական փվյալը չի կարող գնահատվել որպես «անմիջականորեն ծագած հիմնավոր կասկած»: Ավելին՝ օպերատիվ տեղեկությունների հիման վրա անձի հիմնարար իրավունքը սահմանափակելը նույնպես անթույլատրելի է: (...)

*Անդրադառնալով անձին ձերբակալելու մասին 2023 թվականի հոկտեմբերի 16-ի արձանագրությամբ մատնանշված այն հանգամանքին, որ մեղադրյալը բռնվել է հանցանք կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո, դատարանը փաստում է, որ անձի ձերբակալման հիմքում դրվել է ****** **********-ի խուզարկության արդյունքում ձեռք բերված առարկայի հայտնաբերումը, որը ձերբակալումից առաջ, ըստ էության, դուրս է գտնվել իրավասու անձանց «տեսողական դաշտ»-ից՝ հիշյալ առարկան հայտնաբերվել է **** **********-ի մոտ եղած սև կաշվե պայուսակից, ոստիկանության բաժնում կատարված նրա անձնական խուզարկության արդյունքում: Միևնույն ժամանակ, դատարանն արձանագրում է, որ**.*******-ը ենթարկվել է անձնական խուզարկության արդեն իսկ փաստացի ազատությունից զրկվելուց հետո, հետևաբար, նշված խուզարկության արդյունքում հայտնաբերված առարկան չէր կարող հիմք հանդիսանալ արդեն իսկ կիրառված հարկադրանքի միջոցի՝ ձերբակալման համար: Ավելին՝ հարկ է նշել, որ 2023 թվականի հոկտեմբերի 16-ի ձերբակալման ժամանակ նշված առարկան Ն.Եղիազարյանի կողմից ***.*******-ին իրացված լինելու հիմնավոր կասկածի առկայությունը հավաստող՝ օրենքով ձեռք բերված փաստեր կամ տեղեկություններ նույնպես վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ չեն եղել:*

Ինչ վերաբերում է քննիչի այն փաստարկին, որ 2023թ. հոկտեմբերի 16-ին Ն.Եղիազարյանին ձերբակալելուց 60 ժամ հետո վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն չի ունեցել դատարան միջնորդություն ներկայացնել՝ վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին, քանի որ անհրաժեշտ են եղել ձեռք բերել լրացուցիչ փաստաթղթեր, և ձերբակալման առավելագույն 72 ժամը լրանալուց հետո Ն.Եղիազարյանը ազատ է արձակվել, ապա հարկ է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ հիշյալ հիմքով անձին ձերբակալելուց հետո 60 ժամը լրանալիս վարույթն իրականացնող մարմինը չի նախաձեռնում անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն դատարան ներկայացնելու իրավական ընթացակարգ, ապա պետք է որոշում կայացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով անձին ձերբակալումից ազատելու մասին՝ անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերացած լինելու պատճառաբանությամբ: Դատարանի հիշյալ հետևությունը պայմանավորված է նրանով, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով դատարան դիմելու վերջնաժամկետը սահմանված է անձին փաստացի ազատությունից զրկելուց հետո 60 ժամը, մնացած՝ 12 ժամը նախատեսված է դատարանի կողմից որոշում կայացնելու համար, իսկ 60 ժամը լրանալուց և դատարան միջնորդություն չներկայացնելուց

հետո անձին շարունակաբար անազատության մեջ պահելը դառնում է ինքնանպատակ, որպիսի իրավիճակն առկա է նաև սույն դեպքում:

Վերոգրյալի հիման վրա դատարանը հանգում է հետևության, որ Նարեկ Եղիազարյանի 2023թ. հոկտեմբերի 16-ի ձերբակալումը չի կարող համարվել իրավաչափ և այդ գործողությունների արդյունքում խախտվել են ձերբակալված անձի իրավունքները: (...)

Վերոհիշյալ իրավանորմերի համատեքստում գնահատելով դատարանի տրամադրության տակ գտնվող նյութերը և անդրադառնալով ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար Ն.Եղիազարյանի ձերբակալման իրավաչափության հարցին՝ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ պահպանված են Նարեկ Եղիազարյանին ձերբակալելու իրավաչափության պայմանները և ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալումն իրավաչափ է: (...)

*[Դ]ատարանը գտնում է, որ իրեն վերագրվող արարքի կատարմանը մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի առնչվելու վերաբերյալ առկա է հիմնավոր կասկած, ինչը հաստատվում է միջնորդությանը կից ներկայացված նյութերով, այդ թվում՝ ******* ****** **********_ին ձերբակալելու մասին արձանագրությամբ, փորձագետի կողմից դատաձգաբանական փորձաքննության վերաբերյալ տրված նախնական տեղեկատվությամբ, հեռախոսազանգերի գաղտնալսման ձայնագրությունները զննության ենթարկելու մասին արձանագրությամբ: (...)*

*Ինչ վերաբերում է պաշտպանության կողմի այն հետևությանը, որ ****** ********-ի մոտ հայտնաբերված ատրճանակը չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առարկա, քանի որ դրա՝ ձևափոխված լինելու դեպքում՝ այն չի դադարում ողորկափող հրազեն լինելուց, դատարանը հարկ է համարում նշել, որ համաձայն փորձագետի կողմից դատաձգաբանական փորձաքննության վերաբերյալ տրված նախնական տեղեկատվության՝ գործարանային արտադրության <<ANSAR 1071>> մոդելի, 2302618 համարի, 9 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակը եղել է ձևափոխված, որի փամփշտանոցում 9 մմ ձայնային փամփուշտ տեղադրելու և փողանցքից համապատասխան կառուցվածքային փվյալներով արկ տեղադրելու դեպքում պիտանի է կրակելու համար և հանդիսանում է (կարող է օգտագործվել) ողորկափող հրազեն, իսկ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է, որպես քաղաքացիական և ծառայողական զենք, շրջանառության մեջ մտցնել՝ ինքնաշեն հրազեն, իր ձևով և տեսքով այլ առարկաների նմանեցված հրազեն, կառուցվածքային փոփոխության ենթարկված ակոսափող և ողորկափող հրազեն՝ առանց կրակելու ունակության կորստի: Հետևաբար, դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նարեկ Եղիազարյանի կողմից ****** *********-ին ողորկափող հրազեն հանդիսացող՝ ձևափոխված «ANSAR 1071» մոդելի «2302618» համարի 9 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակ ենթադրաբար իրացնելու վերաբերյալ քննությունը գտնվում է վաղ փուլում, ուստի հաշվի առնելով նաև քննչական իրադրությունը, դեպքի իրական հանգամանքների ճշտման ուղղությամբ ապացուցողական և վարութային գործողությունների կատարման անհրաժեշտությունը, դատարանը վերևում վկայակոչված փաստերը և տեղեկությունները բավարար է համարում քրեական վարույթի ներկա փուլում հիմնավոր կասկածի ապացուցման շեմը հաղթահարված համարելու համար: (...)*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ մեղադրյալի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունը գնահատելով ավելի բարձր նշանակության բարիքի, այն է՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, անձի ազատության սահմանափակման

հիմնավորվածությունը, դատարանը գտնում է, որ քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պատշաճ վարքագիծը կանխելու, մեղադրյալի կողմից իր վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով դրված՝ քրեական վարույթին չխոչընդոտելու և ապացուցման գործընթացին ապօրինի չմիջամտելու հետ կապված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակն հնարավոր չէ հասնել մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառմամբ, ավելին՝ քննիչը պատշաճորեն հիմնավորել է Նարեկ Եղիազարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը և իրավաչափությունը:

Այսպիսով, դատարանի գնահատմամբ վկայակոչված փաստարկները ծանրակշիռ են, բխում են գործի նյութերից և դատարանի համար բավարար են՝ մեղադրյալի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վերոգրյալ գործողությունները կատարելու հավանականության վերաբերյալ արժանահավատ հետևության հանգելու համար և բացառում են այլ խափանման միջոցների կիրառմամբ մեղադրյալ Ն.Եղիազարյանի պատշաճ վարքագծի ապահովման հնարավորությունը ուստի քննիչի միջնորդությունը ենթակա է բավարարման (...)»[4]:

11. Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշման համաձայն՝ *«(...) Տվյալ դեպքում պաշտպանի վերանայման բողոքում (...) նշված փաստարկները բավարար չեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը կիրառելու և քննիչի միջնորդությունը մերժելու համար: Մասնավորապես, անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ձերբակալման մասով արդեն իսկ Առաջին ատյանի դատարանը խախտում է արձանագրել: Անձը հետագայում ձերբակալվել է դատարան ներկայացնելու համար և այս անգամ՝ իրավաչափորեն: Եվ այս մասով նույնիսկ խախտում արձանագրելը չի կարող հանգեցնել կալանքի միջնորդության մերժման: Ինչ վերաբերվում է նման պրակտիկայի ձևավորման անթույլատրելիության վերաբերյալ ներկայացված փաստարկին, ապա հարկ է նշել, որ անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ոչ իրավաչափ ձերբակալումը փվյալ դեպքում հանգեցնում է համապատասխան իրավական հետևանքի, բացի անձի իրավունքի խախտում արձանագրելուց անձը համապատասխան վնասի հատուցման հնարավորություն է ստանում այլ ընթացակարգով (քաղաքացիադատավարական), և քննչական մարմինների կողմից նման պրակտիկայի ձևավորումը բացասական հետևանք է առաջացնում պետության համար: Ուստի այդ փաստարկը բավարար չէ հակառակ հետևությանը հանգելու համար: Բացի այդ, փվյալ դեպքում անձի ազատության իրավունքի սահմանափակման հիմքը եղել է ոչ իրավաչափ, որը վերացվել է, և նոր իրավաչափ հիմքով սահմանափակվել է, և այդ պայմաններում հետագա սահմանափակումը չի կարող լինել ոչ իրավաչափ:*

Հետևաբար Վերաքննիչ դատարանը փվյալ դեպքում ամբողջությամբ իր համաձայնությունն է հայտնում Առաջին ատյանի դատարանի հետևություններին (...)՝ ձերբակալման մասով, և գտնում է, որ դրանք հիմնավոր են և բխում են ինչպես առկա իրավակարգավորումներից, այնպես էլ սույն վարույթի նյութերից: Իսկ վերանայման բողոքում նշված փաստարկները բավարար չեն այդ մասով հակառակ հետևությանը հանգելու համար:

Այսպիսով, ձերբակալումն իրավաչափ ճանաչելու մասով Առաջին ատյանի դատարանի հետևությունների հիմքում ընկած փաստական փվյալների շրջանակում ձերբակալումն իրավաչափ ճանաչելու վերաբերյալ եզրահանգումները հիմնավոր են, իսկ վերանայման բողոքում նշված փաստարկներն անհիմն են: (...)

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 92-109:

[Ա]նդրադառնալով մեղադրյալ Նարեկ Անդրանիկի Եղիազարյանի կալանավորման պայմանների առկայության կամ բացակայության հարցին՝ Վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ մեղադրյալ Նարեկ Անդրանիկի Եղիազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ թիվ ԵԴ1/1194/06/23 նյութերում առկա փաստական տվյալներն ու տեղեկությունները (...), վարույթի քննության տվյալ փուլի համար բավարար հիմք են տալիս փաստելու, որ նախաքննության մարմնի միջնորդությունը քննելիս Առաջին ատյանի դատարանն իր տրամադրության տակ բավարար ապացույցներ, փաստեր և տեղեկություններ է ունեցել մեղսագրվող ենթադրյալ հանցանքը մեղադրյալ Նարեկ Անդրանիկի Եղիազարյանի կողմից ենթադրաբար կատարված լինելու հիմնավոր կասկածի առկայության մասին հետևություն անելու համար, և ըստ էության եկել է ճիշտ եզրահանգման:

Հետևաբար վերանայման բողոքում այդ մասով նշված փաստարկներն, ըստ էության անհիմն են և չեն բխում սույն վարույթի նյութերից: (...)

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղադրյալի մեղքի հարցը, իրավական գնահատական տալու նրա մեղավորությանը կամ անմեղությանը, ապացույցների թույլատրելիությանը կամ անթույլատրելիությանը, հետևաբար սույն գործի լուծման ընթացքում Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի կիրառման անհրաժեշտությունը, այնքանով որքանով վերաբերելի է նշված իրավանորմի հատկանիշներն ամբողջական վերլուծության ենթարկելուն, փարրերը վեր հանելուն և համապատասխան փաստական տվյալների հետ համադրելուն, բացակայում է:

Այսուհանդերձ հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի դիսպոզիցիան բլանկետային է և բլանկետ հանդիսացող իրավական ակտի փոփոխությունը հանգեցնում է հանցակազմի փոփոխության, ուստի նախկին «Զենքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների կիրառման վերաբերյալ վերանայման բողոքում նշված փաստարկներն անհիմն են և չեն բխում առկա իրավակարգավորումներից:

Բացի այդ, տվյալ դեպքում վերը նշված հանցակազմով որպես հանցագործության առարկա բացառություն է հանդիսանում քաղաքացիական ողորկափող հրազենը, դրա փամփուշտները կամ դրա բաղկացուցիչ մասերը: Արարքի կատարման պահին գործող «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն քաղաքացիական զենքի տեսակներից է նաև ողորկ-երկարափող հրազենը: Սույն վարույթի նյութերից բխում է, որ հիմնավոր կասկածի չափանիշով ենթադրյալ հանցագործության առարկան առերևույթ չի հանդիսանում քաղաքացիական ողորկափող հրազեն և ընդհանրապես ներառված չէ քաղաքացիական զենքի տեսակների մեջ: Բացի այդ, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն արգելվում է, որպես քաղաքացիական և ծառայողական զենք, շրջանառության մեջ մտցնել ինքնաշեն հրազեն, իր ձևով և տեսքով այլ առարկաների նմանեցված հրազեն, կառուցվածքային փոփոխության ենթարկված ակոսափող և ողորկափող հրազեն՝ առանց կրակելու ունակության կորսրի: Այսինքն, առերևույթ ենթադրյալ հանցագործության ենթադրյալ առարկայի շրջանառությունն արգելված է, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումները, այդ թվում՝ նույն օրենքի 190-րդ հոդվածը առերևույթ վերաբերվում է օրինական շրջանառության մեջ գտնվող զենքերի համապատասխան ընթացակարգերի խախտմամբ զենք ձեռք բերելուն կամ վաճառելուն:

Հետևաբար, վերը նշված հարցերի մասով վերանայման բողոքում նշված փաստարկներն անհիմն են և չեն բխում վերաբերելի իրավակարգավորումներից, իսկ այդ մասով Առաջին

ապյանի դատարանի հետևություններն իրավաչափ են: (…)

[Վ]երաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ տվյալ դեպքում (…) մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի ենթադրյալ վարքագծի դրսևորումները, մեղադրյալին վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը և սպառնացող հնարավոր պատժի խստությունը, ինչպես նաև խափանման միջոցի համար հիմք հանդիսացած հանգամանքները, և դրանց դրսևորման հավանականության աստիճանը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տնային կալանքի և գրավի համակցված կիրառման միջոցով, քրեական վարույթի քննության տվյալ փուլում, ողջամտորեն հնարավոր է ապահովել մեղադրյալ Նարեկ Եղիազարյանի հետագա պատշաճ վարքագիծը և տվյալ դեպքում տնային կալանքի և գրավի համակցված կիրառումը կարող է գործուն երաշխիք հանդիսանալ խափանման միջոցի վերը նշված նպատակի չեզոքացման համար (…)»[5]:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

12. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *առաջին* իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար Ն.Եղիազարյանի ձերբակալումն իրավաչափ ճանաչելու մասին ստորադաս դատարանի հետևությունը:

13. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար, (…)»:

Վճռաբեկ դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների հաշվառմամբ, արձանագրում է, որ ցանկացած դեպքում անձին ազատությունից զրկելու ընթացակարգը պետք է համապատասխանի ներպետական օրենսդրության պահանջներին[6], իսկ անձին ազատությունից զրկելու օրինականության ապացուցման բեռը կրում են քրեական հետապնդման մարմինները, եթե արգելանքի վերցվելու պահից անձը գտնվել է նրանց

[5] Տես վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 42-60:

[6] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mooren v. Germany [GC]* գործով 2009 թվականի հուլիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 11364/03, 72-րդ կետ:

իրավասության ներքո և բացակայում է հակառակը հիմնավորող համոզիչ, օբյեկտիվ բնույթ կրող փաստական տվյալ[7]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 44-րդ կետի համաձայն՝ *«(…) **ձերբակալում՝** հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով կամ մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով անձնական ազատության իրավունքի սահմանափակումը՝ առանց դատարանի որոշման.(…)»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Ձերբակալումը կարող է կիրառվել՝*

1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում.

2) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար.

3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ: (…)»:

Նույն օրենսգրքի 111-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավասու է որոշում կայացնելու մեղադրյալին ձերբակալելու մասին: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառները, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը:*

2. Հետաքննիչը մեղադրյալին ձերբակալելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնում ձերբակալման որոշման պատճենը: Ազատությունից փաստացի զրկվելուց անմիջապես հետո մեղադրյալը բերվում է քննիչի մոտ: Մեղադրյալին քննիչի մոտ բերելու փաստն ամրագրվում է անձի ձերբակալման արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են մեղադրյալի անունը, ազգանունը, հայրանունը, նրան ազատությունից փաստացի զրկելու տարին, ամիսը, օրը, ժամը, րոպեն, վայրը, պայմանները և հիմքերը, ձերբակալում իրականացրած հետաքննիչի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ձերբակալված մեղադրյալի հայտարարությունները, ձերբակալված մեղադրյալին քննիչի մոտ բերելու և արձանագրություն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:

3. Ձերբակալման որոշմանը որպես դրա բաղկացուցիչ մաս կցվում է ձերբակալման արձանագրությունը: Ձերբակալման որոշման և ձերբակալման արձանագրության պատճեններն անհապաղ ուղարկվում են հսկող դատախազին:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 24 ժամից ավելի: Նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 12 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:

5. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալը ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման իրավաչափությունը»:

14. Վերոգրյալ իրավանորմերի և մեջբերված կոնվենցիոն ու սահմանադրական դրույթների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է ձերբակալման եղանակով սահմանադրորեն երաշխավորված՝ անձնական

[7] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Zalyan and others v. Armenia* գործով 2016 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 36894/04 և 3521/07, 302-312-րդ կետեր:

ազատության իրավունքը սահմանափակելու երեք ինքնավար կառուցակարգ: Ձերբակալման կառուցակարգերից մեկն էլ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար իրականացվող ձերբակալումն է:

Մասնավորապես, ձերբակալման քննարկվող տեսակի *կիրառման իրավաչափ նպատակը՝ մեղադրյալին* դատարան ներկայացնելն է՝ կալանավորման անհրաժեշտության հարցը քննարկելու համար, քանի որ կալանքի հարցը քննող դատարանը պետք է ոչ թե անձին ազատությունից զրկող լինի, այլ պետք է ստուգի արդեն իսկ անազատության մեջ գտնվող անձին ազատությունից զրկելու, ինչպես նաև նրան հետագայում անազատության մեջ պահելու իրավաչափությունը:

Վերոգրյալից հետևում է, որ նշված հիմքով անձի ձերբակալման համար պարտադիր է վերջինիս՝ համապատասխան կարգավիճակ ունենալու հանգամանքը, մասնավորապես՝ քննարկվող հիմքով ձերբակալումը կարող է կիրառվել բացառապես այն մեղադրյալի նկատմամբ, ով գտնվում է **ազատության մեջ**: Նշված պայմանի առկայությունը բացառում է միջազգային և ներպետական օրենսդրությամբ երաշխավորված անձի հիմնարար իրավունքներից մեկի՝ անձնական ազատության իրավունքի առկայության ձևական մեկնաբանման ցանկացած դրսևորում՝ հաշվի առնելով նշված *իրավունքի հիմնարար և անօտարելի բնույթը:*

14.1. *Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով Եվրոպական կոնվենցիայի* 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ *«ազատությունից զրկել»* հասկացության մեկնաբանման առանձնահատկություններին, արձանագրել է, որ պարզելու համար, թե արդյոք նշված հոդվածի իմաստով անձը զրկվել է ազատությունից, պետք է ելնել կոնկրետ իրավիճակից և պետք է հաշվի առնել չափանիշների մի ամբողջ համակցություն, ինչպես օրինակ՝ խնդրո առարկա միջոցի կիրառման տեսակը, տևողությունը, հետևանքները և եղանակը[8]: Ընդ որում, այն ունի և *օբյեկտիվ բաղադրիչ*, այն է՝ ոչ կարճատև ժամանակով անձին սահմանափակ տարածքում պահելը, և *սուբյեկտիվ բաղադրիչ*, այն է՝ տվյալ սահմանափակմանը ենթարկվելու համար անձի օրինական համաձայնության բացակայությունը[9]: Օբյեկտիվ գործոնները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, ներառում են սահմանափակ տարածքից հեռանալու հնարավորություն ունենալը, անձի տեղաշարժի նկատմամբ հսկողության և վերահսկողության աստիճանը, մեկուսացման աստիճանը և սոցիալական շփումների հնարավորությունը[10]: Ավելին՝ այն փաստը, որ անձը չի ձեռնաշղթայվել, չի պահվել խցում կամ չի ենթարկվել ֆիզիկական այլ սահմանափակումների, վճռորոշ նշանակություն չունի ազատությունից զրկելու փաստի առկայությունն արձանագրելու տեսանկյունից[11]:

14.2. Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ *անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ձևական մեկնաբանման արգելքի համատեքստում*՝ մեղադրյալը չի կարող համարվել **ազատության**

[8] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Guzzardi v. Italy* գործով 1980 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7367/76, 92-րդ կետ:

[9] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ S*torck v. Germany* գործով 2005 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, 74-րդ կետ, *Stanev v. Bulgaria* գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, 117-րդ կետ:

[10] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Guzzardi v. Italy* գործով 1980 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 7367/76, 95-րդ կետ, *H.M. v. Switzerland* գործով 2002 թվականի փետրվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 39187/98, 45-րդ կետ, *H.L. v. The United Kingdom* գործով 2004 թվականի հոկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 45508/99, 91-րդ կետ, S*torck v. Germany* գործով 2005 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, 73-րդ կետ:

[11] Տես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *M.A. v. Cyprus* գործով 2013 թվականի հուլիսի 23-ի վճիռը, գանգատ թիվ 41872/10, 193-րդ կետ:

մեջ գտնվող, եթե նախորդ հիմքով իրականացված ձերբակալումից ազատ արձակվելուց հետո փաստացի ազատության մեջ է գտնվել **չափազանց կարճատև ժամանակահատված**, և հնարավորություն չի ունեցել իրացնել իր այն իրավունքները, որոնք սահմանափակվում են ազատությունից զրկվելու պայմաններում:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- 2023 թվականի հոկտեմբերի 16-ին՝ ժամը 01:00-ին, Նարեկ Եղիազարյանն ապօրինի զենք և զինամթերք ձեռք բերելու, պահելու և իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել է[12],

- 2023 թվականի հոկտեմբերի 18-ին՝ Ն.Եղիազարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում և նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով[13],

- 2023 թվականի հոկտեմբերի 19-ին որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալ Ն.Եղիազարյանին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված կարգով ձերբակալելու մասին, և նույն օրը՝ ժամը 01:05-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի աշխատակիցների կողմից Ն.Եղիազարյանը ձերբակալվել է: Ձերբակալման արձանագրության մեջ Ն.Եղիազարյանի կողմից հայտարարություն է կատարվել առ այն, որ ինքը փաստացի ազատության մեջ չի գտնվել, քանի որ Երևան քաղաքի ՁՊՎ-ի մուտքի անմիջապես առաջ իրեն մոտեցել են ոստիկանության աշխատակիցները, և հայտնել, որ ձերբակալված է քննիչի որոշման հիման վրա[14],

- Առաջին ատյանի դատարանը, արձանագրելով անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման ընթացքում Ն.Եղիազարյանի իրավունքների խախտման փաստը, հանգել է այն հետևության, որ պահպանված են ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար Ն.Եղիազարյանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 19-ի ձերբակալման իրավաչափության պայմանները և ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու հիմքով ձերբակալումն իրավաչափ է[15],

- Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ձերբակալումն իրավաչափ ճանաչելու մասով Առաջին ատյանի դատարանի հետևությունների հիմքում ընկած փաստական տվյալների շրջանակում ձերբակալումն իրավաչափ ճանաչելու վերաբերյալ եզրահանգումները հիմնավոր են[16]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14.2-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ն.Եղիազարյանի ձերբակալման իրավաչափության վերաբերյալ հետևության հանգելիս, ստորադաս դատարանները պատշաճ գնահատման չեն ենթարկել ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար իրականացված ձերբակալման պարտադիր պայմանի՝ պատշաճ սուբյեկտի բացակայության հանգամանքը:

Մասնավորապես, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով Նարեկ Եղիազարյանի ձերբակալման առավելագույն ժամկետը՝ 72 ժամը լրանալու և վերջինին

[12] Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 7-10:
[13] Տես սույն որոշման 7-րդ կետը:
[14] Տես սույն որոշման 9-րդ կետը:
[15] Տես սույն որոշման 10-րդ կետը:
[16] Տես սույն որոշման 11-րդ կետը:

ազատ արձակելու պահից ընդամենը **5 րոպե անց**՝ ձերբակալվածներին պահելու վայրի մուտքի անմիջապես դիմաց, նա ոստիկանության աշխատակիցների կողմից ձերբակալվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված հիմքով (որպիսի փաստը վարույթի հանրային մասնակիցների կողմից չի վիճարկվել)։ Փաստորեն, Նարեկ Եղիազարյանը, չափազանց կարճատև ժամանակահատված (մոտ 5 րոպե) գտնվելով ազատության մեջ, ողջամտորեն հնարավորություն չի ունեցել իրացնել իր իրավունքները, որոնք սահմանափակվել են նախորդ հիմքով ձերբակալման պայմաններում, արդյունքում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքը մեկնաբանվել է **խիստ ձևականորեն**՝ հնարավորություն ընձեռելով վարույթն իրականացնող մարմնին շրջանցել օրենսդրական արգելքը և արհեստականորեն «լրացուցիչ ժամանակ շահել»։ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդրության պահանջների նման եղանակով շրջանցումն անթույլատրելի է, հակասում է վարույթն իրականացնող մարմնի բարեխղճության կանխավարկածին, ինչպես նաև չի բխում քրեական դատավարության տրամաբանությունից։

Նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանի համար ընդունելի է նաև բողոքաբերի կողմից սույն որոշման 5.1-րդ կետում նշված պնդումն առ այն, որ Նարեկ Եղիազարյանին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված հիմքով ձերբակալելու մասին որոշումն ամենայն հավանականությամբ կայացվել է վերջինի՝ ձերբակալվածի կարգավիճակ ունենալու և անազատության մեջ գտնվելու ժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Նարեկ Եղիազարյանն անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալումից ազատվել է առավելագույն՝ 72 ժամը լրանալու պահից, այն է՝ 2023 թվականի հոկտեմբերի 19-ին՝ ժամը 01:00-ին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 111-րդ հոդվածով սահմանված հիմքով վերջինս քննիչի որոշման հիման վրա ձերբակալվել է նույն օրը՝ ժամը 01:05-ին՝ ձերբակալվածներին պահելու վայրի մուտքի անմիջապես դիմաց։ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, նշված ժամանակահատվածում երկրորդ հիմքով ձերբակալման պատշաճ կազմակերպումը ողջամտորեն անհնար էր։

17. Ընդհանրացնելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատության և անձնական անձեռնամխելիության իրավունքի խիստ ձևական մեկնաբանման պայմաններում սահմանափակվել է Նարեկ Եղիազարյանի՝ նշված հիմնարար իրավունքի իրացման իրական հնարավորությունը, հետևաբար բացակայել է ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար իրականացված ձերբակալման պարտադիր պայման հանդիսացող պատշաճ սուբյեկտը՝ **ազատության մեջ գտնվող** մեղադրյալը, հետևաբար Ն.Եղիազարյանի ձերբակալումն իրավաչափ ճանաչելու մասին ստորադաս դատարանի հետևությունն իրավաչափ չէ։

18. Ինչ վերաբերում է նման պայմաններում նախաքննության մարմնի միջնորդությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի կիրառմամբ մերժելու վերաբերյալ բողոքաբերի կողմից բարձրացված և սույն որոշման 5.1-րդ կետում նշված փաստարկին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կանխարգելիչ նշանակություն ունեցող վերոնշյալ նորմի իմպերատիվ պահանջը վերաբերում է բացառապես հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով իրականացված ձերբակալմանը, և նպատակ է հետապնդում բացառել անձի անհիմն ձերբակալումն այն դեպքերում, երբ տվյալ հիմքն իրականում բացակայում է։

19. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Նարեկ Եղիազարյանի արարքում՝ իրեն վերագրվող

հանցանքը կատարելու հիմնավոր կասկածի առկայության մասին ստորադաս դատարանի հետևությունը:

20. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Խափանման միջոց չի կարող կիրառվել, եթե բացակայում է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածը: (...)»:*

21. Վերահաստատելով և զարգացնելով կալանավորման պայմաններից «հիմնավոր կասկածի» գնահատման սահմանների վերաբերյալ *Վահրամ Գևորգյանի*[17], *Հարություն Խաչատրյանի*[18] գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն *Էդգար Եղիազարյանի* գործով ընդգծել է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում (մեղադրվում) ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պատճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ[19]:

Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, ընդգծել է հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումն այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում (մեղադրվում է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննելիս դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից[20], ուստիև հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դատարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, հիմնավոր կասկածի հարցը գնահատման ենթարկելիս վճռորոշ նշանակություն կարող են ունենալ այն իրավիճակները, երբ արարքին տրված իրավական որակումն ակնհայտորեն չհամապատասխանի արարքի փաստական նկարագրությանը, իսկ արարքի փաստական կողմն առերևույթ վկայի արարքին տրված իրավական որակման համեմատությամբ իր

[17] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Վահրամ Գևորգյանի* գործով 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշումը, կետեր 20-23:
[18] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Հարություն Խաչատրյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ՏԴ2/0009/06/11 որոշումը, կետեր 13 և 15:
[19] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Էդգար Եղիազարյանի գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 14:
[20] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Ներսես Միսակյանի* գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱՐԴ1/0003/11/08 որոշումը:

բնույթով առավել նվազ ծանրության ենթադրյալ հանցագործության կատարման մասին[21]:

22. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նարեկ Եղիազարյանը և ****** *********-ը՝ 2023 թվականի հոկտեմբերի 16-ին, Երևան քաղաքի ***** ******** ** *** հասցեի մոտից ձերբակալվել են՝ ապօրինի զենք և զինամթերք ձեռք բերելու, պահելու և իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, որի ընթացքում՝ ****** *********-ի անձնական խուզարկությամբ, իր մոտ եղած պայուսակից հայտնաբերվել է մեկ հատ առանց գործարանային համարի մարտական ատրճանակ[22],

- ՀՀ ՆԳՆ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության պետ Լ.Սաֆարյանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ի գրության համաձայն՝ ներկայացված ատրճանակը ձևափոխված է և հանդիսանում է (կարող է օգտագործվել) ողորկափող հրազեն[23],

- 2023 թվականի հոկտեմբերի 18-ին՝ Նարեկ Եղիազարյանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում և նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն արարքի համար, որ նա ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և իրացրել հրազեն, մասնավորապես՝ չունենալով «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված հրազենի, ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու՝ այն ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և իրացնելու իրավունք, ինչպես նաև հրազենի և ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում օրենքով սահմանված կարգով ձևակերպված համապատասխան թույլտվություն, քննությամբ դեռևս չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և 2023 թվականի հոկտեմբերի 16-ին Երևան քաղաքի ***** ******** փողոցի **** **** հասցեի մոտակայքում ******* **********-ին իրացրել է **ողորկափող հրազեն հանդիսացող՝ ձևափոխված «ANSAR 1071» մոդելի «2302618» համարի 9 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակ**, որը հայտնաբերվել և վերցվել է 2023 թվականի հոկտեմբերի 16-ին իրականացված՝ ******** ********-ի անձնական խուզարկությամբ[24],

- Առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նարեկ Եղիազարյանի կողմից ******** ********-ին ողորկափող հրազեն հանդիսացող՝ ձևափոխված «ANSAR 1071» մոդելի «2302618» համարի 9մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակ ենթադրաբար իրացնելու վերաբերյալ քննությունը գտնվում է վաղ փուլում, ուստի հաշվի առնելով նաև քննչական իրադրությունը, դեպքի իրական հանգամանքների ճշտման ուղղությամբ ապացուցողական և վարութային գործողությունների կատարման անհրաժեշտությունը, վկայակոչված փաստերը և տեղեկությունները բավարար է համարել քրեական վարույթի տվյալ փուլում հիմնավոր կասկածի ապացուցման շեմը հաղթահարված համարելու համար[25],

- Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ վարույթի նյութերի համաձայն՝ հիմնավոր կասկածի չափանիշով ենթադրյալ հանցագործության առարկան առերևույթ չի հանդիսանում քաղաքացիական ողորկափող հրազեն և ընդհանրապես ներառված չէ

[21] Տես Վճռաբեկ դատարանի՝ Էդգար Եղիազարյանի գործով 2017 թվականի հունիսի 22-ի թիվ ԵԱՆԴ/0017/06/16 որոշումը, կետ 15:
[22] Տես վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 7-10, 17-20:
[23] Տես սույն որոշման 8-րդ կետը:
[24] Տես սույն որոշման 7-րդ կետը:
[25] Տես սույն որոշման 10-րդ կետը:

քաղաքացիական զենքի տեսակների մեջ: Բացի այդ, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն արգելվում է որպես քաղաքացիական և ծառայողական զենք շրջանառության մեջ դնել ինքնաշեն հրազեն, իր ձևով և տեսքով այլ առարկաների նմանեցված հրազեն, կառուցվածքային փոփոխության ենթարկված ակոսափող և ողորկափող հրազեն՝ առանց կրակելու ունակության կորստի: Այսինքն, առերևույթ նշված առարկայի շրջանառությունն ենթադրաբար արգելված է, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումները, այդ թվում՝ նույն օրենսգրքի 190-րդ հոդվածը, վերաբերում են օրինական շրջանառության մեջ գտնվող զենքերի համապատասխան ընթացակարգերի խախտմամբ զենք ձեռք բերելուն կամ վաճառելուն: Հետևաբար, այդ առումով հատուկ վերանայման բողոքում նշված փաստարկներն անհիմն են և չեն բխում վարույթի նյութերից, իսկ այդ մասով Առաջին ատյանի դատարանի հետևություններն իրավաչափ են[26]:

23. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 20-21-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում ստորադաս դատարանի դատողությունների հետ, մասնավորապես՝ տվյալ դեպքում նախաքննության մարմնի կողմից միջնորդությանը կից ներկայացված տվյալների համակցությունը բավարար են Նարեկ Եղիազարյանին վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարմանը նրա առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածի շեմը հաղթահարելու համար:

24. Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանի հետևությունն առ այն, որ Նարեկ Եղիազարյանի արարքում՝ իրեն վերագրվող հանցանքը կատարելու հիմնավոր կասկածն առկա է, հիմնավոր է:

25. Ամփոփելով վերոշարադրյալը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար Ն.Եղիազարյանի ձերբակալումն իրավաչափ ճանաչելով, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը, սակայն, չի ազդել վարույթի ելքի վրա[27]: Հետևաբար ստորադաս դատարանի դատական ակտը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է ճանաչել Նարեկ Եղիազարյանի իրավունքի խախտման փաստը, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա վերջինին պարզաբանել, որ ձերբակալման ընթացքում իրավունքի խախտման հետևանքով ունի ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու պահանջ ներկայացնելու իրավունք:

26. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

[26] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:
[27] Տե՛ս սույն որոշման 18-րդ կետը:

ՈՐՈՇԵՑ

1. Ճանաչել մեղադրյալ Նարեկ Անդրանիկի Եղիազարյանի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը և նրան պարզաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու պահանջ ներկայացնելու իրավունքը:

2. Նարեկ Անդրանիկի Եղիազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

ՎԴ/4076/05/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ
(ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2026 թվականի ապրիլի 14-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2025 թվականի որոշման դեմ, վարչական գործով ըստ հայցի Վահրամ Խաչատրյանի ընդդեմ Տեսչական մարմնի՝ Տեսչական մարմնի 04.04.2023 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0547 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վահրամ Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչական մարմնի 04.04.2023 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0547 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ե. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 21.05.2024 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2025 թվականի որոշմամբ Տեսչական մարմնի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.05.2024 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչական մարմինը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Սլավիկ Սարգսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործում առկա

նյութերի համաձայն՝ հայցվորը 14.03.2023 թվականին ծանուցվել է (փոստային հետադարձ հավաստագիր՝ ALO108436109AM) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու մասին, իսկ հայցվորի լիազորված անձը ծանուցվել է 13.03.2023 թվականին, սակայն վերջիններս չեն ներկայացել և չեն ներկայացրել միջնորդություն՝ այն հետաձգելու վերաբերյալ, որով կարող էին ապահովել հայցվորի իրավունքների իրացումը: Այսինքն՝ վարչական մարմինը հայցվորին չի զրկել լսված լինելու իրավունքի իրացման հնարավորությունից, ընդհակառակը՝ վերջինս չի ցանկացել իրացնել իր իրավունքները:

Թեև 15.03.2023 թվականի թիվ 0478 արձանագրությունը կազմվել է իրավախախտի բացակայությամբ և արձանագրությունում բացակայում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտում կատարած անձի ստորագրությունը և նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավախախտում կատարած անձի ստորագրելուց հրաժարվելու մասին նշումը, այդուհանդերձ գործի քննության ողջ ընթացքում այդ հանգամանքները չեն ազդել իրավախախտի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված իրավունքների իրակացմանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ վարչական մարմինը գործել է օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում՝ ապահովելով վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու սահմանդրական իրավունքի իրացման հնարավորությունը: Պատշաճ ծանուցված լինելու դեպքում հայցվորի չներկայանալը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը չի կարող արգելք հանդիսանալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն իրավախախտի բացակայությամբ կազմելու, գործի քննություն իրականացնելու և վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

Վերաքննիչ դատարանի դատական ակտով չի պարզաբանվել, թե Տեսչական մարմինը, բացի հայցվորի պատշաճ ծանուցումն ապահովելուց, ինչ այլ միջոցներով պետք է ապահովեր իրավախախտի ներկայությունը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

Ամբողջ վերոնշյալի հիման վրա պետք է փաստել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածում կիրառվող *«(...) արձանագրությունը սփորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը»* եզրույթը դեռևս չի նշանակում, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն իրավախախտի ներկայությամբ կամ մասնակցությամբ կազմելը, վերջինիս կողմից դրա մասին նախապես տեղյակ լինելու պարագայում իմպերատիվ պահանջ է:

Վերաքննիչ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածը չպետք է մեկնաբաներ այնպես, որ արդյունքում հաստատված համարեր, որ բացառապես իրավախախտի մասնակցությամբ կամ ներկայությամբ կարող է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը՝ այն դեպքում, երբ իրավախախտը և իր ներկայացուցիչը նախապես ծանուցված են եղել այն կազմելու մասին: Դեռ ավելին, նույն հոդվածում արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու մասին նշումը դեռևս չի նշանակում, որ այն պարտադիր կերպով պետք է կազմվի իրավախախտի մասնակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2025 թվականի որոշումը և փոփոխել այն կամ գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի պետի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանին և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանին ուղղված 07.03.2023 թվականի թիվ 14/4437-2023 ծանուցագրի համաձայն՝ 15.03.2023 թվականին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանը կամ վերջինիս կողմից լիազորված անձը հրավիրվել են մասնակցելու վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումների հետ կապված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, որը տեղի կունենա Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնում՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան թիվ 116 հասցեում **(գ.թ. 57, լազերային կրիչ).**

2) Համաձայն ստացման, հանձնման, վճարման, գրանցման մասին թիվ ALO108436109AM ծանուցագրի՝ Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանին հասցեագրված թիվ 14/4437-2023 ծանուցագիրը 14.03.2023 թվականին ստացվել է Վահրամ Խաչատրյանի կողմից **(գ.թ. 57, լազերային կրիչ).**

3) Համաձայն ստացման, հանձնման, վճարման, գրանցման մասին թիվ ALO108436627AM ծանուցագրի՝ Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանի լիազորված անձ Վահե Սեդրակյանին հասցեագրված թիվ 14/4437-2023 ծանուցագիրը 13.03.2023 թվականին ստացվել է Վահե Սեդրակյանի կողմից **(գ.թ. 57, լազերային կրիչ).**

4) Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ավագ տեսուչներ Միեր Աղեկյանի և Տաթևիկ Համբարձումյանի կողմից 15.03.2023 թվականին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 0478 արձանագրության համաձայն՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատի բժշկական ամբուլատորիայի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի էլեկտրոնային փոստին ուղարկվել են հետևյալ փաստաթղթերը.

1. Գրետա Գրիգորյանի աշխատանքային պայմանագրերը,
2. Քաղվածքներ հրամանագրքից,
3. Դիմումներ՝ արձակուրդ գնալու մասին,
4. Եզրակացություն և վերջնահաշվարկի հաշվարկ,
5. 2021-2022 թվականների աշխատավարձի վերաբերյալ տեղեկություն
6. Բանկային քաղվածք՝ աշխատավարձի և արձակուրդի վճարման վերաբերյալ:

Փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ խախտվել են.

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջը՝ այն է՝ Գրետա Գրիգորյանի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու օրը (06.09.2022 թվականին) չի կատարվել լրիվ վերջնահաշվարկ, այն է 2004 (13 օր), 2005 (22 օր), 2006 (22 օր), 2007 (22 օր), 2008 (22 օր), 2009 (22 օր), 2012 (22 օր), 2013 (22 օր), 2015 (22 օր), 2016 (14 օր), 2018 (22 օր), 2019 (22 օր), 2020 (22 օր), 2021 (22 օր), 2022 (15 օր) թվականների չօգտագործված ամենամյա

արձակուրդի օրերի քանակով հաշվարկված ընդհանուր գումարով 4.850.501 ՀՀ դրամ միջին աշխատավարձ չի վճարվել:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի պահանջը՝ այն է՝ գործատուի մեղքով Գրետա Գրիգորյանի չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի քանակով հաշվարկված միջին աշխատավարձի վճարումը չի կատարվել աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետում, ինչպես նաև գործատուն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի քանակով հաշվարկված միջին աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար Գրետա Գրիգորյանին չի վճարել տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի՝ 4.850.501 ՀՀ դրամի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

Տվյալ իրավախախտումների համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածով:

Խախտման համար պատասխանատու է Վահրամ Խաչատրյանը **(գ.թ. 36-39).**

5) Տեսչական մարմնի 04.04.2023 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0547 որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանը՝ որպես խախտում թույլ տված անձ, ենթարկվել է՝

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի պահանջը խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժի՝ նախազգուշացման,

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջը խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գրետա Գրիգորյանին օրենքով սահմանված ժամկետում չվճարված վերջնահաշվարկի՝ ամենամյա չօգտագործված արձակուրդային օրերի քանակով հաշվարկված միջին աշխատավարձի՝ 4.850.501 ՀՀ դրամի մեկ քառորդի չափով՝ 1.212.625 ՀՀ դրամ վարչական տուգանքի **(գ.թ. 40-44):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն

օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, (...):

Տվյալ դեպքում օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու և ըստ այդմ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրները, ապացույցների տեսակները, դրանց գնահատումը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը ներկայացվող պահանջները, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս և վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս պարզման ենթակա հարցերը, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու և վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշումը կայացնելու կարգն ու պայմանները սահմանող իրավական ակտ է հանդիսանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Այդ տվյալները, ի թիվս այլնի, հաստատվում են նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ընդհանուր կանոնները, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները նախատեսված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ և 255-րդ հոդվածներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք) (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի

համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք:

Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները:

Արձանագրություն կազմելիս խախտողին բացատրվում է նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշվում է արվում: (…):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որը մեկնարկում է վարչական արձանագրության կազմմամբ (հարուցման փուլ), որի ընթացիկ փուլում վարչական վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի) խնդիրն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված ապացույցների գնահատման արդյունքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ պարզել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ և 279-րդ հոդվածներում նշված հանգամանքները, և երկամսյա ժամկետում վարչական վարույթը եզրափակել կամ վարչական տույժ նշանակելու մասին որոշմամբ, կամ վարույթը կարճելու մասին որոշմամբ (եզրափակիչ փուլ) *(տե՛ս, Աշոտ Ազիզյանն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/9371/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.10.2023 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ևս ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը մեկնարկում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմամբ և եզրափակվում նույն օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված հետևյալ որոշումներից որևէ մեկի կայացմամբ. վարչական տույժ նշանակելու մասին որոշում կամ գործի վարույթը կարճելու մասին որոշում *(տե՛ս, Հադի Գուլոզիին ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/6934/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.10.2025 թվականի որոշումը):*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելիս մարմինը (պաշտոնատար անձը), ի թիվս այլնի, լուծում է նաև այն հարցը, թե արդյո՞ք ճիշտ են կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի արձանագրությունը և մյուս նյութերը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները և ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի մեկնարկը

պայմանավորելով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմամբ՝ օրենսդիրը կարևորել է նշված ապացույցը, ինչն արտահայտվել է մասնավորապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող կոնկրետ պահանջների ամրագրմամբ: Նշված իրավանորմը, սակայն, չի պարունակում հատուկ կարգավորում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վայրի մասին: Այդուհանդերձ, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ որոշ տեղեկությունների պարտադիր ներառման ենթակա լինելը վկայում է այն մասին, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որպես կանոն, պետք է կազմվի վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահին՝ վարչական իրավախախտումը կատարելու վայրում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի մասնակցությամբ կազմելու օրենսդրական կարգավորումը, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար, քանի որ վերջինս պետք է իրական հնարավորություն ունենա դիրքորոշում հայտնելու վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի մեկնարկի փուլից սկսած և ներկայացնի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ պարտադիր ներառման ենթակա տեղեկություններ՝ դրանով իսկ նպաստելով տվյալ գործի փաստական հանգամանքները պատշաճ պարզելու վարչական մարմնի պարտականության կատարմանը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են տեղեկություններ խախտողի անձի մասին, վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը, վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան, խախտողի բացատրությունը, արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը, վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք, եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում:

Ինչպես վերն արդեն նշվել է, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որպես կանոն, պետք է կազմվի վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահին՝ վարչական իրավախախտումը կատարելու վայրում: Այս կանոնից, սակայն, որոշ հանգամանքներով պայմանավորված կարող են լինել բացառություններ, որոնց անդրադարձ կկատարվի ստորև:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ առանձին դեպքերում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հատուկ մասում ներառված հոդվածներում նկարագրված վարչական իրավախախտումներից որոշ մասի պարագայում վերոգրյալ այնպիսի տվյալները, ինչպիսիք են՝ տեղեկություններ խախտողի անձի մասին, վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը, վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան, կարող են պարզվել վարչական իրավախախտումը հայտնաբերելու վայրում: Այսպես օրինակ, որոշ իրավախախտումների՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելը, չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելը» (հոդված 43.1), «Ներտնտեսային հողաշինարարության նախագծերից ինքնագլուխ շեղվելը» (հոդված 57), «Առանց ջրօգտագործման թույլտվության ջրօգտագործում իրականացնելը կամ ջրօգտագործման թույլտվության պահանջները

կամ պայմանները չկատարելը» (հոդված 63.2), «Անտառային հողերն առանց պատշաճ թույլտվության օգտագործելը կամ դրանք ինքնակամ զավթելը» (հոդված 64), «Առանց համապատասխան թույլտվության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելը կամ դրանց հաշվառման տվյալները լիազոր մարմնին չտրամադրելը» (հոդված 88.1), «Ռադիոկայանքների տեղակայումը և շահագործումը առանց գրանցման կամ առանց թույլտվության» (հոդված 146), «Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին կրպակների, տաղավարների կամ այլ կառուցվածքների տեղաբաշխումը, տեղադրումը» (հոդված 150.6), «Շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը, ինքնակամ կառույցի կասեցման դեպքում շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը շարունակելը» (հոդված 154), «Առևտրի, հանրային սննդի, սահմանափակման ենթակա և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելը» (հոդված 169.16), «Հասարակական վայրերում ոգելից խմիչքներ օգտագործելը կամ ոչ սթափ վիճակում հայտնվելը» (հոդված 175) և այլն, դեպքերում վերոգրյալ տվյալները վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմող պաշտոնատար անձը վարչական իրավախախտումը հայտնաբերել է վարչական իրավախախտման վայրում, քանի որ թվարկված հոդվածներում նկարագրված իրավախախտումները, դրանք կատարող սուբյեկտների մասին տվյալները, ինչպես նաև իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը չեն կարող արձանագրվել այն կատարելու վայրից դուրս:

Միևնույն ժամանակ, սակայն, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հատուկ մասում ներառված մի շարք հոդվածներում նկարագրված վարչական իրավախախտումների պարագայում վարչական իրավախախտման արձանագրությունն իրավախախտման վայրում կազմելու անհրաժեշտությունը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բացակայում է, քանի որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ ներառման ենթակա տեղեկություններին, այդ թվում՝ վարչական իրավախախտման կատարման տեղի, ժամանակի և էության վերաբերյալ, տիրապետելու համար անմիջապես իրավախախտման վայրում գտնվելը պարտադիր չէ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ իրավախախտումները դրսևորվում են օրենքով նախատեսված փաստաթղթերը լիազոր մարմիններ ներկայացնելու սահմանված կարգի խախտումների ձևով և իրավախախտման դեպքը պարզելու համար պետք է ստուգվի միայն համապատասխան փաստաթղթերը ներկայացված լինելու կամ չլինելու, ինչպես նաև դրանցում պարունակվող տեղեկությունների ճիշտ կամ սխալ լինելու հանգամանքները:

Այսպես օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մի շարք հոդվածներում՝ «Հաշվապահական հաշվառումը (գրանցումը) խախտումով վարելը, երբ դա կարող է առաջացնել (առաջացրել է) հարկի նվազեցում, կամ հայտարարագիրը, հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելը» (հոդված 169.1), «Պաշտոնական վիճակագրական դիտարկումների իրականացման համար անհրաժեշտ տվյալներ ներկայացնելու կարգը խախտելը կամ տվյալներն աղավաղելը» (հոդված 169.2), «Գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելը և (կամ) չվճարելը» (հոդված 169.8), «Ֆինանսական հաշվետվությունները

չներկայացնելը կամ դրանք չհրապարակելը, ֆինանսական հաշվետվությունները կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) չտրամադրելը» (հոդված 169.12), «Անհատական հաշվի բացման հայտը, անհատական հաշվետվությունը, ապահովագրական (աշխատանքային) ստաժում հաշվառվող աշխատանքային կամ այլ գործունեության ժամանակահատվածների մասին տվյալները սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելը կամ սխալ կամ կեղծ տվյալներով ներկայացնելը» (հոդված 169.18), «Հիմնադրամների կողմից հաշվետվությունը չհրապարակելը կամ թերի հրապարակելը» (հոդված 169.18), ««Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին», «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» և «Ջրօգտագործման մասին» տարեկան վարչական-վիճակագրական հաշվետվությունները սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը» (հոդված 169.19), «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի վարչական-վիճակագրական հաշվետվությունները սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը» (հոդված 169.24), «Հասարակական կազմակերպության կողմից հաշվետվությունը չհրապարակելը» (հոդված 169.26), «Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների պահպանում իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևի հաշվետվությունները սահմանված ժամկետներում և կարգով չներկայացնելը» (հոդված 169.32), «Զանգվածային լրատվության միջոցի ֆինանսական հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետներում չհրապարակելը կամ պարտադիր օրինակները չուղարկելը կամ թողարկման տվյալները չներառելը» (հոդված 189), «Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին պետական լիազոր մարմին հաշվետվություն չներկայացնելը կամ դա չհրապարակելը» (հոդված 189.13), «Օրենքով սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմնին չտրամադրելը» (հոդված 189.14), «Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները չներկայացվելը» (հոդված 189.30), «Թափոնների գոյացման, վերամշակման և օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվություն չներկայացնելը» (հոդված 201.5) և այլն, նկարագրված իրավախախտումների հայտնաբերումը պայմանավորված է փաստաթղթային ուսումնասիրությամբ, որպիսի պարագայում զանցանքի կոնկրետ սուբյեկտի գտնվելու վայր այցելելու և վարչական իրավախախտման արձանագրությունը տեղում կազմելու անհրաժեշտությունը բացակայում է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վարչական իրավախախտումը հայտնաբերելու պահին՝ վարչական իրավախախտումը կատարելու վայրում պետք է կազմվի բոլոր այն դեպքերում, երբ վարչական իրավախախտումը հնարավոր չէ հայտնաբերել վարչական իրավախախտման վայրից դուրս՝ զուտ միայն փաստաթղթային ստուգումների միջոցով և իրավախախտումը կատարող սուբյեկտների մասին տվյալները, ինչպես նաև իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը կարող են արձանագրվել միայն այն կատարելու վայրում, իսկ այն դեպքերում, երբ վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը հնարավոր է պարզել փաստաթղթային ստուգումների միջոցով, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կարող է կազմվել վարչական իրավախախտման վայրից դուրս:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող

պահանջները պահպանելու անհրաժեշտությանն ու իրական հնարավորությանը՝ պայմանավորված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն ինչպես դրա կատարման վայրում, այնպես էլ կատարման վայրից դուրս կազմելու հանգամանքով:

Այսպես. վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վարչական իրավախախտման վայրում կազմելու պարագայում գործում է այն կանխավարկածը, որ ենթադրյալ իրավախախտը գտնվում է վարչական իրավախախտման վայրում և մասնակցում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, վարչական իրավախախտման վերաբերյալ պաշտոնատար անձին տրամադրում է տեղեկություններ, տալիս է բացատրություն, ստորագրում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կամ հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց, որի մասին նշում է արվում արձանագրության մեջ: Այդուհանդերձ, գործնականում կարող են լինել դեպքեր, երբ ենթադրյալ իրավախախտը բացակայում է վարչական իրավախախտումը կատարելու վայրից և օբյեկտիվ պատճառներով չի կարողանում ներկա գտնվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը կամ իր գործողություններով խուսափում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակից դառնալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը չի կարգավորել նկարագրված դեպքերում վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձի գործողությունների շրջանակը, ինչի հետևանքով վարչական իրավախախտման գործի վերաբերյալ վարույթը հաճախ հնարավոր չի լինում մեկնարկել: Մասնավորապես՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը պետք է կազմվի ենթադրյալ իրավախախտի մասնակցությամբ, սակայն վերջինս բացակայում է:

Վճռաբեկ դատարանը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը ենթադրյալ իրավախախտի մասնակցությունը կարևորելով հանդերձ, գտնում է, որ վերջինիս բացակայությունը չպետք է արգելք կամ խոչընդոտ հանդիսանա վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու համար: Ըստ այդմ՝ ելնելով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում, այդ թվում՝ վարույթի հարուցման փուլից սկսած, անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու օրենսդրական իմպերատիվ պահանջից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ ենթադրյալ իրավախախտը ներկա չէ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և տվյալ դեպքում հնարավոր չէ ապահովել վերջինիս ներկայությունը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պետք է պատշաճ ձևով ծանուցի ենթադրյալ իրավախախտին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը մասնակցելու համար ներկայանալու վայրի և ժամանակի մասին և միայն պատշաճ ծանուցված անձի կողմից անգործություն դրսևորելու, մասնավորապես՝ ծանուցագրում նշված ժամկետում պաշտոնատար անձի հայտնած վայր չներկայանալու պարագայում՝ վերջինս իրավասու է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմել ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը կողմի մասնակցությունն ապահովելը պետք է իրականացվի այն հաշվառմամբ, որ կողմը հնարավորություն ունենա մասնակցելու դրա կազմմանը և ներկայացնելու իր դիրքորոշումը արձանագրվածի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ ծանուցումը պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը դրա կազմմանը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արձանագրության կազմմանը մասնակցելու իրական հնարավորությունը կարող է երաշխավորվել միայն այն

պարագայում, եթե ծանուցումը դրա հասցեատիրոջը հանձնվի արձանագրությունը կազմելու օրվան նախորդող առնվազն երեք աշխատանքային օր առաջ, ինչը հնարավորություն կտա ենթադրյալ իրավախախտին կազմակերպելու իր իրավունքների պաշտպանությունը ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմող պաշտոնատար անձն իրավասու կլինի արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմել միայն այն դեպքում, երբ իր տիրապետության տակ առկա լինի վերջինիս պատշաճ ծանուցված լինելու փաստը հաստատող թույլատրելի ապացույց:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածում ամրագրված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու կառուցակարգը պետք է հանգի հետևյալին.

Առաջին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է վարչական իրավախախտումը կատարելու վայրում՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցությամբ, եթե վարչական իրավախախտումը կարող է հայտնաբերվել միայն վարչական իրավախախտման վայրում:

Երկրորդ՝ ենթադրյալ իրավախախտի բացակայության պատճառով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վարչական իրավախախտումը կատարելու վայրում կազմելու անհնարինության դեպքում, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կարող է կազմվել վարչական իրավախախտման վայրից դուրս՝ պայմանով, որ ենթադրյալ իրավախախտը պատշաճ ձևով ծանուցված է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ժամանակի և վայրի մասին:

Երրորդ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է վարչական իրավախախտումը կատարելու վայրից դուրս, եթե վարչական իրավախախտումը հնարավոր է հայտնաբերել վարչական իրավախախտման վայրից դուրս՝ զուտ միայն փաստաթղթային ստուգումների միջոցով՝ պայմանով, որ ենթադրյալ իրավախախտը պատշաճ ձևով ծանուցված է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ժամանակի և վայրի մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցությունն ապահովելու պարտադիր պահանջ, միաժամանակ սահմանել է այն պայմանները, որոնց առկայության դեպքում վարչական մարմինն իրավասու է գործը քննել տվյալ անձի բացակայությամբ: Հետևաբար վարչական մարմնի ուղղակի պարտականությունն է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ քննելը, բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության վայրի և ժամանակի մասին, սակայն չի ցանկացել իրացնել գործի քննությանը մասնակցելու իր իրավունքը, ինչպես նաև եթե վարչական վարույթի մասնակիցը միջնորդություն չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման կապակցությամբ հարկ է համարել արձանագրել, որ իրավունքի սուբյեկտներին սուբյեկտիվ իրավունքներ վերապահելուց զատ, օրենսդիրը կանխորոշել է նաև այդ իրավունքների իրացման սահմանները: Եթե իրավունքի

սուբյեկտն անտեսում է օրենքով նախատեսված սահմանափակումները, ապա թույլ է տալիս իրավունքի չարաշահում *(տե՛ս Արթուր Սարգսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/8816/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.01.2024 թվականի որոշումը)*:

Ամփոփելով վերոգրյալը և իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու Վճռաբեկ դատարանի առաքելությունը և այդ առումով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող պահանջները կարող են բավարարված համարվել ինչպես այն դեպքում, երբ արձանագրությունը կազմվում է վարչական իրավախախտման կատարման վայրում՝ ենթադրյալ իրավախախտի մասնակցությամբ, այնպես էլ այն դեպքում, երբ արձանագրությունը կազմվում է վարչական իրավախախտման կատարման վայրից դուրս՝ պայմանով, որ ենթադրյալ իրավախախտը պատշաճ ձևով ծանուցված է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ժամանակի և վայրի մասին:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Վահրամ Խաչատրյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Տեսչական մարմնի 04.04.2023 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0547 որոշումը:

Դատարանը 21.05.2024 թվականի վճռով հայցը բավարարել է՝ այն պատճառաբանությամբ, որ *«(…) արձանագրության վրա բացակայում են այն անձի սփորագրությունը, ում նկատմամբ այն կայացվել է, բացակայում են նաև որևէ նշում կապված սույն արձանագրության հասցեատիրոջ կողմից արձանագրությունը սփորագրելուց հրաժարվելու վերաբերյալ, որպիսի պարագայում դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ սույն գործով հայցվորը մասնակից չի դարձվել արձանագրության կազմման գործընթացին:*

Ինչ վերաբերում է պատասխանողի դիրքորոշմանն առ այն, որ 07.03.2023թ. թիվ 14/4437-2023 ծանուցագրով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման համար հայցվորը հրավիրվել է Տեսչական մարմին, սակայն չի ներկայացել, ապա դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Արձանագրության կազմմանը կողմի մասնակցությունն ապահովելը պետք է իրականացվի այն հաշվառմամբ, որ կողմը հնարավորություն ունենա մասնակցելու դրա կազմմանը և ներկայացնելու իր դիրքորոշումը արձանագրվածի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ ծանուցումը պետք է տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը դրա կազմմանը:

(…) Տվյալ դեպքում ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանը և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանը հրավիրվել են մասնակցելու ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումների հետ կապված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը 15.03.2023թ., մինչդեռ ծանուցագիրը հայցվորի կողմից սփացվել է 14.03.2023թ., իսկ Վահե Սեդրակյանի կողմից՝ 13.03.2023թ., այսինքն նշանակված օրվանից համապատասխանաբար մեկ և երկու օր առաջ:

(…) նման պայմաններում հայցվորը գործնականում չէր կարող ողջամտորեն ապահովել իր իրավունքի իրացումը:

(…) արձանագրությունը, որի հիման վրա կայացվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 04.04.2023թ. վարչական տույժ նշանակելու մասին թիվ 0547 որոշումը, չի համապատասխանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված՝ վարչական իրավախախտման արձանագրության կազմման գործընթացին ներկայացնող վավերապայմաններին»:

Վերաքննիչ դատարանը 07.05.2025 թվականի որոշմամբ Տեսչական մարմնի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 21.05.2024 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ *«(…) վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝ դրանում բացակայում է Հայցվորի սպորագրությունը, ինչպես նաև որևէ նշում՝ արձանագրությունը ստանալուց հրաժարվելու և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները պարզաբանված լինելու վերաբերյալ, որպիսի պայմաններում օրենքի խախտմամբ կազմված արձանագրությունը չի կարող հիմք հանդիսանալ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար:*

Բացի այդ, Պատասխանողը վերաքննիչ բողոքով ևս հաստատել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը Հայցվորի բացակայությամբ կազմված լինելու փաստական հանգամանքը: Ավելին՝ նշված հանգամանքը հաստատվում է նաև Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի պետի 07.03.2023 թվականի թիվ 14/4437-2023 ծանուցմամբ, որով Վահրամ Խաչատրյանը հրավիրվել են մասնակցելու Վ/Դ-034 վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումների հետ կապված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը:

(…) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ կազմելու կանոնը չի կարող նույնացվել նույն օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության անցկացման տեղի և ժամանակի մասին ծանուցելու՝ վարչական մարմնի պարտականությունը սահմանող կանոնին: (…)»:

Վերը նշված վերլուծությունների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով վիճարկվող Տեսչական մարմնի 04.04.2023 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0547 որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանը՝ որպես խախտում թույլ տված անձ, ենթարկվել է՝

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի պահանջը խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժի՝ նախազգուշացման,

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջը խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գրետա Գրիգորյանին օրենքով սահմանված ժամկետում չվճարված

վերջնահաշվարկի՝ ամենամյա չօգտագործված արձակուրդային օրերի քանակով հաշվարկված միջին աշխատավարձի՝ 4.850.501 ՀՀ դրամի մեկ քառորդի չափով՝ 1.212.625 ՀՀ դրամ վարչական տուգանքի:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելը և (կամ) չվճարելը» վերտառությամբ 169.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը կամ ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում չկատարելը կամ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և (կամ) 2-րդ հոդվածներով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելը կամ այդ մեծությունը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր աշխատողի մասով չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ քառորդի չափով:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգում անել այն մասին, որ դրանում նկարագրված իրավախախտումը հայտնաբերելու և արձանագրելու համար բավարար է փաստաթղթային ստուգում իրականացնելը, ուստի արձանագրությունը գործատուի գտնվելու վայրում կազմելու անհրաժեշտությունը բացակայում է, և այն կարող է կազմվել վարչական իրավախախտման կատարման վայրից դուրս՝ պայմանով, որ ենթադրյալ իրավախախտը պատշաճ ձևով ծանուցված է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու ժամանակի և վայրի մասին:

Տվյալ դեպքում Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի պետի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանին և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանին ուղղված 07.03.2023 թվականի թիվ 14/4437-2023 ծանուցագրի համաձայն՝ 15.03.2023 թվականին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանը կամ վերջինիս կողմից լիազորված անձը հրավիրվել են մասնակցելու վարչական վարույթի արդյունքում արձանագրված խախտումների հետ կապված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմմանը, որը պետք է տեղ ունենար Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնում՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան թիվ 116 հասցեում:

Համաձայն ստացման, հանձնման, վճարման, գրանցման մասին թիվ ALO108436109AM և թիվ ALO108436627AM ծանուցագրերի՝ Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանին և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանին հասցեագրված թիվ 14/4437-2023 ծանուցագրերը ստացվել են Վահրամ Խաչատրյանի և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանի կողմից համապատասխանաբար՝ 14.03.2023 թվականին և 13.03.2023 թվականին:

Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի աշխատանքային օրենսդրության իրավական վերահսկողության ավագ տեսուչներ Միեր Աղեկյանի և Տաթևիկ Համբարձումյանի կողմից 15.03.2023 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 0478 արձանագրությունը, որի համաձայն՝ «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատի բժշկական ամբուլատորիայի» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի էլեկտրոնային փոստին ուղարկված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ խախտվել են.

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջը՝ այն է՝ Գրետա Գրիգորյանի

հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու օրը (06.09.2022 թվականին) չի կատարվել լրիվ վերջնահաշվարկ, այն է 2004 (13 օր), 2005 (22 օր), 2006 (22 օր), 2007 (22 օր), 2008 (22 օր), 2009 (22 օր), 2012 (22 օր), 2013 (22 օր), 2015 (22 օր), 2016 (14 օր), 2018 (22 օր), 2019 (22 օր), 2020 (22 օր), 2021 (22 օր), 2022 (15 օր) թվականների չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի քանակով հաշվարկված ընդհանուր գումարով 4.850.501 ՀՀ դրամ միջին աշխատավարձ չի վճարվել:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի պահանջը՝ այն է՝ գործատուի մեղքով Գրետա Գրիգորյանի չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի քանակով հաշվարկված միջին աշխատավարձի վճարումը չի կատարվել աշխատանքային պայմանագրով սահմանված ժամկետում, ինչպես նաև գործատուն չօգտագործված ամենամյա արձակուրդի օրերի քանակով հաշվարկված միջին աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար Գրետա Գրիգորյանին չի վճարել տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի՝ 4.850.501 ՀՀ դրամի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 0478 արձանագրության մեջ նշվել է, որ տվյալ իրավախախտումների համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածով: Որպես խախտման համար պատասխանատու նշվել է Վահրամ Խաչատրյանը: Արձանագրության վրա բացակայում է իրավախախտում կատարած անձի ստորագրությունը, արձանագրությունը ստանալու, ինչպես նաև առկա չէ արձանագրությունը ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու վերաբերյալ որևէ նշում:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ հարկ է համարում վերահաստատել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի մասնակցությամբ կազմելու օրենսդրական կարգավորման նպատակի վերաբերյալ վերն արտահայտված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ այն միտված է անձի լսված լինելու իրավունքի իրացման ապահովմանը, հետևաբար վարչական մարմինը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի այդ իրավունքի արդյունավետ իրացման համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վահրամ Խաչատրյանը և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանը 07.03.2023 թվականի թիվ 14/4437-2023 ծանուցագրով հրավիրվել են մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, որը պետք է տեղի ունենար Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնում՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Ա. Խաչատրյան թիվ 116 հասցեում՝ 15.03.2023 թվականին՝ ժամը 11:00-ին: Վահրամ Խաչատրյանը նշված ծանուցագիրը ստացել է 14.03.2023 թվականին, իսկ Վահե Սեդրակյանը՝ 13.03.2023 թվականին, սակայն վերջիններս չեն ներկայացել արձանագրության կազմմանը, և այն կազմվել է նրանց բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմելու համար անհրաժեշտ պայմանը, այն է՝ վերջինիս պատշաճ ծանուցված լինելու փաստը հաստատող բավարար ապացույցը, սույն գործում բացակայում է:

Այսպես. թեև գործում առկա ստացման, հանձնման, վճարման, գրանցման մասին թիվ ALO108436109AM և թիվ ALO108436627AM ծանուցագրերի համաձայն՝ Տեսչական մարմնի արևմտյան տարածքային կենտրոնի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանին և վերջինիս լիազորված անձ Վահե Սեդրակյանին հասցեագրված թիվ 14/4437-2023 ծանուցագրերը Վահրամ Խաչատրյանի և վերջինիս

լիազորված անձ Վահե Սեդրակյանի կողմից ստացվել են համապատասխանաբար 14.03.2023 թվականին և 13.03.2023 թվականին, այդուհանդերձ գործում բացակայում է ապացույց այն մասին, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու պահին՝ 15.03.2023 թվականի դրությամբ վարչական մարմնի տիրապետության տակ եղել են ծանուցագիրը վերջիններիս կողմից ստանալու վերաբերյալ ապացույցները: Ավելին, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը նշում չի պարունակում ենթադրյալ իրավախախտի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու մասին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հնարավոր չի համարում եզրահանգում անել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ կազմելու իրավական հնարավորության մասին և գտնում է, որ սույն գործով վիճարկվող 04.04.2023 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 0547 որոշման իրավաչափության գնահատման համար այդ հարցի պարզումն ունի էական նշանակություն, ինչը, սակայն, անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո սույն գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող հարցերը պարզելու նպատակով, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող դատավարական գործողությունները պատշաճ կատարելու, այդ թվում՝ հայցվորի կողմից ներկայացված բոլոր փաստերին անդրադառնալու և իրավական գնահատական տալու միջոցով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ՀՀ վարչական դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.05.2025 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՀԿԴ/0154/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

«15» ապրիլի 2026 թվական քաղաք Երևան

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ գլխավոր դատախազության հայցի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Էմիլ Ռուբիկի Հակոբյանի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի, Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի, Ռուզաննա Դավիթի Աղաբաբյանի, Գոհար Վրեժի Սիմոնյանի՝ աճուրդներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, հակակոռուպցիոն քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.05.2025 թվականի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1.1. Դիմելով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ՀՀ գլխավոր դատախազությունը (այսուհետ՝ Դատախազություն), ի թիվս այլնի, պահանջել է՝ անվավեր ճանաչել 26.05.2007 թվականի լոտ 9 հողամասի աճուրդը, որպես հետևանք անվավեր ճանաչել՝ 31.05.2007 թվականին Կոտայքի մարզպետի և Էմիլ Ռուբիկի Հակոբյանի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ ••••[1] պայմանագիրը, դրա հիման վրա կատարված՝ Կոտայքի մարզ, Աղավնաձոր համայնքի վարչական սահմանին հարող գույքի՝ իրավունքների պետական գրանցման միասնական •••••[2] մատյանի •••[3] համարի տակ գրանցված ••••[4] հա հողամասի նկատմամբ Էմիլ Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, Էմիլ Ռուբիկի Հակոբյանի և Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի միջև կնքված առուվաճառքի թիվ ••••[5] պայմանագիրը, դրա հիման վրա կատարված Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

[1] Հանդիսանում է անձնական տվյալ:
[2] Հանդիսանում է անձնական տվյալ:
[3] Հանդիսանում է անձնական տվյալ:
[4] Հանդիսանում է անձնական տվյալ:
[5] Հանդիսանում է անձնական տվյալ:

Քաղաքացիական գործին տրվել է թիվ ԿԴ/0383/02/20 համարը:

1.2. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մուշեղյան) 09.11.2022 թվականի որոշմամբ գործն ըստ ենթակայության հանձնվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանի քննությանը (այսուհետ՝ Դատարան): Գործին տրվել է նոր՝ թիվ ՀԿԴ/0079/02/22 համարը:

1.3. Դատարանի 21.08.2023 թվականի որոշմամբ թիվ ՀԿԴ/0079/02/22 հակակոռուպցիոն քաղաքացիական գործից առանձնացվել է Դատախազության պահանջն ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Էմիլ Ռուբիկի Հակոբյանի, երրորդ անձինք՝ Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ աճուրդներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին: Առանձնացված գործին տրվել է նոր՝ թիվ ՀԿԴ/0154/02/23 համարը:

1.4. Դատարանի (դատավոր՝ Լ. Դրմեյան) 01.11.2024 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Ի թիվս այլ պահանջների, Դատարանը վճռել է. «(...)անվավեր ճանաչել Կոտայքի մարզպետարանի կողմից 2007 թվականի մայիսի 26-ին կազմակերպված թիվ 9 լոտի աճուրդը, որպես դրա անվավերության հետևանք անվավեր ճանաչել Կոտայքի մարզպետի և Էմիլ Ռուբիկի Հակոբյանի միջև 2007 թվականի մայիսի 31-ին կնքված թիվ ••••[6] առուվաճառքի պայմանագիրը և ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական ••••[7] մատյանի •••[8] համարի տակ գրանցված ••••[9] հա հողամասի նկատմամբ Էմիլ Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը (վկայական՝ թիվ •••••••[10]): Հայցը մնացած մասով մերժել (...)»:

1.5. 02.12.2024 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատախազությունը (ներկայացուցիչ՝ Գ. Ղուկասյան):

1.6. Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.11.2024 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

1.7. 16.06.2025 թվականին վճռաբեկ բողոք է ներկայացրել Դատախազությունը (ներկայացուցիչ՝ Գ. Ղուկասյան) (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ):

1.8. Վճռաբեկ դատարանի 13.08.2025 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

1.9. Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

2.1. Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ և 304-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

2.2. Սույն գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Կոտայքի մարզպետարանի

[6] Հանդիսանում է անձնական տվյալ:
[7] Հանդիսանում է անձնական տվյալ:
[8] Հանդիսանում է անձնական տվյալ:
[9] Հանդիսանում է անձնական տվյալ:
[10] Հանդիսանում է անձնական տվյալ:

կողմից 26.05.2007 թվականին կազմակերպվել է թիվ 9 լոտի աճուրդը: Աճուրդում հաղթող է ճանաչվել Էմիլ Ռուբիկի Հակոբյանը, որի հետ 31.05.2007 թվականին կնքվել է առուվաճառքի պայմանագիր: Հողամասն աճուրդում ձեռք է բերվել 8.719.400 ՀՀ դրամով, ընդ որում՝ պետք է արձանագրել, որ ի սկզբանե աճուրդի մեկնարկային գին է սահմանված եղել 8.699.400 ՀՀ դրամը, որն ըստ ՀՀ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի թիվ 67 որոշման՝ կազմել է հողամասի կադաստրային արժեքի 50 տոկոսը: Նշվածից հետևում է, որ հողամասի կադաստրային արժեքն աճուրդի կազմակերպման պահին կազմել է շուրջ 18 միլիոն ՀՀ դրամ:

Այնուհետև 22.05.2009 թվականի առուվաճառքի պայմանագրով Էմիլ Ռուբիկի Հակոբյանը հողամասը վաճառել է Գրիգոր Անդրանիկի Գևորգյանին ընդամենը 3.580.000 ՀՀ դրամով: Ստացվում է, որ հողամասի աճուրդի մեկնարկային գինը՝ 8.699.400 ՀՀ դրամը, կազմել է գույքի կադաստրային արժեքի ընդամենը 50 տոկոսը, ինչից հետևում է, որ գույքը Գրիգոր Անդրանիկի Գևորգյանը ձեռք է բերել ոչ միայն շուկայականից, այլ նույնիսկ կադաստրային արժեքից շուրջ 5 անգամ պակաս արժեքով, ինչը ողջամտորեն Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի բարեխղճության մասով կասկած հարուցող հանգամանք է: Գրիգոր Անդրանիկի Գևորգյանը պատշաճ հոգածություն չի ցուցաբերել գույքը կադաստրային արժեքից շուրջ 5 անգամ պակաս արժեքով օտարվելու իրական դրդապատճառները պարզելու ուղղությամբ, որը հիմնավորում է գնորդի անբարեխիղճ վարքագիծը:

Ինքնին ակնհայտ է, որ շուրջ 18 միլիոն ՀՀ դրամ կադաստրային արժեքով գույքն այն ձեռք բերելուց հետո երկու տարի անց ողջամիտ չէ վաճառել ընդամենը 3.5 միլիոն ՀՀ դրամով, ինչն ակնհայտ կասկածելի է դարձնում գործարքի օրինականությունը:

Բողոք բերած անձը գտել է, որ գործարքների գների նման տարբերությունների դեպքում Գրիգոր Անդրանիկի Գևորգյանը պարտավոր էր պատշաճ շրջահայացություն դրսևորել՝ պարզելու, թե 8.719.400 ՀՀ դրամով գնված հողամասն ինչու է վաճառվում շուրջ 2 անգամ պակաս գնով և նշված փաստարկը բավարար կարող էր համարվել Գրիգոր Անդրանիկի Գևորգյանին որպես ոչ բարեխիղճ ձեռք բերող համարելու համար:

2.3. Վերաքննիչ դատարանը, գնահատելով փաստական հանգամանքները, արձանագրել է, որ երրորդ անձի բարեխղճության վերաբերյալ Դատարանի կատարած եզրահանգումները հաստատում են երրորդ անձի բարեխիղճ լինելու փաստը: Տվյալ դեպքում Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի՝ բարեխիղճ ձեռք բերող չլինելու փաստի ապացուցման պարտականությունը Դատարանի որոշմամբ դրված է եղել հայցվորի վրա, հետևաբար Դատարանի կողմից փաստը չհաստատվելու բացասական հետևանքները պետք է կրեր հայցվորը: Բողոքաբերի այն փաստարկը, որ Գրիգոր Անդրանիկի Գևորգյանը գույքը ձեռք է բերել ոչ միայն շուկայականից, այլ նույնիսկ կադաստրային արժեքից շուրջ հինգ անգամ պակաս արժեքով՝ հերքվում է, քանի որ հայցվորը Դատարանում չի հիմնավորել գործարքի արժեքի վերաբերյալ իր փաստարկների արժանահավատությունը, ուստի դրա չապացուցելու բացասական հետևանքները նույնպես պետք է կրեր վերջինս, հետևաբար Վերաքննիչ դատարանը, իրավաչափ համարելով Դատարանի կատարած եզրահանգումները, գտել է, որ Դատարանի կողմից կայացված 01.11.2024 թվականի դատական ակտը նշված հիմքով ենթակա չէ բեկանման:

Նշված եզրահանգումներն իրականացնելիս Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորը Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի ոչ բարեխիղճ լինելու վերաբերյալ եզրահանգումները կատարել է գործում առկա ապացույցների հիման վրա:

2.4. Բողոք բերած անձը գտել է, որ սույն գործով պետք է կիրառվեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասը, որը չի կիրառվել, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

2.5. Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ չնայած օտարման գործընթացում պաշտոնատար անձի կողմից ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում աճուրդի ընթացակարգային կանոնների խախտմանը՝ նշվածը դեռևս չի կարող վկայել այն մասին, որ վեճի առարկա գույքը դուրս է եկել պետության տիրապետումից անկախ վերջինիս կամքի, քանի որ վիճելի հողամասերն օտարելու պետության կամքը դրսևորվել է ոչ թե հրապարակային սակարկությունների միջոցով աճուրդ կազմակերպելով, այլ հենց ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողերի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշման ընդունմամբ և ՀՀ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով ստեղծելով և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշումն ընդունելով, ինչը սույն դեպքում ոչ թե կամքի բացակայություն է, այլ օրենսդրական պահանջների չպահպանում:

2.6. Մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պետության կամքն ուղղված է եղել գույքն աճուրդային եղանակով վաճառելուն, այլ ոչ թե ուղղակի վաճառքով օտարելուն, տվյալ դեպքում փաստացի տեղի է ունեցել ուղղակի վաճառք, ինչը հաստատվել է սույն գործով որպես գրավոր ապացույց ներկայացված հանձնաժողովի անդամների ցուցմունքների արձանագրություններով:

Գտել է, որ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը պարտադիր աճուրդային կարգով օտարման ենթակա լինելու պայմաններում ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնատար անձանց ոչ օրինաչափ վարքագծի հետևանքով դուրս են եկել պետության տիրապետումից անկախ պետության կամքից: Հետևաբար, անկախ այն հանգամանքից՝ հաջորդող գործարքներով գնորդները գործել են բարեխիղճ, թե՝ անբարեխիղճ, պետությունն իրավունք ունի հետ պահանջելու իր գույքը:

2.7. Անդրադառնալով երկկողմանի ռեստիտուցիայի հարցին՝ Բողոք բերած անձը նշել է, որ ըստ գործող օրենքի՝ գործարքն անվավեր ճանաչելով՝ կիրառվում է երկկողմանի ռեստիտուցիա, այսինքն՝ կողմերը վերադարձնում են գործարքով փաստացի ամբողջ ստացվածը, իսկ այն դեպքում, երբ ամբողջ ստացվածը հնարավոր չէ վերադարձնել, այսինքն՝ գույքը բնեղենով չի պահպանվել, կամ հնարավոր չէ վերականգնել նախկին դրությունը, ապա օրենսդիրը սահմանել է դրա արժեքը դրամով հատուցելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, այդուհանդերձ, չի սահմանում, թե հատուցման ընթացակարգի դեպքում դատարանը հատուցումը ո՞ր պահի դրությամբ պետք է կատարի՝ գործարքի կնքման պահի դրությամբ, թե՞ գործարքն անվավեր ճանաչելու պահի դրությամբ գործող արժեքով:

Գտել է, որ նշված նորմով սահմանված հատուցման ընթացակարգը պետք է կիրառվի գործարքն անվավեր ճանաչելու պահի դրությամբ գործող արժեքով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, սահմանելով գործարքի անվավերության հետևանքներ, առաջին հերթին սահմանել է, որ կողմերը միմյանց վերադարձնում են գործարքով ստացվածը, ինչը ենթադրում է, որ օրենսդրի կամքն առաջնահերթ ուղղված է մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը կամ մինչև անվավեր ճանաչված գործարքի կնքումը եղած դրության վերականգնումը, այդ է պատճառը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված նորմով կիրառվում է «պետք է վերադարձնեն գործարքով ամբողջ ստացվածը» արտահայտությունը: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործարքով ստացվածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը դրամով հատուցելու վերաբերյալ կարգավորումները ևս պետք է մեկնաբանվեն օրենսդրի

արտահայտած կամքի լույսի ներքո, այսինքն՝ գործարքն անվավեր ճանաչելով՝ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում գույքի արժեքը պետք է հատուցվի հենց գործարքն անվավեր ճանաչելու պահի դրությամբ գործող գույքի արժեքով, քանի որ պետությունը, հայցը հարուցելով, ունեցել է օրինական ակնկալիք վերադարձնելու հողամասը բնեղենով, այսինքն՝ վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, որպիսի պայմաններում հողամասը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում առնվազն պետք է հատուցվի գործարքն անվավեր ճանաչվելու պահի դրությամբ գործող հողամասի շուկայական արժեքը:

2.8. Բողոք բերած անձը նշել է, որ գործի քննության ընթացքում երկկողմանի ռեստիտուցիա կիրառելու կանոնների շրջանակներում առհասարակ քննարկման առարկա չի դարձվել գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում համարժեք փոխհատուցում պահանջելու հարցը, և ըստ այդմ, նաև հողամասի արժեքի չափի հարցը, քանի որ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինություն դիտարկվել է միայն հողամասի նախկին դրության բացակայությունը, մինչդեռ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինություն է համարվում ոչ միայն գույքի ֆիզիկական ամբողջականությունը պահպանված չլինելը, այլև անվավեր գործարքին հաջորդող մեկ կամ մի քանի գործարքների առկայությունը: Հետևաբար, գտել է, որ Դատարանը և Վերաքննիչ դատարանը, երկկողմանի ռեստիտուցիայի կիրառման արդյունքում պետք է նկատի ունենային վերոգրյալ հանգամանքները և ռեստիտուցիան կիրառվելիս չպետք է հիմք ընդունվեր առուվաճառքի պայմանագրով սահմանված հողամասի արժեքը:

2.9. Վերոգրյալի հիման վրա՝ Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի որոշումը և փոփոխել այն կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

3.1. ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողերի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշմամբ ՀՀ Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող անտառային ֆոնդի հողերից 55.88 հեկտարը հանգստի կազմակերպման նպատակով փոխադրվել է հատուկ պահպանվող տարածքների հողերի կատեգորիա՝ համաձայն թիվ 1, 2, 3, 4 և 5 հավելվածների **(հատոր 1-ին, գ.թ. 77)**:

3.2. ՀՀ Կոտայքի մարզպետի 23.04.2007 թվականի «Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի օտարումը կազմակերպող հանձնաժողով ստեղծելու և հողերի օտարման մասին» թիվ 67 որոշման համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.04.2007 թվականի «Հողի կատեգորիան փոխելու մասին» թիվ 422-Ն որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի, 67-րդ, 68-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 29.12.2003 թվականի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746 որոշման 2-րդ կետի «գ» ենթակետի պահանջներով՝ որոշվել է.

«1. Համայնքների վարչական սահմաններից դուրս մարզի տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հատուկ պահպանվող տարածքների հողերից 48.57 հա հանգստի կազմակերպման նպատակով ներկայացնել օտարման՝ աճուրդային կարգով:

2. Աճուրդի ներկայացվող հողամասերի մեկնարկային գինը սահմանել հարակից

համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի տարածագնահատման գոտիականության գործակիցներին և այդ համայնքներում ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման պայմաններին համապատասխան. Աղավնաձորի 30 տոկոսի չափով (1 քմ - 243 դրամ), Արտավազի համայնքին հարակից՝ 50 տոկոսի չափով (1 քմ - 111 դրամ), Արզականի համայնքին հարակից «Աղվերան» զանգվածում՝ 50 տոկոսի չափով (1 քմ - 147 դրամ), Հրազդանի քաղաքային համայնքին հարակից՝ 50 տոկոսի չափով (1 քմ - 612 դրամ):

3. Աճուրդի ներկայացվող հողամասերը բաժանել լոտերի և դրանց օտարման վերաբերյալ սահմանված կարգով հայտարարություն տեղադրել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

4. Աճուրդի կազմակերպման և անցկացման օր նշանակել 26.05.2007 թվականը:

5. Աճուրդի կազմակերպման և իրականացման նպատակով ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ կազմով՝ Կ. Շահգալդյան՝ մարզպետ, հանձնաժողովի նախագահ, Լ. Պետրոսյան՝ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, Ռ. Հովսեփյան՝ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար, Մ. Պետրոսյան՝ մարզպետարանի գլխավոր հաշվապահ, հանձնաժողովի անդամ **(հատոր 1-ին, գ.թ. 91)**:

3.3. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 26.04.2007 թվականի համարում տեղադրվել է «Հայտարարություն» վերտառությամբ ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ Կոտայքի մարզպետարանը հայտարարում է մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս մարզի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հատուկ պահպանվող տարածքների հողերից 48.57 հա հանգստի կազմակերպման նպատակով հողերի օտարման աճուրդ: Աճուրդի են ներկայացվում.(...) Լոտ N 2 – 0.5 հա - մեկնարկային գինը - 1215000 դրամ, Լոտ N 3 – 0.5 հա - մեկնարկային գինը - 1215000 դրամ, (...),(...) Լոտ N 8 –2.0 հա - մեկնարկային գինը - 4860000 դրամ, Լոտ N 9 – 3.58 հա - մեկնարկային գինը - 8699400 դրամ (...)» **(հատոր 5-րդ, գ.թ. 43)**:

3.4. 26.05.2007 թվականին կազմվել և որպես աճուրդը կազմակերպող լիազորված մարմնի ղեկավար Կ. Շահգալդյանի կողմից հաստատվել է «Հողամասն աճուրդով վաճառելու մասին» թիվ 9 արձանագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հողամասի օգտագործման նպատակ, հասցե՝ հատուկ պահպանվող տարածք, Կոտայքի մարզպետարան, 2. Հողամասն աճուրդով վաճառելու մասին համապատասխան որոշման համարը և տարեթիվը՝ աճուրդ հանձն. արձ. թիվ 3, 26-05-07թ.,

3. Աճուրդի մասնակիցների թիվը՝ 2,

4. Վաճառվող հողամասի համարը, ինդեքսը՝ Լոտ N 9,

5. Նախավճարի չափը՝ 434970,6. Հողամասի մեկնարկային գինը (հազ. դրամ)՝ 8699400, 7. Աճուրդային քայլի չափը (հազ. դրամ)՝ 10000,

8. Աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը (հազ. դրամ)՝ 8719400 ՀՀ դրամ,

9. Գնորդի տոմսի համարը՝ թիվ 5,10. Գնորդի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները (...)՝ Հակոբյան Էմիլ Ռուբիկի, •••••••••••••••••••• •••••••• ••••••••••••[11]»:

[11] Հանդիսանում է անձնական տվյալ

Արձանագրությունը ստորագրվել է աճուրդի կազմակերպիչ Կ.Շահգալդյանի և արձանագրող Ռ.Հովսեփյանի կողմից **(հատոր 1-ին, գ.թ. 23)**:

3.5. ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյանի և Էմիլ Ռուբիկի Հակոբյանի միջև 31.05.2007 թվականին կնքվել և նոտարական կարգով վավերացվել է հողամասի առուվաճառքի թիվ ••••[12] պայմանագիրը, որի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է գնորդին որպես սեփականություն հանձնել ••••[13] հա, որից հատուկ պահպանվող տարածք՝ լոտ թիվ 9 հողամասը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 8.719.400 ՀՀ դրամ: Պայմանագրի 2-րդ կետով արձանագրվել է, որ դրա կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է **(հատոր 1-ին, գ.թ. 24, 25)**:

3.6. ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձորի վարչական սահմաններին հարող՝ 3,58 հա տարածք հողամասի նկատմամբ 31.05.2007 թվականի թիվ •••••[14] առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Էմիլ Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 15.06.2007 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ ••••••[15] վկայականի պատճենը) **(հատոր 1-ին, գ.թ. 26-29)**:

3.7. Էմիլ Ռուբիկի Հակոբյանի և Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի միջև 22.05.2009 թվականին կնքվել և նոտարական կարգով վավերացվել է հողամասի առուվաճառքի թիվ ••••[16] պայմանագիրը, որի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է գնորդին որպես սեփականություն հանձնել 3,58 հա մակերեսով հողամասը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձորի վարչական սահմաններին հարող տարածք հասցեում: Անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Հրազդանի տարածքային ստորաբաժանման կողմից 14.06.2007 թվականին տրված թիվ ••••••[17] սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն **(հատոր 1-ին, գ.թ. 30, 31)**:

3.8. ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձորի վարչական սահմաններին հարող •••[18] հա մակերեսով հողամասի նկատմամբ 22.05.2009 թվականի թիվ ••••[19] առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Գրիգոր Անդրանիկի Գևորգյանի սեփականության իրավունքը (հիմք՝ 29.05.2009 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ •••••[20] վկայականի պատճենը) **(հատոր 1-ին, գ.թ. 32-36)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

4.1. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի

[12] Հանդիսանում է անձնական տվյալ:
[13] Հանդիսանում է անձնական տվյալ:
[14] Հանդիսանում է անձնական տվյալ:
[15] Հանդիսանում է անձնական տվյալ:
[16] Հանդիսանում է անձնական տվյալ:
[17] Հանդիսանում է անձնական տվյալ:
[18] Հանդիսանում է անձնական տվյալ:
[19] Հանդիսանում է անձնական տվյալ:
[20] Հանդիսանում է անձնական տվյալ:

որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործարքի անվավերության՝ աճուրդն անվավեր ճանաչվելու և սպացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրամական հատուցման ենթակա գույքի արժեքի որոշման առանձնահատկություններին:

4.2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

4.3. ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԼԴ/0435/02/13 քաղաքացիական գործով 28.12.2015 թվականին կայացրած որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) գործարքն անվավեր ճանաչելը և դրա անվավերության հետևանքները կիրառելը քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկն է, քանի որ այդպիսի գործարքն անվավեր ճանաչվելու դեպքում տեղի է ունենում երկկողմանի ռեստիտուցիա, այսինքն՝ անվավեր ճանաչված գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ օրենքով նախատեսված չեն»:

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով անվավեր գործարքների հետևանքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) օրենսդիրը թե՛ վիճահարույց, և թե՛ առոչինչ գործարքների համար նախատեսել է անվավերության միևնույն իրավական հետևանքները, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից: Նշված հոդվածի 2-րդ կետն ամրագրում է անվավեր գործարքի հետևանքները: Ըստ այդմ, անվավեր գործարքի կողմերը պարտավոր են վերադարձնել գործարքով ստացվածը (երկկողմանի կամ միակողմանի ռեստիտուցիա): (...) երբ հնարավոր չէ բնեղենով վերադարձնել գործարքով ձեռք բերվածը, ապա պետք է տրվի դրա դրամական

փոխհատուցումը» *(տե՛ս Սեդրակ Բարսեղյանն ընդդեմ Գագիկ Բարսեղյանի և Կարինե Բաղդասարյանի թիվ ԱՐԱԴ2/0077/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.04.2022 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է. «(…) գործարքի անվավերությունն ունի սուբյեկտիվ և օբյեկտիվ սահմաններ: Գործարքի անվավերության ***սուբյեկտիվ սահմանները*** ներառում են գործարքի մասնակիցներին (այն անձանց, որոնք կնքել (կատարել) են անվավեր գործարքը, կամ հօգուտ որոնց կնքվել է այդ գործարքը), ինչպես նաև՝ այն անձանց ու մարմիններին, որոնք օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա իրենց իրավասության սահմաններում օրենքի ուժով պարտավոր են ապահովել գործարքի կողմի սեփականության կամ այլ իրավական տիտղոսի վերականգնումը:

Գործարքի անվավերության ***օբյեկտիվ սահմանները*** ներառում են փաստական և իրավական այն հետևանքները, որոնք անմիջականորեն առաջացել են անվավեր գործարքի կնքմամբ, ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում կնքված գործարքի հետ, անմիջականորեն բխել են դրանից ու ենթակա են վերացման՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը հնարավորինս վերականգնելու համար **(«restitutio in integrum»):**

Նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործարքի անվավերության ընդհանուր հետևանքը երկկողմանի ռեստիտուցիայի կիրառումն է, որի ուժով գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով: Ընդ որում, ռեստիտուցիայի շրջանակներում պետք է դիտարկել ոչ միայն գործարքով ստացածը փաստացի վերադարձնելու կողմի պարտականությունը, ինչով վերացվում են անվավեր գործարքի կնքման (կատարման) փաստական հետևանքները, այլ նաև տվյալ գործարքի հիմքով այդ գործարքից բխող իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելը, սեփականության կամ այլ իրավական տիտղոսի փոփոխությունը վերացնելը՝ այդպիսով վերականգնելով մինչև տվյալ անվավեր գործարքի կնքումը եղած դրությունը:

(…) անվավեր գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինություն և որպես հետևանք՝ դրա արժեքը դրամով հատուցելու պարտականություն, կարող է առաջանալ նաև այն դեպքերում, երբ անվավեր գործարքին հաջորդել է մեկ կամ մի քանի այլ գործարք, որոնց արդյունքում անվավեր գործարքով ստացածի նկատմամբ սեփականության տիտղոս է ձեռք բերել այլ՝ անվավեր գործարքի մասնակից չհանդիսացող անձ*: (…)* Նման իրավիճակներում, հաշվի առնելով հայցի առարկան և հիմքը, դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն կա՛մ անվավեր գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինությամբ պայմանավորված դրա արժեքը դրամով հատուցելու հարցը, կա՛մ հաջորդող վիճահարույց գործարքների անվավերությունն ու դրանց նկատմամբ անվավերության հետևանքներ կիրառելու հնարավորությունը, կա՛մ գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու (վինդիկացիայի) վերաբերյալ հայցապահանջը՝ բոլոր դեպքերում նկատի ունենալով, որ կաշկանդված են դատարան ներկայացված հայցի առարկայով և հիմքերով» *(տե՛ս Արմեն Դալլաքյանն ընդդեմ Աշոտ Գալստյանի, Մխիթար Մաթևոսյանի թիվ ԼԴ1/1286/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.04.2025 թվականի որոշումը*):

4.4. *Մարդու իրավունքների եվրոպական դատարանը* (այսուհետ՝ Եվրոպական դատարան),

գործը քննելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին կանոնով սահմանված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո, որով ամրագրվում է գույքից անարգել օգտվելու սկզբունքը, համաձայնել է, որ տվյալ գործով վիճարկվող պայմանագրերի անվավեր ճանաչումը՝ որպես պարտադիր իրավական նորմերին և/կամ բարոյականությանը հակասող, նախատեսված էր օրենքով, ուստի վիճարկվող միջամտությունն օրինական էր Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակում: Եվրոպական դատարանը նկատի է առել Գերագույն դատարանի նախադեպային իրավունքը, որը ձևավորվել էր մինչև դիմող ընկերությունների գործով վիճարկվող որոշումների կայացումը, որով Գերագույն դատարանը սահմանել էր, որ այն դեպքերում, երբ կոնկրետ գործի հանգամանքներում հետագայում անվավեր ճանաչված պայմանագրով ձեռք բերված գույքերը հնարավոր չէ վերադարձնել մատակարարին, վերջինս պետք է իրավունք ունենա ստանալու փոխհատուցում՝ այդ առարկաների ձեռքբերման պահին առկա շուկայական արժեքին համապատասխան: Ընդգծել է, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «օրենք» հասկացությունը ներառում է ինչպես օրենսդրական իրավունքը, այնպես էլ դատական նախադեպային իրավունքը: Հետևաբար մերժել է դիմող ընկերությունների այն փաստարկը, որ իրենց գործով ռեստիտուցիայի կիրառման եղանակը որևէ իրավական հիմք չի ունեցել *(տե՛ս UAB Փրոֆարմա, UAB Բոնա Դիագնոսիսն ընդդեմ Լիտվայի (UAB Profarma, UAB Bona Diagnosis v. Lithuania)* թիվ 46264/22 և 50184/22 գանգատներով Եվրոպական դատարանի 07.*04.2025 թվականի վճիռը, կետեր 198, 204, 207, 208)*:

Եվրոպական դատարանը մեկ այլ՝ Գիզո-Գալիսեյն ընդդեմ Իտալիայի գործով փոխել է հողերի ապօրինի օտարման մասով փոխհատուցումը հաշվարկելու իր մեթոդը՝ հնարավոր անկանոնությունից խուսափելու նպատակով: Նոր մեթոդը հիմնված էր գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի օրվա դրությամբ, այլ ոչ թե տեղական իշխանությունների կողմից այնտեղ կառուցած ցանկացած շինության արժեքով պայմանավորված հողի շուկայական արժեքի աճի վրա: Ըստ այդմ Եվրոպական դատարանը նշել է, որ **սկզբունքորեն հողի վերադարձը դիմողներին կդներ հնարավորինս այն իրավիճակին համարժեք, որում նրանք կգտնվեին, եթե չլիներ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումը:** Սակայն տվյալ իրավիճակում, հաշվի առնելով, որ դիմողները երբեք չեն պահանջել հողի վերադարձ ազգային դատարաններում, առավել ևս որ նման **ռեստիտուցիան անհնար է**, Եվրոպական դատարանը գտել է, որ **դիմողներին պետք է տրամադրվի հողի ամբողջական արժեքին համապատասխանող փոխհատուցում**: Դատարանն ընդունելով, որ դիմողներն իրավունք ունեն ստանալու գույքի ամբողջական արժեքը, այնուամենայնիվ գտել է մի կողմից, որ նյութական վնասի չափը **գնահատելիս հիմք պետք է ընդունվի ոչ թե այն օրը, երբ կայացվում է դատարանի վճիռը, այլ այն օրը, երբ դիմողները կորցրել են հողի սեփականության իրավունքը**: Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը գտել է, որ դիմողների կրած վնասն ինքնաբերաբար պետության կողմից կառուցված շենքերի ընդհանուր արժեքին հավասարեցնելու մոտեցումը չի կարող արդարացված լինել: Նման մեթոդը կարող է հանգեցնել դիմողների անհավասար վերաբերմունքի՝ կախված իշխանությունների կողմից իրականացված հանրային աշխատանքների բնույթից, ինչը պարտադիր չէ, որ կապ ունենա հողի սկզբնական ներուժի հետ: Բացի այդ, այդպիսի փոխհատուցման մեթոդը նյութական վնասի փոխհատուցմանը վերագրում է պատժիչ կամ զսպող դեր պետության նկատմամբ, փոխանակ կատարելու իր հիմնական՝ դիմողների նկատմամբ փոխհատուցման դերը *(տե՛ս Գիզո-Գալիսեյն ընդդեմ Իտալիայի (Guiso-Gallisay v. Italy)* թիվ 58858/00 գանգատով

Եվրոպական դատարանի 22.12.2009 թվականի վճիռը, կետեր 96, 103): *Պետք է նկատի առնվի փոխհատուցման համարժեքությունը, որը հավանաբար, կնվազի, եթե այն վճարվի առանց հաշվի առնելու դրա արժեքը նվազեցնող տարբեր հանգամանքներ, ինչպիսին է զգալի ժամանակահատվածի անցումը (*տես «Ստրան» հունական վերամշակման գործարանը և Ստրատիս Անդրեադիսն ընդդեմ Հունաստանի (*Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece) թիվ 13427/87 գանգատով Եվրոպական դատարանի 09.12.1994 թվականի վճիռը, կետ 82)*:

Հատուցման համապատասխան չափը որոշելիս Եվրոպական դատարանը պետք է հաշվի առնի իր նախադեպային իրավունքում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ սահմանված չափանիշները, որոնց համաձայն՝ առանց գույքի արժեքին ողջամտորեն համարժեք գումարի վճարման, գույքի զավթումը սովորաբար կլիներ անհամաչափ միջամտություն, որն այդ հոդվածի իմաստով չէր կարող համարվել արդարացված: Հետևաբար, **Եվրոպական դատարանը նպատակահարմար է համարել սահմանել այնպիսի գումարներ, որոնք որքան հնարավոր է, «ողջամտորեն համարժեք» են հողամասերի շուկայական արժեքին, այսինքն՝ սահմանել այնպիսի գումարներ, որոնք Եվրոպական դատարանն ինքն էլ կհամարեր ընդունելի Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, եթե պատասխանող պետությունը պատշաճ կերպով փոխհատուցեր դիմողներին**: Այդ նպատակով Եվրոպական դատարանը պետք է կատարի վիճարկվող բռնագրավման հետևանքների ընդհանուր գնահատում՝ փոխհատուցման չափը հաշվարկելով՝ դիմորդների կողմից դրա նկատմամբ սեփականության իրավունքը կորցնելու պահին հողի արժեքի համաձայն *(տես Վիստիշը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի (Vistiņš and Perepjolkins v. Latvia)* թիվ 71243/01 գանգատով Եվրոպական դատարանի 25.03.2014 թվականի վճիռը, կետ 36): *Վերջապես, հաշվի առնելով տվյալ գործի առանձնահատկությունները, Եվրոպական դատարանը պետք է համապատասխան գումարները հաշվարկի արդարացիության նկատառումներին համապատասխան* [Արդյոք միջամտությունը «նախատեսված էր օրենքով»] (տես Հունաստանի նախկին թագավորը և ուրիշներն ընդդեմ Հունաստանի (*Former King of Greece and Others v. Greece)* թիվ 25701/94 գանգատով Եվրոպական դատարանի 25701/97 թվականի վճիռը, կետեր 78-79)*:*

Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ պետության կողմից կիրառվող ցանկացած միջոցի դեպքում պետք է առկա լինի կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև ողջամիտ համաչափության հարաբերակցություն: Հետևաբար, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտման վերաբերյալ յուրաքանչյուր գործով դատարանը պարտավոր է պարզել, թե արդյոք պետության գործողության կամ անգործության հետևանքով տվյալ անձը կրել է անհամաչափ և չափազանց ծանր բեռ *(տես Լեկիչն ընդդեմ Սլովենիայի (Lekić v. Slovenia) [Մեծ պալատ], թիվ 36480/07 գանգատով Եվրոպական դատարանի 11.12.2018 թվականի վճիռը, կետ 110)*:

4.5. Վերը նշված վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անվավեր գործարքի միակ հնարավոր իրավաբանական հետևանքները կապված են բացառապես դրա անվավերության հետ, այսինքն՝ նախքան գործարքի կնքումը եղած վիճակի վերականգնումը, ինչը դրսևորվում է նրանում, որ կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է, որ եթե անհնարին է գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելը՝ սկսում է գործել դրա արժեքը դրամով հատուցելու իրավական կարգավորումը:

4.6. Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև նշել, որ ՀՀ քաղաքացիական

օրենսգրքի 304-րդ հոդվածն ուղղակիորեն չի սահմանում այն պահը, որի դրությամբ պետք է հաշվարկվի գործարքով ստացված և բնեղենով չվերադարձվող գույքի արժեքը, միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1093-րդ հոդվածի 1-ին *մասը սահմանում է, որ եթե այլ բան նախատես*ված չէ նույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, նույն (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ» վերտառությամբ 61-րդ) գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև՝ 1) անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ:

4.7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհիմն հարստացման կամ խնայման միջոցով ձեռք բերված գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում ձեռք բերողը պետք է տուժողին հատուցի ձեռքբերման պահին այդ գույքի իրական արժեքը, ինչպես նաև գույքի արժեքի հետագա փոփոխությունների պատճառով ծագած վնասները, եթե ձեռք բերողն անհիմն հարստացման մասին իմանալուց հետո անմիջապես չի հատուցել գույքի արժեքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես գործարքի անվավերության հետևանք, գույքը բնեղենով չստացած կողմի ակնկալիքը սահմանափակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված՝ գործարքը կնքելու պահին գույքի արժեքը հատուցելու շրջանակներով, որից հետո՝ գույքի արժեքի հետագա փոփոխությունների արդյունքում առաջացած անհամապատասխանության հարցը կարող է լուծվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված եղանակով, այսինքն՝ ոչ թե ռեստիտուցիայի, այլ վնասների հատուցման եղանակով:

Այսինքն, գործարքի անվավերության հետևանքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինությամբ պայմանավորված՝ գույքի արժեքը գործարքի կնքման թե գործարքն անվավեր ճանաչելու պահի դրությամբ որոշելիս պետք է ելակետ ընդունել երկկողմանի ռեստիտուցիայի կիրառման նպատակը, այն է՝ կողմերից յուրաքանչյուրի համար մինչ գործարք կնքելը եղած վիճակի հնարավորինս վերականգնումը: Այլ կերպ ասած՝ առաջնորդվելով ռեստիտուցիայի կիրառման նպատակով՝ ամեն պարագայում հատուցման ենթակա արժեքը պետք է միտված լինի անվավեր ճանաչված գործարքի հետևանքները հնարավորինս վերացնելուն, որը դրսևորվում է դրամով գույքի արժեքի հատուցմամբ:

4.8. Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ հիմքեր կան ենթադրելու, որ ռեստիտուցիայի արդյունքում գույքը բնեղենով վերադարձնելն անհնար է, ինչը կարող է պայմանավորված լինել մասնավորապես՝ այդ գույքի կորստով, հետագա նպատակային օգտագործումը բացառող վնասմամբ, կամ երրորդ անձանց մոտ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հետևանքով, ռեստիտուցիան պետք է իրականացվի գույքի արժեքը դրամով հատուցելու եղանակով, ինչպես որ սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ մասով:

Այսպիսով, բացահայտելով «գույքի արժեք» հասկացության բովանդակությունը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի արժեք ասելով պետք է հասկանալ անվավեր ճանաչված **գործարքի կնքման պահին գույքի շուկայական արժեքը,** երբ դրամով արժեքի հատուցումը **«ողջամտորեն համարժեք»** է բնեղենով չվերադարձված, հենց գործարքի կնքման պահին առկա գույքի արժեքին՝ հիմքում ունենալով արդարացի հավասարակշռման ու համաչափ միջամտության սկզբունքները:

Դրա հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ թեև վիճահարույց գործարքը վավեր է, քանի դեռ դատարանի կողմից անվավեր չի ճանաչվել,

այնուամենայնիվ դրա անվավերությունը ծագում է ոչ թե դատարանի կողմից անվավեր ճանաչելու, այլ գործարքը կնքելու պահից, հետևաբար անվավեր պայմանագրով կողմերի սահմանած պայմանները, այդ թվում՝ գինը, չեն կարող դիտվել համաձայնեցված, հետևաբար չեն կարող հիմք ընդունվել գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը որոշելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրի գինը հիմնված է եղել տվյալ պահին համապատասխան կարգով որոշված գույքի շուկայական արժեքի վրա, որը կողմերը չեն վիճարկում: Գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության մնացած բոլոր դեպքերում դրա արժեքը ևս ենթակա է ապացուցման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցներով և կարգով:

4.9. Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևությանը, որ անվավեր գործարքով ձեռքբերված գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում երկկողմանի ռեստիտուցիա իրականացնելիս հատուցումը պետք է կատարվի ձեռքբերման պահին գույքի՝ շուկայում ձևավորված իրական արժեքի չափով, որը կարող է և չհամընկնել պայմանագրով որոշված գնի հետ, հետևաբար, գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի քննության պարագայում, ի թիվս այլ փաստերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցներով և սահմանված կարգով ապացուցման ենթակա է նաև վիճարկվող գործարքի կնքման պահին տվյալ գույքի իրական (շուկայական) արժեքը:

<u>Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.</u>

4.10. Գործի փաստերից հետևում է, որ ՀՀ Կոտայքի մարզպետարանը կազմակերպել և անցկացրել է հողերի օտարման աճուրդ, որին մասնակցել և հաղթող է ճանաչվել Էմիլ Ռուբիկի Հակոբյանը: ՀՀ Կոտայքի մարզպետի և Էմիլ Ռուբիկի Հակոբյանի միջև 31.05.2007 թվականին կնքվել է հողամասի առուվաճառքի թիվ ••••[21] պայմանագիրը, որի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է գնորդին որպես սեփականություն հանձնել լոտ թիվ 9 հողամասը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 8.719.400 ՀՀ դրամ: ՀՀ Կոտայքի մարզի Աղավնաձորի վարչական սահմաններին հարող ••••[22] հա տարածք հողամասի նկատմամբ 31.05.2007 թվականի թիվ ••••[23] առուվաճառքի պայմանագրի հիման վրա գրանցվել է Էմիլ Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքը (տե՛ս սույն որոշման 3.2.-3.6.-րդ կետերը):

4.11. Դատարանը հիմք ընդունելով գործի քննությամբ հաստատված փաստերը՝ արձանագրել է. *«(...) 26.05.2007 թվականի թիվ 2, թիվ 3, թիվ 8 և թիվ 9 լոտերի աճուրդներն անցկացվել են «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 14-րդ հոդվածներում սահմանված կանոնների խախտմամբ՝ գտնում է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի հիման վրա դրանք ենթակա են անվավեր ճանաչման, և ըստ այդմ այդ աճուրդների հիման վրա Կոտայքի մարզպետի և Էմիլ Հակոբյանի միջև 31.05.2007 թվականին կնքված առուվաճառքի թիվ ••••[24], թիվ ••••[25],*

[21] Հանդիսանում է անձնական տվյալ:
[22] Հանդիսանում է անձնական տվյալ:
[23] Հանդիսանում է անձնական տվյալ:
[24] Հանդիսանում է անձնական տվյալ:
[25] Հանդիսանում է անձնական տվյալ:

թիվ ••••[26], թիվ ••••[27] պայմանագրերը և դրանց հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները ենթակա են անվավեր ճանաչման՝ որպես աճուրդների անվավերության հետևանք: Ըստ այդմ, անվավեր ճանաչվող գործարքների կողմերը պարտավոր են իրար վերադարձնել գործարքով իրենց ամբողջ սպացածը, իսկ սպացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրանց արժեքը դրամով»:

Այնուհետև Դատարանը եզրահանգել է, որ. *«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով թիվ 9 լոտի ••••[28] հա հողամասը պետությանը Էմիլ Հակոբյանի կողմից բնեղենով վերադարձնելու անհնարինություն կարող է համարվել սույն դեպքը, երբ հողամասի հետագա քաղաքացիական շրջանառության հետևանքով գույքը չի գտնվում Էմիլ Հակոբյանի մոտ և չի կարող նրա վրա դրվել գույքը բնեղենով վերադարձնելու պարտավորություն, հետևաբար Կոտայքի մարզպետարանին ենթակա է հատուցման հողամասի արժեքը: Մյուս կողմից, Կոտայքի մարզպետարանի կողմից Էմիլ Հակոբյանին ենթակա է վերադարձման գործարքով սպացած գումարը՝ 8,719,400 ՀՀ դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործով այլ փաստ առկա չէ՝ Դատարանը թիվ 9 լոտի ••••[29]հա հողամասի արժեքը որոշելիս հիմք է ընդունում թիվ ••••[30] պայմանագրում նշված արժեքը՝ 8,719,400 ՀՀ դրամ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ••••[31] պայմանագրի կնքման պահին Էմիլ Հակոբյանի կողմից Կոտայքի մարզպետարանին վճարվել է գույքի արժեքը՝ Դատարանը գտնում է, որ գույքի արժեքը հատուցելու և պայմանագրի գինը վերադարձնելու պարտավորություններն իրենց փաստացի հետևանքով նույնանում են: Հետևաբար, թիվ 9 լոտի ••••[32] հա հողամասի աճուրդի անվավերության հետևանքում ենթակա է անվավեր ճանաչման Կոտայքի մարզի Աղավնաձորի վարչական սահմաններին հարող ••••[33] հա տարածք հողամասի նկատմամբ 2007 թվականի մայիսի 31-ի թիվ ••••[34] առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Էմիլ Ռուբիկի Հակոբյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, իսկ անվավերության այլ հետևանքներ կիրառելու պահանջի մասով հայցը ենթակա է մերժման»*:

4.12. Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով թիվ 9 լոտի մասով երկկողմանի ռեստիտուցիա կիրառելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներին, արձանագրել է. *«(...) բողոքաբերի փաստարկները չեն կարող դիտարկվել հիմնավոր և չի կարող կիրառվել երկկողմանի ռեստիտուցիա, քանի որ թիվ 9 լոտի ••••[35] հա հողամասը ներկայումս չի գտնվում Էմիլ Հակոբյանի փաստացի տիրապետության ներքո, իսկ նշված գույքը բնեղենով պետությանը վերադարձնելը գործնականում հնարավոր չէ, քանի որ գործով հաստատվում է երրորդ անձ Գրիգոր Գևորգյանի բարեխիղճ ձեռքբերող լինելու փաստը: Վերոնշյալից հետևում է, որ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում հատուցման էր ենթակա դրա արժեքը, ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասի արժեքը որոշելիս*

[26] Հանդիսանում է անձնական տվյալ:
[27] Հանդիսանում է անձնական տվյալ:
[28] Հանդիսանում է անձնական տվյալ:
[29] Հանդիսանում է անձնական տվյալ:
[30] Հանդիսանում է անձնական տվյալ:
[31] Հանդիսանում է անձնական տվյալ:
[32] Հանդիսանում է անձնական տվյալ:
[33] Հանդիսանում է անձնական տվյալ:
[34] Հանդիսանում է անձնական տվյալ:
[35] Հանդիսանում է անձնական տվյալ:

հիմք է ընդունվել թիվ ••••[36] պայմանագրով սահմանված գումարը՝ 8.719.400 ՀՀ դրամը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված պայմանագրի կնքման պահին Էմիլ Հակոբյանը գույքի արժեքը ամբողջությամբ վճարել է, ուստի Դատարանը իրավաչափորեն եզրակացրել է, որ գույքի արժեքի հատուցման և պայմանագրով վճարված գումարի վերադարձման պարտավորություններն իրենց հետևանքով ըստ էության նույնանում են, ուստի հերքվում է բողոքաբերի փաստարկներն առ այն, որ «պետությունը նման պայմաններում զրկվում է ոչ միայն վիճելի հողամասը բնեղենով հետ ստանալու հնարավորությունից, այլև զրկվում է նաև այն բնեղենով վերադարձնելու անհնարինության պայմաններում դրա դիմաց համարժեք հատուցում ստանալու հնարավորությունից», քանի որ ինչպես արդեն վերը նշվեց 2007 թվականի մայիսի 31-ին կնքված առուվաճառքի թիվ ••••[37] պայմանագրով Էմիլ Հակոբյանի կողմից 8.719.400 ՀՀ դրամ վճարած լինելու հանգամանքը, սույն գործի փաստերի հաշվառմամբ, բացառում է նշված գույքի վերադարձը՝ ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական ձևով»:

4.13. Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանն արձանագրելով այլ փաստ առկա չլինելու հանգամանքը՝ հատուցման համար հիմք է ընդունել պայմանագրի գինը, որպիսի դիրքորոշումը Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել, մինչդեռ Դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելիս հայցվորի վրա չի դրել վերադարձման ենթակա հողամասի արժեքի ապացուցման պարտականություն, արդյունքում՝ քննարկման առարկա չի դարձրել գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության պարագայում գույքի իրական (շուկայական) արժեքը որոշելու հարցը, ինչն էլ հանգեցրել է այդ մասով վեճի սխալ լուծման:

4.14. Հիմք ընդունելով սույն որոշմամբ վերը արտահայտված դիրքորոշումները (տե՛ս սույն որոշման 4.4.-4.9.-րդ կետերը)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի խախտում թույլ տրված լինելու մասին Բողոք բերած անձի փաստարկը հիմնավորված է, քանի որ գործարքով ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինությամբ պայմանավորված՝ գույքի հատուցման ենթակա արժեքը պարզված չլինելու պայմաններում չի ապահովվել սեփականատիրոջ՝ գույքի արժեքի չափով անվավեր ճանաչված հիմնական (սկզբնական) գործարքով գնորդից հատուցում ստանալու իրավունքը, ինչն էլ հանգեցրել է երկկողմանի ռեստիտուցիայի սխալ կիրառմանը՝ ըստ էության իմաստազրկելով գործարքն անվավեր ճանաչելու պահանջի բավարարումը:

4.15. Վերոնշյալի հիման վրա անդրադառնալով Բողոք բերած անձի այն փաստարկին, որ պետությունը զրկվում է ոչ միայն վիճելի հողամասը բնեղենով հետ ստանալու հնարավորությունից, այլև՝ այն բնեղենով վերադարձնելու անհնարինության պայմաններում դրա դիմաց համարժեք հատուցում ստանալու հնարավորությունից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որպես գործարքի անվավերության հետևանք, գույքը բնեղենով չստացած կողմի ակնկալիքը սահմանափակվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված՝ գործարքը կնքելու պահին գույքի արժեքը հատուցելու շրջանակներով, որից հետո՝ գույքի արժեքի հետագա փոփոխությունների արդյունքում առաջացած անհամապատասխանության հարցը կարող է լուծվել ոչ թե ռեստիտուցիայի, այլ վնասների հատուցման եղանակով:

4.16. Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում

[36] Հանդիսանում է անձնական տվյալ:
[37] Հանդիսանում է անձնական տվյալ:

է բավարար՝ Վերաքննիչ դատարանի 15.05.2025 թվականի որոշումը մասնակիորեն բեկանելու համար, և գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և գործը համապատասխան դատարան նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ որպես գործի նոր քննության ծավալ սահմանելով վեճի առարկա գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինությամբ պայմանավորված՝ գործարքը կնքելու պահին այդ գույքի իրական (շուկայական) արժեքը պարզելու հարցը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

5. <u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.</u>

5.1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) կանոններին համապատասխան:

5.2. Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

5.3. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 15.05.2025 թվականի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 01.11.2024 թվականի վճիռը՝ անվավերության այլ հետևանքներ կիրառելու պահանջի մերժումն անփոփոխ թողնելու մասով բեկանել և գործն այդ մասով ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 15.05.2025 թվականի որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՍԴ/0704/02/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ)

2026 թվականի մայիսի 26-ին

գրավոր ընթացակարգով քննելով գործին մասնակից չդարձած անձ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.03.2025 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ Տիգրան Ջավադյանի հայցի ընդդեմ Գալյա Արզումանյանի, Նարինե Հակոբյանի, Ներսես և Նարեկ Խաչատրյանների՝ գույքը տիրազուրկ ճանաչելու ու դրա նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Ջավադյանը պահանջել է Սյունիքի մարզի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի 9-րդ շենքի թիվ 26 բնակարանը ճանաչել տիրազուրկ և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքն այդ բնակարանի նկատմամբ:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան) 05.10.2020 թվականին վճռել է. «1. Հայցը բավարարել մասնակի: 2. Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի թիվ 9 շենքի թիվ 26 հասցեում գտնվող բնակարանը ճանաչել տիրազուրկ և ձեռքբերման վաղեմության ուժով հանձնել Տիգրան Անուշավանի Ջավադյանի սեփականությանը: 3. Պատասխանող Ներսես Ֆերիկի Խաչատրյանի մասով գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով՝ կարճել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.03.2025 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ ու 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ, 362-րդ, 365-րդ ու 372-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կայացրել է ակնհայտ անօրինական դատական ակտ, քանի որ անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործի շրջանակներում վեճի առարկա բնակարանը պատկանում է նաև իր պարտապան Նարեկ Խաչատրյանին, և սույն գործի քննության պահին արդեն իսկ առկա է եղել վերջինիցս գումար բռնագանձելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարուցվել է կատարողական վարույթ: Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել պարտապան Նարեկ Խաչատրյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող և սույն գործով վեճի առարկա բնակարանի վրա, ու 08.04.2016 թվականին կայացվել է կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում:

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները պատշաճ ուսումնասիրության առարկա չդարձնելու արդյունքում սխալ եզրահանգման է եկել և չի հաստատել այն հանգամանքը, որ սույն գործով կայացված դատական ակտն ազդել է Բանկի իրավունքների ու պարտականությունների վրա, ինչի արդյունքում սահմանափակվել է իր բողոքարկման իրավունքը:

Սույն գործով վճռի գոյության վերաբերյալ ինքը տեղեկացել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0291/02/24 քաղաքացիական գործով 06.02.2025 թվականի «Նոր պատասխանող ներգրավելու մասին» որոշմանը կից ներկայացված հայցադիմումի օրինակը և կից փաստաթղթերն ստանալուց ու դրանց բովանդակությանը ծանոթանալուց հետո և այնուհետև սահմանված կարգով 06.03.2025 թվականին Վերաքննիչ դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոք, մինչդեռ Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 31.03.2025 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) թիվ ՍԴ/0237/02/15 քաղաքացիական գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.06.2015 թվականի վճռով Բանկի հայցն ընդդեմ Նարեկ Խաչատրյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Նարեկ Ներսեսի Խաչատրյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 231.617 /երկու հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ, որից վարկի գումար 193.546.90 ՀՀ դրամ /որից ժամկետանց գումար՝ 65.604.20

ՀՀ դրամ/, վարկի դիմաց հաշվարկված տոկոս 19.843 ՀՀ դրամ /որից ժամկետանց տոկոս 14.564.30 ՀՀ դրամ/, ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժ՝ 2743.10 ՀՀ դրամ, վարկի սպասարկման հաշիվներ 15.484 ՀՀ դրամ, ինչպես նաև 4632.30 /չորս հազարվեց հարյուր երեսուներկու ամբողջ երեսուն/ ՀՀ դրամ որպես պետական տուրքի գումար: 2. Նարեկ Ներսեսի Խաչատրյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի՝ 02.03.2015թ-ից՝ մինչև պարտավորության փաստացի կատարման օրը հաշվարկել և բռնագանձել տույժ՝ 65.604.20 /վաթսունհինգ հազար վեց հարյուր չորս ամբողջ քսան/ ՀՀ դրամ ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ օրական 0.1 տոկոսի չափով, իսկ ժամկետանց տոկոսագումարների՝ 14.546.30 /տասնչորս հազար հինգ հարյուր քառասունվեց ամբողջ երեսուն/ ՀՀ դրամի մնացորդի նկատմամբ օրական 0.3 տոկոսի չափով: 3. Նարեկ Ներսեսի Խաչատրյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 127942.70 ՀՀ դրամի նկատմամբ 02.03.2015 թվականից մինչև պարտավորության կատարման օրն օրական 0,1 տոկոսով տույժ հաշվարկելու և բռնագանձելու մասով հայցը մերժել» **(հատոր 3-րդ, գ.թ. 20)**.

2) թիվ ՍԴ/0291/02/24 քաղաքացիական գործով Տիգրան Ջավադյանը հայցադիմում է ներկայացրել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Նարեկ Խաչատրյանի, «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության, երրորդ անձ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի թիվ 9 շենքի թիվ 26 բնակարանն արգելանքից հանելու պահանջի մասին: Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.02.2025 թվականի «Նոր պատասխանող ներգրավելու մասին» որոշմամբ գործով որպես նոր պատասխանող ներգրավվել է նաև Բանկը **(հիմք՝ «datalex.am» դատական տեղեկատվական համակարգ)**.

3) թիվ ՍԴ/0291/02/24 քաղաքացիական գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.10.2025 թվականի վճռի շրջանակներում նաև արձանագրվել է հետևյալը. «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի 23.11.2015թ. Ո00368-84811/15 պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման (հաղորդագրության համար՝ Ե12000375816) համաձայն՝ թիվ 01575578 (ՍԴ/0237/02/15) կատարողական վարույթով՝ արգելանք է դրվել պարտապան Նարեկ Ներսեսի Խաչատրյանի սեփականության իրավունքով պատկանող և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի 23.11.2015թ. Ո00368-81643/15 պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման (հաղորդագրության համար՝ Ե12000375807) համաձայն՝ թիվ 01575578 (ՍԴ/0237/02/15) կատարողական վարույթով՝ արգելանք է դրվել պարտապան Նարեկ Ներսեսի Խաչատրյանի սեփականության իրավունքով պատկանող և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի 23.11.2015թ. Ո00368-84582/15 պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման (հաղորդագրության համար՝ Ե12000375815) համաձայն՝ թիվ 01575578 (ՍԴ/0237/02/15) կատարողական վարույթով՝ արգելանք է դրվել պարտապան Նարեկ Ներսեսի Խաչատրյանի սեփականության իրավունքով պատկանող և հետագայում ձեռք բերվելիք գույքի վրա» **(հիմք՝ «datalex.am» դատական տեղեկատվական համակարգ)**.

4) Բանկի մանրածախ բիզնեսի խնդրահարույց ակտիվների հետ աշխատանքի վարչության պետ Ա. Մարգարյանի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Նարեկ Խաչատրյանի պարտքը 06.03.2025 թվականի դրությամբ կազմում է 1.493.894 ՀՀ դրամ **(հատոր 3-րդ, գ.թ. 21)**.

5) սույն գործով Դատարանը 05.10.2020 թվականին վճռել է. «1. Հայցը բավարարել մասնակի: 2. Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի թիվ 9 շենքի թիվ 26 հասցեում գտնվող բնակարանը ճանաչել տիրազուրկ և ձեռքբերման վաղեմության ուժով հանձնել Տիգրան Անուշավանի Ջավադյանի սեփականությանը: 3. Պատասխանող Ներսես Ֆերիկի Խաչատրյանի մասով գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով՝ կարճել» **(հատոր 2-րդ, գ.թ. 90-106)**.

6) սույն գործով Դատարանի 05.10.2020 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Բանկը հետևյալ հիմնավորմամբ. «Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0704/02/19 քաղաքացիական գործով կայացված վճռով կոպտորեն խախտել է բանկի իրավունքները և զրկել վերջինիս գործի քննությանը մասնակից լինելու հնարավորությունից: Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պարտապան Նարեկ Խաչատրյանին պատկանող Անշարժ գույքի վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջները կատարելու նպատակով հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթով կիրառված սահմանափակումները վերացված չեն: (...) Այսպիսով թիվ ՍԴ/0237/02/15 քաղաքացիական գործով կայացված վճռով պահանջը մինչ օրս մնում է անկատար, իսկ Պարտապանը հնարավորություն է ստանում խուսափել Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումից: Թիվ ՍԴ/0237/02/15 կատարողական թերթով պարտապան հանդիսացող Նարեկ Խաչատրյանի պարտքը Բանկի հանդեպ 06.03.2025թ.-ի դրությամբ կազմում է 1.493.894 ՀՀ դրամ, որն աճողական պարտավորություն է» **(հատոր 3-րդ, գ.թ. 3-7)**.

7) Վերաքննիչ դատարանը 31.03.2025 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է **(հատոր 3-րդ, գ.թ. 35-38)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Սահմանադրության 61-րդ ու 63-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ, 362-րդ, 365-րդ և 372-րդ հոդվածների խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ գործին մասնակից չդարձած անձանց կողմից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացված դատական ակտը բողոքարկելու հարցին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործին մասնակից չդարձած, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձը դատական ակտը կարող է բողոքարկել նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների և նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անձինք վերաքննիչ դատարանում օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և կրում են նրանց համար սահմանված պարտականությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն դեպքերին, երբ դատական ակտը կայացվել է գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործին մասնակից չդարձված անձանց համար երաշխավորված դատարանի մատչելիության, դատական պաշտպանության իրավունքը դրսևորվում է, մասնավորապես՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքով և դրա իրացման ընթացակարգով, որը կոչված է վերացնելու ստորադաս դատարանում թույլ տրված և բողոք բերող անձի իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալը *(տե՛ս ըստ Հակոբ Բաշմակյանի դիմումի թիվ ԵԿԴ/0368/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակից չդարձված այն անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, բոլոր դեպքերում պետք է ունենա իր խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման արդյունավետ միջոցների հնարավորություն: Չնայած նրան, որ գործին մասնակից չդարձած անձինք անմիջական մասնակցություն չեն ունենում տվյալ գործի քննությանը, այնուամենայնիվ տվյալ գործով կայացված դատական ակտը (եթե այն վերաբերում է նրանց իրավունքներին և պարտականություններին), որպես կանոն բացասաբար է անդրադառնում նրանց իրավունքների և պարտականությունների վրա: Այլ կերպ ասած, դատական ակտով ոչ միայն պետք է անմիջականորեն շոշափվեն այդ անձանց իրավունքներն ու պարտականությունները, այլև՝ խոչընդոտներ ստեղծվեն նրանց սուբյեկտիվ իրավունքների իրացման կամ պարտականության պատշաճ կատարման համար *(տե՛ս Սերգեյ Գրիգորյանն ընդդեմ Ալլա Փորսուղյանի և ուրիշների թիվ ԵԿԴ/3578/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.05.2022 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործին մասնակից չդարձած անձանց դատավարական գործողություններն ուղղակիորեն պայմանավորված են նրանց դատավարական կարգավիճակով և ուղղված են վիճելի նյութական իրավահարաբերության

կարգավորման կապակցությամբ թույլ տրված այնպիսի սխալի վերացմանը, որն իրավահարաբերության ոչ բոլոր մասնակիցներին գործին մասնակից դարձնելու արդյունք է: Հետևաբար գործին մասնակից չդարձված անձը, որի իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ կայացվել է դատական ակտ, պետք է իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցներով վերականգնելու հնարավորություն ունենա: Անդրադառնալով գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ իրավունքների իրացումը չի կարող կրել բացարձակ բնույթ: Մասնավորապես, գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում հարկ է պահպանել անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից գործին մասնակցող անձանց սահմանադրական իրավունքների ու պարտականությունների, մյուս կողմից՝ գործին մասնակից չդարձված այն անձանց իրավունքների և պարտականությունների միջև, որոնց իրավունքներին և պարտականություններին առնչվում է դատական ակտը *(տե՛ս «Հայր և որդի Ադամյաններ» ՍՊԸ-ն ընդդեմ «Հինգերորդ Ասպղ» ՍՊԸ-ի թիվ ԵԱԴԴ/0199/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը)*:

Իրավունքի գերակայության բաղադրատարր համարվող իրավական որոշակիության՝ res judicata սկզբունքը հարգելու համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործին մասնակից չդարձված անձանց կողմից դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում այն կարող է բեկանվել միայն այն դեպքում, երբ դատական ակտն առնչվում է նշված անձանց իրավունքներին և պարտականություններին, ինչը կարող է ապահովել գործին մասնակցող և գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների միջև հավասարակշռությունը *(տե՛ս Հովհաննես Վարդազարյանը և Մարիանա Ավետյանն ընդդեմ Անժելա Վարդազարյանի ու Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի թիվ ԵԱՔԴ/3273/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.09.2021 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացրած դատական ակտի առկայությունը կապված է կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների խախտման հետ, իսկ նման խախտմամբ գործի քննության իրականացման արդյունքում կայացված դատական ակտն էլ չի կարող լինել օրինական և հիմնավորված *(տե՛ս Աննա և Գալինա Խաչատրյաններն ընդդեմ Ռոստոմ Բուռնազյանի ու Ռոստոմ Բուռնազյանն ընդդեմ Աննա և Գալինա Խաչատրյանների թիվ ԵԿԴ/0408/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2022 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը յուրաքանչյուր դեպքում գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս պետք է պարզի՝ արդյոք բողոքին կից ներկայացված ապացույցներով հիմնավորվում է, որ վիճարկվող դատական ակտն առերևույթ կարող է վերաբերել վերջինիս իրավունքներին և պարտականություններին *(տե՛ս Գառնիկ Կուրղինյանը և Մանյա Ալոյանն ընդդեմ Անահիտ ու Միքայել Կուրղինյանների թիվ ԵԱՔԴ/2573/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2013 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է, որի միջոցով ապահովվում է արդարադատության նպատակների գործնականում

իրականացումը: Ընդ որում, օրենսդիրը վերոնշյալ իրավունքի իրացումը երաշխավորել է նաև գործին մասնակից չդարձված այն անձանց համար, ում իրավունքներին, օրինական շահերին և պարտականություններին առնչվում է կայացված դատական ակտը: Նման կառուցակարգի առկայությունը գործին մասնակից չդարձված անձանց համար ստեղծում է իրենց խախտված իրավունքներն արդյունավետորեն վերականգնելու իրավական և փաստական հնարավորություն, ինչը, սակայն, չպետք է կրի հռչակագրային բնույթ: Այսինքն՝ գործին մասնակից չդարձված անձի համար յուրաքանչյուր դեպքում պետք է ապահովվի իր իրավունքներին և պարտականություններին առնչվող, դրանք սահմանափակող, համապատասխանաբար, դրանց իրացմանն ու կատարմանն օբյեկտիվորեն խոչընդոտող դատական ակտի բողոքարկման իրական հնարավորություն: Դատական ակտի՝ գործին մասնակից չդարձված անձի իրավունքների և պարտականությունների վրա ունեցած ազդեցությունն ինքնին կանխորոշում է տվյալ դատական ակտի բողոքարկման իրավական հնարավորությունն այդ անձի կողմից՝ որպես իր խախտված իրավունքների վերականգնման գործուն երաշխիք (*տե՛ս Կարինե Մարգարյանն ընդդեմ Աննա Բադալյանի թիվ ԵԴ/32860/02/22 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.09.2024 թվականի որոշումը)*:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ դիմելով դատարան՝ Տիգրան Ջավադյանը պահանջել է Սյունիքի մարզի Կապան քաղաքի Երկաթուղայինների փողոցի թիվ 9 շենքի թիվ 26 բնակարանը ճանաչել տիրազուրկ և ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքն այդ բնակարանի նկատմամբ:

Դատարանի 05.10.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ նաև վճռվել է վերը նշված բնակարանի նկատմամբ ճանաչել Տիգրան Ջավադյանի սեփականության իրավունքը:

Դատարանի 05.10.2020 թվականի վճռի դեմ որպես գործին մասնակից չդարձած անձ վերաքննիչ բողոք է ներկայացրել Բանկը՝ իր իրավունքների վերաբերյալ դատական ակտ կայացված լինելու հանգամանքի առկայությունը պատճառաբանելով հետևյալ կերպ. «Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ/0704/02/19 քաղաքացիական գործով կայացված վճռով կոպտորեն խախտել է բանկի իրավունքները և զրկել վերջինիս գործի քննությանը մասնակից լինելու հնարավորությունից: Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պարտապան Նարեկ Խաչատրյանին պատկանող Անշարժ գույքի վրա օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պահանջները կատարելու նպատակով հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթով կիրառված սահմանափակումները վերացված չեն: (…) Այսպիսով թիվ ՍԴ/0237/02/15 քաղաքացիական գործով կայացված վճռով պահանջը մինչ օրս մնում է անկատար, իսկ Պարտապանը հնարավորություն է ստանում խուսափել Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումից: Թիվ ՍԴ/0237/02/15 կատարողական թերթով պարտապան հանդիսացող Նարեկ Խաչատրյանի պարտքը Բանկի հանդեպ 06.03.2025թ.-ի դրությամբ կազմում է 1.493.894 ՀՀ դրամ, որն աճողական պարտավորություն է»:

Վերաքննիչ դատարանը 31.03.2025 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է նաև հետևյալ պատճառաբանությամբ. «*Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումը վերաբերում է պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը տիրազուրկ*

ճանաչելուն և ձեռքբերման վաղեմության ուժով հայցվորի սեփականության իրավունքը ճանաչելուն, որպիսի պարագայում այլ հանգամանք, քան ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման հնարավորությունը, քննարկման առարկա չէր կարող դառնալ այդ գործի շրջանակներում: (...): Վերաքննիչ դատարանի գնահատմամբ սույն գործով հայցվորի՝ Տիգրան Ջավադյանի կողմից պատասխանողների, այդ թվում՝ Նարեկ Խաչատրյանի անվամբ բաժնային սեփականության իրավունքով գրանցված գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք հարուցելու գործը որևէ անմիջական ազդեցություն չի կարող ունենալ բողոք բերած անձի իրավունքների ծավալի վրա և ուղղակիորեն չի կարող հանգեցնել նրա իրավունքների խախտման: (...): Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Բանկը չի հիմնավորել, որ դատական ակտի կայացմամբ փաստացի տեղի է ունեցել իր իրավունքների և օրինական շահերի խախտում, կամ առերևույթ կայացվել է այնպիսի դատական ակտ, որն առնչվում է իր գոյություն ունեցող կամ հաստատապես ակնկալվող իրավունքներին և խախտում է այդ իրավունքները, ըստ որում, խոսքը ոչ թե ենթադրյալ, այլ հնարավոր, այլ իրական իրավունքների խախտման մասին է»:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավորված չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում թիվ ՍԴ/0237/02/15 քաղաքացիական գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.06.2015 թվականի վճռով Բանկի հայցն ընդդեմ Նարեկ Խաչատրյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է մասնակիորեն, և Նարեկ Խաչատրյանի պարտքը Բանկի նկատմամբ 06.03.2025 թվականի դրությամբ կազմել է 1.493.894 ՀՀ դրամ: Ընդ որում, նշված վճռի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում արգելանք է դրվել նաև սույն գործով վեճի առարկա բնակարանի նկատմամբ, որպիսի փաստը հաստատվում է Բանկի կողմից վերաքննիչ բողոքում վկայակոչված թիվ ՍԴ/0291/02/24 քաղաքացիական գործով 09.10.2025 թվականի վճռում արձանագրված փաստերի ուսումնասիրության արդյունքում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի 05.10.2020 թվականի վճիռը ազդում է Բանկի իրավունքների վրա, քանի որ վճռով կանխորոշվում է վեճի առարկա բնակարանի հետագա ճակատագիրը, որի նկատմամբ կիրառված են արգելանքներ թիվ ՍԴ/0237/02/15 քաղաքացիական գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.06.2015 թվականի վճռով հաստատված Բանկի նկատմամբ Նարեկ Խաչատրյանի վճարային պարտավորությունն ապահովելու համար: Բացի այդ, թիվ ՍԴ/0291/02/24 քաղաքացիական գործով Տիգրան Ջավադյանի հայցն ընդդեմ նաև Բանկի՝ սույն գործով վեճի առարկա գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, իր հերթին, արդեն իսկ Բանկի իրավունքների վրա ազդեցության նյութական դրսևորում է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ և 365-րդ հոդվածների այնպիսի խախտումներ թույլ տրված լինելու մասին վճռաբեկ բողոքում նշված հիմքերը, որոնք, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, հանգեցրել են Բանկի արդար դատաքննության ու դատարանի մատչելիության՝ Սահմանադրության 61-րդ ու 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման՝ վերջինիս զրկելով իր խախտված իրավունքներն արդյունավետ միջոցով վերականգնելու հնարավորությունից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է

բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 31.03.2025 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար: Ընդ որում, նշված որոշումը վերացվելու դեպքում Բանկի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, ենթակա է վարույթ ընդունման, եթե բացակայեն վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու այլ հիմքեր կամ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.03.2025 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔ

ՀՀ դատավորների միությունը շնորհավորում է

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Նարինե ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Սևակ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
Մեխակ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը,

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
Լիլիթ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ծննդյան 55-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
Կարեն ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ծննդյան 50-ամյակը,

ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր
Արման ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր
Արսեն ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ծննդյան 45-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր
Հասմիկ ՋԱԼԱԼՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր
Արտակ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ
Գեղամ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ծննդյան 40-ամյակը,

մաղթում նրանց առողջություն, անսպառ եռանդ և մասնագիտական արդյունավետ գործունեություն:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Դատական իշխանություն» գիտամեթոդական պարբերականը լույս է տեսնում տարեկան առնվազն չորս անգամ:
Պարբերականի գիտական խմբագրական խորհուրդը քննարկում է միայն այն նյութերը, որոնք ներկայացվում են գրախոսականի առկայությամբ:
Տպագրվող նյութը պետք է ունենա որոշակի կառուցվածք՝ **ներածություն, հիմնական հետազոտություն** (որը կարող է ունենալ բաժիններ և ենթաբաժիններ), **եզրակացություն**:
«Դատական իշխանություն» պարբերականում տպագրության ներկայացվող նյութերի տեխնիկական պահանջները.
1. նյութի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով),
2. հաջորդ տողում՝ հեղինակի անուն-ազգանունը (գլխատառերով), հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը,
3. տեքստի լուսանցքները. վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
4. հայերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, անգլերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat, ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ GHEA Grapalat,
5. հիմնական տառաչափը՝ 12,
6. միջտողային հեռավորությունը՝ 1.5,
7. օգտագործված գրականության ցանկ՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջերի քանակը,
8. հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը (թավ), վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը,
9. նյութը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա երեք լեզուներով ամփոփագրեր (ընդ որում՝ եթե այն անգլերեն կամ ռուսերեն չէ, ամփոփագիրը պետք է լինի 150-250 բառի սահմաններում), որոնք պետք է պարունակեն որոշակի, հստակ և ընդգրկուն տեղեկատվություն նյութի վերաբերյալ: Նյութը երեք լեզվով պետք է ունենա մինչև 10 բանալի բառեր,
10. նյութն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ՝ kchalabyan@gmail.com):
Պարբերականում հոդվածները տպագրվում են վճարովի հիմունքներով: Տպագրության վճարը կազմում է 12.000 (տասներկու հազար) ՀՀ դրամ: Բացառություն են կազմում ՀՀ դատավորների միության անդամ դատավորները (ինչպես նաև ՀՀ դատավորների միության անդամ նախկին դատավորները), ում համար հոդվածների տպագրությունն իրականացվում է անվճար հիմունքներով:

Թևավոր խոսքեր

«Պետությունը ես եմ»
Լյուդովիկոս XIV

«Պետության հիմքը արդարությունն է»
Արիստոտել

«Մարդը քաղաքական (պետական) կենդանի է»
Արիստոտել

«Պետության ուժը նրա քաղաքացիների ուժի մեջ է»
Ջոն Ստյուարտ Միլ

«Լավ պետությունն այն է, որտեղ
օրենքը վեր է բոլորից»
Պլատոն

«Պետության առաջին պարտականությունը
քաղաքացիների անվտանգությունն ապահովելն է»
Թոմաս Հոբս

«Հայրենիքը պետությունից մեծ է, իսկ պետությունը՝
իշխանությունից»
Շառլ դը Գոլ

«Պետություններն կործանվում են այն ժամանակ, երբ
չեն կարողանում տարբերել լավ մարդկանց վատերից»
Արիստոտել

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
1997 Թ ՎԱԿԱՆԻՑ

